Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Л. Н. Толстой

ВОЙНА И МИР

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ ВТОРОЙ

Перевод Стефана Зорьяна

ИЗДАТЕЛЬСТВО „АЙАСТАН", ЕРЕВАН 1975

Լ. Ն. Տոլստոյ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Թարգմանությունը Ստեփան Զորյանի

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ — 1975

Р 1
С 60

С 70301 (961) / 701 (01) 75 243 75 «С»

© «Հայաստան» հրատարակչություն, թարգմանություն հայերեն, 1975

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

1806 թվի սկզբներին Նիկոլայ Ռոստովն արձակուրդով վերադարձավ տուն։ Դենիսովը նույնպես տուն էր գնում՝ Վորոնեժ։ Ռոստովը համոզեց նրան գնալ միասին մինչև Մոսկվա և իջևանել իրենց տանը։ Նախավերջին կայարանում, ընկերոջը հանդիպելով, Դենիսովը նրա հետ երեք շիշ գինի խմեց և, մինչև Մոսկվա, չնայած խորդուբորդ ճանապարհին, չզարթնեց, մնալով պառկած սահնակի մեջ, Ռոստովի կողքին, որը, քանի մոտենում էին Մոսկվային, այնքան ավելի անհամբեր էր դառնում։

«Շո՞ւտ կհասնենք արդյոք։ Հը՞... Օ՜, այդ անտանելի փողոցները, խանութները, կալաշները, լապտերները», մտածում էր Ռոստովը, երբ գրանցել տվին իրենց արձակուրդի վկայականները ուղեկալի մոտ ու մտան Մոսկվա։

— Դենիսո՛վ, հասանք։ Քնած է,— ասում էր Նիկոլայն ամբողջ մարմնով առաջ ընկնելով, կարծես այդ դիրքով հույս ուներ արագացնել սահնակի ընթացքը։ Դենիսովը չպատասխանեց։

— Ահա ճամփաբաժանի անկյունը, ուր կառապան Զախարը ն է կանգ առնում. ահա և ինքը Զախարը, ու դարձյալ նույն ձին։ Ահա և խանութը, ուր շաքարահաց էինք գնում։ Երբ պիտի հասնենք մի։ Դե՛հ...

— Դեպի ո՞ր տունը քշեմ,— հարցրեց կառապանը։

— Այ, ծայրի այն տունը. մի՞թե չես տեսնում։ Դա մեր տունն է,— ասում էր Ռոստովը,— չէ՞ որ դա մեր տունն է։ Դենիսո՛վ, Դենիսո՛վ։ Հիմա կհասնենք։

Դենիսովը գլուխը բարձրացրեց։ Հազաց ու ոչինչ չպատասխանեց։

— Դմիտրի,— դիմեց Ռոստովը սահնակի առաջամասում նստած լաքեյին։— Այդ մեր տանն է լույս վառվում, չէ՞։

— Այո։ Հայրիկի կաբինետում էլ լույս է երևում։

— Ուրեմն դեռ չե՞ն պառկել։ Ի՞նչ ես կարծում։

— Տե՛ս, Դմիտրի, չմոռանաս, իսկույն մի նոր բաճկոն գտնես ինձ համար,— ավելացրեց Ռոստովը, նորածիլ բեղերը շոշափելով։

— Դե, քշի՛ր,— ձայն տվեց նա կառապանին։— Իսկ դու, Վասյա, զարթնիր,— ասավ նա Դենիսովին, որ գլուխն իջեցրեց կրկին։

— Դե՛, քշիր, երեք ռուբլի քեզ նվեր, քշի՛ր,— գոչեց Ռոստովը, երբ արդեն երեք տուն էր մնացել, որ սահնակը հասներ իրենց շքամուտքին։ Նրան թվում էր, թե ձիերը չեն շարժվում։ Վերջապես սահնակը ծռվեց աջ՝ դեպի շքադուռը։ Ռոստովն իր գլխավերև տեսավ ծանոթ կարեիզը՝ թափված ծեփերով, սանդուղքը, մայթի սյունը։ Դեռ սահնակը շարժվում էր, երբ նա դուրս թռավ նրա միջից ու վազեվազ նախասրահը մտավ։ Տունն առաջվա պես անշարժ էր, անտարբեր, կարծես բնավ չէր էլ հետաքրքրվում, թե ո՛վ է եկել ներս։ Նախասրահում ոչ ոք չկար։ «Տեր աստված, տեսնես ամեն ինչ կարգի՞ն է», մտածեց Ռոստովը, նվազուն սրտով մի բոպե կանգ առնելով և իսկույն առաջ վազելով նախասրահի միջով ու ծանոթ ծված աստիճաններով։ Դարձյալ դռան նույն բռնակը, որի անմաքրության համար բարկանում էր կոմսուհին, նույնպես թույլ է բացվում։ Նախասենյակում վառվում էր մի ճարպամոմ։

Մերունի Միխայլոն քնած էր սնդուկի վրա։ Պրոկոֆին, որ լաքեյություն էր անում ճանապարհորդության, քաղաքից դուրս գալու միջոցին, նա՛, որ այնքան ուժեղ էր, որ կառքը բարձրացնում էր ետևի կողմից, նստել և մահուդի կտորտանքիչ տրեխներ էր շինում։ Նա նայեց բացվող դռանը և նրա անտարբեր, քնատ տեսքը հանկարծ փոխվեց խանդավառ ու երկչոտ արտահայտության։

— Տեր աստված, այս ումն եմ տեսնո՞ւմ, երիտասարդ կոմսը՞,— բացականչեց նա, ճանաչելով ջահել պարոնին։—

Այդ ի՞նչպես, հոգիս։— Եվ Պրոկոֆին հուզմունքից դողալով՝ նետվեց դեպի հյուրասրահի դուռը, նրա համար երևի, որ երիտասարդ պարոնի գալուստը հայտնի, բայց, ըստ երևույթին, միտքը փոխեց, ետ դարձավ ու փարվեց ջահել պարոնին։

— Առո՞ղջ եք,— հարցրեց Ռոստովը, ձեռն ազատելով նրանից։

— Փառք աստծու։ Առողջ ենք, փառք աստծու։ Հենց նոր հաց կերանք։ Թող մի մտիկ անեմ քեզ, ձերդ պայծառափայլություն։

— Բոլորը առողջ-առո՞ղջ են։

— Փա՛ռք աստծու, փառք աստծու։

Ռոստովը, միանգամայն մոռանալով Դենիսովին, չկամենալով անգամ որևէ մեկին նախազգուշացնել իր մասին, մուշտակը գցեց վրայից ու ոտքերի ծայրերի վրա՝ վազեց մտավ մութ, ընդարձակ դահլիճը։ Ամեն ինչ նույնն էր. նույն թղթախաղի սեղանները, նույն ծածկոցով ջահը։ Բայց մեկն արդեն նկատել էր երիտասարդ պարոնին, և հազիվ սա հասել էր հյուրասրահին, երբ ինչ-որ մի բան, փոթորկի պես սրընթաց, դուրս վազեց դռնից և, նրան գրկելով, սկսեց համբուրել։ Դարձյալ մի ուրիշը, երրորդ այդպիսի մի էակ — դուրս թռավ մի ուրիշ, երրորդ դռնից. կրկին գրկախառնություն, կրկին համբույրներ, դարձյալ բացականչություններ և ուրախության արցունքներ։ Նիկոլայը չէր կարողանում ջոկել ո՛ւր է և ո՛րն է հայրը, ո՛րն է Նատաշան, որը՝ Պետյան։ Բոլորն էլ աղմկում էին, խոսում և միևնույն ժամանակ համբուրում նրան։ Դրանց մեջ չկար միայն մայրը — այդ նկատում էր Նիկոլայը։

— Իսկ ես չգիտեի... Նիկոլուշկա... սիրելիս։

— Ահա... մեր Կոլյան։ Փոխվել է՞։ Մոմ չկա, ի՞նչ է։ Թեյ բերե՛ք։

— Դե, ինձ էլ համբուրիր։

— Հոգյակս, ինձ էլ։

Սոնյան, Նատաշան, Պետյան, Աննա Միխայլովնան, Վերան, ծեր կոմսը գրկում էին նրան. իսկ սպասավորներն ու սպասուհիները, սենյակներում հավաքված, խոսում էին ու հառաչում։

Պետյան կախվել էր Նիկոլայի ոտքերից։

— Բա ինձ չես համբուրո՞ւմ,— ճչում էր նա։

Նատաշան, նրանից հետո, երբ Նիկոլային թեքեց դեպի իրեն ու համբուրեց նրա ամբողջ երեսը, քիչ-քիչ քաշվեց ու նրա բաճկոնի փեշը բռնած՝ այծի նման ծուլծուլ էր լինում միևնույն տեղը և ուրախությունից ճչում ականջ-ծակող ձայնով։

Ամեն կողմ փայլում էին ուրախության արցունքով լի սիրող աչքեր. ամեն կողմ շրթունքներ էին, որ համբույր էին որոնում։

Սոնյան, կակաչի պես կարմրած, նույնպես կախ էր ընկել Նիկոլայի ձեռից և ամբողջովին ցնծում էր՝ իր երջանիկ հայացքը հառած Նիկոլայի աչքերին, որոնց նայվածքին սպասում էր նա։ Սոնյայի 16 տարին լրացել էր արդեն, և նա շատ գեղեցիկ էր, առանձնապես այդ երջանիկ, խանդավառ րոպեին։ Նա Նիկոլային նայում էր ակնապիշ, ժպտուն ու շունչը պահած։ Նիկոլայը շնորհապարտ հայացքը նետեց Սոնյայի վրա. բայց տակավին սպասում ու որոնում էր մեկին։ Պառավ կոմսուհին դեռ դուրս չէր եկել։ Դռան մոտ քայլերի ձայն լսվեց. այդ քայլերն այնքան արագ էին, որ եկողը չէր կարող մայրը լինել։

Բայց դա նա՛ էր — մայրը, Նիկոլային անծանոթ զգեստ հագած։ Բոլորը թողին Նիկոլային, հեռացան, և նա վազեց դեպի մայրը։ Երբ նրանք իրար մոտեցան՝ կոմսուհին հեկեկալով ընկավ որդու կրծքին։ Կոմսուհին չէր կարողանում երեսը բարձրացնել և սեղմում էր այն Նիկոլայի հունգարական բաճկոնի սառը կապերին։ Դենիսովը, աննկատ մտնելով սենյակ, կանգնել էր հենց այդտեղ և, նրանց նայելով, տրորում էր աչքերը։

— Վասիլի Դենիսով, ձեր որդու բարեկամը,— ասավ նա, ներկայանալով կոմսին, որն այդ րոպեին հարբական հայացքով դիտում էր նրան։

— Համեցեք, խնդրեմ։ Գիտեմ, գիտեմ,— ասավ կոմսը, համբուրելով ու գրկելով Դենիսովին։— Նիկոլուշկան գրել էր... Նատա՛շա, Վե՛րա, ահա՛, Դենիսովը։

Նույն երջանիկ ու խանդավառ դեմքերը դարձան դեպի Դենիսովի մազոտ կերպարանքն ու շրջապատեցին նրան։

— Հոգյակս, Դենի՛սով,— ծղրտաց Նատաշան, ուրախությունից իրեն կորցրած, ցատկեց դեպի նա, գրկեց ու համբուրեց նրան։ Նատաշայի այդ վարմունքից բոլորը շփոթվեցին։ Դենիսովը նույնպես կարմրեց. բայց ժպտալով բռնեց Նատաշայի ձեռքը և համբուրեց։

Դենիսովին տարան նրա համար պատրաստած սենյակը, իսկ Ռոստովները՝ բոլորը միասին հավաքվեցին բազմոցարանում՝ Նիկոլայի շուրջը։

Պառավ կոմսուհին, որ բաց չէր թողնում որդու ձեռը և համբուրում էր ամեն րոպե, նստեց որդու կողքին. մյուսները նրանց շուրջը խմբվելով՝ հետևում էին նրա յուրաքանչյուր խոսքին, հայացքին և Նիկոլայից չէին հեռացնում իրենց սիրառատ-խանդավառ հայացքները։ Եղբայրն ու քույրերը վիճում և իրար տեղ էին խլում, որ Նիկոլային մոտիկ լինեն, և կռվում էին, թե ո՛վ թեյ, թաշկինակ ու ծխամորճ բերի նրա համար։

Ռոստովը շատ երջանիկ էր այն սիրով, որ ցույց էին տալիս իրեն. բայց հանդիպման առաջին րոպեն այնքան երանելի էր, որ իր այժմյան երջանկությունն իրեն քիչ էր թվում, և նա էլի ու էլի ինչ-որ նոր բանի էր սպասում։

Հետևյալ առավոտ եկվորները քնեցին մինչև ժամը 10-ը։

Նրանց ննջարանի առջևի սենյակում թափթփված էին սրեր, պայուսակներ, զինվորական մախաղներ, բաց ճամպրուկներ և կեղտոտ կոշիկներ։ Դրանցից խթանավոր երկու զույգ հենց նոր մաքրված էին և պատի տակ դրված։ Սպասավորները բերում էին լվացվելու պարագաներ, տաք ջուր՝ սափրվելու համար, և մաքրած հագուստներ։ Ծխախոտի և տղամարդկանց հոտ էր գալիս։

— Էյ, Գղ'իշկա, ծխամորճ,— գոչեց Վասյա Դենիսովը խուպոտ ձայնով,— Ղ'ոստով, վեղ'կա՛ց։

Ռոստովը կպչող աչքերը տրորելով, խճճված գլուխը բարձրացրեց տաք բարձից։

— Ի՞նչ է, ո՞ւշ է։

— Ուշ է, ինն անց է,— պատասխանեց Նատաշայի ձայնը, և հարևան սենյակից լսվեց օսլայած հագուստների շրշյուն, աղջկանց ձայների շշուկ ու ծիծաղ, ու հագիվ բացված դռան արանքում երևացին ինչ-որ երկնագույն մի բան, ժապավեններ, սև մազեր և ուրախ դեմքեր։ Դա Նատաշան էր՝ Սոնյայի ու Պետյայի հետ, որ միասին եկել էին իմանալու՝ զարթնե՞լ են արդյոք։

— Նիկոլենկա, վեր կաց, — կրկին լսվեց Նատաշայի ձայնը դռան մոտից։

— Իսկույն։

Այդ ժամանակ Պետյան կից սենյակում սրեր տեսնելով՝ վրա պրծավ, վերցրեց նրանցից մեկը և մի այնպիսի հրճվանք զգաց, որպիսին զգում են երեխաներն իրենց ոազմասեր մեծ եղբոր հանդեպ, ու մոռանալով, որ քույրերի համար անհարմար է տեսնել շորերը հանած տղամարդկանց, բացեց նեղարանի դուռը։

— Այս քո սո՞ւրն է, — հարցրեց նա։

Աղջիկները ետ քաշվեցին։ Դենիսովը վախեցած աչքերով իր բրդոտ ոտները թաքցրեց վերմակի տակ։ Պետյայի ներս մտնելուց հետո դուռը կրկին ծածկվեց։ Դռան ետևից ծիծաղ լսվեց։

— Նիկոլենկա, խալաթով դուրս արի, — ասավ Նատաշայի ձայնը։

— Այս թուրը քո՞նն է, — հարցրեց Պետյան։ — Գուցե ձե՞րն է, — խոնարհ հարգանքով դիմեց նա բեղավոր սև Դենիսովին։

Ռոստովն շտապ հագավ ոտնամանները, հագավ խալաթը և դուրս եկավ։ Նատաշան հագել էր խթանավոր կոշիկներից մեկը և ձեռ էր մեկնում մյուսին։ Սոնյան պտտվում էր և հենց այն է ուզում էր ուտցնել շրջազգեստն ու նստել, երբ Նիկոլայը դուրս եկավ։ Աղջիկները՝ երկուսն էլ միատեսակ նոր երկնագույն զգեստներով՝ թարմ էին երևում, կարմիր ու ղվարթ։ Նիկոլային տեսնելով՝ Սոնյան փախավ, իսկ Նատաշան բռնեց եղբոր թևը, տարավ նրան բազմոցարան, և սկսեցին զրուցել։ Նրանք ժամանակ չէին գտնում կարգին հարցուփորձել միմյանց և պատասխանել այն հաղարավոր մանր-մունր բաներին վերաբերող հարցերին, որ միայն նրանց կարող էին հետաքրքրել։ Նատաշան ծիծաղում էր ամեն մի խոսքի վրա, որ ասում էր Նիկոլայը կամ ինքը. ծիծաղում էր ոչ թե նրա համար, որ ծիծաղելի էր այն, ինչ ասում էին, այլ ծիծաղում էր նրա համար, որ ուրախ էր և անկարող էր զսպել իր ուրախությունը, որն արտահայտվում էր ծիծաղով։

— Ա՜խ, ինչ լավ է, հիանալի, — ասում էր նա, ամեն մի խոսքի վրա։

Ռոստովն զգաց, թե ինչպես սիրո ջերմ կրակի ազդեցության ներքո, տարի ու կես անցնելուց հետո, առաջին անգամ իր հոգում և իր դեմքին ծաղկեց այն մանկական ժպիտը, որով երբեք չէր ժպտացել՝ սկսած այն օրից, երբ հեռացել էր տնից։

— Ո՛չ, լսիր, — ասավ Նատաշան, — դու հիմա բոլորովի՞ն տղամարդ ես դարձել։ Ես շա՜տ ուրախ եմ, որ դու իմ եղբայրն ես։ — Նատաշան ձեռը քսեց նրա բեղերին։ — Ես ուզում եմ իմանալ, թե ի՞նչ բան եք դուք, տղամարդիկդ։ Այնպե՞ս եք արդյոք, ինչպես մենք։ Ո՞չ։

— Սոնյան ինչո՞ւ փախավ, — հարցրեց Ռոստովը։

— Հա՜, դա մի ամբողջ պատմություն է։ Դու ինչպե՞ս պետք է խոսես Սոնյայի հետ. դու-ով թե դուք-ով։

— Ինչպես պատահի, — ասավ Ռոստովը։

— Նրան դուք ասա, խնդրում եմ. ես հետո քեզ կասեմ բանն ինչումն է։ Բայց ոչինչ, հիմա կասեմ։ Դու գիտես, որ Սոնյան իմ բարեկամն է, այնպիսի բարեկամ, որի համար ես ձեռս կայրեմ։ Ա՛յ, տե՛ս։

Նա թևքը ետ քշտեց և իր երկար, նիհարիկ ու քնքուշ թևի վրա, ուսից ցած, արմունկից շատ վեր (այն տեղը, որ ծածկվում է և պարահանդեսի զգեստով) ցույց տվեց մի կարմիր նշան։

— Սա ես այրել եմ, որ ցույց տամ նրան իմ սերը։ Ուղղակի քանոնը տաքացրել եմ կրակի վրա ու դաղել։

Նստած իր նախկին դասարանական սենյակում՝ բազմոցի վրա և նայելով Նատաշայի աշխույժ աչքերին, Ռոստովն իրեն զգաց կրկին այն հարաբատ-մանկական աշխարհում, որը, բացի իրենից, ոչ ոքի համար որևէ իմաստ չուներ, բայց որը նրան պատճառում էր կյանքի լավագույն բավականություններից մեկը։ Եվ այն, որ Նատաշան իր սերն ապացուցելու համար քանոնով դաղել էր թևը՝ նրան անհասկանալի չթվաց։ Նա հասկանում էր այդ ու զարմանում այդ բանի վրա։

— Ուրեմն միայն ա՞յդ, — հարցրեց Նիկոլայը։

— Այո. այնպե՞ս լավ ենք իրար հետ, այնպե՞ս լավ։ Դա ոչինչ — հիմարություն է քանոնով։ Բայց մենք միշտ բարեկամ ենք։ Նա որ մեկին սիրեց, կսիրի ընդմիշտ. իսկ ես այդ չեմ հասկանում, ես կմոռանամ իսկույն։

— Էհ, հետո ի՞նչ։

— Այո, այդպես սիրում է ինձ և քեզ։

Նատաշան կարմրեց հանկարծ։

— Դու հիշում ես քո գնալուց առաջ... Ասում է՝ դու այդ բոլորը մոռացիր... Նա ասում էր՝ ես նրան միշտ պետք է սիրեմ, իսկ նա թող ազատ լինի։ Ճիշտ է, չէ՞ որ դա շատ լավ և ազնիվ վարմունք է։ Այո՞, այո՞։ Շա՞տ ազնիվ։ Այո՞,— հարցնում էր Նատաշան այնպես լուրջ և հուզված, որ երևում էր, թե այն, ինչ ասում է այժմ, առաջ այդ նույնը նա ասում էր արցունքներով։

Ռոստովը մտածմունքի մեջ ընկավ։

— Ես իմ խոսքը երբեք ետ չեմ վերցնում,— ասավ նա։— Եվ հետո Սոնյան մի այնպիսի սքանչելիք է, որ ամենամեծ հիմարն էլ չէր հրաժարվի այդպիսի երջանկությունից։

— Ոչ, ոչ, — գոչեց Նատաշան։— Մենք դրա մասին արդեն խոսել ենք։ Մենք գիտեինք, որ դու այդ կասես։ Բայց դա չի կարելի, որովհետև, գիտես, քանի որ դու այդպես ես ասում, քեզ խոսքով կաշկանդած ես համարում. բանից դուրս է գալիս, որ նա կարծես թե դիտմամբ է այդ ասել։ Դուրս է գալիս, որ դու այնուամենայնիվ զոռով ես ամուսնանում նրա հետ, և բոլորովին այն չէ։

Ռոստովը տեսնում էր, որ այս ամենը նրանց կողմից լավ է մտածված։ Սոնյան դեռ երեկ հիացրեց նրան իր գեղեցկությամբ։ Այժմ էլ, թռուցիկ կերպով նրան տեսնելով, նա Նիկոլային թվաց ավելի գեղեցիկ։ Սոնյան 16 տարեկան հիասքանչ մի աղջիկ էր, որ, ըստ երևույթին, բուռն կերպով սիրում էր Նիկոլային (այդ մասին Նիկոլայը ոչ մի կասկած չուներ)։ Ռոստովը մտածում էր՝ ինչո՞ւ հենց հիմա չսիրի նրան և չամուսնանա հետը, բայց այժմ այնքա՜ն ուրախություններ ու զբաղմունքներ կային։ «Այո, այդ բանը նրանք շատ լավ են մտածել», կրկնեց Ռոստովը մտքում. «պետք է ազատ լինել»։

— Շատ գեղեցիկ, — ասավ նա,— հետո կխոսենք։— Ա՜խ, որքան ուրախ եմ քեզնով, Նատաշա,— ավելացրեց նա։— Հը՛, իսկ դու Բորիսին հո չե՞ս դավաճանել,— հարցրեց եղբայրը։

— Այ քեզ հիմարություն,— գոչեց Նատաշան ծիծաղելով։— Ոչ նրա, ոչ էլ ուրիշ որևէ մեկի մասին ես չեմ մտածում և չեմ էլ ուզում լսել։

— Այ թե ի՞նչ։ Ուրեմն դո՞ւ...

— Ե՞ս,— հարցրեց Նատաշան, և երջանիկ ժպիտը լուսավորեց նրա դեմքը։— Դու տեսել ես Duport-ին։

— Ի՞նչ։

— Նշանավոր Դյուպորին, պարող Դյուպորին. չես տեսե՞լ։ Ուրեմն դու չես հասկանա։ Ահա թե ես ինչ եմ։

Նատաշան, ձեռները կորացնելով, շրջազգեստը բռնեց այնպիսի ձևով, ինչպես անում են պարողները, ու մի քանի քայլ առաջ վազեց, շրջվեց, վեր ցատկեց, ոտքը խփեց ոտքին, և կոշկի քթի ծայրերի վրա կանգնելով՝ մի քանի քայլ արավ։

— Կանգնո՞ւմ եմ, չէ։ Մի տես,— ասավ Նատաշան, բայց չկարողացավ մնալ ոտքի ծայրերի վրա։— Ա՜յ թե ինչ եմ ես։ Երբեք ոչ ոքին չեմ առնի. կդառնամ պարուհի։ Միայն մարդու բան չասես։

Ռոստովն այնպես բարձր և ուրախ ծիծաղեց, որ Դենիսովն իր սենյակում նախանձեց նրան. Նատաշան նույնպես չկարողացավ զսպել իրեն ու ծիծաղեց նրա հետ միասին։

— Հա՛, լավ է, չէ՞,— կրկնում էր նա։

— Լավ, ուրեմն էլ չե՞ս ուզում ամուսնանալ Բորիսի հետ։

Նատաշան բռնկեց.

— Ես ոչ ոքի հետ չեմ կամենում ամուսնանալ։ Ես նրան էլ նույնը կասեմ, երբ տեսնեմ։

— Այ թե ինչ,— ասավ Ռոստովը։

— Դե, դրանք բոլորը դատարկ բաներ են,— շարունակեց շաղակրատել Նատաշան։— Իսկ Դենիսովն ինչպե՞ս մարդ է։ Լա՞վն է,— հարցրեց նա։

— Լավն է։

— Դե, մնաս բարով, հազվիր։ Սարսափելի՞ է այդ Դենիսովը։

— Ինչո՞ւ է սարսափելի,— հարցրեց Նիկոլայը։— Չէ՞, Վասկան սքանչելի տղա է։

— Դու նրան Վասկա ես ասո՞ւմ... տարօրինակ է։ Իսկ նա ի՞նչ է, շատ լա՞վն է։

— Շա՛տ։

— Դե շուտ եկ թեյ խմելու։ Բոլորս միասին։

Ու Նատաշան ոտքի ծայրերի վրա դուրս եկավ սենյակից այնպես, ինչպես անում են պարուհիները, բայց այնպես ժրպ-

տալով, որպես ժպտում են միայն 15 տարեկան երջանիկ աղջիկները։ Հյուրասրահում Սոնյային հանդիպելով՝ Ռոստովը կարմրեց։ Չէր իմանում՝ ինչպես վարվի հետը։ Երեկ, հանդիպումի ուրախության առաջին րոպեին, նրանք համբուրվեցին, բայց այժմ երկուսն էլ զգում էին, որ այդ անել չի կարելի։ Նիկոլայն զգում էր, որ բոլորը՝ թե՛ մայրը, թե՛ քույրերը, իրեն էին նայում հարցական և սպասում, թե նա ինչպես կըվերաբերվի Սոնյային։ Նիկոլայը համբուրեց Սոնյայի ձեռը և դիմեց նրան — դուք — Սոնյա։ Բայց նրանց հայացքները, իրար հանդիպելով, իրարու «դու» ասին և քնքշորեն համբուրվեցին։ Սոնյան իր հայացքով ներողություն խնդրեց Նիկոլայից նրա համար, որ ինքը՝ Նատաշայի դեսպանությամբ՝ համարձակվել էր հիշեցնել նրան իր խոստումը, ու շնորհակալություն հայտնեց նրա սիրո համար։ Նիկոլայն իր հայացքով շնորհակալություն էր հայտնում ուշադրության առաջարկի համար ու ասում էր, որ ինքը, այսպես թե այնպես, երբեք չի դադարի նրան սիրել, քանի որ նրան չսիրել չի կարելի։

— Որքան տարօրինակ է, սակայն, — խոսեց Վերան, ընտրելով ընդհանուր լռության րոպե, — որ Սոնյան ու Նիկոլայն այժմ հանդիպում են դուք-ով և իբրև օտարներ։

Վերայի դիտողությունն իրավացի էր, ինչպես և նրա բոլոր դիտողությունները. բայց ինչպես միշտ, այս անգամ էլ նրա դիտողությունից բոլորն անհարմարություն զգացին. ոչ միայն Սոնյան, Նիկոլայը, Նատաշան, այլև պառավ կոմսուհին, որ երկյուղ էր կրում որդու սիրուց՝ դեպի Սոնյան, մի անձնավորություն, որը Նիկոլային կարող էր զրկել փայլուն ապագից, — նույնպես կարմրեց ջահել աղջկա պես։ Դենիսովը, ի զուրմանս Ռոստովի, հյուրասրահ եկավ նոր մունդիրը հագին, պոմադ քսած և անուշահոտ յուղով օծված, պճնված այնպես, ինչպես կոիվներում, և այնքան սիրալիր դամաների ու կավալերների հետ, որ Ռոստովը երբեք չէր սպասում։

II

Բանակից վերադառնալով Մոսկվա, Նիկոլայ Ռոստովը տնեցիներից ընդունվեց իբրև լավագույն որդի, հերոս և աչքի լույս Նիկոլուշկա. հարազատներից՝ իբրև սիրելի, հանելի և

հարգելի երիտասարդ, ծանոթներից՝ իբրև զվարթ հուսարտեղակալ, լավ պարող և մեկը Մոսկվայի լավագույն փեսացուներից։

Ամբողջ Մոսկվան Ռոստովների ծանոթն էր. այս տարի ծերկոմսը բավականաչափ դրամ ուներ, որովհետև բոլոր կալվածքները կրկին գրավ էին դրված, ուստի և Նիկոլայը, ձեռք բերելով սեփական արագավազ մի նժույգ և ձիավարության համար նորագույն հատուկ ձևի մի կաշեպատ վարտիք, որից դեռ ոչ ոք չուներ Մոսկվայում, և նորագույն ձևի ճոքավոր կոշիկներ՝ ամենասուր քթերով ու փոքրիկ արծաթե խթաններով, — ժամանակն անց էր կացնում շատ ուրախ։ Տուն վերադառնալով, Ռոստովը կարճ ժամանակից հետո ներքին գոհունակություն զգաց, հարմարվելով իր կյանքի հին պայմաններին։ Նրան թվում էր. որ ինքը շատ մեծացել, առնական է դարձել։ Կրոնի անհաջող քննությունը, որ վհատություն էր առաջ բերել նրա մեջ, Գավրիլից կառքի փող վերցնելը, գաղտնի համբույրները Սոնյայի հետ — այս ամենը նա հիշում էր իբրև տղայամտություն, որից ինքն այժմ անչափ հեռու էր. նա հիմա հուսարական գնդի տեղակալ է՝ արծաթագույն մենտիկով, զինվորի Գեորգի, շքանշանով, իր ձին պատրաստում է ձիարշավի, որը պետք է տեղի ունենա հայտնի, հասակավոր ու պատվավոր ձիարշավասերների մասնակցությամբ։ Նա բուլվարում ունի ծանոթ մի կին, որի մոտ գնում է երեկոները։ Նա զեկավարեց մազուրկան Արխարովների պարահանդեսին։ Պատերազմի մասին զրույց ունեցավ ֆելդմարշալ Կամենսկու հետ, եղավ Անգլիական ակումբում, դու-ով խոսեց քառասուն տարեկան մի գնդապետի հետ, որին ծանոթացավ Դենիսովի միջոցով։

Նրա սերը դեպի թագավորը փոքր-ինչ թուլացավ Մոսկվայում։ Բայց որովհետև նա չէր տեսել և ասելիք չուներ տեսնելու նրան, ուստի հաճախ պատմում էր թագավորի և նրա վերաբերմամբ ունեցած իր սիրո մասին, զգացնել տալով, որ ինքը դեռ բոլորը չի պատմում, որ թագավորի վերաբերմամբ ունեցած իր զգացմունքի մեջ կա էլի մի ինչ-որ բան, որը չի կարող հասկանալի լինել ամենքին։ Նա ամբողջ հոգով համակրում էր պատերազմի այն ընդհանուր զգացումը, որ տիրում էր այն ժամանակ Մոսկվայում՝ կայսր Ալեքսանդր Պավլովիչի նկատ-

մամբ, որին Մոսկվայում անվանում էին «մարմնացյալ հրեշտակ»։

Մոսկվայում եղած կարճ միջոցին, մինչև բանակ մեկնելը, Ռոստովը ոչ թե մոտեցավ, այլ, ընդհակառակը, հեռացավ Սոնյայից։ Սոնյան շատ գեղեցիկ էր, դուրեկան, և ըստ երևույթին, սաստիկ սիրահարված՝ Ռոստովի վրա. բայց Ռոստովը երիտասարդական հասակի այն շրջանումն էր, երբ թվում է, թե շատ գործ կա, բայց ժամանակ չկա դրանով զբաղվելու, ու երիտասարդ մարդը վախենում է կապվել — թանկ է գնահատում իր ազատությունը, որը հարկավոր է իրեն ուրիշ շատ բաների համար։ Երբ նա մտածում էր Սոնյայի մասին, այս վերջին անգամ Մոսկվա եղած միջոցին, նա ինքն իրեն ասում էր. «Է՛, դեռ շատ-շատ կլինեն այդպիսիները և կան այնտեղ՝ դեռ ինձ անհայտ ինչ-որ տեղերում։ Երբ ցանկություն լինի, դեռ ժամանակ կունենամ սիրով էլ զբաղվելու, իսկ այժմ ժամանակ չկա»։ Բացի դրանից, կանանց հասարակության մեջ գտնվելը մի տեսակ ստորացուցիչ էր թվում իր տղամարդության համար։ Նա գնում էր պարահանդեսներ, լինում էր կանանց շրջանում, ու ձևացնում էր, թե այդ անում է հակառակ իր կամքի։ Քլուբերը, Անգլիական ակումբը, քեֆերը Դենիսովի հետ, այնտեղ գնալը, — սրանք ուրիշ բաներ էին. սրանք պատշաճում էին ջահել-հուսարին։

Մարտի սկզբներին ծեր կոմս Իլյա Անդրեյիչ Ռոստովը մտահոգված էր իշխան Բագրատիոնի ընդունելության համար Անգլիական ակումբում ճաշ կազմակերպելու գործով։

Կոմսը խալաթով շրջում էր դահլիճում, հրամաններ էր տալիս ակումբի տնտեսին ու հոչակավոր Ֆեոկտիստին՝ Անգլիական ակումբի ավագ խոհարարին, — ծնեփակի, կանաչ վարունգի, մորու, հորթի մսի և ձկան վերաբերյալ, որ անհրաժեշտ էին իշխան Բագրատիոնի ճաշի համար։ Կոմսն ակումբի հիմնադրության օրից նրա անդամն էր և ավագներից մեկը։ Ակումբը նրան էր հանձնարարել Բագրատիոնի համար հանդես կազմակերպելու գործը, որովհետև հազիվ թե մեկը կարողանար նրա պես ճոխ, լիառատ խնջույք սարքել, մանավանդ այն պատճառով, որ հազիվ թե մեկը կարողանար և ցանկանար իր դրամը ծախսել, եթե դա հարկավոր լիներ խնջույք սարքելու համար։ Ակումբի խոհարարն ու տնտեսն ուրախ դեմքերով

լսում էին կոմսի կարգադրությունները, որովհետև գիտեին, որ միայն նրա մոտ կարելի է լավ շահվել ճաշից, որը սովորաբար նստում էր մի քանի հազար։

— Տե՛ս ուրեմն, արգանակի մեջ սունկ կգցեք։

— Կնշանակի երեք հատ սա՞ղ, — հարցնում էր խոհարարը։

Կոմսը մտածմունքի մեջ ընկավ։

— Երեք. պակաս չի կարելի... մայոնեզ[1], մեկ, — ասավ նա մատը ծալելով։

— Ուրեմն կհրամայեք ստերլետ ձկից խոշորնե՞րը վերցնել, — հարցրեց տնտեսը։

— Ի՛նչ արած, վերցրու, քանի որ չեմ զիջում։ Հա՛, քիչ մնաց մոռանայի։ Չէ որ հարկավոր է մի ուրիշ անտրե[2] էլ սեղանի համար։ Ա՛խ, աստված իմ։ — Նա բռնեց գլուխը։ — Իսկ ո՞վ պետք է ծաղիկներ բերի։ Միտենկա, ա՛յ Միտենկա, մի վազիր բաղաքամերձ կալվածքը, — դիմեց նա իր ձայնի վրա ներս մտնող կառավարչին, — վազիր այնտեղ և այգեպան Մաքսիմկային պատվիրիր, որ ճորտերին իսկույն գործի դնի։ Ասա, որ ջերմոցի բոլոր ծաղիկներն այստեղ բերեն, և թող թաղիքներով ծա կ ն, որ ցուրտը չտանի։ Այնպես որ ուրբաթ օրը այստեղ երկու հարյուր ծաղկաման լինի։

Կրկին ու կրկին զանազան հրամաններ տալով, նա ուզում էր գնալ հանգստանալու իր սիրելի կոմսուհու մոտ, բայց էլի ինչ-որ կարևոր բան հիշեց, վերադարձավ, նորից կանչեց խոհարարին ու տնտեսին և դարձյալ սկսեց հրամաններ տալ։ Դռների մոտ լսվեց տղամարդու թեթև քայլվածք, խթանների շխկոց, և ներս մտավ գեղեցկատես, կարմրադեմ, սևին տվող բեղերով ջահել կոմսը, ըստ երևույթին, հանգստացած ու թարմացած Մոսկվայում՝ անդորրության պայմաններում։

— Ախ, եղբայր պատվական, շշմել եմ գործի մեջ, — ասավ ծերունին ժպտալով, կարծես որդուց ամաչելով։ — Գոնե դու օգնիր։ Հարկավոր են էլի երգիչներ։ Երաժշտախումբ ունեմ, հիմա գնչուներ կանչե՞նք, թե ի՞նչ։ Դուք՝ զինվորականներդ, սիրում եք այդ։

---

[1] Այստեղ՝ ձկնից պատրաստած կերակուր։

[2] Առաջին ճաշատեսակ։

— Ճիշտն ասած, հայրիկ, ես կարծում եմ, որ իշխան Բագրատիոնը, երբ պատրաստվում էր Շենգրաբենի ճակատամարտի համար, ավելի քիչ էր անհանգստանում, քան դուք այժմ, — ասավ որդին ժպտալով։

Ձեր կոմսը բարկացած ձևացավ։

— Խոսում ես, ապա մի՞ փորձիր։

Եվ կոմսը դիմեց մոտը կանգնած խոհարարին, որ խելացի ու պատկառելի դեմքով, զննողաբար ու քնքշությամբ դիտում էր հորն ու որդուն։

— Տեսնո՞ւմ ես, Ֆեոկտիստ, ի՞նչ ջահելներ են, — ասավ նա, — ծիծաղում են մեզ՝ ծերերիս վրա։

— Ինչ արած, ձերդ պայծառափայլություն. նրանցն այն է, որ լավ ուտեն միայն, իսկ երբ բանը գա պատրաստելուն և սեղան սարքելուն՝ դա նրանց գործը չի։

— Այդպես է, այդպես, — գոչեց կոմսը և ուրախ-ուրախ որդու ձեռքը բռնելով, բացականչեց. — Այ, լավ ձեռս ընկար։ Այս բոպեիս սահնակ նստիր, գնա Բեզուխովի մոտ ու ասա՛, թե ահա կոմսը, Իլյա Անդրեյիչն ուղարկել է մորի և թարմ անանաս խնդրելու ձեզնից։ Ուրիշ ոչ ոքի մոտ չի լինի։ Ինքը Բեզուխովն այստեղ չի, ուրեմն գնա իշխանադուստրերին ասա. այնտեղից էլ, այ ինչ, գնա դու Ռազգուլյայ, — կառապան Իպատկան գիտի, — գտիր այնտեղ գնչու Իլյուշկային, որը, հիշում ես, այն օրը պարում էր կոմս Օռլովի տանը, սպիտակ կազակին հագած, և նրան քաշ տուր այստեղ, ինձ մոտ։

— Գնչուհիների՞ հետ բերեմ նրան, — հարցրեց Նիկոլայը ծիծաղելով։ — Դե, դե...

Այդ միջոցին անձայն քայլերով, մտազբաղ, ժտահոգ և միաժամանակ քրիստոնեական հեզ տեսքով, որ երբեք չէր հեռանում նրա դեմքից, ներս մտավ Աննա Միխայլովնան։ Զսպված էր նա ամեն օր կոմսին տեսնում էր խալաթով, բայց և այնպես կոմսը միշտ շփոթվում էր նրա առաջ և ներողություն խնդրում հագուստի համար։

— Ոչինչ, կոմս, հոգիս, ոչինչ, — ասավ Աննա Միխայլովնան, աչքերը հեզաբար գոցելով։ — Ես կերթամ Բեզուխովի մոտ, — ասավ նա։ — Պիեռը եկել է մենք հիմա ամեն ինչ կբարեանք նրա մոտ, կոմս, նրա ջերմոցներից։ Ես հենց ուզում

էի նրան տեսնել։ Նա ինձ ուղարկել է Բորիսի համակը։ Փառք աստծու, Բորյան հիմա շտաբումն է։

Կոմսն ուրախացավ, որ Աննա Միխայլովնան հանձնարարությունների մի մասը վերցրեց իր վրա, և հրամայեց փոքրիկ կառեթը լծել։

— Դուք Բեզուխովին կասեք, որ գա։ Ես նրան կմտցնեմ հրավիրյալների ցուցակի մեջ։ Նա կնոջ հետ միասի՞ն է, — հարցրեց նա։

Աննա Միխայլովնան աչքերը ոլորեց և նրա դեմքին երևվաց մի խորին թախիծ։

— Է՞հ, բարեկամս, նա շատ դժբախտ է, — ասավ Աննա Միխայլովնան։ — Եթե ճիշտ է, ինչ որ լսել ենք, դա սարսափելի է։ Սկի մտքներովս ա՞նց էր կենում, երբ ուրախանում էինք նրա բախտավորության վրա։ Եվ այնքա՞ն բարձր, մաքուր հոգու տեր է այդ երիտասարդ Բեզուխովը։ Այո, սրտանց խղճում եմ և կաշխատեմ մխիթարել նրան, որքան կարող եմ։

— Ի՞նչ է պատահել որ, — հարցրին հայր և որդի Ռոստովները։

Աննա Միխայլովնան խոր հառաչեց։

— Դոլոխովը, Մարյա Իվանովնայի որդին, — ասավ նա խորհրդավոր շշուկով, — ասում են բոլորովին խայտառակել է Պիեռի կնոջը։ Պիեռը նրան մարդամեջ դուրս բերեց, հրավիրեց իր տունը՝ Պետերբուրգ, և ահա... Կինը եկավ այստեղ, այդ թոկից փախածն էլ ետևից, — ասավ Աննա Միխայլովնան, կամենալով իր համակրանքը հայտնել Պիեռին, բայց ձայնի ակամա շիշտով ու կիսաժպիտներով համակրանք ցույց տալով թոկից փախածին, ինչպես անվանում էր նա Դոլոխովին։ — Ասում են Պիեռը վշտից մեռած է ու թաղած չի։

— Դե, այնուամենայնիվ, ասացեք նրան, որ գա. ամեն ինչ կմոռանա։ Մեծ խնջույք է լինելու։

Հետևյալ օրը, մարտի երեքին, ցերեկվա ժամը 2-ին, Անգլիական ակումբի 250 անդամները և 50 հոգի հյուրեր ճաշի հրավիրված՝ սպասում էին ավստրիական արշավանքի հերոս, այժմ թանկագին հյուր իշխան Բագրատիոնին։ Սկզբում, երբ տեղեկություն ստացվեց Աուստերլիցի ճակատամարտի մասին, Մոսկվան տարակուսանքի մեջ ընկավ։ Այդ ժամանակ հաղթություններն այնպես սովորական էին դարձել ռուսների

համար, որ պարտության լուրն ստանալով, մի շարք մարդիկ ուղղակի չէին հավատում, իսկ ոմանք այդ տարօրինակ անցքի համար բացատրություններ էին սրոնում ինչ-որ անսովոր պատճառների մեջ։ Անգլիական ակումբում, ուր հավաքվում էին ճիշտ տեղեկություններ և կշիռ ունեցող բոլոր նշանավոր մարդիկ, դեկտեմբեր ամսին, երբ սկսվեցին լուրեր ստացվել, ոչինչ չէին խոսում պատերազմի և վերջին ճակատամարտի վերաբերյալ, կարծես բոլորն էլ խոսքերը մեկ էին արել՝ լռել այդ ճակատամարտի մասին։ Այն մարդիկ, որ ուղղություն էին տալիս խոսակցություններին, այն է՝ կոմս Ռոստոպչինը, իշխան Յուրի Վլադիմիրովիչ Դոլգորուկին, Վալուևը, կոմս Մարկովը, իշխան Վյազեմսկին,— չէին երևում ակումբում, այլ հավաքվում էին տներում, իրենց նեղ շրջանակների մեջ, և մոսկվացիք, որ սովոր էին ուրիշի բերանից խոսելու (որոնց թվին պատկանում էր և Իլյա Անդրեյիչ Ռոստովը), կարճ ժամանակով մնացին առանց որոշակի կարծիքի՝ պատերազմի մասին, և՝ առանց առաջնորդների։ Մոսկվացիք զգում էին, որ ինչ-որ վատ բան կա, և որ այդ վատ լուրերի մասին դատողություններ անելը դժվար է, ուստի և գերադասում էին լռել։ Բայց մի քանի ժամանակից հետո, ինչպես երդվյալները դուրս են գալիս խորհրդակցական սրահից, երևացին և ջոջերը, որոնք կարծիք էին ստեղծում ակումբում, և նորից ամեն ինչ ասվեց պարզ ու որոշակի։ Գտնվեցին այդ անօրինակ, շլսված ու անհնարին անցքի պատճառները, այն, որ ռուսները ջարդվել են, և ամեն ինչ պարզվեց, ու Մոսկվայի բոլոր անկյուններում խոսեցին միևնույն բանը։ Այդ պատճառներն էին. ավստրիացիների դավաճանությունը, զորքի վատ պարենավորումը, լեհ Պրժեբիշևսկու և ֆրանսացի Լանժերոնի դավաճանությունը, Կուտուզովի անընդունակությունը և (ավելացնում էին կամացուկ) թագավորի ջահելությունն ու անփորձությունը, որ հույսը դրել էր ընչին ու վատ մարդկանց վրա։ Սակայն զորքը, ռուսական զորքը, ասում էին ամենքը, անհման էր և քաջության հրաշքներ էր գործում։ Զինվորները, սպաները, գեներալները հերոս էին։ Բայց հերոսների հերոսը՝ իշխան Բագրատիոնն էր, որ հռչակվել էր իր՝ Շենգրաբենի ճակատամարտով և Աուստերլիցի նահանջով, ուր նա մենակ իր զորասյունը պահեց կազմ ու կանոնավոր և ամբողջ օրը ետ էր մղում կրկնակի ուժեղ

թշնամուն։ Որ Բագրատիոնը Մոսկվայում ընդունվեց իբրև հերոս, դրան նպաստեց և այն, որ նա կապեր չուներ Մոսկվայում և դրսեցի էր։ Չանձին Բագրատիոնի արժանի պատիվ էր տրվում քաջարի, պարզ, կապերից ու բանսարկություններից ազատ մի ռուս ռազմիկի, որի անունն իտալական արշավանքի հիշողություններով կապված էր Սուվորովի անվան հետ։ Բացի դրանից, Բագրատիոնին մատուցվող այդ հարգանքը պերճախոս կերպով վկայում էր այն անբարյացակամության և անվստահության մասին, որ կար Կուտուզովի նկատմամբ։

— Եթե չլիներ էլ Բագրատիոնը, il faudrait l'inventer[1],— ասավ հանաքչի Շինշինը, ծաղրական կերպով ձևափոխելով Վոլտերի խոսքերը։ Կուտուզովի մասին ոչ ոք չէր խոսում. մի քանիսը միայն քրթմնջալով անարգում էին նրան, անվանելով պալատական խաղալիք և ծեր սատիր։

Ամբողջ Մոսկվայում բերնից-բերան էր անցնում իշխան Դոլգորուկովի խոսքերը, թե «ծեփելով, ծեփելով, մի օր էլ ինքդ կծեփվես», որ մեր այսօրվա պարտության հանդեպ իրեն մխիթարում էր նախկին հաղթությունների հիշատակներով. կրկնվում էին և Ռաստոպչինի խոսքերն այն մասին, թե ֆրանսական զինվորին կովի համար պետք է ոգևորել ճոռոմ խոսքերով, թե գերմանացիների հետ պետք է խոսել տրամաբանորեն, համոզելով նրանց, որ փախչելը վտանգավոր է, քան առաջ գնալը, իսկ ռուս զինվորին պետք է միայն զրպարտել և խնդրել — կամա՛ց։ Ամեն կողմից լսվում էին նորանոր պատմություններ արիության առանձին դեպքերի մասին, որ ցույց էին տվել մեր զինվորներն ու սպաներն Աուստերլիցի մոտ։ Այնի՛նչը փրկեց դրոշակը, այսի՛նչը սպանեց հինգ ֆրանսացի, երրորդը մեն-մենակ լցրեց հինգ թնդանոթ։ Խոսում էին և Բերգի մասին, ովքեր չէին ճանաչում, թե նա՝ աջ ձեռքից վիրավորվելով, սուրն առել է ձախ ձեռքը և առաջ գնացել։ Բալկոնսկու մասին ոչինչ չէին խոսում, և միայն նրան մոտիկ ճանաչող մարդիկ ցավում էին, որ նա շուտ մեռավ, հղի կինը թողնելով խենթ հոր խնամքին։

---

[1] Պետք էր ստեղծել նրան։

III

Մարտի երեքին Անգլիական ակումբի բոլոր սենյակներում կանգնել էր խոսակցող ձայների աղմուկ շշունջ, և ինչպես մեղուները գարնան օդում, — այնպես էլ ակումբի անդամներն ու հյուրերը՝ նշանագլխարկներով ու ֆրակներով, մի քանիսը նույնիսկ շպարված ու կաֆտան հագած, — ետ ու առաջ էին անում, մոտենում էին իրար ու բաժանվում. նրանցից ոմանք նստած էին; ոմանք կանգնած։ Երկարաճիտ գուլպաներով, կոշիկներ հագած ու շպարված լաքեյները կանգնել էին դռների մոտ և լարված ուշադրությամբ ջանում էին աչքաթող չանել հյուրերի և ակումբի անդամների ամե՛ն մի շարժումը, որպեսզի իրենց ծառայությունն առաջարկեին։ Ներկաների մեծամասնությունը — ծեր, պատկառելի մարդիկ էին՝ լայն, ինքնավստահ դեմքերով, հաստ մատներով, հաստատ շարժվածքով ու ձայնով։ Այս կարգի հյուրերն ու անդամները նստել էին հայտնի, սովորական տեղերում և կազմել էին որոշ, սովորական խմբեր։ Իսկ փոքրամասնությունը կազմված էր պատահական հյուրերից, առավելապես երիտասարդներից, որոնց թվում էին Դենիսովը, Ռոստովն ու Դոլոխովը, որը դարձյալ Սեմյոնովյան գնդի սպա էր։ Երիտասարդների դեմքին, առանձնապես զինվորականների, նկատվում էր արհամարհական պատկառանքի զգացումի մի արտահայտություն դեպի ծերերը, որ կարծես թե ասում էր հին սերնդին. — հարգել և պատվել ձեզ՝ պատրաստ ենք, բայց լավ հիշեցեք, որ այնուամենայնիվ ապագան մերն է։

Նեսվիցկին էլ այդտեղ էր, իբրև ակումբի հին անդամ։ Գիեռը, որ կնոջ կարգադրությամբ մազերը թողել էր, ակնոցը վերցրել, նորաձև հագնված, բայց տրտում ու ընկճված տեսքով պտտվում էր դահլիճներում։ Նրան, ինչպես ամեն տեղ, շրջապատել էր այնպիսի մարդկանց մթնոլորտ, որոնք խոնարհվում էին նրա հարստության առաջ, և նա իշխելու սովորությամբ, նրանց վերաբերվում էր անտարբեր արհամարհանքով։

Ըստ տարիքի՝ նա պետք է որ երիտասարդների հետ լիներ, բայց հարստությամբ ու կապերով՝ նա ծեր, պատկառելի հյուրերի շրջանի անդամ էր, ուստի մի խմբից անցնում էր մյուսը։ Ամենանշանավոր ծերերը կազմում էին այդ շրջանի կենտրոնը,

որին պատկառանքով մոտենում էին մինչև անգամ անծանոթները, որպեսզի լսեն հայտնի մարդկանց։ Մեծ շրջանակներ էին կազմվել կոմս Ռաստոպչինի, Վալուևի և Նարիշկինի շուրջը։ Ռաստոպչինը պատմում էր, թե ինչպես փախչող ֆրանցիները կորակ տել են ռուսներին և ռուսները հարկադրված են եղել սվիններով իրենց համար ճանապարհ բանալ փախչողների միջով։

Վալուևը գաղտնի պատմում էր, թե Ուվարովը Պետերբուրգից ուղարկված է նրա համար, որ մոսկովցիների կարծիքն իմանա Աուստերլիցի մասին։

Երրորդ խմբի մեջ Նարիշկինը խոսում էր ավստրիական զինվորական խորհրդի նիստի մասին, ուր Սուվորովն աքաղաղի նման կանչել էր ի պատասխան ավստրիական գեներալների հիմարության։ Շինշինը, որ կանգնած էր հենց այդտեղ, կամենում էր հանաքով ասել, թե Կուտուզովը, ինչպես երևում է, անդամ այդ հեշտ արվեստը — աքաղաղի նման կանչելը — չի կարողացել սովորել Սուվորովից. բայց ծերերը խստությամբ նայեցին կատակաբանին, դրանով զգացնել տալով, որ այդտեղ և այդ օրը անվայել է այդպես խոսել Կուտուզովի մասին։

Կոմս Իլյա Անդրեյիչ Ռոստովը մտահոգ, շտապ-շտապ, իր փափուկ կոշիկներով, գնում-գալիս էր սեղանատնից հյուրանոց, շտապով և միակերպ գլուխ տալով նշանավոր ու աննշան անձանց, որոնց բոլորին նա ճանաչում էր, և երբեմն աչքերով որոնում էր իր բարեկազմ որդուն, հայացքը հրճվանքով ուղղում էր նրան ու աչքով անում։ Երիտասարդ Ռոստովը կանգնած էր լուսամուտի մոտ, Դոլոխովի կողքին, որի հետ նա նոր էր ծանոթացել և որի ծանոթությունը բարձր էր գնահատում։ Մեր կոմսը մոտեցավ նրանց և սեղմեց Դոլոխովի ձեռը։

— Խնդրեմ շնորհ բերեք մեզ մոտ. ուրեմն դուք ծանոթ եք իմ կորիճին... այնտեղ միասին հերոսություններ եք արել... Ա՜, Վասիլի Իգնատիչ... ողջույն ծերուկ, — դիմեց նա մոտից անցնող ծերունուն, բայց իր ողջույնը դեռ չէր ասել-վերջացրել, երբ բոլորն իրարով անցան և վազելվազ մոտեցող լաքեյը վախեցած դեմքով զեկուցեց. «Շնորհ բերին։

Զանգակները հնչեցին. ավագներն առաջ անցան. զանազան սենյակներում ցրված հյուրերը, ինչպես թափ տված հա-

ճարը թիու վրա, ի մի խմբվեցին և կանգ առան մեծ հյուրասրահում, դահլիճի մուտքի առաջ։

Նախատենյակի դռան մոտ երևաց Բագրատիոնը, առանց գլխարկի և թրի, որոնք նա, ակումբի սովորության համաձայն, թողել էր բարապանի մոտ։ Նա գառան մորթու գլխարկով չէր, ոչ էլ մտրակն ուսովը գցած, ինչպես տեսել էր նրան Ռոստովը Աուստերլիցի ճակատամարտի նախօրյակի գիշերը, այլ հագել էր նոր նեղ պաշտոնազգեստ՝ ռուսական ու օտարերկրյա շքանշաններով և Գեորգի աստղը՝ կրծքի ձախ կողմը։ Նա, ըստ երևույթին, հենց այժմ, ճաշից առաջ, խուզել էր մազերն ու բակենները, որը և տգեղացնում էր նրա դեմքը։ Նրա դեմքին կար ինչ-որ միամիտ-տոնական մի բան, որը միացած նրա հաստատուն, առնական գծերի հետ, դեմքին տալիս էր փոքր-ինչ կոմիկական արտահայտություն։ Բեկլեշովը և Ֆեոդոր Պետրովիչ Ուվարովը, որ եկել էին նրա հետ միասին, կանգնեցին դռան մոտ, որպեսզի նա, որպես ավագ հյուր, իրենցից առաջ անցնի։ Բագրատիոնը շփոթվեց, չուզելով օգտվել նրանց ցույց տված քաղաքավարությունից. մի վայրկյան ամենքը կանգ առան դռան մոտ, և, վերջապես, Բագրատիոնը, այնուամենայնիվ, առաջ անցավ։ Նա, չիմանալով ո՛ւր թաքցնել ձեռները, ընդունարանի պարկետի վրա քայլում էր ամոթխած ու անհամարձակ քայլերով. նրա համար սովորական ու հեշտ էր քայլել հերկած դաշտում, գնդակների տակ, ինչպես անցել էր Շենգրաբենում, Կուրսկյան գնդի առջևից։ Ավագները դիմավորեցին նրան առաջին դռան մոտ, ասելով մի քանի խոսք, թե ուրախ են՝ տեսնելու այդչափ մի թանկագին հյուրի ու, չսպասելով նրա պատասխանին, կարծես նրան տիրելով, շրջապատեցին ու տարան հյուրասրահ։ Հյուրասրահի դռնով անհնար էր անցնել, շնորհիվ ակումբի խմբված անդամների ու հյուրերի, որոնք իրար սեղմելով և իրար ուսի վրայից, ջանք էին թափում, իբրև մի հազվագյուտ գազանի, լավ տեսնել Բագրատիոնին։ Կոմս Իլյա Անդրեյիչն ամենից առանդով ծիծաղելով «և թո՛ղ, mon cher, թո՛ղ, թողՍ» ասելով, հրեց ամբոխը և հյուրերին առաջնորդեց հյուրասրահու նստեցրեց մեջտեղի բազմոցին։ Մեծամեծները, ակումբի ամենապատվավոր անդամները, խռնվեցին նորեկների շուրջը։ Կոմս Իլյա Անդրեյիչը, կրկին ճեղքելով ամբոխը, դուրս եկավ հյուրասրահից և մի րոպե հետո վերադարձավ մի ուրիշ ավագի հետ, բերելով մեծ արծաթյա սկուտեղ, որը նա մատուցեց իշխան Բագրատիոնին։ Սկուտեղի վրա դրված էր հերոսի պատվի նշան նկած ու տպագրած մի ոտանավոր։ Բագրատիոնը, սկուտեղը տեսնելով, վախեցած շուրջը նայեց, կարծես օգնություն որոնելու։ Սակայն բոլորի աչքերն արտահայտում էին մի պահանջ, որ նա ընդունի մատուցածը։ Զգալով, որ ինքը գտնվում է հյուրընկալների իշխանության տակ, Բագրատիոնը վճռականորեն երկու ձեռով վերցրեց սկուտեղը և կշտամբանքով ու բարկացած նայեց մատուցանող կոմսին։ Մեկը խոնարհաբար առավ սկուտեղը Բագրատիոնի ձեռից (այլապես թվում էր, թե նա մտադիր է պահել այն մինչև երեկո և այդպես էլ գնալ սեղանատուն) ու նրա ուշադրությունը հրավիրեց ոտանավորի վրա։ «Է՜հ, ինչ արած կկարդամ», կարծես ասաց Բագրատիոնը և հոգնած աչքերը թղթին հառելով, սկսեց կարդալ այն լուրջ ու կենտրոնացած տեսքով։ Հեղինակն ինքը վերցրեց ոտանավորը և սկսեց կարդալ։ Իշխան Բագրատիոնը թեքեց գլուխն ու լսեց.

«Славь тако Александра век
И охраняй нам Тита на престоле.
Будь купно страшный вождь и добрый человек,
Рифей в отечестве, а Цесарь в бранном поле
Да, счастливый Наполеон,
Познав чрез опыты, каков Багратион.
Не смеет утруждать Алкидов, русских боле...»*

Սակայն նա դեռ չէր վերջացրել, երբ որոտաձայն ավագապատասավորը հայտարարեց. «Ճաշը պատրաստ է»։ Դուռը բացվեց, սեղանատնից որոտաց լեհականը. «Гром победы раздавайся, веселися, храбрый Росс», և կոմս Իլյա Անդրեյիչը, բարկացած նայելով հեղինակին, որ շարունակում էր կարդալ ոտանավորը, գլուխ տվեց Բագրատիոնին։ Բոլորը վեր կացան, զգալով, որ ճաշն ավելի կարևոր է ոտանավորից, և Բագրատիոնը կրկին ամենքի առջևից գնաց դեպի սեղանը։ Առաջին տեղը, երկու Ալեքսանդրի՝ Բեկլեշևի և Նարիշկինի մեջտեղը (այդ անունը նույնպես նշանակություն ուներ թագավորի անվան նկատմամբ) նստեցրին Բագրատիոնին։ 300 մարդ տեղավորեցին սեղանատանը՝ ըստ աստիճանների ու

դիրքի. ով ավելի նշանավոր էր — մոտ էր նստել պատվելի հյուրին, այնպես բնական կերպով, ինչպես ջուրը թափվում է ավելի այնտեղ, ուր տեղն ավելի ցած է։

Ճաշից առաջ կոմս Իլյա Անդրեյիչը որդուն ներկայացրեց իշխանին։ Բագրատիոնը նրան ճանաչելով, ասաց մի քանի անկապ, անհաջող խոսքեր, ինչպես նրա բոլոր խոսքերը, որ ասավ այդ օրը։ Կոմս Իլյա Անդրեյիչն այն միջոցին, երբ Բագրատիոնը խոսում էր իր որդու հետ, ուրախ, հպարտ նայում էր ամենքին։

Նիկոլայ Ռոստովը՝ Դենիսովի ու նոր ծանոթ Դոլոխովի հետ միասին նստեցին գրեթե սեղանի մեջտեղը։ Նրանց դիմաց նստեց Պիեռը՝ իշխան Նեսվիցկու կողքին։ Կոմս Իլյա Անդրեյիչը նստած էր Բագրատիոնի դեմ ու մյուս ավագների հետ և հյուրասիրում էր իշխանին, իր մեջ անձնավորելով մոսկովյան սիրալիրությունը։

Նրա ջանքերն ապարդյուն չանցան։ Նրա ճաշը, թե՛ դասից և թե՛ ուտից, հիանալի էր, բայց այնուամենայնիվ նա չկարողացավ հանգիստ մնալ մինչև ճաշի վերջը։ Նա աչքով էր անում բուֆետապանին, շշուկով կարգադրություններ էր անում լաքեյներին և չէր կարողանում առանց հուզմունքի սպասել իրեն ծանոթ յուրաքանչյուր նոր կերակրի։ Ամեն ինչ հիանալի էր։ Երբ մատուցեցին ճաշի երկրորդ տեսակը, որի հետ կար մի խոշոր ձուկ (որը տեսնելով Իլյա Անդրեյիչը կարմրեց ուրախությունից ու ամոթխածությունից), լաքեյներն սկսեցին խցանները հանել և շամպայն լցնել։ Չկից հետո, որը որոշ տպավորություն թողեց, կոմս Իլյա Անդրեյիչն ու մյուս ավագներն իրար նայեցին։ «Շատ կենացներ են լինելու, պետք է սկսել», շշնջաց նա և, գավաթը ձեռն առնելով, վեր կացավ։ Բոլորը լուռ սպասում էին, թե ի՞նչ է ասելու։

— Թագավոր կայսեր կենացը, — գոչեց նա, և նույն այդ րոպեին նրա բարի աչքերը թրջվեցին ուրախության ու բերկրանքի արցունքներից։ Նույն այդ րոպեին նվագեցին «Гром победы, раздавайся». Բոլորը վեր կացան տեղներից և «ուռռա» կանչեցին։ Բագրատիոնը նույնպես «ուռռա» գոչեց՝ ճիշտ այն ձևով, ինչպես գոչել էր Շենգրաբենի դաշտում։ Սրիտասարդ Ռոստովի ցնծագին ձայնը լսելի էր բոլոր 300 ձայնի մեջ։ Նա քիչ էր մնում լաց լինի։ «Թագավոր կայսեր կենացը, — գոչեց

նա, — ուռռա՞»։ Բաժակը միանգամից գլխին քաշելով, նա խփեց այն հատակին։ Ու երկար շարունակվում էին բարձր աղաղակները։ Երբ ձայները լռեցին, լաքեյները հավաքեցին ջարդած ամանեղենը, և ամենքն սկսեցին նստոտել ու, իրենց ձայների վրա ժպտալով, խոսակցել։ Կոմս Իլյա Անդրեյիչը կրկին վեր կացավ, նայեց իր պնակի մոտ դրված գրության և առաջարկեց մեր վերջին արշավանքի հերոս Պյոտր Իվանովիչ Բագրատիոնի կենացը. կոմսի կապույտ աչքերը կրկին թրջվեցին արցունքից։ «Ուռռա՞» կրկին ձայնեցին 300 հյուրերն ու երաժշտության փոխարեն լսվեց երգիչների ձայնը, որ երգում էին Պավել Իվանովիչ Կուտուզովի հեղինակած մեղեդին.

Тщетны Россам все препоны,
Храбрость есть побед залог,
Есть у нас Багратионы,
Будут все враги у ног — и. т. д.

Հենց որ երգը վերջացավ, հետևեցին նորանոր կենացներ, որոնց միջոցին ավելի ու ավելի էր զգացվում կոմս Իլյա Անդրեյիչը, և դարձյալ շատ աման ջարդվեց, դարձյալ շատ բացականչություն եղավ։ Խմեցին Բեկլեշովի, Նարիշկինի, Ուվարովի, Դոլգորուկովի, Ապրաքսինի, Վալուևի կենացը, խմեցին ավագների կենացը, կարգադրիչի կենացը, ակումբի բոլոր անդամների կենացը, ակումբի բոլոր հյուրերի կենացը և, վերջապես, առանձին խմեցին ճաշը ձեռնարկող կոմս Իլյա Անդրեյիչի կենացը։ Այս կենացի միջոցին կոմսը հանեց թաշկինակը և, նրանով երեսը ծածկելով, սաստիկ լաց եղավ։

IV

Պիեռը նստել էր Դոլոխովի և Նիկոլայ Ռոստովի դիմաց։ Նա ուտում էր շատ և ագահաբար. շատ էլ խմում էր, ինչպես միշտ։ Բայց նրանք, ովքեր մոտից ճանաչում էին նրան, տեսնում էին, որ այդ օրը նրա մեջ կատարվել է մի ինչ-որ մեծ փոփոխություն։ Ճաշի ամբողջ միջոցին նա լուռ էր և, աչքերը կկոցելով ու դեմքը կնճռելով, շուրջն էր նայում կամ, աչքերը մի բանի հառելով, բոլորովին ցրված տեսքով, մատով քչփորում էր քիթը։ Նրա դեմքը տխուր էր ու մռայլ։ Նա, կարծես,

ոչինչ չէր տեսնում, չէր լսում, թե ինչ է կատարվում շուրջը, և մտածում էր ինչ-որ մի ծանոթ ու անլուծելի բանի մասին։

Այդ անլուծելի, նրան տանջող խնդիրը իշխանուհու՝ Մոսկվայում արած ակնարկներն էին այն մասին, թե Դոլոխովը մոտ է իր կնոջ հետ, և այս առավոտ ստացած անանուն նամակը, որի մեջ ստոր կատակով, որ հատուկ է բոլոր անստորագիր նամակներին, ասված էր, թե նա վատ է տեսնում իր ակնոցի միջով և թե նրա կնոջ կապը Դոլոխովի հետ գաղտնիք է միայն իր՝ Պիեռի համար։ Պիեռը բնավ չհավատաց ոչ իշխանուհու ակնարկներին, ոչ էլ նամակին, բայց այժմ նրա համար շատ տհաճ էր նայել Դոլոխովին, որ նստած էր իր առջև։ Ամեն անգամ, երբ նրա հայացքը պատահաբար հանդիպում էր Դոլոխովի գեղեցիկ լիրբ աչքերին, Պիեռն զգում էր, որ ինչ-որ մի սարսափելի այլանդակ բան է ծագում իր սրտում, ու նա արագ շրջում էր երեսը։ Ակամա հիշելով կնոջ ամբողջ անցյալը և նրա վերաբերմունքը դեպի Դոլոխովը, Պիեռը պարզ տեսնում էր, որ այն, ինչ ասված է նամակում, կարող է ճիշտ լինել, կարող է, համենայն դեպս, ճիշտ թվալ, եթե մինչև անգամ այդ վերաբերեր ոչ իր կնոջը։ Պիեռն ակամա հիշում էր, թե ինչպես Դոլոխովը, որին ներել էին արշավանքներից հետո, վերադարձավ Պետերբուրգ ու եկավ իր մոտ։ Օգտվելով քեֆերի ժամանակ Պիեռի հետ հաստատած բարեկամական հարաբերությունից, Դոլոխովն ուղղակի իջևանեց նրա տանը, և Պիեռը տեղավորեց նրան ու փոխարինաբար փող էլ տվեց նրան։ Պիեռը հիշում էր, թե ինչպես էլենը ժպտալով իր անբավականությունն էր հայտնում, որ Դոլոխովն ապրում է իրենց տանը, և թե ինչպես Դոլոխովը լրբաբար գովում էր իր կնոջ գեղեցկությունն ու ինչպես մինչև Մոսկվա գալու ժամանակը՝ մի րոպե անգամ չէր բաժանվում իրենցից։

«Այո, Դոլոխովը շատ գեղեցիկ է», մտածում էր Պիեռը, «ես նրան ճանաչում եմ։ Նա մի առանձին հաճույք կզգա, որ խայտառակի ենթարկի ինձ ու ծիծաղի ինձ վրա, հենց այն պատճառով, որ ես շարշարվել եմ նրա համար, խնամել եմ նրան ու օգնել։ Գիտե՛մ, հասկանո՛ւմ եմ, թե ինչ նշանակություն կունենար իմ խայտառակությունը նրա աչքում, եթե դա ճիշտ լիներ։ Այո, եթե դա ճիշտ լիներ, բայց ես չե՛մ հավատում, իրավունք չունե՛մ հավատալու և չե՛մ կարող հավատալ»։ Պիեռը հիշեց

Դոլոխովի այն արտահայտությունը, որ երբեմն, կատաղության րոպեներին, ընդունում էր նրա դեմքը, ինչպես մի անգամ նա թաղականին կապեց արջից և ջուրն արավ, կամ երբ նա առանց որևէ պատճառի մարդու կանչում էր մենամարտի, և կամ ատրճանակով սպանում կառապանի ձին։ Կատաղության այդ արտահայտությունը հաճախ էր երևում Դոլոխովի դեմքին, երբ ինքը՝ Պիեռը նայում էր նրան։ «Հա՜, նա կովասեր է», մտածեց Պիեռը, «նրա համար ոչ մի նշանակություն չունի մարդ սպանելը. գուցե նրան թվում է, որ բոլորը վախենում են իրենից. գուցե և նա հաճույք է զգում այդ բանից. թերևս նա մտածի, որ ես էլ եմ վախենում իրենից։ Եվ իսկապես, ես վախենում եմ նրանից», — մտածեց Պիեռը և կրկին, այս մտքերի վրա, զգաց որ ինչ-որ մի հրեշավոր ու այլանդակ բան ծագեց իր սրտում։ Դոլոխովը, Դենիսովն ու Ռոստովը այժմ նստած էին Պիեռի դիմաց և շատ ուրախ էին երևում։ Ռոստովն ուրախ-ուրախ խոսակցում էր իր երկու ընկերոջ հետ, որոնցից մեկը քաջ հուսար էր, մյուսը՝ հայտնի կռվարար ու կապը կտրած ստահակ. երբեմն էլ նա քմծիծաղով նայում էր Պիեռին, որն իր ինքնամփոփ, անուշադիր տեսքով ու վիթխարի կերպարանքով զարմացնում էր բոլորին։ Ռոստովը Պիեռին անբարյացակամ նայում էր նախ նրա՝ համար, որ Պիեռն իր՝ Ռոստովի՝ հուսարական սպայի աչքում, սոսկական մի հարուստ էր, գեղեցկուհու ամուսին և ընդհանրապես կենդանի մարդ. երկրորդ՝ նրա համար, որ Պիեռն իր ինքնամփոփ ու ցրված տրամադրության մեջ չճանաչեց Ռոստովին և չպատասխանեց նրա ողջույնին։ Երբ սկսեցին թաղավորի կենացը խմել, Պիեռը, մտազբաղ լինելով, տեղից վեր չկացավ ու բաժակ չվերցրեց։

— Ինչո՞ւ չեք վեր կենում, — պոռաց նրա վրա Ռոստովը խանդավառ դեմքի հայացքն ուղղելով նրան։ — Մի՞թե չեք լսում. թաղավոր կայսեր կենացը։

Պիեռը, հառաչելով, հնազանդ վեր կացավ, խմեց իր բաժակը և, սպասելով, որ բոլորը նստեն, իր բարի ժպիտը դեմքին դարձավ Ռոստովին։

— Իսկ ես ձեզ չճանաչեցի էլ, — ասավ նա։ Բայց Ռոստովը ժամանակ չուներ նրան լսելու. նա աղաղակեց. «ուռռա՜»։

— Հը՛, դու չես ուզում ծանոթությունդ նորոգել, — ասավ Դոլոխովը Ռոստովին։

— Թող գնա՛, հիմարի մեկն է, — ասավ Ռոստովը։

— Դեղեցիկ կանանց ամուսիններին պետք է փաղաքշել, — ասավ Դենիսովը։

Պիեռը չէր լսում, թե ինչ են խոսում նրանք, բայց գիտեր, որ խոսում են իր մասին։ Նա կարմրեց և երեսը շուռ տվեց։

— Դե՛, հիմա՝ գեղեցիկ կանանց կենացը, — ասավ Դոլոխովը և լուրջ արտահայտությամբ, սակայն բերնի անկյուններով ժպտալով, բաժակը ձեռին դիմեց Պիեռին։

— Պետրուշկա, գեղեցիկ կանանց և նրանց սիրեկանների կենացը, — ասավ նա։

Պիեռը, աչքերը խոնարհած, խմեց իր բաժակը, առանց Դոլոխովին նայելու և նրան պատասխանելու։ Հաքիմը, որ բաժանում էր Կուտուզովի գրած մեդալը, մի թերթ էլ դրեց Պիեռի առաջ, իբրև ավելի պատվելի հյուր։ Պիեռն ուզեց վերցնել այն, բայց Դոլոխովը թեքվեց, խլեց թուղթը նրա ձեռից և սկսեց կարդալ։ Պիեռը նայեց Դոլոխովին և աչքերը խոնարհեց. այն հրեշավոր ու այլանդակ բանը, որ ճաշի ամբողջ միջոցին պղտորում էր նրա հոգին, նորից զարթնեց ու տիրեց նրան։ Եվ նա իր գիրուկ մարմնով թեքվեց սեղանի վրա։

— Չհամարձակվե՛ք վերցնել, — պոռաց նա։

Լսելով այդ ձայնը և տեսնելով, թե ո՛ւմն է վերաբերում այն, Նեսվիցկին և նրա աջակողմի հարևանը, երկյուղով ու արագ դարձան Բեզուխովին։

— Բավական է, բավական է, ի՞նչ եք անում, — շշնջացին նրանք։

Դոլոխովն իր պայծառ, ուրախ և դաժան աչքերով նայեց Պիեռին նույն ժպիտով, որ կարծես ասում էր. «Ա՛յ, այդ ինձ դուր է գալի՛ս»։

— Չեմ տա, — ասավ նա կտրուկ։

Պիեռը գունատ, դողացող շրթունքներով թուղթը ձգեց դեպի իրեն։

— Դուք... դուք... անպիտա՛ն... Ես հրավիրում եմ ձեզ մենամարտի, — ասավ նա աթոռը հրելով և վեր կացավ տեղից։

Այդ իսկ վայրկյանին, երբ Պիեռն արավ այդ և արտասանեց այդ խոսքերը, նա զգաց, որ իր կնոջ հանցավորության հարցը, որը տանջում էր նրան այս վերջին օրերը, վերջնակա-

նապես և որոշակի վճռվեց դրական մտքով։ Նա ատում էր կնոջը և ընդմիշտ կտրվել էր նրանից։ Չնայած Դենիսովի ինդրանքին, որ Ռոստովն այդ գործի մեջ չխառնվի, բայց և այնպես Ռոստովը համաձայնեց լինել Դոլոխովի մարտավկան և ճաշից հետո բանակցեց Բեզուխովի մարտավկա Նեսվիցկու հետ՝ մենամարտի պայմանների մասին։ Պիեռը մեկնեց տուն, իսկ Ռոստովը՝ Դոլոխովի և Դենիսովի հետ՝ մինչև ուշ երեկո մնաց ակումբում, լսելու գնչուներին ու երգանացներին։

— Այդպե՛ս ուրեմն, վաղը, Սոկոլնիկում, — ասավ Դոլոխովը, ակումբի շեմքում հրաժեշտ տալով Ռոստովին։

— Եվ դու հանգիստ ե՞ս, — հարցրեց Ռոստովը։

Դոլոխովը կանգ առավ։

— Բանն ահա ինչո՛ւմն է. մի երկու խոսքով հայտնեմ մենամարտի ամբողջ գաղտնիքը։ Երբ դու գնում ես մենամարտի, և կտակ ու քնքուշ նամակներ ես գրում ծնողներիդ, ու մտածում ես, թե կարող են քեզ սպանել, դու հիմար կլինես և հավանաբար կկորչես. բայց դու գնա մենամարտի այն հաստատ մտադրությամբ, որ նրան սպանես, որքան կարելի է շուտ, ու այն ժամանակ ամեն ինչ կարգին կլինի, ինչպես ասում էր ինձ մեր կոստրոմացի արջորսը։ Արջից էլ, ասում էր նա, ինչպե՞ս չվախենալ։ Բայց հենց որ նրան տեսնում ես, վախն ահ՝ցնում է և մտածում ես ի՛նչպես անես, որ չփախչի։ Հե՛նց այդպես էլ ես։ A demain, mon cher[1]!։

Մյուս օրը, առավոտյան ժամը 8-ին, Պիեռը Նեսվիցկու հետ եկան Սոկոլնիկի անտառը, ուր եկել էին արդեն Դոլոխովը, Դենիսովը և Ռոստովը։ Պիեռն զբաղված մարդու տեսք ուներ, որի մտածմունքները բնավ չէին վերաբերում առաջիկա գործին։ Նրա նիհարած դեմքը դեղնել էր։ Ըստ երևույթին գիշերը չէր քնել։ Նա մտացրիվ շուրջը նայեց և դեմքը կնճռեց՝ ասես շլացուցիչ արևից։ Նրան բացառապես երկու միտք էին զբաղեցնում. — կնոջ հանցավորությունը, որ անքուն գիշերից հետո այլևս անտարակուսելի էր նրա համար, և Դոլոխովի անմեղությունը, որը բնավ պարտավոր չէր պաշտպանել իրեն օտար մի մարդու պատիվ։ «Թերևս ես էլ նույնն անեի, եթե նրա տեղը լինեի», մտածում էր Պիեռը։ «Ամենայն հավանականու-

[1] Մինչև վաղը, սիրելիս։

Թյուրիմացություն ես էլ նույնը անեի, էլ ինչո՞ւ համարձակ այս մենամարտը, այս սպանությունը։ Կամ ես պիտի սպանեմ նրան, կամ նա պիտի գնդակ խփի իմ գլխին, արմունկին, ծնկան։ Հեռանալ այստեղից, փախչել, թաքնվել որևէ տեղ», անցնում էր Պիեռի մտքով։ Բայց հենց այդ րոպեին, երբ նրան պաշարել էին այս մտքերը, նա մի առանձին անդորր ու ցրված տեսքով, որ հարգանք էր ներշնչում նրան նայողներին, հարցրեց. «Շո՞ւտ կլինի, պատրա՞ստ է»։

Երբ ամեն բան արդեն պատրաստ էր, սրերը խրված էին ձյունի մեջ, որ ցույց էին տալիս այն տեղը, որից առաջ չպետք է անցնեին մենամարտողները, և երբ ատրճանակներն էլ լցրին, Նեսվիցկին մոտեցավ Պիեռին։

— Ես իմ պարտականությունը կատարած չէի լինի, կոմս, — ասավ նա երկչոտ ձայնով, — ես չէի արդարացնի այն վստահությունն ու պատիվը, որ դուք արիք ինձ, ընտրելով ձեր մարտավկան, եթե ես այս կարևոր, շատ կարևոր րոպեին չասեի ձեզ ամբողջ ճշմարտությունը։ Ես կարծում եմ, որ այս գործի համար չկան բավականաչափ պատճառներ և որ չարժի դրա համար արյուն թափել... Դուք, կոմս, անիրավացի էիք, այսինքն ոչ բոլորովին իրավացի. դուք տաքացաք...

— Այո՛, չափազանց հիմար կերպով... — ասավ Պիեռը։

— Ուրեմն թույլ տվեք ինձ ձեր զղջումը հայտնելու նրանց, և ես հավատացած եմ, որ մեր հակառակորդները կհամաձայնեն ընդունել ձեր ներողությունը, — ասավ Նեսվիցկին (այնպես, ինչպես և մյուսները գործին մասնակցողներից և ինչպես բոլորը նման գործերում, տակավին չհավատալով, որ բանը կհասնի իսկական մենամարտի)։ Դուք գիտե՛ք, կոմս, ավելի ազնիվ բան է ընդունել սխալը, քան հասցնել այն անուղղելի աստիճանի։ Վիրավորանք ոչ մի կողմից չի եղել։ Թույլ տվեք ինձ խոսել նրանց հետ,

— Չէ՞, էլ ի՞նչ խոսել, — ասավ Պիեռը, — միևնույն է... Ուրեմն պատրա՞ստ է, — ավելացրեց նա։ — Դուք ինձ ասացեք միայն՝ ո՞ր կողմը գնալ և ո՞ւր արձակել, — ասավ նա անբնական հեզությամբ ժպտալով։

Նա ատրճանակը ձեռն առավ և սկսեց հարց ու փորձ՝ կըրակելու եղանակի մասին, որովհետև մինչև այդ նա ձեռն ատրճանակ չէր վերցրել, ինչ որ սակայն չէր ուզում խոստովանել։

— Հա՛, այդպե՛ս, գիտե՛մ, ես մոռացել եմ միայն, — ասում էր նա։

— Ո՛չ մի ներողություն, ո՛չ մի բան, — ասում էր Դոլոխովը Դենիսովին, որն իր կողմից հաշտեցնելու նույն փորձն էր անում, և նույնպես մոտեցավ նշանակած տեղին։

Մենամարտի տեղն ընտրել էին ճանապարհից (ուր գտնվում էին սահնակները) 80 քայլ հեռու, փիճի անտառի մի փոքրիկ բացատում, որը ծածկված էր վերջին օրերի տաքությունից հալվող ձյունով։ Հակառակորդները կանգնած էին 40 քայլ իրարից հեռու, բացատի եզրերին։ Մարտավկաները տարածությունը չափեցին քայլերով, ոտնատեղեր թողնելով՝ թաց ու խոր ձյունի վրա, - իրենց կանգնած տեղից մինչև Նեսվիցկու և Դենիսովի սրերը, որոնք ձյունի մեջ խրված էին որոշելու այն սահմանը, որից առաջ չպետք է անցնեին մենամարտողները։ Սրերը տնկված էին տասը քայլ իրարից հեռու։ Տաք եղանակի հետ մառախուղ էր. 40 քայլի վրա ոչինչ չէր երևում։ Երեք րոպեի մեջ ամեն ինչ պատրաստ էր արդեն, և նրանք այնուամենայնիվ հապաղում էին սկսել. բոլորը լուռ էին։

V

— Դե՛, սկսե՛ք, — ասավ Դոլոխովը։

— Սկսենք, — ասավ Պիեռն առաջվա պես ժպտալով։

Դրությունը սարսափելի էր դառնում։ Պարզ էր, որ այդքան հեշտ սկսված գործն այլևս ոչ մի բանով չէր կարելի խափանել, որ այն կատարվում էր ինքնաբերաբար, մարդկանց կամքից անկախ, ու պետք է կատարվեր։

Դենիսովն առաջինը մոտեցավ բարյերին[1] և հայտարարեց.

— Քանի վող՝ հակաղ՝ակող՝դնեղը՝ հը՝աժաղ՝վեցին հաշտվել, աղ՝դյոք չսկսե՞լ. վեղ՝ցրեք ատղ՝ճանակնեղ՝ը և եղ՝եմ ասելուն պես՝ մոտեցեք։

— Մե՛կ. եղ՝կու, եղ՝եք, — գոչեց Դենիսովը բարկացած և մի կողմ քաշվեց։

Հակառակորդները տրորված արահետով ավելի ու ավելի

[1] Մենամարտողների միջև տարածությունը որոշող գծերը։

մոտեցան, մառախուղի մեջ իրար ճանաչելով։ Նրանք իրավունք ունեին մոտենալ արգելք դնող սահմանին և կրակել՝ ո՛վ երբ կամենար։ Դոլոխովն առաջ էր գնում դանդաղ, առանց ատրճանակը բարձրացնելու, բայց իր փայլուն, պայծառ աչքերով հակառակորդի երեսին նայելով։ Նրա բերանը, ինչպես միշտ, ժպիտի նման մի բան ուներ իր վրա։

— Երբ ուզենամ՝ կարող եմ կրակել,— ասավ Պիեռը, և երեք ասելուց հետո, արագ քայլերով առաջ անցավ և տրորած ճամփից շեղվելով, քայլեց ձյունի միջով։ Նա ատրճանակը բռնել էր աջ ձեռն առաջ մեկնած, ըստ երևույթին վախենում էր, չլինի թե հանկարծ այդ ատրճանակով սպանի իրեն։ Զախ ձեռն աշխատում էր ետևը պահել, որովհետև կամենում էր դրանով ուժ տալ աջին, գիտենալով, սակայն, որ այդպես չի կարելի։ Անցնելով վեց քայլ և ճամփից ընկնելով ձյունի մեջ, Պիեռը նայեց ոտքերի տակ, կրկին նայեց Դոլոխովին և, մատը քաշելով, ինչպես սովորեցրել էին, ատրճանակն արձակեց։ Երբեք չսպասելով այդքան ուժեղ ձայնի, Պիեռը ցնցվեց, ապա ժպտաց ինքն իր տպավորության վրա ու կանգ առավ։ Մուխը, որ առանձնապես թանձր էր մառախուղի պատճառով, խանգարեց նրան առաջին ակնթարթին բան տեսնել. սակայն մյուս կրակոցի ձայնը, որին սպասում էր նա, չլսվեց։ Լսելի էին միայն Դոլոխովի շտապ քայլերը, և քիչ հետո երևաց նրա կերպարանքը։ Նա մի ձեռով բռնել էր ձախ կողքը, մյուսով սեղմում էր դեպի ցած բռնած ատրճանակը։ Նրա դեմքը գունատ էր։ Ռոստովը մոտ վազեց և ինչ-որ բան ասավ նրան։

— Ո...ո՞...չ,— արտասանեց ատամների արանքից Դոլոխովը.— ոչ, չի վերջացած,— և էլի մի քանի երերուն ու կաղ քայլեր անելով, ընկավ ձյունի վրա, սրի մոտ։ Նրա ձախ ձեռն արյունոտ էր, նա բաճկոնով սրբեց ձեռն ու հենվեց նրա վրա։ Նրա դեմքը գունատ էր, մռայլ և դողում էր։

— Համե...— սկսեց Դոլոխովը, չկարողանալով միանգամից խոսքն ասել...— համեցեք,— ավարտեց նա զոռով։

Պիեռը հեկեկանքը հազիվ զսպելով, վազեց դեպի Դոլոխովը, և այն է ուզում էր անցնել արգելված սահմանը, երբ Դոլոխովը ճչաց. «Մի անցե՛ք». և Պիեռը հասկանալով բանն ինչումն է, կանգ առավ սահմանը որոշող սրի մոտ։ Նրանց բաժանում էր միայն 10 քայլ։ Դոլոխովը գլուխն իջեցրեց, ագահաբար կծեց

ձյունը, կրկին բարձրացրեց գլուխը, ուղղվեց, ոտները հավաքեց ու նստեց, հավասարակշռություն փնտրելով։ Նա կլանում էր սառը ձյունը և ծծում. նրա շրթունքները դողում էին, բայց շարունակ ժպտում էր, և նրա աչքերը փայլում էին վերջին ուժերի լարումից ու կատաղությունից։ Նա ատրճանակը բարձրացրեց ու նշան բռնեց։

— Հողքանց կանգնեցեք, պաշտպանվեցեք ատրճանակով,— ասավ Նեսվիցկին։

— Պաշտպանվեցեք,— չհամբերելով ասավ նույնիսկ Դենիսովն իր հակառակորդին։

Պիեռն ափսոսանքի ու զզջումի հեզ ժպիտով, ոտներն ու ձեռները չռելով՝ իր լայն կրծքով կանգնեց Դոլոխովի առջև ու տխրությամբ նայեց նրան։ Դենիսովը, Ռոստովը և Նեսվիցկին աչքերնին կուչ ածին։ Եվ հենց նույն այդ միջոցին լսվեց մի նոր կրակոց և Դոլոխովի շար ճիչը։

— Զդիպավ.— ձայնեց Դոլոխովը և երեսնիվայր ուժաթափ ընկավ ձյունի վրա։

Պիեռը գլուխը բռնեց ու ետ շրջվելով՝ մտավ անտառ, ամբողջովին ձյունի միջով քայլելով և ինքն իրեն բարձր անհասկանալի խոսքեր ասելով։

— Հիմար բան է. հիմար բան է։ Մահ... կեղծի՛ք...— կրկնում էր նա դեմքը կնճռելով։

Նեսվիցկին կանգնեցրեց նրան և տուն տարավ։

Ռոստովն ու Դենիսովը կառքով տարան վիրավոր Դոլոխովին։

Դոլոխովը, աչքերը փակ, լուռ պառկել էր սահնակի մեջ և ոչ մի բառով չէր պատասխանում իրեն ուղղված հարցերին. սակայն Մոսկվա մտնելով, նա հանկարծ ուշքի եկավ և գլուխը դժվարությամբ բարձրացնելով, բռնեց կողքին նստած Ռոստովի ձեռը։ Ռոստովին միանգամայն զարմացրեց Դոլոխովի դեմքի փոխված և անսպասելի խանդավառ ու քնքուշ արտահայտությունը։

— Հը՞, ի՞նչպես ես զգում քեզ,— հարցրեց Ռոստովը։

— Վա՛տ։ Բայց դու այն ասա, բարեկամս,— ասավ Դոլոխովն ընդհատվող ձայնով։— Որտե՞ղ ենք։ Մոսկվայումն ենք, գիտեմ։ Ես ոչի՛նչ, բայց նրան սպանեցի, սպանեցի... Նա այդ բանը չի տանի...

— Ո՞վ, — հարցրեց Ռոստովը։

— Մայրս։ Մայր իմ, հրեշտակ իմ, պաշտելի հրեշտակ իմ, — և Դոլոխովը լաց եղավ՝ Ռոստովի ձեռը սեղմելով։

Երբ փոքր-ինչ հանգստացավ, Ռոստովին բացատրեց, որ ինքն ապրում է մոր մոտ և եթե մայրը տեսնի իրեն մեռնելիս, նա այդ բանը չի տանի։ Նա ուզում էր Ռոստովին՝ գնալ մոր մոտ և նախապատրաստել նրան։

Ռոստովն առաջուց գնաց հանձնարարությունը կատարելու և մեծ զարմանքով իմացավ, որ Դոլոխովը, այդ կռվասեր, կռվարար Դոլոխովը, մեծարգալում ապրում էր իր պառավ մոր և սարսափավոր քրոջ հետ մի մասին և շատ սիրող որդի ու եղբայր էր։

VI

Պիեռը վերջին ժամանակները կնոջ հետ երես առ երես սակավ էր տեսնվում։ Թե՛ Պետերբուրգում և թե՛ Մոսկվայում նրանց տունը միշտ լիքն էր լինում հյուրերով։ Մենամարտի հետևյալ գիշերը Պիեռը, ինչպես հաճախ էր անում, ննջարան չգնաց, այլ մնաց հոր մեծ առանձնասենյակում, ուր մեռավ կոմս Բեզուխովը։

Նա պառկեց բազմոցի վրա և ուզեց քնել, որպեսզի մոռանա ա՛յն բոլորը, ի՛նչ կատարվեց իրեն հետ, բայց չկարողացավ։ Հանկարծ նրա հոգում բարձրացավ զգացումների, մտքերի և հիշողությունների մի այնպիսի փոթորիկ, որ նա ոչ միայն չկարողացավ քնել, այլև անկարող եղավ մի տեղ նստել ու ստիպված էր ցատկել բազմոցից և արագ քայլերով անց ու դարձ անել սենյակում։ Նրան մե՛կ երևում էր կինն ամուսնության առաջին օրերին՝ բաց ուսերով և հոգնած կրքոտ հայացքով, ու նույն րոպեին նրա կողքին երևում էր Դոլոխովի գեղեցիկ, լիրբ ու հեգնական դեմքը, ինչպես ճաշի ժամանակ էր, և Դոլոխովի նույն դեմքը՝ գունատ, դողացող ու վշտահար այն միջոցին, երբ նա շրջվեց ու ընկավ ձյունի վրա։

— Ի՞նչ պատահեց, — հարցնում էր նա ինքն իրեն։ — Ես սպանեցի մի սիրելիի, այո, սպանեցի կնոջս սիրեկանին։ Այո՛, այդ եղավ։ Բայց ինչու համար։ Ինչպես հասա ես այդ-տեղ։ — Նրա համար, որ դո՛ւ ամուսնացար նրա հետ, — պատասխանում էր ներքին ձայնը։

— Բայց ի՞նչ է իմ մեղքը, — հարցնում էր նա։ — Ա՛յն, որ դու ամուսնացար, առանց նրան սիրելու, ա՛յն, որ դու խաբեցիր և՛ քեզ, և՛ նրան ու Պիեռին կենդանի պատկերացավ այն բոպեն, երբ իշխան Վասիլիի տանը, ընթրիքից հետո նա ասավ հետևյալ իր համար դժվար արտասանելի խոսքերը. «Je vous aime»[1]. բոլորի պատճառն այս էր։ «Ես այն ժամանակ էլ զգում էի», մտածում էր նա, «զգում էի այն ժամանակ, որ դա այն չէր, որ ես այդ անելու իրավունք չունեի։ Այդպես էլ եղավ»։

Նա հիշեց մեղրամիսը և նրա դեմքը շառագունեց այդ հիշողությունից։ Առանձնապես կենդանի, վիրավորական և ամոթալի թվաց այն հիշողությունը, երբ ինքը մի անգամ, ամուսնությունից հետո, ցերեկվա ժամը 12-ի մոտ, մնաբոս խալաթով ննջարանից մտավ կարինեա ու այնտեղ տեսավ գլխավոր կառավարչին, որը հարգալից գլուխ տվեց, նայեց Պիեռի դեմքին, նրա խալաթին և թեթևակի ժպտաց, կարծես այդ ժպիտով իր հարգալից համակրանքն էր հայտնում մեծավորին՝ նրա երջանկության համար։

«Իսկ քանի՞ անգամ ես պարծեցել եմ նրանով, պարծեցել եմ նրա փառահեղ գեղեցկությամբ, նրա բարեկիրթ ձևերով», մտածում էր Պիեռը «Պարծենում էի իմ այն տնով, ուր նա ընդունում էր ամբողջ Պետերբուրգը, պարծենում էի նրա անմատչելիությամբ ու ցեղեցկությամբ։ Ա՛յ, թե ինչով էի պարծենում։ Այն ժամանակ ես կարծում էի, թե նրան չեմ հասկանում։ Ուսումնասիրելով նրա բնավորությունը՝ ես հաճախ ասում էի ինքս ինձ, թե մեղավորը ես եմ, որ նրան չեմ հասկանում. չեմ հասկանում նրա մշտական հանգիստ բնավորությունը, ինքնագոհությունը և ամեն տեսակ կրքի ու ցանկության բացակայությունը, բայց հարցի ամբողջ լուծումն ա՛յն սարսափելի խոսքն է, որ նա անառակ կին է, ասացի այս սարսափելի խոսքը և ամե՞ն ինչ պարզվեց։

«Անատոլը գալիս էր նրա մոտ նրանից փող վերցնելու և համբուրում էր նրա բաց ուսերը։ Նա Անատոլին փող չէր տալիս, բայց թողնում էր, որ նա իրեն համբուրի։ Հայրը կատակով

[1] Ես սիրում եմ ձեզ։

խանդ էր հարուցանում նրա մեջ, բայց նա հանգիստ ժպիտով ասում էր, որ ինքն այնքան էլ հիմար չէ, որ խանդի. «Թո՛ղ անի՝ ի՛նչ ուզում է». ասում էր նա իմ մասին։ Մի անգամ ես նրան հարցրի, թե արդյոք նա հղիության նշաններ չի զգում։ Նա արհամարհանքով ծիծաղեց և ասավ, թե ինքը հիմար չէ, որ ցանկանա երեխա ունենալ, և որ ինձնից նա երեխա չի ունենա»։

Հետո նա հիշեց կնոջ կոպտությունը, պարզ մտքերը և արտահայտությունների գռեհկությունը, որ հատուկ էր նրան, չնայած բարձր արիստոկրատ շրջանում ստացած դաստիարակության։ «Ես հիմար չեմ... ինքդ գնա փորձիր... allez vous promener»[1], ասում էր նա։ Պիեռը հաճախ, նայելով կնոջ ունեցած հաջողությանը՝ ծեր և ջահել մարդկանց ու կանանց աչքում, չէր կարողանում հասկանալ, թե ինչու ինքը չէր սիրում նրան։ — Այո՛, ես երբեք նրան չեմ սիրել, — ասում էր Պիեռն ինքն իրեն. — ես գիտեի, որ նա անառակ կին է. — կրկնում էր նա, — բայց չէի համարձակվում խոստովանել այդ։ Եվ Դոլոխովն այժմ ձյունի վրա նստած դժվարությամբ ժրպտում ու մեռնում է, թերևս մի ինչ-որ շինծու քաջությամբ պատասխանելով իմ զղջումին։

Պիեռը մեկն էր այն մարդկանցից, որոնք, չնայած իրենց արտաքին, այսպես կոչված, թույլ բնավորության, մարդ չեն փնտրում իրենց վիշտը հայտնելու։ Նա իր վիշտն ապրում ու կրում էր մենակ։

— Ամե՛ն բանում, ամե՛ն բանում միայն նա է մեղավոր, — ասում էր Պիեռն ինքն իրեն. — բայց ի՞նչ նշանակություն ունի այդ։ Ինչո՞ւ կապվեցի նրա հետ, ինչո՞ւ ես նրան ասի այդ՝ «Սիրում եմ ձեզը», որը կեղծ էր, ավելի՝ քան կեղծ, — ասում էր նա ինքն իրեն։ — Ես մեղավոր եմ և պետք է կրեմ... Ի՞նչ. անվանարկությո՞ւն, կյանքի դժբախտությո՞ւն։ Էհ, այդ բոլորը դատարկ բան է, — մտածեց նա, — թե՛ անվանարկությունը, թե՛ պատիվը, բոլորը պայմանական բաներ են, բոլորն էր ինձանից անկախ։

Լյուդովիկոս XVI-ին մահապատժի ենթարկեցին նրա համար (անցավ Պիեռի մտքով), որ նրանք ասում էին, թե նա անպատիվ մարդ է ու ոճրագործ, և նրանք իրենց տեսակետից՝ իրավացի էին, ինչպես և իրավացի էին նրանք, ովքեր տանջալից մահով մեռան նրա համար և ովքեր նրան դասում էին սրբերի դասը։ Հետո Ռոբեսպիերին գլխատեցին նրա համար, որ նա բռնակալ էր։ Ո՞վ է արդարը, ո՞վ՝ մեղավոր։ Ոչ ոք։ Կենդանի ես՝ ապրի՛ր. վաղը կմեռնես, ինչպես ե՛ս կարող էի մեռնել մի ժամ առաջ։ Ու դրա համար արժե՞ տանջվել, երբ ապրելու համար մնում է մի վայրկյան, հավերժության հետ համեմատած։

Բայց այդ րոպեին, երբ նա իրեն այսպիսի դատողություններով հանգստացած էր համարում, հանկարծ նրան պատկերացավ կինը և ա՛յն րոպեներին, երբ ինքն ամենից ավելի ուժգին ցույց էր տալիս նրան իր ոչ անկեղծ սերը. և նա արյան հոսանք զգաց իր սրտում, ու ստիպված եղավ կրկին վեր կենալ, շարժվել և կոտրել ու պատռել իր ոտքերի տակ ընկնող իրերը։ — Ինչու ես նրան ասի. «Je vous aime?» — շարունակ կրկնում էր նա ինքն իրեն։ Եվ այդ միևնույն հարցը տասն անգամ կրկնելով հիշեց Մոլիերի «mais que diable allait-il faire dans cette galère?[1]», խոսքերը և ծիծաղեց ինքն իր վրա։

Գիշերը նա կանչեց սենեկապահին և հրամայեց պատրաստություն տեսնել Պետերբուրգ մեկնելու։ Նա դժվարանում էր պատկերացնել, թե ինչպես պետք է խոսի կնոջ հետ։ Ու վճռեց, որ վաղը կմեկնի և կնոջը կթողնի մի նամակ, որով կհայտնի նրան իր ընդմիշտ բաժանվելու մտադրությունը։

Առավոտյան, երբ սենեկապահը, սուրճը ձեռին մտավ առանձնասենյակ, Պիեռը տաճկական բազմոցի վրա պառկած, բաց գիրքը ձեռին, քնել էր։

Նա զարթնեց և երկար, վախեցած, շուրջն էր նայում, չիմանալով, թե որտեղ է գտնվում։

— Կոմսուհին հրամայեց հարցնել, թե տա՞նն եք, ձերդ պայծառափայլություն, — ասավ սենեկապահը։

Բայց Պիեռը դեռ չէր վճռել ինչ պատասխան տա, երբ հանգիստ ու վեհաշուք քայլերով ներս մտավ ինքը կոմսուհին՝ արծաթակար սպիտակ մետաքսե զգեստով, բնական մազերով (երկու ահագին հյուսեր դիադեմաձև երկուտակ բոլորում

[1] Կորեք։

[1] Սակայն, սատանան գիտի, նա ինչ ունի այստեղ։

էին նրա սքանչելի գլուխը). միայն նրա մարմարյա. փոքր-ինչ դուրս ընկած ճակատին զայրույթի կնճիռ կար։ Նա իր զարմանալի հանգստությամբ խոսակցություն չկսեց սենեկապահի ներկայությամբ։ Նա լսել էր մենամարտի մասին և եկել էր այդ առթիվ խոսելու։ Նա սպասեց, մինչև որ սենեկապահը սուրճը գնի և դուրս գնա։ Պիեռն ակնոցի միջից երկչոտ հայացքով կնոջը նայեց, ինչպես շներով շրջապատված մի նապաստակ, ականջները կուչ է ածում և մնում թշնամիների առաջ, այնպես էլ նա փորձեց շարունակել գրքի ընթերցումը, բայց զգաց, որ դա անմիտ և անհնարին բան է, ու կրկին երկչոտ նայեց կնոջը։ Կինը շնստեց և արհամարհական ժպիտը դեմքին նայում էր Պիեռին, սպասելով սենեկապահի դուրս գնալուն։

— Սա ի՞նչ բան է։ Այդ ի՞նչ եք արել դուք, ձե՛զ եմ հարցնում,— ասավ նա խիստ ձայնով։

— Ե՞ս։ Ես ի՞նչ,— ասավ Պիեռը։

— Այս քաջը ո՛րտեղից գտնվեց։ Դե՛, պատասխանեցե՛ք, դա ի՞նչ մենամարտ էր։ Դուք դրանով ի՞նչ էիք կամենում ապացուցել։ Ի՞նչ, ձե՛զ եմ հարցնում։

Պիեռը ծանրորեն շրջվեց բազմոցի վրա, բերանը բացեց, բայց չկարողացավ պատասխանել։

— Քանի որ դուք չեք պատասխանում, ուրեմն ես կասեմ ձեզ...— շարունակեց էլենը։— Դուք հավատում եք ամեն բանի, ի՛նչ որ ձեզ ասում են. ձեզ ասել են...— էլենը ծիծաղեց.— որ Դոլոխովն իմ սիրեկանն է,— ասավ նա ֆրանսերեն, իր խոսքի կոպիտ որոշակիությամբ արտասանելով «սիրեկան» բառը, ինչպես և բոլոր մյուս բառերը.—և դուք հավատացի՛ք։ Դե՛, դրանով դուք ի՞նչ ապացուցեցիք։ Ի՞նչ ապացուցեցիք այդ մենամարտով։ Ա՛յն, որ դուք հիմար եք, que vous êtes un sot. այդ, բոլորը գիտեն։ Ի՞նչ կլինի դրա վերջը։ Ա՛յն, որ ես ծաղրի առարկա կդառնամ ամբողջ Մոսկվայի համար, որ բոլորն ասեն, թե դուք հարբած դրության մեջ, ձեզ կորցրած, մենամարտի եք կանչում մի մարդու, որին խանդում եք՝ առանց հիմք ունենալու,— էլենը հետզհետե ավելի ու ավելի բարձրացնում էր ձայնը և ոգևորվում,— մի մարդ, որն ամեն կողմով բարձր էր ձեզնից...

— Հր՛մ, հր՛մ,— մզզաց Պիեռը, ճակատը կնճռելով, առանց կնոջը նայելու և առանց շարժվելու։

— Եվ դուք ինչպե՞ս հավատացիք, որ նա իմ սիրեկանն է... Ի՞նչու։ Նրա համա՞ր, որ ես սիրում եմ նրա ընկերությունը։ Եթե դուք լինեիք ավելի խելոք և ավելի հաճելի, կգնայատասեի ձերը։

— Ինձ հետ մի՛ խոսեք... աղաչում եմ,— խուլասա ձայնով շշնջաց Պիեռը։

— Ինչո՞ւ չխոսեմ։ Ես կարող եմ խոսել և համարձակ կասեմ որ հազվագյուտ է այն կինը, որ քեզ նման մարդ ունենա և սիրեկան չպահի (des amants), իսկ ես այդ չեմ արել,— ասավ նա։

Պիեռն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց կնոջը նայեց տարօրինակ աչքերով, որոնց արտահայտությունը սակայն կինը չհասկացավ, և Պիեռը կրկին պառկեց։

Պիեռը այդ րոպեին տանջվում էր ֆիզիկապես. ինչ-որ մի բան ճնշում էր նրա կուրծքը և նա դժվարանում էր շնչել։ Նա գիտեր, որ պետք էր մի բան անել այդ տանջանքին վերջ տալու համար, բայց ա՛յն, ինչ որ նա էր ուզում անել, չափազանց սարսափելի էր։

— Ավելի լավ է բաժանվենք,— խոսեց Պիեռն ընդհատվող ձայնով։

— Բաժանվե՞լ, խնդրեմ, եթե միայն դուք ինձ միջոցներ կտաք,— ասաց էլենը...— Բաժանվե՞լ, բա՞ն գոսավ վախենալու։

Պիեռը ցատկեց բազմոցից և, երերալով, նետվեց դեպի կինը։

— Ես քեզ կսպանեմ,— պոռաց նա և, սեղանի վրայից վերցնելով մարմարյա տախտակը, նա իրեն անհայտ մի ուժով մի քայլ աբավ դեպի կինն ու տախտակը բարձրացրեց։

Էլենի դեմքը սարսափ պատեց. նա ծղրտաց ու փախավ Պիեռի առջևից։ Հոր արյունը խոսեց Պիեռի մեջ։ Նա զգաց էլատաղության հմայքն ու հրապույրը։ Նա տախտակը շպրտեց, հարվեց և օդի մեջ տարածած ձեռներով կնոջը մոտենալով, գոռաց՝ «Դո՛ւրս», մի այնպիսի ահեղ ձայնով, որ ամբողջ տունը սարսափով լսեց այդ ճիչը։ Ասուած գիտե, թե ինչ կաներ Պիեռն այդ րոպեին, եթե էլենը դուրս չփախչեր սենյակից։

Մի շաբաթ հետո Պիեռը կնոջը հավատարմաթուղթ ավեց՝ կառավարելու բոլոր Վելիկոռուսական կալվածքները, որոնք կազմում էին նրա կարողության կեսից ավելին և ինքը մենակ մեկնեց Պետերբուրգ։

VII

Երկու ամիս անցավ այն օրից, երբ Լիսիե Գորիում տեղեկություն ստացվեց Աուստերլիցի ճակատամարտի և իշխան Անդրեյի մահվան մասին, և, չնայած դեսպանատան միջոցով ուղարկած բոլոր նամակներին ու բոլոր որոնումներին, նրա դիակը չէր գտնվել, նա չկար նաև գերիների թվում։ Նրա հարազատների համար ամենավատն այն էր, որ նրանք այնուամենայնիվ հույս ունեին, թե բնակիչները վերցրած կլինեն նրան կռվի դաշտից և այժմ գուցե պառկած ապաքինվում կամ մեռնում է մենակության մեջ՝ ինչ-որ մի տեղ, օտարների շրջանում և անկարող է որևէ լուր ուղարկել իր մասին։ Լրագիրներում, որոնցից առաջին անգամ ծեր իշխանն իմացավ Աուստերլիցի պարտության մասին, գրված էր, ինչպես միշտ, կարճ ու անորոշ, թե ռուսները փայլուն կռիվներից հետո ստիպված էին նահանջել և նահանջը կատարեցին միանգամայն կանոնավոր։ Մեր իշխանն այս պաշտոնական տեղեկությունից իմացավ, որ մերոնք շարժվել են։ Աուստերլիցի կռվի մասին տեղեկություն բերող լրագրից հետո, մի շաբաթ անց, ստացվեց Կուտուզովի նամակը։ Կուտուզովը հայտնում էր իշխանին՝ նրա որդուն հասած դժբախտության մասին։

«Ձեր, սրդին, իմ աչքի առաջ,— գրում էր Կուտուզովը,— գրոշակը ձեռին, դնգի առջևում ընկավ հերոսաբար՝ արժանի իր հորն ու իր հայրենիքին։ Ի դժբախտություն իմ և ամբողջ բանակի՝ մինչև այժմ հայտնի չէ — կենդանի՞ է նա, թե ոչ։ Ինչպես ես, այնպես էլ դուք՝ հուսանք, որ ձեր որդին ողջ է, հակառակ դեպքում կռվի դաշտում գտնված սպաների թվում, որոնց ցուցակը ստացել եմ բանագնացների միջոցով, նա ևս հիշատակված կլիներ»։

Սառնալով այս տեղեկությունն ուշ երեկոյան, երբ նա մենակ էր իր առանձնասենյակում, ծեր իշխանն, ըստ սովորության, հետևյալ օրը գնաց իր տավոտյան զբոսանքը կատարելու։ Բայց չխոսեց ոչ գործակատարի, ոչ այգեպանի և ոչ ճարտարապետի հետ, և թեև զայրացած էր առերևույթս, բայց և այնպես ոչ ոքի ոչինչ չասավ։

Երբ սովորական ժամին իշխանադուստր Մարիան մտավ հոր սենյակը, ծեր իշխանը՝ մեքենայի մոտ կանգնած՝ բան էր սրում, բայց, ըստ սովորության, նրան չնայեց։

— Ա՜, իշխանադուստր Մարիա,— հանկարծ ասավ նա անբնական ձայնով և ձեռը դուրը շպրտեց։ (Անիվը դեռ պտտվում էր իր թափից։ Իշխանադուստր Մարիան երկար հիշում էր անիվի հետզհետե խլացող այդ ճռինչը, որը միաձուլվեց դրան հաջորդող բանին)։

Իշխանադուստր Մարիան մոտեցավ հորը, նայեց նրա դեմքին և ինչ-որ մի բան հանկարծ կտրվեց նրա սրտում։ Նրա աչքերը մթնեցին։ Նա հոր դեմքին, այդ ո՛չ տխուր, ո՛չ վշտահար, այլ շար ու անբնականորեն լարված դեմքին, նկատեց, որ իր գլխին կախված է և ահա իրեն խորտակելու է մի ահավոր դժբախտություն, ամենավատը բոլոր դժբախտություններից, մի դժբախտություն, որպիսին դեռ ինքը չի զգացել, մի անուղղելի ու աներևակայելի դժբախտություն — իր սիրած էակի մահը։

— Mon père! Andréi![1] — ասավ ոչ նազելի, անհամարձակ իշխանադուստրը վշտի ու ինքնամոռացության այնպիսի մի անասելի քնքշանքով, որ հայրը չդիմացավ նրա հայացքին և, փղձկալով, երեսը շրջեց։

— Լուր ստացա։ Ոչ գերիների թվում կա, ոչ սպանվածների։ Կուտուզովը գրում է,— ճչաց նա սուր ձայնով, կարծես այդ ճիչով կամենալով դուրս անել իշխանադստեր,— սպանվա՛ծ է։

Իշխանադուստրն իրեն չկորցրեց — չուշաթափվեց։ Նա արդեն գունատ էր, բայց երբ այդ խոսքերը լսեց, նրա դեմքը փոխվեց և ինչ-որ մի բան փայլեց նրա շողուն, գեղեցիկ աչքերում։ Ինչ-որ խնդություն, մի արտասովոր խնդություն, որ կապ չունի այս աշխարհի վշտերի և ուրախությունների հետ, համակեց նրա հոգին ավելի խորը, քան իր վիշտը։ Նա մոռացավ ամեն մի երկյուղ հոր նկատմամբ, մոտեցավ նրան, բռնեց նրա ձեռը և դեպի իրեն քաշելով, գրկեց նրա շոր, ջղուտ վիզը։

[1] Հայր Անդրե՜։

— Mon père, — ասավ նա։ — Ինչանից երես մի դալ։ Ինքդ թո՛ղ միասին ողբանք։

— Ստոր ու սրիկա մարդիկ, — բղավեց ծերունին, երեսը աղջկանից հեռացնելով։ — Ոչնչացնել զորքը, ոչնչացնել մարդկանց։ Ինչո՞ւ համար։ Գնա՛, գնա՛, ասա՛ Լիզային։

Իշխանադուստրը թուլացած նստեց բազկաթոռին՝ հոր կողքին, ու լաց եղավ։ Այժմ տեսնում էր նա եղբորն այն բոպեին, երբ նա՝ իր քնքուշ և դրա հետ միաժամանակ հպարտ տեսքով, հրաժեշտ տվեց իրեն ու Լիզային։ Նա տեսնում էր եղբորն այն բոպեին, թե ինչպես նա քնքշագին ու հեղնանքով սրբապատկերը կախեց վզից. «Արդյոք նա հավատո՞ւմ էր։ Արդյոք չզղջաց իր թիրահավատությունը։ Այնտե՞ղ է արդյոք նա այժմ։ Արդյո՞ք այնտեղ է՝ հավերժական հանգստի ու երանության օթևանում», մտածում էր նա։

— Mon père, ասացեք, այդ ի՞նչպես է եղել, — հարցրեց իշխանադուստրը արտասվելով։

— Գնա՛, գնա՛, սպանված է կովում, այնտեղ, ուր տարան սպանելու լավագույն ռուս մարդկանց և ռուսական փառքը։ Գնացե՛ք, իշխանադուստր Մարիա։ Գնա՛ և հայտնիր Լիզային։ Ես կգամ նրա մոտ։

Երբ իշխանադուստր Մարիան վերադարձավ հոր մոտից, փոքրիկ իշխանուհին, որ նստած գործ էր անում, երջանիկ ու խաղաղ հայացքի այն առանձին արտահայտությամբ, որ հատուկ է միայն հղի կանանց, նայեց իշխանադուստր Մարիային։ Երևում էր, որ նրա աչքերը չէին տեսնում իշխանադուստր Մարիային, այլ նայում էին իր ներսը, մի ինչ-որ երջանիկ ու խորհրդավոր բանի, որ կատարվում էր իր մեջ։

— Marie, — ասավ նա արուրի քարգահը թողնելով և նստած տեղն ուղղվելով. — ձեռդ տո՛ւր։

Նա բռնեց իշխանադստեր ձեռն ու դրեց իր փորի վրա։ Նրա աչքերը ժպտում էին սպասողական գրության մեջ. նրա բեղիկներով շուրթը վեր բարձրացավ և այդպես էլ մնաց մանկական սերկրանքի արտահայտությամբ։

Իշխանադուստր Մարիան շոքեց նրա առաջ և երեսը թաքցրեց հարսի շրջազգեստի ծալքերում։

— Ահա՛, տե՛ս, լսո՞ւմ ես։ Այնպես տարօրինակ է ինձ համար։ Գիտե՛ս, Մարի, ես շատ պիտի սիրեմ նրան, — ասավ Լիզան, փայլուն, երջանկավետ հայացքով տալին նայելով։

Իշխանադուստր Մարիան չէր կարողանում գլուխը, բարձրացնել. նա լալիս էր։

— Քեզ ի՞նչ է պատահել, Մաշա։

— Ոչինչ... այնպես տխրություն եկավ վրաս... Անդրեյի համար տխրեցի, — ասավ նա՝ արցունքները հարսի ծնկներին սրբելով։

Առավոտյան իշխանադուստրը մի քանի անգամ սկսեց նախապատրաստել հարսին և ամեն անգամ էլ լաց էր լինում։ Այդ արցունքները, որոնց պատճառը փոքրիկ իշխանուհին չգիտեր, հուզեցին նրան, որքան էլ նա զուրկ էր սուր դիտողականությունից։ Նա ոչինչ չէր ասում և անհանգիստ շուրջն էր նայում, ասես ինչ-որ բան որոնելով։ Ճաշից առաջ նրա սենյակը մտավ ծեր իշխանը (որից նա միշտ վախենում էր) մի առանձին անհանգիստ ու շար դեմքով և, առանց որևէ մի խոսք ասելու դուրս եկավ։ Փոքրիկ իշխանուհին նայեց իշխանադուստրը Մարիային, ապա մտածմունքի մեջ ընկավ՝ ներքին աշխարհին հառած աչքերի այն ուշադիր արտահայտությամբ, որ հատուկ է հղի կանանց, և հանկարծ լաց եղավ։

— Մի բան ստացե՞լ եք Անդրեյից, — հարցրեց նա։

— Ոչ. դու գիտես, որ նրանից դեռևս տեղեկություն չի կարող գալ, բայց mon père անհանգստանում է, ես էլ վախենում եմ։

— Ուրեմն ոչի՞նչ։

— Ոչինչ, — ասավ իշխանադուստր Մարիան իր լուսաշող աչքերը հառելով հարսի երեսին։

Նա վճռեց ոչինչ չասել հարսին և հորը համոզել, որ սա հարսից թաքցնի ստացված սարսափելի լուրը, մինչև հարսի աղատվելը, որ պետք էր տեղի ունենար մոտ օրերս։ Իշխանադուստր Մարիան և ծեր իշխանը, յուրաքանչյուրը յուրովի, թաքցնում էին իրենց վիշտը։ Ծեր իշխանը չէր ուզում որևէ հույս փայփայել. նա վճռել էր, որ իշխան Անդրեյն սպանված է, և, չնայած, որ պետական պաշտոնյա էր ուղարկել Ավստրիա՝ որդու հետքը փնտրելու, Մոսկվայում արդեն արձանի պատվեր էր տվել, որը մտադիր էր դնել իր այգում, ու բոլորին էլ ասում էր, որ որդին սպանված է։ Նա աշխատում էր անփոփոխ շա-

բունակել նախկին ապրելակերպը, բայց ուժերը դավաճանում էին իրեն։ Նա ման էր գալիս քիչ, ուտում էր քիչ, քնում էր քիչ և օրըստօրե թուլանում էր։ Իսկ իշխանադուստր Մարիան հույսը չէր կորցնում. նա աղոթում էր ելբոր համար, իբրև ողջ մի մարդու համար, և յուրաքանչյուր բոպե սպասում էր նրա վերադարձի լուրին։

VIII

— Ma bonne amie, — ասավ փոքրիկ իշխանուհին մարտի 19-ի առավոտյան նախաճաշից հետո, և նրա բեղիկներով շուրթը վեր բարձրացավ ըստ հին սովորության. բայց, սարսափելի լուրն ստանալուց հետո, ինչպես այդ տան ո՛չ միայն բոլոր ժպիտների, այլև խոսակցությունների հնչյունների մեջ, անդամ քայլվածքների մեջ միշտ էր նկատվում, այնպես էլ այժմ փոքրիկ իշխանուհու ժպիտը, իշխանուհու, որ ենթարկվում էր ընդհանուր տրամադրության, որի պատճառը դեռ անհայտ էր նրան, — մի այնպիսի ժպիտ էր, որ ավելի էր հիշեցնում ընդհանուր վշտի մասին։

— Ma bonne amie, je crains que le fruschtique (comme dit Ֆոկան, խոհարարը) de ce matin ne m'aie pas fait du mal[2].

— Իսկ ի՞նչ է պատահել քեզ, հոգի՛ս։ Դու գունատ ե՛ս։ Ա՜խ, դու շա՛տ գունատ ես, — վախեցած ասավ իշխանադուստրը Մարիան իր ծանր, փափուկ քայլերով հարսի մոտ վազելով։

— Ձերդ պայծառափայլություն, լավ չի՞ լինի մարդ ուղարկել Մարիա Բոգդանովնայի ետեից, — ասավ այդտեղ գտնվող սպասուհիներից մեկը։ (Մարիա Բոգդանովնան մանկաբարձուհի էր գավառական քաղաքից եկած. երկրորդ շաբաթն էր, որ նա ապրում էր Լիսիե Գորիում)։

— Իսկապես, — վրա բերեց իշխանադուստր Մարիան. — գուցե, հնչտ որ... ես կերթամ կանչելու։ Courage, mon ange[1] — Նա համբուրեց Լիզային և կամենում էր դուրս գալ սենյակից։

— Ա՜խ, չէ՛, չէ՛։ — Եվ բացի գունատությունից, ֆիզիկական տառապանքից, փոքրիկ իշխանուհու դեմքին երևաց անխուսափելի տանջանքի մանկական մի վախ։

— Non, c'es! l'estomac... dites que c'est l'estomac, dites, Marie, dites[2], — և իշխանուհին լաց եղավ տանջագին քմահաճ մանկան պես ու մինչև անդամ փոքր-ինչ շինծու կոտրտելով փոքրիկ ձեռները։

Իշխանադուստրը դուրս վազեց Մարիա Բոգդանովնային կանչելու։

— Mon Dieu! Mon Dieu[3], օ՜հ, լսում էր նա իր ետեից։

Լիքը, ոչ այնքան խոշոր, սպիտակ ձեռները սրբելով, իշխանադուստր դեմ ելավ մանկաբարձուհին։

— Մարիա Բոգդանովնա, կարծես սկսվեց, — ասավ իշխանադուստր Մարիան վախից չոած աչքերով նայելով պառավին։

— Է՜հ, փառք աստծու, — ասավ Մարիա Բոգդանովնան առանց շտապելու։ — Ձեզ, աղջիկներիդ վայել չէ այդպես բաներ իմանալ։

— Բայց ինչպես է, որ բժիշկը Մոսկվայից դեռ չի եկել, — ասավ իշխանադուստրը։ (Լիզայի և իշխան Անդրեյի ցանկությամբ նախօրոք մարդ էր ուղարկվել Մոսկվա մանկաբարձ բժիշկ կանչելու, և այժմ յուրաքանչյուր բոպե սպասում էին նրան)։

— Ոչի՛նչ, իշխանադուստր, մի անհանգստանաք, — ասավ Մարիա Բոգդանովնան, — առանց բժշկի էլ ամեն ինչ լավ կլինի։

Հինգ բոպե անց իշխանադուստրն իր սենյակից լսեց, որ ինչ-որ ծանր բան են տանում։ Նա դուրս նայեց — սպասավորները ննջարան էին տանում կաշվե բազմոցը, որ դրված էր լինում իշխան Անդրեյի առանձնասենյակում։ Բազմոցը

---

[1] Սիրելի բարեկամուհիս։

[2] Բարեկամս, վախենում եմ, որ այս նախաճաշը վնասել ինձ։

[1] Արիություն, հրեշտակս։

[2] Ստոմոքսս է ցավում, Մարիա, ասեք ստամոքսս է։

[3] Աստված իմ, աստված իմ։

տանող մարդկանց դեմքերին ինչ-որ հանդիսավոր ու խաղաղ բան կար։

Իշխանադուստր Մարիան իր սենյակում մենակ նստած ականջ էր դնում տնից լսվող ձայներին, երբեմն դուռը բանալով, երբ մեկն անցնում էր նրա մոտով, ու նայում էր, թե ի՞նչ է կատարվում միջանցքում։ Մի քանի հոգի լուռ քայլերով գնում-գալիս էին այնտեղ, նայում իշխանադուստր ու երեսնին շրջում։ Իշխանադուստրը չէր համարձակվում մի բան հարցնել, դուռը ծածկում էր, վերադառնում սենյակը, նստում բազմոցին, մերթ աղոթագիրքը ձեռն առնելով, մերթ կանթեղի առաջ ծունկի գալով։ Նա ցավով ու զարմանքով զգում էր, որ աղոթքը չի հանգստացնում իր հուզմունքը։ Հանկարծ նրա սենյակի դուռը բացվեց և շեմքում երևաց գլխաշոր կապած Պրասկովյա Սավիշնան, իշխանուհու պառավ դայակը, որ գրեթե երբեք, իշխանի արգելելու պատճառով, նրա սենյակը չէր մտնում։

— Եկա, Մաշինկա, քեզ մոտ՝ մի քիչ նստելու,— ասավ դայակը,— հա՛մ էլ, հրեշտակս, իշխանի պակի մոմերը բերի պատկերի առաջ վառելու,— ասավ նա հառաչելով։

— Ա՜խ, որքան ուրախ եմ, դայակս։

— Աստված ողորմած է, աղավնյակս։

Դայակը սրբապատկերի առաջ վառեց ոսկեզարդ մոմերը և գուլպան ձեռին նստեց դռան մոտ։ Իշխանադուստր Մարիան գիրքը վերցրեց ու սկսեց կարդալ։ Բայց երբ քայլեր կամ ձայներ էին լսվում, իշխանադուստրը՝ վախեցած, հարցական, իսկ դայակը հանգստացնող հայացքով նայում էին իրար։ Թե՛ տանն ամենուրեք և թե՛ բոլորին տիրում էր նույն զգացումը, ինչ զգում էր իշխանադուստր Մարիան իր սենյակում նստած։ Ասում են, թե որքան քիչ մարդիկ են իմանում ծննդկանի ցավը, այնքան ավելի պակաս է լինում նրա տառապանքը. և բոլորը ձևացնում էին, թե բանից տեղյակ չեն. այդ մասին ոչ-ոք չէր խոսում, բայց բոլորի մեջ, բացի սովորական լրջմտությունից ու հարգալիր ձևերից (որ տիրում էին իշխանի տանը), նկատելի էր ինչ-որ ընդհանուր մի հոգս, սրտի մեղմություն և այդ բոլորին կատարվող ինչ-որ մեծ անհասանելի բանի գիտակցություն։

Ծառայող աղջիկների մեծ սենյակից ծիծաղի ձայն չէր լսվում։ Սպասավորների սենյակում բոլորը նստել էին անխոս, ինչ-որ բանի պատրաստ։ Նրանք մարխ ու մոմ էին վառել և մնացել արթուն։ Մեր իշխանը՝ կրունկների վրա քայլելով՝ անց ու դարձ էր անում իր առանձնասենյակում. նա Տիխոնին ուղարկել էր Մարիա Բոգդանովնայի մոտ՝ հարցնելու. ի՞նչ։— Միայն ասա՛, իշխանը հրամայեց հարցնել «ի՞նչ», և արի ասա՛, ինչ որ նա կասի։

— Իշխանին հայտնիր, որ ծննդաբերությունն սկսվել է,— ասավ Մարիա Բոգդանովնան, նշանակալից հայացքով սուրհանդակին նայելով։

Տիխոնը վերադարձավ և լսածը հայտնեց իշխանին։

— Լավ,— ասավ իշխանը՝ դուռը ծածկելով, և Տիխոնն այլևս ոչ մի ձայն չլսեց առանձնասենյակից։

Դռան անց՝ նա նորից մտավ առանձնասենյակ, իբր թե մոմերն ուղղելու, և տեսավ, որ իշխանը պառկած է բազմոցի վրա, Տիխոնը նայեց նրան, նայեց նրա վշտահար դեմքին, գլուխը շարժեց, անխոս մոտեցավ իշխանին և, նրա ուսը համբուրելով, դուրս եկավ, առանց մոմերն ուղղելու և առանց ասելու, թե ինչի էր եկել։ Աշխարհի ամենահանդիսավոր խորհուրդը շարունակվում էր կատարվել։ Երեկոն անցավ, վրա հասավ գիշերը։ Սպասումի և սրտի մեղմության զգացումն անըմբռնելիի առաջ չէր թուլանում, այլ բարձրանում էր։ Բոլորն արթուն էին։

Մարտ ամսի այն գիշերներից մեկն էր, երբ ձմեռը կարծես կամենում է իրեն ցույց տալ և հուսահատ կատաղությամբ թափում է իր վերջին ձյուններն ու բորանները։ Մոսկվայից եկող գերմանացի բժշկին,— որին ամեն րոպե սպասում էին և որի համար ձիեր էին ուղարկել մեծ ճանապարհը,— գյուղի ճանապարհի ոլորանը դիմավորելու ուղարկվեցին լապտերներով ձիավորներ, որպեսզի նրան առաջնորդեն խորդուբորդ տեղերից և ձյունածածկ փոսերից։

Իշխանադուստր Մարիան վաղուց արդեն մի կողմ էր դրել գիրքը. նա լուռ նստել էր, լուսաշող աչքերը հառած դայակի կնճռոտ դեմքին, որի բոլոր մանրամասնությունները ծանոթ էին նրան. նայում էր գլխաշորի տակից դուրս եկած

ճերմակ մազերին և կզակի տակ կախ ընկած մաշկի փոքրիկ պարկին։

Պառավ Սավիշնան, գուլպան ձեռին, ցածր ձայնով, ինքն էլ չիմանալով ու չհասկանալով իր խոսքերը, նորից պատմում էր հարյուր անգամ պատմած բաները, թե ինչպես հանգուցյալ իշխանուհին Քիշինյովում ծնեց իշխանադուստր Մարիային, մի մոլդավացի գեղջկուհու օգնությամբ, որ տատմոր էր փոխարինում։

— Աստված կողորմա, դոխտուր սկի հարկավոր չի,— ասում էր նա։

Հանկարծ քամու ուժեղ հոսանքը հրեց լուսամուտը և վատ դրված փականը դուրս գցելով, թրթռացրեց մետաքսե վարագույրը և, ցուրտ ու ձյուն փչելով, հանգցրեց մոմը. իշխանադուստր Մարիան ցնցվեց. դայակը գուլպան ցած դնելով, մոտեցավ լուսամուտին և, գլուխը դուրս հանելով, աշխատեց բռնել բացված փեղկը։ Ցուրտ քամին խաղում էր նրա գլխաշորի ծայրերի և դուրս թափված մազերի խոպոպների հետ։

— Իշխանադուստր, սիրելիս, կարծես մարդ է գալիս փողոցով,— ասավ նա փեղկը բռնելով, բայց չփակելով այն։— Ճրագներով են, ո՛վ գիտի դոխտուրն է...

— Ախ, աստված իմ։ Փառք քեզ,— ասավ իշխանադուստր Մարիան,— պետք է գնալ նրան դիմավորելու. նա ռուսերեն չգիտի։

Իշխանադուստր Մարիան շալն ուսերին գցեց ու վազեց եկողներին ընդառաջ։ Երբ նախասենյակից անցնում էր, լուսամուտից նկատեց, որ ինչ-որ կառք ու լապտերներ կանգ առան շքադռան մոտ։ Նա դուրս եկավ դեպի սանդուղքը։ Բազրիքի սյան վրա դրված էր մի ճարպամոմ, որ հալվում էր քամուց։ Սպասավոր Ֆիլիպը, վախեցած դեմքով, մի ուրիշ մոմ ձեռին, կանգնել էր ներքև, սանդուղքի առաջին աստիճանի վրա։ Ավելի ներքևից, սանդուղքի ոլորանում, լսվում էին տաք-փափուկ կոշիկներ հագած մարդկանց քայլեր։ Եվ ինչպես Մարիային թվաց, ծանոթ մի ձայն ինչ-որ բան էր մրմնջում։

— Փառք աստծու,— ասավ ձայնը,— իսկ հայրի՞կը։

— Պառկեցին քնելու,— պատասխանեց Դեմյանի ձայնը, որն արդեն ներքևումն էր։

Հետո էլի ի՛նչ-որ բան ասավ ձայնը, ի՛նչ-որ բան պատասխանեց Դեմյանը, ու փափուկ կոշիկներ հագած մարդու քայլերն սկսեցին արագորեն մոտենալ սանդուղքի շրջանացող ոլորանով։

«Սա Անդրեյն է», մտածեց իշխանադուստր Մարիան։ «Չէ՛, այդ անկարելի է. դա չափազանց անբնական կլիներ», մտածեց նա, և նույն րոպեին, երբ իշխանադուստրը մտածում էր այս, սանդուղքի հարթակի վրա, ուր կանգնած էր սպասավորը մոմը ձեռին, երևաց իշխան Անդրեյի դեմքը և իրանը, ձյունածածկ օձիքով մուշտակը հագին։ Այո, դա նա էր, բայց գունատ, նիհար ու փոխված և դեմքի տարօրինակ կերպով մեղմացած, բայց հուզված արտահայտությամբ։

Նա բարձրացավ սանդուղքի գլուխը և գրկեց քրոջը։

— Դուք իմ նամակը չեք ստացե՞լ,— հարցրեց նա ու, չսպասելով պատասխանի, որը գուցե և չստանար, քանի որ իշխանադուստրը չէր կարողանում խոսել, նա ետ դարձավ և մանկաբարձ բժշկի հետ, որ մտավ նրա ետևից (նրանք հանդիպել էին վերջին կայարանում), արագ քայլերով կրկին բարձրացավ սանդուղքի ծայրը և կրկին գրկեց քրոջը։

— Ինչ բախտ էր,— խոսեց նա։— Մա՛շա, սիրելի՛ս,— և մուշտակն ու կոշիկները մի կողմ գցելով, անցավ իշխանուհու մոտ։

IX

Փոքրիկ իշխանուհին սպիտակ շամշիկով պառկած էր բարձերի վրա։ (Ցավերը նոր միայն դադարել էին)։ Նրա սև մազերը խոպոպներով կախվել էին բորբոքուն, քրտնած այտերին։ Կարմիր, սքանչելի բերանը՝ սև մազիկներով ծածկված շրթով, բաց էր, և նա ուրախ ժպտում էր։ Իշխան Անդրեյը մտավ սենյակը և կանգնեց կնոջ առաջ, բազմոցի մոտ, որի վրա պառկած էր փոքրիկ իշխանուհին։ Նրա փայլուն աչքերը, որ նայում էին մանկամիտ պարզությամբ, վախեցած ու հուզված, կանգ առան իշխան Անդրեյի վրա, առանց իրենց արտահայտությունը փոխելու։ «Ես ձեզ բոլորիդ սիրո՛ւմ եմ, ես ո՛չ ոքին չար բան չեմ արել, ի՞նչու եմ տանջվում. օգնեցեք ինձ»,— ասում էր նրա սրտահայտությունը։ Նա տեսնում էր ամուսնուն, բայց

չէր հասկանում, թե ինչու է եկել իր մոտ։ Իշխան Անդրեյն անցավ բազմոցի մյուս ծայրը և համբուրեց կնոջ ճակատը։

— Հոգյակս, — ասավ նա, մի բառ, որ երբեք չէր ասել նրան։ — Աստված ողորմած է...

Փոքրիկ իշխանուհին հարցական, մանկական անմեղ կըշտամբանքով նայեց նրան։

«Ես քեզանից օգնություն էի սպասում, և ոչինչ, ոչինչ չես անում. ուրեմն դո՞ւ էլ», ասում էին նրա աչքերը։ Նա չզարմացավ, որ Անդրեյը եկել է. նա չհասկացավ, որ նա եկել է։ Նրա գալուստը ոչ մի թեթևություն չբերեց նրա տանջանքներին։ Ցավը նորից սկսվեց. Մարիա Բոգդանովնան իշխան Անդրեյին խորհուրդ տվեց դուրս գալ սենյակից։

Մանկաբարձ բժիշկը ներս մտավ։ Իշխան Անդրեյը դուրս եկավ և, իշխանադուստր Մարիային հանդիպելով, կրկին մոտեցավ նրան։ Նրանք սկսեցին շշուկով խոսել, բայց նրանց զրույցը ամեն րոպե ընդհատվում էր։ Նրանք սպասողական դրության մեջ ականջ էին դնում։

— Allez, mon ami[1], — ասավ իշխանադուստր Մարիան։

Իշխան Անդրեյը կրկին գնաց կնոջ մոտ, և հարևան սենյակում նստելով, սպասեց։ Ինչ-որ մի կին՝ վախեցած դեմքով, դուրս եկավ փոքրիկ իշխանուհու սենյակից և, իշխան Անդրեյին տեսնելով, շփոթվեց։ Իշխան Անդրեյը ձեռներով ծածկեց երեսը և այդպես նստեց մի քանի րոպե։ Դռան ետևից լսվեցին թույլ, անօգ-կենդանական տնքոցներ։ Իշխան Անդրեյը վեր կացավ, մոտեցավ դռանը և ուզեց բաց անել այն։ Մեկը դուռը բռնել էր։

— Չի՛ կարելի, չի՛ կարելի, — ասավ այնտեղից մի վախեցած ձայն։

Իշխան Անդրեյն սկսեց սենյակում երթևեկել։ Ճիչերը դադարեցին, անցավ էլի մի քանի վայրկյան։ Հանկարծ մի սարսափելի ճիչ լսվեց. դա նրա ճիչը չէր. նա այդպես չէր ճչա — դա հարևան սենյակից էր։ Իշխան Անդրեյը վազեց դեպի դուռը. ձայնը լռեց և այս անգամ լսվեց երեխայի ճիչ։

«Ինչո՞ւ են այնտեղ երեխա բերել», մտածեց առաջին վայրկյանին իշխան Անդրեյը. «Երեխա՞, ի՞նչ երեխա... Երեխա՞ն ի՞նչու համար է այդտեղ... Թե երեխա ծնվեց»...

Այդ ժամանակ նա հասկացավ այդ ձայնի բովանդակ ուրախագին նշանակությունը։ Արցունքները խեղդեցին նրան և նա, երկու ձեռով լուսամուտի գոգին հենվելով, լաց եղավ հեկեկալով, ինչպես լալիս են երեխաները։ Դուռը բացվեց։ Բժիշկը, շապկի թևքերը վեր քշտած, առանց սյուրտուկի, գունատ և դողացող ծնոտով, դուրս եկավ սենյակից։ Իշխան Անդրեյը շուռ եկավ դեպի նա, բայց բժիշկը ցրված նրան նայեց և առանց որևէ խոսք ասելու, անցավ մոտով։ Մի կին դուրս վազեց և, իշխան Անդրեյին տեսնելով, շփոթված կանգ առավ շեմքին։ Իշխան Անդրեյը մտավ կնոջ սենյակը։ Փոքրիկ իշխանուհին անշունչ պառկած էր նույն դիրքով, ինչպես տեսել էր նրան Անդրեյը հինգ րոպե առաջ, և չնայած անշարժ աչքերին ու այտերի գունատության, նրա գեղեցիկ մանկական դեմքի վրա մնացել էր նույն արտահայտությունը։

«Ես ձեզ բոլորիդ սիրում եմ և ոչ-ոքին վատ բան չեմ արել, բայց ի՞նչ արիք դուք ինձ», ասում էր նրա գեղեցիկ, նիհար, մեռած դեմքը։

Սենյակի անկյունում Մարիա Բոգդանովնայի դողացող սպիտակ ձեռներին վնգաց ու ծվաց մի ինչ-որ փոքրիկ կարմիր բան։

Երկու ժամ հետո իշխան Անդրեյը հանդարտ քայլերով մտավ հոր առանձնասենյակը։ Մերունին ամեն ինչ գիտեր արդեն։ Նա կանգնած էր հենց դռան մոտ, ու հենց որ դուռը բացվեց, նա անխոս, զառամ ու կոշտ ձեռներով պինդ գրկեց որդու պարանոցն ու լաց եղավ երեխայի պես։

Երեք օր հետո կատարում էին փոքրիկ իշխանուհու թաղման կարգը, և իշխան Անդրեյը, նրան հրաժեշտ տալու համար, մոտեցավ դագաղին։ Դագաղումն էլ նույն դեմքն էր, թեև փակ աչքերով։ «Ա՜խ, ի՞նչ արիք դուք ինձ», շարունակ ասում էր այդ դեմքը, և իշխան Անդրեյն զգաց, որ ինչ-որ մի բան կըտրվեց իր սրտում, զգաց, որ ինքը գործել է մի մեղք, որը չի

[1] Գնա, բարեկամս։

կարող ո՛չ ուղղել, ո՛չ մոռանալ։ Նա չէր կարողանում լաց լինել։ Մեր իշխանը նույնպես մոտեցավ դագաղին և համբուրեց հարսի մոմագույն ձեռը, որ դրված էր մյուս ձեռի վրա։ Հարսի դեմքը ծերունուն էլ ասում էր. «Ա՜խ, ի՞նչ արիք դուք ինձ, ի՞նչու համար արիք այս բանը»։ Եվ ծերունին, տեսնելով այդ դեմքը, երեսը շրջեց բարկացած։

Հինգ օր հետո կնքեցին փոքրիկ իշխան Նիկոլայ Անդրեյիչին։ Տատմերը կզակով բռնել էր փաթաթանները, և քանան սագի փետուրով մեռոն էր քսում երեխայի դեռևս կուչ եկած կարմիր ձեռներին ու ոտներին։

Կնքահայր պապը, վախենալով երեխային վայր գցելուց, դողալով պտտեց նրան մկրտության թիթեղյա ավազանի շուրջը և տվեց կնքամորը՝ իշխանադուստր Մարիային։ Իշխան Անդրեյը, վախենալով, թե չլինի երեխային խեղդեն, նստել էր հարևան սենյակում, սպասելով կատարվող խորհրդի վերջանալուն։ Նա ուրախ նայեց երեխային, երբ դայակը դուրս բերեց նրան, և գլխով հավանության նշան արավ, երբ դայակը հայտնեց, թե ավազանը գցված չեչը չսուզվեց ջրի տակ, այլ լողաց ավազանի երեսին։

X

Ռոստովի մասնակցությունը՝ Դոլոխովի և Բեզուխովի միջև տեղի ունեցած մենամարտին, ծեր կոմսի ջանքերով քողարկվեց ու մոռացության տրվեց, և Ռոստովը, փոխանակ աստիճանազուրկ լինելու, ինչպես ինքն էր սպասում, նշանակվեց Մոսկվայի ընդհանուր նահանգապետի ադյուտանտ։ Այդ պատճառով նա չկարողացավ ընտանիքի հետ գյուղ գնալ, այլ իր նոր պաշտոնով ամբողջ ամառը մնաց Մոսկվայում։ Դոլոխովն առողջացավ և Ռոստովն առանձնապես մտերմացավ նրան՝ ապաքինման այդ շրջանում։ Դոլոխովը հիվանդ պառկած էր մոր մոտ, որը քնքուշ ու ջերմագին սիրում էր նրան։ Պառավ Մարիա Իվանովնան սիրում էր Ռոստովին՝ Ֆեդյայի հետ ունեցած բարեկամության համար ու հաճախ պատմում էր նրան որդու մասին։

— Այո՛, կոմս. նա շատ ազնիվ է և մաքուր սիրտ ունի, — ասում էր նա, — մեր ապականված աշխարհի համար։ Առաքինությունը ոչ ոք չի սիրում. նա ամենքի աչքը ծակում է։ Դո՛ւք ասացեք, կոմս, իրավացի ազնիվ բա՞ն էր դա Բեզուխովի կողմից։ Իսկ Ֆեդյան, իբրև ազնիվ մարդ, սիրում էր նրան և այժմ ոչ մի մարդու վատ բան չի ասում նրա մասին։ Պետերբուրգում արած չարաճճիությունները, որ ինչ-որ մի հանաք էին տրել թաղականի հետ, չէ՞ որ միասին էին արել։ Բայց Բեզուխովին բան չարին, իսկ Ֆեդյան ամեն ինչ իր վրա առավ։ Եվ ինչե՞ր չկրեց նա։ Ասե՛նք ներեցին, բայց ինչպե՞ս չներեին։ Ես կարծում եմ այդպիսի քաջ տղաներ և Հայրենիքի արժանավոր զավակներ, ինչպիսին նա է, շա՞տ չեն եղել այնտեղ։ Այս ինչ բան էր — այս մենամարտը։ Արդյոք սիրտ և պատվի զգացում ունե՞ն այդ մարդիկ։ Իմանալով, որ միանգամայն որդի է, կանչել այդպե՞ս մենամարտի ու խփե՞լ... Լավ էր, որ ասված ողորմաց մեզ։ Եվ ինչի՞ համար։ Դե, մեր օրերում ո՛վ ասեք, որ արկածներ չունենա։ Ի՞նչ արած, որ նա այդպես խանդոտ է։ Ես հասկանում եմ, չէ՞ որ առաջուց կարող էր զգալ տալ, այն ինչ մի տարի շարունակվել է։ Եվ ի՞նչ, մենամարտի կանչեց, կարծելով թե Ֆեդյան չի կռվի, որովհետև իրեն պարտ է։ Ի՞նչ ստորություն, ի՞նչ գարշելիություն։ Ես գիտեմ, իմ սիրելի կոմս, դուք հասկացել եք Ֆեդյային, դրա համար էլ ես սրտանց սիրում եմ ձեզ, հավատացե՛ք։ Շատ քչերն են նրան հասկանում։ Նա մի այնպես բա՞րձր, երկնային հոգի ունի։

Ինքը՝ Դոլոխովն ապաքինման միջոցին հաճախ ասում էր Ռոստովին այնպիսի խոսքեր, որ երբեք նրանից չէր կարելի սպասել։

— Ինձ չար մարդ են համարում, ես այդ գիտեմ, — կրկնում էր նա, — և թո՛ղ համարեն։ Ես ոչ ոքին ճանաչել չեմ ուզում, բացի նրանցից, ո՛ւմ սիրում եմ. բայց ո՛ւմ որ ես սիրեմ, կսիրեմ, այնպես, որ կյա՛նքս կտամ, իսկ մնացած բոլորին կոխ կտամ, եթե կանգնեն ճանապարհիս։ Ես ունեմ սիրելի, անգնահատելի մայր, երկու-երեք բարեկամ, դրանց թվում և դու, իսկ մնացածների վրա ես այնքա՛ն եմ ուշադրություն դարձնում, նայած որքան օգտակար կամ վնասակար են նրանք։ Եվ բոլորը համարյա թե վնասակար են, մանավանդ կանայք։ Այո, հոգիս, — շարունակում էր նա, — ես հանդիպել եմ սիրող,

ազնիվ, մեծահոգի տղամարդկանց, բայց կանանց, բացի ծախու ապրանքից՝ կոմսուհի թե խոհարարուհի, միևնույն է,— դեռ չեմ հանդիպել։ Ես չեմ տեսել այն երկնային մաքրությունը, անձնվիրությունը, որ փնտրում եմ կնոջ մեջ։ Եթե գտնեի այդպիսի մի կին, կյանքս կտայի նրա համար։ Իսկ սրա՞նք...— Նա արհամարհական շարժում արավ,— կհավատաս արդյոք, որ ես եթե դեռ գնահատում եմ կյանքս, գնահատում եմ միայն նրա համար, որ տակավին հույս ունեմ հանդիպել երկնային մի այդպիսի էակի, որ վերածներ, մաքրեր և բարձրացներ ինձ։ Բայց դու չես հասկանում այդ։

— Ոչ, ես շատ լավ եմ հասկանում,— պատասխանում էր Ռոստովը, որ գոնվում էր իր նոր բարեկամի ազդեցության տակ։

Աշնանը Ռոստովների ընտանիքը վերադարձավ Մոսկվա։ Ձմռան սկզբին վերադարձավ և Դենիսովն ու իջևանեց Ռոստովների մոտ։ 1806 թվի ձմռան առաջին օրերը, որ Նիկոլայ Ռոստովն անցրեց Մոսկվայում, ամենաերջանիկ և ամենաուրախ օրերից էին թե՛ նրա և թե՛ նրա ամբողջ ընտանիքի համար։ Նիկոլայն իր հետ ծնողների տուն բերեց շատ երիտասարդներ։ Վերան քսան տարեկան գեղեցիկ աղջիկ էր, Սոնյան տասնվեց տարեկան, դեռափթիթ ծաղիկ ամբողջ հրապուրանքով, Նատաշան՝ կիսաօրիորդ էր, կիսաաղջիկ, մերթ մանկան պես խնդուն, մերթ աղջկա պես դյութիչ։

Ռոստովների տանն այդ ժամանակ ստեղծվել էր մի ինչ-որ սիրային մթնոլորտ, ինչպես այդ լինում է այն տներում, ուր շատ սիրազեղ և շատ ջահել աղջիկներ են լինում։ Ռոստովների տունն եկող ամեն մի երիտասարդ, նայելով այդ ջահել, զգայուն ինչ-որ բանի (հավանորեն իրենց բախտին) ժպտացող կուսական դեմքերին, այդ աշխույժ վազվզոցին, լսելով այդ անհետևողական, բայց սիրալիր, ամեն ինչի պատրաստ, հույսերով լի կանացի ջահելության զրույցը, լսելով այդ անհետևողական՝ մերթ երաժշտական, մերթ երգեցողության հնչյունները, ապրում էր սիրո պարտականության և սպասվող երջանկության նույն զգացումը, ինչ-որ զգում էին և Ռոստովների տան երիտասարդները։

Ռոստովների տունն եկող երիտասարդների թվում առաջիններից մեկն էր Դոլոխովը, որ դուր էր եկել բոլոր տնեցիներին, բացի Նատաշայից։ Դոլոխովի պատճառով նա քիչ մընաց կռվեր եղբոր հետ։ Նատաշան պնդում էր, որ Դոլոխովը շար մարդ է, որ Բեզուխովի հետ ունեցած մենամարտում Պիեռն իրավացի էր, իսկ Դոլոխովը՝ մեղավոր, և որ նա անդուրեկան ու տարօրինակ մարդ է։

— Ես ոչինչ հասկանալ չեմ ուզում,— համառ ինքնակամությամբ գոչում էր Նատաշան։— Նա չա՛ր է և զգացմունքներից զուրկ. տեսնո՞ւմ ես, որ սիրում եմ քո Դենիսովին. նա թեև ուտող-խմող է, և ամեն ինչ, բայց և այնպես սիրում եմ ուրեմն հասկանում եմ։ Չգիտեմ ինչպես ասեմ քեզ... նրա ամեն ինչը որոշ է, իսկ ես այդ չեմ սիրում։ Դենիսովին...

— Դե, Դենիսովն ուրիշ բան է,— պատասխանեց Նիկոլայը, զգացնել տալով, որ Դոլոխովի համեմատությամբ անգամ Դենիսովը ոչինչ է.— պետք է խմանալ, թե ի՞նչ հոգու տեր է Դոլոխովը, պետք է տեսնել նրան՝ մոր հետ խոսելիս. գիտես ի՞նչ սիրտ ունի։

— Այդ արդեն ես չգիտեմ, բայց նրա մոտ ինձ անհարմար եմ զգում։ Իսկ դու գիտե՞ս, որ նա սիրահարվել է Սոնյայի վրա։

— Ի՞նչ հիմարություն...

— Ես հավատացած եմ, ա՛յ, կտեսնես։

Նատաշայի գուշակությունը կատարվեց։ Դոլոխովը, որ չէր սիրում կանանց հասարակություն, սկսեց շուտ-շուտ հաճախել Ռոստովների տուն, և այն հարցը, թե ո՛ւմ համար է նա գալիս, շուտով (թեև ոչ ոք չէր խոսում այդ մասին) պարզվեց։ Նա գալիս է Սոնյայի համար։ Եվ Սոնյան, թեև երբեք չէր համարձակվել ասել այդ, գիտեր, սակայն և ամեն անգամ կակաշի պես կարմրում էր Դոլոխովի երևալու ժամանակ։

Դոլոխովը հաճախ ճաշում էր Ռոստովների տանը, երբեք բաց չէր թողնում այն ներկայացումները, ուր լինում էին նրանք. հաճախում էր և adolescentes[1] պարահանդեսներն Իոգելի մոտ, ուր միշտ լինում էին Ռոստովները։ Նա առավելապես ուշադիր էր դեպի Սոնյան և նրան նայում էր այնպես, որ

[1] Դեռահասների։

ոչ միայն Սոնյան չէր դիմանում նրա հայացքին առանց կարմրելու, այլև պառավ կոմսուհին ու Նատաշան կարմրում էին այդ հայացքը տեսնելով։

Երևում էր, որ այդ ուժեղ, տարօրինակ մարդը գտնվում էր մի ուժեղ ազդեցության տակ, որը թողել էր նրա վրա այդ սևուկ, նազելի և ուրիշին սիրող աղջիկը։

Ռոստովն ինչ-որ բան էր նկատում Դոլոխովի և Սոնյայի միջև. բայց նրա համար պարզ չէր, թե ինչ նոր հարաբերություններ են այդ։ «Սրանք ինչ-որ մեկի վրա սիրահարված են», մտածում էր նա Սոնյայի ու Նատաշայի մասին։ Սակայն առաջվա նման նա իրեն այնքան էլ լավ չէր զգում Սոնյայի և Դոլոխովի շրջանում, ուստի և սկսեց տանը քիչ երևալ։

1806 թվի աշնանից նորից սկսեցին խոսել Նապոլեոնի հետ լինելիք պատերազմի մասին. այս անգամ ավելի շատ էին խոսում, քան անցյալ տարի։ Նշանակված էր զորահավաք՝ յուրաքանչյուր հազարից տասը նորակոչ և ինը՝ պահեստի զինվոր։ Ամեն տեղ անիծում էին Բոնապարտին, և Մոսկվայում խոսակցության միակ առարկան առաջիկա պատերազմն էր։ Ռոստովների ընտանիքի համար պատերազմի պատրաստությունների ամբողջ հետաքրքրությունը կայանում էր նրանում միայն, որ Նիկոլուշկան ոչ մի կերպ չէր համաձայնում մնալ Մոսկվայում և սպասում էր Դենիսովի արձակուրդը վերջանալուն, որպեսզի նրա հետ միասին, տոներից հետո, գունդը գնան։ Բանակ գնալու հանգամանքը ոչ միայն չէր խանգարում նրա ուրախ ժամանցին, այլ դեռ նպաստում էր դրան։ Եվ նա ժամանակի մեծ մասն անց էր կացնում տնից դուրս՝ ճաշկերույթներում ու պարահանդեսներում։

XI

Ծննդյան տոների երրորդ օրը Նիկոլայը ճաշից տանը, մի բան, որ վերջին ժամանակներս քիչ էր պատահում։ Դա պաշտոնական-հրաժեշտի ճաշ էր, որովհետև Մկրտությունից հետո, նա Դենիսովի հետ մեկնելու էր զորաբանակ։ Ճաշին կային քսան մարդ, դրանց թվում և Դոլոխովն ու Դենիսովը։

Սիրային օրը և սիրահարական մթնոլորտը Ռոստովների տանը երբեք իրենց ոչով չէին տվել այնպիսի ուժով, ինչպես

այդ տոներին։ «Բաց մի թողնիր երջանկության րոպեն, ստիպի՛ր քեզ սիրել, սիրահարվիր՝ ինքդ։ Դա է միայն ճշմարիտն այս աշխարհում, մնացած բոլորը՝ զատարկ բան է։ Եվ մենք այստեղ զբաղված ենք միայն դրանով», ասում էր այդ մթնոլորտը։

Նիկոլայը, ինչպես միշտ, երկու զույգ ձիեր տանջելով և այն էլ չկարողանալով լինել այն բոլոր տեղերում, ուր պետք է լինել և ուր կանչել էին իրեն, տուն եկավ հենց ճաշից առաջ։ Ներս մտավ թե չէ՝ նկատեց ու զգաց տանը տիրող սիրային լարված մթնոլորտը. բացի դրանից՝ նա նկատեց մի տարօրինակ շփոթություն, որ կար տան հասարակության անդամներից մի քանիսի միջև։ Առանձնապես հուզված էին Սոնյան, Դոլոխովը, պառավ կոմսուհին և փոքր-ինչ՝ Նատաշան։ Նիկոլայը հասկացավ, որ նախքան ճաշը ինչ-որ բան է պատահել Սոնյայի ու Դոլոխովի միջև, և նա, իրեն հատուկ սրտացավությամբ, ճաշի միջոցին շատ մեղմ ու զգույշ էր վարվում նրանց հետ։ Հենց այդ երեկո, տոների երրորդ օրը, Իոգելի (պարի ուսուցչի) մոտ պետք է լիներ այն պարահանդեսներից մեկը, որ տոներին սարքում էր նա իր բոլոր աշակերտների ու աշակերտուհիների համար։

— Նիկոլենկա, գու գալո՞ւ ես Իոգելի մոտ։ Խնդրո՞ւմ եմ, արի՛,— ասավ Նատաշան եղբորը։— Նա առանձնապես խընդրում է քեզ. Վասիլի Դմիտրիչն էլ (Դենիսովը) է գալիս։

— Ո՞ւղ՝ չեմ գնա ես կոմսուհու հղ՝ամանով,— ասավ Դենիսովը, որ Ռոստովների տանը հանաքով իրեն ձևացնում էր Նատաշայի ասպետ,— պատրաստ եմ pas de châle[1] պարել։

— Եթե կարողանա՛մ։ Ես Արխարովներին խոսք եմ տվել, նրանց մոտ երեկույթ կա,— ասավ Նիկոլայը։— Իսկ դո՞ւ...— դիմեց նա Դոլոխովին։ Ու հենց հարցրեց թե չէ, զգաց, որ այդ բանը չպետք է հարցներ։

— Այո, գուցե...— սառն ու բարկացած պատասխանեց Դոլոխովը, նայելով Սոնյային ու հոնքերը կիտելով, և ճիշտ այն հայացքով, որով ակումբի ճաշին նայում էր Պիերին, կրկին նայեց Նիկոլային։ «Այստեղ մի բան կա», մտածեց Նիկոլայը, ու էլ ավելի համոզվեց իր ենթադրության մեջ, երբ

[1] Շալով պար։

Դոլոխովը ճաշից հետո իսկույն ևթ մեկնեց։ Նիկոլայը կանչեց Նատաշային և հարցրեց.— ի՞նչ կա։

— Ես հենց քեզ էի որոնում,— ասավ Նատաշան, դուրս վազելով նրա առաջ։— Ես ասո՛ւմ էի, դու չէ՛իր հավատում,— հաղթական ձայնով ասավ նա,— նա Սոնյային առաջարկություն արավ։

Որքան էլ Նիկոլայն այդ ժամանակամիջոցում քիչ էր ըզբաղվում Սոնյայով, բայց երբ այդ խոսքերը լսեց, կարծես մի ինչ-որ բան պոկվեց սրտից։ Դոլոխովը հարմար և մի քանի կողմերով փայլուն զույգ էր անօժիտ ու որբ Սոնյայի համար։ Պառավ կոմսուհու և դրսի աշխարհի տեսակետից նրան չպետք էր մերժել։ Ուստի և երբ Նիկոլայը լսեց այդ, նրա առաջին զգացումը կատաղություն էր Սոնյայի դեմ։ Նա պատրաստվում էր ասելու. «Եվ շատ լավ. պետք է մոռանալ մանկական խոստումները և առաջարկությունն ընդունել». բայց նա դեռ չըկարողացավ այդ ասել...

— Բայց կարող ես երևակայել. Սոնյան մերժեց. բոլորովին մերժեց,— շարունակեց Նատաշան։— Նա ասավ, որ ուրիշին է սիրում,— ավելացրեց Նատաշան փոքր-ինչ լռելուց հետո։

«Այո, այլ կերպ էլ չէր կարող վարվել իմ Սոնյան», մտածեց Նիկոլայը։

— Որքա՛ն էլ մայրիկը խնդրեց, նա մերժեց. և ես գիտեմ, եթե Սոնյան մի բան ասա՛վ, է՛լ իր խոսքը չի փոխի...

— Իսկ մայրիկը նրան խնդրե՞ց,— հանդիմանանքով ասավ Նիկոլայը։

— Այո՛,— ասավ Նատաշան։— Բայց Նիկոլենկա, մի բարկանա. ես գիտեմ, որ դու նրա հետ չես ամուսնանա։ Ես գիտեմ, այդ ասված է իմանում, թե ինչո՛ւ, բայց ես հաստատ գիտեմ, որ դու նրա հետ չես ամուսնանա։

— Է՞հ, դու բոլորովին էլ բան չգիտես,— ասավ Նիկոլայը, բայց ես պետք է նրա հետ խոսեմ։ Ի՞նչ հիանալի աղջիկ է այդ Սոնյան,— ավելացրեց նա ժպտալով։

— Նա այնպե՞ս հիանալի աղջիկ է։ Նրան կուղարկեմ քեզ մոտ։

Եվ Նատաշան, հղբորը համբուրելով, դուրս վազեց։

Մի բոպե անց՝ ներս մտավ Սոնյան՝ վախեցած, շփոթված

ու մեղավոր տեսքով։ Նիկոլայը մոտեցավ նրան և համբուրեց նրա ձեռքը։ Դա առաջին անգամն էր, որ նրանք, Նիկոլայը Մոսկվայում գտնվելու միջոցին, երես առ երես խոսում էին իրենց սիրո մասին։

— Sophie.— ասավ Նիկոլայն սկզբում ամաչելով և ապա ավելի ու ավելի հաստատակամ,— եթե դուք իսկապես ուզում եք հրաժարվել ոչ միայն այդպիսի փայլուն, հարմար զույգից. բայց նա սքանչելի, ազնիվ մարդ է... Նա իմ բարեկամն է...

Սոնյան ընդհատեց նրան։

— Ես արդեն մերժեցի,— ասավ նա շտապ։

— Եթե դուք հրաժարվել եք ինձ համար, ապա վախենամ, որ ինձ...

Սոնյան կրկին ընդհատեց նրան։ Նա աղերսագին երկյուղած հայացքով նայեց Նիկոլային։

— Nicolas այդպիսի բան մի ասեք ինձ,— ասավ նա։

— Չէ, պետք է ասեմ։ Դուք իմ կողմից դա suffisance[1] է բայց ավելի լավ է ասել։ Եթե դուք մերժեք ինձ համար, ուստի ես պետք է ասեմ ձեզ ամբողջ ճշմարտությունը։ Ես ձեզ սիրում եմ, ես կարծում եմ ամենից ավելի...

— Դա էլ ինձ հերիք է,— բռնկվելով ասավ Սոնյան։

— Ոչ. բայց ես հազար անգամ սիրահարվել եմ և այսուհետև էլ սիրահարվելու եմ, թեև ոչ ոքի վերաբերմամբ բարեկամության, վստահության և սիրո այնպիսի զգացումներ չեմ ունեցել, ինչպես դեպի ձեզ։ Հետո, ես երիտասարդ եմ։ Maman այդ բանը չի ցանկանում։ Դե, ճիշտն ասած, ես ոչինչ էլ չեմ խոստանում։ Եվ խնդրում եմ մտածել Դոլոխովի առաջարկության մասին,— ասավ նա դժվարությամբ արտասանելով բարեկամի ազգանունը։

— Այդ բանն ինձ մի ասեք։ Ես ոչինչ չեմ ուզում։ Ես ձեզ սիրում եմ, ինչպես եղբոր, ու միշտ էլ պիտի սիրեմ. ուրիշ ոչ մի բան հարկավոր չէ ինձ։

— Դուք հրեշտակ եք. ես ձեզ արժանի չեմ, և վախենում եմ թե խաբեմ ձեզ։

Նիկոլայը նորից համբուրեց նրա ձեռը։

---

[1] Ինքնավստահություն։

XII

Մոսկվայում ամենաուրախ պարահանդեսները լինում էին Իոգելի մոտ։ Դա վկայում էին մայրերը, նայելով իրենց adolescentes[1], որ պարում էին հենց նոր սովորած պա-ն, այդ մասին վկայում էին և իրենք՝ adolescentes և adolescents[2], որ պարում էին մինչ ուշաթափության աստիճան։ Այդ բանն ասում էին և հասակավոր աղջիկներն ու երիտասարդները, որ այցելում էին այդ պարահանդեսները, արժանացնելով նրանց իրենց ուշադրության և միևնույն ժամանակ նրանց մեջ գտնելով ամենալավ ուրախությունը։ Այդ իսկ պարահանդեսների շնորհիվ երկու ամուսնություն տեղի ունեցավ։ Երկու սիրունիկ Գորչակով իշխանադուստրերը փեսացուներ գտան և ամուսնացան, ու դրանով է՛լ ավելի նպաստեցին պարահանդեսների հռչակին։ Այդ պարահանդեսների առանձնահատուկ կողմն այն էր, որ այդտեղ չկար ո՛չ տեր, ո՛չ տիրուհի։ Այդտեղ էր միայն փետուրի նման թեթև թռչող, արվեստի կանոններով ոտները քսքսացնող, բարեհոգի Իոգելը, որ դասերի տոմս էր ընդունում բոլոր հյուրերից. այդ պարահանդեսների մյուս աչքի ընկնող հատկությունն էլ այն էր, որ այդտեղ գալիս էին միայն նրանք, ովքեր ուզում էին պարել և ուրախանալ, ինչպես ցանկանում են այդ 13 և 14 տարեկան աղջիկները՝ առաջին անգամ երկար զգեստներ հագած։ Բոլորը, հազվագյուտ բացառությամբ, լավն էին կամ թվում էին լավ. այնպե՞ս խանդավառ էին ժպտում բոլորը և այնպե՞ս էին վառվում նրանց աչքերը։ Երբեմն լավագույն աշակերտուհիները, որոնցից ամենալավը Նատաշան էր, որ աչքի էր ընկնում իր նազելի ձևերով, — պարում էին մինչև անգամ pas de châle[3]. բայց այս վերջին պարահանդեսին պարում էին միայն էֆոսիզներ[4] և անգլեզներ[5] և նորամուտ մազուրկան։ Իոգելը պարի դահլիճ վարձել էր Բեզուխովի տունը, և պարահանդեսը շատ հաջող անցավ, ինչպես ասում էին բոլորը։ Կային շատ սիրուն աղջիկներ, և Ռոստովների աղջիկներն ամենալավերից էին։ Նրանք երկուսն էլ առանձնապես երջանիկ և ուրախ էին։ Այդ երեկո Սոնյան՝ հպարտացած Դոլոխովի արած առաջարկությամբ, իր մերժումով և Նիկոլայի հետ ունեցած բացատրությամբ, դեռ տանը պտտվում էր խնդությունից, թույլ չտալով սպասուհի աղջկան մազերի սանրվածքը վերջացնելու, իսկ այժմ ամբողջովին ցնծում էր ուրախությունից։

Նատաշան, որ պակաս չէր հպարտանում նրանով, որ առաջին անգամ երկար զգեստ է հագել մի իսկական պարահանդեսում, իրեն ավելի երջանիկ էր զգում։ Նրանք երկուսն էլ հագել էին սպիտակ կիսեյի զգեստներ՝ վարդագույն ժապավեններով զարդարված։

Նատաշան պարահանդես եկած առաջին իսկ րոպեից իրեն սիրահարված զգաց։ Նա սիրահարված չէր մեկի վրա առանձնապես, այլ սիրահարված էր բոլորի վրա։ Այդ րոպեին ո՛ւմ որ նայում էր, նրա վրա էլ սիրահարվում էր։

— Ա՜խ, ինչ լավ է, — շարունակ ասում էր նա Սոնյային։

Նիկոլայն ու Դենիսովը անց ու դարձ էին անում դահլիճներում, սիրալիր և հովանավորի հայացք նետելով պարողների վրա։

— Ի՞նչ լավիկն է։ Գեղեցկուհի է դառնալու, — ասավ Դենիսովը։

— Ո՞վ։

— Կոմսուհի Նատաշան, — պատասխանեց Դենիսովը։ — Եվ ինչպես էլ պաղ՝ում է, ի՞նչ նազանք ունի, — փոքր-ինչ լռելուց հետո կրկին ասավ նա։

— Դե, ո՞ւմ մասին ես ասում։

— Քո քույր՝իկի մասին, — բարկացած բացականչեց Դենիսովը։

Ռոստովը քմծիծաղ տվեց։

— Mon cher comte, vous êtes l'un de mes mielleurs écoliers, il faut que. vous dansiez, — ասավ փոխրամարմին Իոգելը, Նիկոլային մոտենալով. — Voyez, combien de jolies demoiselles[1].

---

1 Դեռահասներին։

2 Դեռահաս աղջիկներն ու տղաները։

3 Շալով պար։

4 Շոտլանդական պար։

5 Անգլիական պար։

1 Սիրելի կոմս, դուք իմ լավագույն աշակերտներից եք։ Դուք պետք է պարեք։ Նայեցեք, ինչքան սիրուն աղջիկներ կան։

Նա նույն ինդիրքով դիմեց և Դենիսովին, որ նույնպես իր նախկին աշակերտն էր։

— Non, mon cher, je ferai tapisserie[1], — ասավ Դենիսովը։ — Մի՞թե չեք հիշում, թե ող՝քան անշնող՝ք էի օգտվում ես ձեզ՝ դասեղ՝ից։

— Ո՞, ո՛չ, — նրան մխիթարելու համար փութկոտ ասավ Իոզելը։ — Դուք միայն անուշադիր էիք, բայց ընդունակություններ ունեիք, այո՛, դուք ընդունակություններ ունեիք։

Նորից նվագեցին նորամուտ մազուրկան։ Նիկոլայը չկարողացավ մերժել Իոզելին և հրավիրեց Սոնյային։ Դենիսովը նստեց պատավների մոտ և, իր թրին հենված, ոտով չափ զարկելով, մի ինչ-որ ուրախ բան էր պատմում և ծիծաղեցնում պատավ կանանց, միաժամանակ նայելով պարող ջահելներին։ Իոզելն առաջին պարի զույգ կազմեց Նատաշայի հետ՝ իր պարծանքի և լավագույն աշակերտուհու։ Հետո Ոտները մեղմ ու թեթև շարժելով՝ նազելն առաջինը սլացավ դահլիճի երկարությամբ, ամաչկոտ, բայց ջայլերն ուշադիր շտկող Նատաշայի հետ։ Դենիսովն աչքը չէր հեռացնում Նատաշայից և թրովը չափ էր զարկում մի այնպիսի տեսքով, որ պարզ ասում էր, թե ինքը չի պարում ոչ այն պատճառով, որ չի կարողանում, այլ այն պատճառով, որ չի ցանկանում պարել։

Պարի կեսին նա պանչեց կողքով անցնող Ռոստովին։

— Դա ք չղ՝ոլին այն չի, — ասավ նա։ — Մի՞թե դա լեհական մազուրկան է։ Բայց պետք է ասել՝ շատ լավ է պող՝ում։

Իմանալով, որ Դենիսովը Լեհաստանում անգամ հոչակվել է լեհական մազուրկա պարելու ճարտարությամբ, Նիկոլայը մոտ վազեց Նատաշային։

— Գնա՛ Դենիսովին հրավիրի։ Ա՛յ պարում է։ Հրաշալի, — ասավ նա։

Երբ հերթը կրկին Նատաշային հասավ, նա վեր կացավ և իր բանաստեղծ կոշիկներով, ամաչելով մենակ դահլիճի միջով վազեց դեպի այն անկյունը, ուր նստած էր Դենիսովը։ Նատաշան տեսնում էր, որ բոլորն իրեն են նայում ու սպասում։ Նիկոլայը տեսնում էր, որ Դենիսովն ու Նատաշան, ժպտալով

[1] Ոչ, սիրելիս, ես կնստեմ պատի մոտ։

վիճում էին, և Դենիսովը հրաժարվում էր, բայց ուրախ ժպտում։ Նա մոտ վազեց։

— Խնդրում եմ, Վասիլի Դմիտրիչ, — ասում էր Նատաշան, — գնա՛նք, խնդրո՛ւմ եմ։

— Է՜հ, թողեք, կոմսուհի, — ասում էր Դենիսովը։

— Դե՛, լա՛վ, Վա՛սյա, վե՛ր կաց, — ասավ Նիկոլայը։

— Կաղ՝ծես կատվի եք համոզում, — հանաքով վրա բերեց Դենիսովը։

— Ամբողջ երեկոն կերգեմ ձեզ համար, — ասավ Նատաշան։

— Կախարդ, ի՛նչ ուզենա կանի ինձ, — ասավ Դենիսովը և թուրն արձակեց։

Նա դուրս եկավ աթոռների ետևից, բռնեց պարընկերուհու ձեռը, գլուխը բարձրացրեց և մի ոտը ետ դնելով, ինչպես անում են պարողները, տակտի էր սպասում։ Միայն ձիու վրա և մազուրկայի ժամանակ չէր երևում Դենիսովի փոքրիկ հասակը, և նա իսկապես ներկայանում էր իբրև մի այնպիսի կտրիճ, որպիսին հենց ինքը երևակայում էր իրեն։ Տակտն սկսելուն պես՝ նա կողքանց, հաղթական ու հանաքով նայեց պարընկերուհուն, հանկարծ մի ոտով խփեց հատակին և գընդակի պես ծուլ եղավ տեղից ու սլացավ շրջագծի երկարությամբ, հետը տանելով պարընկերուհուն։ Նա մի ոտի վրա անձայն անցավ դահլիճի կեսը ու, թվում էր, թե չի տեսնում առջևը դրված աթոռները և ուղղակի սլանում էր նրանց կողմը. բայց հանկարծ, խթանները շրխկացնելով և ոտները շռելով, նա կանգ էր առնում կրունկների վրա, մի վայրկյան մնում էր այդպես, խթանները չխկացնելով, ոտներով դոփում էր միևնույն տեղը, արագ պտույտ էր գործում և, ձախ ոտը աջին խփելով, վերստին սլանում էր շրջագծով։ Նատաշան հասկացավ, թե նա ինչ է ժտադիր անելու, և չիմանալով ինչպես, հետևում և հանձնվում էր նրան։ Դենիսովը նրան պտտում էր մերթ աջ, մերթ ձախ ձեռով, մերթ ծունկի գալով, ման էր տալիս նրան իր շուրջը և կրկին ծուլ լինելով, առաջ էր վազում այնպես սրընթաց, կարծես մտադիր էր առանց շունչ առնելու, վազելով անցնել բոլոր սենյակները. մերթ էլ՝ հանկարծ կանգ էր առնում նորից և կրկին անսպասելի ծունկի գալիս։ Երբ Դենիսովն ընկերուհուն ճարպկորեն աթոռի առաջ պտտելով, խթանը շրխկացրեց ու գլուխը խոնարհեց նրա առաջ, Նատա-

շան նույնիսկ գլուխ չտվեց։ Նա տարակուսանքով ու ժպտալով՝ աչքերը հառեց Դենիսովի դեմքին, ձևանալով կարծես չի նրան չի ճանաչում։

— Սա ի՞նչ բան է,— ասավ Նատաշան։

Չնայած որ Իոգելն այդ մազուրկան չէր համարում խոկական մազուրկա, բայց բոլորը հիացած էին Դենիսովի ճարտարությամբ. շարունակ նրան էին պարի հրավիրում, իսկ ծերունիները ժպտալով սկսեցին խոսել Լևհատանի և հին երանելի ժամանակների մասին։ Դենիսովը մազուրկայից կարմրած, քրտինքը թաշկինակով սրբելով, նստեց Նատաշայի մոտ և պարահանդեսի ամբողջ ընթացքում չհեռացավ նրանից։

XIII

Դրանից երկու օր հետո Ռոստովը Դոլոխովին չտեսավ ոչ իրենց մոտ և ոչ էլ իր տանը։ Երրորդ օրը նրանից մի դրություն ստացավ։

«Որովհետև ես այլևս մտադիր չեմ ձեր տունը գալու, քանզի հայտնի պատճառներով, և գնում եմ բանակ, ուստի այս երեկո ընկերներիս տալիս եմ հրաժեշտի խնջույք — ե՛կ Անգլիական հյուրանոցը։

Նշանակված օրը, երեկոյան ժամը 10-ին, Ռոստովը թատրոնից, ուր գտնվում էր լուսավորների և Դենիսովի հետ միասին, եկավ Անգլիական հյուրանոցը։ Նրան խնդրեցին առաջնորդեցին հյուրանոցի լավագույն սենյակը, որ այդ գիշերվա համար վարձել էր Դոլոխովը։ Քսան մարդ խմբվել էին սեղանի շուրջը, որի առջև երկու մոմի լույսերում նստել էր Դոլոխովը։ Սեղանի վրա դրված էին թղթադրամներ ու ոսկի. Դոլոխովը բաղկ էր գցում։ Սոնյայի մերժումից հետո՝ Նիկոլայը դեռ չէր հանդիպել Դոլոխովին, ուստի և մի քիչ անհարմարություն էր զգում, երբ մտածում էր, թե ինչպես պիտի հանդիպեն իրար։

Դոլոխովի պայծառ սառը հայացքը Ռոստովին դիմավորեց դեռ դռան մոտ. կարծես նա վաղուց սպասում էր Նիկոլային։

— Երկար ժամանակ իրար չենք տեսել.— ասավ նա,— շնորհակա՛լ եմ, որ եկար։ Ա՛յ, շուտով կվերջացնեմ, կգա և Իլյուշան իր խմբով։

— Ես ձեր տուն գնացի,— ասավ Ռոստովը կարմրելով։

Դոլոխովը չպատասխանեց նրան։

— Կարող ես խաղին մասնակցել — ասավ նա։

Ռոստովն այդ րոպեին հիշեց այն տարօրինակ խոսակցությունը, որ մի անգամ ունեցել էր Դոլոխովի հետ։ «Բախտի համար կարող են խաղալ միայն հիմարները», ասավ այն ժամանակ Դոլոխովը։

— Գուցե վախենո՞ւմ ես ինձ հետ խաղալ,— ասավ այժմ Դոլոխովը, կարծես զուշակելով Ռոստովի միտքը, ու ժպտաց։

Նրա ժպիտի մեջ Ռոստովը նկատեց նրա այն տրամադրությունը, որ ուներ ակումբի ճաշկերույթի միջոցին և ունենում էր ընդհանրապես այն ժամանակները, երբ կարծես առօրյա կյանքից ձանձրացած, Դոլոխովն անհրաժեշտություն էր զգում մի որևէ տարօրինակ, մեծ մասամբ բիրտ արարքով ազատվել դրանից։

Ռոստովն անհարմարություն զգաց. նա մտքում որոնում ու չէր գտնում մի կատակ, որով պատասխաներ Դոլոխովի խոսքերին։ Բայց մինչ պատրաստվում էր անել այդ՝ Դոլոխովն ուղիղ Ռոստովի դեմքին նայելով, դանդաղ և ընդմիջումներով, այնպես որ ամենքը կարող էին լսել, ասավ նրան.

— Հիշո՞ւմ ես, մի անգամ իրար հետ խոսում էինք խաղի մասին... թե հիմա՛ր է այն մարդը, որ բախտի համար է խաղում. պետք է խաղալ տանելու հաստատ համոզումով, իսկ ես կամենում եմ բախտս փորձել։

«Փորձել բա՞խտը, թե խաղալ տանելու հաստատ համոզումով», մտածեց Ռոստովը։

— Բայց ավելի լավ է չխաղաս,— ավելացրեց նա և խաղաթղթերը սեղանին զարկելով, ասավ.— Բա՛նկ, պարոնե՛ր։

Փողը մոտ քաշելով՝ Դոլոխովը պատրաստվեց խաղի։ Ռոստովը նստեց նրա կողքին և սկզբում չխաղաց։ Դոլոխովը մերթ ընդ մերթ նայում էր նրան։

— Հը՛, չես խաղո՞ւմ,— հարցրեց նա Ռոստովին։

Եվ տարօրինակ բան, Նիկոլայը ցանկություն զգաց խաղաթուղթ վերցնել, փող դնել ու խաղալ։

— Բայց մոտս փող չկա,— ասավ Ռոստովը։

— Ոչինչ, քեզ կհավատամ։

Ռոստովը հինգ ռուբլի դրավ և տանուլ տվեց. նորից դրավ և կրկին տանուլ տվեց։ Դոլոխովն իրար ետևից տասը խաղ տարավ։

— Պարոններ, — ասավ նա փոքր-ինչ հետո, — խնդրում եմ դրամը դնել խաղաթղթերի վրա, այսպես հաշիվները կը-խառնեմ։

Խաղացողներից մեկը նկատեց, որ նա հույս ունի, թե իրեն կարելի է հավատալ։

— Հավատալ կարելի է, բայց վախենում եմ շփոթվել. խնդրում եմ դրամը դնել խաղաթղթերի վրա, — պատասխանեց Դոլոխովը։ — Դու մի քաշվիր, մենք քեզ հետ հաշիվ կը-տեսնենք, — ավելացրեց նա, Ռոստովին դառնալով։

Խաղը շարունակվեց։ Լաքեյն անընդհատ շամպայն էր մատուցում։

Ռոստովը բոլոր խաղերը տանուլ էր տալիս. նրա հաշվին գրվել էր արդեն մոտ ութ հարյուր ռուբլի։ Նա ուզում էր մի խաղաթղթի վրա գրել ութ հարյուր ռուբլի, բայց այն ժամանակ, երբ նրան շամպայն մատուցին, նա միտքը փոխեց և գրեց կրկին սովորական գումարը՝ քսան ռուբլի։

— Թո՛ղ, — ասավ Դոլոխովը, թեև թվում էր, թե նա չէր էլ նայում Ռոստովին, — շուտով ետ կբերես։ Ուրիշին տալիս եմ, իսկ քեզ խփում։ Ով գիտի վախենո՞ւմ ես ինձանից, — կըր-կընեց նա։

Ռոստովը հնազանդվեց, թողեց գրած 800-ը և անկյունը պատռած յոթնոց փոսիկը, որ հատակից վերցրեց, դրեց սեղանի վրա։ Հետո նա լավ էր հիշում այդ թուղթը։ Յոթնոց փոսիկը դնելով, նա կավճով նրա վրա կլոր, ուղիղ թվերով գրեց՝ 800, խմեց մատուցած բաժակը, ժպտաց Դոլոխովի վրա և, սրտի թրթռոցով յոթնոցին սպասելով, սկսեց նայել Դոլոխովի ձեռներին, որոնցով նա բռնել էր խաղաթղթերի կապը։ Այդ յոթնոցի տանելը կամ տանուլ տալը մեծ նշանակություն ուներ Ռոստովի համար։ Անցած շաբթի կիրակի օրը կոմս Իլյա Անդրեյիչը որդուն տվել էր 2000 ռուբլի, և նա, որ երբեք չէր սիրում դրամական դժվարությունների մասին խոսել, Նիկոլային ասավ, որ այդ փողը վերջինն է լինելու մինչև մայիս, ուստի և նա որդուն խնդրեց, այս անգամ խնայողաբար ծախսել։ Նիկոլայն ասավ, որ իր համար դա էլ չափազանց շատ

է և որ ազնիվ խոսք է տալիս մինչև գարուն փող չվերցնել։ Հիմա այդ դրամից մնացել էր 1200 ռուբլի։ Ուրեմն յոթնոց փոսիկը ոչ միայն 1600 ռուբլի տարվել էր նշանակում, այլև նա՝ Նիկոլայն անհրաժեշտությունից ստիպված պետք է դրժեր տված խոսքը։ Նա սրտդող նայում էր Դոլոխովի ձեռներին ու մտածում. «Դե, շուտ արա, տուր ինձ այդ խաղաթուղթը, ես գլխարկս վերցնեմ, գնամ տուն Դենիսովի, Նատաշայի և Սոնյայի հետ ընթրելու և այսուհետև հավանաբար ձեռս թուղթ չեմ առնի այլևս»։ Այդ րոպեին նա հիշեց իր ընտանեկան կյանքը, իր հանաքները Պետյայի հետ, իր զրույցները՝ Սոնյայի հետ, դուետները՝ Նատաշայի, պիմետը հոր հետ և մինչև անգամ հանգիստ անկողինը Պովարսկի փողոցի տանը. և այդ ամենն այնպիսի ուժով, պարզ ու այնպիսի հրապուրիչ պատկերացան նրան, որ կարծես այդ բոլորը վաղուց անցած կորած և չգնահատված երջանկություն էր։ Նա չէր կարող երևակայել, որ անմիտ պատահականությունը յոթնոցին ստիպեր աջ կողմի փոխարեն ընկնել ձախ կողմը և դրանով զրկեր իրեն բոլոր այդ նոր միայն հասկացված, նոր միայն պարզված երջանկությունից և նետեր իրեն դեռևս անծանոթ ու անորոշ դժբաղդության գիրկը։ Այդ չէր կարող լինել. բայց նա այնուամենայնիվ նվաղուն սրտով սպասում էր Դոլոխովի ձեռների շարժումներին։ Այդ լայնոսկր, կարմրավուն ձեռները, որոնց մազոտ լինելը երևում էր շապկի տակից, ցած դրին խաղաթղթերի կապը և վերցրին մատուցած բաժակն ու ծխամորճը։

— Ուրեմն չես վախենո՞ւմ ինձ հետ խաղալ, — կրկնեց Դոլոխովը և, կարծես մի ուրախ բան պատմելու համար, խաղաթղթերը վար դրավ, հենվեց աթոռի թիկունքին և դանդաղ, ժպտալով սկսեց պատմել.

— Այո, պարոններ, ինձ ասին, որ Մոսկվայում լուր է տարածվել, իբր թե ես շուլեր[1] եմ, ուստի խորհուրդ կտամ ձեզ ինձ հետ զգույշ լինել։

— Դե՛ շարունակիր, — ասավ Ռոստովը։

— Օ՜հ, Մոսկվայի բամբասանքներ, — ասավ Դոլոխովը և, ժպտալով, խաղաթղթերը ձեռն առավ։

— Ա՜խ, — քիչ մնաց գոռար Ռոստովը, ձեռները մա-

[1] Թղթախաղում խարեությամբ տանող։

շերվն տանելով։ Այն յոթնոցը, որ հարկավոր էր իրեն, հենց կապի երեսին էր։ Նա տանուլ տվեց ավելին, քան կարող էր վճարել։

— Բայց դու շատ առաջ մի գնա,— ասավ Դոլոխովը, աչքի պոչով Ռոստովին նայելով, և խաղը շարունակեց։

XIV

Ժամ ու կես հետո խաղացողների մեծ մասն արդեն հանաքով էր նայում իր խաղին։

Ամբողջ խաղը կենտրոնացած էր մենակ Ռոստովի շուրջը. 1600 ռուբլու փոխարեն նրա հաշվին գրված էր թվերի մի երկար շարան, որ նա հաշվում էր մինչև տասը հազար, որը սակայն, ինչպես ենթադրում էր նա ազոտ կերպով, հասել էր արդեն 15 հազարի։ Իսկապես, նրա հաշվին գրված գումարը քսան հազարից ավելի էր արդեն։ Դոլոխովն այլևս ոչ լսում էր, ոչ էլ պատմություններ անում. նա հետևում էր Ռոստովի ձեռների յուրաքանչյուր շարժումին և երբեմն թուղթիկ նայում Ռոստովի հաշվին գրված թվերին։ Նա վճռել էր խաղը շարունակել, մինչև որ գրված թվերը կհասնեն քառասուն երեք հազարի։ Այդ թիվը նա ընտրել էր նրա համար, որովհետև «քառասուն երեք»-ը կազմում էր իր՝ Դոլոխովի և Սոնյայի տարիքի գումարը։ Ռոստովը, գլուխը ձեռներին հենած նստել էր գրոտած, գինոտ և խաղաթղթերով լիքը սեղանի առջև։ Մի տանջող տրպավորություն չէ՛ր հեռանում նրանից. դա Դոլոխովի լայնոսկր, կարմրավուն ու մազոտ ձեռներն էին։ Այդ ձեռները, որոնց Ռոստովը և սիրում էր, և՛ ատում, նրան առել էին իրենց իշխանության տակ։

«Վեց հարյուր ռուբլի, տուզը, անկյունը, իններորը... անհնարին է ետ բերել... և ինչքան ուրախ կլիներ տանը... Վալետը գցել... դա էլ անկարելի է... Եվ ինչո՞ւ համար է նա այդպես վարվում ինձ հետ», մտածում էր Ռոստովը։ Երբեմն նա մեծ գումար էր դնում, բայց Դոլոխովը հրաժարվում էր թուղթ տալուց և ինքն էր գումար նշանակում։ Նիկոլայը նրան հնազանդվելով՝ մերթ աղոթում էր աստծուն, ինչպես աղոթել էր ճակատամարտի դաշտում Ամշտետենի կամրջի վրա. մերթ գուշակում էր, թե այն խաղաթուղթը, որն առաջինը կընկնի

իր ձեռը, սեղանի տակի ծալված թղթերի կույտից, հենց այդ կրթրի խրեն. մերթ հաշվելով, թե որքան կապիչ կա նրա բաճերեն։ վրա։ ուզում էր ասենա էլ թուղթ դնել, մերթ էլ օգնություն հայցողի պես նայում էր մյուս խաղընկերներին։ Մերթ ուշադրությամբ դիտում էր Դոլոխովի սառը դեմքը և ցանում հասկանալ, թե ինչ է կատարվում Դոլոխովի հետ։

«Չէ՛ որ նա լավ գիտի, թե ինչ նշանակություն ունի ինձ համար այս անդամ տարվելը։ Մի՞թե նա իմ կորուստն է ցանկանում։ Չէ՛ որ նա բարեկամ է եղել ինձ։ Չէ՛ որ ես սիրել եմ նրան... բայց նա էլ մեղավոր չի. նա ինչ անի, որ բախտը լցրում է. ես նույնպես մեղավոր չեմ», տուում էր նա ինքն իրեն. «ես ոչ մի վատ բան չեմ արել։ Մի՞թե ես սպանել, վիրավորել կամ չարիք եմ ցանկացել որևէ մեկին։ Ուրեմն ինչո՞ւ համար է այս սոսկալի դժբախտությունը։ Եվ ե՞րբ սկսվեց այն։ Դեռ քիչ առաջ ես այս սեղանին մոտեցա հարյուր ռուբլի առնելու մտքով, որ մորս անվանակոչության համար այն արդեն գնեմ ու տուն ղրկեմ։ Եվ որքան երջանիկ էի. որքա՞ն ազատ, ուրախ։ Եվ այն ժամանակ ես չէի հասկանում, թե որքան երջանիկ էի։ Եվ ե՞րբ վերջացավ այդ, և ե՞րբ սկսվեց այս նոր, սարսափելի դրությունը։ Ինչո՞վ նշանակալի դարձավ այս փոփոխությունը։ Ես հենց այսպես էլ նստած էի այս սեղանի մոտ, այսպես էլ ընտրում ու առաջ էի քաշում խաղաթղթերը, և նայում էի այս լայնոսկր, ճարպիկ ձեռներին։ Բայց ե՞րբ կատարվեց այդ, և ի՞նչ կատարվեց։ Ես առողջ եմ, ուժեղ, և զարձյալ նույնն եմ ու նույն տեղը։ Ոչ. դա անկարելի է։ Թերևս այս բոլորը հշնչով էլ չվերջանա»։

Նա կարմրել էր, ամբողջովին քրտնել, չնայած որ սենյակը տաք չէր։ Իսկ նրա դեմքը և՛ սոսկալի էր, և՛ ողորմելի, մանավանդ այն պատճառով, որ հոնքերը երևալու աստիճան բարձր էր թռչում։

Հաշիվը հասավ ճակատագրական թվին՝ քառասուն երեք հարյուրի։ Ռոստովը մի թուղթ էր պատրաստում, որը պետք է շարունակեր խաղը երեք հարյուր ռուբլով, երբ Դոլոխովը թղթերի կույտը խլեց սեղանին, մի կողմ շրջեց այն և, կամրջի վերջնելով, սկսեց էր գրել ու հստակ մեռագրով կանգնեցնելով, շտապ հաշվել Ռոստովի պարտքը։

— Է՜հ, պարոններ, ընթրելու ժամանակ է։ Ահա՛ և գնչուները։

Իսկապես արդեն ներս էին մտել և իրենց գնչուական առոգանությամբ խոսում էին ինչ-որ սև տղամարդիկ ու կանայք։ Նիկոլայը հասկանում էր, որ ամեն ինչ վերջացած է, բայց անտարբեր ձայնով ասավ.

— Հը, էլ չես խաղո՞ւմ։ Իսկ ես մի փառավոր թուղթ եմ պատրաստել։ — Կարծես նրան ամենից ավելի հետաքրքրում էր հենց խաղի հաճույքը։

«Ամեն ինչ վերջացավ, ես կորած եմ», մտածում էր նա. «հիմա մնում է մի բան — գնդակ խփեմ ճակատիս», և դրա հետ միաժամանակ նա ուրախ ձայնով ասավ.

— Դե՛, մի թուղթ էլ։

— Լա՛վ, — պատասխանեց Դոլոխովը հաշվարկումը վերջացնելով, — լա՛վ։ 21 ռուբլի դալիս է, — ասավ նա ցույց տալով 21 թիվը, որը պակասում էր 43 հազարին, և խաղաթղթերը վերցնելով պատրաստվեց բաժանել։ Ռոստովը հնազանդությամբ խաղաթղթի ծալած անկյունն ուղղելով, նախատեսված 6000-ի փոխարեն խնամքով գրեց 21։

— Դա ինձ համար միևնույն է, — ասավ նա, — ինձ հետաքրքրում է միայն իմանալ՝ կխփե՞ս, թե այդ տասնոցն ի՛ձ կտաս։

Դոլոխովն սկսեց լրջորեն բաժանել։ Օ՜, որքան էր ատում Ռոստովն այդ բոպեին նրա կարմրավուն, կարճլիկ մատները, մազոտ ձեռները, որ իրեն պահում էին իրենց իշխանության տակ... Տասնոցը տրվեց։

— Ձեզ վրա 43 հազար, կոմս, — ասավ Դոլոխովը և, ձգվելով, ելավ տեղից։ — Մարդ հոգնում էլ է այսքան երկար նստելուց, — ասավ նա։

— Այո, ես էլ եմ հոգնել, — ասավ Ռոստովը։

Դոլոխովը, կարծես նրան հիշեցնելու համար, թե նրան հանաք անել չի սազում, ընդհատեց նրան.

— Երբ կհրամայեք փողն ստանալ, կոմս։

Ռոստովը, բոնկելով, Դոլոխովին կանչեց մյուս սենյակը։

— Ես բոլորը միանգամից չեմ կարող վճարել. մուրհակ կտամ, — ասավ նա։

— Լսիր, Ռոստով, — ասավ Դոլոխովը, պայծառ ժպտալով

և Նիկոլայի աչքերին նայելով, — դու գիտե՞ս այն առածը, որ ասում է. «Ով բախտ ունի սիրո մեջ, նա դժբախտ է խաղի մեջ»։ Քո հորաքրոջ աղջիկը սիրահարված է քեզ վրա։ Ես այդ գիտեմ։

«Օ՜, սարսափելի է զգալ, որ գտնվում ես այս մարդու իշխանության տակ», մտածեց Ռոստովը։ Նա հասկանում էր, թե ինչպիսի հարված կհասցնի իր հորը, մորը, երբ հայտնի նրանց տանուլ տված գումարի մասին. նա հասկանում էր, թե որքան երջանիկ կլիներ, եթե ազատվեր այդ բոլորից, և զգում էր, որ Դոլոխովը գիտի, թե ի՞նչը կարող է նրան փրկել այդ ամոթից ու վշտից, և հիմա ուզում էր իր հետ խաղ խաղալ, ինչպես կատուն մկան հետ։

— Քո հորաքրոջ աղջիկը... — ուզում էր խոսել Դոլոխովը, բայց Նիկոլայը ընդհատեց նրան։

— Իմ հորաքրոջ աղջիկը այստեղ գործ չունի. նրա մասին խոսելն ավելորդ է, — գոռաց նա կատաղած։

— Ուրեմն ե՞րբ կարող եմ ստանալ, — հարցրեց Դոլոխովը։

— Վա՛ղը, — ասավ Ռոստովը և դուրս եկավ սենյակից։

XV

Ասել «վաղը» և վայելուչ տուն պահել — դժվար չէր։ Բայց մենակ գնալ տուն, տեսնել քույրերին, եղբորը, մորը, հորը, խոստովանել և խնդրել դրամ, որի նկատմամբ իրավունք չունես ավելի խոսք տալուց հետո, սարսափելի էր։

Տանը դեռ արթուն էին։ Ռոստովների տան երիտասարդները, թատրոնից վերադառնալով, նստել էին դաշնամուրի մոտ։ Նիկոլայը դահլիճ մտավ թե չէ, զգաց այն սիրային, բանաստեղծական մթնոլորտը, որ այդ ձմեռ տիրում էր իրենց տանը և որն այժմ, Դոլոխովի առաջարկությունից և Իռոդելի պարահանդեսից հետո, Սոնյայի ու Նատաշայի համար թվում էր է՛լ ավելի խտացած, ինչպես օդը փոթորկից առաջ։ Սոնյան ու Նատաշան երկնագույն զգեստներով, որոնցով գնացել էին թատրոն, գեղեցիկ՝ և իմանալով իրենց գեղեցկությունը, երջանիկ ու ժպտուն, կանգնել էին դաշնամուրի մոտ։ Վերան Շինշինի հետ շախմատ էր խաղում։ Պառավ կոմսուհին, որ

դուն և մարդուն ապասելով, թուղթ էր բաց անում պառավ ազնվականուհու հետ սիրախն, որ նույնպես աղրում էր նրանց տանը։ Դենիսովը փայլուն աչքերով ու ցցված մազերով, ոտի մեկը ետ ձգած, նստել էր դաշնամուրի մոտ և, իր փարճ մատներով ստեղներին զարնելով, աչքերը կոպերի տակ թաղելով, իր ցած, խոպոտ, բայց հատուկ ձայնով երգում էր իր հեղինակած «Կախարդուհի» սուտ ավորը, ու փորձում էր մի եզանակ գտնել։

Волшебница, скажи, какая сила
Влечет меня к покинутым струнам;
Какой огонь ты в сердце зародила,
Какой восторг развлекся по перстам!

Երգում էր նա կրքոտ ձայնով, իր սև ագաթանման աչքերը փայլեցնելով վախեցած և երջանիկ Նատաշայի վրա։

— Հրաշալի՜ է, սրանչելի՜, — ազազակում էր Նատաշան։ — Մի տո՛ւն էլ, — ասում էր նա Նիկոլային շնկատելով։

«Նրանք էլի նույն բանով էին զբաղված», մտածեց Նիկոլայը, նայելով հյուրասրահ, ուր տեսավ Վերային և մորը՝ պառավի հետ սիրախն։

— Ա՜խ. ահա և Նիկոլենկան։

Նատաշան վազեց դեպի եղբայրը։

— Հայրիկը տա՞նն է, — հարցրեց Ռոստովը։

— Շատ ուրախ եմ, որ եկար, — առանց եղբոր հարցին պատասխանելու ասաց Նատաշան։ — Մենք այնպե՞ս ուրախ ենք։ Վասիլի Դմիտրիչը մի օր էլ մնաց ինձ համար, գիտե՞ս։

— Ոչ. հայրիկը դեռ չի եկել, — ասավ Սոնյան։

— Կոկո, դու եկա՞ր. մուտս եկ, սիրելիս, — լսվեց կոմսուհու ձայնը հյուրասրահից։

Նիկոլայը մոտեցավ մորը, համբուրեց նրա ձեռը և, լուռ նստելով նրա սեղանի մոտ, սկսեց նայել նրա ձեռներին, որոնք թուղթ էին բաց անում։ Դահլիճից շարունակ լսվում էին ծիծաղ և ուրախ ձայներ, որ հասնում էին Նատաշային։

— Դե, լա՛վ, լա՛վ, — աղաղակեց Դենիսովը, — հիմա էլ խոսելու բան չկա, barcarolla[1], պիտի երգնք, աղաչում եմ։

[1] Իտալացի գոնդոլավարների երգ։

Կոմսուհին նայեց լռակյաց որդուն։

— Ի՞նչ է պատահել քեզ, — հարցրեց մայրը Նիկոլային։

— Ախ, ոչինչ, — ասավ նա, կարծես թե նրան արդեն ձանձրացրել էր այդ միևնույն հարցը։ — Շո՞ւտ կգա հայրիկը։

— Կարծում եմ։

«Սրանք դեռ նույնն են, սրանք դեռ ոչինչ չգիտեն։ Ո՞ւր կորչեմ ես», մտածեց Նիկոլայը և կրկին գնաց դահլիճ, ուր դրված էր դաշնամուրը։

Սոնյան նստել էր դաշնամուրի առաջ և նվագում էր այն բարկարոլլայի նախերգանքը, որն առանձնապես սիրում էր Դենիսովը։ Նատաշան պատրաստվում էր երգել, իսկ Դենիսովը խանդավառ աչքերով նրան էր նայում։

Նիկոլայն սկսեց ետ ու առաջ անել սենյակում։

«Դա ի՞նչ հաճույք է ստիպել նրան, որ երգի. ի՞նչ կարող է նա երգել։ Ոչ մի ուրախ բան չկա այդտեղ», մտածեց Նիկոլայը։ Սոնյան սկսեց նախերգանքի առաջին ակորդը։

«Ատված իմ, ես կորած, անպատիվ մարդ եմ։ Մնում է միայն ընդակ խփել ճակատիս, և ոչ թե երգել», մտածեց նա. «հեռանա՞լ. բայց ո՞ւր. միևնույն է. թո՛ղ երգեն»։

Նիկոլայը, անց ու դարձը շարունակելով. մոայլ նայում էր Դենիսովին ու աղջիկներին, խուսափելով նրանց հայացքներից։

— Նիկոլենկա, ի՞նչ է պատահել ձեզ, — հարցնում էր Սոնյայի հայացքը։ Սոնյան իսկույն նկատեց, որ ինչ-որ մի բան է պատահել նրան։

Նիկոլայն երեսը շրջեց։ Նատաշան իր հոտառությամբ նույնպես նկատեց եղբոր վիճակը։ Նա այդ նկատեց, բայց քանի որ ինքն այնքան ուրախ էր այդ վայրկյանին, այնքան հեռու էր վշտից, տխրությունից ու կշտամբանքներից, որ (ինչպես այդ հաճախ է պատահում երիտասարդներին) դիտմամբ խաբեց իրեն։ «Չէ, ես հիմա շատ ուրախ եմ, և իմ այդ ուրախությունը չեմ փչացնի ուրիշներին վշտակցելով», զգաց ու ասավ ինքն իրեն Նատաշան։

— Չէ, ես գուցե սխալվում եմ. պետք է որ նա նույնպես ուրախ լինի, ինչպես ես։ Դե՛, Սոնյա, — ասավ նա և գնաց կանգնեց դահլիճի մեջտեղը, ուր նրա կարծիքով ձայնն ավելի լավ էր հնչում։

Գլուխը բարձրացնելով, կախ ընկած անկենդան ձեռներ.ն ավելի ցած թողնելով, ինչպես այդ անում են պարուհիները, Նատաշան եռանդուն շարժումով, ոտների ծայրերի վրա անցավ սենյակի միջով ու կանգ առավ։

«Ահավասիկ ո՛վ եմ ես», կարծես ասում էր նա ի պատասխան Դենիսովի խանդավառ հայացքին, որ հետևում էր իրեն։

«Տեսնես ինչի՞ վրա է ուրախանում սա», մտածեց Նիկոլայը, քրոջը նայելով։ «Եվ ինչպես էլ ձանձրույթ ու ամոթ չի զգում»։

Նատաշան սկսեց առաջին նոտան. նրա կոկորդը լայնացավ, կուրծքը շտկվեց, աչքերն ընդունեցին լուրջ արտահայտություն։ Այդ վայրկյանին նա չէր մտածում ոչ ոքի և ոչ մի բանի մասին, և նրա ժպտուն բերանից դուրս թռան հնչյուններ, այն հնչյունները, որոնք նույն ժամանակի ընթացքում և նույն միջոցին կարող է արձակել ամեն ոք, սակայն որոնք հազար անգամ կարող են տպավորություն չգործել, բայց հազար ու մի երրորդ անգամը ստիպում են ձեզ ցնցվել ու լալ։

Նատաշան այդ ձմեռ առաջին անգամ սկսեց լուրջ երգել, և դա մանավանդ նրա համար, որ Դենիսովը հիանում էր իր երգով։ Այժմ նա էլ երեխայաբար չէր երգում. նրա երգի մեջ այլևս չկար այն կոմիկական, մանկական ճիգը, որ առաջներում կար նրա մեջ, բայց դեռևս նա լավ չէր երգում, ինչպես ասում էին գիտակ մարդիկ, որ լսել էին նրան։ «Անմշակ, բայց հիանալի ձայն ունի, պետք է մշակել», ասում էին բոլորը։ Բայց այդ ասում էին արդեն նրանից շատ հետո, երբ լռում էր նրա ձայնը։ Իսկ այն ժամանակ, երբ հնչում էր այդ անմշակ ձայնը՝ անկանոն շնչառումներով ու դժվարին ելևէջներով, մինչև անգամ գիտակ մարդիկ ոչինչ չէին ասում և միայն հիանում էին այդ անմշակ ձայնով և ցանկանում կրկին անգամ լսել այն։ Նրա ձայնի մեջ կար այն կուսական անմեղությունը, իր ուժերին անգիտակ լինելը և այն, տակավին անմշակ թավշությունը, որոնք այնպես էին միացած երգեցողության արվեստի թերությունների հետ, որ թվում էր, թե անկարելի է որևէ բան փոխել այդ ձայնի մեջ առանց այն փչացնելու։

«Սա ի՞նչ բան է», մտածեց Նիկոլայը քրոջ ձայնը լսելով և աչքերը լայն բանալով. «Ինչ է պատահել սրան։ Ի՞նչպես էլ երգում է», մտածեց նա։ Եվ հանկարծ նրան այնպես թվաց, թե

ամբողջ աշխարհը կենտրոնացած սպասում է հաջորդ նոտային, հաջորդ նախադասությանը, ու ամեն բան աշխարհում բաժանվեց երգի երեք աստիճանի. Oh, mio crudele affetto...[1] Մեկ, երկու, երեք... մեկ, երկու, երեք... Oh, mio crudele affetto... Մեկ, երկու, երեք... մեկ։ Է՜հ, հիմար բան է մեր կյանքը», մտածեց Նիկոլայը։ «Այդ բոլորը՝ թե՛ դժբախտությունն, թե՛ փող, թե՛ Դոլոխով, թե՛ շարությունն և թե՛ պատիվ,— այդ բոլորը դատարկ բան է... ահավասիկ սա է իրականը... Դե՛, Նատաշա, դե՛, հոգիս, երգիր... Ինչպե՞ս նա կըսկըսի այդ si-ն։ Սկսեց։ Փառք աստծու», և Նիկոլայը շնկատելով, որ ինքը երգում է, որպեսզի ուժեղացնի այդ si-ին, երգակցելով, վերցրեց բարձր նոտայի տերցիա։ «Տեր աստվա՛ծ, որքան լավ է։ Մի՞թե այդ ես էի. ի՞նչ երջանկություն է», մտածեց նա։

Օ, ինչպես է դողում այդ տերցիան, և Ռոստովի սրտում շարժվեց մի ինչ-որ լավ բան։ Այդ ինչ-որը բարձր էր աշխարհի բոլոր բաներից ու կապ չուներ նրանց հետ։ «Ինչ գործ ունեն այստեղ տանուլ տված խաղ, Դոլոխովներ և ազնիվ խոսքեր... Բոլորը դատարկ բան է։ Կարելի է մարդ սպանել, գողություն անել և այնուամենայնիվ երջանիկ լինել»...

XVI

Վաղուց Ռոստովը երաժշտությունից այնպիսի բավականություն չէր ստացել, ինչպես այդ օրը։ Բայց հենց որ Նատաշան վերջացրեց իր բարկարոլան, նա նորից հիշեց իրականությունը։ Առանց որևէ խոսք ասելու, դուրս եկավ և գնաց ցած՝ իր սենյակը։ Քառորդ ժամից հետո ծեր կոմսը՝ ուրախ և գոհ, վերադարձավ ակումբից։ Նիկոլայը նրա գալն իմանալով՝ գնաց հոր մոտ։

— Հը՛, ինչպես է. քեֆ արի՞ր,— ասավ Իլյա Անդրեյիչը, ուրախ և հպարտ ժպտալով։

Նիկոլայն ուզում էր ասել «այո», բայց չկարողացավ, քիչ մնաց հեկեկար։ Կոմսը ծխամորճ էր ծխում, ուստի և շնկատեց որդու վիճակը

«Է՜հ, անխուսափելի է», մտածեց Նիկոլայն առաջին և

[1] Օ, իմ անագորույն սեր...

վերջին անգամ։ Ու հանկարծ նա մի անփույթ ձևով, այնպես որ ինքն իրեն զզվելի թվաց, կարծես բաղաք գնալու համար կապք էր խնդրում, ասավ հորը.

— Հայրիկ, ես քեզ մոտ գործով եմ եկել։ Քիչ մնաց մոռանայի։ Ինձ փող է հարկավոր։

— Ա՛յ թե ինչ,— ասավ հայրը, որ առանձնապես ուրախ տրամադրության մեջ էր։— Ես քեզ ասի, որ հերիք չի անի։ Շա՞տ է հարկավոր։

— Շատ-շատ,— կարմրելով և հիմար, անփույթ ժպիտով, որը հետո նա չէր կարողանում ներել իրեն, Նիկոլայն ասավ։— Ես մի քիչ տանուլ եմ տվել, այսինքն — շատ, մինչև անգամ շատ-շատ, 43 հազար։

— Ի՞նչ։ Ո՞ւմ։ Հանաք ես անո՞ւմ,— գոչեց կոմսը և հանկարծ, կարծես կաթվածից կարմրեց նրա վիզն ու ծոծրակը, ինչպես կարմրում են ծեր մարդիկ։

— Ես խոստացել եմ վաղը վճարել,— ասավ Նիկոլայը։

— Նո՞ւ...— բացականչեց ծեր կոմսը, ձեռները տարածելով և ուժաթափ նստեց բազմոցին։

— Ի՞նչ արած. ում հետ չի պատահել այդպիսի բան,— ասավ որդին բաց-համարձակ եղանակով, երբ միևնույն ժամանակ իր հոգում նա իրեն համարում էր մի անսիրտան, ստոր մարդ, որն իր կյանքում չի կարող քավել հանցանքը։ Նա կուզեր համբուրել հոր ձեռները, ծնկաչոք թողություն խնդրել նրանից, բայց ինքը խոսեց անփույթ, մինչև իսկ կոպիտ եղանակով, թե ամենքի հետ էլ այդ պատահում է։

Կոմս Իլյա Անդրեյիչը խոնարհեց աչքերը, լսելով որդու այդ խոսքերը, և շփոթված՝ սկսեց ինչ-որ բան որոնել։

— Այո, այո,— խոսեց նա,— դժվար է, վախենում եմ. դժվար է ճարել... Ում հետ չի պատահել, այո, ում հետ չի պատահել...

Ու կոմսը, թեթևակի նայելով որդու դեմքին, դուրս եկավ սենյակից։ Նիկոլայը պատրաստվում էր ընդդիմություն ցույց տալ հորը, բայց բնավ չէր սպասում դրան։

— Հայրի՛կ հայրի՛կ,...— կանչեց նա հոր ետևից հեկեկալով, ներե՛ցեք ինձ։— Ու բռնելով հոր ձեռը, մոտեցրեց այն շուրթերին ու լաց եղավ։

Այդ ժամանակ, երբ հայրը բացատրվում էր որդու հետ, մոր և աղջկա միջև տեղի էր ունենում ոչ պակաս կարևոր բացատրություն։ Նատաշան հուզված եկել էր մոր մոտ։

— Մայրի՛կ... մայրի՛կ... նա ինձ...

— Ի՞նչ արավ։

— Առաջարկություն արավ, առաջարկություն։ Մայրի՛կ, մայրիկ,— գոչում էր Նատաշան։

Կոմսուհին իր ականջներին չէր հավատում։ Դենիսովն առաջարկություն էր արել։ Ո՞ւմ։ Այդ փոքրիկ աղջկան՝ Նատաշային, որ դեռ երեկ տիկնիկ էր խաղում և հիմա դասեր է առնում։

— Նատա՛շա, հերիք է հիմարություն անես,— ասավ կոմսուհին, տակավին հուսալով, որ դա հանաք է։

— Ի՞նչպես թե հիմարություն։ Ես քեզ բա՛ն եմ ասում,— բարկացած ասավ Նատաշան։— Ես եկա հարցնելու — ի՞նչ անել, իսկ դուք ինձ ասում եք՝ «հիմարությո՛ւն»։

Կոմսուհին ուսերը թոթվեց։

— Եթե ճիշտ է, որ մոսյո Դենիսովն առաջարկություն է արել քեզ, նրան ասա՛, ինքը հիմար է։ Ահա՛ բոլորը։

— Ոչ, նա հիմար չի,— նեղացած ու լուրջ ասավ Նատաշան։

— Ուրեմն ի՞նչ ես ուզում։ Հիմա դուք բոլորդ էլ սիրահարված եք։ է՛հ, սիրահարված ես, գնա ամուսնացիր,— բարկացած ծիծաղով խոսեց կոմսուհին։— Ասված քեզ հետ։

— Ոչ, մայրիկ, ես սիրահարված չեմ նրա վրա, կարծեմ սիրահարված չեմ։

— Դե ուրեմն՝ այդպես էլ ասա նրան։

— Մայրիկ, դուք բարկանո՞ւմ եք։ Մի բարկանաք, հոգյակս. դե, ես ինչո՞վ եմ հանցավոր։

— Չէ՞. ուրեմն էլ ի՞նչ։ Ուզում ես ինքս գնամ ասեմ.— ասավ կոմսուհին ժպտալով։

— Ոչ, ես ինքս կասեմ. միայն սովորեցրու։ Հե՞շտ է ձեզ համար,— ավելացրեց նա,— իսկ եթե տեսնեի՞ք, թե ինչպես նա այդ ասավ ինձ... Ես գիտեմ, որ նա այդ չէր ուզում ասել, բայց անզգուշաբար ասավ։

— Բայց այնուամենայնիվ պետք է մերժել նրան։

— Ոչ, հարկավոր չէ։ Ես այնպես խղճում եմ նրան։ Նա այնպես լավն է։

— Դե՛, ուրեմն առաջարկությունն ընդունիր. ամուսնանալուդ ժամանակն է, — բարկացած ու հեգնանքով ասավ մայրը։

— Ոչ, մայրիկ, ես այնպես խղճում եմ նրան։ Չգիտեմ, ինչպես ասեմ։

— Դու ասելու բան չունես, ես ինքս կասեմ, — ասավ կոմսուհին, վրդովված, որ այդ փոքրիկ Նատաշային համարձակվել են նայել իբրև մեծի։

— Ոչ. ոչ մի դեպքում, ես կասեմ, իսկ դուք ականջ դրեք դռան մոտ, — և Նատաշան հյուրասրահի միջով վազեց դահլիճ, ուր նույն աթոռի վրա, դաշնամուրի մոտ, երեսը ձեռներով ծածկած, նստած էր Դենիսովը։

Նա վեր թռավ Նատաշայի թեթև քայլերի ձայնից։

— Նատալի, — ասավ Դենիսովն արագ քայլերով մոտենալով նրան, — ողո՛ջույնք իմ բախտը։ Նա ձեզ՝ ձեզ՝ին է։

— Վասիլի Դմիտրիչ, ես ձեզ այնպե՞ս եմ խղճում... Ոչ. բայց դուք այնպես լավն եք... բայց այդ հարկավոր չէ... դա... իսկ այնպես ես միշտ կսիրեմ ձեզ։

Դենիսովը կռացավ դեպի նրա ձեռը և Նատաշան լսեց տարօրինակ, իրեն անհասկանալի հնչյուններ։ Նա համբուրեց Դենիսովի սև, խճճված, գանգրահեր գլուխը։ Այդ միջոցին լսվեց կոմսուհու զգեստի շտապ մոտեցող շրշյունը։ Կոմսուհին ներս մտավ։

— Վասիլի Դմիտրիչ, շնորհակալ եմ ձեր արած պատվից, — ասավ կոմսուհին շփոթված ձայնով, որը սակայն խիստ թվաց Դենիսովին, — բայց իմ աղջիկն այնքան ջահել է, որ ես կարծում էի, թե դուք, իբրև իմ որդու բարեկամ, նախ կդիմեիք ինձ։ Այդ դեպքում ինձ չէիք հարկադրի մերժել ձեզ։

— Կոմսուհի, — ասավ Դենիսովը խոնարհած աչքերով ու մեղավոր տեսքով. և ուզում էր էլի ինչ-որ բան ասել, բայց կմկմաց։

Նատաշան չկարողացավ սառնասրտությամբ տեսնել նրան այդպես ողորմելի, և սկսեց բարձրաձայն հեկեկալ։

— Կոմսուհի, ես մեղավոր՝ եմ ձեզ՝ աղ՝աջ, — շարունակեց Դենիսովն ընդհատվող ձայնով, — բայց իմացեք, ես այնպես պաշտում եմ ձեզ՝ աղջկան և ձեզ՝ ամբողջ ընտանիքը, ողջ՝ եթե եղ՝կու կյանք ունենամ, եղ՝կու կյանքս էլ կտամ...— Նա

նայեց կոմսուհուն և նկատեց նրա խիստ դեմքը։ — Դե՛, մնաք բաղ՝ով կոմսուհի, — ասավ նա կոմսուհու ձեռը համբուրելով և առանց Նատաշային նայելու, արագ, վճռական քայլերով դուրս եկավ սենյակից։

Մյուս օրը Ռոստովը ճանապարհ դրեց Դենիսովին, որ այլևս չէր ցանկանում մի օր անգամ մնալ Մոսկվայում։ Դենիսովի մեկնելու առթիվ նրա՝ Մոսկվայի ընկերները գնչուների մոտ հրաժեշտի քեֆ սարքեցին նրա համար, և նա չէր հիշում, թե ինչպես սահնակ նստեցրին իրեն և ինչպես անցան առաջին երեք կայարանը։

Դենիսովի մեկնելուց հետո, Ռոստովը, սպասելով փողի, որը ծեր կոմսը չէր կարող միանգամից հավաքել, երկու շաբաթ ևս անցրեց Մոսկվայում, մնալով տանը, առավելապես աղջիկների սենյակում։

Սոնյան այժմ ավելի քնքուշ ու անձնվեր վերաբերմունք էր ցույց տալիս նրան, քան առաջ։ Նա կարծես ուզում էր ցույց տալ Նիկոլային, որ նրա փող տանուլ տալը մի քաջագործություն է, որի համար նա այժմ նրան ավելի է սիրում։ Բայց Նիկոլայն իրեն անարժան էր համարում Սոնյային։

Նիկոլայն աղջիկների ալբոմները գրոտեց ոտանավորներով ու նոտաներով և, առանց հրաժեշտ տալու ծանոթներից որևէ մեկին, վերջապես Դոլոխովին ուղարկելով 43 հազարը և նրա ստացականն ստանալով, նոյեմբերի վերջին մեկնեց իրենց գնդին հասնելու, որն արդեն Լեհաստանումն էր։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Կնոջ հետ բացատրվելուց հետո՝ Պիեռը մեկնեց Պետերբուրգ։ Տորժոկի կայարանում ձիեր չկային կամ թե կայարանի վերակացուն չկամեցավ տալ։ Պիեռն ստիպված էր սպասել։ Նա, առանց հանվելու, պառկեց կաշվե բազմոցի վրա, կլոր սեղանի առջև, դրեց այդ սեղանի վրա տաք կոշիկներով մեծ ոտները և մտածմունքի մեջ ընկավ։

— Կհրամայե՞ք ճամպրուկները ներս բերել։ Թեյ, անկողին կհրամայե՞ք, — հարցրեց սենեկապահը։

Պիեռը չպատասխանեց, որովհետև ոչինչ չէր լսում և ոչինչ չէր տեսնում։ Նա մտազբաղ էր դեռ անցած կայարանից, և դեռ շարունակում էր մտածել նույն բանի մասին, — այնքան կարևոր մի բանի մասին, որ ուշադրություն չէր դարձնում, թե ի՞նչ է կատարվում շուրջը։ Նրան ոչ միայն չէր հետաքրքրում այն, թե ինքը Պետերբուրգ կհասնի վաղ կամ ուշ, կամ այն, թե այս կայարանում հանգստանալու տեղ կլինի թե չէ, նրա համար բոլորը մեկ էր, համեմատած այն մտքերի հետ, որ այժմ զբաղեցնում էին իրեն, — և վերջապես անտարբեր էր, թե այս կայարանում մի ժամ կմնա, թե ամբողջ կյանքը։

Կայարանի վերակացուն, նրա կինը, սենեկապահը և տորժոկյան ձեռագործ-կարվածքը ձեռին մի կին իրար ետևից մտնում էին նրա սենյակը և իրենց ծառայությունն առաջարկում։ Պիեռը, չփոխելով մեկնած ոտների դիրքը, ակնոցի միջով նայում էր նրանց ու չէր հասկանում, թե ի՞նչ բան կարող էր հարկավոր լինել նրանց և դրանք՝ այդ մարդիկ, ինչպե՞ս կարող

են ապրել՝ առանց լուծելու այն հարցերը, որոնք զբաղեցնում էին իրեն՝ Պիեռին։ Իսկ նրան զբաղեցնում էին միևնույն հարցերը սկսած այն օրից, երբ նա, մենամարտից հետո, Սոկոլնիկից վերադառնալով, անցրեց առաջին տանջալի գիշերը. այժմ մինչև, ճամփորդության առանձնության մեջ այդ մտքերն ամբողջովին պաշարեցին նրան։

Ինչի մասին էլ սկսեր մտածել, դառնում էր միևնույն խնդիրներին, որոնց ոչ կարողանում էր լուծում տալ, ոչ էլ կարգադրում էր չտալ իրեն այդ հարցերը։ Նրա գլխի մեջ կարծես տեղահան էր եղել այն գլխավոր պտուտակը, որից կախված էր նրա կյանքը։ Այդ պտուտակը ոչխորն էր գնում, ոչ դուրս էր գալիս, այլ շարժվում էր միևնույն տեղում, և չէր կարելի նրան չպտտել։ Ներս մտավ վերակացուն և սկսեց նվաստաբար խնդրել նորին պայծառափայլության՝ սպասել միայն երկու ժամ, որից հետո նա, նորին պայծառափայլությանը (ինչ ուզում է լինի) արագընթաց կառք կտա։ Ըստ երևույթին, վերակացուն ասում էր և ուզում էր ուղևորից ավելորդ փող պոկել միայն։

«Վա՞տ է այս, թե՞ լավ», հարցնում էր Պիեռն ինքն իրեն։ «Ինձ համար լավ է, ուրիշ ուղևորի համար — վատ, իսկ նրա համար էլ դա անհրաժեշտ է, քանի որ նա ուտելու բան չունի. վերակացուն պատմեց, որ դրա համար մի սպա իրեն ծեծել է։ Եվ սպան ծեծել է նրա համար, որովհետև շտապ պետք է տեղ հասներ։ Իսկ ես Դոլոխովի վրա կրակեցի նրա համար, որ վերջին ինձ վիրավորված էի համարում, իսկ Կյուդովիկոս XVI-ին գլխատեցին նրա համար, որովհետև նրան ոճրագործ էին համարում. իսկ մի տարի անց, ինչ-որ բանի համար, սպանեցին նրանց, ովքեր գլխատեցին Կյուդովիկոսին։ Ո՞րն է վատ, ո՞րն է լավ։ Ի՞նչ, պետք է սիրել, ի՞նչը՝ ատել։ Ինչո՞ւ համար պետք է ապրել, և ի՞նչ եմ ես։ Ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մահը։ Ի՞նչ ուժ է, որ կառավարում է բոլորին», հարցնում էր նա ինքն իրեն։

Ոչ պատասխան չկար այդ հարցերից և ոչ մեկին, բացի մի անտրամաբան պատասխանից, որ բնավ այդ հարցերին չէր վերաբերում։ Այդ պատասխանն էր. «Կմեռնես և ամեն ինչ կվերջանա։ Կմեռնես և ամեն բան կիմանաս կամ կդադարես հարցում անելուց»։ Բայց մեռնելն էլ սարսափելի էր։

Տորժոկցի կինը ծղրտան ձայնով առաջարկում էր իր ապ-

ջանքը, առանձնապես սեկից կարած կիսակոշիկները։ «Ես մի քանի հարյուր ռուբլի ունեմ, որ չգիտեմ, թե ինչ անեմ, իսկ նա պատռված մուշտակով կանգնել է երկչոտ ինձ է նայում»։ մտածում էր Պիեռը։ «Եվ ինչի՞ն է հարկավոր դրան այդ փողը։ Կարծես այդ փողը մի մազաչափ կարող է ավելացնել նրա երջանկությունն ու հոգու հանգստությունը։ Մի՞թե աշխարհում մի որևէ բան կարող է ինձ և նրան հեռու պահել չարիքից ու մահից։ Մահը, որ ամեն ինչին վերջ կդնի և որը պետք է գա այսօր կամ վաղը,— որ միևնույն է, թե մի ակնթարթից հետո,— հավերժության համեմատությամբ»։ Ու նա նորից սեղմեց տեղահան եղած պտուտակը, նորից շարունակեց պտտվել միևնույն տեղում։

Ծառան տվեց նրան կիսով չափ թղթատած մի գիրք, որը m-me Suza-ի նամականի վեպն էր։ Նա սկսեց կարդալ ինչ-որ Amélie de Mansfeld-ի տանջանքների և առաքինի պայքարի մասին։ «Եվ ինչո՞ւ էր նա կռվում գայթակղեցնողի դեմ», մտածում էր Պիեռը, «երբ նա սիրել է նրան»։ Չէր կարող աստված համակել նրան իր կամքի հակառակ մի ձգտումով։ Իմ նախկին կինը չէր պայքարում և նա, գուցե, իրավացի էր։ Դեռ ոչինչ չի գտնված։ Մենք կարող ենք իմանալ միայն այն, որ ոչինչ չգիտենք։ Սա է ահա մարդկային գերիմաստության բարձրագույն աստիճանը։

Իր մեջ և իր շուրջը եղած ամեն բան Պիեռին թվում էր խճճված, անիմաստ ու նողկալի։ Սակայն դեպի շրջապատն ունեցած այդ նողկանքի մեջ Պիեռը գտնում էր յուրատեսակ գրգռիչ մի բավականություն։

— Ձերդ պայծառափայլություն, համարձակվում եմ խընդրել, որ ձեզ նեղություն տաք ու նրանց տեղ տաք,— ասավ վերակացուն սենյակ մտնելով և հետը բերելով մի ուրիշ ուղևոր, որ ետ էր ընկել ձիեր չլինելու պատճառով։

Ուղևորը կարճ, լայնոսկր, դեղնագույն, կնճռոտ ծերուկ էր, որի սպիտակ հոնքերը կախ էին ընկել փայլուն, անորոշ գորշավուն աչքերի վրա։

Պիեռը ոտները վերցրեց սեղանից, ելավ և պառկեց իր համար պատրաստված մահճակալի վրա՝ երբեմնակի նայելով նորեկին, որը մռայլ-հոգնած տեսքով, առանց Պիեռին նայելու, մեծ դժվարությամբ հանվում էր ծառայի օգնությամբ։ Մաշված

և նանկինի կտորով կարկատած մուշտակը հագին և թաղիքե կոշիկները նիհար, ոսկրոտ ոտներին՝ եկվորը նստեց բազմոցին, հենելով բազմոցին լայնաքունք ու կարճ խուզած խոշոր գլուխը, ու նայեց Բեզուխովին։ Այդ նայվածքի խիստ, խելացի ու խորաթափանց արտահայտությունը զարմացրեց Պիեռին։ Նա ուզեց խոսել եկվորի հետ, բայց երբ փորձեց խոսք բանալ ճանապարհի մասին, ուղևորն արդեն աչքերը փակել էր և, խորշոմավոր զառամ ձեռները ծալած (նրա մի մատի վրա կար չուգունե մեծ մատանի՝ Ադամի գլխի պատկերով), նստել էր անշարժ. Պիեռին թվաց, որ նա կա՛մ հանգստանում էր, կա՛մ մտասույզ ու հանդիստ խորհրդածում ինչ-որ բանի մասին։ Ուղևորի ծառան, որի դեմքն ամբողջովին ծածկված էր կնճիռներով և նույնպես դեղնագույն մի ծերուկ էր՝ առանց բեղերի ու միրուքի, որոնք, ըստ երևույթին, ածիլված չէին, և երբեք էլ չէին բուսնել։ Դյուրաշարժ ծեր ծառան ճամփորդական փոքրիկ պահարանից պարագաներ հանելով՝ թեյի սեղանն էր սարքում, և հետո ներս բերեց եփող ինքնաեռը։ Երբ ամեն բան պատրաստ էր արդեն, ուղևորը բացեց աչքերը, մոտեցավ սեղանին և իր համար մի բաժակ թեյ լցնելով, մի բաժակ էլ լցրեց անբեղ-անմորուս ծերուկի համար ու տվեց նրան։ Շուտով Պիեռն անհանգստություն, անհրաժեշտություն և նույնիսկ անխուսափելիություն զգաց զրույց սկսել այդ ուղևորի հետ։

Ծառան ետ բերեց իր դատարկ, բերնի վրա շրջած բաժակը՝ կծած և կիսատ թողած շաքարի կտորով, ու հարցրեց, թե բան հարկավոր չի՞ արդյոք։

— Ոչինչ։ Գիրքը տուր,— ասավ ուղևորը։

Ծառան տվեց գիրքը, որը Պիեռին հոգևոր գիրք թվաց, և ուղևորը խորասուզվեց ընթերցանության մեջ։ Պիեռը նայում էր նրան։ Հանկարծ ուղևորը գրքի արանքը մի բան դնելով, ծալեց այն և աչքերը կրկին փակելով, հենվեց բազմոցին ու նստեց նախկին դիրքով։ Պիեռը նայում էր նրան և հազիվ կարողացավ շրջվել, երբ ծերունին աչքերը բացեց և իր հաստատուն ու խիստ հայացքը հառեց ուղիղ Պիեռի երեսին։

Պիեռը շփոթվեց և ուզեց խուսափել այդ հայացքից, բայց ծերունու փայլող աչքերը նրան դեպի իրենց քաշեցին։

II

— Պատիվ ունեմ խոսելու կոմս Բեզուխովի հետ, եթե չեմ սխալվում, — ասավ ուղևորն առանց շտապելու և բարձր ձայնով։

Պիեռը լուռ, ակնոցի միջով, հարցական նայեց խոսակցին։

— Ես լսել եմ ձեր մասին, — շարունակեց ուղևորը, — և ձեզ հասած դժբախտության մասին, — նա կարծես ընդգծեց վերջին խոսքը, կարծես ասավ. «Այո, դժբախտություն, ինչպես էլ դուք անվանելու լինեք. ես գիտեմ, որ այն, ինչ պատահել է ձեզ Մոսկվայում — դժբախտություն էր»։ — Շատ ցավում եմ, պարոն։

Պիեռը կարմրեց և ոտներն շտապով անկողնից իջեցնելով, թեքվեց դեպի ծերունին, անբնականորեն ու երկչոտությամբ ժպտալով։

— Ես ձեզ հիշեցրի այդ, պարոն, ոչ թե հետաքրքրությունից դրդված, այլ ավելի կարևոր պատճառներով։

Ծերունին լռեց, չհեռացնելով հայացքը Պիեռից ու մի կողմ քաշվեց բազմոցի վրա, դրանով հրավիրելով Պիեռին նստել իր կողքին։ Պիեռին հաճելի չէր խոսակցություն սկսել այդ ծերունու հետ, բայց նա ակամա հնազանդեց, մոտեցավ ու նստեց նրա մոտ։

— Դուք դժբախտ եք, պարոն, — շարունակեց նա, — դուք ջահել եք, ես ծեր. ուստի կկամենայի ուժերս ներածին չափ օգնել ձեզ։

— Ա՛խ, այո, — անբնական ժպիտով ասավ Պիեռը։ — Շատ շնորհակալ եմ ձեզնից... Դուք որտեղի՞ց եք բարեհաճում գալ։

Ուղևորի դեմքը սիրալիր չէր. նա մինչև անգամ սառն էր ու խիստ, բայց չնայած դրան, նոր ծանոթի թե՛ խոսքը, թե՛ դեմքը գրավիչ ազդեցություն էին գործում Պիեռի վրա։

— Եթե ձեզ որևէ պատճառով հաճելի չէ խոսակցել հետս, — ասավ ծերունին, — այդպես էլ ասացեք, պարոն։

Ու նա հանկարծ ժպտաց անսպասելի հայրական-քնքուշ մի ժպիտով։

— Ահ, ո՛չ, բոլորովին ո՛չ. ընդհակառակը, ես շատ ուրախ եմ ձեզ ծանոթանալուս համար, — ասավ Պիեռը մի անգամ ևս նոր ծանոթի ձեռներին նայելով, և ավելի մոտից դիտեց նրա մատանին։

Նա այդ մատանու վրա տեսավ մասոնության նշան՝ Ադամի գլուխը։

— Դուք ամեն հարցնել, — ասավ նա, — դուք մասո՞ն եք։

— Այո՛, ես պատկանում եմ ազատ քարտաշների եղբայրության, — ասավ ուղևորն ավելի ու ավելի խորը նայելով Պիեռի աչքերին։ — Ինչ եմ կողմից և՛ նրանց կողմից եղբայրական ձեռք եմ մեկնում ձեզ։

— Վախենում եմ թե, — ասավ Պիեռը ժպտալով և տատանվելով մի կողմից մասոնի անձնավորության նկատմամբ հարգանքի և մյուս կողմից մասոնների գաղափարները ծաղրելու սովորության պատճառով, — վախենում եմ, որ դժվարանամ հասկանալ, ինչպես ասեմ. վախենում եմ թե՝ իմ մտածելակերպն այնքան հակառակ լինի ձերին, որ մենք իրար չհասկանանք։

— Ձեր մտածելակերպն ինձ հայտնի է, — ասավ մասոնը. — ձեր այդ մտածելակերպը, որի մասին խոսում եք դուք, և որը ձեր մտքի աշխատանքի արդյունքն է թվում ձեզ — մարդկանց մեծամասնության մտածելակերպն է, զոհողության, ծուլության և տգիտության միատեսակ պտուղը։ Ինձ ներեցեք, պարոն. եթե այդ չիմանայի՝ ձեզ հետ չէի խոսի։ Ձեր մտածելակերպը մի տխուր մոլորություն է։

— Ճիշտ նույնպես, ինչպես ես կարող եմ ենթադրել, դուք ևս մոլորության մեջ եք, — ասավ Պիեռը թույլ ժպտալով։

— Ես երբեք չեմ համարձակվի ասել, որ ես ճշմարտությունը գիտեմ, — ասավ մասոնը, ավելի ու ավելի զարմացնելով Պիեռին իր որոշակի ու հաստատուն խոսքերով։ — Ոչ ոք միայնակ չի կարող հասնել ճշմարտության. այդ կարելի է միայն քար-քարի վրա դնելով, բոլորի մասնակցությամբ. միլիոնավոր սերունդներ, նախահայր Ադամից սկսած մինչև մեր օրերը, կառուցում են այն տաճարը, որ արժանավոր բնակարանը պիտի լինի մեծն աստծո համար, — ասավ մասոնը և աչքերը փակեց։

— Պետք է ձեզ ասեմ, որ ես չեմ հավատում. չեմ... հավատում աստծուն, — դժվարությամբ և ճիգ գործ դնելով ասավ Պիեռը, անհրաժեշտություն զգալով ասելու ամբողջ ճշմարտությունը։

Մասոնն ուշադիր Պիեռին նայեց և ժպտաց, ինչպես կսպասե-

տար ձեռին միլիոններ ունեցող հարուստն այն աղքատին, որ կասեր նրան, թե ինչը՝ աղքատը, հինգ ռուբլի չունի, որ երջանիկ լինի։

— Այո, դուք ասածուն չեք ճանաչում, պարոն,— ասավ մասոնը,— դուք նրան չեք կարող ճանաչել։ Դուք նրան չեք ճանաչում, դրանից էլ դժբախտ եք։

— Այո, այո, ես դժբախտ եմ,— հաստատեց Պիեռը.— բայց ի՞նչ անեմ։

— Դուք նրան չեք ճանաչում, պարոն, և դրանից էլ դուք շատ դժբախտ եք։ Դուք չեք ճանաչում նրան, բայց նա այստեղ է, նա իմ մեջ է, իմ խոսքերի մեջ. նա քո մեջ է, և մինչև անգամ այն սրբապիղծ խոսքերի մեջ, որ դու արտասանեցիր հիմա,— ասավ մասոնը խիստ ու դողդոջուն ձայնով։

Նա լռեց ու հառաչեց, ըստ երևույթին հանգստանալու համար։

— Եթե նա չլիներ,— ասավ նա կամաց,— մենք նրա մասին չէինք խոսի։ Ինչի՞ և ո՞ւմ մասին էինք խոսում։ Ո՞ւմն էիր դու ժխտում,— ասավ նա հանկարծ զվարթ խստությամբ ու տիրական ձայնով։— Հապա ո՞վ է հնարել նրան, եթե նա չկա։ Ինչո՞ւ քո մեջ ենթադրություն առաջացավ, թե մի այդպիսի անհասկանալի էակ կա։ Ինչո՞ւ դու և ամբողջ աշխարհը ենթադրեցիք այդ անըմբռնելի էակի գոյությունը, մի էակ, որն իր ողջ էությամբ ամենակարող է, հավիտենական ու անվախճան։

Նա կանգ առավ և երկար լռեց։ Պիեռը չէր կարող և չկամեցավ այդ լռությունն ընդհատել։

— Նա կա, բայց նրան հասկանալը դժվար է,— կրկին ասավ մասոնը, նայելով ոչ թե Պիեռի դեմքին, այլ իր առջև և զառամ ձեռներով, որ ներքին հուզումից չէին կարողանում հանգիստ մնալ, սկսեց գիրքը թերթել։— Եթե դա մարդ լիներ, որի գոյության մասին դու կասկածեիր, ես այդ մարդուն կբերեի քեզ մոտ, նրա ձեռը կբռնեի և քեզ ցույց կտայի։ Բայց ինչպե՞ս ես, չնչին մահկանացու, ցույց տամ նրա բովանդակ ամենակարողությունը, բովանդակ հավիտենականությունը և բովանդակ շնորհն այն մարդուն, ով կույր է, կա՛մ նրան, ով փակում է աչքերը, որ ոչինչ չտեսնի ու նրան չհասկանա, և չտեսնի ու չհասկանա իր ամբողջ պղծությունն ու արատա-

վորությունը։— Նա լռեց։— Ո՞վ ես դու, ի՞նչ ես դու։ Դու քո մասին կարծում ես, թե իմաստուն ես, որովհետև դու կարողացար արտասանել այդ սրբապիղծ խոսքերը,— ասավ ծերունին մռայլ և արհամարհական հեգնանքով։— Սակայն դու ավելի հիմար ես ու խենթ, քան այն փոքրիկ երեխան, որը ճարտարորեն շինված ժամացույցի մասերի հետ խաղալով, կհամարձակվի ասել, թե քանի որ ինքն այդ ժամացույցի նշանակությունը չի հասկանում, ուստի և չի հավատում նրան շինող վարպետի գոյությանը։ Նրան դժվար է ըմբռնել... Մենք դարերով, Ադամ նախահորից սկսած մինչև մեր օրերը, աշխատում ենք այդ իմացության համար և դեռ անսահմանորեն հեռու ենք մեր նպատակին հասնելուց, սակայն նրան չհասկանալու մեջ մենք տեսնում ենք միայն մեր թուլությունը և նրա մեծությունը։

Պիեռը սրտատրոփ, վառվող աչքերով մասոնին նայելով, առանց ընդմիջելու, առանց որևէ բան հարցնելու, լսում էր նրան և ամբողջ հոգով հավատում այն բոլորին, ինչ ասում էր այդ օտար մարդը։ Հավատո՞ւմ էր արդյոք նա այն խորամիտ պատճառաբանություններին, որ կային մասոնի ճառի մեջ, թե՞ հավատում էր, ինչպես հավատում են երեխաները, նրա ձայնի ելևէջներին, համոզկերության և սրտագին խոսքերին, որ կային մասոնի ճառի մեջ, թե՞ դողդոջ ձայնին, որ երբեմն ընդհատում էր մասոնի խոսքը, թե՞ ծերունու այդ փայլուն աչքերին, որ զառամել են նույն այդ համոզմունքի մեջ, թե՞ իր կյանքը գնահատող մարդու հանդարտ բնավորության ու հաստատակամության, հատկություններ, որոնք փայլ էին տալիս մասոնի ողջ էությանը և որոնք առանձնապես մեծապես զարմացնում էին Պիեռին, իր ընկած և անհույս դրության հետ համեմատելով,— բայց նա ամբողջ հոգով կցանկար հավատալ և հավատում էր ու ապրում էր անդորրության, վերածնության և նոր կյանքի դառնալու ուրախ զգացումը։

— Նրան հասու են լինում ոչ թե մտքով, այլ կյանքով,— ասավ մասոնը։

— Ես չեմ հասկանում,— ասավ Պիեռը՝ երկյուղ զգալով իր մեջ առաջացող կասկածից։ Նա վախենում էր խոսակցի փաստարկումների անորոշությունից ու թուլությունից. նա վախենում էր, որ չի հավատալու նրան։— Ես չեմ հասկանում,—

ասավ նա,— թե ինչպես մարդկային միտքը չի կարողանում ըմբռնել այն ուսմունքը, որի մասին դուք խոսում եք։

Մասոնը ժպտաց իր հեզ հայրական ժպիտով։

— Գերագույն իմաստությունն ու ճշմարտությունը այն ամենահատակ հեղուկն են, որ ուզում ենք ընդունել մեր մեջ,— ասավ նա։— Արդյոք կարո՞ղ եմ ես, անմաքուր անոթս ընդունել այդ մաքուր հեղուկը և դատել նրա մաքրության մասին։ Միայն ինքս ինձ ներքուստ մաքրելով, կարող եմ որոշ մաքրության հասցնել ընդունվող հեղուկը։

— Այո՛, այո՛, այդ այդպես է,— ուրախ ասավ Պիեռը։

— Գերագույն իմաստությունը հենված չէ միայն բանականության վրա, և ոչ էլ ֆիզիկայի, պատմության, քիմիայի և այլ գիտությունների վրա, գիտություններ, որոնցից կազմված է մարդկային իմացությունը։ Գերագույն իմաստությունը մի՛ է։ Գերագույն իմաստությունն ունի մի գիտություն, ընդհանուրի գիտությունը, որ բացատրում է բովանդակ աշխարհը և մարդու տեղը նրա մեջ։ Որպեսզի մարդ կարողանա իր մեջ ամփոփել այդ գիտությունը, անհրաժեշտ է, որ մաքրի ու նորոգի իր ներքին մարդուն, ուստի և նախքան ըմբռնելը, պետք է հավատալ և կատարելագործվել։ Ու այդ նպատակներին հասնելու համար մեր հոգու մեջ դրված է աստծու լույսը, որը խիղճ է կոչվում։

— Այո՛, այո՛,— հաստատեց Պիեռը։

— Հոգու աչքերով նայիր քո ներսի մարդուն և ինքդ քեզ հարցրու, թե ո՞հ ես արդյոք քեզնից, ինչի՞ ես հասել միայն խելքովդ ղեկավարվելով։ Ի՞նչ ես դու։ Դուք, պարոն, ջահել եք, հարուստ եք, խելոք, կրթված։ Ի՞նչ եք արել դուք ձեզ տրված այդ բոլոր շնորհները։ Արդյոք դո՞հ եք ձեզնից ու ձեր կյանքից։

— Ոչ, ես իմ կյանքն ատում եմ,— ասավ Պիեռը դեմքը կնճռելով։

— Ատում ես, ուրեմն փոխիր այն, մաքրիր քեզ և որքան մաքրվես, այնքան հատու կլինես իմաստության։ Նայեցեք ձեր կյանքին, պարոն. ինչպե՞ս եք ապրել դուք այդ կյանքը. սանձարձակ կերուխումի, բեֆերի ու ցոփության մեջ։ Հասարակությունից միշտ ստանալով և նրան ոչինչ չտալով, դուք հարստություն եք հնոք բերել։ Ի՞նչպես եք գործադրել այդ հարստությունը։ Ի՞նչ եք արել ձեր մերձավորների հա-

մար։ Արդյոք մտածե՞լ եք ձեր տասնյակ հազարավոր ստրուկների մասին. օգնե՞լ եք նրանց ֆիզիկապես ու բարոյապես։ Ո՛չ։ Դուք նրանց աշխատանքից օգտվել եք, որպեսզի շվայտ կյանք վարեք։ Ահա՛ ինչ եք արել դուք։ Արդյոք ընտրե՞լ եք որևէ ծառայություն, որով օգտակար լինեիք ձեր մերձավորին։ Ո՛չ։ Դուք ձեր կյանքն անցրել եք պարապության մեջ։ Հետո, պարոն, դուք ամուսնացաք, պատասխանատվություն հանձն առաք մի ջահել կնոջ առաջնորդը լինելու, և ի՞նչ արիք։ Դուք, պարոն, նրան չօգնեցիք ճշմարտության ուղին գտնելու, այլ նրան նետեցիք կեղծիքի և դժբախտության գիրկը։ Մի մարդ վիրավորեց ձեզ և դուք սպանեցիք նրան, ու ասում եք, թե աստծուն չեք ճանաչում և ձեր կյանքն ատում եք։ Այստեղ, պարոն, ոչ մի անհասկանալի բան չկա։

Այս խոսքերից հետո, մասոնը կարծես երկար խոսելուց հոգնելով, կրկին հենվեց բազմոցի թիկունքին ու աչքերը փակեց։ Պիեռը նայեց այդ խիստ, անշարժ, զառամած ու գրեթե մոայլ դեմքին և շրթունքները շարժեց անձայն։ Նա ուզում էր ասել. «Այո՛, գարշելի, պարապ, ցոփ կյանք», բայց չէր համարձակվում լռությունը խզել։

Մասոնը խոպոտ, ծերունիներին հատուկ ձևով հազաց և ձայն տվեց սպասավորին։

— Ջիերն ի՞նչ եղան,— հարցրեց նա, առանց Պիեռին նայելու։

— Ուրիշից ձիանք բերին վարձով,— պատասխանեց սպասավորը։— Ձե՞ք ուզում մի քիչ հանգստանալ։

— Ո՛չ, պատվիրիր՝ լծեն։

«Մի՞թե նա կերթա և ինձ մենակ կթողնի, առանց բոլորն ասելու և առանց օգնություն խոստանալու», մտածեց Պիեռը տեղից ելնելով ու գլուխն իջեցնելով, և երբեմն-երբեմն մասոնին նայելով՝ սկսեց բայլել սենյակում։ «Այո՛, ես այդ մասին չեմ մտածել, և վարել եմ զզվելի, անբարոյական կյանք, բայց այդ կյանքը չեմ սիրել և այդ չեմ ցանկացել», մտածում էր Պիեռը, «իսկ այս մարդը ճշմարտությունը գիտի և եթե ուզենար, կարող էր ինձ հայտնել»։

Պիեռն ուզում էր, բայց չէր համարձակվում այդ բանն ասել մասոնին։ Ուղեորն իր վարժ, զառամ ձեռներով իրերը դասեց և փոքրիկ մուշտակը կոճկեց։ Այս բոլորը վերջացնելով՝

նա դարձավ Բեզուխովին և անտարբեր, քաղաքավարի ձևով ասավ նրան.

— Դուք հիմա ո՞ւր եք բարեհաճում գնալ, պարոն։

— Ես... ես Պետերբուրգ,— պատասխանեց Պիեռը մանկական, անվճռական ձայնով։—Ես ձեզնից շնորհակալ եմ։ Ես ամեն բանում համաձայն եմ ձեզ հետ։ Բայց դուք մի կարծեք, թե ես այնքան էլ վատ եմ։ Ես ամբողջ հոգով կուզեի լինել այն, ի՛նչ դուք եք ցանկանում, բայց մեկը չի եղել, որ ինձ օգներ... Այնուամենայնիվ, ամենից առաջ, ես ինքս եմ մեղավոր ամեն բանում։ Օգնեցեք ինձ, սովորեցրեք ինձ, և գուցե լինեմ...

Պիեռը չկարողացավ շարունակել. նա քիթը ֆսսացրեց և շուտ եկավ։

Մասոնը երկար լռեց. նա ըստ երևույթին ինչ-որ բան էր մտածում։

— Օգնությունը տրվում է միայն աստծուց,— ասավ նա,— բայց օգնության այն չափը, որ կարող է տալ մեր միաբանությունը՝ կտրվի ձեզ։ Դուք գնում եք Պետերբուրգ, ուրեմն տվեք այս կոմս Վիլարսկուն (նա հանեց թղթապանակը և քառածալ մեծ թղթի վրա մի քանի խոսք գրեց)։ Թույլ տվեք ձեզ մի խորհուրդ տալ։ Հասնելով մայրաքաղաք, ձեր առաջին օրերն անցրեք առանձնության մեջ, ինքներդ ձեզ քննեցեք և մի շարունակեք ձեր կյանքի հին ճանապարհը։ Այնուհետև, պարոն, ձեզ ցանկանում եմ բարի ճանապարհ,— ասավ նա, նկատելով, որ սպասավորը ներս եկավ,— և հաջողությո՛ւն։

Ուղևորն Օսիպ Ալեքսեևիչ Բազդեևն էր, ինչպես հետո իմացավ Պիեռը վերակացուի մատյանից։ Բազդեևն ամենահայտնի մասոններից և դեռ Նովիկովի ժամանակի մարտինականներից մեկն էր։ Նրա գնալուց հետո, Պիեռն առանց պառկելու և ձիեր պահանջելու, երկար ետ ու առաջ էր անում կայարանի սենյակում, կշռադատելով իր արատավոր անցյալը և վերածնվելու հրճվանքով երևակայում էր իր երանավետ, անարատ ու առաքինի ապագան, որ նրան շատ դյուրին էր թվում։ Նրան թվում էր, որ ինքն արատավոր է միայն այն պատճառով, որովհետև պատահմամբ մոռացել է, թե որքան լավ է առաքինի լինելը։ Նրա հոգում այլևս նախկին կասկածների հետքն անգամ չէր մնացել։ Նա հաստատապես հավատում էր,

որ մարդկանց եղբայրությունը միանգամայն հնարավոր բան է, որ նրանք առաքինության ճանապարհին կմիանան՝ միմյանց պաշտպանելու նպատակով, և նա հենց այդպես էլ պատկերացնում էր մասոնությունը։

III

Գալով Պետերբուրգ, Պիեռն իր գալու մասին ոչ ոքի չըհայտնեց, ոչ մի տեղ չգնաց և ամբողջ օրերով սկսեց գրաղվել Թոմա Քեմպրեցու ընթերցումով, մի գիրք, որ հայտնի չէր, թե ո՛վ էր բերել նրա համար։ Այդ գիրքը կարդալով, Պիեռը միայն և միայն մի բան էր ըմբռնում. նա ըմբռնում էր դեռևս իրեն անծանոթ մի հաճույք. հավատում էր կատարելության հասնելու հնարավորության և մարդկանց մեջ սեր ու եղբայրություն հաստատելու հնարավորության, որ բացել էր նրա առաջ Օսիպ Ալեքսեևիչը։ Պիեռի գնալուց մի շաբաթ հետո, երիտասարդ լեհացի կոմս Վիլարսկին, որին Պիեռը հարևանցի կերպով էր ճանաչում Պետերբուրգի բարձր շրջաններում, երեկոյան մտավ նրա սենյակը պաշտոնական ու հանդիսավոր տեսքով, ինչպես մտավ ժամանակին Դոլոխովի մարտավկան, և դուռն իր ետևից ծածկելով ու համոզվելով, որ սենյակում բացի Պիեռից ոչ ոք չկա, դիմեց Պիեռին.

— Ես, կոմս, եկել եմ ձեզ մոտ հանձնարարությամբ և մի առաջարկով,— ասավ նա՝ առանց նստելու։— Մեր եղբայրության մեջ շատ բարձր դիրք վայելող մի անձ միջնորդել է, որ դուք ընդունվեք մեր եղբայրության մեջ ժամանակից շուտ, և առաջարկել է ինձ լինել ձեր երաշխավորը։ Ես նրա կամքը կատարելը համարում եմ իմ սրբազան պարտքը։ Արդյոք կամենո՞ւմ եք իմ երաշխավորությամբ մտնել ազատ քարտաշների եղբայրության մեջ։

Այդ մարդու (որին Պիեռը միշտ տեսել էր պարահանդեսներում սիրալիր ժպիտը դեմքին ամենափայլուն կանացի հասարակության մեջ) խոսելու սառն ու խիստ եղանակը զարմացրեց Պիեռին։

— Այո, ցանկանում եմ,— ասավ Պիեռը։

Վիլարսկին գլուխը խոնարհեց։

— Մի հարց ևս, կոմս,— ասավ նա,— որին՝ կխնդրեի

ձեզ, ոչ իբրև ապագա մասոնի, այլ որպես ազնիվ մարդու (galant homme) պատասխանել ամենայն անկեղծությամբ. արդյոք հրաժարվե՞լ եք դուք ձեր նախկին համոզմունքներից. հավատու՞մ եք աստծուն արդյոք։

Պիեռը մտածմունքի մեջ ընկավ։

— Այո... այո, ես հավատում եմ աստծուն, — ասավ նա։

— Այդ դեպքում, — սկսեց Վիլարսկին, բայց Պիեռն ընդհատեց նրան։

— Այո, ես հավատում եմ աստծուն, — ասավ նա կրկին։

— Այդ դեպքում՝ մենք կարող ենք գնալ, — ասավ Վիլարսկին։ — Իմ կառքը ձեր տրամադրության տակ է։

Ամբողջ ճանապարհին Վիլարսկին լուռ էր։ Պիեռի այն հարցին, թե ինքն ի՞նչ պիտի անի և ինչպե՞ս պիտի պատասխանի, Վիլարսկին ասավ միայն, որ եղբայրները, իրենից ավելի արժանավորները, կփորձեն նրան, և Պիեռին ավելի բան հարկավոր չի անել, քան ասել ճշմարտությունը։

Մտնելով մի մեծ տան բակ, ուր գտնվում էր մասոնների ժողովարանը, և անցնելով մութ սանդուղքով, նրանք մտան մի լուսավորված փոքրիկ նախասենյակ, ուր և առանց սպասավորի օգնության, հանեցին մուշտակները։ Նախասենյակից նրանք անցան մի ուրիշ սենյակ։ Տարօրինակ հանդերձով մեկը երևաց դռան մոտ։ Վիլարսկին նրան ընդառաջելով, ֆրանսերեն ինչ-որ բան ասավ կամացուկ ու մոտեցավ փոքրիկ պահարանին, որի մեջ Պիեռը նկատեց հանդերձներ, որ երբեք չէր տեսել։ Պահարանից մի թաշկինակ վերցնելով, Վիլարսկին այն դրեց Պիեռի աչքերին և ետևից կապեց, հանգույցի մեջ առնելով և մազերը, մի բան, որ ցավ պատճառեց Պիեռին։ Հետո նա Պիեռին դեպի իրեն թեքեց, համբուրեց ու ձեռից բռնելով տարավ ինչ-որ տեղ։ Պիեռը ցավ էր զգում հանգույցի հետ կապած մազերից։ Նա ցավից դեմքը կնճռում էր, ժպտում էր ինչ-որ բանից ամաչելով։ Նրա վիթխարի մարմինը՝ կախ ընկած ձեռներով, կնճռոտ ու ժպտացող դեմքով, ծանր ու երկչոտ քայլերով շարժվում էր Վիլարսկու ետևից։

Տասը քայլ նրան առաջնորդելով Վիլարսկին կանգ առավ։

— Ինչ էլ պատահի ձեզ, — ասավ նա, — դուք բոլորը պետք է տաներ արիությամբ, եթե հաստատապես որոշել եք մտնել մեր միաբանության մեջ։ (Պիեռը գլխի շարժումով ցե-

բական պատասխան տվեց)։ Երբ դուք դուռն թակեք, ձեր աչքերի կապը կարձակեք, — ավելացրեց Վիլարսկին. — այիությունն և հաջողությունը եմ ցանկանում ձեզ։ Ու Պիեռի ձեռքը սեղմելով, Վիլարսկին դուրս նետվեց։

Պիեռը, մենակ մնալով, շարունակեց առաջին պես մնալ։ Մի երկու անգամ նա ուսերը թափեց, ձեռը տարավ գլխի թաշկինակը, ասես ուզում էր վերցնել այն, բայց ձեռը կրկին իջեցրեց։ Այն հինգ րոպեն, որ նա անցրեց աչքերը կապած, նրան մի ամբողջ ժամ թվաց։ Նրա ձեռներն ուտել էին ոտները ծալշում էին։ Նրան թվում էր, թե ինքը հոգնել է։ Նա ստրում էր շատ բարդ ու բազմապիսի զգացումներ։ Նա ապրում էր այն բանից, թե ինչ պիտի պատահի իրեն, ի ավելին ստրապրում էր, թե ինչպես անի, որ վախը չարտահայտվի։ Նրան հետաքրքիր էր իմանալ, թե ինչ է պատահելու իրեն, ինչ բան է բացվելու իր առաջ, բայց ամենից ավելին նա ուզում էր, որ հասել է ժամը, երբ ինքը, վերջանալ, սաք է գնալու վերածնունդի և առաքինության նոր կյանքի ուղին, որի մասին երազում էր նա Օսֆ Ալենդերին հանդիպելու օրից։ Դուռն ուժգին բախեցին։ Պիեռն աչքերի կապոցը վերցրեց ու շուրջը նայեց։ Սենյակում սև-մութ էր տիրում, միայն մի տեղ, ինչ-որ ոսկեգույն բանի մեջ, կանթեղ էր վառվում։ Պիեռը մոտեցավ և տեսավ, որ կանթեղը գրված է սև սենյակում, ուր ընկած էր մի բաց գիրք։ Այդ գիրքը Եվանգելիան էր, իսկ այն սալիտակը, որի մեջ կանթեղն էր վառվում, մարդկային գանգ էր՝ իր խոռոչներով ու ատամներով։ Կարդալով Եվանգելիայի առաջին խոսքերը. «Ի սկզբանն էր բանն և բանն էր առաջնորդ», Պիեռն անցավ սեղանի շուրջը և տեսավ մի մեծ, ինչ-որ բաներով լի բաց արկղ։ Դա դագաղ էր՝ ոսկորներով լի։ Տեսավ Պիեռին այնքան էլ չզարմացրեց։ Հույս ունենալով մտնել մի բոլորովին նոր կյանք՝ նախկիններից խիստ տարբեր, նա սպասում էր ամեն տեսակ անսովոր, ավելի քան անսովոր բաների, քան այն, ինչ տեսել էր։ Գանգ, դագաղ, ավետարան, — նրան թվում էր, որ ինքն սպասում էր այս ամենին, սպասում էր դեռ ավելին։ Աշխատելով առաջ բերել իր մեջ խանդավառության զգացում, նա նայեց իր շուրջը։ «Անսված մահ, սեր, մարդկանց եղբայրություն», ասում էր նա ինքն իրեն, այդ խոսքերի հետ

կապելով ինչ-որ մի բանի խառն, բայց ուրախալի ակնկալություններ։ Դուռը բացվեց և մեկը ներս մտավ։

Թույլ լույսի տակ, որին Պիեռն արդեն կարողացել էր ընտելանալ, ներս մտավ մի ոչ բարձրահասակ մարդ։ Ըստ երևույթին լույսից մթության մեջ մտնելով, այդ մարդը կանգ առավ, ապա զգույշ քայլերով առաջացավ դեպի սեղանը և նրա վրա դրեց կաշվե ձեռնոց հագած ձեռները։

Այդ մարդը հագել էր սպիտակ կաշվե գոգնոց, որը ծածկում էր նրա կուրծքը և ոտների վերին մասը. վզին կար մանյակի նման ինչ-որ մի բան, որի տակից երևում էր բարձր սպիտակ օձիքը, որ եզերում էր նրա ցածից լուսավորված երկարավուն դեմքը։

— Դուք ինչո՞ւ համար եք եկել այստեղ, — հարցրեց ներս մտնողը Պիեռին, երբ լսեց նրա շարժվելու ձայնը։ — Դուք ճշմարտության լույսին չհավատացողդ և այդ լույսը չտեսնողդ, ինչո՞ւ համար եք եկել այստեղ։ Ի՞նչ եք ուզում մեզնից։ Գերիմաստություններ՞, առաքինություններ՞, լուսավորությո՞ւն։

Այն րոպեին, երբ դուռը բացվեց և անծանոթը ներս մտավ, Պիեռն ապրեց վախի և պատկառանքի մի այնպիսի զգացում, որ զգացել էր միայն մանուկ օրերին՝ խոստովանության ժամանակ, նա զգաց, որ իր դեմը կանգնած է մի մարդ, որն իր կյանքի պայմաններով բոլորովին խորթ էր, բայց մարդկանց եղբայրությամբ՝ մերձավոր։ Պիեռը սրտատրոփ շարժվեց դեպի ռիտորը (այսպես է կոչվում մասոնության մեջ այն եղբայրը, որը պատրաստում էր ուռնոդին՝ եղբայրության մեջ մտնելու)։ Պիեռը՝ մոտ գալով, ճանաչեց, որ ռիտորն իր ծանոթ Սմոլյանինովն է, սակայն նրա համար վիրավորական էր տեսնել, որ եկողը ծանոթ մարդ է. ներս մտնողը միայն եղբայր էր և առաքինի ուսուցիչ։ Պիեռը երկար ժամանակ չէր կարողանում մի բան ասել, այնպես որ ռիտորը ստիպված էր իր հարցը կրկնել։

— Այո, ես... ես վերածնություն եմ ցանկանում, — դժվարությամբ արտասանեց Պիեռը։

— Լավ, — ասավ Սմոլյանինովն ու իսկույն ևթ շարունակեց։ — Դուք արդյոք գաղափար ունե՞ք այն միջոցների մասին, որոնցով մեր սրբազան միաբանությունը կարող է

օգնել ձեզ՝ ձեր նպատակներին հասնելու... — ասավ ռիտորը՝ հանդարտ և արագ։

— Ես... հույս ունեմ... ղեկավարության... օգնության... վերածնության, — ասավ Պիեռը դողացող ձայնով ու դժվարությամբ, որ առաջանում էր հուզմունքից ու վերացական առարկաների մասին ռուսերեն խոսելու անվարժությունից։

— Դուք ի՞նչ կարծիք ունեք ֆրանկ-մասոնության մասին։

— Ես կարծում եմ, որ ֆրանկ-մասոնությունը fraternité[1] է և մարդկանց հավասարություն՝ առաքինի նպատակներով, — ասավ Պիեռը միաժամանակ ամաչելով, որ իր խոսքերը չէին համապատասխանում վայրկյանի հանդիսավորությանը։ — Ես կարծում եմ...

— Լավ, — ասավ ռիտորն շտապ, ըստ երևույթին, միանգամայն բավարարված այդ պատասխանով։ — Դուք ձեր նպատակին հասնելու համար որոնե՞լ եք արդյոք միջոցներ կրոնի մեջ։

— Ոչ, ես կրոնը համարել եմ անարդար բան և նրան չեմ հետևել, — ասավ Պիեռն այնպես կամաց, որ ռիտորը չլսեց նրան ու հարցրեց, թե ի՞նչ է ասում։ — Ես աթեիստ էի, — պատասխանեց Պիեռը։

Ռիտորը հազաց, ձեռնոցներ հագած ձեռները ծալեց և ըսկըսեց խոսել.

— Այժմ էլ ես ձեր առաջ պիտի բանամ մեր միաբանության գլխավոր նպատակը, — ասավ նա, — և եթե այդ նպատակը զուգադիպի ձերինին, ուրեմն ձեզ համար օգտակար կլինի մտնել մեր եղբայրության մեջ։ Մեր միաբանության առաջին ամենագլխավոր նպատակը և դրա հետ միասին հիմքը, որի վրա նա հաստատված է և որին չի կարող տապալել մարդկային ոչ մի ուժ, — դա է՝ պահպանել և ապաղա սերունդներին ավանդել մի կարևոր խորհուրդ... որը մեզ հասել է ամենահնագույն դարերից և նույնիսկ նախամարդուց, որպիսի խորհրդից գուցե և կախված է մարդկային ցեղի բախտը։ Բայց քանի որ սույն խորհուրդը այնպիսի բնույթ ունի, որ ոչ ոք չի կարող նրան ըմբռնել ու նրանից օգտվել, եթե տեսականորեն

[1] Եղբայրություն։

ու ջանասիրությամբ ինքն իրեն մաքրելով օր առաջ շնորհաշ-
պատրաստի այդ բանին, այլապես ամեն ոք չի կարող հուսալ,
թե շուտ ձեռք կբերի այն։ Ուստի և մենք ունենք մի երկրորդ
նպատակ, որը կայանում է նրանում, որպեսզի մենք ժամա-
նակին նախապատրաստենք մեր անդամներին, որքա՛ն հը-
նարավոր է, ուղղություն տալ նրանց զգացմունքներին,
զտել և լուսավորել նրանց բանականությունն այն միջոցնե-
րով, որ գտել են այն մարդիկ, որոնք տքնել են սույն խորհուր-
դը որոնելիս, և այդպիսով ընդունակ դարձնել նրանց յուրաց-
նելու այդ խորհուրդը։ Երրորդ, մաքրելով և ուղղելով մեր
անդամներին, մենք աշխատում ենք ուղղել նաև մարդկային
ամբողջ ցեղը, առաջարկելով նրան մեր անդամներին իբրև
բարեպաշտության և առաքինության օրինակ և, այդպիսով,
բոլոր ուժով աշխատում ենք հակամարտել չարին, որ թագա-
վորում է աշխարհում։ Մտածեցեք այդ մասին, ես կրկին կգամ
ձեզ մոտ,— ասավ նա և սենյակից դուրս եկավ։

— Հակամարտել չարին, որ թագավորում է աշխար-
հում...— կրկնեց Պիեռը և նրան պատկերացավ իր ապագա
գործունեությունն այդ ասպարեզում։ Նրան պատկերանում
էին նաև նույնպիսի մարդիկ, ինչպիսին ինքն էր երկու շաբաթ
առաջ, և նա մտովին դիմում էր նրանց ուսուցողական-քարոզ-
չական ճառով։ Նա պատկերացնում էր արատավոր ու դժբախտ
մարդիկ, որոնց ինքն օգնում էր խոսքով ու գործով. պատկե-
րացնում էր հարստահարիչներ, որոնց ձեռքից ազատում էր
նրանց զոհերին։ Ռիտորի հիշած երեք նպատակներից այս
վերջինը — մարդկային ցեղի ուղղումը — առանձնապես մոտ
էր Պիեռի սրտին։ Այն կարևոր խորհուրդը, որի մասին հիշեց
ռիտորը, թեպետ և շարժում էր նրա հետաքրքրությունը,
բայց նրան էական չէր թվում. իսկ երկրորդ նպատակը՝ ինք-
նազտումը և ինքնաուղղումը՝ քիչ էր զբաղեցնում Պիեռին,
որովհետև նա այդ բոպեին հրճվանքով զգում էր, որ ինքն
արդեն լիովին մաքրված է նախկին արատներից և պատրաստ
է միայն բարություն անելու։

Կես ժամ հետո ռիտորը վերադարձավ, որպեսզի որոնողին
հայտնի այն յոթն առաքինությունները, համապատասխան
Սողոմոնի տաճարի յոթն աստիճաններին, որ պարտավոր է
արդեգրել յուրաքանչյուր մասոն։ Այդ առաքինություններն

էին. 1) համեստություն, միաբանության գաղտնիքը պահ-
պանել, 2) հնազանդել միաբանության բարձր պաշտոնյանե-
րին, 3) հեզաբարություն, 4) սեր դեպի մարդկությունը,
5) արիություն, 6) առատաձեռնություն և 7) սեր առ ճանաչ։

— Յոթերորդ,— ասավ ռիտորը,— ջանացեք մահվան մա-
սին հաճախակի խորհրդածելով ձեզ հասցնել մինչև այնտեղ,
որ մահն այլևս ձեզ սարսափելի թշնամի չթվա, այլ բարեկամ...
որն այս աղետավոր աշխարհում ազատում է առաքինի գործե-
րի համար տառապող հոգուն և տանում նրան պարգևատրու-
թյան ու հանգստի օթևանը։

«Այո, այդ այդպես պետք է լինի», մտածեց Պիեռը, երբ այս
խոսքերից հետո ռիտորը հեռացավ նրանից, թողնելով նրան
առանձին խորհրդածելու։ «Այդ այդպես պետք է լինի, բայց
ես դեռ այնքան թույլ եմ, որ սիրում եմ կյանքը, որի իմաստը
միայն այժմ է քիչ-քիչ պարզվում ինձ համար»։ Սակայն մը-
նացած հինգ առաքինությունները, որոնց Պիեռը հիշում էր
մատների վրա համրելով, զգում էր, որ դրանք կային իր մեջ,
և՛ արիություն, և՛ առատաձեռնություն, և՛ հեզաբարություն,
և՛ սեր առ մարդկությունը, և՛ հատկապես հնազանդու-
թյունը, որը նույնիսկ առաքինություն չէր թվում նրան, այլ
երջանկություն։ (Նա այժմ ուրախ էր ազատվել սեփական
կամայականությունից և իր կամքը ենթարկել նրան ու նը-
րանց, ովքեր գիտեին աներկբայելի ճշմարտությունը)։ Յոթե-
րորդ առաքինությունը Պիեռը մոռացավ և ոչ մի կերպ չկարո-
ղացավ հիշել։

Երրորդ անգամ ռիտորը շուտ վերադարձավ և Պիեռին հարց-
րեց, թե նա շարունակո՞ւմ է արդյոք հաստատ մնալ իր մտա-
դրության մեջ և պատրա՞ստ է արդյոք կատարել այն ամենը,
ինչ պահանջվում է իրենից։

— Ես ամեն բանի պատրաստ եմ,— ասավ Պիեռը։

— Նույնպես պետք է ձեզ հայտնեմ,— ասավ ռիտորը,—
որ մեր միաբանությունն իր ուսմունքն ավանդում է ոչ միայն
խոսքերով, այլև ուրիշ միջոցներով, որոնք՝ իսկական իմաս-
տություն և առաքինություն որոնողի վրա ազդում են դուցե
ավելի ուժեղ կերպով, քան լոկ բանավոր բացատրություն-
ները։ Սույն տաճարը, որ դուք տեսնում եք, իր արդուզարդով
արդեն պետք է բացատրեր ձեր սրտին, եթե նա անկեղծ է։

ավելի՛ն, քան խոսքը։ Գուցե հետագայում էլ, ձեր ընդունելությունից հետո, դուք կտեսնեք նման բացատրություններ։ Մեր միաբանությունը հետևում է հնադարյան համայնքներին, որոնք իրենց ուսմունքը բացատրում էին հիերոգլիֆներով։ Հիերոգլիֆը,— ասավ ռիտորը,— դա զգացմունքների չենթարկվող որևէ մի իրի անուն է, մի իր, որն օժտված է պատկերելի առարկայի հատկություններով։

Պիեռը շատ լավ գիտեր, թե ի՛նչ է հիերոգլիֆը, բայց չէր համարձակվում խոսել։ Նա լուռ լսում էր ռիտորին և ամեն բոպե զգում, որ փորձերն ահա պիտի սկսեն։

— Եթե դուք ձեր համոզմունքների մեջ հաստատ եք, ուրեմն ես պետք է ձեռնարկեմ ձեզ ընդունելու գործին,— ասավ ռիտորը Պիեռին մոտենալով։— Ի նշան ձեր առատաձեռնության, խնդրում եմ, տալ ինձ բոլոր թանկարժեք իրերը։

— Բայց ինձ մոտ ես ոչինչ չունեմ,— ասավ Պիեռը կարծելով, թե իրենից պահանջում են տալ այն բոլորը, ինչ ինքն ունի։

— Տվեք այն, ինչ կա ձեզ վրա. ժամացույց, դրամ, մատանի...

Պիեռն շտապով հանեց քսակը, ժամացույցը և երկար ժամանակ չկարողացավ գիրուկ մատից հանել նշանի մատանին։ Երբ այս ամենը կատարվեց-վերջացավ, մասոնն ասավ.

— Ի նշան հնազանդության, խնդրում եմ ձեզ՝ հանվել։

Պիեռն հանեց ֆրակը, ժիլետը և ձախ ոտքի կոշիկը՝ ըստ ռիտորի ցուցմունքի։ Մասոնը բացեց Պիեռի շապիկը ձախ կրծքի կողմից և, կռանալով, բարձրացրեց նրա վարտիքի ձախ փողկր մինչև ծունկը։ Պիեռն շտապով ուզեց հանել և աջ ոտքի կոշիկն ու վարտիքը ետ քշտել, որպեսզի իրեն անծանոթ մարդուն ազատի նեղությունից, բայց մասոնը նրան ասավ, որ այդ բանը հարկավոր չէ, ու նրան հողաթափ տվեց ձախ ոտքին հագնելու։ Ամոթխածության, կասկածի և ինքնահեգնության մանկական ժպիտով, որ հակառակ իր կամքի երևաց նրբա դեմքին, Պիեռը ձեռները կախ գցած ու ոտները շոռած, կանգնել էր եղբայր-ռիտորի առաջ և սպասում էր նրա նոր հրամաններին։

— Եվ, վերջապես, ի նշան ձեր բացարության, խնդրում եմ հայտնել ինձ ձեր գլխավոր կիրքը,— ասավ նա։

— Իմ կիրքը՞։ Դրանցից ես շատ եմ ունեցել,— ասավ Պիեռը։

— Հայտնեցեք այն կիրքը, որն ամենից ավելի է ստիպել ձեզ տատանվելու առաքինության ճանապարհին,— ասավ մասոնը։

Պիեռը լռեց, մտքում որոնելով, թե ո՛րն է իր գլխավոր կիրքը։

«Գինի՞ն։ Որկրամոլությո՞ւնը։ Պարապությո՞ւնը։ Ծուլությո՞ւնը։ Դյուրագրգռությո՞ւնը։ Չարությո՞ւնը։ Կանա՞յք», թվում էր նա իր արատները, մտքում նրանց կշռադատելով և չիմանալով դրանց ո՛րին առավելություն տալ։

— Կանայք,— ասավ Պիեռը կամաց, հազիվ լսելի ձայնով։

Մասոնն անշարժ մնաց և երկար ժամանակ չէր խոսում ադ պատասխանից հետո։ Վերջապես մոտեցավ Պիեռին, վերցրեց սեղանի վրա դրված թաշկինակը և նրանով նորից կապեց Պիեռի աչքերը։

— Վերջին անգամն եմ ասում ձեզ. ձեր ամբողջ ուշադրությունը դարձրեք ձեզ վրա, կապանք դրեք ձեր զգացումների վրա և երանություն որոնեցեք ո՛չ թե կրքերի մեջ, այլ ձեր սրտում։ Երանության աղբյուրը մեզնից դուրս չէ, այլ մեր ներսը...

Պիեռն արդեն զգում էր երանության այդ թարմացնող աղբյուրը, որ խնդությամբ ու խանդաղատանքով լցրել էր այժմ նրա սիրտը։

IV

Շուտով, դրանից հետո, մութ տաճարը մտավ Պիեռին կանչելու ոչ թե նախկին ռիտորը, այլ երաշխավոր Վիլարսկին, որին Պիեռը ճանաչեց ձայնից։ Այն նոր հարցումին, թե նա հաստա՞տ է արդյոք իր մտադրության մեջ, Պիեռը պատասխանեց. «Այո, այո, համաձայն եմ», և մանկական փայլուն ժպիտը դեմքին, մսոտ կուրծքը բաց, մի ոտը հանած, մյուսը՝ հագած, անհավասար ու երկչոտ քայլերով դիմեց առաջ, հետևելով Վիլարսկուն, որը ձեռի սուրը դեմ էր արել Պիեռի մերկ կրծքին։ Սենյակից նրան տարան միջանցքները, ետ ու առաջ դարձնելով, և, վերջապես, բերին ժողովարանի դռան մոտ,

Վիլարսկին հազաց, նրան պատասխանեցին մուրճի ձայներով, ու դուռը բացվեց նրանց առաջ։ Մեկը թավ ձայնով (Պիեռի աչքերը դեռ կապված էին) հարցեր տվեց, թե ո՞վ է նա, ո՞ւր և որտե՞ղ է ծնվել և այլն։ Ապա նրան, առանց աչքերը բանալու, ինչ-որ տեղ տարան. տանելու ժամանակ նրան այլաբանություններ էին ասում իր ուղևորության շարչարանքների մասին, սրբազան բարեկամության մասին, աշխարհի անվախճան կառուցողի մասին, արիության մասին, որով և պետք է տաներ շարչարանքներն ու վտանգները։ Այս ուղևորության միջոցին Պիեռը նկատեց, որ իրեն անվանում են մերթ որոնող, մերթ տառապող, մերթ պահանջող, և դրա հետ միաժամանակ տարբեր կերպով զարկում էին մուրճերով ու սրերով։ Այն ժամանակ, երբ նրան մի ինչ-որ առարկայի մոտեցրին, Պիեռը նկատեց, որ իր ղեկավարների մեջ իրարանցում ու շփոթություն ընկավ։ Նա լսեց, թե ինչպես իրեն շրջապատող մարդիկ շշուկով հարց էին տալիս իրար, և թե ինչպես մեկը պնդում էր, որպեսզի իրեն՝ Պիեռին ինչ-որ մի գորգի վրայով անցկացնեն։ Դրանից հետո նրա աջ ձեռքը բռնեցին ու դրին մի ինչ-որ բանի վրա, իսկ ձախով՝ պատվիրեցին կարկին դեմ անել ձախ կրծքին և, ստիպեցին նրան՝ խոսքերը կրկնելով, — որ արտասանում էր նրանցից մեկը, — երդում տալ՝ միաբանության օրենքներին հավատարիմ մնալու։ Ապա մոմերը հանգցրին և սպիրտ վառեցին, ինչպես այդ զգաց Պիեռը հոտից, և ասացին, որ նա տեսնելու է փոքր լույսը։ Նրա աչքերի կապը վերցրին, և Պիեռը կարծես երազում, սպիրտի կրակի թույլ լույսի տակ տեսավ մի քանի մարդ, որ նույնպիսի գոգնոցներ կապած, ինչպես ոիտորը, կանգնել էին իր դեմ և ձեռներին բռնած սրերն ուղղել էին իր կրծքին։ Նրանց մեջ կար արյունոտված սպիտակ շապկով մի մարդ։ Այդ տեսնելով, Պիեռը կուրծքը դեմ արավ սրերին, ցանկանալով, որ սրերը խրվեն կրծքի մեջ։ Բայց սրերը նրանից հեռացրին և իսկույն աչքերը կապեցին նորից։

— Այժմ դու տեսար փոքր լույսը, — ասավ մեկը Պիեռին։ Ապա մոմերը կրկին վառեցին, ասացին, որ նա պետք է տեսնի լրիվ լույսը, ու նրա աչքերի կապը կրկին վերցրին, և տասից ավելի ձայն հանկարծ ասին. sic transit gloria mundi[1]։

[1] Այնպես անցողիկ է աշխարհի փառքը։

Պիեռը կամաց-կամաց իրեն հավաքեց և սկսեց դիտել սենյակը, ուր ինքն էր և մի խումբ մարդիկ։ Սեղանի ծածկված երկար սեղանի շուրջը նստել էին տասներկու մարդ, դարձյալ այնպիսի հանդերձներով, ինչպես և նրանք, որոնց տեսել էր առաջ։ Դրանցից մի քանիսին Պիեռը ճանաչում էր դեռ Պետերբուրգից։ Նախագահական տեղը նստել էր մի անծանոթ երիտասարդ, մի առանձնահատուկ խաչ վզին։ Աջ կողմը նստել էր իտալացի աբբան, որին Պիեռը տեսել էր երկու տարի առաջ Աննա Պավլովնայի տանը։ Այդտեղ էր նաև՝ մի շատ նշանավոր բարձրաստիճան անձն և շվեյցարացի մի դաստիարակ, որ առաջներում ապրում էր Կուրագինների տանը։ Բոլորը հանդիսավոր լռությամբ լսում էին նախագահին, որ ձեռին մուրճ ուներ բռնած։ Պատի մեջ շինված էր մի բոցավառ աստղ. սեղանի մի կողմը փոքրիկ գորգ էր զանազան պատկերներով, մյուս կողմը եկեղեցու սեղանի նման մի բան կար, վրան ավետարան ու գանգ դրված։ Սեղանի շուրջը կային յոթը մեծ մոմակալ, եկեղեցական աշտանակների նման։ Եղբայրներից երկուսը Պիեռին տարան դեպի սեղանը, ոտները դնել տվին ուղղանկյուն դիրքով և հրամայեցին պառկել, ասելով թե՝ նա խոնարհվում է տաճարի շեմքին։

— Նա ամենից առաջ պետք է թի ստանա, — շշուկով ասավ եղբայրներից մեկը։

— Ախ, հերի՛ք է, — ասավ մյուսը։

Պիեռը ցրված, կարճատես աչքերով, առանց հնազանդելու, շուրջը նայեց և հանկարծ նրա սրտում մի կասկած ծագեց. «Որտե՞ղ եմ ես, Այս ի՞նչ եմ անում ես։ Վրաս չեն ծիծաղում արդյո՞ք. հետո ամոթանքով չպիտի՞ հիշեմ այս»։ Սակայն այս կասկածը շարունակվեց միայն մի ակնթարթ։ Պիեռը նայեց իրեն շրջապատող մարդկանց լուրջ դեմքերին, հիշեց ամենը, ինչ կատարվեց-անցավ այստեղ և մտածեց, որ չի կարելի կես-ճանապարհին կանգ առնել։ Նա իր կասկածից սարսափեց և ճիգ թափեց առաջ բերել իր մեջ խանդաղատանքի նախկին զգացումը, ու ծունկի իջավ տաճարի շեմքին։ Եվ, իսկապես, խանդաղատանքի զգացումն այժմ ավելի, քան առաջ, տիրեց նրան։ Փոքր-ինչ պառկելուց հետո, նրան պատվիրեցին վեր կենալ և հագցրին նույնպիսի սպիտակ կաշվե գոգնոց, ինչպիսին ունեին մյուսները, տվին նրա ձեռը մի թի և երեք

զույգ ձեռնոց, և այդ ժամանակ մեծ վարպետը դիմեց նրան։ Նա Պիեռին ասավ, որ աշխատի անբիծ պահել այդ գոգնոցի սպիտակությունը, որն ամրություն և անարատություն է ներկայացնում. ապա Պիեռի համար անբացատրելի թիու մասին ասավ, որ Պիեռն աշխատի դրանով իր սիրտը մաքրել արատներից և նրանով ներողամտաբար կարգի բերի իր մերձավորների սիրտը։ Հետո ձեռնոցների առաջին զույգի մասին, որ տղամարդու ձեռնոցներ էին, ասավ, որ Պիեռը նրանց նշանակությունը չի կարող իմանալ, բայց պետք է պահի. երկրորդ զույգի մասին, որ նույնպես տղամարդու ձեռնոցներ էին, ասավ, որ նա պետք է դրանք հազնի ժողովներում և, վերջապես, երրորդ զույգի՝ կանացի ձեռնոցների մասին ասավ՝ «Սիրելի՛ եղբայր, սույն կանացի ձեռնոցները ևս հատկացվում են ձեզ։ Տվեք դրանք այն կնոջը, որին դուք ամենից ավելի կհարգեք։ Այս շնորհով դուք ձեր սրտի անարատության հավաստիացում կտաք նրան, ում ձեզ համար կընտրեք իբրև արժանավոր քարտաշուհի»։ Ու, փոքր-ինչ լռելով, ավելացրեց. «Բայց տե՛ս, սիրելի՛ եղբայր, թող այս ձեռնոցները չզարդարեն անմաքուր ձեռքեր»։ Այն ժամանակ, երբ մեծ վարպետն արտասանում էր այս վերջին խոսքերը, Պիեռին թվաց, թե նախագահը շփոթվեց։ Պիեռը շփոթվեց ավելի, կարմրեց, ինչպես կարմրում են երեխաները՝ լաց լինելու չափ, սկսեց անհանգիստ շուրջը նայել, ու տիրեց մի անհարմար լռություն։

Այդ լռությունն ընդհատեց եղբայրներից մեկը, որ Պիեռին գորգին մոտեցնելով, սկսեց տետրակից բացատրություններ կարդալ գորգի վրա եղած բոլոր պատկերների մասին, այն է՝ արևի, լուսնի, մուրճի, կապարալարի, թիու, անտաշ և խորանարդ քարի, ալան, երեք պատուհանի և այլ բաների մասին։ Ապա Պիեռին ցույց տվին իր տեղը, սովորեցրին միաբանության նշանները, հայտնեցին մուտքի խոսքը և, վերջապես, թույլ տվին նստել։ Մեծ վարպետն սկսեց կանոնադրությունը կարդալ։ Կանոնադրությունը շատ երկար էր, և Պիեռը՝ ուրախությունից, հուզմունքից ու ամոթից, դժվարանում էր ըմբռնել այն, ինչ կարդում էին։ Նա ամենայն ուշադրությամբ լսեց կանոնադրության միայն վերջին խոսքերը, որոնք և մնացին նրա հիշողության մեջ։

«Մեր տաճարներում մենք ուրիշ աստիճաններ չենք ճանաչում,— կարդում էր մեծ վարպետը,— բացի այն աստիճաններից, որ կան առաքինության և մոլության միջև։ Զգուշացիր որևէ այնպիսի խտրություն անել, որ կարող է խախտել հավասարությունը։ Թո՛ր, օգնության հասիր եղբորդ, ով էլ նա լինի. ճամփի բեր մոլորվածին, բարձրացրու ընկածին և երբեք չարություն ու թշնամություն մի տածի դեպի եղբայրդ։ Եղի՛ր բարեհամբույր ու սիրալիր։ Վառիր բոլոր սրտերում առաքինության կրակը։ Երջանկությունդ կիսիր մերձավորիդ հետ և թող նախանձը երբեք չխոռվի այս անմեղ վայելքը։ Ներիր թշնամուն քո, վրեժ մի լուծիր նրանից, այլ միայն բարիք տա նրան։ Այսպիսով, կատարելով բարձրագույն օրենքը, դու կգտնես հնադարյան, քո կորցրած մեծության հետքերը»։

Նա վերջացրեց և, տեղից ելնելով, գրկեց Պիեռին ու համբուրեց նրան։ Պիեռն ուրախության արցունքն աչքերին, շուրջը նայեց, չիմանալով ինչպես պատասխանել շնորհավորանքներին և ծանոթություն վերսկսողներին, որ շրջապատել էին նրան։ Նա ոչ մի ծանոթություն չէր ընդունում. այդ բոլոր մարդկանց մեջ տեսնում էր միայն եղբայրների, որոնց հետ անհամբեր ուզում էր գործ ձեռնարկել։

Մեծ վարպետը մուրճը զարկեց, բոլորը բռնեցին իրենց տեղերը, և նրանցից մեկը քարոզ կարդաց հեզության անհրաժեշտության մասին։

Մեծ վարպետն առաջարկեց կատարել վերջին պարտականությունը, և նշանավոր բարձրաստիճան անձը, որ կրում էր ողորմություն հավաքողի կոչումը, սկսեց եղբայրների շրջանում պտտել։ Պիեռն ուզում էր հանգանակության թերթում նվիրագրել իր ունեցած ամբողջ գումարը, բայց վախեցավ պարծենկոտ երևալ, ուստի և գրեց այնպիսի գումար, որքան գրել էին մյուսները։

Նիստը վերջացավ. տուն վերադառնալուց հետո Պիեռին թվում էր, թե ինքը վերադարձել է մի ինչ-որ հեռավոր ճամփորդությունից, ուր անցրել է տասնյակ տարիներ, փոխվել է միանգամայն և կտրվել նախկին կյանքի կարգ ու կանոնից և սովորություններից։

V

Միաբանության մեջ ընդունվելու հետևյալ օրը Պիեռը տանը նստած, գիրք կարդալով, ջանում էր ըմբռնել քառակուսու նշանակությունը, որն իր մի կողմով պատկերացնում էր աստծուն, մյուսով՝ բարոյականը, երրորդով՝ ֆիզիկականը և չորրորդով՝ խառն։ Երբեմն նա մի կողմ էր դնում գիրքն ու քառակուսին և երևակայության մեջ կյանքի նոր ծրագիր կազմում։ Երեկ նրան ժողովարանում հայտնեցին, որ թագավորի ականջին լուր է հասել իր մենամարտի մասին, և որ նա խելացի կվարվեր, եթե հեռանար Պետերբուրգից։ Պիեռը մտադիր էր մեկնել իր հարավային կալվածները և այնտեղ զբաղվել իր գյուղացիներով։ Նա ուրախ տրամադրությամբ մտածում էր այդ նոր կյանքի մասին, երբ անսպասելի ներս մտավ իշխան Վասիլին։

— Բարեկամ, դու այդ ինչե՞ր ես արել Մոսկվայում։ Ինչո՞ւ համար ես Լյոլիայի հետ կռվել, mon cher. դու մոլորության մեջ ես,— ասավ իշխան Վասիլին սենյակ մտնելով։— ես ամեն ինչ իմացա. և հաստատապես կարող եմ ասել, որ էլենն անմեղ է քո առաջ, ինչպես Քրիստոսը՝ ջհուդների։

Պիեռն ուզեց պատասխանել, բայց իշխանը նրան ընդհատեց։

— Եվ ինչո՞ւ դու ուղղակի չդիմեցիր ինձ, որպես բարեկամի։ Ես բոլորը գիտեմ. ես ամեն ինչ հասկանում եմ,— ասավ նա,— դու վարվել ես այնպես, ինչպես վայել է իր պատիվը թանկ գնահատող մարդուն, գուցե և շտապել ես, բայց այդ մասին չդատենք։ Մի բան հիշիր, թե ինչ դրության մեջ ես դնում դու կնոջդ և ինձ ամբողջ հասարակության և նույնիսկ արքունիքի առաջ,— ավելացրեց նա ձայնն իջեցնելով։— Կինդ ապրում է Մոսկվայում, դու՝ այստեղ։ Հիշի՛ր, սիրելիս,— նա ցած քաշեց Պիեռի ձեռքը,— այստեղ մի թյուրիմացություն կա. կարծում եմ ինքդ այդ զգում ես։ Հենց հիմա, իմ ներկայությամբ, նրան նամակ գրիր, նա կգա այստեղ և ամեն ինչ կպարզվի, այլապես իմացի՛ր, որ դու շատ հեշտությամբ կարող ես տուժել, սիրելիս։

Իշխան Վասիլին ազդու հայացքով նայեց Պիեռին։

— Լավատեղյակ աղբյուրներից հայտնի է լինձ, որ այրիացած կայսրուհին առանձին հետաքրքրություն է ցույց տալիս դեպի այս գործը։ Ինքդ գիտես, որ նա շա՛տ ողորմած է դեպի էլենը։

Մի քանի անգամ Պիեռը պատրաստվեց խոսել, բայց, մի կողմից իշխան Վասիլին էր խանգարում, մյուս կողմից՝ նա վախենում էր խոսել այն կտրուկ մերժումի և անհամաձայնության եղանակով, ինչպես որ հաստատապես որոշել էր պատասխանել աներոջը։ Բացի այդ՝ նա հիշեց մասոնական կանոնադրության խոսքերը, թե «եղիր բարեհամբույր ու սիրալիր»։ Նա դեմքը կնճռեց, կարմրեց, ելավ տեղից, նորից նստեց, ուժ գործ դնելով իր վրա՝ կյանքում իր համար այդ ամենադժվարին գործում,— անհաճո բան չասել մարդու երեսի, չասել այն, ինչ սպասում էր այդ մարդը, ով էլ նա լիներ։ Պիեռն այնպես էր սովորել հնազանդել իշխան Վասիլիի անփույթ ինքնահավանության այդ շեշտին, որ այժմ էլ զգում էր, թե անկարող կլինի հակառակել նրան. բայց զգում էր, որ այն բանից, թե ինչ կասի ինքն այժմ, կախված կլինի իր հետագա ողջ բախտը. կերթա՞ արդյոք ինքն այն հին, նախկին ճամփով, թե՞ այն նորով, որն այնպես գրավիչ ներկայացրին մասոնները և ուր, ինչպես նա իրոպես հավատում էր, վերածնություն կգտնի նոր կյանքի համար։

— Դե, սիրելիս,— հանաքով ասավ իշխան Վասիլին,— ասա ինձ «այո», և ես, իմ կողմից կգրեմ, և մենք պարարտ որս կունենանք։

Բայց իշխան Վասիլին դեռ հանաքը չէր ասել վերջացրել, երբ Պիեռը կատաղի դեմքով, որով հիշեցնում էր իր հորը, առանց խոսակցի աչքերին նայելու, շշնջաց.

— Իշխան, ես ձեզ չե՛մ հրավիրել ինձ մոտ, հեռացեք, խընդրեմ, գնացե՛ք։— Նա տեղից ցատկեց ու դուռը բաց արավ։— Դե՛, գնացե՛ք,— կրկնեց նա, չհավատալով և ուրախանալով, որ իշխան Վասիլիի դեմքին երևաց շփոթմունքի և վախի արտահայտություն։

— Ի՞նչ պատահեց քեզ։ Դու հիվա՞նդ ես։

— Հեռացե՛ք,— մի անգամ ևս հնչեց Պիեռի դողացող ձայնը։ Եվ իշխան Վասիլին ստիպված էր մեկնել առանց որևէ բացատրություն լսելու։

Մի շաբաթ անց, Պիեռը հրաժեշտ տալով իր նոր բարեկամ-

մասոններին և, ողորմության համար նրանց մեծ դումար տալով, մեկնեց իր կալվածքները։ Իր նոր եղբայրները նամակներ տվին նրան տանելու Կիև և Օդեսա՝ այնտեղի մասոնների համար, և խոստացան նամակներ գրել ու ղեկավարել Պիեռին իր նոր գործունեության մեջ։

VI

Պիեռի և Դոլոխովի մենամարտի գործը քողարկվեց — մոռացության տրվեց, և չնայած այն խստությանը, որ ցույց էր տալիս թագավորը մենամարտի վերաբերմամբ, այնուամենայնիվ ոչ հակառակորդները տուժեցին, ոչ էլ նրանց մարտավկաները։ Սակայն մենամարտի պատմությունը, Պիեռի՝ կընոջից բաժանվելու փաստով հաստատվեց, տարածվեց հասարակության մեջ։ Պիեռը, որին սկզբում իբրև ապօրինի զավակի նայում էին հովանավորի աչքով ու վերաբերվում ներողամտաբար, որին փայփայում ու փառաբանում էին, երբ նա ռուսական կայսրության լավագույն փեսացուն էր՝ բայց ամուսնությունից հետո, երբ հարսնացուներն ու մայրերն այլևս ոչինչ սպասելիք չունեին նրանից, նա հասարակության աչքում ընկավ, մանավանդ որ նա չէր կարողանում և չէր ցանկանում հասարակության բարյացակամությունը շահել։ Այժմ կատարված դեպքի համար միայն նրան էին մեղադրում. ասում էին, որ նա անմիտ խանդող է, ենթակա նույնպիսի արյունռուշտ կատաղության, ինչպիսին հայրն էր։ Եվ երբ, Պիեռի մեկնումից հետո, Էլենը վերադարձավ Պետերբուրգ, Էլենի բոլոր ծանոթները նրան ընդունեցին ոչ միայն սրտաբաց, այլև մի տեսակ հարգանքով, նկատի ունենալով նրա դժբախտությունը։ Երբ ամուսնու մասին խոսք էր լինում, Էլենն ընդունում էր պարտ ու պատշաճ արտահայտություն, որը նա, առանց դրա նշանակությունը հասկանալու, յուրացրել էր իրեն հատուկ տակտով։ Այդ արտահայտությունն ասում էր, որ նա որոշել է իր դժբախտությունը կրել անտրտունջ, և որ իր ամուսինը մի խաչ է՝ աստծուց իրեն ուղարկված։ Իշխանն իր կարծիքը հայտնում էր պարզորեն։ Երբ Պիեռի մասին խոսք էր լինում, նա ուսերը վեր քաշելով և ճակատը մատնացույց անելով, ասում էր.

— Un cerveau fêlé — je le disais toujours[1].

— Ես այդ առաջ եմ ասել, — ասում էր Աննա Պավլովնան Պիեռի մասին, — ես հենց այն ժամանակ իսկույն ասի, և ամենից առաջ (նա միշտ պնդում էր իր առաջնության վրա), որ դա խելացնոր երիտասարդ է, դարի անբարոյական գաղափարներով փչացած։ Ես այդ բանը ասի դեռ այն ժամանակ, երբ բոլորը հիանում էին նրանով, երբ նա արտասահմանից հենց նոր էր եկել, և հիշո՞ւմ եք, ինձ մոտ՝ մի երեկույթի, իրեն ձևացնում էր մի ինչ-որ Մարատ։ Բայց հետո ինչո՞վ վերջացավ։ Ես դեռ այն ժամանակ այդ ամուսնությունը չէի ցանկանում, և նախագուշակեցի այն բոլորը, ինչ պատահելու էր։

Առաջվա պես Աննա Պավլովնան ազատ օրերին իր տանը երեկույթներ էր սարքում, այնպիսի երեկույթներ, ինչպես միայն ինքը շնորհք ուներ սարքելու, երեկույթներ, ուր հավաքվում էր, նախ la crême de la véritable bonne société, la fine fleur de l'essence intellectuelle de la société de Pétersbourg[2], այսպես էր ասում ինքն՝ Աննա Պավլովնան։ Բացի այս նրբորեն ընտրած հասարակությունից Աննա Պավլովնայի երեկոներն աչքի էին ընկնում նաև նրանով, որ նա ամեն անգամ հասարակությանը ներկայացնում էր մի որևէ նոր, հետաքրքրական անձնավորություն, և բացի այդ երեկույթներից ոչ մի տեղ այնպես որոշ ու հաստատ չէր արտահայտվում քաղաքական ջերմաչափի աստիճանը, ջերմաչափ, որից և կախված էր Պետերբուրգի պալատական-օրինապահ հասարակության տրամադրությունը։

1806 թվի վերջին, երբ արդեն ստացվել էին բոլոր տխուր մանրամասնությունները պրուսական զորքը Իենի և Աուերշտեդտի մոտ՝ Նապոլեոնի ձեռքով ոչնչացնելու և պրուսական բերդերի մեծ մասի անձնատուր լինելու մասին, երբ մեր զորքերն արդեն Պրուսիա էին մտել և սկսվել էր մեր երկրորդ պատերազմը Նապոլեոնի դեմ, Աննա Պավլովնան իր տանը երեկույթ էր սարքել, ուր la crême de la véritable bonne société-ը[3] կազմում էին հմայիչ ու դժբախտ, ամուս-

[1] Կիսախելագար է, ես այդ միշտ ասել եմ։

[2] Իսկական լավ հասարակության սերուցքը, Պետերբուրգի հասարակության մտավոր էսենցիայի նուրբ ծաղիկը։

[3] Իսկական լավ հասարակության սերուցքը։

նուց թողնված էլենը, Mortemart-ը, գրավիչ իշխան Իպպոլիտը, որ հենց նոր էր եկել Վեննայից, երկու դիվանագետ, մորաքույրը, մի երիտասարդ, որ այդտեղ վայելում էր d'un homme de beaucoup de mérite[1] կոչումը, պալատական օրիորդի կոչում ստացած մի աղջիկ՝ իր մոր հետ, և մի քանի ուրիշ նվազ նշանավոր անձեր։

Մեկը, որին Աննա Պավլովնան այդ երեկո՝ իբրև նորություն, հրամցնում էր հյուրերին,— Բորիս Դրուբեցկոյն էր, որ հենց նոր՝ իբրև սուրհանդակ, եկել էր պրուսական բանակից և ադյուտանտի պաշտոն ուներ մի շատ նշանավոր անձի մոտ։

Քաղաքական ջերմաչափի աստիճանը, որ այդ երեկո ցույց էր տրվում հասարակության, հետևյալն էր.— որքան էլ բոլոր եվրոպական թագավորներն ու զորավարներն աշխատեն նեղողամիտ լինել դեպի Բոնապարտը, որպեսզի ինձ և ընդհանրապես մեզ պատճառեն այդ անախորժությունն ու դառնությունը, այնուամենայնիվ, մեր կարծիքը Բոնապարտի մասին չի կարող փոխվել։ Մենք չենք դադարի արտահայտել այդ մասին ունեցած մեր շիտակ կարծիքը և պրուսական թագավորին ու մյուսներին կարող ենք ասել միայն.— ավելի վատ ձեզ համար։ Tu l'as voulu, George Dandin[2], ահա բոլորը, ինչ մենք կարող ենք ասել։ Ահա թե ինչ էր ցույց տալիս քաղաքական ջերմաչափը Աննա Պավլովնայի երեկույթին։ Երբ Բորիսը, որ պետք է հրամցվեր հյուրերին, հյուրասրահ մտավ, ամբողջ հասարակությունը համարյա թե հավաքված էր, և խոսակցությունը, որ ղեկավարում էր Աննա Պավլովնան, վերաբերում էր մեր և Ավստրիայի դիվանագիտական հարաբերություններին և նրան դաշնակցելու հույսերին։

Բորիսը, ադյուտանտի շքեղ զգեստով, այրացած, թարմ ու կարմիր, ազատ-համարձակ մտավ հյուրասրահ և, ըստ սովորության առաջնորդվեց նախ մորաքրոջը ողջունելու, և ապա միացավ ընդհանուր խմբին։

Աննա Պավլովնան նրան թույլ տվեց իր չոր ձեռը համբուրել, ծանոթացրեց նրան մի քանի անծանոթ անձանց հետ և նրանց յուրաքանչյուրի մասին շշուկով ծանոթություն տվեց Բորիսին։

[1] Միանգամայն արժանավոր մարդ։

[2] Դու այդ էիր ցանկանում, Ժորժ Դանդեն։*

— Le prince Hyppolite Kouraguine — charmant jeune homme. M-r Krouq chargé d'affaires de Kopenhague — un esprit profond, պարզապես M-r Shittoff — un homme de beaucoup de mérite[1], որը կրում է այս կոչումը։

Իր ծառայության ընթացքում Բորիսը, շնորհիվ Աննա Պավլովնայի հոգածության, շնորհիվ իր ճաշակի և զուսպ բնավորության, կարողացել էր արդեն շահավետ դիրք ձեռք բերել ծառայության մեջ. նա ադյուտանտն էր մի շատ նշանավոր անձի, ունեցել էր մի շատ կարևոր հանձնարարություն Պրուսիայում, որտեղից հենց նոր միայն վերադարձել էր իբրև սուրհանդակ։ Նա միանգամայն յուրացրել էր Օլմյուցում իրեն շատ դուր եկած ենթակայության այն յուրահատուկ ձևը, որով վառակիրը կարող է անհամեմատ բարձր կանգնել գեներալից, և որի համաձայն ծառայության մեջ հաջողություն ունենալու համար հարկավոր չեն ո՛չ ջանք, ո՛չ աշխատանք, ո՛չ քաջություն, ո՛չ տոկունություն, այլ հարկավոր է միայն վարվել իմանալ այն մարդկանց հետ, որոնք վարձատրում են ծառայությունը, ուստի և Բորիսը հաճախ զարմանում էր իր արագ հաջողությունների և այն բանի վրա, թե ինչպես ուրիշներն այդ չէին կարողանում հասկանալ։ Այդ գյուտի հետևանքով նրա ամբողջ տարեակերպը, նրա բոլոր հարաբերությունները նախկին ծանոթների հետ, նրա բոլոր ծրագրերը ապագայի վերաբերմամբ — բոլորովին փոխվեցին։ Նա հարուստ չէր, բայց իր վերջին փողը ծախսում էր, որ ուրիշներից ավելի լավ հագնված լինի. նա իրեն ավելի շուտ կզրկեր շատ բավականություններից, քան թե թույլ կտար վատ կառք նստել կամ Պետերբուրգի փողոցներում հին մունդիրով երևալ։ Նա մոտենում և ծանոթություն էր հաստատում միայն այն մարդկանց հետ, որոնք իրենից բարձր էին, ուստի և կարող էին օգտակար լինել։ Նա սիրում էր Պետերբուրգը և արհամարհում՝ Մոսկվան։ Ռոստովների տան և դեպի Նատաշան ունեցած մանկական սիրո հիշողությունը անհաճո էր նրան և նա հենց բանակ մեկնելու օրից, ոչ մի անգամ Ռոստովների մոտ չէր եղել։ Աննա Պավ-

[1] Իշխան Իպպոլիտ Կուրագին՝ հրապուրիչ երիտասարդ։ Պ. Կրուզ՝ Կոպենհագենի գործերի հավատարմատար. խորաթափանց միտք։ Պ. Շիտ՝ ըստ ամենայնի արժանավոր մարդ։

լովնայի հյուրասրահում, ուր ներկա գտնվելը կարևոր ջարձրացում էր համարում ծառայության մեջ, նա իսկույն ևեթ հասկացավ իր դերը և թույլ տվեց, որ Աննա Պավլովնան օգտագործի այն հետաքրքրությունը, որ հարուցանում էր իր անձը, իսկ ինքն ուշադիր դիտում էր ամեն մեկին, գնահատելով նրանցից յուրաքանչյուրին մոտենալու օգուտն ու հնարավորությունը։ Նա նստեց իրեն ցույց տված տեղը, գեղեցիկ էլենի կողքին և ուշադիր լսում էր ընդհանուր խոսակցությունը։

— Vienne trouve les bases du traité proposé tellement hors d'atteinte, qu'on ne saurait y parvenir même par une continuité de succès les plus brillants, et elle met en doute les moyens, qui pourraient nous les procurer. C'est la phrase authentique du cabinet de Vienne, — *ասում էր դանիական* chargé d'affaires[1].

— C'est le doute qui est flatteur![2], — *ասավ խորաթափանց միտքը՝ նուրբ ժպիտով։*

— Il faut distinguer entre le cabinet de Vienne et l'Empereur d'Autriche, — *ասավ* Mortemart-*ը*. — L'Empereur d'Autriche n'a jamais pu penser à une chose pareille, le cabinet qui le dit[3].

— Eh, mon cher vicomte, — *միջամտեց Աննա Պավլովնան,* — l'Urope *(չգիտես ինչու նա արտասանում էր* l'Urope, *որպես ֆրանսական լեզվի մի առանձին նրբություն, որ նա թույլ էր տալիս իրեն՝ միայն ֆրանսացիների հետ խոսելիս),* l'Urope ne sera jamais notre allieé sincère[4].

Սրանից հետո Աննա Պավլովնան խոսք բացեց պրուսական թագավորի արիության ու հաստատակամության մասին նրա՝ համար, որպեսզի մեջ քաշի Բորիսին։

Բորիսն ուշադիր լսում էր խոսողին, սպասելով իր հերթին, ու միաժամանակ կարողացավ մի քանի անգամ նայել հարսանուհուն՝ գեղեցկուհի էլենին, որը մի քանի անգամ ժպտերես նայեց գեղեցիկ երիտասարդ ադյուտանտին։ Միանգամայն բնականորեն՝ Պրուսիայի դրության մասին խոսելով, Աննա Պավլովնան Բորիսին խնդրեց պատմել իր ճամփորդությունը դեպի Գլոգաու և այն դրությունը, որի մեջ գտել է պրուսական զորքին։ Բորիսն, առանց շտապելու, մաքուր ու կանոնավոր ֆրանսերենով, շատ ու շատ ուշագրավ մանրամասնություններ պատմեց պրուսական զորքերի մասին, արքունիքի մասին, աշխատելով խուսափել իր սեփական կարծիքը հայտնել այն փաստերի վերաբերմամբ, որ պատմում էր։ Կարճ ժամանակ Բորիսը գրավել էր ընդհանուրի ուշադրությունը, և Աննա Պավլովնան զգում էր, որ իր հյուրասիրությունն այդ նորեկով հաճույքամբ է ընդունվում բոլոր հյուրերի կողմից։ Բորիսի պատմությանն ավելի մեծ ուշադրություն էր ցույց տալիս էլենը։ Նա մի քանի անգամ Բորիսին հարցեր տվեց նրա ճամփորդության որոշ մանրամասնությունների մասին, և թվում էր՝ շատ է զահագրգռված պրուսական զորքերի վիճակով։ Հենց որ Բորիսը վերջացրեց, էլենն իր սովորական ժպիտով դիմեց նրան.

— Il faut absolument que vous veniez me voir[1], — *ասավ նա Բորիսին մի այնպիսի շեշտով, կարծես թե որոշ նկատառումներով, որ Բորիսը չէր կարող իմանալ, այդ միանգամայն անհրաժեշտ էր։*

— Mardi entre les 8 et 9 heures. Vous me ferez grand plaisir[2].

Բորիսը խոստացավ նրա ցանկությունը կատարել և ուզում էր նրա հետ խոսակցություն սկսել, երբ Աննա Պավլովնան, մորաքրոջ պատրվակով, Բորիսին կանչեց, թե մորաքույրը կամենում է նրան լսել։

---

[1] *Վիեննան՝ առաջարկված դաշնագրի հիմունքները համարում է այնքան անհնարին, որ դրանց իրականացումն անկարելի է նույնիսկ մի շարք ամենափայլուն հաջողություններով, և նա կասկածում է, որ եղած միջոցները կարողանան ստեղծել այդ հաջողությունները։ Սա՝ Վիեննայի կաբինետի իսկական արտահայտությունն է, ասավ դանիական գործերի հավատարմատարը։*

[2] *Կասկածը հաճելի է։*

[3] *Անհրաժեշտ է վիեննական կաբինետը տարբերել ավստրիական թագավորից։ Ավստրիական թագավորը երբեք չէր կարող մտածել այդ. այդ ասում է միայն կաբինետը։*

[4] *Ա՜խ, իմ սիրելի վիկոնտ, եվրոպան երբեք մեր անկեղծ դաշնակիցը չի եղել։*

---

[1] *Բացարձակապես անհրաժեշտ է, որ դուք ինձ տեսության գաք։*

[2] *Երեքշաբթի, ժամը 8-ի և 9-ի արանքում։ Մեծ բավականություն կըպատճառեք ինձ։*

— Դուք ճանաչում եք դրա ամուսնուն, չէ՞. — ասավ Աննա Պավլովնան՝ աչքերը փակելով և տխուր շարժումով էլենին ցույց տալով։ — Ա՜խ, դա մի այնպիսի՜ դժբախտ ու հիանալի կին է։ Խնդրում եմ, նրա մոտ ամուսնու մասին չըխոսեք։ Դա նրա համար անչափ ծանր է։

VII

Երբ Բորիսն ու Աննա Պավլովնան միացան ընդհանուր խըմբին, այդտեղ խոսում էր իշխան Իպպոլիտը։

Նա՝ բազկաթոռի վրա առաջ ձգված, ասավ. le Roi de Prusse[1], ու այդ ասելով, ծիծաղեց։ Բոլորը դարձան դեպի նա։

— Le Roi de Prusse? — հարցրեց Իպպոլիտը, կրկին ծիծաղեց և կրկին լուրջ ու հանգիստ ձևով խորը նստեց բազկաթոռի մեջ։ Աննա Պավլովնան փոքր-ինչ սպասեց նրան, բայց որովհետև Իպպոլիտը թվում էր թե բոլորովին չէր ուզում խոսել, ինքն Աննա Պավլովնան խոսք բաց արավ այն մասին, թե ինչպես անաստված Բոնապարտը Պոտսդամում գողացել է Ֆրիդրիխ Մեծի թուրը։

— C'est l'épée de Frédéric le Grand, que je[2]... — ուզում էր սկսել նա, բայց Իպպոլիտն ընդհատեց։

— Le Roi de Prusse... — ու կրկին, երբ դարձան դեպի նա, Իպպոլիտը ներողություն խնդրեց ու լռեց։

Աննա Պավլովնան դեմքը խոժոռեց։ Mortemart-ը, Իպպոլիտի ընկերը, կտրուկ դարձավ դեպի նա։

— Voyons, à qui en avez-vous avec votre Roi de Prusse[3].

Իպպոլիտը ծիծաղեց, և նա կարծես ամաչում էր իր ծիծաղից։

— Non, ce n'est rien, je voulais dire seulement[4]... «Նա մտադիր էր կրկնել այն կատակը, որ լսել էր Վեննայում, և որն ասելու համար պատրաստվում էր ամբողջ երեկո). Je

[1] Պրուսիայի թագավորը։

[2] Այդ Ֆրիդրիխ Մեծի թուրն է, որը եաա...

[3] Դե ուրեմն ի՞նչ Պրուսիայի թագավորի մասին։

[4] Չէ, ոչինչ, ես ուզում էի միայն ասել...

voulais dire seulement, que nous avons tort de faire la guerre pour le Roi de Prusse[1]։

Բորիսն զգույշ ժպտաց, այնպես, որ նրա ժպիտը կարող էր համարվել և՛ հեգնանք և՛ հեգնանքի հավանություն, նայած ինչպես կընդունվեր։ Բոլորը ծիծաղեցին։

— Il est très mauvais, votre jeu de mot, très spirituel, mais injuste, — կնճռոտ մատով սպառնալով ասավ Աննա Պավլովնան։ — Nous ne faisons pas le guerre pour le Roi de Prusse, mais pour les bons principes. Ah, le méchant, ce prince Hippolyte![2] — ասավ նա։

Խոսակցությունը, որ կենտրոնացած էր առավելապես քաղաքական նորություններ շուրջը, չդադարեց ամբողջ երեկո։ Երեկույթի վերջում զրույցն առանձնապես աշխուժացավ, երբ խոսք բացվեց թագավորի շնորհած պարգևների մասին։

— Չէ որ անցյալ տարի NN ստացավ ծխախոտի տուփ՝ թագավորի պատկերով, — ասում էր l'homme à l'esprit profond[3], — իսկ ինչո՞ւ SS չի կարող նույն պարգևն ստանալ։

— Je vous demande pardon, une tabatière avec le portrait de l'Empereur es tune récompense, mais point une distinction, — ասավ դիվանագետը, un cadeau plutôt[4].

— Il y eu plutôt des antécédents, je vous citerai Schwarzenberg[5].

— C'est impossible[6], — առարկեց մյուսը։

— Գրազ գանք։ Le grand cordon, c'est différent[7]...

Երբ բոլորը վեր կացան գնալու, էլենը, որ այդ ամբողջ երեկոն շատ քիչ էր խոսում, կրկին դիմեց Բորիսին, խնդրելով

[1] Ես ուզում էի միայն ասել, որ մենք իզուր ենք կռվում Պրուսիայի թագավորի համար (բառախաղ, որ նշանակում է. կռվում ենք մեզ չվերաբերող գործի համար)։

[2] Ձեր բառախաղը լավ չէ, շատ սրամիտ է, բայց անարդարացի, մենք չենք կռվում Պրուսիայի թագավորի համար, այլ լավ սկզբունքների համար։ Ահ, ինչ չարն է այդ իշխան Իպպոլիտը։

[3] Խորաթափանց մտքի տերը։

[4] Ներեցեք, թագավորի պատկերով ծխախոտի տուփը — պարգև է և ոչ պատվանշան, ավելի շատ ընծա։

[5] Եղել են օրինակներ — Շվարցենբերգը։

[6] Այդ անկարելի է։

[7] Մեծ ժապավենը, դա ուրիշ։

և մեղմ ու խորհրդավոր ձևով հրամայելով, որ նա երեքշաբթի օրը լինի իր մոտ։

— Դա շատ կարևոր է,— ասավ նա ժպտալով, Աննա Պավլովնային նայելով. իսկ Աննա Պավլովնան նույն տխուր ժպիտով, որ նրա դեմքից չէր հեռանում, երբ խոսում էր իր բարձր հովանավորուհու մասին, հաստատեց էլենի ցանկությունը։

Թվում էր, թե էլենն այդ երեկո Բորիսի՝ պրուսական պատերազմի մասին պատմածներից եզրակացրել է, որ Բորիսին անհրաժեշտ է տեսնել։ Նա կարծես Բորիսին խոստանում էր, որ նա եթե երեքշաբթի օրը գա, ինքը նրան կբացատրի այդ անհրաժեշտությունը։

Երեքշաբթի երեկոյան էլենի հոյակապ սալոնը գալով՝ Բորիսը պարզ բացատրություն չստացավ, թե իր գալն ինչո՛ւ էր անհրաժեշտ։ Ուրիշ հյուրեր լային։ Կոմսուհին նրա հետ քիչ խոսեց, և միայն հրաժեշտ տալիս, երբ Բորիսը համբուրում էր նրա ձեռը, էլենն այս անգամ տարօրինակ կերպով անժպիտ, անսպասելի շշուկով ասավ նրան.— Venez demain diner... le soir. Il faut, que vous veniez... Venez[1].

Այս անգամ Պետերբուրգ գալով, Բորիսը դարձավ կոմսուհի Բեզուխովայի տան մոտիկ մարդը։

VIII

Պատերազմը սաստկանում էր, և ռազմաբեմը հետզհետե մոտենում էր ռուսական սահմաններին։ Ամեն կողմից անեծքներ էին լսվում մարդկային ցեղի թշնամի՝ Բոնապարտի հասցեին. գյուղերում հավաքում էին պահեստի զինվորներին ու նորակոչներին, ռազմաճակատից ստացվում էին բազմապիսի ու բազմազան տեղեկություններ, ինչպես միշտ՝ սուտ, ուրեմն և տարբեր կերպ մեկնաբանվող։

Մեր իշխան Բալկոնսկու, իշխան Անդրեյի և իշխանադուստր Մարիայի կյանքը 1805 թվից հետո շատ բանով փոխվեց։

1806 թվին ծեր իշխանը նշանակվեց երկրապահ զորքի ութը գլխավոր հրամանատարներից մեկի պաշտոնում։ Նա,

[1] Վաղը եկեք ճաշելու... երեկոյան։ Ձեր գալը կարևոր է... եկեք։

չնայած իր զառամյալ հասակին ու թուլության, որ ավելի նկատելի դարձավ այն ժամանակ, երբ նա որդուն սպասված էր համարում,— իրավունք չհամարեց հրաժարվել այդ պաշտոնից, որն ընդունել էր նա հենց թագավորի նշանակումով, և այս նոր գործունեությունը ոգևորեց ու ամրապնդեց նրան։ Իրեն վստահած երեք նահանգում՝ նա շարունակ շրջագայում էր ու ճամփորդում. բծախնդրության չափ ճշտապահ էր իր պարտականությունների կատարման մեջ, դաժանության չափ խիստ էր իր ստորադրյալների վերաբերմամբ և անձամբ հետևվում էր գործի բոլոր մանրամասնություններին։ Իշխանադուստր Մարիան այլևս մաթեմատիկայի դասեր չէր վերցնում հորից, և առավոտները միայն՝ ծծմոր ուղեկցությամբ, փոքրիկ իշխան Նիկոլայի հետ (ինչպես անվանում էր նրան պապը), մտնում էր հոր առանձնասենյակը, երբ նա տանն էր լինում։ Ծծկեր իշխան Նիկոլայը՝ ծծմոր և դայակ Սավիշնայի հետ ապրում էր հանգուցյալ իշխանուհու հարկաբաժնում, և իշխանադուստր Մարիան օրվա մեծ մասն անց էր կացնում մանկանոցում, փոխարինելով, որքան կարող էր, փոքրիկի մորը։ M-lle Bourienne-ը նույնպես, ինչպես երևում էր սաստիկ սիրում էր երեխային, և իշխանադուստր Մարիան հաճախ իրեն զրկելով, փոքրիկ հրեշտակին (ինչպես անվանում էր նա երեխային) խնամելու և նրա հետ խաղալու բավականությունը զիջում էր ընկերուհուն։

Լիսիե Գորիի եկեղեցու բակում կար մի մատուռ՝ ջահեր իշխանուհու գերեզմանի վրա. այդ մատուռի մեջ գրված էր Իտալիայից բերված մարմարյա մի արձան, որ պատկերացնում էր մի հրեշտակ, որը թևերը բացած պատրաստվում էր երկինք բարձրանալ։ Հրեշտակի վերին շուրթը փոքր-ինչ բարձրացած էր, նա կարծես պատրաստվում էր ժպտալ. և մի անգամ իշխան Անդրեյն ու իշխանադուստր Մարիան, մատուռից դուրս գալով, ասին միմյանց, թե այդ հրեշտակի կերպարանքը տարօրինակ կերպով հիշեցնում է հանգուցյալի դեմքը։ Բայց ամենից տարօրինակը, և որն իշխան Անդրեյը չասաքրոջը, ա՛յն էր, որ այդ արտահայտության մեջ, որ նկարիչը պատահաբար տվել էր հրեշտակի դեմքին,— իշխան Անդրեյը կարդում էր հեզ հանդիմանանքի նույն խոսքերը, ինչ որ նա

այն ժամանակ կարդաց իր մեռած կնոջ դեմքին. «Ա՜խ ինչո՞ւ դուք այդպես վարվեցիք ինձ հետ»։

Շուտով, իշխան Անդրեյի վերադառնալուց հետո, ծեր իշխանը որդուն բաժանեց և տվեց նրան Բոգուչարովոն՝ մի մեծ կալվածք, որ գտնվում էր Լիսիե Գորիից 40 վերստ հեռու։ Մասամբ ծանր հիշողությունների պատճառով, որ կապված էին Լիսիե Գորիի հետ, մասամբ այն պատճառով, որ իշխան Անդրեյը միշտ էլ չէր կարող հոր բնավորությունը տանել, մասամբ էլ նրա համար, որ իրեն առանձնություն էր հարկավոր, իշխան Անդրեյն օգտվեց այդ հանգամանքից և Բոգուչարովոյում կառուցումներ էր կատարում, ուր և անց էր կացնում ժամանակի մեծ մասը։

Աուստերլիցի կռվից հետո իշխան Անդրեյը հաստատապես որոշել էր այլևս երբեք չմտնել զինվորական ծառայության, և երբ պատերազմն սկսվեց և բոլորը պետք է ծառայեին, նա, որպեսզի իսկական ծառայությանից խուսափի, ստանձնեց զինվորներ հավաքելու պաշտոն՝ հոր իշխանության ներքո։ 1805 թվի պատերազմից հետո ծեր իշխանն ու որդին կարծես փոխել էին իրենց դերերը։ Ծեր իշխանը նոր գործունեությամբ ոգևորված, այդ պատերազմից միայն լավ բան էր սպասում, իսկ իշխան Անդրեյը, ընդհակառակը, պատերազմին չմասնակցելով և հոգու խորքում այդ մասին ցավելով, միայն վատ բան էր տեսնում։

1807 թվի փետրվարի 26-ին ծեր իշխանը մեկնեց իր շրջանը։ Իշխան Անդրեյը, ինչպես մեծ մասամբ հոր բացակայության միջոցին, մնաց Լիսիե Գորիում։ Փոքրիկ Նիկոլայն արդեն 4-րդ օրն էր՝ տկար էր։ Ծեր իշխանին տանող կառապանները, քաղաքից վերադառնալով, գրություններ ու նամակներ բերին իշխան Անդրեյին։

Սենեկապահը, երիտասարդ իշխանին սենյակում չգտնելով, նամակները ձեռին անցավ իշխանադուստր Մարիայի հարկաբաժինը, բայց իշխանն այդտեղ էլ չկար։ Սենեկապահին ասին, որ իշխանը գնաց մանկանոց։

— Համեցեք, ձերդ պայծառափայլություն, Պետրուշկան եկավ գրություններ բերեց,— ասավ դայակի ոգնական աղջիկներից մեկը, դիմելով իշխան Անդրեյին, որ մանկական փոքրիկ

աթոռի վրա նստած, դողացող ձեռներով, դեմքը խոժոռելով դեղ էր կաթեցնում կիտով չափ ջրով լի բաժակի մեջ։

— Ի՞նչ է,— ասավ նա բարկացած և ձեռն անդադար շարժելով, բաժակի մեջ կաթեցրեց դեղի ավելորդ կաթիլներ։ Նա բաժակի դեղը թափեց հատակին և նորից ջուր ուզեց։ Աղջիկը բերեց։

Սենյակում դրված էր երեխայի մահճակալը, երկու սեղան, երկու բազմոց, սեղան և մանկական մի փոքրիկ սեղան ու աթոռակ, որի վրա նստել էր իշխան Անդրեյը։ Լուսամուտների վարագույրներն իջեցված էին, իսկ սեղանի վրա վառվում էր մի մոմ, որ դրված էր կազմած նոտագրքի վրա այնպես, որ լույսը չընկներ մահճակալին։

— Բարեկամ,— դիմեց եղբորն իշխանադուստր Մարիան փոքրիկ մահճակալի մոտից, ուր կանգնած էր.— ավելի լավ է սպասել... հետո՛...

— Ա՛խ, կներե՛ս, դու միշտ հիմարություններ ես ասում. դու առանց այն էլ շատ ես սպասել,— ա՛յս էլ քո սպասելը,— ասավ իշխան Անդրեյը կատաղի շշնջոցով, ըստ երևույթին ցանկանալով քրոջը խայթել։

— Բարեկամ, ավելի լավ է մի զարթեցնի, քնած է,— ասավ իշխանադուստրն աղերսաձայն։

Իշխան Անդրեյը ելավ և ոտների ծայրերի վրա, բաժակը ձեռին մոտեցավ երեխայի մահճակալին։

— Իսկապես չզարթեցնե՞մ,— ասավ նա անվճռական։

— Ինչպես կուզես՝ քո բանն է... ես կարծում եմ... է, ինչպես կուզես,— ասավ իշխանադուստր Մարիան, ըստ երևույթին ամաչելով ու քաշվելով, որ իր կարծիքը հաղթանակեց։ Նա եղբոր ուշադրությունը հրավիրեց սպասուհու վրա, որ շշուկով կանչում էր նրան։

Երկրորդ գիշերն էր, որ նրանք երկուսն էլ չէին քնել և շարունակ խնամում էին տաքության մեջ տապակվող երեխային։ Այս բոլոր օրերը՝ նրանք, չվստահելով իրենց տանու բժշկին և սպասելով մի ուրիշ բժշկի, որի ետևից մարդ էին ուղարկել քաղաք, ձեռք էին առնում մեկ այս, մեկ մյուս միջոցը։ Անհանգիստ ու անքնությունից տանջված, նրանք միմյանց վրա էին գցում իրենց վիշտը, հանդիմանում էին իրար ու կռվում։

— Պետրուշկան գրություններ է բերել հայրիկից, — շըշընջաց սպասուհին։ Իշխան Անդրեյը դուրս գնաց։

— Որ սատանան բերեց դրանց, — ասավ նա, և հոր արած բերանացի կարգադրությունները լսելով, վերցրեց նրա ուղարկած նամակն ու ծրարները և կրկին վերադարձավ մանկանոց։

— Հը, ինչպե՞ս է, — հարցրեց նա։

— Դարձյալ նույնն է. սպասիր, ի սեր աստծու։ Կարլ Իվանիչը միշտ ասում է, որ քունն ամեն բանից թանկ է, — հառաչելով շշնջաց իշխանադուստր Մարիան։

Իշխան Անդրեյը մոտեցավ երեխային և շոշափեց նրան։ Երեխան տաքության մեջ վառվում էր։

— Կորե՛ք դուք ձեր Կարլ Իվանիչի հետ, — ասավ իշխան Անդրեյը և դեղի կաթիլներով բաժակը վերցնելով, կրկին մոտեցավ երեխային։

— André, հարկավոր չի, — ասավ իշխանադուստր Մարիան։

Բայց նա չարությամբ և դրա հետ միասին տանջագին խոժոռեց դեմքը քրոջ վրա ու բաժակը ձեռին կռացավ դեպի երեխան։

— Ես այսպես եմ ցանկանում, — ասավ նա, — խնդրում եմ, տո՛ւր նրան խմելու։

Իշխանադուստր Մարիան ուսերը շարժեց, բաժակը վերցրեց հնազանդ և դայակին կանչելով, սկսեց երեխային դեղ տալ։ Երեխան ճչաց և խռխռաց։ Իշխան Անդրեյը դեմքը խոժոռելով՝ գլուխը բռնեց, դուրս եկավ սենյակից և գնաց նստեց հարևան սենյակի բազմոցի վրա։

Նամակները դեռևս ձեռին էին։ Նա մեքենաբար բացեց նամակները և սկսեց կարդալ։ Մեր իշխանը կապույտ թղթի վրա խոշոր երկարուկ ձեռագրով, տեղ-տեղ պատիվներ[1] դնելով՝ գրում էր հետևյալը.

«Այս բոպեիս սուրհանդակի միջոցով ստացա մի շատ ուրախալի տեղեկություն, եթե միայն սուտ չի։ Իբրև թե Բենիգսենը Էլաուի մոտ լիակատար հաղթություն է տարել Բոնապարտի դեմ։ Պետերբուրգում բոլորը ցնծության մեջ են, իսկ զորքին ուղարկվող պարգևներին վերջ չկա։ Թեև գեր-

[1] Հապավանշաններ՝ բառերը կրճատ գրելու նշաններ (Ս. Խ.)

մանացի է, բայց շնորհավորում եմ։ Կորչևայի գավառապետը, ոմն Խանգրիկով, չեմ հասկանում ինչ գործի է. մինչև այժմ օժանդակ ուժեր և ուտեստ չեն հասցրել։ Այժմ իսկ վազիր այնտեղ և ասա, որ ես նրա գլուխը կթոցնեմ, եթե մի շաբաթվա մեջ ամեն բան պատրաստ չլինի։ Պրնյսիշ-Էյլաուի ճակատամարտի մասին ստացա նաև Պետենկայի նամակը. նա մասնակցել է, — բոլորը ճիշտ է։ Երբ չեն խանդարում, ովքեր չպետք է խանգարեն, գերմանացին էլ է թակում Բոնապարտին։ Ասում են, շատ անկարգ է նահանջում-փախչում։ Ուրեմն տե՛ս, իսկույն վազիր Կորչևա և ասածս կատարիր»։

Իշխան Անդրեյը հառաչեց և բացեց մյուս ծրարը։ Դա երկու թերթի վրա մանր տառերով գրած նամակ էր՝ Բիլիբինից։ Անդրեյն առանց կարդալու, ծալեց այն և կրկին կարդաց հոր նամակը, որ վերջանում էր այս խոսքերով. «Վազիր՝ Կորչևա և ասածս կատարի՛ր»։

«Ոչ, ներողություն կանես, ես այժմ չեմ կարող գնալ, մինչև երեխան չառողջանա», մտածեց նա և դռանը մոտենալով, նայեց մանկանոցի ներսը։

Իշխանադուստր Մարիան դարձյալ կանգնած էր մահճակալի մոտ և կամաց օրորում էր երեխային։

«Հա, սպասիր, էլ ի՞նչ անհաճո բան էր գրում նա», հիշեց իշխան Անդրեյը հոր նամակի բովանդակությունը։ «Հա։ Մերոնք հաղթություն են տարել Բոնապարտի դեմ հենց այն ժամանակ, երբ ես չեմ ծառայում։ Այո, այո, ամեն ինչ ծիծաղում է ինձ վրա... Դե, ինչ արած, բարի՛ վայելում»..., և նա սկսեց կարդալ Բիլիբինի ֆրանսերեն նամակը։ Կարդում էր, կեսը չհասկանալով, կարդում էր միայն նրա համար, որ գոնե մի բոպե դադարի մտածել այն մասին, ինչի մասին շատ երկար ժամանակ մտածում էր նա այնպես անսովոր ու տանջալից։

IX

Բիլիբինն այժմ իբրև դիվանագիտական պաշտոնյա զբաղվում էր զորքի գլխավոր կայանում և թեև ֆրանսերեն, ֆրանսական հանաքներով ու ոճերով, բայց միայն ռուսներին հատուկ ձևով, առանց վախենալու ինքնագատապարտումից ու

ինքնածաղրից՝ նկարագրում էր ամբողջ կոիվը։ Բիլիբինը գրում էր, թե իր դիվանագիտական discrétion-*ը*[1] *տանջել է իրեն և թե ինքը երջանիկ է, որ հանձին իշխան Անդրեյի ունի հավատարիմ մի թղթակից, որի առաջ կարող է գեղել իր սրտում կուտակված ամբողջ մաղձը այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է զորքի մեջ։ Այդ նամակը հին էր, գրված դեռևս Պրեյսիշ-Էյլաուի ճակատամարտից առաջ։*

«Depuis nos grands succès d'Austerlitz vous savez, mon cher Prince» — *գրում էր Բիլիբինը,* «que je ne quitte plus les quartiers généraux. Décidément j'ai pris le goût de la guerre, et bien m'en a pris. Ce que j'ai vu ces trois, mois, est incroyable.

Je commence a b o v o. L'ennemi du genre humain, comme vous savez, s'attaque aux Prussiens. Les Prussiens sont nos fidèles alliés, qui ne nous ont trompés que trois fois depuis trois ans. Nous prenons fait et cause pour eux. Mais il se trouve que l'ennemi du genre humain ne fait nulle attention à nos beaux discours, et avec sa manière impolie et sauvage se jette sur les Prussiens sans leur donner le temps de finir la parade commencée, en deux tours de main les rosse à plate couture et va s'installer au palais de Potsdam.

«J'ai le plus vif désir, — écrit le Roi de Prusse à Bonaparte, que V. M. soit accueillie et traitée dans mon palais d'une manière qui lui soit agréable et c'est avec empressement, que j'ai pris à cet effet toutes les mesures, que les circonstances me permettaient. Puissé-je avoir réussi!» Les généraux Prussiens se piquent de politesse envers les Français et mettent bas les armes aux premières sommations.

Le chef de la garnison de Glogau avec dix mille hommes, demmande au Roi de Prusse, ce qu'il doit faire s'il est sommé de se rendre?... Tout cela est positif.

Bref, espérant en imposer seulement par notre attitude militaire, il se trouve que nous voilà en guerre pour tout de bon, et ce qui plus est, en guerre sur nos frontières a v e c

[1] *Զգուշավորությունը։*

et p o u r l e R o i de P r u s s e. Tout est au grand complet, il ne nous manque qu'une petite chose, c'est le général en chef. Comme il s'est trouvé que les succès d'Austerlitz auraient pu être plus decisifs si le général en chef eut été moins jeune, on fait la revue des octogénaires et entre Prosorofsky et Kamensky, on donne la préférence au dernier. Le général nous arrive en kibik à la manière souvoroff, et est accueilli avec des acclamations de joie et de triomphe.

Le 4 arrive le premier courrier de Pétersbourg. On apporte les malles dans le cabinet du maréchal, qui aime à faire tout par lui-même. On m'appelle pour aider à faire le triage des lettres et prendre celles qui nous sont destinées. Le maréchal nous regarde faire et attend les paquets qui lui sont adressés. Nous cherchons — il n'y en a point. Le maréchal devient impatient, se met lui-même à la besogne et trouve des lettres de l'Empereur pour le comte T., pour le prince V. et autres. Alors le voilà qui se met dans une de ses colères bleues. Il jette feu et flamme contre tout le monde, s'empare des lettres, les décachète et lit celles de l'Empereur adressées à d'autres. *Ա՜, այդպես են ինձ հետ վարվում, ինձ չեն վստահում։ Ա՜. կարգադրված է հսկել ինձ։ Է՛ լավ, կորե՛ք։* Et il écrit le fameux ordre du jour au général Benigsen[1].

[1] *«Աուստերլիցում ունեցած մեր փայլուն հաջողությունների օրից, իմ սիրելի իշխան, դուք գիտեք, որ ես այլևս գլխավոր կայաններից չեմ հեռանում։ Ես միանգամայն ընտելացել եմ պատերազմին, և այդ բանից շատ գոհ եմ. այն, ինչ որ տեսել եմ այս երեք ամսում՝ անհավատալի է։*

«Ես սկսում եմ սկզբից։ Ձեզ հայտնի մարդկային ցեղի թշնամին հարձակվում է պրուսացիների վրա։ Պրուսացիները՝ մեր հավատարիմ դաշնակիցներն են, որ երեք տարվա մեջ միայն երեք անգամ են մեզ խաբել։ Մենք միշտ տուժում ենք նրանց պատճառով։ Բայց բանից պարզվում է, որ մարդկային ցեղի թշնամին ոչ մի ուշադրություն չի դարձնում մեր գեղեցիկ ճառերի վրա և իր գռեհիկ ու վայրենի ձևով նետվում է պրուսացիների վրա,— ժամանակ չ՝ալով նրանց վերջացնելու իրենց զորահանդեսը,— ջարդ ու փշուր է անում նրանց և բնակություն հաստատում Պոտսդամի պալատում։

«Ես շատ ցանկանում եմ,— գրում է պրուսական թագավորը Բոնապար-

«Վիրավորված եմ, չեմ կարողանում ձի նստել, հետևաբար և զորքերը վարել։ Դուք ձեր զորամասը ջարդված բերիք Պուլտուսկ. այստեղ նա բացօթյա է, առանց վառելիքի, առանց կերի, ուրեմն և պետք է օգնել. և որովհետև երեկ իրենք դիմեցին կոմս Բուկսհեվդենին, պետք է մտածել դեպի մեր սահմանները նահանջելու մասին, որը և կատարել այսօր»։

«Իմ բոլոր շրջագայությունների միջոցին» écrit-il à l'Empereur, (գրում է նա կայսեր)—«թամբից վերք եմ ստացել, ո՛րը և բոլորովին խանգարում է ինձ ձիով տեղ գնալ և ղեկավարել այսպիսի մի մեծ բանակ, ուստի և նրա հրամանատարությունը հանձնեցի իմ ավագ գեներալ Բուկսհեվդենին, ուղարկելով նրան բոլոր հերթապահությունը և ամենը, ինչ

տին,— որ ձերդ մեծությունն իմ պալատում ընդունվի իր համար ամենահաճելի կերպով, և ես առանձին հոգատարությամբ այդ առթիվ արել եմ բոլոր հարկավոր կարգադրությունները, որքան թույլ են տվել հանգամանքները։ Անչափ կցանկանայի, որ ես հասնեի նպատակիս։ Պրուսական գեներալները ֆրանսացիների առաջ պարծենկոտությամբ ցուցադրում են իրենց քաղաքավարությունը և անձնատուր են լինում ըստ առաջին պահանջի։ Գլոգաուի կայազորի պետը՝ տասը հազար զինվորով, հարցում է անում պրուսական թագավորին, թե ինչ անի ինքը, եթե ստիպված լինի անձնատուր լինել։ Այս բոլորը միանգամայն դրական է։ Մի խոսքով՝ մենք մտադիր էինք նրանց սարսափ ազդել մեր ռազմական ուժերի դրությամբ, բայց բանը վերջանում է նրանով, որ մենք կռվի ենք բռնվում հենց մեր սահմանագլխին, և, որ գլխավորն է, պրուսական թագավորի համար և նրա հետ միասին։ Մեզ մոտ ամեն ինչ առատ է։ պակասում է միայն մի փոքրիկ բան, այն է՝ գլխավոր հրամանատար։ Որովհետև բանից պարզվեց, որ Աուստերլիցի հաջողությունները կարող էին ավելի վճռական արդյունքներ տալ, եթե հրամանատարն այնքան ջահել չլիներ, ուստի այժմ կազմվում է ութսուն տարեկան գեներալների ցուցակ, և ունենալով երկու թեկնածու՝ Պրոզորովսկուն ու Կամենսկուն,—ընտրում են վերջինիս։ Գեներալը մեզ մոտ գալիս է Սուվորովի պես ծածկույթավոր սայլակով (կիբիտկա) և նրան ընդունում են ուրախ ու հանդիսավոր բացականչություններով։

«4-ին Պետերբուրգից գալիս է առաջին սուրհանդակը։ Ճամպրուկները բերում են ֆելդմարշալի առանձնասենյակը, որ սիրում է ամեն ինչ իր ձեռով անել։ Ինձ կանչում են, որ օգնեմ նամակները ջոկելու և վերցնեմ այն, ինչ մեզ է վերաբերում։ Ֆելդմարշալն այդ զբաղմունքը թողնելով մեզ, սպասում է իրեն հասցեագրված ծրարների։ Մենք որոնում ենք, բայց այդպիսիները չ'են երևում։ Ֆելդմարշալն սկսում է հուզվել, ապա ինքն է անցնում գործի և գտնում է թագավորի նամակները՝ ուղղված կոմս Տ.-ին, իշխան Վ.-ին և ուրիշներին։ Նա սաստիկ բռնկվում է, իրեն կորցնում, վերցնում է ու բանում նամակները և կարդում կայսեր նամակները՝ հասցեագրված ուրիշներին... Ապա գրում է իր նշանավոր հերթական հրամանը գեներալ Բենիգսենին։

վերաբերում է դրան, խորհուրդ տալով նրանց, որ հաց չլինելու դեպքում նահանջեն Պրուսիայի ներքին գավառները, որովհետև մի օրվա հաց է մնացել, իսկ մի քանի գնդեր՝ ոչինչ չունեն, ինչպես հայտնել են այդ մասին դիվիզիայի հրամանատարներ Օստերմանը և Սեդմորեցկին. իսկ գյուղացիների մոտ ոչինչ չկա. ամեն ինչ կերել են։ Ես՝ մինչև առողջանալս՝ մնում եմ Օստրոլենկի հիվանդանոցում։ Ամենախոնարհ կերպով զեկուցում եմ ձեզ, որ եթե զորքը ներկա բանակատեղում մնա ևս տասնհինգ օր, գարնանը ոչ մի առողջ մարդ չի մնա։

«Արձակեցեք ծերունուս՝ գնամ գյուղ, որ առանց այն էլ անփառունակ վիճակում եմ գտնվում, որ չկարողացա կատարել մի մեծ և փառավոր գործ, որի համար կոչված էի։ Այդ մասին սպասելու եմ ձեր ամենաողորմած թույլտվությանը՝ այստեղի հիվանդանոցում, որպեսզի չլինեմ զորքի գրագրի դերում։ Ինձ զորքից հեռացնելը՝ ամենաչնչին խոսակցությունների անգամ տեղիք չի տա, թե կուրացածի մեկը հեռացավ բանակից։ Ինձ նման Ռուսաստանում հազարները կան»։

Le maréchal se fâche contre l'Empereur et nous punit tous; n'est-ce pas que c'est logique!

Voilà le premier acte. Aux suivants l'intérêt et le ridicule montent comme de raison. Après le départ du maréchal il se trouve que nous sommes en vue de l'ennemi et qu'il faut livrer bataille. Boukshevden est général en chef par droit d'ancienneté mais le général Benigsen n'est pas de cet avis; d'autant plus qu'il est lui, avec son corps en vue de l'ennemi, et qu'il veut profiter de l'occasion d'une bataille «aus eigener Hand» comme disent les Allemands. Il la donne. C'est la bataille de Poultousk qui est sensée être une grande victoire, mais qui à mon avis ne l'est pas du tout. Nous autres, pekins, avons, comme vous savez, une très vilaine habitude de décider du gain ou de la perte d'une bataille. Celui qui s'est retiré après la bataille, l'a perdu, voilà ce que nous disons et à ce titre nous avons perdu la bataille de Poultousk. Bref, nous nous retirons après la bataille, mais nous envoyons un courrier à Pétersbourg, qui porte les nouvelles d'une victoire, et le général

ne cède pas le commandement en chef à Boukschevden, espérant recevoir de Pétersbourg en reconnaisance de sa victoire le titre de général en chef. Pendant cet interrègne, nous commençons un plan de manoeuvres excessivement intéressant et original. Notre but ne consiste pas, comme il devrait l'être, à éviter ou à attaquer l'ennemi, mais uniquement à éviter le général Boukschevden, qui par droit d'ancienneté serait notre chef. Nous poursuivons ce but avec tant d'énergie, que même en passant une rivière, qui n'est pas guéable, nous brûlons les ponts pour nous séparer de notre ennemi, qui pour le moment n'est pas Bonaparte, mais Boukschevden. Le général Boukschevden a manqué d'être attaqué et pris par les forces ennemies supérieures à cause d'une de nos belles manoeuvres qui nous sauvait de lui. Boukschevden nous poursuit-nous filons. A peine-passe-t-il de notre côté de la rivière, que nous repassons de l'autre. A la fin notre ennemi Boukschevden nous attappe et s'attaque à nous. Les deux généraux se fâchent. Il y a même une provocation en duel de la part de Boukschevden et une attaque d'épilepsie de la part de Benigsen. Mais au moment critique le courrier, qui porte la nouvelle de notre victoire de Poultousk, nous apporte de Pétersbourg notre nomination de général en chef, et le premier ennemi Boukschevden est enfoncé; nous pouvons penser au second, à Bonaparte. Mais ne voila-t-il pas qu'à ce moment se lève devant nous un troisième ennemi, c'est le *ուղղափառ զինվոր-ը*, qui demande à grands cris du pain, de la viande, des souchary, du foin, — que sais-je! Les magasins sont vides, les chemins inpraticables. Le *ուղղափառ զինվորը* se met à la maraude, et d'une manière dont la dernière campagne ne peut vous donner la moindre idée. La moitié des régiments forme des troupes libres, qui parcourent la contrée en mettant tout à feu et à sang. Les habitants sont ruinés de fond en comble, les hôpitaux regorgent de malades, et la disette est partout. Deux fois le quartier général a été attaqué par des troupes de maraudeurs. et le général en chef a été obligé lui-même de demander un

bataillon pour les chasser. Dans une de ces attaques on m'a emporté ma malle vide et ma robe de chambre. L'Empereur veut donner le droit à tous les chefs de divisions de fusiller les maraudeurs, mais je crains fort que cela n'oblige une moitié de l'armée de fusiller l'autre»[1].

Իշխան Անդրեյն սկզբից կարդում էր միայն աչքերով, բայց հետո այն, ինչ որ կարդում էր (չնայած որ նա գիտեր, թե որքան պետք է հավատալ Բիլիբինին) ակամա ավելի ու ավելի սկսում էր հետաքրքրել նրան։ Մինչև այդտեղ կարդալով, նա նամակը ճմռթեց և դեն շպրտեց։ Նրան բարկացնում էր ոչ թե այն, ինչ կարդաց նամակում, այլ այն, որ իրեն խորթ և տարորոտի մի կյանք կարող է այդչափ հուզել իրեն։ Նա աչքերը փակեց, ճակատը շփեց ձեռով, կարծես կարդացածի տպավորությունը

[1] «Ֆելդմարշալը բարկանում է կայսեր վրա և մեզ բոլորիս պատժում. միթե սա տրամաբանական չէ։

«Ահա առաջին գործողությունը։ Ինքնըստինքյան պարզ է, որ այս վերջին հրամանատարների օրով հետաքրքրությունն ու զավեշտականությունն աճում են։ Ֆելդմարշալի դնալուց հետո պարզվում է, որ թշնամին գալիս է մեզ վրա և պետք է ճակատամարտ տալ։ Բուկսհեվդենը գլխավոր հրամանատարն է՝ ըստ ավագության, բայց գեներալ Բենիգսենը բոլորովին այլ կարծիքի է, առավել ևս, որ նա իր կորպուսով գտնվում է թշնամու առջև և ուզում է առիթից օգտվել ճակատամարտ տալ ինքնուրույնաբար։ Եվ տալիս է։

«Դա Պուլտուսկի ճակատամարտն է, որը մեծ հաղթություն է համարվում, բայց որը, իմ կարծիքով, բոլորովին այդպիսին չէ։ Մենք, ոչ-զինվորականներս, ինչպես գիտեք, վատ սովորություն ունենք միշտ քննարկել կռիվը տանելու իմաստ տանուլ տալու հարցը։ Նա, ով ճակատամարտից հետո նահանջել է, նա էլ, մեր կարծիքով, տանուլ է տվել. ուստի այդպես դատելով մենք տանուլ ենք տվել Պուլտուսկի ճակատամարտը։ Մի խոսքով՝ մենք կռվից հետո նահանջում ենք, բայց սուրհանդակ ենք ուղարկում Պետերբուրգ՝ հաղթության մասին տեղեկություն տալու, և գեներալ Բենիգսենը բանակի զորապետությունը չի դիջում գեներալ Բուկսհեվդենին, հույս ունենալով Պետերբուրգից ի շնորհակալություն իր տարած հաղթության, ստանալ գլխավոր հրամանատարի կոչումը։ Միջնշխանության այս պահին մենք սկսում ենք շատ յուրահատուկ ու հետաքրքրական մի շարք մանևրներ։ Մեր նպատակն այլևս այն չէ, ինչպիսին պիտի լիներ, որպեսզի խուսափենք թշնամուց կամ հարձակվենք նրա վրա, այլ այն, որ խուսափենք գեներալ Բուկսհեվդենից, որ ավագության իրավունքով պետք է մեր պետը լիներ։ Մենք մեր այս նպատակին հետամուտ ենք այնպիսի եռանդով, որ մինչև անգամ գետն անցնելիս, մի գետ, որ ծանծաղուտներ չունի, այրում ենք կամուրջն այն նպատակով, որ մեզնից ավելի հեռացնենք թշնամուն, որ ներկայումս ոչ թե Բոնապարտն է հանդիսանում, այլ Բուկս-

վանելու համար, միաժամանակ ականջ դնելով, թե ինչ է կատարվում մանկանոցում։ Հանկարծ նրան թվաց, թե դռան ետևից մի արտասովոր ձայն լսվեց. նա սարսափեց, թե արդյոք մի բան չի պատահել երեխային այն միջոցին, երբ ինքը կարդում էր նամակը։ Նա ոտների մատների վրա մոտեցավ մանկանոցի դռանը և բաց արավ այն։

Այն րոպեին, երբ ներս էր մտնում, նկատեց, որ դայակը մի բան թաքցրեց իրենից, իսկ իշխանադուստր Մարիան երեխայի մահճակալի մոտը չէր։

— Սիրելիս, — լսվեց նրա ետևից մի հուսահատ շշունջ, որը նրան թվաց, թե իշխանադուստր Մարիայի ձայնն է։

Ինչպես այդ հաճախ է պատահում երկարատև անքնությունից ու երկար հուզմունքից հետո, նրան տիրեց մի անորոշ վախ, ու նա մտածեց, որ երեխան մեռել է։ Այն ամենը,

---

հեվդենը։ Այսպիսի մաներներից մեկի հետևանքով (որ մեզ ազատեց նրանից) քիչ մնաց, որ գեներալ Բուկսհեվդենը ենթարկվեր թշնամու գերազանց ուժերի հարձակման և կերչ ընկներ։ Բուկսհեվդենը մեզ հալածում է, իսկ մենք փախչում ենք։ Հենց որ նա անցնում է գետի մի ափը, մենք անցնում ենք մյուսը։ Վերջապես մեր թշնամի Բուկսհեվդենը բռնում է մեզ և հարձակում գործում։ Ե՛վ գեներալն էլ բարկանում են և բանը հասնում է մենամարտի հրավերի, որ անում է Բուկսհեվդենը և առիթ տալիս Բենիգսենի ընկնավորության։ Բայց ամենակրիտիկական րոպեին սուրհանդակը, որ Պուլտուսկի հաղթության մասին տեղեկություն էր տարել Պետերբուրգ, վերադառնում է և բերում գլխավոր հրամանատարի նշանակումը։ Ուրը, և մեր առաջին թշնամի Բուկսհեվդենը պարտված է։ Հիմա մենք կարող ենք մտածել մեր երկրորդ թշնամու՝ Բոնապարտի մասին։ Սակայն բանից պարզվում է, որ հենց այդ րոպեին մեր առաջ ծառանում է երրորդ թշնամին՝ ուղղափառ զորքը, և բարձրագոչ պահանջում՝ հաց, միս, պաքսիմատ, խոտ, վարսակ և էլ ի՞նչ ասես։ Պահեստները դատարկ են, ճանապարհներն անանցանելի։ Ուղղափառ զորքն սկսում է կողոպտել և կոզակները հասնում է այն աստիճանի, որի մասին վերջին կռիվն անգամ չէր կարող ամենափոքր գաղափար տալ ձեզ։ Գնդերի կեսը կազմում են կամավոր խմբերը, որոնք շրջում են երկրի մեջ և ամեն ինչ մատնում սրի ու հրի։ Ինքիչները բոլորովին քայքայված են, հիվանդանոցները լի են հիվանդներով և ամենուրեք սով է։ Կողոպտիչները երկու անգամ հարձակվել են նույնիսկ գլխավոր կայանի վրա, և գլխավոր հրամանատարն ստիպված էր մի գումարտակ զորք վերցնել՝ նրանց քշելու համար։ Այդ հարձակումներից մեկի միջոցին տարան իմ դատարկ ճամպրուկն ու խալաթը։ Թագավորը կամենում է դիվիզիայի պետերին իրավունք տալ՝ գնդակահարել կողոպտիչներին, բայց ես վախենում եմ, որ դա զորքի մի մասին ստիպի՝ գնդակահարել մյուս մասին։

ինչ տեսնում ու լսում էր նա, թվում էր թե հաստատում են իր երկյուղը։

«Ամեն ինչ վերջացած է», մտածեց իշխան Անդրեյը և սառը քրտինքը պատեց նրա ճակատը։ Նա գլուխը կորցրած մոտեցավ երեխայի մահճակալին, հավատացած, որ այն դատարկ է լինելու, և որ դայակը թաքցրել է մեռած երեխային։ Նա վարագույրը ետ քաշեց և նրա սարսափահար, հածող աչքերը չկարողացան տեսնել երեխային։ Վերջապես, նա գտավ նրան. կարմրատակած երեխան փռված պառկած էր մահճակալի լայնքով, գլուխը բարձից դցած. նա քնի մեջ շուրթերը շարժելով՝ ծպծպացնում էր ու կանոնավոր շնչում։

Իշխան Անդրեյը, երեխային տեսնելով, այնքան ուրախացավ, որ կարծես արդեն կորցրել ու գտել էր նրան։ Նա կռացավ և, ինչպես քույրը սովորեցրել էր՝ շուրթերով փորձեց, թե երեխան տաքություն ունի արդյոք։ Քնքուշ ճակատը տամուկ էր. նա ձեռը մոտեցրեց երեխայի գլխին՝ մազերը նույնիսկ թաց էին, այնպես սաստիկ քրտնել էր երեխան։ Նա ոչ միայն չէր մեռել, այլև ակներև էր արդեն, որ ճգնաժամն ետ նցել է և երեխան՝ ապաքինվել։ Նա ուզում էր այդ փոքրիկ, անօգ էակին բռնել ու սեղմել իր կրծքին, բայց չէր համարձակվում անել այդ։ Նա երեխայի գլխավերևը կանգնած՝ նայում էր նրա գլխին, փոքրիկ ձեռներին ու ոտներին, որոնք պարզ երևում էին վերմակի տակ։ Նրա կողքին զգեստների շրշյուն լսվեց և մահճակալի վարագույրի մոտ ինչ-որ ստվեր երևաց։ Նա, առանց շուրջը նայելու, շարունակեց դիտել երեխային ու լսել նրա կանոնավոր շնչառությունը։ Մութ ստվերն իշխանադուստր Մարիան էր, որ անձայն քայլերով մոտեցավ մահճակալին, վարագույրը բարձրացրեց և նորից իջեցրեց իր ետև։ Իշխան Անդրեյը, առանց նայելու, ճանաչեց նրան և ձեռը մեկնեց քրոջը։ Իշխանադուստր Մարիան սեղմեց եղբոր ձեռը։

— Քրտնել է, — ասավ իշխան Անդրեյը։

— Ես քեզ մոտ եկա, որ հայտնեմ այդ մասին։

Երեխան քնի մեջ թեթև շարժվեց, ժպտաց և ճակատը քրտեց բարձին։ Իշխան Անդրեյը նայեց քրոջը։ Իշխանադստեր շողշողուն աչքերը վարագույրի անփայլ կիսախավարում՝ ուրախության արցունքներից փայլում էին սովորականից

ավելի։ Իշխանադուստր Մարիան թեքվեց դեպի եղբայրն ու համբուրեց նրան, թեթևակի ձգելով մահճակալի վարագույրը։ Նրանք հանգիստ սպառնացին միմյանց, դարձյալ կանգնեցին վարագույրի անփայլ լույսի մեջ, կարծես ցանկություն չունենալով բաժանվելու այդ մթնոլորտից, ուր նրանք երբեմն միասին կտրված էին դրսի աշխարհից։ Առաջինն իշխան Անդրեյը՝ մազերը վարագույրին քսելով ու խճճելով, հեռացավ մանկան մահճակալից։

— Այո, սա միակ բանն է, որ մնացել է ինձ,— ասավ նա հառաչանքով։

X

Շուտով, մասոնների միաբանության մեջ ընդունվելուց հետո, Պիեռը իր համար կազմեց գործունեության ծրագիր, թե ինչ պիտի անի ինքն իր կալվածքներում, և մեկնեց Կիևի նահանգը, ուր գտնվում էր նրա գյուղացիների մեծ մասը։

Հասնելով Կիև, Պիեռն իր բոլոր կառավարիչներին կանչեց գլխավոր գրասենյակը և նրանց բացատրեց իր մտադրություններն ու ցանկությունները։ Նա նրանց ասավ, որ անմիջապես միջոցներ ձեռք կառնվեն գյուղացիներին ճորտությունից բոլորովին ազատելու, որ մինչ այդ գյուղացիներին այլևս չծանրաբեռնեն աշխատանքով, որ կանայք երեխաներով չըպետք է ուղարկվեն աշխատանքի, որ գյուղացիներին պետք է օգնություն ցույց տրվի, որ պատիժները պետք է լինեն խրատական և ոչ մարմնական, որ ամեն մի կալվածում պետք է հիմնըվեն հիվանդանոցներ, ապաստարաններ ու դպրոցներ։ Կառավարիչներից մի քանիսը (այդտեղ էին և կիսագրագետ տնտեսներ) լսում էին երկյուղած, Պիեռի ճառի միտքը մեկնաբանելով այնպես, թե երիտասարդ կոմսը դժգոհ է իրենց կառավարելու ձևից և փող թաքցնելուց ու յուրացնելուց. մյուսները, առաջին վախից հետո, զավեշտական էին գտնում Պիեռի շշընջալով խոսելը և նրա գործածած այն նոր բառերը, որ մինչ այդ չէին լսել իրենք. ուրիշները՝ ուղղակի բավականություն էին զգում, թե ինչպես է խոսում աղան. ոմանք էլ՝ ամենախելոքները, դրանց թվում և գլխավոր կառավարիչը, այդ ճառից

հասկացան այն, թե ինչպես պետք է վարվել պարոնի հետ՝ իրենց նպատակն հասնելու համար։

Գլխավոր կառավարիչը մեծ համակրությամբ վերաբերվեց Պիեռի մտադրություններին, բայց նկատեց, որ բացի այդ բարենորոգումներից, անհրաժեշտ է զբաղվել ընդհանրապես այն գործերով, որոնք վատ դրության մեջ են։

Չնայած կոմս Բեզուխովի ահագին հարստությանը, Պիեռը՝ այդ հարստությունն ստանալու օրից, և ստանալով, ինչպես ասում էին, տարեկան 500 հազար ռուբլի եկամուտ, նա իրեն զգում էր ավելի քիչ հարուստ, քան այն ժամանակ, երբ հանգուցյալ կոմսից ստանում էր իր 10 հազար ռուբլին։ Ընդհանուր գծերով, աղոտ կերպով նա հաշվում էր հետևյալ բյուջեն.— խորհրդին վճարվում էր մոտ 80 հազար՝ բոլոր կալվածների համար, մոտ 30 հազար ծախսվում էր Պոդմոսկովնի կալվածի, Մոսկվայի տան և իշխանադուստրերի վրա. մոտ 15 հազար գնում էր թոշակների, նույնքան էլ աստվածահաճո հիմնարկությունների. կոմսուհուն ապրուստի համար ուղարկվում էր 150 հազար, մոտ 70 հազար վճարվում էր պարտքերի տոկոս. նոր կառուցվող եկեղեցու շենքը այդ երկու տարվա մեջ նստել էր մոտ 10 հազար. մնացածը՝ մոտ 100 հազարը, ծախսվում էր գես ու դեն, ինքն էլ չգիտեր ինչպես, և գրեթե յուրաքանչյուր տարի նա հարկադրված էր պարտքեր անել։ Բացի դրանից, գլխավոր կառավարիչն ամեն տարի գրում էր մերթ հրդեհների մասին, մերթ անբերրիության, մերթ էլ այն մասին, թե անհրաժեշտ է վերաշինել ֆաբրիկաներն ու գործարանները։ Այսպիսով, առաջին գործը, որին Պիեռը պետք է ձեռնարկեր, հենց գործերով զբաղվելն էր, մի բան, որի համար նա ամենից քիչ ընդունակություն ու հակում ուներ։

Պիեռը գլխավոր կառավարչի հետ ամեն օր զբաղվում էր։ Բայց նրա զբաղմունքը մի քայլ անգամ առաջ չէր տանում գործը։ Նա զգում էր, որ իր զբաղմունքները կատարվում են գործից անկախ, որ նրանք ոչ մի առնչություն չունեն գործի հետ և չեն ստիպում, որ գործն առաջ գնա։ Մի կողմից կառավարիչը գործերը ներկայացնում էր վատ կերպարանքով, ցույց տալով Պիեռին, որ անհրաժեշտ է վճարել պարտքերը և ձեռնարկել նոր աշխատանքներ՝ ճորտ գյուղացիների ջանքերով, մի բան, որին Պիեռը չէր համաձայնում. մյուս կողմից Պիեռը

պահանջում էր սկսել գյուղացիների ազատագրման գործը, որի դեմ սակայն կառավարիչն առաջ էր քաշում նախ խնամակալական խորհրդի պարտքը վճարելու անհրաժեշտությունը, ուրեմն և այդ բանը շուտ կատարելու անկարելիությունը։

Կառավարիչը չէր ասում. թե դա բոլորովին անհնար է. այդ նպատակին հասնելու համար նա առաջարկում էր ծախել Կոստրոմայի նահանգի անտառները և մերձվոլգյան ու Ղրիմի կալվածական հողերը։ Բայց կառավարչի այդ առաջարկները կապված էին այնպիսի բարդ գործողությունների, նոտարական արգելքներ վերացնելու, պահանջների, թույլտվությունների և այլ բաների հետ, որ Պիեռը ինքն իրեն կորցնում էր և ասում միայն. «Այո, այո, այդպես էլ արեք»։

Պիեռը չուներ այն գործնական, մի բանի կպչելու ընդունակությունը, որ նրան հնարավորություն տար ենմիջապես ձեռնամուխ լինել գործի, ուստի և նա չէր սիրում գործը և կառավարչի առաջ աշխատում էր միայն ձևանալ, թե գործով է զբաղված։ Իսկ կառավարիչը, կոմսի առաջ աշխատում էր ձևանալ, թե ինքն այդ զբաղմունքները համարում է շատ օգտակար տիրոջ համար և ծանր՝ իր համար։

Կիևում ծանոթներ գտնվեցին, իսկ անծանոթներն սկսեցին ծանոթանալ ու սրտաբաց ողջունել նորեկ հարուստին, նահանգի ամենամեծ կալվածատիրոջը։ Պիեռի գլխավոր թուլությանը վերաբերող գայթակղությունները, — ա՛յն, որի մասին նա խոստովանեց միաբանության մեջ ընդունվելու միջոցին, — դեռ այնքա՛ն ուժեղ էին, որ նա չկարողացավ իրեն զսպել։ Նորից ամբողջ օրերով, շաբաթներով, ամիսներով Պիեռի կյանքն անցնում էր այնքան զբաղված ու հոգսերով լի Երեկոների, ճաշկերույթների, նախաճաշերի, պարահանդեսների մեջ, որ նա, ինչպես Պետերբուրգում, ժամանակ չուներ զգաստանալու։ Փոխանակ նոր կյանք վարելու, ինչպիսին ծրագրում էր Պիեռը, նա շարունակում էր ապրել նախկին կյանքով, միայն ուրիշ միջավայրում։

Պիեռը գիտակցում էր, որ մասոնության երեք պատգամներից ինքը չի կատարում այն մեկը, որը յուրաքանչյուր մասոնի հրահանգում է լինել բարոյական կյանքի օրինակ, իսկ յոթը առաքինություններից նրան բոլորովին պակասում էր երկուսը՝ հեզություն և սեր առ մահը։ Նա իրեն մխիթարում էր այն բանով, որ դրա փոխարեն ինքը կատարում է մի ուրիշ պատգամ՝ մարդկային ցեղի ուղղումն, և ուներ ուրիշ առաքինություններ՝ սեր դեպի մերձավորը և, մանավանդ առատաձեռնություն։

1807 թվի գարնանը Պիեռը որոշեց վերադառնալ Պետերբուրգ։ Վերադարձին նա մտադիր էր շրջել իր բոլոր կալվածները և անձամբ հավաստիանալ, թե ինչ է արված այն բոլորից, ի՛նչ ինքը հրահանգել է, և տեսնելու, թե ինչ դրության մեջ է գտնվում այն ժողովուրդը, որ վստահել է իրեն աստված և, որին ինքը ձգտում է բարերարել։

Գլխավոր կառավարիչը երիտասարդ կոմսի ձեռնարկած բոլոր բաները համարելով գրեթե խենթություն, անձեռնտու՝ թե՛ իր, թե՛ նրա և թե՛ գյուղացիների համար, այնուամենայնիվ զիջումներ արավ։ Շարունակելով ազատագրության գործը ներկայացնել անկարելի մի բան, նա կարգադրեց միաժամանակ, մինչև կոմսի այցելությունը, բոլոր կալվածներում շինել դպրոցների հիվանդանոցների ու ապաստարանների մեծ շենքեր, ամեն տեղ դիմավորումներ սարքեց, ոչ շքեղ-հանդիսավոր, որովհետև գիտեր, որ դրանք դուր չեն գա Պիեռին, այլ այնպես՝ կրոնական-երախտագիտական՝ սրբապատկերներով և աղ ու հացով, հենց այնպիսի դիմավորումներ, որոնք, ինչպես նա էր հասկանում, պետք է որ ազդեին կոմսի վրա և խաբեին նրան։

Հարավային գարունը, հանգիստ, արագ ճամփորդությունը վեհանական կառքով և ճանապարհի առանձնությունը հաճելի ազդեցություն արին Պիեռի վրա։ Այն կալվածները, որ նա տակավին չէր եղել, մեկը մյուսից գեղատեսիլ էին. ժողովուրդն ամեն տեղ ներկայանում էր բարեկեցիկ դրության մեջ և սրտագին շնորհակալություն էր հայտնում՝ իրեն արված բարերարության համար։ Ամեն տեղ եղան դիմավորումներ, որոնք թեև շփոթություն էին պատճառում Պիեռին, բայց սրտի խորքում ուրախության զգացում էին առաջացնում։ Մի տեղ գյուղացիները նրա առաջ դուրս բերին աղ ու հաց և Պողոս-Պետրոսի սրբապատկերն ու թույլտվություն խնդրեցին ի պատիվ նրան (Պիեռին) հովանավորող Պողոս-Պետրոսի, ի նշան սիրո և շնորհակալության՝ իրենց արված բարերարության համար, իրենց հաշվին եկեղեցում մի նոր սեղան շինել։

Մի ուրիշ տեղ նրան դիմավորեցին կանայք՝ ծծկեր երեխաներով, և շնորհակալություն հայտնեցին՝ իրենց ծանր աշխատանքներից ազատելու համար։ Երրորդ կալվածում նրան դիմավորեց քահանան՝ խաչը ձեռին, երեխաներով շրջապատված, որոնց նա, կոմսի ողորմածությամբ, գրագիտություն ու կրոն էր սովորեցնում։ Բոլոր կալվածներում Պիեռն իր աչքով տեսնում էր միևնույն հատակագծով կառուցվող և արդեն կառուցված հիվանդանոցների, դպրոցների, ապաստարանների քարե շենքերը, որոնք շուտով բացվելու էին։ Ամեն տեղ Պիեռը տեսավ կառավարիչների հաշվետվությունը կոռի մասին, որը պակասել էր նախկին տարիների համեմատությամբ, և դրա համար նա սրտագին շնորհակալություններ լսեց կապույտ կաֆտան հագած գյուղացի պատգամավորներից։

Բայց Պիեռը չգիտեր, թե այն գյուղը, ուր իրեն աղ ու հաց մատուցին և ուր ուզում էին եկեղեցում Պողոս-Պետրոսի անվան սեղան կառուցել, առևտրական գյուղ էր, ուր ս. Պետրոսի տոնի օրը տոնավաճառ էր լինում, և ուր եկեղեցու սեղանը արդեն շինված էր գյուղի հարուստների ձեռով, այն հարուստների, որոնք ներկայացան իրեն, և որ այդ գյուղի բնակիչների $^{9}/_{12}$-ը վաղուց գտնվում էր ծայրահեղ չքավորության մեջ։ Նա չգիտեր, որ իր կարգադրության հետևանքով թեև դադարել էին ծծկեր երեխաներ ունեցող կանանց ուղարկել կոռի, բայց նույն այդ կանայք անհամեմատ ավելի ծանր աշխատանք էին կատարում իրենց տներում։ Նա չգիտեր, որ խաչը ձեռին իրեն դիմավորող քահանան գյուղացիներին ճնշում էր իր տուրքերով և որ նրա մոտ եղած աշակերտներին արցունքով էին հանձնել նրան և ծնողները մեծ գումարներ վճարելով էին ետ գնում նրանց։ Նա չգիտեր, որ այդ միատեսակ քարե շենքերը կառուցում էին գյուղացի բանվորները, որի շնորհիվ էլ ավելացել է գյուղացիների կոռը, որ պակասեցված էր միայն թղթի վրա։ Նա չգիտեր, որ այնտեղ, ուր կառավարիչը ցույց էր տալիս, թե իր (Պիեռի) կամքով բահրան պակասեցված է մի երրորդով, այդտեղ կիսով չափ ավելացված էր կոռը։ Ուստի և Պիեռը հիացած էր կալվածներում կատարած շրջագայությունից, և նրան ամբողջովին նորից տիրեց այն մարդասիրական տրամադրությունը, որով մեկնել էր Պետերբուրգից, ու խանդավառ նամակներ էր

գրում իր դաստիարակ եղբորը, ինչպես անվանում էր նա մեծ վարպետին։

«Որքան հեշտ է, որքան քիչ ջանքեր են հարկավոր, որպեսզի այսքան շատ բարիք արվի», մտածում էր Պիեռը, «և որքա՜ն մենք քիչ ենք հոգ տանում այդ մասին»։

Նա երջանիկ էր իրեն ցույց տրված շնորհապարտ վերաբերմունքից, բայց ամաչում էր տեսնելով այդ։ Այդ վերաբերմունքը հիշեցնում էր նրան, թե ինքը որքան դեռ ի վիճակի էր անել այդ պարզ, բարի մարդկանց համար։

Գլխավոր կառավարիչը, մի շատ հիմար ու խորամանկ մարդ, միանգամայն հասկանալով խելոք ու միամիտ կոմսին, և նրան խաղալիքի պես խաղացնելով, ու տեսնելով թե նախապատրաստած ընդունելություններն ի՛նչ ազդեցություն արին Պիեռի վրա, կտրուկ կերպով դիմեց նրան, ապացուցելով թե անհնար է և, որ գլխավորն է, ավելորդ է գյուղացիների ազատագրումը, որոնք առանց այն էլ միանգամայն երջանիկ են։

Պիեռն իր հոգու խորքում համաձայնում էր կառավարչի հետ այն բանում, թե իսկապես դժվար էր երևակայել դրանից ավելի երջանիկ մարդիկ, և թե, աստված գիտի, ի՛նչ է սպասում նրանց ազատության մեջ. բայց Պիեռը, թեև ակամա, պնդում էր այն, ինչ ինքն արդարացի էր համարում։ Կառավարիչը խոստանում էր իր ամբողջ եռանդը գործադրել կոմսի կամքը կատարելու համար, լավ իմանալով, որ կոմսը երբեք չի կարող ստուգել ոչ միայն այն, թե գործադրված են արդյոք բոլոր միջոցները անտառներն ու կալվածները ծախելու, նաև դրանք բանկից ետ գնելու համար. այլև, հավանորեն, երբեք չի հարցնի և չի իմանա այն, թե ի՛նչպես կառուցած շենքերը մնում են դատարկ և գյուղացիները շարունակում են աշխատանքով ու դրամով հատուցանել այն բոլորը, ինչ նրանք տալիս են ուրիշներին, այսինքն ամենը, ինչ կարող են տալ։

XI

Հոգու ամենաուրախ տրամադրության մեջ հարավային ճամփորդությունից վերադառնալով, Պիեռը կատարեց իր վաղեմի մտադրությունը՝ գնաց տեսնելու իր բարեկամ Բալկոնսկուն, որին երկու տարի էր չէր տեսել։

Բոգուչարովոն ընկած էր մի անհրապույր տափարակ տեղ, որ ծածկված էր դաշտերով և կտրված ու կանգուն եղևնու ու կեչու անտառներով։ Կալվածատիրական տունը գտնվում էր մեծ ճանապարհի երկարությամբ ձգվող գյուղի ծայրին, նոր փորված և լեփ-լեցուն լճի (որի ափերին դեռ խոտ չէր կանաչել) ետևը, ցահել անտառի մեջտեղ, ուր կային և մի քանի փիճի ծառեր։

Կալվածատիրական տունը կազմում էին կալը, բակի շենքերը, գոմը, բաղնիսը, ֆլիգելները և քարաշեն մեծ տունը՝ կիսակլոր ֆրոնտոնով, որը դեռ շինվում էր։ Տան շուրջը նոր այգի էր տնկված։ Պարիսպներն ու դարպասը նոր ու ամուր էին. ծածկույթի տակ կանգնած էին երկու հրշեջ խողովակ և մի տակառ՝ կանաչ գույնով ներկած։ Շավիղներն ուղիղ էին, կամուրջները՝ ամուր և ճաղերով։ Ամեն ինչ կրում էր խնամոտ ձեռքի, մաքրության և տնտեսվարության կնիքը։ Հանդիպող ծառայողներն այն հարցին, թե որտե՞ղ է ապրում իշխանը, ցույց տվին նորակառույց փոքրիկ ֆլիգելը, որ գտնվում էր լրճակի հենց եզերքին։ Իշխան Անդրեյի ծեր դաստիարակ Անտոնը Պիեռին իջեցրեց կառքից, հայտնեց, որ իշխանը տանն է և նրան առաջնորդեց փոքրիկ, մաքուր նախասենյակը։

Պիեռին զարմացրեց փոքրիկ, մաքուր տնակի համեստ տեսքը այն շքեղությունից հետո, որի մեջ վերջին անգամ տեսել էր իր բարեկամին՝ Պետերբուրգում։ Նա շտապով մտավ տակավին փիճու հոտ արձակող, անսվաղ փոքրիկ դահլիճը և ուզում էր էլի առաջ գնալ, բայց Անտոնը ոտքերի ծայրերի վրա առաջ վազեց և դուռը ծեծեց։

— Հը՞, ի՞նչ կա, — լսվեց մի խիստ, տհաճ ձայն։

— Հյուր է, — պատասխանեց Անտոնը։

— Խնդրիր սպասել, — ու լսվեց ետ քաշվող աթոռի ձայն։

Պիեռն արագ քայլերով մոտեցավ դռանը և երես առ երես հանդիպեց խոժոռադեմ ու ծերացած իշխան Անդրեյին։ Պիեռը զրկեց նրան և, ակնոցը բարձրացնելով, համբուրեց նրա այտերը ու մոտից դիտեց նրան։

— Բոլորովին չէի սպասում, շատ ուրախ եմ, — ասավ իշխան Անդրեյը։ Պիեռը ոչինչ չխոսեց. նա զարմացած, առանց աչք հեռացնելու, նայում էր բարեկամին։ Նրան զարմացնում էր իշխան Անդրեյի մեջ կատարված փոփոխությունը։ Անդրեյի

խոսքերը սիրալիր էին, ժպիտը փայլում էր շրթունքներին ու դեմքին, բայց հայացքը մարած էր, մեռած, որին նա, չնայած իր ակնհայտ ցանկության, չէր կարողանում ուրախ ու խնդուն փայլ տալ։ Նա ոչ թե նիհարել էր, գունատվել, այլ այրացել էր. սակայն նրա հայացքը և ճակատի մի կնճիռը, որ ցույց էին տալիս, թե նա երկար ու կենտրոնացած մտածում է ինչ-որ բանի մասին, զարմացնում և խորթ էին թվում Պիեռին, մինչև որ նա չընտելացավ դրան։

Երկար անջատումից հետո տեղի ունեցող այդ տեսակցությունը, ինչպես այդ միշտ էլ լինում է, խոսակցությունն իսկույն իր հունը չգտավ. նրանք կարճ հարց ու պատասխաններ էին տալիս այնպիսի բաների մասին, որոնց մասին, ինչպես իրենք էլ գիտեին, պետք էր երկար խոսել։ Վերջապես կամաց-կամաց խոսակցությունը կանգ առավ մինչ այդ կրկրտուր ասածի վրա, — անցած կյանքի, ապագայի ծրագիրների, Պիեռի ճանապարհորդության, նրա զբաղմունքի և պատերազմին վերաբերող հարցերի վրա։ Այն ինքնամփոփ ու ընկրճված վիճակը, որ նկատեց Պիեռը իշխան Անդրեյի հայացքում, այժմ ավելի ուժեղ արտահայտվում էր նրա ժպիտի մեջ, որով նա լսում էր Պիեռին, մանավանդ այն ժամանակ, երբ Պիեռն ուրախ ոգևորությամբ խոսում էր անցյալի կամ ապագայի մասին։ Կարծես թե իշխան Անդրեյը՝ կուզենար էլ՝ բայց չէր կարող մասնակից լինել այն ամենին, ինչ ասում էր Պիեռը։ Պիեռն արդեն սկսում էր զգալ, որ իր՝ իշխան Անդրեյի առաջ արտահայտած ոգևորությունը, երազանքները, երջանկության հույսերն անպատշաճ են։ Նա ամաչում էր արտահայտել իր նոր, մասոնական բոլոր մտքերը, որոնք մանավանդ թարմացել ու բորբոքվել էին վերջին ուղևորությամբ։ Նա զսպում էր իրեն, վախենում էր միամիտ երևալ. դրա հետ միաժամանակ անդիմադրելի ցանկություն էր զգում, որքան կարելի է շուտ ցույց տալ իր բարեկամին, թե ինքն այժմ բոլորովին ուրիշ մարդ է, ավելի լավ Պիեռ է, քան այն, որ եղել է Պետերբուրգում։

— Չեմ կարող ասել, թե ինչեր եմ ապրել այս ժամանակամիջոցում։ Ես ինքս ինձ չէի ճանաչի։

— Այո, մենք շատ և շատ ենք փոխվել այն օրից, — ասավ իշխան Անդրեյը։

— Իսկ դուք ի՞նչ ծրագիրներ ունեք,— հարցրեց Պիեռը։

— Ծրագիրնե՞ր,— հեգնանքով կրկնեց իշխան Անդրեյը։— Իմ ծրագիրները,— կրկնեց նա կարծես զարմանալով այդ խոսքի նշանակության վրա։— Ահա՛, ինչպես տեսնում ես, շենքեր եմ կառուցում, ուզում եմ եկող տարի բոլորովին տեղափոխվել...

Պիեռը լուռ, ուշադիր նայեց Անդրեյի ծերացած դեմքին։

— Ոչ, ես հարցնում եմ...— ասավ Պիեռը, բայց իշխան Անդրեյն ընդմիջեց նրան։

— Է՞հ, իմ մասին ինչ խոսենք... դու պատմիր քո ճամփորդության մասին, պատմիր այն բոլորը՝ ի՞նչ արել ես քո կալվածներում։

Պիեռն սկսեց պատմել, թե ինչ է արել իր կալվածներում, աշխատելով որքան կարելի է թաքցնել իր մասնակցությունն իր արած բարելավումների մեջ։ Իշխան Անդրեյն արդեն առաջուց մի քանի անգամ ասել-թելադրել էր Պիեռին այն բոլորը, ինչ այժմ պատմում էր, և կարծես այն ամենը, ինչ արել էր Պիեռը, վաղուց հայտնի մի պատմություն էր, ուստի և իշխան Անդրեյը լսում էր ոչ միայն առանց հետաքրքրության, այլ մինչև անգամ կարծես ամաչում էր, որ Պիեռը պատմում է այդ։

Պիեռն անհարմար, մինչև իսկ ճնշված զգաց իրեն իր բարեկամի հետ։ Նա լռեց։

— Ահա թե ինչ, հոգիս,— ասավ իշխան Անդրեյը, որ ըստ երևույթին նույնպես ճնշված էր զգում իրեն հյուրի հետ,— ես այստեղ գտնվում եմ ժամանակավորապես, եկել եմ միայն դիտելու։ Հիմա կրկին քրոջս մոտ եմ գնում։ Ես քեզ կծանոթացնեմ նրան։ Բայց դու, կարծեմ, ծանոթ ես,— ասավ նա, ըստ երևույթին, հյուրին զբաղեցնելու համար, քանի որ զգում էր, որ իր և հյուրի մեջ այժմ ընդհանուր ոչինչ չկա։— Մենք կբռնենք ճաշից հետո։ Իսկ հիմա կուզե՞ս տեսնել իմ տուն ու տեղը։

Նրանք դուրս եկան և մինչև ճաշ զբոսնեցին, զրուցելով քաղաքական նորություններ և ընդհանուր ծանոթների մասին, իբրև իրար ոչ այնքան մոտ մարդիկ։ Փոքր-ինչ ոգևորությամբ ու հետաքրքրությամբ իշխան Անդրեյը խոսում էր միայն իր նոր կառուցվող տան մասին, բայց այդտեղ էլ, խոսակցության կիսին, շինության լաստակների վրա, երբ իշխան Անդրեյը նկարագրում էր ապագա տան դիրքը, նա հանկարծ կանգ առավ։

— Ասե՛նք այստեղ հետաքրքրական ոչինչ չկա. գնա՛նք ճաշենք ու ճանապարհվենք։

Ճաշի ճամանակ խոսք բացվեց Պիեռի ամուսնության մասին։

— Ես շատ զարմացա, երբ լսեցի այդ,— ասավ իշխան Անդրեյը։

Պիեռը կարմրեց, ինչպես միշտ կարմրում էր այդ մասին խոսելիս, և շտապ ասավ.

— Ես ձեզ մի օր կպատմեմ, թե ինչպես պատահեց այդ բոլորը։ Բայց գիտեք, որ այդ բոլորը վերջացած է, և՛ ընդմիշտ։

— Ընդմի՞շտ,— ասավ իշխան Անդրեյը,— ընդմիշտ ոչինչ չի լինում։

— Բայց գիտե՞ք, թե ինչպես վերջացավ այդ բոլորը։ Լսե՞լ եք իմ մենամարտի մասին։

— Այո, դու այդ քայլն էլ արի՞ր։

— Մի բան, որի համար ես շնորհակալ եմ աստծուց, այդ այն է, որ ես չսպանեցի այդ մարդուն,— ասավ Պիեռը։

— Իսկ ինչո՞ւ,— ասավ իշխան Անդրեյը։— Մի չար շուն սպանելը նույնիսկ շատ լավ բան է։

— Ոչ, մարդ սպանելը լավ բան չի, անարդար բան է։

— Ինչու է անարդար,— կրկնեց իշխան Անդրեյը։— Այն, ինչ որ արդար է կամ անարդար — դրա մասին մարդիկ չեն կարող դատել։ Մարդիկ մշտնջենապես մոլորվել են և պետք է մոլորվեն և ոչ մի բանի մեջ այնքա՛ն շատ, որքան այն բանում, ինչ որ համարում են արդար և անարդար։

— Անարդար է այն, ինչ որ չարիք է ուրիշի համար,— ասավ Պիեռը, հաճույք զգալով, որ իշխան Անդրեյն իր գալուրոպեից սկսած առաջին անգամ սկսեց աշխուժություն ցույց տալ ու խոսել, ուստի և Պիեռն ուզեց ասել այն բոլորը, ինչ նրան դարձրեց այդպիսին, որպիսին էր այժմ։

— Իսկ քեզ ով է ասել, թե ի՞նչն է չարիք ուրիշի համար,— հարցրեց նա։

— Չարի՞ք։ Չարի՞ք,— ասավ Պիեռը։— Մենք բոլորս գիտենք, թե ի՞նչն է չարիք մեզ համար։

— Այո՛, մենք գիտենք. բայց այն չարիքը, որը գիտեմ չարիք է ինձ համար, ես չեմ կարող անել ուրիշին, — խոսում էր իշխան Անդրեյը հետզհետե ավելի ու ավելի աշխուժանալով, ըստ երևույթին կամենալով արտահայտել Պիեռին իր նոր հայացքը երևույթների մասին։ Նա ֆրանսերեն ասավ. Je ne connais dans la vie que deux maux bien réels։ c'est le remord et la maladie. Il n'est de bien que l'absence de ces maux[1]։ Ապրել ինձ համար և խուսափել միայն այդ երկու չարիքից. ահա իմ ամբողջ իմաստությունն այժմ։

— Իսկ սերը դեպի մերձավո՞րը, իսկ անձնազոհությո՞ւնը, — ասավ Պիեռը։ — Ո՛չ, ես չեմ կարող ձեզ հետ համաձայնել։ Ապրել միայն այնպես, որպեսզի չարիք չանել, որպեսզի չզղջալ. դա քիչ է։ Ես ապրում էի հենց այդպես, ապրում էի ինձ համար և խորտակեցի կյանքս։ Եվ միայն այժմ, երբ ես ապրում եմ, համենայն դեպս աշխատում եմ (համեստությունից Պիեռն ուղղեց խոսքը) ապրել ուրիշների համար, միայն այժմ եմ հասկացել կյանքի ամբողջ երջանկությունը։ Ո՛չ, ես ձեզ հետ չեմ համաձայնի, և դուք չեք էլ մտածում, թե ի՛նչ եք ասում։

Իշխան Անդրեյը լուռ նայեց Պիեռին և հեգնորեն ժըպտաց։

— Հիմա քրոջս՝ իշխանադուստր Մարիային կտեսնես։ Դուք իրար կհասկանաք, — ասավ նա։ — Գուցե դու քո տեսակետից իրավացի ես, — շարունակեց նա, փոքր-ինչ լռելով. — բայց յուրաքանչյուր մարդ ապրում է իր հասկացածի պես. դու ապրել ես քեզ համար և ասում ես, թե դրանով քիչ էր մընացել խորտակեիր կյանքդ, և երջանկություն զգացիր միայն այն ժամանակ, երբ սկսեցիր ապրել ուրիշների համար։ Իսկ ես հակառակն եմ զգացել։ Ես ապրել եմ փառքի համար (իսկ ի՞նչ է փառքը։ Նույն սերը դեպի ուրիշները, ուրիշների համար մի ինչ-որ բան անելու ցանկություն, նրանցից գովասանք ստանալու ցանկություն)։ Այդպես ես ապրել եմ ուրիշների համար և ոչ թե համարյա, այլ բոլորովին խորտակել եմ

[1] Ես կյանքում միայն երկու իսկական դժբախտություն գիտեմ. դա խղճի խայթն է և հիվանդությունը։ Եվ միակ բարիքը — այդ չարիքների բացակայությունն է։

կյանքս։ Եվ հանգստություն գտել եմ այն օրից, երբ սկսել եմ ապրել միայն ինձ համար։

— Բայց ինչպես կարող է մարդ միայն իր համար ապրել, — ասավ Պիեռը տաքանալով։ — Հապա որդի՞, քո՞ւյր, հա՞յր։

— Այդ բոլորը նույնպես ես եմ. դրանք օտարներ չեն, — ասավ իշխան Անդրեյը, — իսկ ուրիշները, մերձավորները, le prochain[1] ինչպես դուք և իշխանադուստր Մարիան եք ասում, դա է ժոլորության և չարիքի գլխավոր աղբյուրը։ Le prochain այդ նրանք են, Կիևի քո գյուղացիները, որոնց դու կամենում ես բարերարել։

Եվ նա հեգնորեն ու խրոխտալի հայացքով նայեց Պիեռին։ Նա, ըստ երևույթին ընդդիմության էր կոչում Պիեռին։

— Դուք կատակ եք անում, — հետզհետե ավելի ու ավելի աշխուժանալով խոսեց Պիեռը։ — Ի՞նչ մոլորություն կամ չարիք կարող է լինել այն բանում, ինչ ես ցանկացել եմ (շատ քիչ և վատ եմ կատարել), բայց ցանկացել եմ բարիք անել, և մի ինչ-որ բան էլ արել եմ։ Մի՞թե չարիք է այն, որ այդ թշվառ մարդիկ, մեր գյուղացիները, որ նույնպիսի մարդիկ են, ինչպես մենք, և մեզ նման աշխարհ են գալիս ու մեռնում՝ այլ հասկացողություն չունենալով աստծու և ճշմարտության մասին, քան ծեսն ու անմիտ աղոթքը, սովորեն, յուրացնեն ապագա կյանքի, հատուցման, պարգևատրման, մխիթարանքի սփոփիչ հավատալիքները։ Մի՞թե չարիք և մոլորություն է այն, որ մարդիկ անօգնական մեռնում են հիվանդությունից, մինչդեռ այնքան հեշտ է նյութապես օգնել նրանց, և ես նրանց տալիս եմ բժիշկ ու հիվանդանոց, իսկ ծերերին՝ ապաստարան։ Եվ մի՞թե շոշափելի ու անվիճելի բարիք չէ այն, երբ գյուղացին, նրա կինը՝ երեխայի հետ գիշեր ու ցերեկ հանգիստ չունեն, բայց ես նրանց տալիս եմ հանգիստ ու դադար, — խոսում էր Պիեռը շտապելով և ծպծպացնելով։ — Եվ ես արել եմ այդ, թեև վատ, թեև քիչ, բայց մի բան արել եմ այդ ուղղությամբ, և հիմա դուք ոչ միայն չեք կարող փոխել իմ կարծիքն այն բանի մասին, որ իմ արածը լավ է, չեք կարող նաև հավատացնել, որ դուք ինքներդ այդպես չեք մտածել։ Իսկ որ գըլխավորն է, — շարունակեց Պիեռը, — ահա թե ինչ գիտեմ ես և

[1] Մերձավորը։

գիտեմ հաստատապես, որ բարիք անելու այդ հաճույքն ի միակ հաստատ երջանկությունը կյանքում։

— Այո, եթե հարցն այդպես դնենք, դա ուրիշ բան է,— ասավ իշխան Անդրեյը։—Ես տուն եմ շինում, այգի եմ տնկում, իսկ դու՝ հիվանդանոցներ։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը կարող են ժամանցի ծառայել։ Իսկ թե ո՛րն է արդարացի, ո՛րը բարի, թո՛ղ դատի նա, ով ամեն ինչ գիտի, բայց ոչ մենք։— Հը՞, դու ուզում ես վիճել,— ավելացրեց նա,— համեցե՛ք։

Նրանք վեր կացան ճաշից և նստեցին տան առջևի հարթակի վրա, որ փոխարինում էր պատշգամբին։

— Դե, արի վիճենք,— ասավ իշխան Անդրեյը։— Դու ասում ես՝ դպրոցներ,— շարունակեց նա մատը ծալելով,— ուսուցում և այլն, այսինքն դու ուզում ես նրան դուրս բերել, ասավ նա ցույց տալով իրենց մոտից անցնող գդակը հանած գյուղացուն,— իր անասնական վիճակից և տալ նրան բարոյական սնունդ, իսկ ինձ թվում է, որ միակ հնարավոր երջանկությունը —անասնական երջանկությունն է, իսկ դու ուզում ես հենց դրանից զրկել նրան։ Ես նրան նախանձում եմ, իսկ դու ուզում ես նրան դարձնել ինձ նման, բայց չտալով նրան իմ միջոցները։ Հետո դու ասում ես, թե պետք է թեթևացնել նրա աշխատանքը։ Իսկ իմ կարծիքով ֆիզիկական աշխատանքը նրա համար նույնպիսի անհրաժեշտություն է, նույնպիսի պայման է նրա գոյության համար, ինչպես ինձ ու քեզ համար մտավոր աշխատանքը։ Դու չես կարող չմտածել։ Ես պատկում եմ քնելու զիշերվա ժամը 3-ին մոտ. ինձ այցելում են մտքեր և ես չեմ կարողանում քնել, շուտ եմ գալիս այս ու այն կողմի վրա, ու մինչև առավոտ չեմ քնում այն պատճառով, որովհետև մտածում եմ և չեմ կարող չմտածել, ինչպես որ նա չի կարող չհերկել, չհնձել. այլապես նա գինետուն կերթա և կհիվանդանա։ Ինչպես որ ես չեմ կարող տանել նրա ֆիզիկական սոսկալի աշխատանքը, կմեռնեմ մի շաբաթվա մեջ, այնպես էլ նա չի կարող տանել իմ ֆիզիկական պարապությունը, կհաստանա ու կմեռնի։ Երրորդ՝ էլ ուրիշ ի՞նչ ասիր դու։— Իշխան Անդրեյը ծալեց երրորդ մատը։— Հա, հիվանդանոցներ, դեղորայք։ Ենթադրենք նա կաթված է ստացել, մեռնում է, իսկ դու նրանից արյուն առար ու բուժեցիր։ Նա տասը տարի պետք է հաշմանդամ մնա և բեռ լինի բոլորի համար։ Նրա համար ավելի հանգիստ և լավ կլիներ մեռնել։ Մյուսները ծնվում են, և այնքա՞ն շատ են նրանք։ Ուրիշ բան է, եթե դու ափսոսայիր, որ դու մի ավելորդ բանվոր կորցրիր, ինչպես ես եմ նայում դրան, այլ դու սիրուց դրդված ուզում ես նրան բուժել։ Իսկ նրան այդ հարկավոր չէ։ Եվ հետո՝ դա ինչ երևակայություն է, թե բժշկությունն ումևիցե և երբևիցե բուժել է։ Սպանե՛լ՝ այո՛,— ասավ նա շարությամբ դեմքը խոժոռելով և երեսը Պիեռից շրջելով։

Իշխան Անդրեյն իր մտքերն արտահայտում էր այնքան պարզ ու որոշ, որ երևում էր, թե նա շատ անգամ է մտածել այդ մասին, ուստի և խոսում էր սիրով ու արագ, իբրև մի մարդ, որ երկար ժամանակ չի խոսել։ Նրա հայացքն աշխուժանում էր այնքան ավելի, որքան ավելի անհուսալի էին դառնում նրա դատողությունները։

— Ախ, դա սարսափելի է, սարսափելի,— ասավ Պիեռը։— Ես միայն չեմ հասկանում, թե ինչպես կարելի է ապրել այդպիսի մտքերով։ Ես էլ ունեցել եմ այդպիսի բոպեներ, այդ վերջերս էր, Մոսկվայում և ճանապարհին, բայց այդպիսի բոպեներին ես ընկնում եմ այն աստիճան, որ այլևս չեմ ապրում, ամեն ինչ ինձ համար դառնում է զզվելի... գլխավորապես՝ ես ինքս։ Այդպիսի բոպեներին ես չեմ ուտում, չեմ լվացվում... Իսկ դուք ինչպե՞ս...

— Ինչու չլվացվել. դա հակառակ է մաքրասիրության,— ասավ իշխան Անդրեյը։— Ընդհակառակը, մարդ պետք է աշխատի իր կյանքը դարձնել որքան կարելի է ավելի հաճելի։ Ես ապրում եմ և դրանում մեղավոր չեմ. նշանակում է պետք է աշխատել քիչ ավելի լավ ապրել, չխանգարելով ոչ ոքի, ապրել մինչև մահ։

— Բայց ի՞նչն է ձեզ դրդում ապրել այդպիսի մտքերով։ Պիտի նստես առանց շարժվելու, առանց մի բան ձեռնարկելու...

— Կյանքն առանց այն էլ մեզ հանգիստ չի թողնում։ Ես ուրախ կլինեի ոչինչ չանել, բայց ահա այստեղի աղնվականությունը պատիվ է արել ինձ պարագլուխ ընտրել. ես հազիվ հրաժարվեցի։ Նրանք չէին կարողանում հասկանալ, որ ես չունեմ այն, ինչ հարկավոր է. իմ մեջ չկա այն որոշ բարեհոգի և մտահոգ դատարկությունը, որ պետք է այդ բանի համար։ Հետո՝

ահա այս տունը, որ պետք էր կառուցել, որպեսզի իմ անկյունն ունենամ, ուր կարելի է հանգիստ լինել։ Հիմա էլ այս երկրապահ զինվորությունը։

— Ինչո՞ւ բանակում չեք ծառայում։

— Աուստերլիցից հետո՞, —մոայլորեն ասավ իշխան Անդրեյը։ — Ո՛չ, խոնարհաբար շնորհակալ եմ. ես խոսք եմ տվել, որ ռուսական գործող բանակում չեմ ծառայելու։ Եվ չեմ ծառայի... Եթե Բոնապարտն անգամ լիներ այստեղ՝ Սմոլենսկի մոտ և սպառնար Լիսիե Գորիին, այն ժամանակ էլ չէի ծառայի ռուս բանակում։ Այդպես էլ իմացիր, — հանդարտվելով շարունակեց իշխան Անդրեյը։ — Այժմ երկրապահների զինվորագրությունն է, հայրս 3-րդ շրջանի գլխավոր հրամանատարն է, և ծառայությունից ազատվելու միակ միջոցը՝ նրա ձեռքի տակ լինելն է։

— Կնշանակի դուք ծառայո՞ւմ եք։

— Ծառայում եմ։

— Նա մի փոքր լռեց։

— Ուրեմն ինչո՞ւ եք ծառայում։

— Ահա թե ինչո՛ւ։ Հայրս իր դարի ամենանշանավոր մարդկանցից մեկն է։ Բայց նա ծերանում է, ու ոչ թե մի դաժան մարդ է նա, այլ անչափ գործունյա բնավորության տեր։ Նա սարսափելի է նրանով, որ սովոր է անսահմանափակ իշխանության, իսկ այժմ՝ այս իշխանությամբ, որ տվել է նրան թագավորը, նշանակելով նրան երկրապահ զորքի գլխավոր հրամանատար։ Երկու շաբաթ առաջ եթե ես երկու ժամ ուշանայի, նա կկախեր Յուխնովում եղած գրագրին, — ասավ իշխան Անդրեյը ժպտալով։ —Ուրեմն ես ծառայում եմ նրա համար, որովհետև բացի ինձնից, ոչ ոք ազդեցություն չունի հորս վրա, և ես մի օր մի տեղ նրան ետ կպահեմ մի քայլից, որի պատճառով նա հետո շատ պիտի տանջվեր։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք ուրեմն։

— Այո, mais ce n'est pas comme vous l'entendez[1], — շարունակեց իշխան Անդրեյը։ — Ես ոչ մի բարիք չեմ ցանկացել ու չեմ ցանկանում այդ սրիկա գրագրին, որ ինչ-որ կոշիկներ գողացավ երկրապահներից. ես մինչև անգամ շատ գոհ

[1] Բայց այդ այնպես չէ, ինչպես դուք եք հասկանում։

կլինեի տեսնել նրան կախված, բայց հորս խղճում եմ, այսինքն՝ կրկին ինձ։

Իշխան Անդրեյը հետզհետե ավելի ու ավելի ոգևորվում էր։ Նրա աչքերը տենդագին վառվում էին մանավանդ այն ժամանակ, երբ նա աշխատում էր ապացուցել Պիեռին, որ իր վարմունքի մեջ երբեք մերձավորներին բարիք անելու ցանկություն չի եղել։

— Ահա, դու ուզում ես գյուղացիներին ազատագրել, — շարունակեց նա, — դա շատ լավ բան է, բայց ոչ քեզ համար. դու, կարծում եմ, ոչ ոքին մահացու չես գանակոծել և Սիբիր չես քշել, ես առավել գյուղացիների համար։ Եթե նրանց ծեծում են, մտրակում, Սիբիր քշում, ապա ես կարծում եմ, այդ բանը նրանց համար բնավ վատ չի։ Սիբիրում նա կվարի նույն անասնական կյանքը, իսկ մարմնի վրայի սպիները կլավանան, և նա նույնքան երջանիկ կլինի, ինչպես եղել է առաջ։ Իսկ դա հարկավոր է այն մարդկանց համար, որոնք մեռնում են բարոյապես, զղջում են վաստակում իրենց համար, և այդ զղջումը խեղդելով, կոպտանում են այն բանից, որ իրենք հնարավորություն ունեն մարդկանց մահապատժի ենթարկել տեղիանտեղի։ Ահա ո՛ւմ եմ ես խղճում և ո՛ւմ համար կցանկանայի ազատագրել գյուղացիներին։ Դու գուցե չես տեսել, բայց ես տեսել եմ, թե ինչպես լավ մարդիկ՝ դաստիարակված անսահմանափակ իշխանության ավանդություններով, հետագայում, երբ նրանք մեծանում են, հասակներն առնում, երբ դառնում են ավելի դյուրագրգիռ, դառնում են դաժան, կոպիտ. գիտակցում են այդ բանը, բայց չեն կարողանում զսպել իրենց և հետզհետե ավելի ու ավելի դժբախտ են դառնում։

Իշխան Անդրեյը խոսում էր այնպիսի ոգևորությամբ, որ Պիեռն ակամա մտածում էր, որ այդ մտքերն Անդրեյին թելադրել է հայրը։

Պիեռը նրան ոչինչ չպատասխանեց։

— Ահա թե ի՛նչն է խղճալի — մարդկային արժանապատվությունը, խղճի հանգստությունը, մաքրությունը, և ոչ թե նրանց մեջքն ու ճակատը, որոնց որքան կուզես մտրակիր, ծեծիր, էլի կմնա նույն մեջքն ու նույն ճակատը։

— Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ, ես երբեք չեմ համաձայնի ձեզ հետ, — ասավ Պիեռը։

XII

Երեկոյան իշխան Անդրեյն ու Պիեռը կառք նստեցին ու գնացին Լիսիե Գորի։ Իշխան Անդրեյը, Պիեռին նայելով, երբեմն խզում էր լռությունն իր խոսակցությամբ, որից երևում էր, որ նա գտնվում էր լավ տրամադրության մեջ։

Նա, Պիեռին դաշտերը ցույց տալով, խոսում էր իր տնտեսության կատարելագործության մասին։

Պիեռը նրան լսում էր մռայլ, պատասխանում էր կարճ նախադասություններով և կարծես թե խորասուզված էր մրտքերի մեջ։ Նա մտածում էր, որ իշխան Անդրեյը դժբախտ է, որ նա մոլորված է, որ չի ճանաչում իսկական լույսը և որ ինքը՝ Պիեռը, պետք է օգնության հասնի նրան, լուսավորի ու բարձրացնի նրան։ Բայց հենց որ Պիեռը մտածում էր, թե ի՛նչ է ասելու, նա նախազգում էր, որ իշխան Անդրեյն իր մի խոսքով, մի արգումենտով կտապալի նրա ուսմունքի ողջ բովանդակությունը, ուստի և վախենում էր սկսել, վախենում էր ծաղրի հանել իր սիրած սրբությունը։

— Ոչ, ինչո՞ւ եք այդպես կարծում,— հանկարծ սկսեց Պիեռը, գլուխը հակելով և ընդունելով հարու տվող եզան տեսք,— դուք ինչո՞ւ եք այդպես կարծում։ Դուք այդպես չպետք է մտածեք։

— Ինչի՞ մասին,— հարցրեց իշխան Անդրեյը զարմացած։

— Կյանքի մասին, մարդու կոչման մասին։ Այդ չի կարող լինել։ Ես էլ այդպես էի մտածում, և ինձ փրկեց գիտե՞ք ինչը։ Մասոնությունը։ Ոչ. մի ժպտաք։ Մասոնությունը՝ դա ոչ թե կրոնական ծիսական աղանդ է, ինչպես կարծում էի և ես, այլ միակ և լավագույն արտահայտությունն է մարդկության լավագույն հավերժական հատկությունների։

Ու Պիեռն սկսեց իշխան Անդրեյին բացատրել մասոնությունը, ինչպես ինքն էր հասկանում այն։ Նա ասում էր, որ մասոնությունը քրիստոնեության ուսմունքն է՝ ազատագրված պետական և կրոնական կապանքներից. հավասարության, եղբայրության և սիրո մի ուսմունք։

— Միայն մեր սրբազան եղբայրությունն է, որ իսկական իմաստ ունի կյանքի մեջ. մնացած բոլորը՝ երազ է,— ասում էր Պիեռը.— դուք, բարեկամ, հասկացեք, որ այդ միաբանու-

թյունից դուրս ամեն ինչ լի է կեղծիքով ու անարդարությամբ, և ես համամիտ եմ ձեզ, որ խոհեմ ու բարի մարդուն ոչինչ չի մնում անել, բայց եթե այն, ինչպես դուք, ապրել իր ամբողջ կյանքը և աշխատել ուրիշներին չխանգարել։ Բայց դուք յուրացրեք մեր հիմնական համոզմունքները, մտեք մեր եղբայրության մեջ, ձեզ հանձնեցեք մեզ, թույլ տվեք ձեզ ղեկավարել և դուք իսկույն կզգաք, ինչպես և ես զգացի, որ դուք մասոն եք այն հսկայական անտեսանելի շղթայի, որի սկիզբը թաքնված է երկնքում,— ասում էր Պիեռը։

Իշխան Անդրեյը լուռ, առջևը նայելով, լսում էր Պիեռի ասածները։ Մի քանի անգամ, կառքի աղմուկի պատճառով, նա լավ չլսեց Պիեռին, ուստի և նորից հարցրեց չլսած խոսքերը։ Իշխան Անդրեյի աչքերում վառվող առանձին փայլից և նրա լռությունից Պիեռը նկատեց, որ իր խոսքերը իզուր չեն, որ իշխան Անդրեյը չի ընդհատի իրեն և չի ծիծաղի իր վրա։

Կառքը մոտեցավ վարարած գետին, որից պետք է անցնեին նրանք պարոմով։ Մինչ կառքն ու ձիերը տեղավորվում էին պարոմի վրա, նրանք էլ բարձրացան։

Իշխան Անդրեյը, ճաղերին կոթնած, լուռ նայում էր մայր մտնող արևի շողերից փայլող ջրի հոսանքին։

— Հը՞, դուք այդ մասին ի՞նչ կարծիք ունեք,— հարցրեց Պիեռը,— ինչո՞ւ եք լռում։

— Ինչ կարծիք ունե՞մ։ Ես ձեզ լսում եմ։ Այդ բոլորն այդպես է,— ասավ իշխան Անդրեյը,— բայց դու ասում ես՝ մտի՛ր մեր եղբայրության մեջ, և մենք քեզ ցույց կտանք կյանքի նպատակն ու մարդու կոչումը և աշխարհը կառավարող օրենքները։ Իսկ ով ենք մենք — մարդիկ։ Ինչի՞ց է, որ դուք ամեն բան գիտեք։ Ինչո՞ւ միայն ես չեմ տեսնում այն, ինչ դուք եք տեսնում։ Դուք տեսնում եք երկրի վրա բարվո և ճշմարտության թագավորությունը, իսկ ես չեմ տեսնում այն։

Պիեռն ընդմիջեց նրան։

— Հավատո՞ւմ եք դուք արդյոք հանդերձյալ կյանքին,— հարցրեց նա։

— Հանդերձյալ կյանքի՞ն,— կրկնեց իշխան Անդրեյը, բայց Պիեռը նրան ժամանակ չտվեց պատասխանելու և նրա այդ կրկնությունն ընդունեց իբրև բացասում, մանավանդ, որ

նրան ծանոթ էին իշխան Անդրեյի աթեիստական համոզումները։

— Դուք ասում եք, որ երկրի վրա չեք կարողանում տեսնել բարվո և ճշմարտության թագավորությունը։ Ես նույնպես չեմ տեսել և չի էլ կարելի այն տեսնել, եթե մենք մեր կյանքին նայենք իբրև ամեն բանի վախճանի։ Երկրի վրա, հենց այս երկրի վրա (Պիեռը ցույց տվեց դաշտը) չկա ճշմարտություն — ամեն ինչ սուտ է ու չարիք, բայց աշխարհում, ամբողջ աշխարհում՝ կա ճշմարտության թագավորություն, և մենք հիմա երկրի զավակներ ենք, իսկ հավիտենապես՝ զավակներն ենք ամբողջ աշխարհի։ Մի՞թե ես իմ հոգում չեմ զգում, որ ես մասնիկն եմ այս մեծ, ներդաշնակ ամբողջի. մի՞թե ես չեմ զգում, որ ես այս ահագին անթիվ անհամար էակների մեջ, ուր երևան է գալիս աստվածությունը, — բարձրագույն ուժը, ինչպես կուզեք անվանեցեք, — ես մի օղակն եմ, մի աստիճանը՝ ստորին էակներից դեպի բարձր էակները։ Եթե ես պարզ տեսնում եմ այդ սանդուղքը, որ բույսից տանում է դեպի մարդը, էլ ինչո՞ւ համար պետք է ենթադրեմ, որ այդ սանդուղքն ընդհատվում է ինձնով և չի տանում ավելի ու ավելի վեր։ Ես զգում եմ, որ ես ոչ միայն չեմ կարող անհայտանալ, ինչպես չի անհայտանում և ոչ մի բան աշխարհում, այլ որ ես միշտ կլինեմ և միշտ եղել եմ։ Զգում եմ, որ ինձնից բացի, վերևում ապրում են ոգիներ և որ այս աշխարհում ճշմարտություն կա։

— Այո, դա Հերդերի ուսմունքն է, — ասավ իշխան Անդրեյը, — բայց ոչ թե այդ պետք է ինձ համոզի, հոգիս, այլ կյանքը և մահը. ահա՛ թե ինչն է համոզում։ Համոզում է այն, երբ տեսնում ես քեզ համար թանկագին մի էակ, որ կապված է քեզ հետ, որի առաջ դու մեղավոր ես եղել և հույս ես ունեցել արդարանալ (իշխան Անդրեյի ձայնը դողաց և նա երեսը շրջեց) և հանկարծ այդ էակը տանջվում է, չարչարվում և դադարում է գոյություն ունենալուց։ Ինչո՞ւ։ Չի կարող, որ պատասխան չլինի։ Եվ ես հավատում եմ, որ այդ պատասխանը կա... Ահա թե ինչն է համոզում. ահա՛ թե ի՛նչը համոզեց ինձ, — ասավ իշխան Անդրեյը։

— Դե, իհարկե, իհարկե, — ասավ Պիեռը, — մի՞թե ես էլ նույնը չեմ ասում։

— Ոչ։ Ես միայն ասում եմ, որ հանդերձյալ կյանքի անհրաժեշտության մեջ համոզում են ոչ թե ապացույցները, այլ այն, որ երբ կյանքում ձեռ-ձեռի տված գնում ես մեկի հետ, և հանկարծ նա անհայտանա այնտեղ, ոչ մի տեղում, դու ես կանգ ես առնում այդ անդունդի առաջ և նայում այնտեղ։ Եվ ես նայեցի...

— Է՛հ, ուրեմն ի՞նչ։ Դուք գիտեք, որ կա այնտեղ և կա ինչ-որ մեկը։ Այնտեղ հանդերձյալ կյանքն է։ Ինչ-որ մեկը՝ աստված է։

Իշխան Անդրեյը չպատասխանեց։ Կառքն ու ձիերը վաղուց արդեն տարվել էին մյուս ափը և արդեն լծված էին, իսկ արևը կիսով չափ թաքնվել էր և իրիկվա սառնամանիքը սառցե աստղեր էր գոյացնում լճակների վրա, սակայն Պիեռն ու Անդրեյը, ի զարմանս լաքեյների, կառապանների ու նավազների, դեռ պարոմի վրա կանգնած, խոսում էին։

— Եթե կա աստված և կա հանդերձյալ կյանք, ուրեմն կա ճշմարտություն, կա առաքինություն, և մարդու բարձրագույն երջանկությունն ա՛յն է, որ նա ձգտի դրանց հասնելուն։ Պետք է ապրել, պետք է սիրել, պետք է հավատալ, — ասում էր Պիեռը, — որ մենք ապրում ենք ոչ միայն ներկայումս, այս մի կտոր հողի վրա, այլ ապրել ենք և ապրելու ենք հավիտյան, այնտեղ, ամենի մեջ (նա ցույց տվեց երկինքը)։

Իշխան Անդրեյը, պարոմի ճաղերին հենված, լսում էր Պիեռին և նայում արևի կարմիր արտացոլումը կապույտին տվող ջրի հոսանքում։ Պիեռը լռեց։ Բոլորովին խաղաղ էր։ Պարոմը վաղուց ափ էր հասել և միայն ջրի ալիքներն էին, որ թույլ ճողփյունով զարկվում էին պարոմի հատակին։ Իշխան Անդրեյին թվում էր, թե ալիքների այդ շառաչը Պիեռի խոսքերին ավելացնում էր. «Ճի՛շտ է, հավատա՛ դրան»։

Իշխան Անդրեյը հառաչեց և մանկական շողուն, քնքուշ հայացքով նայեց Պիեռի կարմրած, խանդավառ դեմքին, որ միշտ ամաչկոտ էր առաջնություն ցույց տվող բարեկամի առջև։

— Այո՛, եթե այդ այդպես լիներ, — ասավ նա։ — Բայց գնանք նստենք, — ավելացրեց իշխան Անդրեյը և պարոմից դուրս գալով՝ նայեց երկնքին, որ նրան ցույց տվեց Պիեռը, և, առաջին անգամ Աուստերլիցի ճակատամարտից հետո, նա

տեսավ այն բարձր, հավիտենական երկինքը, որ տեսել էր Աուստերլիցի դաշտում պառկած վիճակում և նրա հոգում հանկարծ խնդագին ու կենսուրախ զարթնեց մի ինչ-որ նոր բան, որ վաղուց նիրհել, լռել էր, մի ինչ-որ լավագույն բան, որ կար նրա մեջ։ Բայց այդ զգացումը շուտով չքացավ, երբ իշխան Անդրեյը կրկին վերադարձավ կյանքի սովորական պայմաններին, սակայն նա գիտեր, որ այդ զգացումը, որն ինքը չէր կարողանում զարգացնել, ապրում էր իր մեջ։ Պիեռի հետ ունեցած տեսակցությունը իշխան Անդրեյի համար եղավ մի շրջան, որով սկսվեց նրա, թեև արտաքուստ նույն, բայց նրա ներքին աշխարհում մի նոր կյանք։

XIII

Մթնել էր արդեն, երբ իշխան Անդրեյն ու Պիեռը մոտեցան Լիսիե Գորիի տան գլխավոր մուտքին։ Այն ժամանակ, երբ նրանք մոտենում էին տանը, իշխան Անդրեյը ժպտալով Պիեռի ուշադրությունը հրավիրեց այն իրարանցումի վրա, որ կատարվում էր տան ետևի պատշգամբի մոտ։ Մի կորաքամակ պառավ՝ մախաղը մեջքին, և սև հանդերձով ու երկար մազերով կարճ տղամարդ, տեսնելով մոտեցող կառքը, վազեվազ շտապեցին դեպի դարպասը։ Երկու ուրիշ կին ևս վազեցին նրանց ետևից և բոլոր չորսը մ;ասին՝ ետ-ետ նայելով դեպի կառքը, վախեցած բարձրացան տան ետևի պատշգամբը։

— Դրանք Մաշայի «աստծո մարդիկն» են, — ասավ իշխան Անդրեյը։ — Նրանք մեզ ընդունեցին հորս տեղ։ Միայն ա՛յս բանում է, որ քույրս չի հնազանդում հորս։ Հայրս պատվիրում է վոնդել այդ թափառականներին, բայց նա՝ Մաշան շարունակում է դրանց ընդունել։

— Ի՞նչ բաներ են այդ «աստծու մարդիկ»-ը, — հարցրեց Պիեռը։

Իշխան Անդրեյը չկարողացավ նրան պատասխանել։ Ծառաները դուրս եկան ընդառաջ, և նա սկսեց հարց ու փորձ, թե որտե՞ղ է ծեր իշխանը և շո՞ւտ կգա արդյոք։

Ծեր իշխանը դեռ քաղաքումն էր. նրան սպասում էին ամեն րոպե։

Իշխան Անդրեյը Պիեռին տարավ իր հարկաբաժինը, որ

միշտ պատրաստ էր նրա համար հոր տանը, իսկ ինքը գնաց մանկանոց։

— Գնանք քրոջս մոտ, — ասավ իշխան Անդրեյը վերադառնալով Պիեռի մոտ։ — Ես նրան դեռ չեմ տեսել. նա հիմա թաքնվում է կամ նստել է իր թափառական-ուխտավորների մոտ։ Տե՛ղն է նրան. նա թեև կքաշվի, կամաչի, բայց դու կբաեսնես նրա այդ «աստծու մարդկանց»։ C'est curieux, ma parole[1].

— Qu'est-ce que c'est que[2] «աստծու մարդի՞կ», — հարցրեց Պիեռը։

— Գնանք՝ կտեսնես։

Իշխանադուստր Մարիան իսկապես շփոթվեց և պուտպուտ կարմրեց, երբ եղբայրն ու հյուրը ներս մտան։ Նրա կոկիկ դուրեկան սենյակում, ուր լամպը վառվում էր սրբապատկերի առաջ, բազմոցի վրա, իշխանադստեր կողքին, ինքնաեռի ստվերում, նստած էր երկար քթով և երկար մազերով մի շահել տղա՝ կուսակրոնի փարաջայով։

Նրանց կողքին, թիկնաթոռին նստած էր մի կնճռոտ, նիհար պառավ՝ մանկական դեմքի հատուկ հեզ արտահայտությամբ։

— André, pourquoi ne pas m'avoir prévenu?[3] — ասավ իշխանադուստրը հեզ կշտամբանքով, կանգնելով իր թափառական հյուրերի առջև, ինչպես թռչուն իր ճուտերի առաջ։

— Charmée de vous voir. Je suis très contente de vous voir[4], — ասավ նա Պիեռին այն ժամանակ, երբ վերջինս համբուրում էր նրա ձեռը։ Իշխանադուստր Մարիան Պիեռին ճանաչում էր դեռ երեխա ժամանակից, և այժմ նրա բարեկամությունը Անդրեյի հետ, նրա և կնոջ միջև պատահած դժբախտությունը, և որ գլխավորն է, նրա պարզ, բարի դեմքը իշխանադստեր մեջ առաջ բերին լավ վերաբերմունք դեպի Պիեռը։ Նա իր գեղեցիկ շողուն աչքերով նայում էր Պիեռին և կարծես ասում էր. «Ես ձեզ շատ եմ սիրում, բայց խնդրեմ հյուրերիս

---

[1] Դա հետաքրքրական է, ազնիվ խոսք։

[2] Ի՞նչ բան են։

[3] Անդրե, ինչո՞ւ չնախազգուշացրիր ինձ։

[4] Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար։ Շատ գոհ եմ, որ տեսնում եմ ձեզ։

վրա չծիծաղեք»։ Ողջույնի առաջին խոսքերը փոխանակելով՝ նրանք նստեցին։

— Ա՜, Իվանուշկան էլ այստեղ է,— ասավ իշխան Անդրեյը ժպտադեմ, ցույց տալով ջահել թափառականին։

— André!— ասավ իշխանադուստր Մարիան աղերսաձայն։

— Il faut que vous sachiez, que c'est une femme[1],— ասավ Անդրեյը Պիեռին։

— André, au nom de dieu[2],— կրկնեց իշխանադուստր Մարիան։

Երևում էր, որ իշխան Անդրեյի հեգնական վերաբերմունքը դեպի թափառական-ուխտավորները և իշխանադուստր Մարիայի անօգուտ միջամտությունը նրանց համար՝ սովորական բաներ էին նրանց հարաբերության մեջ։

— Mais, ma bonne amie,— ասավ իշխան Անդրեյը,— vous devriez au contraire m'être reconnaissante de ce que j'explique à Pierre votre intimité avec ce jeune homme[3].

— Vraiment?[4]— ասավ Պիեռը՝ ակնոցի միջով հետաքրքրությամբ ու լուրջ (որի համար իշխանադուստր Մարիան առանձնապես շնորհակալ եղավ նրանից) նայելով Իվանուշկայի դեմքին, որը հասկանալով, թե խոսքն իր մասին է, խորամանկ աչքերով դիտեց բոլորին։

Իշխանադուստր Մարիան բոլորովին իզուր շփոթվեց յուրայիններ համար։ Նրանք բնավ չէին քաշվում։ Պառավը, աչքերը ցած գցած, բայց ներս եկածներին խեթ նայելով, թեյի բաժակը բերանն ի վայր բաժակալի վրա դրած ու մոտն էլ մի կտոր կծած շաքար, հանգիստ ու անշարժ նստել էր իր թիկնաթոռին և սպասում էր, որ էլի թեյ առաջարկեն։ Իվանուշկան թեյը բաժակալով խմելով, իր խորամանկ, կանացի աչքերով տակեհան նայում էր երիտասարդներին։

— Որտե՞ղ էիք, Կիևո՞ւմ,— հարցրեց իշխան Անդրեյը պառավին։

[1] Մի մոռացիր, որ սա կին է։

[2] Անդրեյ, ի սեր աստծու։

[3] Բայց սիրելի բարեկամուհիս, դու պետք է շնորհակալ լինես ինձնից, որ ես բացատրում եմ Պիեռին քո մոտիկությունը այս երիտասարդի հետ։

[4] Իսկապե՞ս։

— Էնտեղ էի,— պատասխանեց զրուցասեր պառավը,— ծննդին սրբերի մոտ արժանացա սուրբ հաղորդության, իսկ հիմի, որդի, Կոլյազինից եմ գալի, սուրբ շնորհ է գտնվել էնտեղ...

— Իսկ դու, Իվանուշկա, դու ի՞նչ ես անում։

— Ես մենակ ինձ համար եմ ման գալի, պարոն,— ասաց Իվանուշկան, աշխատելով թավ ձայնով խոսել։ —Յուխնովում միայն Պելագեային պատահեցի։

Պելագեան ընդհատեց իր ընկերոջը. ըստ երևույթին նա ուզում էր պատմել՝ ի՛նչ ինքը տեսել էր։

— Կոլյազինում, որդի, մեծ շնորհ է գտնվել։

— Ի՞նչ. նոր մասունքնե՞ր,— հարցրեց իշխան Անդրեյը։

— Բավական է, Անդրեյ,— ասավ իշխանադուստր Մարիան։— Մի՛ պատմիր, Պելագեուշկա։

— Ինչի՞... որ, քե մատաղ, ինչի՞ չպատմեմ որ։ Ես սրան սիրում եմ։ Սա բարի մարդ է. աստծու ընտրյալ. իմ բարերարն է. մի անգամ 10 ռուբլի տվեց, մի՛տս է։ Երբ ես Կիևումն էի, խև Կիրյուշան,— իսկական աստծու մարդը, որ ամառ ձմեռ բոբիկ է ման գալի,— ասում է ինձ. «Ինչ ես ման գալի, ասում է, սա քու տեղը չի»։ «Գնա, ասում է,— Կոլյազին, էնտեղ գտել են մայր աստվածածնի հրաշագործ պատկերը»։ Էդ խոսքերից հետո ես մնաս բարով ասի սրբերին ու գնացի։

Բոլորը լուռ էին, միայն ուխտավոր կինն էր խոսում հանդարտ ձայնով և օդ շնչելով։

— Եկա էդպես, ախպերս, ու ժողովուրդն ասում է ինձ. «Մեծ շնորհք է գտնվել, սուրբ մայր աստվածածնի թշերից մեռոն է կաթում»։

— Դե՛ լա՛վ, լա՛վ, հետո կպատմես,— կարմրելով ասավ իշխանադուստր Մարիան։

— Թույլ տվեք հարցնել նրան,— ասավ Պիեռը։— Դու ինքդ տեսա՞ր,— հարցրեց նա։

— Ի՞նչպես չէ, քե մատաղ, հենց ինքս արժանացա։ Երեսն էնպես պայծառ էր, ոնց որ երկնային լույսը, իսկ թշերից էլ էնպես կաթո՞ւմ էր հա կաթում...

— Չէ՞ դա սուտ է,— միամտաբար ասավ Պիեռը՝ ուշադիր լսելով ուխտավոր կնոջը։

— Ա՜խ, էդ ինչեր ես ասում, որդիս, — սարսափով ասավ Պելագեան, դիմելով իշխանադուստր Մարիայի օգնության։

— Դրանով ժողովրդին խաբում են, — կրկնեց Պիեռը։

— Տեր Հիսուս-Քրիստոս, — խաչակնքելով ասավ պառավը։ — Օ՜հ, մի՛ ասի։ Էդպես մի ենարալ էլ չի հավատացել, ասել է. «Վարդապետները խաբում են», ու հենց ասել է, չ ասել՝ տեղնուտեղը կուրացել է։ Ու մի օր երազում տեսել է, թե ինչպես իր մոտ է եկել Պեչորայի աստվածածինն ու ասել. «Հավատա՛ ինձ, ես քեզ կբուժեմ»։ Ու երանալն սկսել է խնդրել, թե. «Տա՛ր ինձ, ասում է, տա՛ր նրա մոտ»։ Ես քեզ իսկական ճշմարիտ բան եմ ասում, աչքովս եմ տեսել։ Տարանք էդ կույր մարդուն ուղիղ նրա — Պեչորայի աստվածածնի մոտ. մոտեցավ երանալը, ընկավ երեսի վրա և ասում է. «Աստղջացրու ինձ. ինչ որ թագավորից պարգև եմ ստացել, ասում է, բոլորը քեզ կտամ»։ Աչքովս եմ տեսել, քե մատաղ։ Աստղն էլ պատկերի վրա երևաց։ Հետո գիտեք ի՞նչ. աչքերը բացվեցին։ Էդպես բաներ մի ասեք, մեղք է, աստված կպատժի, — խրատական ձևով դիմեց նա Պիեռին։

— Այդ ինչպե՞ս աստղը երևաց սրբի պատկերի վրա, — հարցրեց Պիեռը։

— Աստվածամո՞րն էլ գեներալ դարձրին, — ասավ իշխան Անդրեյը ժպտալով։

Պելագեան հանկարծ գունատվեց և ձեռներն իրար զարկեց։

— Է՜, որդի, մեղք ես, որդու տեր ես, — ասավ պառավը գունատությունից հանկարծ կարմրելով։ — Էդ ի՞նչ ասիր դուս աստված թողություն տա քեզ։ — Նա խաչակնքեց երեսը։ — Տեր, ներիր սրան։ — Քուրս, էս ի՞նչ բան է, — դիմեց նա իշխանադուստր Մարիային։ — Նա վեր կացավ և արցունքները հազիվ զսպելով, սկսեց հավաքել իր պարկը։ Երևում էր, որ նա և՛ սարսափում էր և՛ ամաչում, որ ինքն օգտվում է մի տան բարիքներից, ուր չէր սպասում այդպիսի խոսքեր, և՛ ցավում էր, որ ինքը զրկվելու է այդ տան բարերարությունից։

— Է՛, ի՞նչ բավականություն դրանից, — ասավ իշխանադուստր Մարիան։ — Ինչո՞ւ եկաք ինձ մոտ...

— Չէ, Պելագուշկա, ես կատակ եմ անում, — ասավ Պիեռը։ — Princesse, ma parole, je n'ai pas voulu l'offenser[1], ես միայն այնպես։ — Դու ուրիշ բան մի կարծիր, Պելագեա, ես կատակ արի, — ասավ նա ամաչկոտ ժպտալով և կամենալով հարթել իր մեղքը։ — Չէ՞ որ ես կատակ արի միայն։

Պառավը մնաց անվստահ կանգնած. սակայն Պիեռի դեմքին մի այնպիսի անկեղծ զղջում կար և իշխան Անդրեյը մերթ Պելագեային, մերթ Պիեռին նայում էր այնպիսի հեզությամբ, որ պառավը կամաց-կամաց հանգստացավ։

[1] Իշխանադուստր, ես իսկապես չէի ուզում նրան վիրավորել։

XIV

Պառավը հանգստացավ և նորից խոսակցության բռնվելով, երկար պատմեց հայր Ամֆիլոքի մասին, թե նա այնպիսի սուրբ կյանք է վարում, որ նրա ձեռքից խնկի հոտ է գալիս. պատմեց և այն, թե ինչպես իր ծանոթ կուսակրոնները, վերջին անգամ Կիև ուխտ գնացած ժամանակ, տվել են իրեն քարանձավների բանալիները և ինչպես ինքը չոր հացի կտորներ վերցնելով, երկու օր ու գիշեր մնացել է քարանձավներում՝ սրբերի մոտ։ «Աղոթում էի մեկին, պաշտում, հետո գնում մի ուրիշի մոտ։ Քնում, նորից գնում, համբուրում էի ու էնպես մի խաղաղություն էր, ձեզ մատաղ, էնպես լավ, որ չէի ուզում լուս աշխարհ դուրս գամ»։

Պիեռն ուշադիր ու լուրջ լսում էր նրան։ Իշխան Անդրեյը դուրս եկավ սենյակից։ Նրանից հետո էլ իշխանադուստր Մարիան, թողնելով, որ հյուրերը թեյ խմեն վերջացնեն, Պիեռին տարավ հյուրասրահ։

— Դուք շատ բարի եք, — ասավ նա Պիեռին։

— Ախ, գիտեք, ճշմարիտ, ես չէի ուզում վիրավորել նրան. ես լավ եմ հասկանում ու բարձր եմ գնահատում այդ զգացմունքները։

Իշխանադուստր Մարիան լուռ նայեց նրան և մեղմ ժպտաց։

— Չէ՞ որ ես ձեզ վաղուց եմ ճանաչում և եղբոր պես սիրում եմ, — ասավ իշխանադուստր Մարիան։ — Դուք ինչպե՞ս եք գտնում Անդրեյին, — հարցրեց նա արագ, միջոց չտալով, որ Պիեռը որևէ բան ասի ի պատասխան իր սիրալիր խոսքերին։ — Նա ինձ շատ է անհանգստացնում։ Նրա առողջությունը մեռները լավ է լինում, բայց անցած գարնան վերքը բացվեց,

և բժիշկը հայտնեց, որ պետք է գնա բուժվելու։ Բարոյապես էլ շատ եմ անհանգստանում նրա համար։ Նա այնպիսի բնավորություն չունի, ինչպես մենք — կանայքս, որ կարողանա լացով անցկացնել իր վիշտը։ Նա իր վիշտը սրտումն է կրում։ Նա հիմա ուրախ, զվարթ է. դա ձեր գալն է ազդել վրան. շատ քիչ է պատահում, որ նա այդպիսի տրամադրության մեջ լինի։ Եթե դուք կարողանայի՞ք համոզել նրան արտասահման գնալ։ Նրան հարկավոր է գործունեություն, իսկ այս միօրինակ, անաղմուկ կյանքը կործանում է նրան։ Ուրիշներն այդ չեն նկատում, բայց ես տեսնում եմ։

Ժամը տասին սպասավորները, լսելով իշխանի մոտեցող կառքի բոժոժների ձայնը, վազեցին դեպի տան պատշգամբը։ Իշխան Անդրեյը՝ Պիեռի հետ նույնպես պատշգամբ դուրս եկան։

— Դա ո՞վ է, — հարցրեց իշխանը կառքից իջնելով և Պիեռին նկատելով։

— Ա՜, շատ ուրախ եմ, համբուրի՛ր, — ասավ նա, ճանաչելով, թե ո՛վ էր անծանոթ երիտասարդը։

Ծեր իշխանը, լավ տրամադրության մեջ լինելով, գուրգուրեց Պիեռին։

Ընթրիքից առաջ իշխան Անդրեյը վերադառնալով հոր ա՝անձնասենյակը, տեսավ հորը Պիեռի հետ տաք-տաք վիճելիս։ Պիեռն ապացուցում էր, որ կգա ժամանակ, երբ այլևս պատերազմ չի լինի։ Ծեր իշխանը ծաղրելով, բայց առանց բարկանալու, առարկում էր նրան։

— Մարդկանց երակների արյունը թափիր և նրա տեղ ջուր լցրու, այն ժամանակ պատերազմ չի լինի։ Դրանք պառավական զառանցանքներ են, պառավական զառանցանքնե՛ր, — ասավ նա, բայց՝ այնուամենայնիվ, ձեռը սիրալիր խփեց Պիեռի ուսին և մոտեցավ սեղանին, ուր իշխան Անդրեյը, ըստ երևույթին, չկամենալով խոսակցության մեջ մրտնել, ջոկջկում էր այն թղթերը, որ հայրը բերել էր քաղաքից։ Ծեր իշխանը մոտեցավ նրան և սկսեց խոսել գործերի մասին։

— Ազնվականների պարագլուխ կոմս Ռոստովը մարդկանց կեսը չբերեց։ Եկա քաղաք, ուզեց ճաշի կանչել, — բայց ես նրան մի այնպիսի ճաշ ցույց տվի որ... Ահա մի նայիր այս... Էհ, եղբայր, — դիմեց իշխան Նիկոլայ Անդրեյիչը որդուն, Պիեռի մեջքին խփելով, — կեցցե՛ քո բարեկամը, ես սրան

սիրեցի։ Վառում է ինձ։ Ուրիշը խելոք բաներ շատ է ասում, բայց լսել չես ուզում, իսկ սա սուտ է ասում, բայց ինձ, ծերունուս վառում է։ Դե, գնացե՛ք, գնացե՛ք, — ասավ նա, — գուցե գամ ձեր ընթրիքին մի քիչ նստեմ։ Էլի կվիճեմ։ Իմ հիմար աղջկան, իշխանադուստր Մարիային, սիրի՛ր, — գոչեց նա դռան միջից Պիեռի ետևից։

Պիեռն այժմ միայն, Լիսիե Գորի գալով, գնահատեց իշխան Անդրեյի բարեկամության ամբողջ ուժն ու հմայքը։ Այդ հմայքն արտահայտվեց ոչ այնքան իրեն՝ իշխան Անդրեյի հետ ունեցած հարաբերությունների մեջ, որքան նրա հարազատների ու տնեցիների վարվեցողության մեջ։ Պիեռը ծեր, դաժան իշխանի և հեզ ու ամոթխած իշխանադուստր Մարիայի մոտ, չնայած որ նրանց գրեթե չէր ճանաչում, իրեն միանգամից վաղեմի բարեկամ զգաց։ Նրանք բոլորն արդեն սիրում էին Պիեռին։ Ոչ միայն իշխանադուստր Մարիան (որ զգացված էր Պիեռի՝ ուխտավորներին ցույց տված հեզ վերաբերմունքից) էր նրան նայում իր շողուն աչքերով, այլև փոքրիկ մի տարեկան իշխան Նիկոլայը, ինչպես պապն էր անվանում նրան, ժպտաց Պիեռին և նրա գիրկը գնաց։ Միխայիլ Իվանիչը, m-lle Bourienne-ն ուրախ ժպիտներով էին նայում նրան, երբ նա խոսում էր ծեր իշխանի հետ։

Ծեր իշխանը եկավ ընթրելու. ըստ երևույթին, այդ Պիեռի համար էր։ Այն երկու օրը, որ Պիեռն անցրեց Լիսիե Գորիում, ծեր իշխանը շատ սիրալիր էր նրա հետ և վերջը հրավիրեց գալ իրենց մոտ։

Երբ Պիեռը մեկնեց, ընտանիքի բոլոր անդամները հավաքվեցին միասին և սկսեցին քննել ու դատել նրան, ինչպես այդ լինում է միշտ նոր մարդու մեկնելուց հետո, և, ինչպես այդ հազվադեպ է լինում, բոլորն էլ նրա մա՛յն լավն էին ասում։

XV

Այս անգամ արձակուրդից վերադառնալով, Ռոստովն առաջին անգամն զգաց ու հասկացավ, թե որ աստիճան ուժեղ է իր կապը Դենիսովի և ամբողջ գնդի հետ։

Երբ Ռոստովը մոտենում էր իր գնդին, նա նույնն զգաց, ինչ որ զգացել էր Պովարսկի փողոցի տանը մոտենալիս։ Երբ

նա տեսավ իր գնդի հուսարներից մեկին՝ կոճակներն արձակ մունդիրով, երբ ճանաչեց շեկ Դեմենտևին, տեսավ շեկ ձիերի բհիրները, երբ Լավրուշկան ուրախ ձայն տվեց իր բարիին, թե՝ «կոմսը եկավ». և փոշոտ Դենիսովը, որ պառկած էր անկողնում, դուրս վազեց գետնափորից, գրկեց նրան, և սպաները հետզհետե հավաքվեցին, — Ռոստովը նույնն զգաց, ինչ որ այն ժամանակ, երբ իրեն գրկում էին մայրը, հայրը, քույրերը, և ուրախության արցունքները, որ բռնել էին նրա կոկորդը, թույլ չտվին նրան խոսել։ Գունդն էլ տուն էր նրա համար, մշտապես սիրելի ու թանկագին, ինչպես և հայրենական տունը։

Ներկայանալով գնդի հրամանատարին, նշանակվելով նախկին հեծվաշտում, գնալով հերթապահության և ձիերի համար կեր ճարելու, մտնելով գնդի բոլոր մանր-մունր հոգսերի մեջ և զգալով իրեն ազատությունից զրկված ու մի նեղ անփոփոխ շրջանակում ներփակված, Ռոստովն զգաց նույն հանգիստը, նույն հենարանը և գիտակցությունն այն բանի, որ ինքն այստեղ տանն է, իր տեղում, ինչպես այդ զգացել էր նա հայրենական՝ հարկի տակ։ Չկար այլևս ազատ կյանքի ամեն տեսակի անկարգություն, ուր նա տեղ չէր գտնում իրեն և սխալվում էր ընտրությունների մեջ. չկար Սոնյան, որ հարկ լիներ կամ հարկ չլիներ բացատրվելու. չկար մի տեղ գնալու կամ չգնալու հնարավորությունը. չկար օր ու գիշերվա 24 ժամը, որոնց կարելի լիներ օգտագործել այնքան տարբեր եղանակներով. չկար մարդկանց անթիվ բազմությունը, որոնցից ոչ մեկը ո՛չ մոտիկ էր, ո՛չ հեռու, չկային դրամական անորոշ ու մութ հարաբերությունները հոր հետ, չկար նաև Դոլոխովին տարվելու սոսկալի հիշողությունը։ Այստեղ, գնդում, ամեն ինչ պարզ էր ու հասարակ։ Ամբողջ աշխարհը բաժանված էր երկու անհավասար մասերի. մեկը — մեր Պավլոգրադյան գունդը, իսկ մյուսը՝ մնացած բոլորը։ Ու ոչ մի առնչություն մնացած բոլորի հետ։ Գնդում ամեն ինչ որոշ էր. ո՛վ է տեղակալը, ո՛վ է ռոտմիստրը. ո՛վ է լավ, ո՛վ վատ մարդ, մանավանդ՝ ընկեր։ Նպարավաճառը պարտք է վստահում, ոռճիկն ստացվում է չորս ամիսը մեկ. հնարելու և ընտրելու բան չկա, միայն թե այնպիսի բան մի՛ արա, ինչ վատ է համարվում Պավլոգրադյան գնդում։ Իսկ եթե տեղ կուղարկեն, արա՛ այն, ի՛նչ պարզ ու մեկին որոշված և հրամայված է, — և ամեն բան լավ կլինի։

Վերադառնալով նորից գնդի կյանքի այս որոշ պայմաններին, Ռոստովն ուրախություն ու հանգստություն զգաց, ինչպես այդ զգում է հոգնած մարդը, երբ պառկում է հանգստանալու։ Գնդի կյանքը Ռոստովի համար այս անգամ սփոփիչ էր նրանով, որ նա Դոլոխովին տանուլ տալուց հետո (մի արարք, որ նա, չնայած հարազատների մխիթարական բոլոր խոսքերին, չէր կարողանում ներել իրեն), որոշել էր ծառայել ոչ թե առաջվա պես, այլ իր մեղքը քավելու համար լա՛վ ծառայել և լինել միանգամայն օրինակելի ընկեր ու սպա, այսինքն հիանալի մարդ, մի բան, որ աշխարհում այնքան դժվար էր թվում, իսկ գնդում՝ այնքան հնարավոր։

Ռոստովը տանուլ տալու օրից վճռել էր, որ հինգ տարվա ընթացքում ինքը կվճարի այդ պարտքը ծնողներին։ Նա տնից տարեկան ստանում էր տասը հազար, հիմա վճռել էր վերցնել միայն երկու հազար, իսկ մնացածը թողնել ծնողներին՝ պարտքը վճարելու։

Մեր բանակը Պուլտուսկի, Պրեյսիշ-Էյլաուի մոտ ունեցած բազմաթիվ նահանջներից, հարձակումներից ու ճակատամարտերից հետո, կենտրոնացավ Բարտենշտեյնի մոտ։ Սպասում էին թագավորի գալուն և նոր կռվի սկսվելուն։

Պավլոգրադյան գունդը, որ գտնվում էր բանակի այն մասում, որը եղել էր 1805 թվի արշավանքում, Ռուսաստանում վերակազմվելու պատճառով չհասավ պատերազմի առաջին գործողություններին։ Նա չէր եղել ո՛չ Պուլտուսկի, ո՛չ Պրեյսիշ-Էյլաուի մոտ, և միայն պատերազմի երկրորդ կեսին միանալով գործող բանակին, կցվեց Պլատովի ջոկատին։

Պլատովի ջոկատը գործում էր բանակից անկախ։ Պավլոգրադցիները մի քանի անգամ մաս-մաս հրաձգություն ունեցան թշնամու դեմ, գերիներ վերցրին և մի անգամ նույնիսկ խլեցին մարշալ Ուդինոյի կառքերը։ Ապրիլ ամսին մի քանի շաբաթ պավլոգրադցիները մնացին գերմանական մի հիմնահատակ ավերված, ամայի գյուղի մոտ՝ առանց տեղից շարժվելու։

Հալհլոց էր, ցեխ, ցուրտ. գետի սառույցը կոտրվում էր, ճանապարհները դարձել էին անանցանելի, մի քանի օր ուտե-

լիք չտվին ոչ ձիերին, ոչ մարդկանց։ Որովհետև մթերքի փոխադրությունը դարձել էր անհնարին, ուստի մարդիկ ցրվեցին լքված ամայի գյուղերը՝ գետնախնձոր փնտրելու, բայց այդ էլ շատ քիչ էր ճարվում։

Ամեն բան կերել էին, և բնակիչները՝ բոլորը փախել. իսկ նրանք, ովքեր մնացել էին՝ մուրացկաններից վատ էին, ուստի և նրանցից վերցնելու բան չկար, նույնիսկ փոքր-ինչ խղճով զինվորները հաճախ, փոխանակ այդպիսիներից օգտվելու, նրանց տալիս էին իրենց վերջին ունեցածը։

Պավլոգրադյան գունդը կռիվներում կորցրեց միայն երկու վիրավոր, իսկ սովից ու հիվանդություններից իր մարդկանց գրեթե կեսը։ Հիվանդանոց ընկնողն ուղղակի մեռնում էր, այնպես որ տենդով և ուռուցքներով տառապող (որ առաջանում էր վատ սննդից) հիվանդ զինվորները գերադասում էին լինել դիրքերում, ծառայության մեջ՝ թեկուզ հազիվ-հազ ոտքերնին քաշ տալով, քան հիվանդանոց գնալ։ Գարունը բացվելուն պես՝ զինվորներն սկսեցին քաղել հողի երեսին երևացած մի բույս, որ նման էր ծնեփակի, որին զինվորները, չգիտես ինչու, Մաշկայի քաղցր արմատ էին անվանում և մարգերում ու դաշտերում ցրված, որոնում էին Մաշկայի այդ քաղցր արմատը (որը շատ դառն էր), սրերով փորում հանում էին և ուտում, չնայած եղած կարգադրության՝ չուտել այդ վնասակար բույսից։ Գարնանը զինվորների մեջ երևաց նոր հիվանդություն՝ ձեռների, ոտների և երեսի ուռուցք, որի պատճառը բժիշկները համարում էին այդ արմատի գործածությունը։ Սակայն, չնայած արգելքին, Դենիսովի հեծելաշտի Պավլոգրադյան զինվորներն ուտում էին բացառապես Մաշկայի քաղցր արմատ, որովհետև երկրորդ շաբաթն էր, որ մեծ խնայողությամբ էին տալիս պաքսիմատի վերջին պաշարը, մարդագլուխ տրվում էր կես ֆունտ. իսկ վերջին անգամ բերված կարտոֆիլը ցրտատար էր ու ծլած։

Ձիերը նմանապես երկրորդ շաբաթն էր՝ սնվում էին տրների տանիքների ծղոտով. նրանք այլանդակորեն նիհար էին և դեռ ծածկված էին ձմեռային, փունջ-փունջ թափվող մազերով։

Չնայած այսպիսի աղետալի կացության, զինվորներն ու սպաներն ապրում էին ճիշտ այնպես, ինչպես և միշտ. այժմ

էլ, թեև գունատ, ուռած դեմքերով ու պատառոտած մունդիրներով, հուսարները շարք-շարք կանգնում էին ոոճիկ ստանալու, գնում էին զորանոցը կարգի բերելու, մաքրում էին ձիերը, զենքերը, զինվորական իրերը, կերի համար ծղոտ էին կրում տանիքներից, գնում էին ճաշելու կաթսաների մոտ, որտեղից հեռանում էին քաղցած, ծաղրելով իրենց զզվելի սնունդն ու քաղցը։ Այժմ էլ, ինչպես միշտ, ծառայությունից ազատ ժամերին, զինվորները խարույկներ էին վառում և մերկ մարմնով տաքանում կրակի մոտ. ծխում էին, ջոկում, խորովում ծլած, փչացած գետնախնձորը, պատմություններ էին անում Պոտյոմկինի և Սուվորովի արշավանքների մասին, կամ թե չէ հեքիաթներ էին ասում խորամանկ-Ալյոշայի կամ տերտերի հոտաղ Միկոլայի մասին։

Սպաներն այնպես էլ, ինչպես սովորաբար, ապրում էին երկու-երկու, երեք-երեք բաց, կիսավեր տներում։ Ավագները հոգ էին տանում ծղոտ ու կարտոֆիլ ճարելու մասին, առհասարակ մարդկանց ուտելիքի մասին, իսկ կրտսերները, ինչպես միշտ, զբաղվում էին՝ ո՛րը թղթախաղով (փող շատ կար, թեպետ և մթերք չկար), ո՛րը անմեղ խաղերով. խաղում էին սվայկա և գորոդկի[1]։ Իսկ գործի ընդհանուր դրության մասին քիչ էին խոսում, մասամբ նրա համար, որ բոլորովին բան չը-գիտեին, մասամբ էլ նրա համար, որ մութ կերպով զգում էին, որ պատերազմն ընդհանուր առմամբ վատ է գնում։

Ռոստովն առաջվա պես ապրում էր Դենիսովի հետ. նրանց բարեկամական կապը, արձակուրդի օրից, ավելի սերտ դարձավ։ Դենիսովը երբեք չէր խոսում Ռոստովի հարազատների մասին, բայց այն սիրագորով բարեկամությունից, որ ցույց էր տալիս հրամանատարն իր սպային, Ռոստովն զգում էր, որ հին հուսարի դժբախտ սերը՝ դեպի Նատաշան, մասն ուներ այս բարեկամության ուժեղացման մեջ։ Դենիսովն ըստ երևույթին ջանում էր որքան կարելի է Ռոստովին քիչ ենթարկել վտանգների, պահպանում էր նրան և, կռիվներից հետո մանավանդ, ուրախ դիմավորում էր նրան՝ ողջ, անվնաս տեսնելով։ Իր գործուղումներից մեկի ժամանակ, Ռոստովը լքված, ավերակ մի գյուղում, ուր նա եկել էր ուտեստ տանելու, տեսավ մի ծեր-

[1] Սվայկա և գորոդկի՝ ռուսական ժողովրդական խաղեր են։ Ծ. Թ.։

լեհացու ընտանիք և նրա աղջկան՝ ծծկեր երեխայի հետ։ Նրանք մերկ էին, քաղցած. չէին կարողացել ժամանակին հասանալ և միջոցներ չունեին գնալու։ Ռոստովը նրանց բերեց իր կայանը, տեղավորեց իր բնակարանում և մի քանի շաբաթ, քանի դեռ ծերունին կազդուրվում էր, պահեց նրան։ Ռոստովի ընկերը կանանց մասին երկար խոսելով, սկսեց Ռոստովի վրա ծիծաղել, ասելով թե նա բոլորից խորամանկ է և թե մեղք չէր լինի, որ Ռոստովն ընկերներին ծանոթացներ իր ազատած գեղեցիկ լեհուհու հետ։ Ռոստովն այդ կատակն ընդունեց իրրև վիրավորանք և բոնկեց. նա սպային այնպիսի անհաճո բան ասավ, որ Դենիսովը նրանց դժվարությամբ ետ պահեց մենամարտից։ Երբ սպան հեռացավ և Դենիսովը, չիմանալով Ռոստովի վերաբերմունքը դեպի լեհուհին, սկսեց կշտամբել նրան դյուրաբորբոքության համար, Ռոստովն ասավ.

— Ինչ ուզում ես ասա... նա ինձ համար քրոջ պես է, և ես չեմ կարող նկարագրել, թե որքան այդ վիրավորական էր ինձ համար... որովհետև... դե, նրանից...

Դենիսովը խփեց նրա ուսին և սկսեց արագ անց ու դարձ անել սենյակում, առանց նայելու, թե ինչ է անում Ռոստովն իր ներքին հուզմունքի մեջ։

— Ի՞նչ հիմար՝ ցեղ է ձեզ՝ Ղ՝ոստովնեզ՝ի ցեղը, — ասավ նա, և Ռոստովը Դենիսովի աչքերում նկատեց արցունքներ։

XVI

Ապրիլ ամսին զորքի տրամադրությունը բարձրացավ, երբ լուր ստացվեց, թե թագավորը գալիս է բանակ։ Ռոստովին չհաջողվեց ներկա լինել գորատեսին, որ կատարել էր թագավորը Բարտենշտեյնում. պավլոգրադցիները գտնվում էին առաջապոստերում՝ Բարտենշտեյնից շատ հեռու։

Նրանք կենում էին բացօթյակներում. Դենիսովն ու Ռոստովն ապրում էին միասին՝ զինվորների փորած գետնահյուղակում, որը ծածկված էր ճղներով ու ճումերով։ Գետնահյուղը շինված էր հետևյալ, այն ժամանակ ընդունված նոր ձևով. փորվում էր մի արշին ու կես լայնությամբ, երկու արշին խորությամբ և երեք ու կես արշին երկարությամբ մի փոս։ Փոսի մի ծայրին շինվում էին աստիճաններ. և դա մուտքն էր. փոսը՝

սենյակն էր, ուր երջանիկների համար, ինչպիսին հեծվաշտի հրամանատարն էր, աստիճանների դիմացը, խորքում, ցցերի վրա դրված էր մի տախտակ — դա սեղանն էր։ Փոսի երկու կողմերի երկարությամբ թողնված էր մի արշին բարձրությամբ հող. դրանք մահճակալներն ու բազմոցներն էին։ Տանիքը շինված էր այնպես, որ մեջտեղը կարելի էր կանգնել, իսկ մահճակալի վրա նույնիսկ նստել, եթե սեղանին մոտ տեղավորվեն։ Դենիսովը, որ ապրում էր փառահեղ, որովհետև իր հեծվաշտի զինվորները սիրում էին նրան, իր հյուղակի ճակատին ուներ մի տախտակ, որի վրա հարմարեցրած էր կոտրած, բայց կպցրած ապակի։ Եթե շատ ցուրտ էր լինում, աստիճանների մոտ (ընդունարանում, ինչպես անվանում էր Դենիսովը բալագանի այդ մասը) զինվորները խարույկներից՝ եզրերը ծալած երկաթաթերթերով կրակ էին բերում դնում, և այնքան տաք էր լինում, որ սպաները որոնցից շատերը միշտ լինում էին Դենիսովի և Ռոստովի մոտ, նստում էին շապկանց։

Ապրիլ ամսին Ռոստովը հերթապահ էր։ Առավոտյան, մոտ ժամը 8-ին, անքուն գիշերից հետո, տուն վերադառնալով, նա պատվիրեց կրակ բերել, փոխեց անձրևից թրջված սպիտակեղենը, աղոթեց աստծուն, թեյ խմեց, տաքացավ, իրերը կարգի բերեց իր անկյունում ու սեղանի վրա և կարմրած դ՝մքով, շապկանց պառկեց մեջքին, ձեռները գլխի տակ դրած։ Նա հաճույքով մտորում էր, որ այս օրերս արժանանալու է աստիճանի բարձրացման՝ վերջին հետախուզության համար և սպասում էր ինչ-որ տեղ գնացած Դենիսովին։ Ռոստովն ուզում էր նրա հետ խոսել։

Հյուղակի ետևից լսվեց Դենիսովի դղրդացող ձայնը. նա, ըստ երևույթին, բարկացած էր։ Ռոստովը մոտեցավ լուսամուտին նայելու, թե ո՞ւմ հետ է Դենիսովը, և տեսավ վերակա Տոպչենկոյին։

— Ես քեզ հղ՝ամայել եմ թույլ չտալ, ող՝ նղ՝անք այդ աղ՝մատը, Մաշկայի քոք է, ինչ է, լափեն, — պոռում էր Դենիսովը։ — Չէ ող՝ ես ինքս տեսա. լազաղ՝չուկը դաշտից բեղ՝ում էր։

— Ես հրամայել եմ, ձիրդ բարձր ազնվություն, չե՝ն լսում, — ասավ վերական։

Ռոստովը կրկին պառկեց իր մահճակալի վրա և հաճու-

թյամբ մտածեց. «Թող հիմա քաշ գա, չարչարվի, ես որ իմ գործը պրծել եմ ու պառկել՝ հիանալի է»։ Պատի ետևից նա լսեց, որ բացի վերակայից խոսում էր նաև Լավրուշկան, Դենիսովի այդ խորամանկ, ճարպիկ լաքեյը։ Լավրուշկան պատմում էր ինչ-որ սայլերի, հացի ու էզների մասին, որ տեսել էր ինքը մթերքի գնալիս։

Բալագանի ետևից նորից լսվեց Դենիսովի հեռացող ձայնը և՝ «Թամբի՛ր, երկրորդ դասակ» խոսքերը։

«Այդ ո՞ւր են պատրաստվում», մտածեց Ռոստովը։

Հինգ րոպե անց Դենիսովը հյուղակ մտավ, կեղտոտ ոտքերով բարձրացավ մահճակալի վրա, բարկացած ծխեց ծխամորճը, բոլոր էրերը դես ու դեն գցեց, կապեց մտրակն ու թուրը և ուզեց դուրս գալ։ Ռոստովի հարցին թե՝ ո՞ւր, նա բարկացած ու անորոշ պատասխանեց, թե գործ կա։

— Դատիր ինձ աստված և մեծ թագավոր,— ասավ Դենիսովը դուրս գալով, և Ռոստովը լսեց, թե ինչպես բալագանի ետև ցեխի մեջ շփշփացին մի քանի ձիերի ոտներ։ Ռոստովը չմտածեց դոնե հարցնել, թե ո՛ւր գնաց Դենիսովը։ Իր անկյունում տաքանալով, նա քնեց և բալագանից դուրս եկավ միայն երեկոյան դեմ։ Դենիսովը դեռ չէր վերադարձել։ Երեկոյան պարզեց. հարևան գետնափորի մեջ երկու սպա մի յունկերի հետ սվայկա էին խաղում, ծիծաղելով մեծագլուխ մեխեր տընկում փխրուն ու ցեխոտ հողի մեջ։ Ռոստովը միացավ նրանց։ Խաղի կեսին սպաները նկատեցին մոտեցող սայլեր, որոնց հետևում էին 15 հուսար՝ նիհար ձիեր հեծած։ Սայլերը՝ հուսարների ուղեկցությամբ, մոտեցան ձիեր կապելու բհիրներին, և հուսարների խումբը շրջապատեց նրանց։

— Դե, ահա տեսնք, Դենիսովը հենց դարդ էր անում,— ասավ Ռոստովը,— ահավասիկ մթերքն եկավ։

— Եղա՞վ,— ասին սպաները.— ա՛յ կուրախանան զինվորները, հա՞։

Հուսարների ետևից գալիս էր Դենիսովը՝ երկու հետևակ սպայի ուղեկցությամբ, որոնց հետ խոսում էր ինչ-որ։

Ռոստովը գնաց նրան ընդառաջ։

— Ես ձեզ նախազգուշացնում եմ, ռոտմիստր,— ասում էր սպաներից մեկը, մի նիհար, կարճահասակ մարդ, որ ըստ երևույթին զայրացած էր։

— Ասացի, որ չեմ տա,— պատասխանեց Դենիսովը։

— Դուք պատասխանատու կլինեք, ռոտմիստր. դա անկարգություն է՝ յուրայիններից մթերք խլել։ Մերոնք երկու օր է բան չեն կերել։

— Իսկ իմոնք երկու շաբաթ է չեն կերել,—պատասխանեց Դենիսովը։

— Դա ավազակություն է, պատասխան կտաք, հարգելի պարոն,— ձայնը բարձրացնելով կրկնեց հետևակ գնդի սպան։

— Ի՞նչ եք կպել ինձանից. հը՞,— պոռաց Դենիսովը հանկարծ տաքանալով։— Պատասխան տալու եմ ե՛ս և ոչ թե դուք, իսկ դուք այստեղ մի բոբոացեք, քանի դեռ ողջ եք։ Հայդա՞,— գոռաց նա սպաների վրա։

— Դե լա՞վ,— առանց քաշվելու և առանց հեռանալու գոռաց փոքրիկ սպան։— Ավազակություն անելը ես ձեզ...

— Դե հայդա՞, կորի՛ր, քանի ողջ ես։— Ու Դենիսովը ձին շուռ տվեց դեպի սպան։

— Դե լա՛վ, լա՛վ,— ասավ սպան սպառնալիքով և ձիու գլուխը ծռելով, արագ հեռացավ՝ թամբի վրա բարձր ու ցածր անելով։

— Պատի՛ վրայի շո՛ւն,— ասավ Դենիսովը նրա ետևից. դա ամենամեծ ծաղրն էր, որ հեծելակն ուղղում էր ձիավոր հետևակի հասցեին,— Ռոստովին մոտենալով, բարձրաձայն ծիծաղեց։

— Խլեցի հետևակ գնդից, զոռով խլեցի այդ ապրանքը,— ասավ նա։— Ի՞նչ արած, սովից հո մեռնելու չեն մարդիկ։

Դենիսովի բերած սայլերը հատկացված էին հետևակ գնդին, բայց Լավրուշկայի միջոցով տեղեկանալով, որ այդ ապրանքը գալիս է առանց պահակի, ուստի Դենիսովն իր հուսարներով՝ ուժով խլեց այն։ Զինվորներին առատորեն պաքսիմատ բաժանեցին. բաժին հանեցին նույնիսկ մյուս հեծվաշտին։

Հետևյալ օրը գնդի հրամանատարը Դենիսովին կանչեց իր մոտ և չոր մատներով աչքերը ծածկելով, ասավ նրան. «Ես այդ բանին նայում եմ ահա այսպես, ես ոչինչ չգիտեմ և գործ չեմ սկսի, բայց խորհուրդ եմ տալիս՝ գնալ շտաբ և այնտեղ, պարենավորման վարչության մեջ այդ գործը հարթել և, եթե հնարավոր է, ստորագրություն տալ, թե այսքան ուտեստի մթերք

ստացա, այլապես մթերքը գրված լինելով հետևակ գնդի վրա, կարող է գործ սկսվել և վատ հետևանք ունենալ»։

Դենիսովը գնդի հրամանատարի մոտից ուղղակի շտաբ գընաց՝ անկեղծ ցանկությամբ կատարելու նրա խորհուրդը։ Երեկոյան նա իր հյուղակը վերադարձավ մի այնպիսի դրությամբ, ինչպես Ռոստովն իր բարեկամին դեռ երբեք չէր տեսել։ Դենիսովը չէր կարողանում խոսել. նրա շունչը կտրվում էր։ Երբ Ռոստովը հարցրեց, թե ի՛նչ է պատահել նրան, նա խռպոտ ու թույլ ձայնով արտասանեց միայն անհասկանալի հիշոցներ ու սպառնալիքներ։

Դենիսովի դրությունից երկյուղ կրելով, Ռոստովը նրան առաջարկեց հանվել, ջուր խմել, իսկ ինքը մարդ ուղարկեց բժշկի ետևից։

— Ինձ դատել ավազակության համար, ա՜խ։ Մի ջուր տո՛ւր,— թող դատեն, իսկ ես պետք է, միշտ պետք է սրիկաներին ծեծեմ. թագավորին իրեն էլ կասեմ։ Սառույց տվեք,— ասավ նա։

Գնդի բժիշկը եկավ և ասավ, որ անհրաժեշտ է արյուն առնել։ Դենիսովի մազոտ ձեռից դուրս եկավ մի խոր պնակ սև արյուն և այդ ժամանակ միայն նա ի վիճակի եղավ պատմել իր գլխով անցածը։

— Գալիս եմ,— սկսեց Դենիսովը,— դե՛ «ու՞ր է ձեր պետը»։ Ցույց տվին։ Սպասել չեք ուզո՞ւմ։ «Ես ծաղայություն ունեմ, 30 վեղ՝ստ ճամփա եմ կտղ՝ել, սպասելու ժամանակ չունեմ, հայտնի՛»։ Լավ. դուղ՝ս է գալիս այդ մեծ գողը. իղ՝ խելքով ուզեց ինձ բան սովոր՝եցնի, թե.— Դա ավազակություն է։—«Ավազակությունն, ասում եմ, այն չի, երբ մեկը մթեղ՝ք է վեղ՝ցնում իր զինվող՝նեղ՝ին կեղակղ՝ելու. ավազակը նա՛ է, ո՛վ այդ մթեղ՝քը վեղ՝ցնում է գղ՝պանը դնելու»։— Չի լինի՝ սուս անեք։ «Լա՛վ»։— Ստող՝ ագղ՝եցեք, ասում է, կոմիսիոնեղ՝ի մոտ, իսկ ձեղ՝ գող՝ծը կհանձնվի հղ՝ամանատաղ՝ության։ Գալիս եմ կոմիսիոնեղ՝ի մոտ։ Նեղ՝ս եմ մտնում. սեղանի մոտ նստած է... Ո՞վ լինի։ Չէ՛, մի մտածի... Ո՛վ է մեզ սովամահ անում,— գոռաց Դենիսովը հիվանդ ձեռով այնպես ամուր խփելով սեղանին, որ քիչ մնաց սեղանն ընկներ, իսկ բաժակները ծուլ եղան վրան։— Տելյանինը։ Ինչպե՞ս, դո՞ւ ես մեզ սովամահ անում»։ Տաղ՝ա ու բեղ՝ի դղ ա դնչին

մի երկու անգամ... այնպես հաջող եկա՞վ... «Այ դու այսպես ու ա՞յնպես», և... սկսեցի՛ տո՛ւղ՝ թե կտաս... Բայց, կաղ՝ող եմ ասել, սիղ՝տս հովացղ՝ի,— գոչեց Դենիսովն ուրախ ու զայրացած՝ սև բեղերի տակ սպիտակ ատամները կրճտելով, ես նղ՝ան կսպանեի, եթե ձեղ՝իցս չաղ՝նեին։

— Դե էլ ի՛նչ ես բղավում,— ասավ Ռոստովը,— այ էլի արյուն գնաց։ Թող մի, պետք է նորից կապել։

Դենիսովի ձեռը նորից կապեցին ու պառկեցրին քնելու։ Մյուս օրը նա զարթնեց ուրախ ու հանգստացած։

Բայց կեսօրին գնդի ադյուտանտը լուրջ ու տխուր դեմքով եկավ Դենիսովի ու Ռոստովի ընդհանուր գետնափորը և ցավակցություն հայտնելով, մայոր Դենիսովին ներկայացրեց գնդի հրամանատարի պաշտոնական գրությունը, որի մեջ հարցում էր արվում անցած օրը կատարված դեպքի մասին։ Ադյուտանտը հայտնեց, թե գործը շատ վատ ընթացք է ընդունելու, թե նշանակված է ռազմա-դատական հանձնաժողով և թե, զորքի կողոպուտի ու կամայականությանը վերաբերող ներկա խստության պայմաններում, լավագույն դեպքում, գործը կարող է վերջանալ պաշտոնանկությամբ։

Տուժող կողմը գործը ներկայացնում էր այնպես, որ իբր թե տրանսպորտը խլելուց հետո, մայոր Դենիսովը, առանց հրավերի, հարբած դրության մեջ, եկել է ավագ մթերապահի մոտ, նրան գող է անվանել, ծեծով սպառնացել, և երբ դուրս է բերվել ուժով, խուժել է դիվանատուն, ծեծել երկու պաշտոնյայի և մեկի էլ կուտը դուրս գցել։

Դենիսովը՝ Ռոստովի նոր հարցերին՝ ծիծաղելով պատասխանեց, թե թվում է, որ մի ինչ-որ մարդ է մեջ ընկել այստեղ, բայց այդ բոլորը դատարկ բան է, թե ինքը ոչ մի դատարանից էլ չի վախենում, և եթե այդ սրիկաները համարձակվեն իրեն վիրավորել, ինքը այնպիսի պատասխան կտա նրանց, որ երբեք չեն մոռանա։

Դենիսովն այդ ամբողջ գործի մասին խոսում էր արհամարհանքով. բայց Ռոստովը նրան շատ լավ էր ճանաչում, որ չնկատեր, թե նա իր հոգու խորքում (ուրիշներից թաքցընելով) վախենում էր դատից և տանջվում էր գործի համար, որն, ըստ երևույթին, վատ հետևանքներ էր ունենալու։ Ամեն օր ստացվում էին հարցումներով լի գրություններ՝ դատարանից

ներկայացնելու պահանջով, իսկ մայիսի 1-ին էլ Դենիսովին հրահանգվեց հեծվաշտը հանձնել իրենից ավագին և ներկայանալ դիվիզիայի շտաբը՝ բացատրություն տալու պարենավորման հանձնաժողովում գործած վայրագության մասին։ Այդ օրվա նախօրեին Պլատովը՝ կազակային երկու գնդով և հուսարների երկու հեծվաշտով հետախուզեց Թշնամուն։ Դենիսովն ինչպես միշտ, իր քաջությունը ցուցադրելով, գնում էր շղթայի առջևից։ Ֆրանսական հրացանաձիգների արձակած գրնդակներից մեկը կպավ նրա ոտի վերին մասի փափուկ տեղը։ Ուրիշ անգամ Դենիսովն այդպիսի թեթև վերքի պատճառով գուցե չհեռանար գնդից, բայց այժմ նա օգտագործեց այդ առիթը, հրաժարվեց դիվիզիայի շտաբը ներկայանալուց և գնաց հիվանդանոց։

XVII

Հունիս ամսին տեղի ունեցավ Ֆրիդլանդյան ճակատամարտը, որին պավլոգրադցիները չմասնակցեցին և որից հետո հայտարարվեց զինադադար։ Ռոստովը ծանրապես զգալով իր բարեկամի բացակայությունը, նրա գնալուց հետո ոչ մի տեղեկություն չունենալով նրանից և անհանգստանալով նրա գործի ու վերքի ընթացքի մասին, զինադադարից օգտվեց և թույլտվություն խնդրեց հիվանդանոց գնալ՝ Դենիսովին տեսնելու։

Հիվանդանոցը գտնվում էր պրուսական մի փոքրիկ ավանում, որն երկու անգամ ավերվել էր ռուսական և ֆրանսական զորքերի կողմից։ Հենց այն պատճառով, որ ամառ էր, և դաշտում այնքա՜ն լավ էր, այդ ավանն իր քանդված տանիքներով ու ցանկապատերով, իր կեղտոտ փողոցներով, պատառոտուն ու վատ հագնված բնակիչներով և թափառող հարբած ու հիվանդ զինվորներով, ներկայացնում էր մի առանձնապես մռայլ տեսարան։

Հիվանդանոցը տեղավորված էր մի քարաշեն տան մեջ, որի բակում կային քանդված ցանկապատի մնացորդներ, և որի լուսամուտի փեղկերն ու ապակիները մասամբ ջարդված էին։ Վիրակապերով փաթաթված մի քանի զինվորներ՝ գունատ և

ուռած դեմքերով, շրջում էին բակում. մի քանիսն էլ նստոտել էին արևի տակ։

Հենց որ Ռոստովը ոտը տան շեմքը դրեց, նա զգաց փտող մարմնի և հիվանդանոցի հոտ։ Սանդուղքի ծայրին նա հանդիպեց ռուս զինվորական բժշկին՝ սիգարը բերանին։ Բժշկի ետևից գնում էր ռուս բուժակը։

— Հո չեմ կարող երկու կես լինել, — ասում էր բժիշկը, երեկոյան արի Մակար Ալեքսեիչի մոտ, այնտեղ կլինեմ։

Բուժակը էլի ինչ-որ բան հարցրեց նրան։

— Է՛, արա ինչպես գիտես։ Մի՞թե մինևույն չի։ — Բժիշկը նկատեց սանդուղքից բարձրացող Ռոստովին։ — Դուք ո՞ւր, ձերդ ազնվություն, — ասավ բժիշկը, — դուք ո՞ւր։ Ո՛վ գիտի գնդակը ձեզ չի դիպել, որ դուք ուզում եք տիֆին դիպչել։ Այստեղ, սիրելիս, բորոտների տունն է։

— Ի՞նչպես, — հարցրեց Ռոստովը։

— Տիֆ է, սիրելիս։ Ո՛վ մտնում է՝ մահ է։ Միայն մենք երկուսով, Մակեևի հետ (նա ցույց տվեց բուժակին) քաշ ենք գալիս այստեղ։ Մեր ընկեր-բժիշկներից այստեղ հինգը մեռան, Հենց որ նոր մեկը մտնում է՝ մի շաբաթից հետո մահը պատրաստ է, — ակնհայտ բավականությամբ ասավ բժիշկը։ — Պրուսացի բժիշկներին կանչեցին՝ մերժեցին. մեր դաշնակիցներն այդպես են սիրում մեզ։

Ռոստովը նրան բացատրեց, որ ինքը կամենում է տեսնել այստեղ պառկած հուսարական գնդի մայոր Դենիսովին։

— Չգիտեմ, չեմ իմանում, սիրելիս։ Մի լավ մտածեցեք. մենակ ես — երեք հիվանդանոց, 400-ից ավելի հիվանդ։ Դեռ լավ է, որ պրուսացի բարերար կանայք ոուրճ և ծվատ (կորպի) են ղրկում ամսական երկու ֆունտ, եթե ո՛չ՝ կորած էինք։ — Նա ծիծաղեց։ — 400 հիվանդ, սիրելիս, և դեռ միշտ նորերն են գալիս։ 400 կա, չէ՞. հը՞. — դիմեց նա բուժակին։

Բուժակը տանջված տեսք ուներ։ Նա, ըստ երևույթին, տհաճությամբ սպասում էր, թե երբ պիտի հեռանա շատախոս բժիշկը։

— Մայոր Դենիսովը, — կրկնեց Ռոստովը. — նա Մոլիտենի մոտ է վիրավորվել։

— Կարծեմ մեռել է։ Հը՞, Մակեև, — անտարբեր հարցրեց բժիշկը բուժակին։ Բուժակը, սակայն, բժշկի խոսքերը չհաստատեց։

— Նա այն երկար շեկավո՞ւնն է, — հարցրեց բժիշկը։

Ռոստովը նկարագրեց Դենիսովի արտաքինը։

— Կա՛ր, կա՛ր, այդպես մեկը կար, — կարծես ուրախացած ասավ բժիշկը, — դա պետք է որ մեռած լինի, բայց և այնպես ես կստուգեմ, ինձ մոտ ցուցակներ կային։ Քեզ մո՞տ է, Մակեև։

— Ցուցակները Մակար Ալեքսեիչի մոտ են, — ասավ բուժակը։ — Սակայն համեցեք սպայական բաժանմունք, այնտեղ ինքներդ կտեսնեք, — ավելացրեց նա, դիմելով Ռոստովին։

— Է՛հ, լավ է ներս չմտնեք, սիրելիս, — ասավ բժիշկը, — որ դուք էլ այստեղ չմնաք։

Սակայն Ռոստովը գլուխ տվեց բժշկին և բուժակին խնդրեց առաջնորդել իրեն։

— Դե՛, դուք գիտե՛ք, ինձանից չնեղանաք, — ձայնեց բժիշկը սանդուղքի ներքևից։

Ռոստովը բուժակի հետ մտան միջանցքը։ Հիվանդանոցային հոտն այնքան ուժեղ էր այդ մութ միջանցքում, որ Ռոստովը քիթը բռնեց և ստիպված էր կանգ առնել, որպեսզի ուժ հավաքի և առաջ գնա։ Աջից բացվեց մի դուռ, որտեղից գլուխը դուրս հանեց հենակներով մի նիհար, դեղնած մարդ՝ բոբիկ ու միայն ներքնաշորերով։ Նա դռան շրջանակին հենվելով, պսպղուն, նախանձոտ աչքերով նայեց անցնողներին։ Այդ դռնից ներս նայելով, Ռոստովը նկատեց, որ հիվանդներն ու վիրավորներն այնտեղ պառկած էին հատակին, ծղոտի վրա, շինելների մեջ։

— Կարելի՞ է ներս մտնել նայել, — հարցրեց Ռոստովը։

— Ի՞նչը նայել, — ասավ բուժակը։

Բայց հենց նրա համար, որ բուժակն, ըստ երևույթին, չէր կամենում ներս թողնել, Ռոստովը մտավ զինվորների բաժանմունքը։ Այն հոտը, որ նա միջանցքում արդեն սովորել էր շնչել, այստեղ ավելի սաստիկ էր։ Հոտն այստեղ փոքր-ինչ փոխվեց. նա ավելի սուր էր և նկատելի էր, որ հենց այստեղից էր դուրս գալիս։

Երկար սենյակում, որը պայծառ լուսավորված էր մեծ լուսամուտներից ընկնող արևի շողերով, երկու շարք, գլուխները դեպի պատը, մեջտեղից անցնելու մի փոքր տեղ թողած, պառկած էին հիվանդներ ու վիրավորներ։ Նրանցից շատերն ինքնամոռաց դրության մեջ էին, ուստի և ուշադրություն չդարձրին ներս մտնողների վրա։ Նրանք, որոնց ուշքը գլխին էր, բոլորը ելան կամ բարձրացրին իրենց նիհար, դեղնած դեմքերը, և բոլորն էլ օգնություն ստանալու հույսի, հանդիմանանքի և դեպի ուրիշի առողջությունն ունեցած նախանձի արտահայտությամբ ակնապիշ նայում էին Ռոստովին։ Ռոստովը հասավ սենյակի մեջտեղը, բաց դռներից նայեց դեպի հարևան սենյակները, և երկու կողմն էլ տեսավ նույնը։ Նա կանգ առավ և լուռ շուրջը նայեց։ Նա երբեք չէր սպասում, թե այդպիսի բան կտեսնի։ Հենց նրա առջև, մեջտեղի անցքի լայնությամբ, մերկ հատակի վրա պառկած էր մի հիվանդ, ըստ երևույթին, կազակ, որովհետև մազերը խուզված էին բոլորաձև։ Կազակը պառկել էր մեջքի վրա և ահագին ձեռներն ու ոտները տարածել։ Նրա դեմքը մուգ-կարմիր էր, աչքերը բոլորովին շրջված էին, այնպես որ երևում էին միայն սպիտակուցները։ Եվ նույնպես կարմրած բոբիկ ոտների ու ձեռների ջղերը լարվել էին թոկերի պես։ Նա ծոծրակը զարկեց հատակին և խռպոտ ձայնով ինչ-որ բան ասավ ու ապա սկսեց այդ խոսքը կրկնել։ Ռոստովն ականջ դրեց, թե ի՛նչ է ասում նա և աշխատեց ջոկել նրա կրկնած բառը։ Այդ բառն էր. «ջո՛ւր, ջո՛ւր, մի՛ քիչ ջուր»։ Ռոստովը շուրջը նայեց, թե չկա արդյոք մեկը, որ հիվանդին տեղը դնի և ջուր տա։

— Այստեղ ո՞վ է հիվանդներին խնամում, — հարցրեց նա բուժակին։

Այդ ժամանակ հարևան սենյակից դուրս եկավ ֆուրշտատյան մի զինվոր՝ հիվանդանոցի ծառան, և քայլերն արագ փոխելով, դիք կանգնեց Ռոստովի առաջ։

— Առողջություն եմ ցանկանում, ձերդ բարձր ազնվություն, — գոռաց զինվորը, աչքերը Ռոստովի վրա չռելով և, ըստ երևույթին, նրան ընդունելով հիվանդանոցի վարչության տեղ։

— Սրան վերցրու, ջուր տուր, — ասավ Ռոստովը, կազակին մատնացույց անելով։

— Լսում եմ, ձերդ բարձր ազնվություն, — ասավ զինվորը գոհունակությամբ, էլ ավելի աչքերը չռելով ու ձգվելով, բայց տեղից չշարժվելով։

«Չէ, այստեղ ոչինչ չի կարելի անել», մտածեց Ռոստովը աչքերը ցած գցելով, և այն է՝ ուզում էր դուրս գալ, երբ զգաց, որ աջ կողմից իրեն է սևեռած մի նշանակալի հայացք, ուստի ինքն էլ նրան նայեց։ Համարյա հենց անկյունում, շինելի վրա նստած էր դեղնած, կմախքի պես նիհար, խստադեմ ու չսափրած սպիտակ մորուքով մի ծեր զինվոր ու համառորեն Ռոստովին էր նայում։ Ծեր զինվորի մի կողմի հարևանը ինչ-որ փսփսում էր նրա ականջին՝ Ռոստովին ցույց տալով։ Ռոստովը հասկացավ, որ ծերունին մտադիր է իրենից ինչ-որ բան խնդրել։ Ռոստովը մոտեցավ նրան և նկատեց, որ ծերունու միայն մի ոտն է ծալված, իսկ մյուսը՝ չկար։ Ծերունու մյուս հարևանը, որ նրանից քիչ հեռու, գլուխը ետ գցած անշարժ պառկած էր — մի ջահել զինվոր էր՝ մոմի պես գունատ, կճատ, պեպենոտ դեմքով և թերթերունքների տակ շրջված աչքերով։ Ռոստովը նայեց այդ կճատ զինվորին և նրա մեջքով մի սարսուռ անցավ։

— Սա կարծես թե...— դիմեց նա բուժակին։

— Էնքան խնդրեցինք, ձերդ ազնվություն, — ասավ ծեր զինվորը՝ ներքին ծնոտը դողացնելով։ — Դեռ առավոտն է վախճանվել։ Ախր սրանք էլ մարդ են, հո շուն չեն։

— Հիմա մարդ կուղարկեմ, որ տանեն, հիմա կտանեն, — շտապ-շտապ ասավ բուժակը։ — Համեցեք, ձերդ ազնվություն։

— Գնա՛նք, գնա՛նք, — շտապ ասավ Ռոստովը և աչքերը խոնարհելով ու կուչ գալով, աշխատելով աննկատելի մնալ իրեն ուղղված հանդիմանող ու նախանձոտ աչքերից, դուրս եկավ սենյակից։

XVIII

Անցնելով միջանցքը, բուժակը Ռոստովին տարավ սպայական բաժանմունքը, որ բաղկացած էր երեք սենյակից, որոնց դռները բաց էին։ Այդ սենյակներում մահճակալներ կային. վիրավոր և հիվանդ սպաները պառկած կամ նստած էին մահճակալների վրա։ Մի քանիսը հիվանդանոցային խալաթ-

ներով շրջում էին սենյակներում։ Առաջին հիվանդը, որին սպայական բաժանմունքում հանդիպեց Ռոստովը, մի փոքրիկ, նիհար մարդուկ էր՝ առանց ձեռքի, գլխանոցով և հիվանդանոցային խալաթով. նա ծխամորճը բերանն անց ու դարձ էր անում առաջին սենյակում։ Ռոստովն ուշադրությամբ դիտելով նրան, աշխատեց հիշել, թե որտեղ է տեսել դրան։

— Ահա թե որտեղ էր վիճակված տեսնել իրար, — ասավ փոքրիկ մարդը։ — Տուշինն եմ, Տուշինը, հիշո՞ւմ եք՝ ձեզ մինչև Շենգրաբեն տարա։ Իսկ ինձնից մի կտոր միս կտրեցին, ահա՛...— ասավ նա, ժպտալով ցույց տալով խալաթի կախ ընկած դատարկ թևը։ — Վասիլի Դիմիտրևիչ Դենիսովին եք որոնո՞ւմ. միասին ենք, — ասավ նա գլխի ընկնելով, թե ո՛վ է Ռոստովին հարկավոր։ — Այստեղ է, այստեղ, — և Տուշինը նրան տարավ մյուս սենյակը, որտեղից լսվում էր մի քանի մարդու ծիծաղ։

«Եվ ինչպես են սրանք կարողանում ոչ միայն ծիծաղել, այլև ապրել այստեղ», — մտածեց Ռոստովը, տակավին զգալով մեռած մարմնի հոտը, որ առել էր դեռ զինվորների բաժանմունքում, և դեռ շարունակելով տեսնել իր շուրջը այդ նախանձոտ հայացքները, որ հետևում էին նրան երկու կողմից, և այն ջահել զինվորների դեմքը, որի աչքերը շրջված էին այնպես։

Դենիսովը գլխիցը հետ վերմակով ծածկված՝ քնած էր անկողնում, չնայած որ ցերեկվա 12 ժամն էր։

— Ա՜, Ղ՚ոստով. բաղ՚և, բաղ՚և, — կանչեց Դենիսովը դարձյալ նույն ձայնով, ինչպես կանչում էր գնդում։ Սակայն Ռոստովը տխրությամբ նկատեց, որ Դենիսովի այդ իրեն հատուկ համարձակության և աշխուժության տակ, նրա դեմքի արտահայտության, ձայնի ելևէջների և խոսքերի մեջ երևում էր մի ինչ-որ նոր, վատ քողարկված զգացում։

Նրա վերքը, չնայած որ աննշան էր, բայց դեռ չէր լավացել, թեև արդեն վեց շաբաթ էր անցել վիրավորվելու օրից։ Նրա դեմքն էլ նույնպես գունատ էր և ուռած, ինչպես հիվանդանոցի բոլոր դեմքերը։ Բայց Ռոստովին զարմացնողն այդ չէր. նրան զարմացրեց այն, որ Դենիսովը կարծես ուրախ չէր իրեն տեսնելու համար և անբնական ժպտում էր։ Դենիսովը հարց ու փորձ չարեց ո՛չ գնդի, ո՛չ էլ կուիվների ընթացքի

մասին։ Երբ Ռոստովն այդ մասին խոսում էր, Դենիսովը չէր լսում։

Ռոստովը նկատեց նույնիսկ, որ Դենիսովին ախորժելի չէր, երբ նրան հիշեցնում էին գնդի և ընդհանրապես այն ազատ կյանքի մասին, որ ընթանում էր հիվանդանոցից դուրս։ Թվում էր թե աշխատում է մոռանալ նախկին կյանքը և հետաքրքրվում էր միայն պարենավորման պաշտոնյաների գործով։ Ռոստովի այն հարցին, թե ի՞նչ դրության մեջ է գործը, Դենիսովն իսկույն բարձի տակից հանեց հանձնաժողովից ստացած մի գրություն և իր սևագիր պատասխանը այդ գրության առթիվ։ Երբ սկսեց կարդալ իր պատասխանը՝ նա կենդանացավ և Ռոստովին հատկապես նկատել տվեց այն խայթոցները, որ ինքն իր գրության մեջ ուղղում էր թշնամիներին։ Դենիսովի հիվանդանոցային ընկերները, որ ուզում էին շրջապատել Ռոստովին, որպես ազատ կյանքից նոր եկած մարդու, սկսեցին կամաց-կամաց ցրվել, հենց որ Դենիսովն սկսեց իր գրությունն ընթերցումը։ Նրանց դեմքերի արտահայտությունից Ռոստովը հասկացավ, որ այդ պարոնները շատ անգամ են լսել իրենց արդեն ձանձրացնող պատմությունը։ Միայն Դենիսովի մահճակալի հարևանը, մի հաստ ուլան, իր մահճակալի վրա նըստած, դեմքը մռայլ խոժոռած՝ ծխամորճ էր ծխում, կոնատ փոքրիկ Տուշինը շարունակում էր ականջ դնել՝ գլխով չհավանելու նշաններ անելով։ Ընթերցանության կեսին ուլանն ընդհատեց Դենիսովին։

— Իմ կարծիքով, — դիմեց նա Ռոստովին, — պետք է ուղղակի ներումն խնդրել թագավորից։ Այժմ, ասում են, մեծ պարգևատրություններ են լինելու. հավանաբար ներեն...

— Ես խնդրե՞մ թագավորի՞ն, — ասավ Դենիսովը մի ձայնով, որին կամենում էր ներշնչել նախկին ուժն ու կրակը, բայց որը միայն ավելորդ հուզմունք էր արտահայտում։ — Ինչի՞ համար՝ խնդրեմ։ Եթե ես ավազակ լինեի, նեղ՝ումն կխնդրե՞ի, բայց ես դատվում եմ նրա, համար՝, ով՝ ավազակ-նեղ՝ին լույս աշխարհ՝հ եմ հանում։ Թո՛ղ դատեն, ես ոչ ոքից չեմ վախենում։ Ես ազնվաբար՝ ծառ՝այել եմ թագավորի՞ն, հայրենիքին և գողություն չեմ աշխատել։ Ինձ պաշտոնից զրկել և... լսի՛ր՝, ես ուղղակի այդպես էլ գրում եմ նրանց, ահա ի՞նչ եմ գրում. «Եթե ես լինեի գանձապետը կողոպտողը»։

— Ինչ ասել կուզի՝ սուր է գրած, — ասավ Տուշինը, — բայց բանը դրանում չի, Վասիլի Դմիտրիչ, — նա ևս դիմեց Ռոստովին, — պետք է հնազանդել. բայց Վասիլի Դիմիտրիչն ահա չի ուզում։ Չէ որ զինվորական ատյանի պաշտոնյան ձեզ ասավ, որ ձեր գործը վատ է։

— Է՜հ, թող վատ լինի, — ասավ Դենիսովը։

— Այդ պաշտոնյան ձեզ համար խնդիր դրեց, — շարունակեց Տուշինը, — հարկավոր է ստորագրել և սրանց հետ ուղարկել։ Սրանք (նա մատնացույց արավ Ռոստովին) հավանորեն բարեկամ մարդ ունենան շտաբում։ Ավելի լավ առթիթ չեք գտնի։

— Չէ ոչ ես ձեզ ասի ստող բան չեմ անի, — նրա խոսքը կտրեց Դենիսովը և կրկին շարունակեց իր գրության ընթերցումը։

Ռոստովը չհամարձակվեց Դենիսովին համոզել, թեպետ և նա բնազդորեն զգում էր, որ Տուշինի և մյուս սպաների առաջարկած միջոցը միակ վստահելի միջոցն է, այնուամենայնիվ իրեն երջանիկ կհամարեր, եթե կարողանար օգնել Դենիսովին, բայց գիտեր, որ Դենիսովն անընկճելի կամքի տեր էր և արդարացի կերպով բռնկվող։

Երբ Դենիսովի թունալից գրության ընթերցումն ավարտվեց, որը տևեց ժամից ավելի, Ռոստովը ոչինչ չասավ և օրվա մնացած մասն անցրեց շատ տխուր տրամադրության մեջ՝ կրկին իր շուրջը հավաքված Դենիսովի հիվանդանոցային ընկերների շրջանում, պատմելով նրանց ինչ գիտեր, և լսելով ուրիշների պատմածները։ Դենիսովը լուռ և մռայլ մնաց ամբողջ երեկոն։

Ուշ երեկոյան, երբ Ռոստովը պատրաստվեց մեկնելու, Դենիսովին հարցրեց, թե չունի նա արդյոք որևէ հանձնարարություն։

— Հա՛, սպասիր, — ասավ Դենիսովը, նայեց սպաներին և, բարձի տակից իր գրությունները հանելով, մոտեցավ լուսամուտին, ուր դրված էր նրա թանաքամանը, և նստեց գրելու։

— Հ՞ը, բզի գլխին բռունցքով չես կարող տալ, — ասավ նա լուսամուտից հեռանալով և Ռոստովին մի մեծ ծրար հանձնելով։ Դա թագավորի անունով խնդիրք էր, որ կազմել էր

զինվորական ատենադպիրը, որտեղ Դենիսովը պարենավորման վարչության մեջ կատարվածի մասին ոչինչ չհիշատակելով, ներում էր խնդրում միայն։

— Հանձնիր, երևում է...

Նա խոսքը չվերջացրեց և ժպտաց հ[illegible] [illegible]ագին ժպիտով։

XIX

Գունդ վերադառնալով և հրամանատարին հայտնելով, թե ի՛նչ գրության մեջ է գտնվում Դենիսովի գործը, Ռոստովը՝ թագավորի անունով նամակը ձեռին, մեկնեց Տիլզիտ։

Հունիսի 13-ին ֆրանսական և ռուսական կայսրները հանդիպեցին Տիլզիտում։ Բորիս Դրուբեցկոյը իր մեծավորին խնդրեց, որ իրեն նշանակի այն շքախմբի մեջ, որը մնալու էր Տիլզիտում։

— Je voudrais voir le grand homme[1], — ասավ նա, խոսելով Նապոլեոնի մասին, որին նա միշտ, մինչև այժմ, ինչպես բոլորը ասում էր Բուոնապարտե։

— Vous parlez de Buonaparte?[2] — ժպտալով ասավ գեներալը։

Բորիսը հարցական նայեց իր գեներալին և իսկույն հասկացավ, որ նա հանաքով փորձում է իրեն։

— Mon prince, je parle de l'empereur Napoleons[3] — պատասխանեց Բորիսը։ Գեներալը ժպտալով թոթվեց նրա ուսը։

— Դու շատ առաջ կերթաս, — ասավ նրան գեներալն ու տարավ նրան իր հետ։

Բորիսն այն փոքրաթիվ մարդկանց թվումն էր, որոնք կայսրների տեսակցության օրը գտնվում էին Նեմանի ափին։ Նա տեսավ վենգելներով զարդարած լաստեր, տեսավ ինչպես Նապոլեոնն անցնում էր մյուս ափով՝ ֆրանսական գվարդիայի մոտով, տեսավ Ալեքսանդր կայսեր մտազբաղ դեմքը այն միջոցին, երբ նա Նեմանի ափի պանդոկում լուռ նստած, ըս-

[1] Ես կցանկանայի տեսնել մեծ մարդուն։

[2] Դուք Բուոնապարտի մասի՞ն եք խոսում։

[3] Իշխան, ես խոսում եմ կայսր Նապոլեոնի մասին։

պասում էր Նապոլեոնի գալուն. տեսավ թե ինչպես երկու կայսրները նավակ նստեցին, և ինչպես Նապոլեոնը լաստին մոտենալով, արագ քայլերով առաջ անցավ և Ալեքսանդրին դիմավորելով ձեռք տվեց նրան, և թե ինչպես երկուսը միասին տաղավար մտան։ Բորիսը՝ բարձր շրջաններ մտնելու օրից, սովորություն էր դարձրել՝ ուշադիր դիտել այն ամենը, ինչ կատարվում էր իր շուրջը, և դրի առնել։ Տիլզիտի տեսակցության ժամանակ նա հարցրեց այն անձանց անունները, որոնք ուղեկցում էին Նապոլեոնին, հարցրեց այն մունդիրների մասին, որ հագել էին նրանք, և բոլոր ժամանակ ուշադիր լսում էր նշանավոր անձանց խոսակցությունը։ Հենց այն միջոցին, երբ կայսրները տաղավար մտան, նա նայեց ժամացույցին, կրկին անգամ չմոռացավ նայել և այն ժամանակ, երբ Ալեքսանդրը դուրս եկավ տաղավարից։ Տեսակցությունը տևեց մի ժամ հիսուներեք րոպե. այդ բանը հենց նույն երեկո նա այդպես էլ գրի առավ ուրիշ փաստերի թվում, որոնք զգում էր, որ պատմական նշանակություն ունեին։ Որովհետև կայսեր շքախումբը այնքան էլ մեծ չէր, ուստի ծառայության մեջ հաջողություն փնտրող մարդու համար՝ կայսրների տեսակցության ժամանակ Տիլզիտում լինելը՝ շատ նշանակալից բան էր։ Եվ Բորիսը, Տիլզիտ ընկնելով, զգում էր, որ այդ ժամանակից իր դրությունը բոլորովին ամրապնդվեց։ Նրան այժմ ոչ միայն ճանաչում էին, այլև ուշադրության առան և ընտելացան։ Երկու անգամ նա հանձնարարությամբ գնաց թագավորի մոտ, այնպես որ թագավորն էլ անձամբ ճանաչում էր նրան, և թագավորին մոտ կանգնած բոլոր մարդիկ ոչ միայն չէին խուսափում նրանից, ինչպես առաջ, համարելով նրան նոր մարդ, այլև կզարմանային, եթե նա չլիներ։

Բորիսն ապրում էր մի ուրիշ ադյուտանտի հետ՝ լեհ կոմս Ժիլինսկու հետ միասին։ Ժիլինսկին Փարիզում կրթված մի լեհ հարուստ էր, ֆրանսացիներին ջերմորեն սիրող, և Տիլզիտում եղած միջոցին, համարյա թե ամեն օր, Ժիլինսկու և Բորիսի մոտ ճաշին ու նախաճաշին լինում էին ֆրանսացի սպաներ՝ գվարդիայից և ֆրանսական գլխավոր շտաբից։

Հունիսի 24-ի երեկոյան Բորիսի կենակից կոմս Ժիլինսկին իր ծանոթ ֆրանսացիների համար ընթրիք սարքեց։ Այդ ընթրիքին ներկա էր մի պատվավոր հյուր՝ Նապոլեոնի ադյու-

տանտներից մեկը, ֆրանսական գվարդիայի մի քանի սպա և մի պատանի՝ ֆրանսական մի հին արիստոկրատ տոհմից՝ Նապոլեոնի մանկլավիկը։ Այդ իսկ օրը, Ռոստովը մթությունից օգտվելով, որպեսզի չճանաչվի, քաղաքացիական զգեստով, եկավ Տիլզիտ և մտավ Ժիլինսկու ու Բորիսի բնակարանը։

Ռոստովի մեջ, ինչպես և այն ամբողջ բանակի մեջ, որից եկել էր նա, Նապոլեոնի և ֆրանսացիների վերաբերմամբ, որ թշնամուց բարեկամ էին դարձել,— տակավին չէր կատարվել այն հեղաշրջումը, որ տեղի էր ունեցել գլխավոր կայանում և Բորիսի մեջ։ Բանակում բոլորը դեռ շարունակում էին նախկին ոխի, ատելության ու երկյուղի խառն զգացում տածել դեպի Բոնապարտն ու ֆրանսացիները։ Դեռ մի քանի ժամանակ առաջ Ռոստովը, Պլատովի կազակ սպայի հետ խոսելիս, վիճում էր այն մասին, թե եթե Նապոլեոնը գերի ընկներ, նրա հետ կվարվեին ոչ իբրև թագավորի, այլ իբրև ոճրագործի հետ։ Դեռ քիչ առաջ ճանապարհին հանդիպելով ֆրանսացի մի վիրավոր գնդապետի, Ռոստովը տաքացավ, ապացուցելով նրան, որ հաշտություն չի կարող լինել օրինական թագավորի և ոճրագործ Բոնապարտի միջև։ Ուստի Ռոստովին՝ Բորիսի բնակարանում մեծապես զարմացրեց ֆրանսացի սպաների տեսքը, որոնց հագինը մունդիրներն էին, որոնց Ռոստովը հետախուզության ժամանակ սովորել էր նայել բոլորովին այլ կերպ։ Հենց որ նա տեսավ դռան միջից գլուխը հանած ֆրանսական սպային՝ պատերազմի, թշնամության այդ զգացումը, որ միշտ զգում էր նա թշնամուն տեսնելիս, հանկարծ պաշարեց նրան։ Նա շեմքին կանգ առավ և ռուսերեն հարցրեց, թե այստե՞ղ է ապրում արդյոք Դրուբեցկոյը։ Բորիսը միջանցքում տարբեր ձայն լսելով, դուրս եկավ ընդառաջ։ Երբ նա Ռոստովին ճանաչեց, նրա դեմքն առաջին վայրկյանին տհաճություն արտահայտեց։

— Ախ, այդ դու ես, շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ քեզ տեսնելուս,— ասավ նա ժպտալով ու դեպի նա առաջանալով։ Բայց Ռոստովը նկատեց նրա առաջին արտահայտությունը։

— Ես, կարծեմ, անժամանակ եկա,— ասավ Ռոստովը,— ես չէի գա, բայց գործ ունեմ,— ավելացրեց նա ստոնությամբ։

— Այդ ոչինչ, զարմանում եմ միայն, թե դու ինչպես ես եկել գնդից։ — Dans un moment je suis á vous[1], — դիմեց նա իրեն կանչողին։

— Տեսնում եմ, որ ես անժամանակ եմ եկել,— կրկնեց Ռոստովը։

Անբավականության արտահայտությունն արդեն չքացել էր Բորիսի դեմքից և, ըստ երևույթին, մտածելով ու որոշելով, թե ինչ պետք է անի, նա բոլորովին հանդարտ բռնեց Ռոստովի երկու ձեռքը և տարավ նրան հարևան սենյակը։ Բորիսի աչքերը, որ հանգիստ ու անթարթ նայում էին Ռոստովին, կարծես ինչ-որ բանով փառակալած լինեին, կարծես այդ աչքերի վրա մի ինչ-որ կապույտ ծածկոց կար։ Այդպես էր թվում Ռոստովին։

— Դե, բավակա՛ն է, խնդրե՛մ, քեզ համար էլ անժամանակը ո՞րն է,— ասավ Բորիսը։

Բորիսը նրան տարավ ընթրիքի սենյակը, ծանոթացրեց հյուրերին և նրա անունը տալով՝ բացատրեց, որ նա ազատքաղաքացի չէ, այլ հուսարական սպա, իր հին ընկերը։

— Կոմս Ժիլինսկի, le comte N. N., le capitaine S. S.,— տվեց նա հյուրերի անունը, և Ռոստովը խոժոռադեմ նայեց ֆրանսացիներին, տհաճությամբ գլուխ տվեց նրանց ու լռեց։

Երևում էր, որ Ժիլինսկին ուրախ չէր այդ նոր ռուս մարդուն իր շրջանում տեսնելով, և ոչ մի խոսք չասավ Ռոստովին։ Բորիսը կարծես չնկատեց Ռոստովի պատճառած նեղությունը, և նույն հաճելի հանդարտությամբ ու փառակալած աչքերով, որով նա դիմավորեց Ռոստովին, աշխատում էր խոսակցությունն աշխուժացնել։ Ֆրանսացիներից մեկը, ֆրանսական սովորական քաղաքավարությամբ դիմեց համառորեն լռող Ռոստովին և ասավ, թե նա երևի նրա համար է եկել Տիլզիտ, որ տեսնի կայսեր։

— Ոչ, ես գործ ունեմ,— կարճ պատասխանեց Ռոստովը։

Ռոստովը վատ տրամադրության մեջ ընկավ հենց այն բանից հետո, երբ անբավականություն նկատեց Բորիսի դեմքին, և, ինչպես միշտ պատահում է վատ տրամադրություն ունեցող մարդկանց, նրան թվում էր, թե բոլորն էլ թշնամաբար են նայում իրեն, և թե ինքը բոլորին խանգարում է։ Եվ,

[1] Իսկույն, ես քո տրամադրության տակ եմ։

իսկապես, նա բոլորին էլ խանգարում էր, ուստի և նոր սկսված խոսակցության ժամանակ մնաց մեկուսացած։ Եվ ինչո՞ւ համար է նա այստեղ նստել, ասում էին այն հայացքները, որ նետում էին հյուրերը նրա կողմը։ Ռոստովը վեր կացավ և մոտեցավ Բորիսին։

— Այնուամենայնիվ ես քեզ նեղություն եմ պատճառում, — ասավ Ռոստովը կամաց, — գնանք գործի մասին խոսենք և ես գնամ։

— Չէ՛, ի՛նչ ես ասում, բոլորովին, — ասավ Բորիսը։ — Բայց եթե հոգնած ես՝ գնանք իմ սենյակը՝ պառկիր, հանդըստացիր։

— Եվ իսկապես...

Նրանք մտան մի փոքրիկ սենյակ, ուր Բորիսն էր քնում։ Ռոստովն առանց նստելու, զրգռված՝ կարծես Բորիսը ինչ-որ բանում մեղավոր էր նրա առաջ, սկսեց Բորիսին պատմել Դենիսովի գործը և վերջում հարցրեց, թե նա կուզենար և կարող է արդյոք իր գեներալի միջոցով խնդրել թագավորին Դենիսովի համար և նրա միջոցով էլ նամակ հանձնել թագավորին։ Երբ նրանք մենակ մնացին, Ռոստովն առաջին անգամ համոզվեց, որ ինքը դժվարանում է Բորիսի աչքերին նայել։ Բորիսը ոտը-ոտի վրա դրած և ձախ ձեռով աջ ձեռի բարակ մատները շփելով, լսում էր Ռոստովին, ինչպես լսում է գեներալն իր ստորադրյալի զեկուցումը՝ մերթ նայելով մի կողմ, մերթ նույն, ասես փառակալած աչքերով նայելով ուղիղ Ռոստովի աչքերին։ Ամեն անգամ այդպիսի դեպքերում Ռոստովն անհարմար դրության մեջ էր զգում իրեն և աչքերը խոնարհում։

— Ես այդ տեսակ գործերի մասին լսել եմ և գիտեմ, որ թագավորն այդպիսի դեպքերում շատ խիստ է։ Ես կարծում եմ գործը չպետք է հասցնել նորին մեծության։ Ըստ իս՝ ավելի լավ է ուղղակի խնդրել կորպուսի հրամանատարին... բայց ընդհանրապես ես կարծում եմ...

— Ուրեմն դու չես ուզում մի բան անել, այդպես էլ ասա, — համարյա թե գոռաց Ռոստովը՝ առանց Բորիսի աչքերին նայելու։

Բորիսը ժպտաց։

— Ընդհակառակը, ես կանեմ՝ ինչ կարող եմ, միայն ես կարծում էի...

Այդ միջոցին դռնից լսվեց Ժիլինսկու ձայնը, որ կանչում էր Բորիսին։

— Դե, գնա՛, գնա՛, գնա՛... — ասավ Ռոստովը և, ընթրիքից հրաժարվելով ու փոքրիկ սենյակում մենակ մնալով, նա երկար անց ու դարձ էր անում այնտեղ և լսում ֆրանսերեն ուրախ խոսակցություն հարևան սենյակից։

XX

Ռոստովը Տիլզիտ եկավ մի այնպիսի օր, որ շատ քիչ հարմար էր միջնորդություն անել Դենիսովի համար։ Ռոստովն ինքը չէր կարող գնալ հերթապահ գեներալի մոտ, քանի որ ֆրակով էր և Տիլզիտ եկել էր առանց թույլտվության, իսկ Բորիսը եթե մինչև անգամ ցանկանար էլ, չէր կարող Ռոստովի գալու հաջորդ օրն այդ բանն անել։ Այդ օրը, հունիսի 27-ին ստորագրվեցին հաշտության առաջին պայմանները։ Կայսրերները փոխանակվեցին շքանշաններով. Ալեքսանդրն ստացավ Պատվո Լեգիոնի շքանշան, իսկ Նապոլեոնը՝ Անդրեյ Ա աստիճանի շքանշան, և այդ օրն էլ ի պատիվ Պրեոբրաժենսկի գումարտակի, նշանակված էր ճաշկերույթ, որ տալիս էր ֆրանսական գվարդիայի գումարտակը։ Թագավորները պետք է ներկա լինեին այդ պատվաճաշին։

Ռոստովը՝ Բորիսի մոտ իրեն այնքան անհարմար և անհաճո դրության մեջ էր զգում, որ երբ ընթրիքից հետո Բորիսը սենյակ մտավ, Ռոստովը քնած ձևացավ և մյուս օրը վաղ առավոտյան. աշխատելով նրան չտեսնել, դուրս եկավ տնից։ Նիկոլայը՝ ֆրակով ու կլոր դլխարկով, թափառում էր քաղաքում, նայելով ֆրանսացիներին ու նրանց մունդիրները, դիտելով փողոցները և այն տները, ուր ապրում էին ռուսական և ֆրանսական կայսրները։ Հրապարակում նա տեսավ բացած սեղաններ և ճաշկերույթի պատրաստություն, փողոցներում տեսավ ձգված կտորներ՝ ռուսական ու ֆրանսական դրոշակների գույներով, և հսկայական վենզելներ՝ «A» և «N» տառերով։ Տների լուսամուտներում նույնպես դրոշակներ և վենզելներ կային։

«Բորիսը չի ուզում ինձ օգնել, է՛հ, ես էլ նրան դիմել չեմ ուզում։ Այս բանը վճռված է», մտածում էր Նիկոլայը, «մեր

մեջ ամեն ինչ վերջացած է, բայց ես այստեղից չեմ գնա, մինչև որ չանեմ ա՛յն, ինչ կարող եմ անել Դենիսովի համար և, որ գլխավորն է, մինչև նամակը չհանձնեմ թագավորին։ Թագավորի՞ն... Նա այստեղ է», մտածեց Ռոստովը կրկին անգամ ակամա մոտենալով այն տանը, ուր իջևանել էր Ալեքսանդրը։

Տան մոտ կանգնած էին հեծնելու համար պատրաստ ձիերը, շքախումբը հավաքվում էր. ըստ երևույթին թագավորը պատրաստվում էր տեղ գնալու։

«Յուրաքանչյուր րոպե ես կարող եմ նրան տեսնել», մտածեց Ռոստովը. «եթե կարողանայի նամակն ուղղակի հանձնել և բոլորը նրան պատմել, մի՞թե ինձ կկալանավորեին ֆրակիս համար։ Հազիվ թե։ Նա կհասկանար, թե ո՛ւմ կողմն է արդարությունը։ Նա ամեն ինչ հասկանում է, ամեն ի՞նչ գիտի։ Ո՞վ կարող է նրանից արդար և մեծահոգի լինել։ Ենթադրենք ինձ կալանավորեն էլ, թե ինչո՛ւ այստեղ եմ, ինչ վնաս», մտածում էր Նիկոլայը, նայելով մի սպայի, որ մտնում էր թագավորի իջևանած տունը։ «Ահա մտնում են։ Է՜հ. բոլորը դատարկ բան է։ Կերթամ և ինքս անձամբ նամակը կհանձնեմ թագավորին. դա ավելի վատ Դրուբեցկոյի համար, որ ինձ այստեղ հասցրեց»։ Եվ հանկարծ մի վճռականությամբ, որ ինքն էլ չէր սպասում իրենից, Ռոստովը նամակը գրպանում շոշափելով, գնաց ուղղակի դեպի այն տունը, ուր ապրում էր թագավորը։

«Ոչ, այժմ այլևս առիթը բաց չեմ թողնի, ինչպես Աուստերլիցից հետո էր», մտածեց նա, սպասելով ամեն վայրկյան հանդիպել թագավորին և զգալով, որ այդ մտածելիս արյունը հոսում է դեպի սիրտը։ «Ոտները կընկնեմ և կսնդրեմ։ Նա կբարձրացնի ինձ, կլսի և դեռ շնորհակալ կլինի ինձնից»։ «Ես երջանիկ եմ, երբ կարող եմ բարիք անել, բայց անարդարությունն ուղղելը՝ ամենամեծ երջանկությունն է», — երևակայում էր Ռոստովը թագավորին առելիք խոսքերը։ Եվ նա՝ իրեն հետաքրքիր նայողների մոտով գնաց դեպի թագավորի տան մուտքը։

Մուտքից մի լայն սանդուղք տանում էր ուղիղ դեպի վերևաց կողմը երևում էր մի փակ դուռ. ներքևի՝ սանդուղքի տակ, կար մի ուրիշ դուռ, որ տանում էր դեպի ներքին հարկը։

— Ո՞ւմն եք կամենում, — հարցրեց մեկը։

— Մի նամակ, մի խնդիրք ունեմ նորին մեծության հանձնելու, — ասավ Նիկոլայը դողացող ձայնով։

— Խնդիրք — հերթապահի՛ն. համեցե՛ք այստեղ (նրան ցույց տվին ներքևի դուռը)։ Միայն չեն ընդունի։

Այդ անտարբեր ձայնը լսելով, Ռոստովը վախեցավ իր արածից։ Ամեն րոպե թագավորին հանդիպելու միտքը այնքան գայթակղիչ և միաժամանակ այնքան սարսափելի էր նրա համար, որ նա պատրաստ էր փախչել, բայց նրան դիմավորող կամերֆուրիերը բացեց հերթապահի սենյակի դուռը, և Ռոստովը ներս մտավ։

Ոչ բարձրահասակ, լեցուն, մի երեսուն տարեկան մարդ՝ սպիտակ անդրավարտիքով, բոտֆորտներով և մի, ինչպես երևում էր, հենց նոր հագած բատիստե շապիկով, կանգնած էր այդ սենյակում. սենեկապահը նրա ետևը կանգնած կոճկում էր մետաքսից կարած նրա գեղեցիկ վարտքակալը, որը, չը-գիտես ինչու, նկատեց Ռոստովը։ Այդ մարդը խոսում էր հարևան սենյակում գտնվող մեկի հետ։

— Bien faite et la beauté du diable[1], — ասում էր այդ մարդը, բայց Ռոստովին տեսնելով, խոսքն ընդհատեց և դեմքը խոժոռեց։

— Ինչ եք կամենում։ Խնդի՞րք։

— Qu'est-ce que c'est?[2] — հարցրեց այն մեկը մյուս սենյակից։

— Encore un petitionnaire[3], — պատասխանեց վարտքակալով մարդը։

— Դրան ասեք՝ հետո։ Հիմա դուրս է գալու. պետք է տեղ գնա։

— Հետո, հետո, վաղը։ Ուշ է արդեն...

Ռոստովը շրջվեց, որ դուրս գա, բայց վարտքակալով մարդը կանգնեցրեց նրան։

— Ո՞ւմնից է։ Դուք ո՞վ եք։

— Մայոր Դենիսովից, — պատասխանեց Ռոստովը։

— Դուք ո՞վ եք։ Սպա՞։

---

[1] Վայելչակազմ է և երիտասարդական գեղեցկություն ունի։
[2] Այդ ի՞նչ է։
[3] Դարձյալ մի խնդրատու։

— Տեղակալ, կոմս Ռոստով։

— Ի՞նչ համարձակություն։ Խնդիրքը տվեք ձեր հրամանատարության միջոցով։ Իսկ ինքներդ գնացե՛ք, գնացե՛ք...— Եվ նա սկսեց հագնել սենեկապահի մատուցած մունդիրը։

Ռոստովը կրկին դուրս եկավ միջանցք և նկատեց, որ մուտքի առաջ հավաքվել էին զորահանդեսի լրիվ համազգեստով շատ սպաներ ու գեներալներ, որոնց մոտով նա պիտի անցներ։

Անիծելով ինքն իր համարձակությունը, դողալով այն մտքից, որ ամեն վայրկյան կարող է հանդիպել թագավորին և նրա մոտ խայտառակվել ու կալանավորվել. միանգամայն ըմբռնելով իր արարմունքի ամբողջ անպատշաճությունը և դրա համար զղջալով, Ռոստովն, աչքերը խոնարհած, դուրս եկավ այդ տնից, որը շրջապատված էր փայլուն շքախմբի բազմությամբ, երբ հանկարծ մի ծանոթ ձայն կանչեց և մի ձեռ կանգնեցրեց նրան։

— Սիրելիս, այստեղ ի՞նչ եք անում ֆրակով,— հարցրեց նրան մի թավ ձայն։

Դա հեծելազորի մի գեներալ էր, որն այս պատերազմում արժանացել էր թագավորի առանձին ողորմածության. նա նախկին պետն էր այն դիվիզիայի, ուր առաջ ծառայում էր Ռոստովը։

Ռոստովը վախեցած սկսեց արդարանալ, բայց տեսնելով գեներալի բարի, ժպտուն դեմքը, մի կողմ քաշվելով, հուզված ձայնով հայտնեց նրան գործի ամբողջ էությունը, խնդրելով պաշտպանել իրեն՝ գեներալին լավ ծանոթ Դենիսովին։ Գեներալը Ռոստովին լսելով՝ գլուխը շարժեց լրջորեն։

— Ափսոս, ափսոս տղան. նամակը տուր։

Հազիվ Ռոստովը կարողացավ հանձնել նամակը և Դենիսովի ամբողջ գործը պատմել, երբ սանդուղքից արագ խթանավոր քայլերի ձայն լսվեց, և գեներալը՝ Ռոստովից հեռանալով, մոտեցավ մուտքին։ Թագավորի շքախմբի մարդիկ սանդուղքից ցած վազեցին և գնացին դեպի ձիերը։ Ձիավարժ էնեն, նույն այն մարդը, որ Աուստերլիցումն էր, ձին մոտ տարավ թագավորին. և սանդուղքի վրա լսվեց թեթև քայլերի ձայն, որ Ռոստովն իսկույն ճանաչեց։ Ճանաչվելու երկյուղը մոռանալով, Ռոստովը հետաքրքրվող բնակիչներից մի քանիսի հետ մոտեցավ մուտքին, և նա, երկու տարուց հետո, կրկին տեսավ նրա պաշտած դիմագծերը, նույն դեմքը, նույն հայացքը, նույն քայլվածքը, մեծության ու հեզության նույն մարմնացումը... Եվ թագավորի վերաբերմամբ ունեցած հիացմունքի ու սիրո զգացումը նախկին ուժով նորից հարություն առավ Ռոստովի սրտում։ Թագավորը Պրեոբրաժենսկի գնդի մունդիրով, սպիտակ կաշվե անդրավարտիքով և երկար բոտֆորտներով, աստղը կրծքին, որ Ռոստովը չգիտեր ի՛նչ աստղ էր (դա Légion d'honneur[1] էր),— դուրս եկավ մուտքը՝ գլխարկը ձեռին և ձեռնոցը հագնելով։ Նա կանգ առավ ու շուրջը նայեց, ամեն ինչ կարծես լուսավորելով իր հայացքով։ Գեներալներից մի երկուսին նա մի քանի խոսք ասավ։ Նա ճանաչեց նաև Ռոստովի դիվիզիայի նախկին պետին, ժպտաց և նրան իր մոտ կանչեց։

Ամբողջ շքախումբը ետ քաշվեց և Ռոստովը տեսավ, թե ինչպես այդ գեներալը երկար ժամանակ ինչ-որ բան էր ասում Թագավորին։

Թագավորը նրան մի քանի խոսք ասավ և մի քայլ արավ ձիուն մոտենալու։ Շքախումբը և փողոցի բազմությունը, որի մեջ էր և Ռոստովը, կրկին առաջացան դեպի Թագավորը։ Կանգ առնելով ձիու մոտ, մի ձեռը թամբին գցելով՝ Թագավորը դիմեց հեծգնդի գեներալին և բարձր ձայնով ասավ, ըստ երևույթին ցանկանալով, որ բոլորն էլ լսեն իրեն։

— Չեմ կարող, գեներալ, չեմ կարող նրա՝ համար, որ օրենքն ավելի ուժեղ է ինձնից,— ասավ Թագավորը և ոտը դրեց ասպանդակին։

Գեներալը հարգալիր խոնարհեց գլուխը, Թագավորը ձին հեծավ և քառատրոփ գնաց փողոցով։ Ռոստովը հիացմունքից իրեն կորցրեց, և բազմության հետ միասին վազեց նրա ետևից։

XXI

Հրապարակում, ուր գնաց Թագավորը, դեմ առ դեմ կանգնած էին՝ աջից պրեոբրաժենցիների գումարտակը, ձախից ֆրանսական գվարդիայի գումարտակը՝ արջի մորթուց կարած գլխարկներով։

[1] Պատվո լեգիոնի շքանշան։

Այն ժամանակ, երբ թագավորը մոտենում էր հրացանները ոտքի առած գումարտակների մի թևին, հակառակ թևին մոտեցավ ձիավորների մի ուրիշ խումբ, և նրանց առջևում Ռոստովը ճանաչեց Նապոլեոնին։ Դա չէր կարող ուրիշը լինել։ Նա ձին քշում էր քառատրոփ. նա փոքրիկ գլխարկով էր, Անդրեյան ժապավենը ուսով գցած, կապույտ մունդիրը սպիտակ կամզոլի վրա բաց հագած, շատ ազնվացեղ արաբական մոխրագույն նժույգի վրա և մոռագույն, ոսկեկար տապճակով։ Ալեքսանդրին մոտենալով, նա գլխարկը բարձրացրեց, և այդ ժամանակ Ռոստովի՝ հեծելակի աչքը չէր կարող չնկատել, որ Նապոլեոնը վատ և թույլ էր նստած ձիու վրա։ Գումարտակները գոչեցին «Ուռա՞» և «Vive l'Empéreur[1]»։ Նապոլեոնն ինչ-որ բան ասավ Ալեքսանդրին։ Երկու կայսրներն էլ իջան ձիուց և իրար ձեռ տվին։ Նապոլեոնի դեմքին մի անհաճո-կեղծավոր ժպիտ կար։ Ալեքսանդրը սիրալիր արտահայտությամբ ինչ-որ բան էր ասում նրան։

Ռոստովն առանց աչքը խոնարհելու, երկյուղ չկրելով ֆրանսական ժանդարմների ձիերի ոտների տակն ընկնելուց, որոնք բազմությանը ետ էին հրում, հետևում էր Ալեքսանդր կայսրի և Բոնապարտի յուրաքանչյուր շարժումին։ Նրան, իբրև անսպասելի մի բան, զարմացրեց այն, որ Ալեքսանդրն իրեն պահում էր իբրև Բոնապարտին հավասար, իսկ Բոնապարտն այդ մոտիկությունը կարծես բոլորովին բնական ու սովորական համարելով, թագավորի հետ վարվում էր, իբրև հավասարի հետ՝ միանգամայն ազատ։

Ալեքսանդրն ու Նապոլեոնը՝ երկար ձգվող շքախմբով մոտեցան Պրեոբրաժենսկի գումարտակի աջ թևին, անցնելով այդտեղ կանգնած բազմության առջևից։ Անսպասելիորեն բազմությունն այնքան մոտ եղավ կայսրներին, որ Ռոստովը, բազմության առաջին շարքերում գտնվելով, սարսափեց այն մտքից, թե հանկարծ իրեն չճանաչեն։

— Sire, je vous demande la permission de donner la Légion d'honneur au plus brave de vos soldats[2], — լսվեց

[1] Կեցցե կայսրը։

[2] Թագավոր, ես ձեզանից թույլտվություն եմ խնդրում՝ Պատվո լեգիոնի շքանշան տալ ձեր զինվորներից ամենաքաջին։

կտրուկ, միանգամայն որոշ մի ձայն, որ արտասանում էր յուրաքանչյուր տառը։

Այդ խոսում էր կարճահասակ Բոնապարտեն, վարից նայելով ուղիղ Ալեքսանդրի աչքերին։ Ալեքսանդրն ուշադիր լսում է այն, ինչ իրեն ասում էին։ Եվ գլուխը խոնարհելով, նա սիրալիր ժպտաց։

— A celui qui s'est le plus vaillament conduit dans cette dernière guerre[1], — ավելացրեց Նապոլեոնը, յուրաքանչյուր վանկը շեշտելով և, Ռոստովի համար վրդովիչ հանդգնությամբ ու վստահությամբ ռուս զինվորների շարքերը դիտելով, որոնք նրա առաջ ձգված և հրացաններին պատվի առած, անշարժ նայում էին իրենց կայսրի՝ Ալեքսանդրի դեմքին։

— Votre majesté me permettra-t-elle de demander l'avis du colonel?[2] — ասավ Ալեքսանդրը և մի քանի շտապ քայլ արավ դեպի իշխան Կոզլովսկին, որ գումարտակի հրամանատարն էր։

Մինչ այդ Բոնապարտեն սկսեց հանել ձեռնոցը փոքրիկ սպիտակ ձեռից, և պատռելով այն՝ դեն գցեց։ Ադյուտանտը ետևից փութկոտությամբ առաջ նետվեց և ձեռնոցները վերցրեց։

— Ո՞ւմ տալ, — կամաց ռուսերեն լեզվով հարցրեց կայսր Ալեքսանդրը Կոզլովսկուն։

— Ո՞ւմ կհրամայեք, ձերդ մեծություն։

Թագավորը դժկամ կնճռեց դեմքը և շուրջը նայելով, ասավ.

— Չէ՞ որ պետք է մի պատասխան տալ նրան։

Կոզլովսկին վճռական տեսքով շարքերին նայեց և իր այդ հայացքով ընդգրկեց նաև Ռոստովին։

«Չլինի՞ թե ինձ», մտածեց Ռոստովը։

— Լազարև՛, — դեմքը խոժոռելով հրամայեց գնդապետը շարքի առաջին տեղը կանգնած զինվորին։ Լազարևն աշխույժ առաջ եկավ։

— Ո՞ւր ես գնում, կանգնիր այստեղ, — փսփսացին մի

[1] Նրան, ով ամենից շատ քաջություն է ցույց տվել այս պատերազմի ժամանակ։

[2] Ձերդ մեծությունն արդյոք թույլ կտա՞ հարցնել գնդապետի կարծիքը։

քանի ձայներ Լազարևին, որ չգիտեր, թե ո՛ւր գնա։ Լազարևը կանգ առավ, և երկյուղած շեղակի նայեց գնդապետին. նրա դեմքը ցնցվեց, ինչպես այդ պատահում է այն զինվորներին, որոնց կանչում են շարքի առջև։

Նապոլեոնը գլուխը թեթևակի շուռ տվեց և ետ տարավ իր փոքրիկ փափլիկ ձեռը, կամենալով կարծես ինչ-որ բան վերցնել։ Նրա շքախմբի մարդիկ իսկույն գլխի ընկնելով, թե բանն ինչումն է, իրար անցան, փսփսացին, ինչ-որ բան հայտնեցին միմյանց, և մանկլավիկը՝ այն փոքրիկ տղան, որին երեկ Ռոստովը տեսավ Բորիսի մոտ, առաջ վազեց և թագավորի պարզած ձեռի վրա հարգալիր խոնարհվելով, շտապելով նրան մի վայրկյան անգամ սպասելու, նրա ափը դրեց կարմիր ժապավենով մի շքանշան։ Նապոլեոնն, առանց նայելու, սեղմեց երկու մատը և շքանշանը մնաց նրա ձեռքում։ Նա մոտեցավ Լազարևին, որն այդ բոպեին աչքերը չռած շարունակում էր համառորեն նայել միայն իր թագավորին, և Նապոլեոնը նայեց Ալեքսանդրը կայսեր, դրանով ցույց տալով, որ այն, ինչ ինքն անում է այժմ, անում է իր դաշնակցի համար։ Փոքրիկ սպիտակ ձեռը՝ շքանշանը բռնած մոտեցավ զինվոր Լազարևի կոճակին։ Նապոլեոնը կարծես գիտեր, որպեսզի այդ զինվորը հավիտյան երջանիկ լինի, պարգևատրված և ամենից աչքի ընկնող լինի աշխարհում, հարկավոր էր միայն, որ նա՝ Նապոլեոնը արժան համարի իր ձեռն այդ զինվորի կրծքին դիպցնելու։ Նապոլեոնը խաչը Լազարևի կրծքին դնելով և ձեռքը ցած թողնելով, դիմեց Ալեքսանդրին, կարծես նա գիտեր, որ խաչը պիտի կպչի Լազարևի կրծքին։ Խաչը իսկապես կպավ։ Միշտ ծառայության պատրաստ ռուս և ֆրանսացի մարդիկ իսկույն վերցրին խաչը և կպցրին այն զինվորի սունդիրին։ Լազարևը մոայլ նայեց սպիտակ ձեռներով փոքրիկ մարդուն, որ ինչ-որ մի բան արավ իրեն և, շարունակելով անշարժ հրացանը պատվի բռնել նորից սկսեց ուղիղ Ալեքսանդրի աչքերին նայել, կարծես Ալեքսանդրին հարցնելով՝ էլի մնա կանգնած, թե այժմ կհրամայեն իր տեղը գնալ, կամ, գուցե, էլի մի բան կհրամայեն անել։ Բայց նրան ոչինչ չհրամայեցին և նա բավական երկար մնաց այդ դրության մեջ։

Թագավորները ձի նստեցին ու գնացին։ Պրեոբրաժենցիներն իրենց շարքերը քայքայելով, խառնվեցին ֆրանսական

գվարդիայի զինվորներին և սեղան նստեցին, որ պատրաստված էր իրենց համար։

Լազարևը նստած էր պատվավոր տեղը. ֆրանսացի և ռուս սպաները սեղմում էին նրա ձեռը, գրկում, շնորհավորում։ Սպաների և ժողովրդի բազմությունը մոտենում էր, որ միայն Լազարևին նայի։ Ռուս-ֆրանսական խոսակցության ու ծիծաղի մոմոցը կանգնել էր հրապարակում, սեղանների շուրջը։ Երկու սպա՝ կարմրատակած դեմքերով, ուրախ ու երջանիկ տեսքով անցան Ռոստովի մոտով։

— Ի՞նչպես ես գտնում այդ հյուրասիրությունը։ Ամեն բան արծաթյա է, — ասավ նրանցից մեկը։ — Լազարևին տե՞սար։

— Տեսա՛։

— Ասում են՝ վաղն էլ պրեոբրաժենցիներն են նրանց հյուրասիրելու։

— Բայց, ի՛նչ բախտավոր էր Լազարևը։ 1200 ֆրանկ կենսաթոշա՞կ։

— Տղեք, ա՛յ քեզ փափախ, — գոչեց մի պրեոբրաժենցի, ֆրանսացու մազոտ փափախը գլխին դնելով։

— Ո՞հ, ի՛նչ էլ լավ սազում է, հիանալի է։

— Դու լսեցի՞ր նրանց կարծիքը, — ասավ գվարդիական գնդի սպան մյուսին։ Նախանցյալ օրը՝ «Napoléon, France, bravoure[1]», երեկ՝ «Alexandre, Russie, grandeur[2]». մի օր մեր թագավորն է այդ կարծիքը հայտնում, մի ուրիշ օր՝ Նապոլեոնը։ Վաղն էլ թագավորը Գեորգիի շքանշան կուղարկի ֆրանսական գվարդիայի զինվորներից ամենաքաջին։ Չի լինի չէ, պետք է նույն ձևով պատասխանել։

Բորիսը նույնպես, իր ընկեր Ժիլինսկու հետ, եկավ պրեոբրաժենցիների պատվաճաշը դիտելու։ Վերադարձին Բորիսը նկատեց Ռոստովին, որ կանգնած էր տան անկյունի մոտ։

— Ռոստո՛վ, բարև՛. մենք էլ չտեսնվեցինք, — ասավ նա և իրեն զսպել չկարողացավ, հարցրեց թե ի՛նչ է պատահել նրան, որովհետև այնքան տարօրինակ-մոայլ ու տխուր էր Ռոստովի դեմքը։

---

[1] Նապոլեոն, Ֆրանսիա, քաջություն։

[2] Ալեքսանդր, Ռուսաստան, մեծություն։

— Ոչինչ, ոչինչ, — պատասխանեց Ռոստովը։

— Կգաս ինձ մոտ։

— Հա, կգամ։

Ռոստովը կանգնեց անկյունի մոտ և հեռվից երկար նայում էր քեֆ անողներին։ Նրա մտքում կատարվում էր մի տաժանելի աշխատանք, որը նա ոչ մի կերպ չէր կարողանում հասցնել իր վախճանին։ Նրա հոգում ծագում էին սոսկալի կասկածներ։ Մերթ հիշում էր Դենիսովին՝ իր փոխված արտահայտությամբ, խոնարհությամբ, և ամբողջ հիվանդանոցն՝ այն կըտրված ձեռներով ու ոտներով, այն կեղտով ու հիվանդություններով։ Եվ նրան պարզ թվաց, թե ինքն այժմ զգում է մեռած մարմնի այդ հիվանդանոցային հոտը, ու նայում էր շուրջը՝ իմանալու, թե որտեղից կարող է գալ այդ հոտը։ Մերթ նա հիշում էր այդ ինքնագոհ տպիտակաձեռ Բոնապարտին, որն այժմ կայսր էր և որին սիրում ու հարգում էր Ալեքսանդր կայսրը։ Բայց էլ ինչու համար են կտրված ձեռները, ոտները, սպանված մարդիկ։ Մերթ էլ հիշում էր նա պարգևատրված Լազարևին և պատժված ու չներված Դենիսովին։ Երբեմն նրա գլուխն այնպիսի տարօրինակ մտքեր էին գալիս, որ նա վախենում էր նրանցից։

Պրեոբրաժենցիների ուսելիքի հոտը և իր քաղցը Ռոստովին սթափեցրին այդ դրությունից։ Նախքան մեկնելը՝ պետք էր բան ուտել։ Նա գնաց դեպի այն հյուրանոցը, որ առավոտյան տեսել էր։ Հյուրանոցում այնքան ժողովուրդ, սպաներ (իր նման քաղաքացիական զգեստներով եկած) կային, որ նա հազիվ ճաշ ստացավ։ Իրենց դիվիզիայից երկու սպա միացան նրան։ Բնականաբար խոսք բացվեց հաշտության մասին։ Ռոստովի ընկեր-սպաները, ինչպես և բանակի մեծ մասը, դժգոհ էին Ֆրիդլանդից հետո կնքած հաշտությունից։ Խոսում էին, որ եթե մի քիչ էլ դիմանային, Նապոլեոնը կորած էր, որովհետև նրա զորքը ոչ հաց ուներ, ոչ ռազմամթերք։ Նիկոլայն անխոս ուտում էր, և առավելապես խմում։ Նա մեն-մենակ երկու շիշ գինի խմեց։ Նրա ներսում առաջացած հուզմունքը՝ ելք չըգտնելով, շարունակում էր տանջել նրան։ Նա վախենում էր անձնատուր լինել իր մտքերին և միաժամանակ չէր կարողանում ազատվել նրանցից։ Հանկարծ սպաներից մեկի այն խոսքերի վրա, թե մարդ վիրավորանք է զգուս ֆրանսացիներին

նայելիս, Ռոստովն սկսեց տաքացած գոռալ, միանգամայն անտեղի, ուստի և շատ զարմացրեց սպաներին։

— Եվ դուք ինչպե՞ս եք համարձակվում դատել, թե ինչն ավելի լավ կլիներ, — բղավեց նա հանկարծ՝ դեմքն արյունով լցված։ — Ի՞նչպես եք դուք համարձակվում դատել թագավորի գործերի մասին. մենք ի՞նչ իրավունք ունենք դատելու։ Մենք չենք կարող հասկանալ թագավորի ոչ նպատակը, ոչ վարմունքը։

— Բայց ես ոչ մի խոսք չասի թագավորի մասին, — արդարանում էր սպան, որ ոչնչով չէր կարողանում բացատրել Ռոստովի դյուրագրգռությունը, քան միայն նրանով, որ նա հարբած էր։

Բայց Ռոստովը չէր լսում։

— Մենք դիվանագիտական պաշտոնյաներ չենք, այլ զինվորներ և ուրիշ ոչինչ, — շարունակեց նա։ — Մեզ հրամայում են մեռնել՝ ուրեմն պետք է մեռնել, իսկ եթե պատժում են, նշանակում է ուրեմն՝ մեղավոր ես. դատողը մենք չպիտի լինենք։ Հաճելի է թագավոր կայսեր՝ Բոնապարտին կայսր ճանաչել և նրա հետ դաշն կնքել, նշանակում է այդպես էլ հարկավոր է։ Իսկ եթե մենք սկսենք ամեն բանի մասին դատել ու դատողություններ տալ, այն ժամանակ էլ ոչ մի սուրբ բան չի մնա։ Այդպիսով՝ մենք կարող ենք ասել, թե աստված չկա, ոչինչ էլ չկա, — պոռաց Նիկոլայը սեղանին զարկելով, միանգամայն անտեղի՝ իր խոսակիցների հասկացողությամբ, բայց միանգամայն համապատասխան իր մտքերի ընթացքին։ — Մեր գործն է՝ կատարել մեր պարտականությունը, կռվել և չմտածել. ահա՛ բոլորը, — եզրակացրեց նա։

— Եվ խմել, — ասաց սպաներից մեկը, որ չէր ցանկանում կռվշտել։

— Այո՛, և խմել, — կցեց Նիկոլայը։ — Է՛յ, տղա։ Մի շիշ էլ, — կանչեց նա։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

1808 թվին Ալեքսանդր կայսրը մեկնեց Էրֆուրտ՝ նորից Նապոլեոնի հետ տեսակցելու։ Պետերբուրգի բարձր հասարակության մեջ շատ էին խոսում այդ հանդիսավոր տեսակցության վեհության մասին։

1809 թվին աշխարհի երկու տիրակալների — այսպես էին անվանում Նապոլեոնին ու Ալեքսանդրին — մոտիկությունը հասավ այնտեղ, որ երբ Նապոլեոնն այդ տարի պատերազմ հայտարարեց Ավստրիային, ռուսական մի կորպուս անցավ սահմանը՝ աջակցելու իր նախկին թշնամուն — Բոնապարտին, և կռվելու նախկին դաշնակցի — ավստրիական կայսր դեմ, — այդ մոտիկությունն այնտեղ հասավ, որ մինչև իսկ բարձր շրջաններում խոսում էին Նապոլեոնի և Ալեքսանդր կայսեր քույրերից մեկի ամուսնության հնարավորության մասին։ Բայց, արտաքին քաղաքական նկատառումներից զատ, ռուս հասարակությունն այդ ժամանակ իր ամբողջ ուշադրությունը դարձրել էր ներքին բարենորոգումների վրա, որ այդ միջոցին կատարվում էր պետության կառավարչության բոլոր մասերում։

Իսկ կյանքը, մարդկանց իսկական կյանքը — առողջության, հիվանդության, աշխատանքի, հանգստի էական հոգսերով, մտքի, գիտության, բանաստեղծության, երաժշտության, սի-

րո, բարեկամության, ատելության, կրքերի շահագրգռություններով ընթանում էր, ինչպես և միշտ, անկախ Նապոլեոն Բոնապարտի քաղաքական մոտիկությունից կամ թշնամությունից և բոլոր հնարավոր բարենորոգումներից։

Իշխան Անդրեյը երկու տարի շարունակ ապրեց գյուղում։

Բոլոր այն ձեռնարկումները, որ Պիեռն սկսեց իր կալվածներում ու ոչ մի հետևանքի չհասցրեց, անդադար մի գործից մյուսին անցնելով, այդ բոլոր ձեռնարկումները, առանց որևէ մեկին հրահանգելու և առանց նկատելի աշխատանքի՝ կատարվեցին իշխան Անդրեյի ձեռքով։

Նա ուներ, Պիեռին գերազանցապես պակասող, մի բանի կպչելու այն գործնական ոգին, որն առանց թափի ու ջանքերի ընթացք էր տալիս գործին։

Նա երեք հարյուր հոգի ունեցող իր մի կալվածում գյուղացիներին դարձրեց ազատ երկրագործներ (դա առաջին օրինակներից մեկն էր Ռուսաստանում), իսկ մյուսներում՝ կորվ փոխարինեց բահրայով։ Իր հաշվով նա Բոգուչարովո բերել տվեց մի ուսյալ տատմեր՝ ծննդկաններին օգնելու, իսկ քահանան ոռճիկով գրագիտություն էր սովորեցնում գյուղացիների ու ծառաների երեխաներին։

Իր ժամանակի մի մասն իշխան Անդրեյն անց էր կացնում Լիսիե Գորիում՝ հոր և որդու մոտ. երեխան տակավին դայակի մոտ էր։ Ժամանակի մյուս մասը՝ Բոգուչարովոյի մենաստանում, ինչպես անվանում էր հայրը նրա գյուղը։ Չնայած որ նա Պիեռի առաջ ցույց էր տալիս, թե ինքն անտարբեր է դեպի աշխարհի արտաքին անց ու դարձը, բայց նա ուշի-ուշով հետևում էր այդ անցքերին, ստանում էր շատ գրքեր և, երբ իր կամ հոր մոտ թարմ մարդիկ էին գալիս Պետերբուրգից՝ կյանքի իսկական հորձանքից, նա, ի զարմանս իր, նկատում էր, որ այդ մարդիկ արտաքին ու ներքին քաղաքականության մեջ կատարվող իրադարձություններն իմանալու խնդրում իրենից շատ ետ են մնացել, թեև ինքը շարունակ նստած է գյուղում։

Բացի կալվածների հետ կապված զբաղմունքներից, բացի ոմենաբազմազան գրքերի ընթերցումից, իշխան Անդրեյն

այդ ժամանակ զբաղվում էր մեր վերջին երկուգժբախտ պատերազմների քննական վերլուծությամբ և մեր զինվորական կանոնադրություններն ու որոշումները փոփոխելու նախագիծ էր կազմում։

1809 թվի գարնանը իշխան Անդրեյը մեկնեց Ռյազանի կալվածները, որոնք պատկանում էին որդուն, որի խնամակալն էր ինքը։

Կառքի մեջ, գարնան արևից տաքանալով, նայում էր նա առաջին կանաչին. կեչու առաջին տերևներին և գետնան առաջին ամպերի սպիտակ քուլաներին, որոնք վազում էին երկնքի պայծառ կապույտով։ Իշխան Անդրեյը ոչ մի բանի մասին չէր մտածում. նա ուրախ ու անտարբեր նայում էր չորս կողմը։

Կառքն անցավ այն գետանցքը, ուր մի տարի առաջ իշխան Անդրեյը խոսակցություն էր ունեցել Պիեռի հետ. ապա անցավ մի կեղտոտ գյուղ, կալեր, կանաչ տեղեր, մի զառիվայր, ուր տակավին ձյուն կար կամուրջի մոտ, անցավ կավոտ հեղեղատով մի վերելք, հնձած մի արտ և տեղ-տեղ կանաչող թփուտներ ու մտավ կեչու անտառը, որ տարածվում էր ճանապարհի երկու կողմը։ Անտառում համարյա թե շոգ էր, քամի չկար։ Կեչի ծառերն ամբողջովին ծածկված կանաչ կպչուն տերևներով՝ անշարժ էին. և անցած տարվա տերևների տակից նրանց բարձրացնելով, կանաչին տալով, դուրս էին գալիս առաջին խոտն ու բաց-մանիշակագույն ծաղիկները։ Կեչուտում այստեղ ու այնտեղ ցրված փոքրիկ եղևնիներն իրենց կոպիտ-մշտական կանաչով անախորժ հիշողություններ էին զարթնեցնում ձմռան մասին։ Մտնելով անտառը՝ ձիերը փնչացրին ու նկատելի կերպով քրտնեցին։

Լաքեյ Պյոտրը ինչ-որ բան ասավ կառապանին կառապանը դրական պատասխան տվեց։ Բայց ինչպես երևում էր, կառապանի ցույց տված համակրությունը քիչ էր Պյոտրի համար. նա կառապանի կողքից թեքվեց դեպի իր պարոնը։

— Ձերդ պայծառափայլություն, ի՞նչ թեթև է,— ասավ նա հարգալիր ժպտալով։

— Ի՞նչը։

— Թեթև է, ձերդ պայծառափայլություն։

«Ի՞նչ է ասում սա», մտածեց իշխան Անդրեյը. «Հա՛. գարնան մասին, ճիշտ է», մտածեց նա շուրջը նայելով։ «Ամեն

ինչ արդեն կանաչ է... և որքան շուտ։ Թե՛ կեչին. թե՛ լաստենին արդեն սկսում են... իսկ կաղնին չի էլ նկատվում։ Ահավասիկ և կաղնին»։

Ճանապարհի եզրին կանգնած էր մի կաղնի։ Նա հավանորեն տասն անգամ հաստակով էր անտառը կազմող կեչիներից. նա տասն անգամ հաստ և երկու անգամ բարձր էր ամեն մի կեչուց։ Դա մի հսկայական կաղնի էր, որին երկու մարդու ձեռք հազիվ վրա գար. ինչպես երևում էր նրա ճղները վաղուց էին ջարդված և կեղևը վաղուց էր ճաքճքված ու հին-հին խուլերով ծածկված։ Իր հսկայական անճոռնի, անհամաչափորեն պարզած խլխլոտած ձեռներով ու մատներով, նա իբրև մի հին, բարկացկոտ ու արհամարհոտ հրեշ կանգնել էր ժպտացող կեչիների մեջ։ Միայն անկենդան ու մշտապես կանաչ փոքրիկ եղևնիները, որ ցրված էին անտառում, կաղնու հետ միասին չէին ցանկանում ենթարկվել գարնան հմայքին և չէին ուզում ո՛չ գարուն, ո՛չ արև։

«Գարուն, և՛ սեր, և երջանկությո՞ւն,— կարծես ասում էր այդ կաղնին,— և ինչպես ձեզ չի ձանձրացնում այս միևնույն հիմար ու անմիտ խաբեությունը։ Բոլորը միևնույն է և բոլորը խաբեություն։ Չկա ո՛չ գարուն, ո՛չ արև, ո՛չ երջանկություն։ Նայեցեք ահա՝ նոտած են ճնշված, միշտ մենակ ու անգենդան եղևնիները և ահա ես էլ պարզել եմ իմ կոտրտված, պատառոտված մատներն ամեն կողմից, որտեղից էլ որ բուսել են նրանք՝ մեջքից, կողքերից. ինչպես բուսել եմ — այնպես էլ ես կանգնած եմ և չեմ հավատում ձեր հույսերին ու ձեր խաբեություններին»։

Իշխան Անդրեյը մի քանի անգամ նայեց այդ կաղնուն. նա կարծես ինչ-որ բան էր սպասում նրանից։ Ծաղիկներ ու խոտ էր կանաչել և՛ կաղնու տակ, բայց կաղնին նույնպես խոժոռ, անշարժ, այլանդակ ու համառ կանգնած էր նրանց մեջ։

«Այո, նա իրավացի է, հազար անգամ իրավացի է այս կաղնին», մտածում էր իշխան Անդրեյը. «Թող ուրիշները, ջահելները նորից տարվեն այդ խաբեությամբ, իսկ մենք կյանքը հասկանում ենք,— մեր կյանքը վերջացած է»։ Անհուսալի, բայց տխրորեն-հաճելի նոր մտքերի մի ամբողջ շարան ծնվեց իշխան Անդրեյի հոգում այդ կաղնու առնչությամբ։ Այդ համ-

փորդության միջոցին նա կարծես նորից կշռադատեց իր ամբողջ կյանքը և եկավ նույն նախկին հանգստացուցիչ ու անհուսալի եզրակացության, որ ինքը ոչինչ չպետք է ձեռնարկի և իր կյանքը մինչև վերջը պետք է ապրի առանց շարիք գործելու, առանց հուզմունքի և առանց որևէ բան ցանկանալու։

II

Ռյազանի կալվածքի խնամակալական գործերով իշխան Անդրեյը պետք է տեսներ գավառի ազնվականության պարագլխին։ Պարագլուխն Իլյա Անդրեյիչ Ռոստովն էր. և իշխան Անդրեյը մայիսի կեսին գնաց նրա մոտ։

Գարնան արդեն շոգ ժամանակն էր։ Անտառը բոլորովին ծածկվել էր տերևներով, փոշի էր և այնքան շոգ, որ ջրի մոտով անցնելիս մարդ ուզում էր լողանալ։

Իշխան Անդրեյը տխուր ու մտահոգված, թե գործի մասին ի՛նչ ու ի՛նչ պետք էր հարցնել պարագլխին, կառքով՝ այգու ծառուղով, մոտենում էր Ռոստովների Օտրադնոյի տանը։ Աջից՝ ծառերի ետևից, նա լսեց կանացի ուրախ ձայն և տեսավ մի խումբ աղջիկներ, որ վազելով անցնելու էին իր կառքի առջևից։ Բոլորի առջևից վազելով կառքին մոտենում էր սևամազ, շատ բարակ, տարօրինակորեն-բարակ, թուխ աչքերով մի աղջիկ գեղին չթե հագուստով, գլուխն սպիտակ թաշկինակով կապած, որի տակից կախ էին ընկել սանրած մազերի փնջերը։ Այդ աղջիկն ինչ-որ գոռում էր, բայց օտար մարդ տեսնելով, առանց նրան նայելու, ծիծաղելով ետ վազեց։

Հանկարծ իշխան Անդրեյը ինչ-որ մի ցավ զգաց։ Օրն այնպես լավ էր, արևն այնպես պայծառ, շուրջն ամեն ինչ ուրախ էր այնպես, իսկ այդ բարալիկ և սիրուն աղջիկը չգիտեր ու չէր էլ ուզում իմանալ նրա գոյությունը և գոհ ու երջանիկ էր իր առանձին, — գուցե հիմար, — բայց ուրախ ու երջանիկ կյանքից։ «Ինչո՞ւ է նա այդպես ուրախ։ Ինչի մասին է նա մտածում։ Իհարկե, ո՛չ զինվորական կանոնադրության մասին, ո՛չ էլ Ռյազանի կալվածային տուրքերը կարգավորելու մասին։ Ինչի՞ մասին է նա մտածում։ Եվ ինչո՞վ է նա երջանիկ», ակամա հետաքրքրությամբ հարցնում էր ինքն իրեն իշխան Անդրեյը։

Կոմս Իլյա Անդրեյիչը 1809 թվին ապրում էր Օտրադնոյում դարձյալ այնպես, ինչպես առաջ, այսինքն՝ որսորդությամբ, թատրոններով, ճաշկերույթներով ու երաժիշտներով. և զանազան գործերով ընդունում էր նահանգի գրեթե ամբողջ բնակչության։ Նա, ինչպես և ամեն մի նոր հյուրի, այնպես էլ իշխան Անդրեյի գալուն ուրախ էր, և նրան համարյա թե զոռով պահեց գիշերելու։

Տաղտկալի օրվա ընթացքում իշխան Անդրեյին զբաղեցնում էին տան մեծերը և հյուրերից ամենապատվավորները, որոնցով՝ առաջիկա անվանակոչության առթիվ, լիքն էր ծեր կոմսի տունը։ Այդ օրը Բալկոնսկին մի քանի անգամ նայելով Նատաշային, որ ինչ-որ բանի վրա ծիծաղում և ուրախանում էր հավաքված ջահելների շրջանում, — շարունակ հարցնում էր ինքն իրեն. «Ինչի մասին է նա մտածում։ Ինչի՞ վրա է նա այդքան ուրախ»։

Երեկոյան մենակ մնալով՝ իշխան Անդրեյը երկար ժամանակ չկարողացավ քնել։ Նա կարդում էր, ապա մոմը հանգցրեց ու կրկին վառեց։ Փեղկերը գոցած սենյակում տաք էր։ Նա գոհ չէր այդ հիմար ծերունուց (այդպես էր անվանում նա Ռոստովին), որ իրեն պահեց, հավատացնելով, թե անհրաժեշտ թղթերը քաղաքում են ու դեռ չեն բերված, դժգոհ էր իրենից Նրա համար, որ մնաց։

Իշխան Անդրեյը վեր կացավ և մոտեցավ պատուհանին, որ բանա։ Հենց որ նա փեղկերը բացեց, լուսնի լույսը, կարծես վաղուց դարան մտած սպասում էր այդ բանին, ներս խուժեց։ Նա պատուհանը բաց արավ։ Գիշերը թարմ էր, խաղաղ ու պայծառ։ Հենց պատուհանի առաջ կային մի շարք խուզած ծառեր՝ մի կողմից սև, մյուս կողմից արծաթափայլ լուսավորված։ Ծառերի տակ կար ինչ-որ հյութալի, թաց, գանգուր բուսականություն՝ տեղ-տեղ արծաթափայլ տերևներով ու ցողուններով։ Ապա սև ծառերի այն կողմը երևում էր մի ինչ-որ ցողափայլ տանիք, աջակողմը մի մեծ գանգուր ծառ՝ սեպ-սպիտակ բնով ու ճյուղերով, իսկ նրանից վեր, գարնան պայծառ, գրեթե անաստղ երկնքում փայլում էր լիալուսինը։ Իշխան Անդրեյը արմունկներով կոթնեց պատուհանին ու աչքերը հառեց երկնքին։

Իշխան Անդրեյի սենյակը միջին հարկումն էր. նրա վերևի

սենյակներում նույնպես մարդիկ էին ապրում, որոնք դեռ քնած չէին։ Նա վերևից կանացի խոսակցություն լսեց։

— Մի անգամ էլ,— ասավ վերևից կանացի ձայնը, որն իշխան Անդրեյը իսկույն ճանաչեց։

— Երբ ես քնելու, վերջապես,— պատասխանում էր մյուս ձայնը։

— Ես չեմ քնելու, ես չեմ կարող քնե՛լ, ինչ անեմ։ Դե, վերջին անգամ...

Երկու կանացի ձայն երգեցին երաժշտական մի կտոր, որը լսվում էր մի ինչ-որ երգի վերջավորությունը։

— Ախ, ի՞նչ հիանալի է։ Դե, հիմի գնանք քնելու, վերջ։

— Դու քնիր, իմ քունը չի տանում,— պատասխանեց առաջին ձայնը, որ մոտեցավ պատուհանին։ Նա ըստ երևույթին, գլուխը բոլորովին դուրս հանեց պատուհանից, որովհետև լսելի էր նրա զգեստների շրշյունը և մինչև իսկ շնչառությունը։ Ամեն ինչ լռեց ու քարացավ, ինչպես և՛ լուսինը, և՛ նրա լույսը, և՛ ստվերները։ Իշխան Անդրեյը նույնպես վախենում էր շարժվել, որպեսզի չմատնի իր ակամա ներկայությունը։

— Սոնյա՛, Սոնյա՜,— լսվեց կրկին առաջին ձայնը։— Դե, ինչպես կարելի է քնե՞լ։ Մի նայիր, թե ի՞նչ սքանչելի գիշեր է։ Ա՜հ, ինչ հիանալի է։ Դե՛, Սոնյա, զարթնիր,— ասավ նա գրեթե արտասվալի ձայնով։— Չէ որ այսպիսի հիանալի գիշեր երբեք, երբեք չի եղել։

Սոնյան ինչ-որ պատասխան տվավ դժկամությամբ։

— Դու մի նայի՞ր է, ի՞նչ լուսին է։ Ա՜հ, ինչ հիանալի է։ Դե, արի այստեղ։ Հոգիս, սիրելիս, արի՛ այստեղ։ Հը՛, տեսնո՞ւմ ես։ Այսպես նստեի ծալապատիկ, այ այսպես, ծնկներս պինդ բռնած, որքան կարելի է պինդ, ու թռչեի։ Ա՜յ այսպես։

— Հերիք է՞, վայր կընկնես։

Լսվեց քաշքշոց և Սոնյայի դժգոհ ձայնը։

— Չէ որ ժամը երկուսն է։

— Էհ, դու շարունակ տրամադրությունս փչացնում ես միայն, գնա՛, գնա՛։

Կրկին ամեն ինչ լռեց, բայց իշխան Անդրեյը գիտեր, որ նա դեռ նստած է այնտեղ, նա երբեմն անխոս շարժում էր լսում, երբեմն հառաչանքներ։

— Ա՜հ, տեր աստվա՜ծ, տեր աստվա՜ծ, սա ի՞նչ բան է,—

հանկարծ բացականչեց կանացի ձայնը։ — Քնել, ուրեմն քնել,— և պատուհանը փակվեց։

«Իմ գոյության մասին բնավ չեն էլ մտածում», մտածեց իշխան Անդրեյն այն ժամանակ, երբ ակամա էր դնում կանացի խոսակցության և, չգիտես ինչու, երկյուղով սպասում, որ նա մի բան կասի իր մասին։ «Դարձյալ նա է։ Եվ կարծես՝ դիտմամբ», մտածում էր նա։

Հանկարծ իշխան Անդրեյի հոգում ծայր առավ ջահել մրտրերի ու հույսերի մի այնպիսի անսպասելի խառնաշփոթություն,— մտքեր ու հույսեր, որ հակասում էին նրա ամբողջ կյանքին,— որ նա իրեն անզոր զգալով՝ պարզել իր դրությունն իր համար, իսկույն նեթ ընեց։

III

Հանդիսավոր օրը միմիա՛յն կոմսին հրաժեշտ տալով և չսպասելով կանանց դուրս գալուն, իշխան Անդրեյը մեկնեց տուն։

Արդեն հունիսի սկիզբն էր, երբ նա տուն վերադառնալով, կրկին մտավ այն կեչու անտառը, ուր ծեր, խլխլոտ կաղնին այնպես տարօրինակ ու անմոռանալի կերպով զարմացրեց իշխան Անդրեյին։ Այժմ բոժոժներն ավելի խուլ էին զնգզնգում անտառում, քան ամիսներ առաջ. ամեն ինչ լեցուն էր, ստվերալից ու խիտ. անտառում ցրված ջահել եղևնիներն այլևս չէին խանգարում ընդհանուր գեղեցկությունը և, ենթարկվելով ընդհանուր վիճակին, քնքշորեն կանաչել էին խանձոտ, ջահել ընձյուղներով։

Ամբողջ օրը շոգ էր. ինչ-որ մի տեղ փոթորիկ էր պատրաստվում, բայց մի փոքրիկ ամպ միայն անձրև չաղեց ճանապարհի փոշու և հյութալի տերևների վրա։ Անտառի ձախ կողմը մութն էր, ստվերի մեջ աջը՝ խաց, պսպղում փայլում էր արևի տակ, հազիվ քամուց օրորվելով։ Ամեն ինչ ծաղկում էր. սոխակները բարձրաձայն երգում էին. նրանց ձայնը լսվում էր մերթ մոտիկից, մերթ հեռվից։

«Ա՜յո, այստեղ, այս անտառում էր այն կաղնին, որի հետ մենք հանդիպեցինք էինք», մտածեց իշխան Անդրեյը. «Բայց ո՞ւր է նա», մտածեց կրկին իշխան Անդրեյը. նայելով ճանապարհի ձախ կողմը և, ինքն էլ չիմանալով ինչո՛ւ, նրան չճանաչելով,

հիանում էր այն կաղնիով, որին որոճում էր։ Ծեր կաղնին՝ ամբողջապես կերպարանափոխված, վրանի պես տարածել էր իր հյուղալի, մութ կանաչը և, հաղիվ օրորվելով, ասես նվաղում էր մայր մտնող արևի շողերի տակ։ Ոչ խլխլոց մասնէր, ոչ խուլեր, ոչ նախկին անվստահությունն ու վիշտը — ոչինչ չէր երևում։ Հարյուրամյա հատ կեղևի միջից դուրս էլած եկել առանց ոստերի հյուղալի. ջահել տերևներ, որ դժվար էր հավատալ, թե նրանց ա՛յդ ծերունին է կյանք տվել։ «Այո, սա հենց այն կաղնին է», մտածեց իշխան Անդրեյը, և հանկարծ նրան տիրեց ուրախության ու վերածնության գարնանային մի անարիթ զգացում։ Միևնույն ժամանակ նա հանկարծ հիշեց իր կյանքի բոլոր լավագույն րոպեները։ Թե՛ Աուստերլիցը իր բարձր երկնքով, թե՛ մեռած կնոջ հանդիմանող դեմքը, թե՛ Պիեռը գառամի վրա, թե՛ գիշերվա գեղեցկությունից հուզված աղջիկը, և թե այդ գիշերը, ու այդ գիշերվա լուսինը, — ու այս ամենը հանկարծ հիշեց նա։

«Ոչ, կյանքը չի վերջանում 31 տարուց» հանկարծ կտրուկ որոշեց իշխան Անդրեյը. «Շատ էլ ես գիտեմ, թե ինչ կա ինձանում, հարկավոր է, որ ամենքն էլ իմանան այդ. թե՛ Պիեռը, թե՛ այդ աղջիկը, որ ուզում էր երկինք թռչել, հարկավոր է, որ նրանք, ամենքն էլ ճանաչեն ինձ, որպեսզի իմ կյանքը մնա՛կ ինձ համար չանցնի, որպեսզի նրանք այդպես անկախ չապրեն իմ կյանքից, որ ամենքի վրա անդրադառնա իմ կյանքը և որպեսզի նրանք բոլորն ապրեն ինձ հետ միասին»։

Իր ճամփորդությունից վերադառնալով, իշխան Անդրեյը վճռեց աշնանը գնալ Պետերբուրգ և այդ որոշումն անելու համար նա զանազան պատճառներ էր հնարում։ Յուրաքանչյուր րոպե նա մի շարք խելացի, տրամաբանական պատճառներ էր գտնում, թե ինչո՛ւ իրեն անհրաժեշտ է մեկնել Պետերբուրգ և մինչև իսկ ծառայել։ Նա այժմ նույնիսկ չէր հասկանում, թե ինչպես կարող էր ինքը երբևիցե կասկածել, թե անհրաժեշտ է գործուն մասնակցություն ունենալ կյանքում, ճիշտ այնպես, ինչպես մի ամիս առաջ նա չէր հասկանում, թե ինչպես կարող էր մտածել գյուղից հեռանալու մասին։ Նրան պարզ թվում էր, որ իր բոլոր կենսական փորձերը պետք է իզուր կորչեին

ու դառնային անիմաստ մի բան, եթե ինքը դրանք չգործադրեր ու նորից եռանդուն կերպով չմասնակցեր կյանքին։ Նա մինչև իսկ չէր հասկանում այն, թե ինչպես առաջ, նույնպիսի ողորմելի բանական պատճառաբանություններից ակներև էր դառնում, որ ինքը կնվաստանար, եթե այժմ կյանքի դասերից հետո կրկին հավատար օգտակար լինելու և սիրո ու երջանկության հասնելու հնարավորության։ Բանականությունն այժմ նրան թելադրում էր բոլորովին այլ բան։ Այդ ճամփորդությունից հետո՝ իշխան Անդրեյն սկսեց գյուղում տխրել, նախկին զբաղմունքներն այլևս չէին հետաքրքրում նրան, և նա հաճախ, իր կաբինետում մենակ նստած, վեր էր կենում, մոտենում հայելուն և երկար նայում իր դեմքին։ Ապա նստ էր դառնում և նայում հանգուցյալ Լիզայի պատկերին, որն à la grecque[1] ոլորուն խոպոպներով, քնքուշ ու խնդուն հայացքով նայում էր նրան ոսկե շրջանակից։ Նա ամուսնուն այլևս չէր ասում առաջվա սարսափելի խոսքերը. նա պարզ, ուրախ ու հետաքրքիր նայում էր նրան։ Եվ իշխան Անդրեյը, ձեռները ետևը դրած, երկար անց ու դարձ էր սնում սենյակում, ու մերթ դեմքը խոժոռելով, մերթ ժպտալով, նորից-նոր որոճում էր այն անմիտ, խոսքերով շարտահայտվող, ոճրի պես գաղտնի մտքերը՝ կապված Պիեռի, փառքի, պատուհանի աղջկա, կաղնու, կանացի գեղեցկության և սիրո հետ, որոնք և փոխեցին նրա ամբողջ կյանքը։ Եվ հենց այդ րոպեներին, երբ մեկը մտնում էր նրա մոտ, նա իրեն պահում էր շատ չոր, խիստ, վճռական ու մանավանդ անախորժ կերպով տրամաբանող։

— Mon cher, — երբեմն այդպիսի րոպեներին ներս մտնելով կասեր իշխանադուստր Մարիան, — Նիկոլուշկան այժմ չպետք է զբոսանքի գնա, շատ ցուրտ է։

— Եթե տաք լիներ, — առանձին չորությամբ այդպիսի րոպեներին պատասխանում էր իշխան Անդրեյը քրոջը, — նա միայն շապկով դուրս կգար, բայց քանի որ ցուրտ է, պետք է ուրեմն տաք հագուստ հագցնել, որ հենց ցրտի համար է հնարված։ Ահա՛ ինչ է պետք, երբ ցուրտ է, և ոչ թե տանը մընալ, երբ երեխային օդ է հարկավոր, — ասում էր նա առանձին տրամաբանությամբ, կարծես կամենալով մեկին պատժել իր

[1] Հունական ձևով։

ներին աշխարհում կատարվող բոլոր գաղտնի, անհետևողական աշխատանքի համար։

Իշխանադուստր Մարիան այդպիսի գեպքերում մտածում էր, թե ինչպես մտավոր աշխատանքը չորացնում է տղամարդկանց։

IV

Իշխան Անդրեյը Պետերբուրգ եկավ 1809 թվի օգոստոսին։ Այդ այն ժամանակն էր, երբ երիտասարդ Սպերանսկին հասել էր իր ձեռով կատարվող հեղաշրջումների ու իր փառքի գագաթնակետին։ Այդ իսկ օգոստոսին թագավորը կառքից ընկնելով՝ վնասեց իր ոտը և երեք շաբաթ մնաց Պետերհոֆում, ուր ամեն օր տեսնվում էր բացառապես Սպերանսկու հետ։ Այդ ժամանակ պատրաստվում էին ոչ միայն այն երկու այնքան նշանավոր և հասարակության միտքը հուզող հրովարտակները՝ պալատական կոչումները վերացնելու և կոլեժսկի ասեսորների ու ստատսկի սավետնիկների աստիճանների համար քննություն տալու մասին, այլև պետական մի ամբողջ կոնստիտուցիա, որ պետք է փոխեր Ռուսաստանի դատական, ադմինիստրատիվ ու ֆինանսական վարչաձևը՝ պետական խորհրդից սկսած մինչև գյուղական դատարանը։ Այժմ արդեն իրագործվում ու մարմնանում էին այն անոթոչ լիբերալ երազանքները, որոնցով գահ բարձրացավ Ալեքսանդր կայսրը և որոնք ձգտում էր իրականացնել նա իր օգնականներ Չարտորիժսկու, Նովոսիլցևի, Կոչուբեյի և Ստրոգոնովի օգնությամբ, որոնց նա կատակով կոչում էր comité du salut publique[1].

Այժմ դրանց բոլորին միասին փոխարինեց Սպերանսկին՝ քաղաքացիական մասում, Արակչեևը՝ ռազմական։ Իշխան Անդրեյն իր գալուց հետո շուտով, իբրև կամերհեր, ներկայացավ արքունիքին ու հանդիսավոր ընդունելության։ Երկու անգամ հանդիպելով, թագավորը նրան ոչ մի խոսքի չարժանացրեց։ Դեռ առաջուց իշխան Անդրեյին միշտ թվում էր որ թագավորն իրեն չի սիրում, որ թագավորին հաճելի չէ իր գեմքն ու իր ամբողջ էությունը։ Այն չոր, վանող հայացքը, որով թագավորը նայեց նրան ավելի քան առաջ, հաստատեց իշխան Անդրեյի այդ ենթադրությունը։ Թագավորի այդ անուշադրությունը պալատականներն իշխան Անդրեյին բացատրեցին նրանով, թե նորին մեծությունը դժգոհ է, որ Բալիոնսկին 1805 թվից հետո չի ծառայում։

«Ես ինքս գիտեմ, թե որքան մենք անզոր ենք համակրությունների ու հակակրությունների մեջ», մտածում էր իշխան Անդրեյը, «ուստի և ոչ մի կարիք չկա մտածել այն մասին, որ անձամբ թագավորին ներկայացնեմ զինվորական կանոնադրության մասին գրածս. գործն ինքն իր մասին կխոսի»։

Նա իր գրածի մասին հայտնեց հոր բարեկամ մի ծեր ֆելդմարշալի։ Ֆելդմարշալը ժամադրություն նշանակելով, սիրալիր ընդունեց նրան և խոստացավ թագավորին զեկուցել։ Մի քանի օր հետո իշխան Անդրեյին հայտարարվեց, որ նա պետք է ներկայանա զինվորական մինիստր կոմս Արակչեևին։

Առավոտյան 9 ժամին, նշանակած օրը, իշխան Անդրեյը եկավ կոմս Արակչեևի ընդունարանը։

Իշխան Անդրեյը Արակչեևին անձամբ չէր ճանաչում և նրան երբեք չէր տեսել, բայց այն ամենը, ինչ գիտեր նրա մասին, շատ քիչ հարգանք էր ներշնչում դեպի այդ մարդը։

«Նա զինվորական մինիստր է, թագավոր կայսեր յուրաքանչյուր մարդը. ոչ ոք նկատի չպետք է առնի նրա անձնական հատկությունները. նրան հանձնված է քննել իմ նախագիծը. հետևաբար և միայն նա կարող է ընթացք տալ դրան», մտածում էր իշխան Անդրեյը կոմս Արակչեևի ընդունարանում սառած շատ նշանավոր ու աննշան մարդկանց շարքում։

Իշխան Անդրեյը իր, մեծ մասամբ ազնվականական ծառայության միջոցին նշանավոր անձանց ընդունարաններ շատ էր տեսել, և այդ ընդունարանների տարբեր բնույթը նրա համար շատ պարզ էր։ Կոմս Արակչեևի ընդունարանի բնույթը միանգամայն յուրահատուկ էր։ Կոմս Արակչեևի ընդունարանում ունկնդրության սպասող աննշան մարդկանց դեմքերին կարելի էր կարդալ ամոթանքի ու հնազանդության զգացումը. ավելի բարձրադիր անձանց դեմքերին արտահայտվում էր անհամաձայնության մի ընդհանուր զգացում, որ թաքնված էր

[1] Հանրային փրկության կոմիտե։

կեղծ համարձակության ու ինքնածաղրանքի դիմակի տակ, այդ ծաղրը վերաբերում էր թե՛ իրենց դրության, թե՛ սպասող մարդկանց։ Նրանցից ոմանք մտաբաղ ետ ու առաջ էին քայլում, ոմանք փսփսալով ծիծաղում էին, և իշխան Անդրեյը լսում էր Միլա Անդրիյիչի sobriquet-ն (մականունը) և «քեռին ցույց կտա» խոսքերը, որոնք վերաբերում էին կոմս Արակչեևին։ Մի գեներալ (նշանավոր անձ), ըստ երևույթին, վիրավորված, որ ստիպված է այդքան սպասել, նստել էր ոտը ոտի վրա գցած ու ժպտում էր ինքն իրեն։

Բայց հենց որ դուռը բացվեց, բոլորի դեմքին վայրկենապես արտահայտվեց մի բան — վախ։ Իշխան Անդրեյը հերթապահին խնդրեց հաջորդ անդամը զեկուցել իր մասին, բայց նրա այդ խոսքերն ընդունեցին հեգնանքով և ասին, որ նրա հերթը կգա իր ժամանակին։ Մի քանի մարդուց հետո, որոնց ադյուտանտը տարավ ու դուրս բերեց մինիստրի կաբինետից, սարսափելի դռնից ներս մտավ մի սպա, որն իշխան Անդրեյին զարմացրեց իր նվաստացած և վախեցած տեսքով։ Սպայի ունկնդրությունը երկար տևեց։ Դռան ետևից հանկարծ լսվեց անախորժ ձայնի որոտմունք, և քիչ հետո գունատ սպան՝ դողացող շրթունքներով, դուրս եկավ այնտեղից ու գլուխը բռնած անցավ ընդունարանի միջով։

Դրանից հետո հերթը հասավ իշխան Անդրեյին, որին հերթապահը շշնջաց «Դեպի աջ, դեպի լուսամուտը»։

Իշխան Անդրեյը մտավ ոչ շքեղ, բայց մաքուր մի առանձնասենյակ ու սեղանի մոտ տեսավ քառասուն տարեկան մի մարդ՝ երկար իրանով, կարճ խուզած երկար գլխով ու հաստ կնճիռներով, թուխ կանաչազույն աչքերի վրա հոնքերը կիտած և կախ ընկած կարմիր քթով։ Արակչեևը, առանց իշխան Անդրեյին նայելու, գլուխը թեքեց դեպի նա։

— Դո՛ւք ի՞նչ եք խնդրում։

— Ես ոչինչ չեմ... խնդրում, ձերդ պայծառափայլություն, — կամաց ասավ իշխան Անդրեյը։

Արակչեևի աչքերը դարձան դեպի նա։

— Նստեցեք, — ասավ Արակչեևը. — իշխան Բալկոնսկի՞։

— Ես ոչինչ չեմ խնդրում. թագավոր կայսրը բարեհաճել է ձեր պայծառափայլությանն ուղարկել իմ տված նախագիծը։

— Գիտեք, սիրելիս, ես ձեր նախագիծը կարդացի, — ընդ-

հատեց Արակչեևը, միայն առաջին խոսքերն ասելով մեղմ, նորից առանց նրա երեսին նայելու և դիմելով հետզհետե ավելի ու ավելի քրթմնջող-արհամարհական եղանակի։ — Զինվորական նոր օրենքներ եք առաջարկո՞ւմ։ Օրենքները շատ են, հինը կատարող չկա։ Այժմ բոլորն էլ օրենքներ են գրում. գրելը հեշտ է, բայց կատարելը։

— Ես թույլ չեմ կայսեր կամքով եկա ձեր պայծառափայլությունից իմանալու, թե ի՞նչ ընթացք եք մտադիր տալ իմ ներկայացրած նախագծին, — քաղաքավարությամբ ասավ իշխան Անդրեյը։

— Ձեր գրվածքի վրա մակագրություն եմ արել և ուղարկել կոմիտեին։ Ես հավանություն չեմ տալիս, — ասավ Արակչեևը տեղից ելնելով ու գրասեղանից մի թուղթ հանելով։ — Ահավասիկ. — տվեց նա թուղթը իշխան Անդրեյին։

Թղթի վրա, նրա լայնությամբ, մատիտով, առանց գլխատառերի, առանց ուղղագրության, առանց կետադրության, գրված էր. «Կազմված է անհիմն, որովհետև որպես նմանություն արտագրված է ֆրանսական ռազմական կանոնադրությունից, որ անտեղի շեղվում է զինվորական կանոնադրությունից»։

— Իսկ ո՞ր կոմիտեին է հանձնված իմ նախագիծը, — հարցրեց իշխան Անդրեյը։

— Զինվորական կանոնադրության կոմիտեին, առաջարկել եմ նաև ձերդ ազնվությանն ընդունեն անդամ։ Միայն առանց ոռճիկի։

Իշխան Անդրեյը ժպտաց։

— Ես չեմ էլ ցանկանում։

— Անդամ առանց ոռճիկի, — կրկնեց Արակչեևը։ — Պատիվ ունեմ։ Է՛յ, կանչիր։ Էլ ո՞վ կա, — ձայն տվեց նա՝ իշխան Անդրեյին գլուխ տալով։

V

Սպասելով կոմիտեի անդամ ընդունվելու ծանուցման, իշխան Անդրեյը վերսկսեց հին ծանոթությունները, առանձնապես այն մարդկանց հետ, որոնք ինչպես գիտեր, ուժ ունեին և կարող էին իրեն հարկավոր գալ։ Այժմ Պետերբուրգում նա

նույնն էր զգում, ինչ զգում էր ճակատամարտի նախօրյակին, երբ նրան տանջում էր մի անհանգիստ հետաքրքրություն և անդիմադրելիորեն մղում դեպի բարձր-շրջանները, այնտեղ, ուր պատրաստվում էր ապագան, որից կախված էր միլիոնավոր մարդկանց բախտը։ Մերերի կատաղությունից, անտեղյակ մարդկանց հետաքրքրությունից, տեղյակների զսպվածությունից, ամենքի փութկոտությունից ու ժտահոգությունից, անթիվ-անհամար կոմիտեներից ու հանձնաժողովներից, որոնց գոյության մասին նա նորից իմանում էր ամեն օր, իշխան Անդրեյն զգում էր մի ինչ-որ մեծ քաղաքացիական կռիվ, որի գլխավոր հրամանատարն իրեն անհայտ, խորհրդավոր և իրեն հանճարեղ ներկայացնող մի անձն էր — Սպերանսկին։ Եվ իրեն մութ կերպով հայտնի բարենորոգության գործն ու նրա գլխավոր գործիչ Սպերանսկին սկսեցին այնպես սաստիկ հետաքրքրել նրան, որ շուտով զինվորական կանոնադրության հարցը սկսեց նրա գիտակցության մեջ երկրորդական տեղ բռնել։

Իշխան Անդրեյը, շնորհիվ իր խոշոր կապերի, այն դրության մեջ էր, որ կարող էր լավապես ընդունվել Պետերբուրգի այն ժամանակվա հասարակության ամենաբազմազան ու բարձր շրջաններում։ Բարենորոգիչների պարտիան նրան ընդունում էր սրտաբաց ու դեպի իրեն էր քաշում նրան, նախ այն պատճառով, որ իշխան Անդրեյն ուներ խելոք և շատ կարդացած մարդու համբավ, երկրորդ՝ նրա համար, որ գյուղացիներին ազատություն տալով, նա արդեն ձեռք էր բերել լիբերալի հռչակ։ Մերերի, դժգոհների պարտիան, որ նրան ճանաչում էր իբրև իր հոր որդու, որոնում էր նրա համակրությունը, դատապարտելով բարենորոգումները։ Կանանց հասարակությունը, բարձր շրջանները նրան ընդունում էին սրտաբաց, որովհետև նա հարուստ փեսացու էր, անվանի և համարյա թե նոր մարդ վիպական պատմության լուսապսակով զարդարված, շնորհիվ իր կարծեցյալ մահվան ու կնոջ ողբերգական վախճանի։ Բացի դրանից, բոլոր նրան ճանաչողների ընդհանուր կարծիքն այն էր, որ նա այս հինգ տարվա ընթացքում շատ էր խոխվել դեպի լավը, մեղմացել է և առնական հասակ առել, որ նրա մեջ այլևս չկան նախկին կեղծ, շինծու ձևերը, հպարտությունը և ծաղրասիրությունը, այլ կար այն հանգիստ բնավորությունը, որ

ձեռք է բերվում տարիների ընթացքում։ Սկսեցին նրա մասին խոսել, նրանով հետաքրքրվում էին, և ամենքը ցանկանում էին նրան տեսնել։

Կոմս Արակչեևին այցելելու հետևյալ օրը երեկոյան իշխան Անդրեյը կոմս Կոչուբեյի մոտ էր։ Նա կոմսին պատմեց իր տեսակցությունը Սիլվա Անդրեյիչի հետ (այսպես էր անվանում Կոչուբեյը Արակչեևին, նույն ինչ-որ անորոշ ծաղրանքով, որ նկատեց իշխան Անդրեյը զինվորական մինիստրի ընդունարանում)։

— Mon cher, նույնիսկ այդ գործում դուք չեք կարող մի բան անել առանց Միխայիլ Միխայլովիչի։ C'est le grand faiseur[1]. Ես նրան կասեմ։ Նա խոստացավ երեկոյան գալ...

— Սպերանսկին ինչ գործ ունի զինվորական կանոնադրությունների հետ, — հարցրեց իշխան Անդրեյը։

Կոչուբեյը ժպտալով գլուխը շարժեց, կարծես զարմանալով Բալկոնսկու միամտության վրա։

— Մենք նրա հետ այս օրերս խոսեցինք ձեր մասին, — շարունակեց Կոչուբեյը, — խոսեցինք և ձեր ազատ երկրագործների մասին։

— Ախ, այդ դո՞ւք եք, իշխան, ազատել ձեր գյուղացիներին, — ասավ Եկատերինայի ժամանակի ծերունին, արհամարհանքով թեքվելով դեպի Բալկոնսկին։

— Փոքրիկ կալված էր, ոչ մի եկամուտ չէր բերում, — պատասխանեց Բալկոնսկին, որպեսզի իզուր չդրգռի ծերունուն, աշխատելով իր արարքը մեղմացնել նրա առաջ։

— Vous craignez d'être en retard[2], — ասավ ծերունին, Կոչուբեյին նայելով։

— Ես մի բան չեմ հասկանում, — շարունակեց ծերունին, — ով պետք է հողը հերկի, եթե գյուղացիներին ազատություն տրվի։ Օրենքներ գրելը հեշտ է, իսկ կառավարելը՝ դժվար։ Միևնույն է, թե ես ձեզ հարցնեմ, կոմս, ո՞վ կլինի ատյանների պետ, եթե բոլորը գնան քննություն տալու։

— Կարծում եմ նրանք, ովքեր քննություն կբռնեն, — պատասխանեց Կոչուբեյը ոտը ոտի վրա գցելով ու շուրջը նայելով։

---

[1] Ամեն ինչ նրա ձեռվ է կատարվում։

[2] Վախենում եք ետ մնալ։

— Հավասիկ ինձ մոտ ծառայում է Պրյանիշնիկովը. հմտանալի մարդ է, ոսկի մարդ, սակայն 60 տարեկան է. մի՞թե նա կերթա քննություն տալու...

— Այո, դա դժվար է, որովհետև կրթությունը շատ քիչ է տարածված, բայց...

Կոմս Կոչուբեյը չվերջացրեց. նա ելավ և իշխան Անդրեյի ձեռը բռնելով, ընդառաջեց ներս մտնող բարձրահասակ, ճաղատ գլխով խարտյաշ մարդուն, որ կլիներ քառասուն տարեկան, ուներ մեծ բաց ճակատ և երկարավուն դեմքի անսովոր սպիտակություն։ Ներս մտնողը կապույտ ֆրակով էր, խաչը վզին և աստղը կրծքի ձախ կողմը։ Դա Սպերանսկին էր։ Իշխան Անդրեյն իսկույն ճանաչեց նրան, և նրա հոգում ինչ-որ բան շարժվեց, ինչպես այդ պատահում է կյանքի կարևոր րոպեներին։ Հարգանք էր դա, նախանձ, թե՞ ակնկալություն — նա չգիտեր։ Սպերանսկու ամբողջ կերպարանքն ուներ մի առանձին տեսք, որից իսկույն կարելի էր նրան ճանաչել։ Այն հասարակությունից, որի հետ շփվում էր իշխան Անդրեյը, ոչ ոք չուներ անհամարձակ ու բութ շարժումների այդ հանդարտությունն ու ինքնավստահությունը. ոչ ոք չուներ այդ կիսախուփ և փոքր-ինչ տամուկ աչքերի այնպիսի հաստատ և միաժամանակ մեղմ նայվածքը. նա չէր տեսել այդպիսի ոչինչ չնշանակող հաստատ ժպիտ, այդպիսի բարակ, հարթ, մեղմ ձայն և, որ գլխավորն է, դեմքի և առանձնապես ձեռների այդպիսի քնքուշ սպիտակություն, ձեռներ, որ փոքր ինչ լայն էին, բայց անսովոր փափկիկ, քնքուշ ու սպիտակ։ Դեմքի այդպիսի սպիտակություն ու քնքշություն իշխան Անդրեյը տեսել էր միայն երկար ժամանակ հիվանդանոցում մնացած զինվորների երեսին։ Դա Սպերանսկին էր՝ պետական քարտուղարը, թագավորի զնկուցողը և նրա ուղեկիցը էրֆուրտում, ուր նա մի քանի անգամ տեսնվել ու խոսել էր Նապոլեոնի հետ։

Սպերանսկին աչքերը ման չածեց մի դեմքից, մյուսը, ինչպես այդ ակամա արվում է մեծ հասարակության մեջ մտնելիս, և չշտապեց խոսել։ Նա խոսում էր կամաց, վստահ, որ իրեն պիտի լսեն, և նայում էր միայն այն մարդուն, որի հետ խոսում էր։

Իշխան Անդրեյն առանձին ուշադրությամբ հետևում էր Սպերանսկու յուրաքանչյուր խոսքին ու շարժումին։ Ինչպես

այդ պատահում է մարդկանց հետ, մանավանդ այն մարդկանց, ովքեր խիստ դատել գիտեն իրենց մերձավորներին, իշխան Անդրեյը նոր մարդու հանդիպելով, մանավանդ այնպիսի մարդու, ինչպիսին Սպերանսկին էր, որին նա ճանաչում էր նրա հռչակով, միշտ ակնկալում էր նրա մեջ տեսնել մարդկային արժանավորությունների ողջ կատարելությունը։

Սպերանսկին Կոչուբեյին հայտնեց, թե ինքը ցավում է, որ չկարողացավ շուտ գալ, որովհետև պալատում ուշացրին։ Նա ասաց, որ իրեն ուշացրեց թագավորը։ Այդ կեղծ համեստությունը նույնպես նկատեց իշխան Անդրեյը։ Երբ Կոչուբեյը տվեց իշխան Անդրեյի անունը, Սպերանսկին՝ նույն ժրպիտը դեմքին, աչքերը դանդաղ դարձրեց Բալկոնսկու վրա և սկսեց լուռ նայել նրան։

— Շատ ուրախ եմ ձեզ ծանոթանալուս համար, ես ձեր մասին լսել եմ, ինչպես և բոլորը, — ասավ նա։

Կոչուբեյը մի քանի խոսքով ասավ, թե Արակչեևն ինչպես է ընդունել Բալկոնսկուն։ Սպերանսկին ավելի ժպտաց։

— Ֆինվորական կանոնադրությունների հանձնաժողովի նախագահը — պարոն Մագնեցկին — իմ լավ բարեկամն է, — ասավ նա ամբողջությամբ ու պարզ արտասանելով յուրաքանչյուր վանկ և յուրաքանչյուր բառ, — և եթե դուք կամենաք, ես ձեզ կծանոթացնեմ։ (Վերջակետ դնելով՝ նա լռեց)։ Հույս ունեմ, որ դուք համակրանք կգտնեք նրա կողմից և՝ պատրաստակամություն՝ ամեն մի խելացի գործի աջակցելու։

Սպերանսկու շուրջը հետաքրքրվողների մի խումբ կազմվեց իսկույն, և նույն ծերունին, որ խոսում էր իր պաշտոնյա Պրյանիշնիկովի մասին, մի հարց էլ ինքը տվեց Սպերանսկուն։

Իշխան Անդրեյը, առանց խոսակցության մեջ մտնելու, դիտում էր Սպերանսկու բոլոր շարժումները, այն մարդու շարժումները, որը քիչ առաջ մի աննշան սեմինարիստ էր, իսկ այժմ Ռուսաստանի բախտը պահում էր իր ձեռներում, — այդ սպիտակ, փափկիկ ձեռներում։ Իշխան Անդրեյին զարմացրեց այն անսովոր, արհամարհական հանդարտությունը, որով Սպերանսկին պատասխանեց ծերունուն։ Նա կարծես անհասանելի բարձրությունից էր ուղղում նրան իր ներողամիտ խոս-

բոլ։ Երբ ծերունին սկսեց չափից դուրս բարձր խոսել, Սպերանսկին ժպտաց և ասավ, որ ինքը չի կարող դատել այն բանի օգուտի ու վնասի մասին, ի՛նչ հաճելի է եղել թագավորին։

Ընդհանուր շրջանի մեջ փոքր-ինչ խոսելով, Սպերանսկին վեր կացավ և, իշխան Անդրեյին մոտենալով, կանչեց նրան սենյակի մյուս ծայրը։ Երևում էր, որ նա հարկ էր համարում զբաղվել Բալկոնսկիով։

— Ես, իշխան, չկարողացա խոսել ձեզ հետ այն ոգևորված զրույցի միջոցին, որ սկսեց այդ պատվելի ծերուկը,— ասավ նա հեզ-արհամարհանքով ժպտալով, և այդ ժպիտով կարծես ընդունում էր, որ ինքն իշխան Անդրեյի հետ միասին հասկանում է ոչնչությունն այն մարդկանց, որոնց հետ հենց նոր խոսում էր։ Այդ վերաբերմունքը շոյեց իշխան Անդրեյի ինքնասիրությունը։— Ես ձեզ վաղուց եմ ճանաչում. նախ՝ ձեր գյուղացիների գործով. դա մեզանում առաջին օրինակն է, որին, ցանկալի է, որ շատ հետևողներ լինեն. երկրորդ նրանից, որ դուք մեկն եք այն կամերհերներից, որոնք իրենց վիրավորված չզգացին պալատական պաշտոնյաներին վերաբերող նոր հրամանից, որն այնքան մեկնաբանություններ ու զրույցներ է առաջ բերել։

— Այո,— ասավ իշխան Անդրեյը,— հայրս չէր ուզում, որ ես օգտվեմ այդ իրավունքից. ես ծառայությունս սկսեցի ցածր աստիճանից։

— Ձեր հայրը հին դարի մարդ է, բայց ինչպես երևում է բարձր է կանգնած մեր ժամանակակիցներից, որոնք դատապարտում են այդ միջոցը, որով միայն վերականգնվում է բնական արդարությունը։

— Ես կարծում եմ սակայն, որ այդ դատապարտությունները հիմք ունեն...— ասավ իշխան Անդրեյը, աշխատելով կրռվել Սպերանսկու ազդեցության դեմ, որն արդեն սկսում էր զգալ։

Իշխան Անդրեյին անախորժ էր ամեն բանում համաձայնել նրա հետ։ Նա ուզում էր հակաճառել։ Իշխան Անդրեյը, որ սովորաբար խոսում էր թեթև ու լավ, այժմ Սպերանսկու առաջ արտահայտվելու դժվարություն էր զգում։ Նա չափազանց զբաղված էր այդ հռչակավոր մարդու անձնավորությունը դիտելով։

— Գուցե՝ հիմք անձնական փառասիրության համար,— կամաց ավելացրեց Սպերանսկին։

— Մասամբ և պետության համար,— ասավ իշխան Անդրեյը։

— Դուք ինչպե՞ս եք հասկանում,— ասավ Սպերանսկին աչքերը հանդարտ խոնարհելով։

— Ես Montesquieu-յի երկրպագուներից եմ,— ասավ իշխան Անդրեյը։— Եվ նրա այն միտքը, թե le principe des monarchies est l'honneur, me parait incontestable. Certains droits et privilèges de la noblesse me paraissent être des moyens de soutenir se sentiment[1].

Ժպիտը չքացավ Սպերանսկու սպիտակ դեմքից և նրա ելևեջները դրանից շատ բան շահեց։ Հավանաբար իշխան Անդրեյի միտքը նրան ուշագրավ թվաց։

— Si vous envisagez la question sous ce point de vue[2],— ասավ նա ակնհայտ դժվարությամբ արտահայտվելով ֆրանսերեն ու խոսելով ավելի դանդաղ, քան ռուսերեն, բայց միանգամայն հանդարտ։

Նա ասավ, որ l'honneur-ը — պատիվը չի կարող պահպանվել այնպիսի արտոնություններով, որոնք վնասակար են ծառայության ընթացքի համար, որ պատիվը — l'honneur-ը կա՛մ դատապարտելի գործեր չկատարելու բացասական հասկացողություն է, կա՛մ գովեստներ ու պարգևներ ստանալու մրցության աղբյուր։ Նրա ապացույցները սեղմ էին, պարզ ու հասարակ։

— Այն հաստատությունը, որ պահպանում է այդ պատիվը, մրցակցության այդ աղբյուրը նման է մեծ կայսր Նապոլեոնի Légion d'honneur-ին[3], որը չի վնասում, այլ նպաստում է պաշտոնի հաջողության, և որը դասային կամ արքունի առավելություն չէ։

— Ես չեմ վիճում, բայց չի կարելի ժխտել, որ արքունի արտոնությունը ձգտում էր նույն նպատակին,— ասավ իշ-

[1] ... միապետությունների հիմքը պատիվն է, ես համարում եմ անվիճելի։ Ազնվականության մի քանի իրավունքներն ու արտոնությունները ես համարում եմ այդ զգացումը պահպանելու միջոց։

[2] Եթե դուք այդպես եք նայում խնդրին։

[3] Պատվո լեգիոնի շքանշան։

խան Անդրեյը, — ամեն մի պալատական իրեն պատրաստ է համարում արժանավորությամբ կրել իր դիրքը։

— Բայց դուք, իշխան, չկամեցաք դրանից օգտվել, — ասավ Սպերանսկին, ժպիտով ցույց տալով, որ ցանկանում է սիրալիրությամբ վերջ տալ իր խոսակցի համար անհաճո վեճին։ — Եթե դուք պատիվ անեիք չորեքշաբթի օրը շնորհ բերել ինձ մոտ, — ավելացրեց նա, — այն ժամանակ ես, Մագնիցկու հետ նախապես կխոսեմ և կհայտնեմ ձեզ այն, ինչ հետաքրքրում է ձեզ և, բացի դրանից, ուրախ կլինեմ ձեզ հետ մանրամասն զրուցելու։

Նա, աչքերը գոցելով, գլուխ տվեց և, à la française[1], առանց հրաժեշտ տալու մնացած մարդկանց, ու աշխատելով մնալ աննկատելի, դուրս եկավ դահլիճից։

VI

Պետերբուրգում անցրած առաջին օրերին իշխան Անդրեյն զգաց, որ իր աշխարհայացքը, որ մշակել էր առանձնության մեջ, բոլորովին մթագնել է այն մանր-մունր հոգսերով, որոնք պաշարել էին նրան Պետերբուրգում։

Երեկույթից տուն վերադառնալով, նա իր հուշատետրում նշանակում էր 4 կամ 5 անհրաժեշտ այցելություն կամ rendez-vous[2] նշանակած ժամերին։ Կյանքի մեխանիզմը, օրվա դասավորումն այն ձևով, որ կարողանա ժամանակին ամեն տեղ հասնել, խլում էին նրա եռանդի մեծ մասը։ Իշխան Անդրեյը ոչինչ չէր անում, ոչնչի մասին նույնիսկ չէր մտածում և չէր կարողանում մտածել, այլ միայն խոսում, հաջողությամբ խոսում էր այն մասին, ինչի մասին նախապես կարողացել էր խորհել գյուղում։

Երբեմն նա դժկամությամբ նկատում էր, որ ինքը միևնույն օրը տարբեր հասարակության մեջ կրկնում էր միևնույն բանը։ Բայց նա ամբողջ օրերով այնպես էր զբաղված, որ ժամանակ էր գտնում մտածելու, որ ինքը ոչնչի մասին չի խորհել։

[1] Ֆրանսական ձևով։

[2] Ժամադրություններ։

Սպերանսկին, ինչպես առաջին տեսակցության ժամանակ՝ Կոչուբեյի մոտ, այնպես էլ հետո, չորեքշաբթի օրն իր տանը, ուր նա երես առ երես Բալկոնսկուն ընդունելով, երկար ու վրատահորեն խոսեց, իշխան Անդրեյի վրա ուժեղ տպավորություն թողեց։

Իշխան Անդրեյն այնքան շատ մարդկանց էր տեսել ուղղորմելի էակներ համարում, որ նա սաստիկ ցանկանում էր մի ուրիշի մեջ գտնել կատարելության այն կենդանի իդեալը, որին ձգտում էր ինքը. և նա դյուրությամբ հավատաց, որ հանձին Սպերանսկու գտել է միանգամայն խելացի ու առաքինի մարդու այդ իդեալը։ Եթե Սպերանսկին էլ դուրս եկած լիներ այն հասարակությունից, որից իշխան Անդրեյն էր դուրս եկել, եթե նա լիներ նույն դաստիարակության ու բարոյական սովորությունների տեր, այդ պարագային, Բալկոնսկին ավելի շուտ կնկատեր նրա թույլ, մարդկային և ոչ հերոսական կողմերը, բայց այժմ այդ իրեն տարօրինակ թվացող տրամաբանական մտածելակերպը առավել ևս հարգանք էր ներշնչում, որովհետև նա լիովին չէր հասկանում Սպերանսկուն։ Բացի դրանից Սպերանսկին՝ նրա համար արդյոք, որ գնահատում էր իշխան Անդրեյի ընդունակությունները, թե՞ նրա համար, որ հարկ համարեց նրան իր կողմը քաշել, շարունակ իշխան Անդրեյի առաջ կոկետություն էր անում իր անաչառ անվրդով մտածողությամբ և շոյում նրան այն նուրբ շոյանքով, որը միացած էր անձնապաստանության հետ, և որը կայանում էր նրա մեջ, որ լռելյայն կերպով իրեն ու իր խոսակցին համարում էր միակ մարդը, որ ընդունակ է հասկանալու մնացած բոլորի հիմարությունը և իրենց մտքերի խելացիությունն ու խորությունը։

Նրանց երկար զրույցի միջոցին, չորեքշաբթի երեկոյան, Սպերանսկին մի քանի անգամ ասավ. «Մեզ մոտ, ինչ դուրս է գալիս քարացած սովորության ընդհանուր շրջանակից», իսկ ժպիտով ասում էր. «Բայց մենք ցանկանում ենք, որ թե՛ գայլերը կուշտ լինեն, թե՛ գառները ողջ», կամ «Ուրանք այդ չեն կարող հասկանալ...», և բոլորն այնպիսի արտահայտությամբ, որն ասում էր. «Մենք՝ դուք և ես. մենք հասկանում ենք ինչ են նրանք և ով ենք մենք»։

Սպերանսկու հետ ունեցած այս առաջին երկար խոսակցությունն ուժեղացրեց միայն իշխան Անդրեյի այն զգացումը, որով նա առաջին անգամ տեսավ Սպերանսկուն։ Իշխան Անդրեյը նրա մեջ տեսնում էր խելացի, խոհուն, մեծ խելքի տեր մարդ, որ եռանդով ու համառությամբ հասել էր իշխանության և այն գործադրում էր միայն Ռուսաստանի բարօրության համար։ Սպերանսկին իշխան Անդրեյի աչքում հենց այն մարդն էր, որ խելացի կերպով բացատրում էր կյանքի բոլոր երևույթները, կարևոր էր համարում միայն այն, ինչ խելացի էր և ամեն բանի մոտենում էր խելացիության չափանիշով, մի մարդ, որի նմանը կուզեր լինել ինքը՝ իշխան Անդրեյը։ Սպերանսկու բացատրությամբ ամեն ինչ ներկայանում էր այնպես հասարակ, պարզ, որ իշխան Անդրեյն ամեն բանում ակամա համաձայնում էր նրան։ Եվ եթե նա առարկում ու վիճում էր, այդ միայն նրա համար, որ դիտմամբ ուզում էր ինքնուրույն երևալ և ամբողջովին չենթարկվել Սպերանսկու կարծիքներին։ Ամեն ինչ այդպես էր, ամեն ինչ լավ էր, բայց մի բան շփոթեցնում էր իշխան Անդրեյին. դա Սպերանսկու սառը, ապակե հայացքն էր, — մի հայացք, որ թույլ չէր տալիս նրա ներսը դիտելու, — և նրա սպիտակ, քնքուշ ձեռը, որին ակամա նայում էր իշխան Անդրեյը, ինչպես սովորաբար նայում են իշխանություն ունեցող մարդկանց ձեռներին։ Չգիտես ինչու, այդ ապակե հայացքը և քնքուշ ձեռը ջղայնացնում էին իշխան Անդրեյին։ Իշխան Անդրեյին անախորժ կերպով զարմացնում էր այն չափազանց մեծ արհամարհանքը դեպի մարդիկ, որ նկատում էր Սպերանսկու մեջ, և այն բազմապիսի ապացույցները, որ մեջ էր բերում նա՝ իր կարծիքները հաստատելու։ Նա գործադրում էր մտքի բոլոր հնարավոր զենքերը, բացի համեմատությունից, և ինչպես իշխան Անդրեյին թվում էր, չափազանց համարձակորեն մեկից անցնում էր մյուսին։ Մերթ դատում էր իբրև պրակտիկ գործիչ և դատապարտում երազողներին, մերթ երգիծաբանի հեգնանքով ծաղրում էր հակառակորդներին, մերթ դառնում էր խիստ տրամաբան, մերթ էլ հանկարծ թռչում էր մետաֆիզիկայի բնագավառը։ (Ապացույցների այս վերջին զենքը մանավանդ, նա հաճախ էր գործածում)։ Նա հարցը փոխադրելով մետաֆիզիկայի բարձունքները, անցնում էր տաքածության, ժամանակի, մտքի բնորոշումներին, և այդ տեղից հերքումներ քաղելով, կրկին դառնում էր վիճաբանության նյութին։

Ընդհանրապես Սպերանսկու մտածողության գլխավոր գիծը, որ զարմացնում էր իշխան Անդրեյին, դա նրա աներկբայելի, անսասան հավատն էր դեպի մտքի ուժն ու օրինականությունը։ Երևում էր, որ երբեք Սպերանսկու գլխում չէր կարող ծագել իշխան Անդրեյի համար այն սովորական միտքը, թե չի կարելի այնուամենայնիվ արտահայտել այն ամենը, ի՛նչ մտածում ես, և երբեք կասկած չէր ծագում այն մասին, թե անհեթեթություն չի՞ արդյոք այն ամենը, ինչ ես մտածում եմ, և այն ամենը, ինչի ես հավատում եմ։ Եվ Սպերանսկու հենց այդ առանձնահատուկ մտածելակերպը ամենից շատ էր գրավում իշխան Անդրեյին։

Սպերանսկու հետ ծանոթանալու առաջին օրերին իշխան Անդրեյը դեպի նա տածում էր հիացմունքի բուռն զգացում, նման այն զգացումին, որ երբեմն ուներ դեպի Բոնապարտը։ Այն հանդամանքը, որ Սպերանսկին քահանայի որդի էր, տխմար մարդկանց առիթ էր տալիս արհամարհել նրա (ինչպես և այդ անում էին շատերը), իբրև հարբեցողի և տերտերի տղայի, հենց այս հանգամանքը հարկադրում էր իշխան Անդրեյին զգուշաբար վերաբերվել դեպի Սպերանսկին ունեցած զգացմունքը և անգիտակցաբար ուժեղացնել այն իր մեջ։

Առաջին երեկոն, որ Բալկոնսկին անցրեց Սպերանսկու մոտ, օրենքներ մշակող հանձնաժողովի մասին երկար խոսելով, Սպերանսկին հեգնանքով պատմեց իշխան Անդրեյին, որ օրենքների հանձնաժողովը գոյություն ունի 150 տարի, նստում է միլիոններ և մինչև այսօր ոչինչ չի արել, իսկ Ռոզենկրամպֆը արել է միայն այն, որ պիտակներ է կպցրել համեմատական օրենսդրության բոլոր հոդվածների վրա։

— Ահա բոլորը, ինչի համար պետությունը միլիոններ է վճարել, — ասավ նա։ — Մենք ուզում ենք Սենատին նոր դատաստանական իշխանություն տալ, բայց մենք օրենքնե՛ր չունենք։ Ուստի և այնպիսի մարդիկ, որպիսին դուք եք, իշխան, մեղք է, որ այժմ չծառայեն։

Իշխան Անդրեյն ասավ, որ դրա համար, իրավաբանական կրթություն է հարկավոր, մի բան, որ ինքը չունի։

— Բայց այդ ոչ ոք էլ չունի, ուրեմն դուք ի՞նչ եք ուզում։ Դա մի կախարդական շրջան է, որից դուրս գալու համար պետք է ջանքեր գործ դնել։

Մի շաբաթ անց՝ իշխան Անդրեյն արդեն զինվորական կանոնադրություններ կազմող հանձնաժողովի անդամ էր և, ինչ, որ բնավ չէր սպասում, նշանակվեց օրենքներ մշակող հանձնաժողովի բաժանմունքի պետ։ Սպերանսկու խնդրանքով նա հանձն առավ կազմել քաղաքացիական օրենքների առաջին մասը և Նապոլեոնի ու Հուստինյանոսի կոդեքսների ազնությամբ աշխատում էր անձանց իրավունքների մասի վրա։

VII

Երկու տարի առաջ, 1808 թվին, կալվածներում կատարած ճանապարհորդությունից Պետերբուրգ վերադառնալով, Պիերն ակամա Պետերբուրգի մասոնության գլուխ անցավ։ Նա հիմնում էր սեղանատներ ու ժողովարաններ, հավաքում էր նոր անդամներ, հոգ էր տանում տարբեր ժողովարաններ միացնելու և իսկական ակտեր ձեռք բերելու մասին։ Նա իր փողը տալիս էր աղքատներ շինելու և, որքան կարող էր, լցնում էր ողորմության գանձանակը, քանի որ ողորմություն տալու մեջ անդամների մեծամասնությունը ժլատ էր ու անճշտապահ։ Նա համարյա թե մենակ իր միջոցներով էր պահում աղքատների տունը, որ միաբանությունը հիմնել էր Պետերբուրգում։

Մինչ այդ՝ նրա կյանքն անցնում էր առաջվա պես նույն հրապույրներով ու սանձարձակությամբ։ Նա սիրում էր լավ ճաշել ու խմել, և թեև անբարոյական ու ստորացուցիչ էր համարում այդ, այնուամենայնիվ չէր կարողանում իրեն զրկել և չմասնակցել ամուրիների ընկերության խրախճանքներին։

Իր զբաղմունքների ու հրապուրանքների խելահեղության մեջ սակայն, մի տարի անցնելուց հետո, Պիեռն սկսեց զգալ, որ մասոնության այն հողը, որի վրա կանգնած էր, հետզհետե դնում է իր ոտի տակից, թեև ինքն աշխատում էր ավելի ամուր կանգնել նրա վրա։ Դրա հետ միաժամանակ նա զգում էր՝

որքա՛ն խորն է իջնում իր ոտների տակի հողը, ինքն այնքա՛ն ավելի էր կապվում նրա հետ։ Երբ մասոնության մեջ մտավ՝ նա ունեցավ այն զգացումը, որով մարդ վստահությամբ ոտք է դնում ճահճի հարթ մակերևույթի վրա։ Երբ մի ոտը դրեց — խրվեց։ Որպեսզի միանգամայն հավատիանա հողի ամրությանը՝ նա դրեց և մյուս ոտը, ու ավելի խրվեց և ակամայից արդեն ստիպված մինչև ծնկները քայլում էր ճահճի միջով։

Իոսիֆ Ալեքսեևիչը Պետերբուրգում չէր։ (Վերջին ժամանակներս նա հեռացել էր Պետերբուրգի ժողովարանի գործերից ու մշտապես ապրում էր Մոսկվայում)։ Բոլոր եղբայրները, ժողովարանի բոլոր անդամները դրսի կյանքից Պիեռին ծանոթ մարդիկ էին, ուստի և նրա համար դժվար էր նրանց համարել միայն իբրև քարտաշ եղբայրներ, և ոչ իշխան Բ., ոչ Իվան Վասիլևիչ Դ., որոնց նա կյանքում ճանաչում էր մեծ մասամբ իբրև թույլ ու չնչին մարդիկ։ Մասոնական գոգնոցների ու նշանների տակից նա տեսնում էր նրանց մունդիրները և խաչերը, որ դժվարությամբ ձեռք էին բերել կյանքում։ Հաճախ տասն անդամի շրջանում ողորմություն հավաքելով և հաշվելով 20—30 ռուբլի, այն էլ մեծ մասամբ պարտք, անդամներ, որոնց կեսը նույնքան հարուստ էր, որքան ինքը, Պիեռը հիշում էր մասոնական երդումը, թե յուրաքանչյուր եղբայր իր ամբողջ գույքը խոստանում է տալ իր մերձավորի համար, և նրա հոգում ծագում էին կասկածներ, որոնցից աշխատում էր խույս տալ։

Պիեռն իրեն ծանոթ եղբայրներին բաժանում էր չորս կարգի։ առաջին կարգում նա դասում էր այն եղբայրներին, որոնք գործոն մասնակցություն չունեին ո՛չ ժողովարանների, ո՛չ էլ աշխարհիկ գործերում, ու զբաղված էին բացառապես միաբանության գիտության խորհուրդներով, այն է՝ աստծո երրորդության կամ իրերի երեք սկզբնավորության հարցով, որոնք են — ծծումբ, մերկուրի (սնդիկ) և աղ, կամ քառակուսի և Սողոմոնի տաճարի բոլոր պատկերների նշանակության խնդրով։ Պիեռը հարգում էր այս կարգի եղբայրներին, որոնց թվին, նրա կարծիքով, պատկանում էին առավելապես հին եղբայրները և ինքը Իոսիֆ Ալեքսեևիչը, բայց ինքը հեռու էր նրանց զբաղեցնող այդ խնդիրներից։ Նրա սիրտը չէր կպչում մասոնության միստիկական կողմին։

Երկրորդ կարգում Պիեռը դասում էր իրեն և իր նման եղբայրներին, այն որոնողներին ու տատանվողներին, որ դեռ չէին գտել մասոնության ուղիղ ու հասկանալի ճանապարհը, բայց հույս ունեին գտնել։

Երրորդ կարգում նա դասում էր այն եղբայրներին (դրանց թիվն ամենից շատ էր), որոնք մասոնության մեջ տեսնում էին միայն նրա արտաքին ձևը և ծեսերը, ու առանձնապես գնահատում էին այդ արտաքին ձևի կատարումը, հոգ չտանելով բովանդակության ու նշանակության մասին։ Դրանցից էին Վիլարսկին և նույնիսկ գլխավոր ժողովարանի մեծ վարպետը։

Վերջապես, չորրորդ կարգում դասում էր եղբայրներից շատերին, որոնք եղբայրության մեջ մտել էին վերջին ժամանակները։ Պիեռի դիտողությամբ՝ դրանք այն մարդիկ էին, որ ոչ մի բանի չէին հավատում, ոչինչ չէին ցանկանում և մասոնության մեջ մտել էին միայն նրա համար, որ մտերմություն հաստատեին երիտասարդ, հարուստ և կապերով ու նշանավորությամբ ուժեղ եղբայրների հետ, որոնց թիվը ժողովարանում շատ մեծ էր։

Պիեռի գործունեությունն սկսել էր չբավարարել իրեն։ Մասոնությունը, գոնե այն մասոնությունը, որ նրան ծանոթ էր այստեղ, երբեմն նրան թվում էր, թե հիմնված է միայն արտաքին ձևերի վրա։ Նա չէր էլ մտածում կասկածել մասոնության էության մասին, բայց երկբայում էր, որ ռուսական մասոնությունն ընթացել է կեղծ ճանապարհով և շեղվել է իր իսկական աղբյուրից։ Հենց այդ պատճառով տարվա վերջին Պիեռը մեկնեց արտասահման՝ միաբանության բարձր խորհուրդներին հասու լինելու։

Դեռ 1809 թվի ամառ Պիեռը վերադարձավ Պետերբուրգ։ Մեր մասոնների՝ արտասահմանյան եղբայրների հետ ունեցած գրագրություններից հայտնի եղավ, որ Բեզուխովը հաջողել է արտասահմանում ձեռք բերել շատ բարձրագիր անձերի վստահությունը, հասու է շատ գաղտնիքների, արժանացել է բարձր աստիճանի և իր հետ՝ Ռուսաստանի քարտաշության գործի բարեկարգության համար, շատ բան է բերում։ Գալուց հետո Պետերբուրգի բոլոր մասոնները եկան նրա մոտ։

նրանք շողոքորթում էին նրան և նրանց բոլորին թվաց, թե Պիեռն ինչ-որ բան թաքցնում ու նախապատրաստում է։

Նշանակված էր երկրորդ աստիճանի ժողովարանի հանդիսավոր նիստը, ուր Պիեռը, իր խոստման համաձայն, Պետերբուրգի եղբայրներին հաղորդելու էր միաբանության բարձր ղեկավարների հանձնարարությունը։ Նիստը բազմամարդ էր։ Սովորական ծիսակատարությունից հետո՝ Պիեռը ելավ և սկսեց իր ճառը։

«Սիրելի եղբայրներ», սկսեց նա կարմրելով ու կմկմալով՝ գրած ճառը ձեռքին բռնած. «Բավական չէ ժողովարանի լռության մեջ պահպանել մեր խորհուրդները, պետք է գործել... գործել։ Մենք գտնվում ենք քնեածության մեջ, իսկ մեզ հարկավոր է գործել»։ Պիեռը վերցրեց տետրը և սկսեց կարդալ։

«Զուտ ճշմարտությունը տարածելու և առաքինության հաղթանակն ապահովելու համար,— կարդում էր նա,— մենք պետք է մարդկանց մաքրենք նախապաշարումներից, տարածենք ժամանակի ոգուն համապատասխան կանոններ, մեզ վրա վերցնենք պատանիների դաստիարակությունը, անքակտելի կապերով կապվենք ամենախելոք մարդկանց հետ, համարձակորեն ու միասին խելամտությամբ հաղթահարենք անհավատությունը և հիմարությունը, կազմակերպենք մեզ նվիրված և մեզ հետ մի նպատակի ձգտող մարդկանց, որ իշխանություն ունեն և ուժ»։

«Սույն նպատակին հասնելու համար պետք է ապահովել առաքինության գերակշռությունը մոլության հանդեպ, պետք է ջանալ, որ ազնիվ մարդն իր առաքինի գործերի համար հավիտենական վարձատրություն գտնի այս աշխարհում։ Բայց մեր այս մեծ մտադրություններին խոչընդոտ են լինում արտաքին քաղաքական շատ հաստատություններ։ Ի՞նչ անել իրերի այս վիճակում։ Նպաստե՞լ արդյոք ռևոլյուցիաներին, տապալե՞լ ամեն ինչ, ուժով վտարե՞լ ուժը... Ոչ, մենք այդ մտքից շատ հեռու ենք։ Ամեն տեսակ բռնի բարենորոգում արժանի է պարսավանքի, որովհետև դրանով մազաչափ չի ուղղվի չարիքը, քանի որ մարդիկ մնում են այնպես, ինչպես կան, և որովհետև իմաստությունը բռնության կարիք չունի։

«Միաբանության ամբողջ ծրագիրը պետք է հիմնված լինի այն բանի վրա, որ պատրաստենք հաստատակամ, առա-

քինի և մի համոզմունքով իրար կապված մարդիկ, — մի համոզմունք, որը կայանում է նրանում, որ ամենուրեք և բոլոր ուժերով հալածեն մոլությունն ու հիմարությունը և հովանավորեն տաղանդներն ու առաքինությունը. ոչնչությունից բարձրացնեն արժանավոր մարդկանց և մոտեցնեն մեր եղբայրության։ Միայն այն ժամանակ մեր միաբանությունը կունենա իշխանություն, այսինքն անզգալիորեն կկապի անկարգությունը հովանավորողների ձեռները և նրանց կկառավարի այնպես, որ նրանք այդ չնկատեն։ Մի խոսքով, պետք է հիմնել համորեն տիրող վարչաձև, որ տարածվեր ամբողջ աշխարհում, չխորտակելով քաղաքացիական կապերը, ըստ որում բոլոր մնացած վարչաձևերը կարող էին շարունակվել իրենց սովորական կարգով և անել ամենը, բացի միայն այն բանից, ինչ խոչընդոտ է լինում մեր միաբանության մեծ նպատակին, այսինքն ազատվել առաքինության հաղթանակը մոլության հանդեպ։ Սույն նպատակն առաջադրել է ինքը քրիստոնեությունը։ Նա մարդկանց ուսուցանում է լինել իմաստուն ու բարի և իր սեփական շահի համար հետևել լավագույն և ամենաիմաստուն մարդկանց օրինակին ու խրատներին։

«Այն ժամանակ, երբ ամեն ինչ ընկղմված էր խավարի մեջ, բավական էր, իհարկե, մի քարոզ. ճշմարտության նորությունը նրան տալիս էր առանձին ուժ, բայց հիմա մեզ առավել ուժեղ միջոցներ են հարկավոր։ Այժմ հարկավոր է, որ զգացմունքներով կառավարվող մարդն առաքինության մեջ գտնի զգայական հրապույրները։ Անկարելի է արմատախիլ անել կրքերը. պետք է աշխատել միայն նրանց դարձնել դեպի ազնիվ նպատակներ, ուստի և հարկավոր է, որ յուրաքանչյուր ոք կարողանա իր կրքերը բավարարել առաքինության սահմաններում և որ մեր միաբանությունը միջոցներ ընձեռի այդ բանի համար։

«Որքան շուտ մենք յուրաքանչյուր պետության մեջ ունենանք արժանավոր մարդկանց որոշ թիվ, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին նորից պատրաստի մի երկու ուրիշներ, և նրանք բոլորը միասին սերտորեն միանան, — այն ժամանակ ամեն ինչ հնարավոր կլինի միաբանության համար, որ արդեն գաղտնի կերպով կարողացել է շատ բան անել հոգուտ մարդկության բարօրության»։

Այս ճառը ոչ միայն ուժեղ տպավորություն գործեց, այլև հուզմունք առաջ բերեց ժողովարանում. իսկ եղբայրների մեծամասնությունն այդ ճառի մեջ նկատելով իլլյումինատների աղանդի վտանգավոր մտահղացումներ, Պիեռին զարմացնող սառնությամբ ընդունեց նրա ճառը։ Մեծ վարպետն սկսեց առարկել Պիեռին։ Պիեռն ավելի ու ավելի բուռն թափով սկսեց զարգացնել իր մտքերը։ Վաղուց այդպիսի փոթորկալի նիստ չէր եղել. պարտիաներ կազմվեցին. ոմանք մեղադրում էին Պիեռին, դատապարտելով նրան իլլյումինատորության համար, մյուսները պաշտպանում էին նրան։ Պիեռին առաջին անգամ այդ ժողովում զարմացրեց մարդկային մտքերի անսահման բազմազանությունը, որի արածն այն է լինում, որ ոչ մի ճշմարտություն միատեսակ չի ներկայանում երկու մարդու։ Նույնիսկ այն անդամները, որ թվում էր, թե նրա կողմն էին, նրան հասկանում էին յուրովի՝ սահմանափակումներով, փոփոխություններով, որոնց նա չէր կարող համաձայնել, որովհետև նրա գլխավոր մտահոգությունը հենց այն էր, որ իր միաբը դիմացինին հաղորդի ճիշտ այնպես, ինչպես ինքն էր հասկանում։

Նիստի վերջում մեծ վարպետն անբարյացակամությամբ ու հեգնանքով նկատողություն արավ Բեզուխովին տաքանալու համար և նրա՛ համար, որ վիճաբանության մեջ նրան ոչ թե առաքինության սերը, այլ պայքարի հրապույրն էր ղեկավարում։ Պիեռը նրան չպատասխանեց և հեզությամբ հարցրեց միայն, թե կընդունվի՞ արդյոք իր առաջարկը։ Նրան ասին, որ — ոչ, և Պիեռը, չսպասելով սովորական ձևականություններին, դուրս եկավ ժողովարանից ու գնաց տուն։

VIII

Պիեռին կրկին տիրեց այն թախիծը, որից այնպես վախենում էր նա։ Ժողովարանում արտասանած ճառից հետո նա երեք օր պառկեց տանը, բազմոցի վրա. ոչ ոքի չէր ընդունում և ոչ մի տեղ չէր գնում։

Այդ ժամանակ նա նամակ ստացավ կնոջից, որն աղաչում էր նրան տեսակցել իր հետ, գրում էր, թե կարոտել է Պիեռին և թե ցանկանում է իր ամբողջ կյանքը նվիրել նրան։

Նամակի վերջում նա հայտնում էր, որ այս օրերս արտասահմանից գալու է Պետերբուրգ։

Նամակից հետո Պիեռի առանձնարանը խուժեց շատ քիչ հարգանք վայելող եղբայր մասոններից մեկը և Պիեռի ամուսնության վրա խոսք բանալով, իբրև եղբայրական խորհուրդ, այն միտքը հայտնեց, թե նրա խստությունը կնոջ նկատմամբ՝ անարդարացի է, և թե Պիեռը շեղվում է մասոնի առաջին կանոններից, երբ զղջացողին չի ներում։

Նույն այդ միջոցին նրա զոքանչը՝ իշխան Վասիլիի կինը, մարդ ուղարկեց նրա ետևից, աղերսելով՝ գոնե մի քանի րոպեով այցելել իրեն՝ մի շատ կարևոր գործի մասին խոսելու։ Պիեռը նկատում էր, որ դավադրություն կա իր դեմ և որ իրեն ուզում են միացնել կնոջ հետ, և այդ բանը նույնիսկ անախորժ չէր թվում նրան այն դրության մեջ, որում գտնվում էր։ Նրա համար բոլորը միևնույն էր. կյանքում ոչ մի բանի նա առանձին կարևորություն չէր տալիս, ուստի և տրտմության մեջ ոչ իր ազատությունն էր գնահատում, ոչ էլ իր համառությունը կնոջը պատժելու խնդրում։

«Չկա ոչ արդար, ոչ մեղավոր. նշանակում է նա էլ մեղավոր չէ», մտածեց նա։

Եթե Պիեռն իսկույն ևեթ համաձայնություն չտվեց կնոջը միանալու, դա միայն այն պատճառով, որ իր տխրության մեջ անկարող էր որևէ բան ձեռնարկել։ Եթե կինը գար նրա մոտ, նա նրան հիմա դուրս չէր անի։ Մի՞թե բոլորը միևնույն չէր՝ համեմատությամբ այն բանի, ի՛նչ զբաղեցնում էր Պիեռին, ապրել կամ թե չապրել կնոջ հետ։

Չպատասխանելով ո՛չ կնոջը, ո՛չ զոքանչին, Պիեռը մի օր ուշ երեկոյան ճանապարհի պատրաստություն տեսավ և մեկնեց Մոսկվա՝ Իոսիֆ Ալեքսեևիչին տեսնելու։ Ահա ինչ էր գրում Պիեռն իր օրագրում։

Մոսկվա, 17 նոյեմբերի։

«Նոր միայն եկա իմ բարերարի մոտից և շտապում եմ գրի առնել այն ամենը, ինչ զգացի։ Իոսիֆ Ալեքսեևիչը խեղճ է ապրում և երրորդ տարին է, ինչ տառապում է միզապարկի ցավանելի հիվանդությամբ։ Ոչ ոք նրանից հառաչանք կամ տրտունջի խոսք չի լսել երբեք։ Առավոտից մինչև ուշ գիշեր, բացի այն ժամերից, երբ նա ուտում է իր ամենահասարակ

կերակուրը, նա զբաղվում է գիտությամբ։ Ինձ ընդունեց ողորմածաբար և նստեցրեց այն մահճակալին, ուր ինքն է պառկում։ Ես նրան արևելքի և Երուսաղեմի ապագա նշանն արի, նա ինձ պատասխանեց նույն կերպ և հեզ ժպիտով հարցրեց, թե ինչ իմացա ու ինչ ձեռք բերի պրուսական ու շոտլանդական ժողովարաններում։ Ես բոլորը պատմեցի նրան, ինչպես կարողացա. հայտնեցի այն հիմունքները, որ առաջարկեցի Պետերբուրգի մեր ժողովարանում, հայտնեցի նաև ինձ ցույց տված վատ ընդունելության մասին և այն գժտության մասին, որ տեղի ունեցավ իմ ու եղբայրների միջև։ Իոսիֆ Ալեքսեևիչը, բավական ժամանակ լռելյայն խորհելով, այս ամենի մասին պարզեց ինձ իր հայացքը, որ մի ակնթարթում լուսավորեց ողջ անցյալն ու իմ ապագա ուղին։ Նա ինձ զարմացրեց, երբ հարցրեց, թե հիշո՞ւմ եմ արդյոք ինչի՛ մեջ է կայանում միաբանության եռակի նպատակը. 1) խորհուրդը պահպանելու և ըմբռնելու մեջ, 2) այդ խորհուրդը յուրացնելու համար սեփական անձը մաքրելու և ուղղելու մեջ և 3) մարդկային ցեղն այդպիսի մաքրության ձգտելու միջոցով ուղղելու մեջ։ Արդյոք այս երեքից ո՞րն է ամենագլխավոր ու առաջնակարգ նպատակը։ Իհարկե, սեփական անձի ուղղումն ու մաքրումը։ Անկախ բոլոր հանգամանքներից՝ մենք կարող ենք միշտ ձգտել միայն ա՛յս նպատակին։ Բայց դրա հետ միաժամանակ հենց այդ նպատակն է, որ մեզանից ամենից շատ աշխատանք է պահանջում, ուստի և հպարտությամբ մոլորված, մենք անտես անելով այդ նպատակը, ձեռք ենք զարկում կա՛մ խորհրդին, որին արժանի չենք ընդունելու մեր անմաքրության պատճառով, կա՛մ փորձ ենք փորձում մարդկային ցեղն ուղղելու, երբ ինքներս հանդիսանում ենք պղծության ու անբարոյության օրինակ։ Իլլյումինատորությունը մաքուր ուսմունք չէ հենց այն պատճառով, որ նա տարվել է հասարակական գործունեությամբ և լի է գոռոզությամբ։ Այդ հիմունքով Իոսիֆ Ալեքսեևիչը դատապարտեց իմ ճառը և իմ ամբողջ գործունեությունը։ Ես հոգուս խորքում, համաձայնեցի նրա հետ։ Իմ ընտանեկան գործերի մասին ունեցած խոսակցության առթիվ նա ինձ ասավ. «Իսկական մասոնի գլխավոր պարտականությունը, ինչպես ասել եմ ձեզ, ինքնակատարելագործությունն է։ Բայց մենք հաճախ մտա-

ծուս ենք, թե մեր կյանքի դժվարությունները մեզանից հեռացնելով, մենք ավելի շուտ կհասնենք այդ նպատակին։ Ընդհակառակը, սիրելիս, — ասավ նա ինձ, — միայն աշխարհիկ եռուզեռի մեջ կարող ենք մենք հասնել մեր երեք գլխավոր նպատակին. 1) ինքնաճանաչության, քանի որ մարդ իրեն կարող է ճանաչել միայն համեմատության միջոցով, 2) կատարելագործության, որ միայն պայքարով է ձեռք բերվում և 3) հասնել գլխավոր առաքինության, այն է՝ սեր ունենալ առ մահը։ Միայն կյանքի ձախորդությունները կարող են ցույց տալ մեզ նրա ունայնությունը և կարող են նպաստել մեր բնածին սիրուն դեպի մահը կամ նոր կյանքի վերածնությունը։ Այս խոսքերն ավելի նշանակալից են նրանով, որ Իոսիֆ Ալեքսեևիչը, չնայած իր ֆիզիկական ծանր տառապանքներին, երբեք կյանքից չի ձանձրանում, այլ սիրում է մահը, որ համար նա իրեն դեռևս բավականաչափ պատրաստված չի զգում, չնայած իր ներքին մարդու ամբողջ մաքրության ու բարձրության։ Ապա թե բարերարը բացատրեց ինձ տիեզերքի մեծ քառակուսու բովանդակ նշանակությունը և ցույց տվեց, որ բոլորի հիմքը կազմում են եռյակ և յոթերորդ թվերը։ Նա ինձ խորհուրդ տվեց՝ չնստափել Պետերբուրգի եղբայրների հետ չփվելուց և ժողովարանում միայն 2-րդ տեղը բռնելով, աշխատել եղբայրներին հեռու պահել հպարտության հրապույրից և ինքնաճանաչության ու կատարելագործության ճշմարիտ ուղին դարձնել նրանց։ Բացի դրանից անհատապես ինձ խորհուրդ տվեց, որ ամենից առաջ հետևեմ ինքս ինձ և այդ նպատակով տվեց մի տետր, հենց այս տետրը, որի մեջ գրում եմ այժմ և այսուհետև պիտի գրեմ իմ ամբողջ վարմունքը.

«Պետերբուրգ, 23 նոյեմբերի։

«Ես նորից ապրում եմ կնոջս հետ։ Ջոքանչս արգունքն աչքերին եկավ ինձ մոտ և ասավ, թե էլենն այստեղ է ու ինձ աղաչում է լսել իրեն, թե նա անմեղ է ու դժբախտ թողնելուս պատճառով, և շատ ուրիշ բաներ։ Ես գիտեի, որ եթե թույլ տամ գա ինձ տեսնելու, ես այլևս անկարող պիտի լինեմ մերժել նրա ցանկությունը։ Իմ կասկածանքի մեջ ես չգիտեի ո՛ւմ օգնությանը և խորհրդին դիմեմ։ Եթե բարերարն այստեղ լիներ, նա ինձ կասեր։ Ես առանձնացա իմ սենյակում, նորից կարդացի Իոսիֆ Ալեքսեևիչի նամակները, հիշեցի նրա հետ ունեցած զրույցներս ու այդ բոլորից մի եզրակացություն արի, որ խնդրողին չպետք է մերժել, պետք է ձեռք մեկնել ամենքին, մանավանդ մի մարդու, որ այնպես կապված է ինձ, ուստի և պետք է կրեմ իմ խաչը։ Բայց քանի որ ես հանուն առաքինության ներեցի նրան, թող ուրեմն և իմ կապը նրա հետ ունենա միայն հոգևոր նպատակ։ Ես այսպես որոշեցի ու այսպես էլ գրեցի Իոսիֆ Ալեքսեևիչին։ Ես կնոջս ասի, թե խընդրում եմ մոռանալ ամբողջ անցյալը և ներել ինձ այն բոլորը, ինչով կարող էի մեղավոր լինել նրա առաջ, և որ ես նրան ներելու բան չեմ գտնում։ Ինձ համար ուրախալի էր ասել նրան այդ։ Թող նա չիմանա, թե որքան ծանր էր ինձ համար նորից նրան տեսնելը։ Տեղավորվել եմ մեծ տան վերին հարկում և վերածնության երջանիկ զգացում եմ ապրում»։

IX

Ինչպես միշտ, այն ժամանակ էլ բարձր հասարակությունը հավաքվելով արքունիքում ու մեծ պարահանդեսներում, բաժանված էր մի քանի խմբերի, որոնց յուրաքանչյուրն ուներ իր երանգը։ Դրանց թվում ամենամեծ խումբը ֆրանսականն էր՝ Նապոլեոնական միության խումբը — կոմս Ռումյանցևինը և Caulaincourt-ինը։ Այդ խմբում ամենաաչքի ընկնող տեղերից մեկը գրավեց էլենը, հենց որ ամուսնու հետ հաստատվեց Պետերբուրգում։ Նրա մոտ լինում էին ֆրանսական դեսպանատան պաշտոնյաներ և մեծ թվով ուրիշ մարդիկ, որ հայտնի էին իրենց խելքով ու սիրալիրությամբ և պատկանում էին այդ ուղղության։

Էլենը կայսրների հռչակավոր տեսակցության ժամանակ եղել էր Էրֆուրտում և այնտեղից արդեն կապեր էր հաստատել Նապոլեոնի բոլոր աչքի ընկնող կողմնակիցների հետ։ Էրֆուրտում նա փայլուն հաջողություն էր ունեցել։ Ինքը՝ Նապոլեոնը, թատրոնում նրան տեսնելով, նրա մասին ասել էր. «C'est un superbe aninal»[1]։ Նրա հաջողությունը, իբրև գեղեցիկ ու նազելի կնոջ, Պիեռին չէր զարմացնում,

[1] Դա սքանչելի կենդանի է։

որովհետև տարիներ անցնելուց հետո, նա ավելի էր գեղեցկացել, քան առաջ էր։ Բայց նրան զարմացնում էր այն, որ այս երկու տարվա մեջ կինը ձեռք է բերել «d'une femme charmante, aussi spirituelle, que belle»[1] համբավ։ Հայտնի prince de Ligne նամակներ էր գրում նրան, ութ երեսի վրա, Բիլիբինն իր բոլոր սուր խոսքերը պահում էր, որ առաջին անգամ այս կոմսուհի Բեզուխովայի մոտ։ Կոմսուհի Բեզուխովայի սալոնում ընդունված չինելը համարվում էր խելքի վկայական. երիտասարդ մարդիկ՝ նախքան երեկույթի գնալը, գրքեր էին կարդում, որ նյութ ունենան սալոնում խոսելու, իսկ դեսպանատների քարտուղարները և նույնիսկ դեսպանները, դիվանագիտական գաղտնիքներ էին վստահում նրան, այնպես որ էլենը մի տեսակ ուժ էր ներկայացնում իրենից։ Պիեռը, որ շատ լավ գիտեր, թե իր կինը շատ հիմար է, երբեմն տարակուսանքի ու վախի տարօրինակ զգացումով ներկա էր լինում նրա երեկույթներին ու ճաշերին, ուր խոսվում էր քաղաքականության, բանաստեղծության ու փիլիսոփայության մասին։ Այդ երեկույթներին նա իրեն այնպես էր զգում, ինչպես ձեռնածուն է զգում ամեն րոպե սպասելով, թե ահա՛ ուր որ է իր խաբեբայությունը կբացվի։ Բայց այն պատճառով արդյոք, որ այդպիսի սալոն կառավարելու համար հարկավոր է իսկապես հիմարություն, թե՞ այն պատճառով, որ խաբվողներն իրենք բավականություն էին զգում այդ խաբեբայությունից, խաբեբայությունը չէր բացվում և «սքանչելի ու խելք կնոջ համբավը» անխախտորեն հաստատվեց Էլենա Վասիլևնա Բեզուխովայի անվան շուրջը, որ նա կարող էր ասել ամենամեծ գռեհկություններն ու հիմարությունները, և այնուամենայնիվ բոլորը հիանում էին նրա ամեն մի խոսքով ու նրա ասածների մեջ գտնում էին խորը իմաստ, որպիսին նա ինքը չէր էլ ենթադրում։

Պիեռն իսկապես հարմար ամուսին էր մի այդպիսի մեծ դիրք ունեցող փայլուն կնոջ համար։ Նա այն ցրված զարգամիտ մարդն էր, մի մեծ բարին էր, մի արիստոկրատ ամուսին, որ ոչ ոքի չի խանգարում և ոչ միայն չի փչացնում սալոնի բարձր տոնը և ընդհանուր տպավորությունը, այլև, հակառակ հանդիսանալով նուրբ ու բարեկիրթ ձևեր ունեցող կնոջը, հարմար ֆոն էր ծառայում նրա համար։ Պիեռն այս երկու տարվա մեջ շարունակ զբաղվելով աննյութ խնդիրներով և անկեղծորեն արհամարհելով բոլոր մնացածը, իրեն չհետաքրքրող՝ կնոջ հասարակության մեջ բոլորի նկատմամբ յորացրել էր անտարբերության, անփութության ու բարեհաճության այն տոնը, որը ձեռք չի բերվում արհեստականորեն և դրա համար ակամա հարգանք է ներշնչում։ Նա իր կնոջ հյուրասրահը մտնում էր այնպես, ինչպես թատրոն. բոլորին ծանոթ էր, սիրալիր բոլորի հանդեպ և հավասարապես անտարբեր դեպի բոլորը։ Երբեմն նա միջամտում էր իրեն հետաքրքրող խոսակցության՝ առանց նկատի ունենալու՝ կային այդտեղ դեսպանատան պարոններ, թե ոչ, շշնջալով հայտնում էր իր կարծիքները, որոնք երբեմն միանգամայն ոչ համապատասխան, ոչ էլ հարմար էին լինում տվյալ վայրկյանին։ Բայց Պետերբուրգի ամենանշանավոր կնոջ ամուսնու պարզամտության մասին եղած կարծիքն այնպես էր հաստատվել, որ ոչ ոք նրա ասածներին լուրջ նշանակություն չէր տալիս։

Ամեն օր Էլենի տունն այցելող շատ երիտասարդների թվում Բորիս Դրուբեցկոյը, որ ծառայության մեջ արդեն բավական առաջ էր գնացել, Էլենի էրֆուրտից վերադառնալուց հետո, ամենամոտիկ մարդն էր Բեզուխովների տանը։ Էլենը նրան անվանում էր «իմ մանկլավիկ» և հետը վարվում էր իբրև երեխայի։ Էլենը Բորիսին էլ ժպտում էր այնպես, ինչպես բոլորին, բայց երբեմն Պիեռի համար անախորժ էր տեսնել այդ ժպիտը։ Բորիսը Պիեռին վերաբերվում էր հատուկ, արժանավայել ու տխուր հարգանքով։ Հարգանքի այդ երանգը նույնպես անհանգստացնում էր Պիեռին։ Երեք տարի առաջ ինչ հասցրած վիրավորանքից նա այնքան շատ էր տանջվել, որ այժմ աշխատում էր փրկել իրեն նման վիրավորանքի հնարավորությունից՝ նախ նրանով, որ նա իր կնոջ ամուսինը չէր, երկրորդ նրանով, որ նա իրեն թույլ չէր տալ ս կնոջ մասին կասկածելու։

— Ոչ, այժմ bas bleu[1] դառնալով. նա ընդմիշտ հրաժարվել է նախկին հրապուրանքներից, — ասում էր նա ինքն իրեն։ —

[1] Որքան հրապուրիչ, նույնքան և խելոք, հիանալի կնոջ համբավ։

[1] Կապուրտ գուլպա։

Չի եղել մի օրինակ, որ bas bleu-ները սիրային հափշտակություններ ունենային,— կրկնում էր նա ինքն իրեն՝ չվիտես որտեղից քաղած այդ կանոնը, որին ինքն անկասկած հավատում էր։ Բայց, տարօրինակ բան, Բորիսի ներկայությունը կնոջ հյուրասենյակում (իսկ նա լինում էր համարյա միշտ) ֆիզիկապես ազդում էր Պիեռի վրա. դա կաշկանդում էր նրա ձեռ ու ոտը, ոչնչացնում էր նրա շարժումների ազատությունն ու անգիտակցությունը։

«Այսպիսի տարօրինակ հակակրություն», մտածում էր Պիեռը, «իսկ նա նույնիսկ շատ էր դուր գալիս ինձ»։

Բարձր շրջաններում Պիեռը մեծ բարին էր, նշանավոր կընոջ փոքր-ինչ կույր ու ծիծաղելի ամուսին, խելացի և պարզամիտ, ոչ մի գործ չանող, բայց և ոչ ոքի չվնասող, հիանալի ու բարի մարդ։ Այնինչ՝ այդ ամբողջ ժամանակի ընթացքում, Պիեռի հոգում կատարվում էր ներքին զարգացման մի բարդ ու դժվարին աշխատանք, որ շատ բան էր պարզել նրա համար և շատ հոգևոր կասկածների ու ուրախության դուռ բացել նրա առաջ։

X

Պիեռն իր օրագիրը շարունակում էր, և ահա թե ինչ էր գրել նա այդ ժամանակի ընթացքում։

«24 նոյեմբերի։

«Վեր կացա ժամը 8-ին, կարդացի ս. գիրքը, ապա գնացի պաշտոնի (Պիեռը բարերարի խորհրդով ծառայության էր մտել կոմիտեներից մեկը), ճաշին վերադարձա, մենակ ճաշեցի (կոմսուհու մոտ շատ հյուրեր կան, որ հաճելի չեն ինձ), կերա ու խմեցի չափավոր և ճաշից հետո գրվածքներ արտագրեցի եղբայրների համար։ Երեկոյան մտա կոմսուհու հարկաբաժինը և մի զավեշտական պատմություն արի Բ.-ի մասին, և միայն այն ժամանակ, երբ բոլորը ծիծաղեցին, հիշեցի, որ այդպիսի բան չպետք է աներ։

«Պառկում եմ քնելու երջանիկ ու հանգիստ հոգով։ Տեր ամենակալ, օգնի՛ր ինձ քո ճանապարհով ընթանալու. 1) զայրույթը հաղթելու հեզությամբ, համբերատարությամբ, 2) պաշտությունը՝ ժուժկալությամբ ու զզվանքով, 3) հեռանալ աշխարհի ունայնությունից, բայց չկտրվել ա) պետական գործերի ծառայությունից, բ) ընտանեկան հոգսերից, գ) ընկերական հարաբերություններից և դ) տնտեսական զբաղմունքներից»։

«27 նոյեմբերի։

«Արթնացա ուշ և, զարթնելով, երկար պառկեցի անկողնուս վրա՝ ծուլությանս անձնատուր։ Տեր աստված, օգնիր ինձ և ամրապնդիր ինձ, որ կարողանամ ընթանալ քո ճանապարհով։ Կարդացի ս. գիրքը, բայց առանց համապատասխան զգացմունքի։ Եկավ եղբայր Ուրուսովը. խոսեցինք աշխարհի ունայնության վրա։ Նա պատմեց թագավորի նոր նախագծումների մասին։ Ես քիչ էր մնում դատապարտեի, բայց իսկույն հիշեցի իմ կանոնները և մեր բարերարի խոսքերն այն մասին, թե իսկապես մասոնը պետք է եռանդուն գործիչ լինի պետության մեջ, երբ պահանջվում է նրա մասնակցությունը և հանգիստ դիտի այն, ինչի ինքը կոչված չէ։ Իմ լեզուն — իմ թշնամին է։ Այցելեցին ինձ եղբայրներ Գ. Վ. և Օ., միասին զրույց պատրաստեցինք նոր եղբայր ընդունելու համար։ Ռիտորի պարտականությունը նրանք դնում են ինձ վրա։ Ես ինձ այդ բանի համար թույլ և անարժան եմ զգում։ Ապա խոսք բացվեց տաճարի յոթը սյուների և աստիճանների բացատրության մասին. 7 գիտություն, 7 առաքինություն, 7 մոլորություն և սուրբ հոգու 7 շնորհ։ Եղբայր Օ.-ն շատ պերճախոս էր։ Երեկոյան կատարվեց ընդունելությունը։ Շենքի նոր սարքը շատ նպաստեց տեսարանի վեհության։ Ընդունվեց Բորիս Դրուբեցկոյը։ Նրան ես առաջարկեցի և ես եղա ռիտոր։ Բոլոր ժամանակ, երբ նրա հետ մութ տաճարում երկուսով էինք, ինձ հուզում էր մի տարօրինակ զգացում։ Ես իմ մեջ նրա վերաբերմամբ նկատեցի ատելության զգացում, որն իզուր ձգտում էի հաղթահարել։ Ուստի և ես անկեղծորեն կըցանկանայի փրկել նրան չարից ու կանգնեցնել ճշմարտության ճանապարհի վրա, բայց նրա մասին եղած վատ մտքերն ինձնից չէին հեռանում։ Ինձ թվում էր. որ եղբայրության մեջ մտնելով, նա նպատակ ուներ մտերմանալ մարդկանց և սիրված լինել ժողովարանում գտնվողների կողմից։ Բացի այն հիմունքներից, որ մի քանի անգամ հարցրեց, թե գտնվո՞ւմ են արդյոք մեր ժողովարանում N. և S. (որ ես չէի կարող պա-

տասխանել), բացի այն, որ նա, ըստ իմ դիտողությունների, անընդունակ է հարգանք զգալու դեպի մեր սուրբ միաբանությունը և անչափ զբաղված ու գոհ է արտաքին մարդով, որպեսզի հոգևոր բարելավում ցանկանա, ես այնուամենայնիվ հիմք չգտա նրան կասկածելու. բայց նա ինձ թվաց ո՛չ անկեղծ, և բոլոր ժամանակ, երբ ես նրա հետ երես առ երես կանգնած էի մութ սենյակում, ինձ թվում էր, թե նա արհամարհանքով ժպտում է իմ խոսքերի վրա, և այդ ժամանակ ես իսկապես ուզում էի նրա մերկ կուրծքը խրել այն սուրը, որ բռնել էի նրա դեմ։ Ես չկարողացա պերճախոս լինել, չկարողացա նաև անկեղծորեն իմ ասածը հայտնել եղբայրներին ու մ.ծ վարպետին։ Բնության մեծ ճարտարապետ, օգնի՛ր ինձ գտնելու ճշմարիտ ուղիներ, որ դուրս գամ ստության այս լաբիրինթոսից»։

Սրանից հետո օրագրում բաց էր թողնված երեք թերթ և ապա գրված էր հետևյալը.

«Խրատական և երկար խոսակցություն ունեցա եղբայր Վ.-ի հետ առանձին. նա ինձ խորհուրդ տվեց մերձենալ եղբայր Ա.-ին։ Շատ բան հայտնի եղավ ինձ՝ անարժանիս։ Ադոնա՛յի — աշխարհն ստեղծողի անունն է։ Էլո՛իմ — ամեն ինչ կառավարողի անունը։ Երրորդ անունը անասելի անուն է, որ ընդհանրականի նշանակություն ունի։ Եղբայր Վ.-ի հետ ունեցած զրույցներն ամրապնդում, թարմացնում էին ինձ և հաստատում իմ քայլերն առաքինության ճանապարհին։ Նրա ներկայությամբ կասկածի տեղ չի մնում։ Ինձ համար արդեն պարզ է այն տարբերությունը, որ կա հասարակական գիտությունների աղքատ ուսմունքի և մեր՝ ամեն ինչ ընդգրկող սրբազան գիտության միջև։ Մարդկային գիտություններն ամեն բան ստորաբաժանում են, որ հասկանան, ամեն բան ոչնչանում են, որ քննեն։ Միաբանության սրբազան գիտության մեջ բոլորն անբաժանելի է, միասնական, ամեն բան ճանաչվում է իր ամբողջության և կյանքի մեջ։ Երրորդությունը — իրերի երեք սկզբնավորությունը — ծծումբն է, սնդիկը և աղը։ Ծծումբը յուղային և կրակե հատկություն ունի. նա աղի հետ միասին իր հրեղեն հատկությամբ նրա մեջ հարուցանում է ծարավ, որի միջոցով դեպի իրեն է ձգում սնդիկը, բռնում նրան, պահում ու միացած արտադրում

առանձին մարմիններ։ Սնդիկը հեղուկ ու թռչող հոգևոր էություն է։ — Քրիստոսը, Սուրբ Հոգին, Նա»։

«3 դեկտեմբերի։

«Զարթնեցի ուշ, կարդացի ս. գիրքը, բայց անզգա էի։ Հետո դուրս եկա և շրջեցի դահլիճում։ Ուզում էի խորհրդածել, բայց դրա փոխարեն երևակայությանս մեջ պատկերացավ մի դեպք, որ տեղի է ունեցել չորս տարի առաջ։ Պարոն Դոլոխովի սենեամարտից հետո, Մոսկվայում պատահելով՝ ինձ ասավ, թե ինքը հույս ունի, որ ես այժմ վայելում եմ հոգեկան լիակատար անդորրություն, չնայած կնոջս բացակայության։ Ես այն ժամանակ ոչինչ չպատասխանեցի։ Հիմա ես հիշեցի այդ տեսակցության բոլոր մանրամասնությունները և իմ հոգում նրան ասի ամենաշոր խոսքեր և կծու պատասխաններ։ Ես ուշքի եկա և այդ միտքը թողի այն ժամանակ, երբ տեսա ինձ ցասման բռնկման մեջ. բայց դրա համար քիչ զղջացի։ Հետո եկավ Բորիս Դրուբեցկոյը և սկսեց զանազան արկածներ պատմել. իսկ ես հենց նրա գալու րոպեից դժգոհ մնացի ու ինչ-որ հակառակ բան ասի նրան։ Նա առարկեց և ես ուշքի եկա միայն այն ժամանակ, երբ արդեն ուշ էր։ Ես բռնկվեցի և ասացի նրան բազմաթիվ անախորժ ու նույնիսկ կոպիտ բաներ։ Տեր իմ աստված, ես ամենևին չեմ կարողանում նրա հետ վարվել։ Դրա պատճառն իմ ինքնասիրությունն է։ Ես ինձ նրանից բարձր եմ դասում, ուստի և դառնում եմ առավել վատթար, այնինչ նա ներողամիտ է դեպի իմ կոպտությունները, իսկ ես, ընդհակառակը, արհամարհանք եմ տածում դեպի նա։ Տեր իմ, թող որ նրա ներկայությամբ ավելի լավ տեսնեմ իմ պղծությունը և վարվեմ այնպես, որ այդ նրա համար էլ օգտակար լինի։ Ճաշից հետո քնեցի, և այն ժամանակ, երբ քնած էի, պարզ լսեցի մի ձայն, որ ձախ ականջիս ասում էր. «Քո օրն է»։

«Երազիս տեսա, որ քայլում եմ մթության մեջ և հանկարծ շրջապատվում եմ շներով, բայց գնում եմ անվախ. դրանցից մի փոքրիկ շուն հանկարծ ատամներով բռնեց ձախ աղդրիցս ու բաց չէր թողնում։ Ես սկսեցի ձեռներով սեղմել նրան։ Ու նրան պոկեցի թե չէ, մի ուրիշ ավելի մեծը, սկսեց կրծել ինձ։ Ես սկսեցի նրան բարձրացնել և որքան շատ էի բարձրացնում, այնքան նա մեծանում էր ու ծանրանում։ Բայց հանկարծ եղբայր Ա.-ն գալով և իմ թեն անցնելով, ինձ տարավ հետն ու

մոտեցրեց մի շենքի, ուր մտնելու համար պետք էր անցնել մի նեղ տախտակի վրայով։ Ես ոտս դրի դրա վրա. տախտակը ծռվեց ու ընկավ. և ես սկսեցի բարձրանալ ցանկապատը, որին ձեռներս հազիվ էին հասնում։ Մեծամեծ ջանքերից հետո ես մարմինս քաշ տվի այնպես, որ ոտներս կախվել էին մի կողմ, իսկ մարմինս՝ մյուս։ Ես շուրջս նայեցի և տեսա, որ եղբայր Ա.-ն կանգնել է ցանկապատի վրա ու ինձ ցույց է տալիս մի մեծ ծառուղի և այգի, և այդում էլ մի մեծ, գեղեցիկ շենք։ Զարթնեցի։ Տեր, բնության մեծ Ճարտարապետ, օգնիր ինձ, որ կարողանամ ինձնից պոկել շներին — իմ կրքերը — և նրանցից վերջինին, որն իր մեջ միացնում է բոլոր նախկին կրքերի ուժը, և օգնիր ինձ մտնելու առաքինության այն տաճարը, որի տեսության արժանացա երազում»։

«7 դեկտեմբերի։

«Երազիս տեսա՝ իբր Իոսիֆ Ալեքսեևիչը նստած է իմ տանը, և ես շատ ուրախ եմ ու ցանկանում եմ նրան հյուրասիրել։ Իբր թե ես կողմնակի մարդկանց հետ անվերջ շատախոսում եմ և հանկարծ հիշում, որ այդ Իոսիֆ Ալեքսեևիչին չի կարող դուր գալ, և ուզում եմ մոտենալ նրան ու գրկել։ Բայց հենց որ մոտենում եմ, տեսնում եմ, որ նրա դեմքը կերպարանափոխվում է, դառնում է ջահել և նա կամաց ինչ-որ բան է ասում ինձ միաբանության ուսմունքից, այնպես կամաց, որ ես պարզ լսել չեմ կարողանում։ Ապա, իբր մենք բոլորս դուրս ենք գալիս սենյակից, և այդտեղ ինչ-որ անհասկանալի բան է կատարվում։ Մենք նստած կամ պառկած էինք հատակին։ Նա ինչ-որ բաներ է ասում ինձ։ Իսկ ես իբր ուզում էի իմ զգայունությունը ցույց տալ, և առանց նրա ճառը լսելու, սկսեցի երևակայել իմ ներքին մարդու դրությունը և ինձ հասած աստծո ողորմությունը։ Եվ իմ աչքերում երևացին արցունքներ, և ես գոհ էի, որ նա այդ նկատեց։ Բայց նա տհաճությամբ նայեց ինձ ու վեր թռավ, խոսակցությունն ընդհատելով։ Ես շվոթվեցի և հարցրի, թե արդյոք ինձ չի վերաբերում նրա ասածը. բայց նա ոչինչ չպատասխանեց, ցույց տվեց իր մեղմ դեմքը և հետո հանկարծ մենք մեզ տեսանք մի ննջարանում, ուր դրված էր երկտեղանի մի մահճակալ։ Նա պառկեց մահճակալի եզրին, իսկ ես իբր թե բուռն կերպով ցանկանում էի փայփայել նրան և նույն տեղը պառկել։ Եվ նա իբր թե հարցնում էր ինձ. «Ճիշտն ասացեք. ո՞րն է ձեր գլխավոր կիրքը. ճանաչե՞լ եք այն։ Ես կարծում եմ, որ դուք արդեն ճանաչել եք»։ Ես այս հարցից շփոթված, պատասխանեցի, թե ծուլությունն է իմ գլխավոր կիրքը։ Նա գլուխը շարժեց թերահավատությամբ։ Դրանից ավելի շփոթված՝ պատասխանեցի, որ ես թեև նրա խորհրդով ապրում եմ կնոջս հետ, բայց ապրում եմ ոչ իբրև ամուսին։ Դրան նա առարկեց, որ չպետք է կնոջս զրկեմ իմ գուրգուրանքից և զգացնել տվեց, որ դրա մեջ է իմ պարտականությունը։ Բայց ես պատասխանեցի, թե ամաչում եմ այդ բանից. — և հանկարծ ամեն ինչ չքացավ։ Եվ ես զարթնեցի ու մտքերիս մեջ կարդացի ս. գրքի հետևյալ խոսքերը. «Եվ կյանքն էր լույս մարդկան, և լույսն ի խավարի անդ լուսավորե, և խավար նմա ոչ եղև հասու»։ Իոսիֆ Ալեքսեևիչի դեմքը ջահել էր և պայծառ։ Այդ օրը բարերարիցս նամակ ստացա, որի մեջ նա գրում էր ամուսնական պարտականությունների մասին»։

«9 դեկտեմբերի։

«Երազ տեսա, որից արթնացա թրթռացող սրտով։ Տեսա, որ իբր Մոսկվայումն եմ՝ իմ տանը, մեծ բազմոցարանում և հյուրասրահից դուրս է գալիս Իոսիֆ Ալեքսեևիչը։ Ես իբր թե իսկույն իմացա, որ նրա հետ վերածնության պրոցես է կատարվել, ու վազեցի նրան ընդառաջ։ Իբր ես համբուրում եմ նրան ու նրա ձեռները, իսկ նա ասում է. «Նկատեցի՞ր արդյոք, որ դեմքս փոխված է։ Ես, շարունակելով նրան իմ գրկում պահել նայեցի նրան և իբր տեսնում եմ, որ նրա դեմքը ջահելացել է, բայց գլխին մազ չկա, իսկ դիմագծերն էլ բոլորովին այլ են։ Եվ իբր թե ես ասում եմ նրան. «Ես ձեզ կճանաչեի, եթե պատահաբար էլ հանդիպեի», և միաժամանակ մտածում եմ. «Արդյոք ճի՞շտ ասի»։ Եվ հանկարծ տեսնում եմ, որ նա պառկած է, ինչպես դիակ. ապա կամաց կամաց ուշքի է գալիս և ինձ հետ մտնում մեծ կաբինետը, ձեռին մի մեծ գիրք բռնած, որ գրված է ալեքսանդրյան թղթի վրա։ Եվ ես իբր թե ասում եմ. «Այո՛, ես եմ գրել»։ Եվ նա ինձ պատասխանում է գլուխը խոնարհելով։ Ես բացում եմ գիրքը, և իբր թե տեսնում եմ, որ նրա բոլոր էջերը գեղեցիկ նկարված են։ Եվ իբր թե ես գիտեմ, որ այդ պատկերները ներկայացնում են հոգու սիրային արկածներն իր սիրեցյալի հետ։ Եվ իբր թե այդ էջերի վրա ես տես-

նում եմ դեպի ամպերը թռչող թափանցիկ հաղուստով ու թափանցիկ մարմնով մի կույսի գեղեցիկ պատկերը։ Եվ իբր թե ես գիտեմ, որ այդ կույսը ոչ այլ ինչ է, բայց եթե Երգ-Երգոցի պատկերացումը։ Եվ իբր այդ պատկերներին նայելով, ես զգում եմ, որ վատ բան եմ անում, բայց և չեմ կարողանում կտրվել նրանից։ Տե՛ր, օգնի՛ր ինձ։ Տեր աստված, եթե ինձ այսպես անտեր թողնելը քո գործն է, թո՛ղ ուրեմն քո կամքը լինի. իսկ եթե ես ինքս եմ պատճառել ինձ այդ, ուստի սովորեցրու ինձ՝ ի՛նչ անեմ։ Կխորտակվեմ ես իմ անառակությունից, եթե դու բոլորովին աչքաթող անես ինձ»։

XI

Ռոստովների դրամական գործերը չլավացան այն երկու տարվա ընթացքում, որ նրանք անցրին գյուղում։

Չնայած որ Նիկոլայ Ռոստովն իր մտադրությանը հաստատ մնալով, շարունակում էր համեստորեն ծառայել գընդում, ծախսելով համեմատաբար քիչ փող, բայց կյանքը Օտրադնոյում ընթանում էր այնպե՛ս, և մանավանդ Միտենկան այնպես էր տանում գործերը, որ յուրաքանչյուր տարի պարտքերն աճում էին անզուսպ կերպով։ Միակ օգնությունը, որ, ըստ երևույթին, ներկայանում էր ծեր կոմսին, դա ծառայությունն էր. ուստի և նա եկավ Պետերբուրգ՝ պաշտոն գտնելու. պաշտոն գտնելու և դրա հետ միաժամանակ, ինչպես ինքն էր ասում, վերջին անգամ աղջիկներին ուրախացնելու։

Շուտով, Ռոստովների Պետերբուրգ տեղափոխվելուց հետո, Բերգն առաջարկություն արավ Վերային և նրա առաջարկությունն ընդունվեց։

Չնայած որ Ռոստովները Մոսկվայում պատկանում էին ամենաբարձր հասարակության, իրենք էլ չիմանալով և չըմբռնածելով, թե որ հասարակությանն են պատկանում, Պետերբուրգում սակայն նրանց շրջանը խառն էր և անորոշ։ Պետերբուրգում նրանք գավառացիներ էին, որոնց արժան չէին համարում իրենց նույնիսկ ա՛յն մարդիկ, որոնց Ռոստովները կեր-ակրել էին Մոսկվայում, առանց հարցնելու թե ի՛նչ հասարակության են պատկանում նրանք։

Ռոստովները Պետերբուրգում նույնքան հյուրասեր էին, ինչպես և Մոսկվայում։ Նրանց ընթրիքներին հավաքվում էին ամենաբազմազան մարդիկ. Օտրադնոյի հարևանները, հին, աղքատացած կալվածատերեր՝ իրենց աղջիկներով, ֆրեյլինա Պերոնսկայան, Պիեռ Բեզուխովը և գավառական փոստապետի որդին, որ ծառայում էր Պետերբուրգում։ Տղամարդկանցից շուտով Ռոստովների տանու մարդիկ դառան Բորիսը, Պիեռը, որին կոմսը փողոցում հանդիպելով քաշ տվեց իր տուն, և Բերգը, որ ամբողջ օրերով Ռոստովներիտանն էր լինում և դեպի Վերան ցույց էր տալիս այնպիսի ուշադրություն, որ կարող էր ցույց տալ առաջարկություն անելու մտադրություն ունեցող մի երիտասարդ։

Իզուր չէր, որ Բերգն ամենքին ցույց էր տալիս Աուստերլիցում վիրավորված աջ ձեռքը և ձախ ձեռում բռնած մխանգամայն անպետք սուրը, նա իր գլխով անցածը պատմում էր այնպես համառորեն և այնպիսի նշանակություն տալով, որ բոլորն ընդունեցին նրա արած քայլի նպատակահարմարությունն ու արժեքը, ուստի և Բերգն Աուստերլիցի համար ստացավ երկու պարգև։

Ֆինլանդական պատերազմում նույնպես նրան հաջողվեց աչքի ընկնել։ Նա վերցրեց կտորն այն ռումբի, որով գլխավոր հրամանատարի կողքին սպանվեց նրա ադյուտանտը, և ռումբի այդ կտորը ներկայացրեց գնդապետին։ Այնպես էլ, ինչպես Աուստերլիցից հետո, նա երկար ու համառորեն բոլորին պատմում էր այդ դեպքի մասին, այնպես որ բոլորը նույնպես հավատացին, որ այդպես էլ հարկավոր էր անել, և Բերգը Ֆինլանդական պատերազմի համար ստացավ երկու պարգև։ 1809 թվին նա՝ շքանշաններ ստացած, գվարդիայի կապիտան էր և Պետերբուրգում ուներ ինչ-որ հատուկ շահավետ պաշտոններ։

Թեպետև մի քանի ազատախոհներ ժպտում էին, երբ նրանց մոտ խոսում էին Բերգի արժանավորությունների մասին, սակայն չէր կարելի չընդունել, որ Բերգը օրինակելի, քաջ սպա էր, մաքուր իր իշխանության աչքում, և բարոյական երիտասարդ, որին սպասում էր փայլուն կարիերա և որը հասարակության մեջ ուներ ամուր դիրք։

Չորս տարի առաջ Մոսկվայի թատրոնի պարտեզում հանդի-

պելով մի գերմանացի ընկերոջ, Բերգը ցույց տվեց Վերա Ռոստովային և գերմաներեն ասավ. «Das soll mein Weib werden[1]», և նույն րոպեին որոշեց ամուսնանալ նրա հետ։ Այժմ էլ, Պետերբուրգում կշռադատելով Ռոստովների դիրքը, նա վճռեց, որ ժամանակը հասել է, ուստի և առաջարկություն արավ։

Բերգի առաջարկն սկզբում ընդունվեց իր համար անհաճո տարակուսանքով։ Սկզբում տարօրինակ էր թվում, որ լիֆլանդական մի անհայտ ազնվականի որդի առաջարկություն է անում կոմսուհի Ռոստովային. բայց Բերգի բնավորության գլխավոր հատկությունն այն պարզամիտ էգոիզմն էր, որն ստիպեց Ռոստովներին ակամա մտածել, թե այդ լավ կլինի, եթե նա ինքն այդպես հաստատ համոզված է, որ դա լավ է և նույնիսկ շատ լավ։ Բացի դրանից, Ռոստովների գործերը շատ քայքայված էին, որը փեսացուն չէր կարող չիմանալ, և որ գլխավորն է՝ Վերան 24 տարեկան էր և, չնայած որ, ամենն տեղ երևում էր, որ անկասկած լավն էր ու խելոք, բայց և այնպես մինչև այժմ ոչ ոք նրան առաջարկություն չէր արել։ Ուստի և համաձայնություն տրվեց։

— Գիտեք ինչ,— ասում էր Բերգն ընկերոջը, որին նա բարեկամ անվանում էր միայն նրա համար, որովհետև գիտեր որ բոլոր մարդիկ բարեկամներ են ունենում։— Գիտեք ինչ, ես այս բոլորը կշռադատել եմ, և բնավ չէի ամուսնանա, եթե այդ մասին լավ չմտածեի և դա մի տեսակ անհարմար կլիներ։ Այժմ ծնողներս ապահովված են. ես նրանց համար գլուխ բերի այդ կապալը Օստզեի երկրում, իսկ ինքս Պետերբուրգում կարող եմ ապրել իմ ռոճիկով, նրա օժիտով ու իմ լավ վարքով։ Կարելի է լավ ապրել։ Փողի համար չէ, որ պսակվում եմ. ես այդ համարում եմ անազնվություն, բայց հարկավոր է, որ կինը բերի իրենը, մարդը՝ իրենը։ Ես պաշտոն ունեմ, իսկ նա կապեր ու փոքրիկ միջոցներ։ Մեր օրերում դա մի որևէ բան արժի, այնպես չէ՞։ Բայց որ գլխավորն է, նա գեղեցիկ, հարգելի աղջիկ է և սիրում է ինձ։

Բերգը կարմրեց ու ժպտաց։

— Ես էլ նրան եմ սիրում, որովհետև նա լուրջ բնավորություն ունի, շատ լավ բնավորություն։ Ա՛յ, նրա մյուս քույրը՝ բոլորովին ուրիշ է. և՛ բնավորությունն է անհաճո, և՛ այնպիսի էլ խելք չունի, գիտե՞ք, այնպես էլի... Անհաճո բան է...։ Իսկ իմ հարսնացուն... Կպատահի կգաք մեզ մոտ...— շարունակեց Բերգը, նա ուզում էր ասել «ճաշելու», բայց միտքը փոխեց և ասաց. «թեյ խմելու», և լեզուն ուրախ շխկացնելով, բաց թողեց ծխախոտի մի կլոր, փոքրիկ օղակ, որ միանգամայն կերպավորում էին նրա երազանքները երջանկության մասին։

Տարակուսանքի առաջին զգացումից հետո, որ հարուցեց Բերգի առաջարկությունը Վերայի ծնողների մեջ, ընտանիքում տիրեց այդպիսի դեպքերում սովորական տոնախնդություն և ուրախություն, սակայն այդ ուրախությունն անկեղծ չէր, այլ երևութական։ Հարսանիքի նկատմամբ հարազատների մեջ նկատելի էր շփոթմունք ու ամոթանք։ Այժմ կարծես ամաչում էին, որ Վերային քիչ են սիրել և հիմա էլ այնպես հեշտությամբ տալիս են։ Ամենից ավելի շփոթված էր ծեր կոմսը։ Ըստ երևույթին նա կդժվարանար ասել, թե ինչն է իր շփոթության պատճառը, իսկ այդ պատճառը նրա դրամական գործերն էին։ Նա բոլորովին չգիտեր, թե ինքն ի՞նչ ունի, որքան են պարտքերը և որքան օժիտ կարող է տալ Վերային։ Երբ աղջիկները ծնվեցին, ամեն մեկին իբրև օժիտ նշանակված էր 300 ճորտ, բայց այդ ճորտական գյուղերից մեկն արդեն ծախված էր, մյուսը գրավ դրված ու ժամանակն այնքան անցած, որ պետք է ծախվեր, ուստի և կալված տալն անհնարին էր։ Փող նույնպես չկար։

Բերգն արդեն ամսից ավելի նշանված էր. մինչև Հարսանիքը մի շաբաթ էր մնում միայն, իսկ կոմսը իր մեջ դեռ չէր վճռել օժիտի հարցը, և այդ մասին չէր խոսում կնոջ հետ։ Նա մեկ ուզում էր Վերային տալ Ռյազանի կալվածքը, մեկ ուզում էր անտառը ծախել, մեկ էլ՝ մուրհակով պարտք վերցնել։ Հարսանիքից մի քանի օր առաջ Բերգը վաղ առավոտյան մտավ կոմսի առանձնասենյակը և դուրեկան ժպիտով հարգալիր խնդրեց ապագա աներոջը՝ հայտնել իրեն, թե կոմսուհի Վերայի հետ ի՞նչ օժիտ է տրվելու։ Կոմսն այնպես շփոթվեր վաղուց սպասվող այդ հարցից, որ առանց մտածելու ասավ ինչ որ գլուխն եկավ։

[1] Սա պիտի իմ կինը լինի։

— Լավ է, որ հոգ ես տանում այդ մասին, լավ է։ Գո՛հ կմնաս...

Եվ նա, ձեռը Բերգի ուսին խփելով, վերկացավ, ցանկանալով խոսակցությունն ընդհատել, բայց Բերգը սիրալիր ժպիտով բացատրեց, որ եթե ինքը հաստատ չիմանա, թե Վերայի հետ ի՞նչ է տրվելու, և եթե առաջուց չստանա, տրվելիքի գոնե մի մասը, հարկադրված կլինի հրաժարվել։

— Որովհետև, ինքներդ դատեցեք, կոմս, եթե ես այժմ թույլ տայի ինձ ամուսնանալ, չունենալով որոշ միջոցներ կնոջս պահելու, ես ստոր բան արած կլինեի...

Խոսակցությունը վերջացավ նրանով, որ կոմսն իրեն բարեհոգի ցույց տալու և նոր խնդրանքներից ազատվելու համար, ասավ, որ 80 հազարի մուրհակ է տալիս։ Բերգը հեզ ժպտաց, համբուրեց կոմսի ուսը և ասավ, որ ինքը շատ շնորհակալ է, բայց այժմ ոչ մի կերպ չի կարող տուն դնել, եթե կանխիկ 30 հազար չստանա։

— Գոնե 20 հազար, կոմս,— ավելացրեց նա,— իսկ մուրհակն այն ժամանակ միայն 60 հազարի։

— Այո՛, այո՛, լավ,— արագությամբ ասավ կոմսը,— միայն կներես, բարեկամ, 20 հազար կտամ, իսկ բացի այդ 80 հազարի մուրհակ։ Դե ուրեմն, համբուրիր ինձ։

XII

Նատաշան արդեն 16 տարեկան էր, և հենց այն 1809 թվին էր, մինչև որը նա չորս տարի առաջ Բորիսի հետ մատներով էր հաշվում իր տարիքը, երբ նրանք համբուրեցին իրար։ Այդ օրվանից նա էլ ոչ մի անգամ Բորիսին չէր տեսել։ Երբ Սոնյայի և մոր մոտ խոսք էր լինում Բորիսի մասին, Նատաշան բոլորովին ազատ խոսում էր, իբրև արդեն որոշված բանի վրա, թե այն բոլորը, ինչ եղել է առաջ, երեխայություն էր, որի մասին խոսել էլ շարժի և որը վաղուց մոռացված է։ Բայց նրա հոգու անթափանց խորքում մի հարց էր ծագում, թե արդյոք դեպի Բորիսն եղած պարտավորությունը կատակ էր, թե՞ խոստումով կապված՝ լուրջ բան, ու այդ տանջում էր նրան։

Այն ժամանակից սկսած, երբ Բորիսը 1805 թվին Մոսկվայից մեկնեց բանակ, նա Ռոստովների հետ չէր տեսնվել։ Մի

քանի անգամ նա եղել էր Մոսկվայում, անցել էր Օտրադնոյի մոտով, բայց ոչ մի անգամ չէր մտել Ռոստովների տունը։

Երբեմն Նատաշան մտածում էր, թե Բորիսը չի կամենում իրեն տեսնել և նրա այդ ենթադրությունները հաստատվում էին այն տխուր եղանակով, որով մեծերը խոսում էին նրա մասին։

— Մեր օրերում հին բարեկամներին չեն հիշում,— ասում էր կոմսուհին, երբ Բորիսի մասին խոսք էր լինում։

Աննա Միխայլովնան, որ վերջերս շատ սակավ էր լինում Ռոստովների տանը, նույնպես իրեն մի ինչ-որ առանձին արժանավայել ձևով էր պահում և ամեն անգամ հիացմունքով ու շնորհակալությամբ էր խոսում որդու արժանիքների և այն փայլուն կարիերայի մասին, որ ուներ որդին։ Երբ Ռոստովները եկան Պետերբուրգ, Բորիսն այցելեց նրանց։

Բորիսը նրանց մոտ գնում էր ոչ առանց հուզմունքի։ Նատաշայի մասին եղած հիշողությունը՝ Բորիսի ամենաբանաստեղծական հիշողությունն էր։ Սակայն դրա հետ միաժամանակ, նա Ռոստովների մոտ գնում էր այն հաստատ մտադրությամբ, որ պարզ զգացնել տա, թե՛ Նատաշային ու թե՛ նրա հարազատներին, որ իր ու Նատաշայի միջև եղած մանկական հարաբերությունները չեն կարող ազդարարություն համարվել ո՛չ Նատաշայի և ո՛չ իր համար։ Նա ուներ փայլուն դիրք հասարակության մեջ, շնորհիվ կոմսուհի Բեզուխովայի հետ ունեցած մտերմության, ուներ փայլուն դիրք ծառայության մեջ, շնորհիվ այն նշանավոր անձի հովանավորության, որի վստահությունը վայելում էր լիովին. նա ուներ նաև ծնունդ առնող ծրագիրներ, այն է՝ ամուսնակալ Պետերբուրգի ամենահարուստ հարսնացուներից մեկի հետ, ծրագիրներ, որ հեշտությամբ կարող էին իրագործվել։ Երբ Բորիսը Ռոստովների հյուրասրահը մտավ, Նատաշան իր սենյակումն էր։ Բորիսի գալն իմանալով, նա կարմրատակած, համարյա վազելով մտավ հյուրասրահ. նրա դեմքը փայլում էր ավելի քան սիրալիր ժպիտով։

Բորիսը հիշում էր Նատաշային՝ կարճ զգեստով, սև, խոպոպների տակից փայլող աչքերով և մանկական բուռն ծիծաղով. այն Նատաշային, որին նա ճանաչում էր չորս տարի առաջ, և երբ ներս մտավ մի բոլորովին ուրիշ Նատաշա, նա

շփոթվեց, և նրա դեմքն արտահայտեց խանդավառ զարմանք։ Բորիսի դեմքի այդ արտահայտությունը ուրախացրեց Նատաշային։

— Հը՛, ճանաչո՞ւմ եք ձեր փոքրիկ շարահանի ընկերուհուն, — ասավ կոմսուհին։

Բորիսը համբուրեց Նատաշայի ձեռը և ասավ, որ ինքը զարմացած է Նատաշայի մեջ կատարված փոփոխության վրա։

— Ի՞նչ սիրունացել եք։

— Իհարկե, — պատասխանեցին Նատաշայի ծիծաղող աչքերը։

— Իսկ հայրիկը ծերացե՞լ է, — հարցրեց Նատաշան։ Նատաշան նստեց և, Բորիսի ու մոր խոսակցությանը չմիջամտելով, լուռ զննում էր իր մանուկ օրերի փեսացուին ամենայն մանրամասնությամբ։ Բորիսն իր վրա զգում էր այդ համառ նայվածքի ծանրությունն ու երբեմն նայում նրան։

Բորիսի մունդիրը, խթանները, փողկապը, սանրվածքը, — այս բոլորը նորաձև էր և comme il faut[1]. Նատաշան իսկույն նկատեց այդ։ Բորիսը կոմսուհու կողքին մի քիչ թեք նստած՝ աջ ձեռով ուղղում էր ձախ ձեռի բոլորովին մաքուր անուշահոտ յուղերով օծված ձեռնոցը, խոսում էր շուրթերի առանձին նուրբ հպումով, խոսում էր Պետերբուրգի բարձր շրջանների զվարճությունների մասին և հեզ հեգնությամբ հիշում Մոսկվայում անցրած ժամանակն ու Մոսկվայի նախկին ծանոթներին։ Բայց անակնկալ կերպով, ինչպես այդ զգաց Նատաշան, Բորիսը թվելով Մոսկվայի բարձր արիստոկրատիային, հիշեց դեսպանի պարահանդեսը, ուր եղել էր ինքը, հիշեց N N.-ի և S. S.-ի հրավերքները։

Նատաշան շարունակ անխոս նստած աչքի տակով նայում էր Բորիսին։ Այդ հայացքն ավելի ու ավելի և՛ անհանգստացնում, և՛ շփոթում էր Բորիսին։ Նա հաճախ նայում էր Նատաշային ու զրույցն ընդհատում։ Մի տասը րոպե ևս նստելով, նա գլուխ տալով վեր կացավ։ Նատաշայի նույն հետաքրքիր, համարձակ ու փոքր-ինչ ծաղրական աչքերը նայում էին Բորիսին։ Առաջին այցելությունից հետո, Բորիսն ասավ իրեն,

[1] Սիանդամային կարգին։

թե Նատաշան իր համար ճիշտ նույնչափ գրավիչ է, որքան և առաջ, բայց թե ինքն անձնատուր չպետք է լինի զգացմունքին, որովհետև ամուսնանալ Նատաշայի հետ — որին թե կարողությունից զուրկ մի տղջկա հետ — կնշանակեր խորտակել սեփական կարիերան, իսկ նախկին հարաբերությունները վերսկսելը — առանց ամուսնանալու նպատակի — դա անազնիվ քայլ կլիներ։

Բորիսն ինքն իր մեջ վճռել էր խուսափել Նատաշայի հետ հանդիպելուց, բայց, չնայած այդ որոշման, մի քանի օր հետո կրկին եկավ նրանց տուն, և ապա սկսեց հաճախակի գալ, ու այնուհետև ամբողջ օրերն անցնում էր Ռոստովների մոտ։ Նրան անհրաժեշտ էր թվում բացատրվել Նատաշային, ասել նրան, թե հինը ամբողջովին պիտի մոռանալ, և չնայած այդ բոլորին... Նատաշան ինքը չի կարող իր կինը լինել, իսկ ինքը Բորիսը կարողություն չունի, ուստի և Նատաշային երբեք չեն տա իրեն։ Բայց միշտ էլ նրան այդ չէր հաջողվում և անհարմար էր բացատրության դիմել։ Օրըստօրե նա ավելի ու ավելի էր կորցնում իրեն։ Նատաշան, ինչպես մայրն ու Սոնյան էին նկատում, առաջվա պես Բորիսի վրա սիրահարված էր երևում։ Նա երգում էր Բորիսի սիրած երգերը, Բորիսին ցույց էր տալիս իր ալբոմը, ստիպելով նրան մի բան գրել դրա մեջ, թույլ չէր տալիս անցյալի մասին խոսել, դրանով հասկացնել տալով, թե որքան գեղեցիկ է ներկան, — և Բորիսը ամեն օր հեռանում էր անորոշության մշուշի մեջ, առանց ասելու այն, ինչ մտադիր էր ասել, ինքն էլ չիմանալով ի՞նչ է անում և ի՞նչով կվերջանա այս ամենը։ Բորիսը դադարել էր Էլենի մոտ գնալուց, ուստի և ամեն օր նրանից ստանում էր կտտամբական դրություններ, և այնուամենայնիվ օրերն ա՛ց էր կացնում Ռոստովների տանը։

XIII

Մի անգամ երեկոյան, երբ պառավ կոմսուհին հառաչելով ու քրթմնջալով, գիշերային շամչիկով ու կոֆտայով, առանց գնովի մազերի, և միայն մի խղճուկ փունջ մազերով, որ դուրս էին թափվել կալենկորի շամչիկի տակից, — փոքրիկ գորգի վրա ծունր էր դնում և իրիկվա աղոթքն էր անում, նրա դուռը

ճոնչաց և տուֆլիները մերկ ոտներին, նույնպես կոֆտայով և մազերը թղթե ձևերի մեջ ձև դրած ներս վազեց Նատաշան։ Կոմսուհին ետ նայեց և դեմքը խոժոռեց։ Նա վերջացնում էր իր վերջին աղոթքը. «Մի՞թե մահիճս այս ինձ դագաղ եղիցի»։ Նրա աղոթելու տրամադրությունը չքացավ։ Նատաշան՝ կարմրած, զվարթ, տեսնելով մորն աղոթելիս, իսկույն կանգ առավ, նստեց և ակամա հանեց լեզուն, ինքն իրեն սպառնալով։ Նկատելով, որ մայրն աղոթքը շարունակում էր, նա ոտների ծայրերի վրա վազեց դեպի մահճակալը, արագ սահելով մի ոտը դիպցրեց մյուսին, տուֆլիները դեն գցեց և թռավ այն մահճակալի վրա, որի համար կոմսուհին վախենում էր, թե չլինի իր դագաղը դառնա։ Այդ մահիճը բարձր էր, փետուրե և աստիճանաբար փոքրացող հինգ բարձերով։ Նատաշան թռավ, խրվեց փետուրե անկողնի մեջ, գլորվեց դեպի պատերը և ոսկրսեց շուռ ու մուռ գալ վերմակի տակ, իրեն տեղավորելով, ծնկները դեպի կզակը ծալելով, ոտները գցելով և հազիվ լսելի ծիծաղով մերթ գլուխը կոխում էր վերմակի տակ, մերթ նայում էր մորը։ Կոմսուհին աղոթքը վերջացրեց և խստադեմ մոտեցավ մահճին, բայց տեսնելով Նատաշային՝ գլուխը վերմակի տակ թաքցրած, ժպտաց իր բարի, թույլ ժպիտով։

— Դե՛-դե՛-դե՛,— ասավ մայրը։

— Մայրիկ, կարելի՞ է քեզ հետ խոսել,— ասավ Նատաշան։— Դե, թող մի անգամ էլ համբուրեմ ու բավական է։— Եվ նա ձեռներով գրկեց մոր վիզը և համբուրեց նրա կզակը։ Մոր նկատմամբ Նատաշան ցույց էր տալիս ձևերի արտաքին կոպտություն, բայց այնքան զգայուն ու ճարպիկ էր, որ որքան էլ ձեռներով փաթաթվեր մորը, նա այդ բանը կարողանում էր անել միշտ այնպես, որ մորը ո՛չ ցավ պատճառի, ո՛չ տհաճություն և ո՛չ էլ անհարմարություն։

— Հը, լավ, հիմի ի՞նչ կա,— ասավ մայրը բարձերի վրա տեղավորվելով և սպասեց, մինչև որ Նատաշան մի երկու անգամ իր վրայից գլորվելով, պառկի իր կողքին միևնույն վերմակի տակ՝ ձեռները մեկնելով և լուրջ արտահայտություն ընդունելով։

Նատաշայի այդ գիշերային այցելությունները, որ կատարվում էին մինչև կոմսի վերադառնալն ակումբից, մոր և աղջկա սիրած զվարճություններից մեկն էր։

— Հիմի էլ ի՞նչ ունես ասելու։ Իսկ ես քեզ պիտի ասեմ...

Նատաշան ձեռներով փակեց մոր բերանը։

— Բորիսի մասին... Ես գիտեմ,— ասավ նա լուրջ,— ես դրա համար էլ եկել եմ։ Մի՛ ասեք, ես գիտեմ։— Չէ, ասեք։— Նա ձեռը վերցրեց։— Ասեք մայրիկ։ Նա լա՞վն է։

— Նատաշա, դու տասնվեց տարեկան ես, քո տարիքին ես ամուսնացած էի։ Դու ասում ես, թե Բորիսը լավն է։ Նա շատ լավն է, ես էլ եմ նրան սիրում որպես որդու, բայց դե դու ի՞նչ ես ուզում... Դու ի՞նչ ես մտածում... Դու նրան բոլորովին խելքահան ես արել, ես այդ տեսնում եմ...

Այս ասելով, կոմսուհին նայեց աղջկան։ Նատաշան պառկել էր ուղիղ ու անշարժ և նայում էր իր առջև, մահճակալի անկյուններում փորագրված սֆինքսներից մեկին, այնպես որ կոմսուհին տեսնում էր աղջկա միայն կիսադեմը։ Այդ դեմքը՝ իր լուրջ և կենտրոնացած արտահայտության առանձնահատկությամբ զարմացրեց կոմսուհուն։

Նատաշան լսում էր և լսածը մտքում քննում։

— Դե ի՞նչ անենք,— ասավ նա։

— Դու նրան բոլորովին խելքահան ես արել, ի՞նչուն։ Ի՞նչ ես ուզում նրանից։ Գիտես որ նրա հետ ամուսնանալ չես կարող։

— Ինչո՞ւ,— առանց դիրքը փոխելու ասավ Նատաշան։

— Նրա համար որ՝ նա ջահել է, նրա համար որ՝ նա չքավոր է, նրա համար որ՝ նա ազգական է... Նրա համար որ՝ դու ինքդ էլ չես սիրում նրան։

— Իսկ դուք այդ որտեղի՞ց գիտեք։

— Ես գիտեմ։ Դա լավ չէ, բարեկամս։

— Իսկ եթե ես ուզում եմ,— ասավ Նատաշան։

— Թող հիմարություններդ...— ասավ կոմսուհին։

— Իսկ եթե ես ուզում եմ...

— Նատաշա, ես լուրջ...

Նատաշան թույլ չտվեց մորը խոսքն ավարտելու, դեպ իրեն ձգեց կոմսուհու խոշոր ձեռը և համբուրեց այն նախ վերևից, ապա ափը, հետո կրկին շրջեց և սկսեց համբուրել նրա մատների վերին հոդի ոսկորը, հետո արանքը, հետո կրկին ոսկորը, ապա ասավ. «Հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս»։— Խոսեք մայրիկ, ինչո՞ւ եք լռում։ Խոսեք,— ասավ նա, մորը նայելով,

որն այդ ժամանակ քնքուշ հայացքով նայում էր աղջկան և այդ հայեցման մեջ կարծես թե մոռացավ այն բոլորը, ինչ ուզում էր ասել։

— Դա բանի նման չի, հոգիս։ Ամեն մարդ էլ ձեր մանկական կապը չի հասկանա. իսկ եթե քեզ այդքան մտերիմ տեսնեն նրա հետ, այդ բանը գուցե քեզ վնասի ուրիշ երիտասարդների աչքում, որոնք մեր տուն են գալիս և, որ գլխավորն է, դա իզուր տանջում է նրան։ Նա, գուցե, իրեն համապատասխան հարուստ մեկը գտել է. իսկ հիմա գժվում է։

— Գժվում է,— կրկնեց Նատաշան։

— Ես քեզ իմ կյանքից կպատմեմ։ Ես մի cousin ունեի...

— Գիտեմ — Կիրիլլ Մատվեյիչը. չէ՞ որ նա ծեր է։

— Միշտ էլ ծեր չի եղել։ Բայց ահա թե ինչ, Նատաշա, ես Բորիսի հետ կխոսեմ։ Հարկ չկա, որ նա այդպես հաճախ գա...

— Ինչո՞ւ հարկ չկա, եթե նա ուզում է։

— Նրա համար որ, գիտեմ, թե դա ոչնչով չի վերջանա...

— Ինչի՞ց գիտեք։ Չէ, մայրիկ, դուք նրան բան չասեք։ Ի՞նչ հիմարություն,— ասավ Նատաշան մի մարդու եղանակով, որից ուզում են իր սեփականությունը խլել։— Դե, ես չեմ ամուսնանա, թող այնպես գա. եթե այդ նրա համար լավ է, ինձ համար էլ լավ է։— Նատաշան ժպտալով մորը նայեց։

— Ոչ թե ամուսնանալ, այլ այնպես,— կրկնեց նա։

— Այդ ինչպե՞ս, սիրելիս։

— Դե այնպես։ Շատ հարկավոր է, որ չեմ ամուսնանա, այլ... այնպես։

— Այնպես, այնպես,— կրկնեց կոմսուհին և ամբողջ մարմնով ցնցվելով, ծիծաղեց իր բարի, պառավական անսպասելի ծիծաղով։

— Բավական է ծիծաղեք, վերջ տվեք,— գոչեց Նատաշան,— ամբողջ մահճակալը դողում է։ Դուք բոլորովին ինձ նման եք՝ կչկչա՛ն... Սպասեցեք...— Նա բռնեց կոմսուհու երկու ձեռն էլ, համբուրեց ճկույթի մի ոսկորը — «հունիս» և շարունակեց համբուրել մյուս ձեռը՝ «հուլիս», «օգոստոս» ասելով։— Մայրիկ, նա շա՞տ է սիրահարված։ Ինչպե՞ս է երևում ձեր աչքին։ Ձեր վրա էլ սիրահարվե՞լ են այդպես։ Եվ շատ լավն է, շատ-շատ լավն է։ Բայց այնքան էլ իմ ճաշակի չի — նա

այնպես սահմանափակ, նեղ է սեղանատան ժամացույցի նման... Չեք հասկանո՞ւմ... Նեղ, գիտեք, հասարակ, պարզ...

— Ինչի՞ ես ստում,— ասավ կոմսուհին։

Նատաշան շարունակեց.

— Մի՞թե դուք չեք հասկանում։ Ա՛յ Նիկոլենկան կհասկանար... Բեզուխովը՝ կապույտ, մուգ-կապույտ է կարմրախառը, իսկ նա՝ քառանկյունի։

— Դու նրա հետ էլ ես կոկետություն անում,— ծիծաղելով ասավ կոմսուհին։

— Ոչ. նա ֆրանմասոն է, ես իմացել եմ։ Նա լավ մարդ է՝ մութ-կապույտ կարմրախառը... Ձեզ ինչպես բացատրեմ։

— Սիրելի կոմսուհի,— լսվեց կոմսի ձայնը դռան ետևից։— Դու քնած չե՞ս։— Նատաշան վեր թռավ, վերցրեց տուֆլիները և բոբիկ վազեց իր սենյակը։

Երկար նա չկարողացավ քնել։ Շարունակ մտածում էր այն մասին, թե ոչ ոք ոչ մի կերպ չի կարող հասկանալ այն բոլորը, ինչ ինքն է հասկանում և ինչ կա իր սրտում։

«Սոնյան», մտածեց նա, նայելով իր սենյակում կուչ եկած քնած ահագին ծամով կատվիկին։ «Ոչ, նա՛ էլ չի հասկանա։ Նա առաքինի է։ Նա սիրահարվել է Նիկոլայի վրա, և ուրիշ ոչինչ լսել չի ուզում։ Մայրիկն էլ չի հասկանում։ Զարմանալի է, որքան ես խելոք եմ և ինչ... լավիկն է նա», շարունակեց նա ինքն իր մասին երրորդ դեմքով խոսելով ու երևակայելով, թե այդ խոսքերն իր մասին ասում է մի շատ խելոք, ամենախելոք և ամենալավ տղամարդը...— Նա ամեն, ամեն բան ունի,— շարունակում էր այդ տղամարդը,— խելո՛ք է, արտասովոր կերպով սիրուն և հետո լա՞վն է, շափից դուրս լավը. ճարպիկ է,— ջրում լող է տալիս, ձիով ման է գալիս, իսկ ձա՞յնը... Կարելի է ասել, զարմանալի ձայն է։

Նա երգեց Խերուբինի օպերայից իր սիրած կտորը, նետվեց անկողնու վրա, ծիծաղեց այն ուրախ մտքից, որ շուտով քնելու է, ձայն տվեց Դունյաշային, որ մոմը հանգցնի, և դեռ Դունյաշան սենյակից դուրս չէր եկել, երբ նա փոխադրվեց երազների մի ուրիշ, ավելի երջանիկ աշխարհ, ուր ամեն բան այնպես թեթև ու գեղեցիկ էր, ինչպես իրականության մեջ, բայց միայն թե ավելի լավ էր, որովհետև ուրիշ տեսակ էր։

Մյուս օրը կոմսուհին, Բորիսին իր մոտ հրավիրելով, խոսեց նրա հետ, և այդ օրվանից Բորիսը ոտը կտրեց Ռոստովների տնից։

XIV

Դեկտեմբերի 31-ին, 1810 թվի նոր տարու նախօրյակին, Եկատերինայի ժամանակի մի ավագանու մոտ գիշերային ընթրիքից հետո պարահանդես էր։ Պարահանդեսին լինելու էին դիվանագիտական մարմինը և թագավորը։

Ավագանու տունը, որ գտնվում էր Անգլիական ափին, լուսավորված էր հրավառության անթիվ ճրագներով։ Լուսավորված և կարմիր մահուդով ծածկված շքամուտքի առջև կանգնած էր ոստիկանությունը, ոչ միայն ժանդարմները, այլև ոստիկանապետը և ոստիկանական տասնյակ սպաներ։ Կառքերը հեռանում էին և շարունակ գալիս էին նորերը՝ կարմրազգեստ, փետրավոր գլխարկը գլուխներին լաքեյներով։ Փակ կառքերից դուրս էին գալիս տղամարդիկ՝ մունդիր հագած, աստղերով ու ժապավեններով, կանայք աթլաս զգեստներով և սպիտակ կզաքիսի մուշտակով. իջնում էին նրանք զգուշությամբ և շտապով ու անձայն անցնում շքամուտքի մահուդի վրայով։

Գրեթե ամեն անգամ, երբ մի նոր կառք էր մոտենում, ամբոխի մեջ շշունջ էր անցնում և գլխարկները հանում էին։

— Թագավո՞րն է... Չէ... Մինիստր է... պրինց է... դեսպան է... Միթե՞ փետուրները չես տեսնում,— ասում էին ամբոխի միջից։

Մեկն ամբոխից, որ մյուսներից ավելի լավ էր հագնված, ըստ երևույթին, բոլորին ճանաչում էր և անուն-անուն հիշում այն ժամանակվա ամենանշանավոր ավագանիներին։

Հյուրերի մի երրորդ մասն արդեն եկել էր պարահանդես, բայց Ռոստովները, որ պետք է լինեին այդ պարահանդեսին, դեռ հագնվելու շտապ պատրաստություն էին տեսնում։

Այդ պարահանդեսի առթիվ Ռոստովների ընտանիքում շատ խոսք ու պատրաստություն կար, շատ երկյուղներ, թե մի գուցե հրավեր չստացվի, հանդերձը պատրաստ չլինի և ամեն բան այնպես չդասավորվի, ինչպես հարկավոր է։

Ռոստովների հետ միասին պարահանդես մեկնեց Մարիա Իգնատովնա Պերոնսկայան, կոմսուհու ընկերուհին և ազգականուհին՝ հին արքունիքի մի նիհար ու դեղնած ֆրեյլին, որ գավառացի Ռոստովներին ղեկավարում էր Պետերբուրգի բարձր շրջաններում։

Երեկոյան ժամը 10-ին Ռոստովները պետք է գնային Տավրիկյան այգին՝ ֆրեյլինի ետևից, այնինչ 10-ից 5 րոպե էր պակաս և աղջիկները տակավին հագնված չէին։

Նատաշան իր կյանքում առաջին անգամն էր գնում մեծ պարահանդես։ Նա այդ օրը քնից ելավ առավոտյան ժամը 8-ին և ամբողջ օրը գտնվում էր տենդային հուզմունքի ու գործունեության մեջ։ Նրա ամբողջ եռանդը վաղ առավոտից գործադրվեց այն բանի վրա, որ իրենք բոլորը՝ ինքը, մայրիկը, Սոնյան հագնված լինեն, որքան կարելի է, լավ։ Սոնյան ու կոմսուհին նրան վստահացան միանգամայն։ Կոմսուհին հաղնելու էր կարմիր թավիշե զգեստներ, իսկ իրենք՝ աղջիկները, սպիտակ ծխագույն հագուստներ, մետաքսե վարդագույն ժապավենով՝ գոտիների վրա վարդեր։ Իսկ մազերնին պիտի սանրեին à la grecque[1]։

Էական բաներն արդեն արված էին. բոլորի ձեռները, ոտները, վիզը, ականջները առանձին խնամքով, ինչպես պատշաճում է պարահանդես գնացողին, արդեն լվացված, օծված ու սնգուրված էին. հագել էին արդեն թե՛ մետաքսե թափանցիկ գուլպաները, թե սպիտակ աթլասե կոշիկները՝ բանթերով, իսկ սանրվածքները համարյա թե վերջացել էին։ Սոնյան հագնվում-վերջացնում էր. կոմսուհին նմանապես, բայց Նատաշան, որ բոլորի համար հոգ էր տանում, ետ մնաց։ Նա դեռ հայելու առաջ նստած էր՝ նիհար ուսերին պենուար գցած։ Սոնյան արդեն հագնված կանգնել էր սենյակի մեջտեղ և, փոքրիկ մատով, ցավացնելու աստիճան, սեղմելով՝ ամրացնում էր վերջին, քորոցի տակ ճռռացող ժապավենը։

— Այդպես չէ, այդպես չէ, Սոնյա,— ասում էր Նատաշան, գլուխը շրջելով մազերը սանրող աղջկանից և ձեռով մազերը բռնելով, որ սպասուհին չկարողացավ ժամանակին բաց թողնել։— Բանթն այդպես չպիտի լինի, ե՛կ այստեղ։

[1] Հունական ձևով։

Սոնյան նստեց։ Նատաշան ժապավենը ամրացրեց այլ կերպ։

— Թողեք, օրիորդ, այդպես չի կարելի,— ասավ Նատաշայի մազերը բռնող սպասուհին։

— Ախ, տեր իմ աստված, դե հետո։ Այ այսպես, Սոնյա։

— Հը, շո՞ւտ կվերջացնեք,— լսվեց կոմսի ձայնը,— արդեն տասը կլինի հիմա։

— Հիմա, հիմա։ Իսկ դուք պատրա՞ստ եք, մայրիկ։

— Միայն գլխարկս է մնում։

— Առանց ինձ չկնեք,— գոչեց Նատաշան,— դուք չեք կարող։

— Բայց չէ՞, արդեն տասն է։

Որոշված էր պարահանդեսին լինել տասն և կեսին, իսկ Նատաշան դեռ պիտի հագնվեր ու դեռ պետք է գնային Տավրիկյան այգին։

Սանրվածքը վերջացնելով, Նատաշան կարճ շրջազգեստով, որի տակից երևում էին պարահանդեսային կոշիկները, և մոր կոֆտան հագին, վազեց դեպի Սոնյան, դիտեց նրան և ապա վազեց մոր մոտ։ Մոր գլուխը թեքելով, նա ամրացրեց նրա գլխարկը և նրա ճերմակ մազերը համբուրելով, կրկին վազեց իր շրջազգեստը կարող աղջիկների մոտ։

Գործն ուշանում էր Նատաշայի շրջազգեստի պատճառով, որը չափից դուրս երկար էր։ Շրջազգեստը կարում կարգի էին բերում երկու աղջիկ՝ փութկոտությամբ կծելով թելերը։ Երրորդ աղջիկը, քորոցները շրթունքների և ատամների արանքում, կոմսուհու մոտից վազում էր դեպի Սոնյան. չորրորդը լարած պահած ձեռով բռնել էր շղարշե զգեստները։

— Մավրուշա, շո՛ւտ սիրելիս։

— Մատնոցն այդտեղից տվեք, օրիորդ։

— Շո՞ւտ կլինի, վերջապես,— ասավ կոմսը ներս մտնելով։— Ահավասիկ ձեզ օծանելիք։ Պերոնսկայան բավական արդեն սպասեց։

— Պատրաստ է, օրիորդ,— ասավ սպասուհին երկու մատով բարձրացնելով տակից կարված շղարշե զգեստը և ինչոր բան փչելով ու թափ տալով, այդպիսով կամենալով ցույց տալ իր ձեռքում բռնածի թեթևությունն ու մաքրությունը։

Նատաշան սկսեց զգեստը հագնել։

— Իսկո՛ւյն, իսկույն, մի՛ գա, հայրիկ,— ձայն տվեց նա հորը, որ դուռը բաց էր անում. նա ճշաց շրջազգեստի շղարշի տակից, որն ամբողջովին ծածկել էր նրա երեսը։

Սոնյան դուռը ծածկեց։ Մի րոպեից հետո կոմսին ներս թողեցին։ Նա հագել էր կապույտ ֆրակ, երկար գուլպաներ ու կոշիկներ. նա անուշահոտ յուղերով օծված էր ու շպարված։

— Ա՛խ, հայրիկ, ի՛նչ լավն ես. հիանալի՛ է,— ասավ Նատաշան սենյակի մեջտեղը կանգնած և զգեստի ծալքերն ուղղելով։

— Կացեք, օրիորդ, կացեք,— ասում էր սպասուհին չոքած տեղը, Նատաշայի զգեստը ձիգ տալով և բերանի քորոցները լեզվով մի կողմից մյուսի վրա շրջելով։

— Դո՛ւ գիտես,— հուսահատ բացականչեց Սոնյան՝ Նատաշայի զգեստին նայելով,— դո՛ւ գիտես, էլի երկար է։

Նատաշան հեռացավ, որ հայելու մեջ նայի իրեն։ Զգեստը երկար էր։

— Ոչ, տիրուհի, աստված վկա, ամենևին երկար չէ,— ասավ Մավրուշան, հատակի վրա, օրիորդի ետևից սողալով։

— Դե, եթե երկար է — կարճացնենք. մի րոպեում կկատարենք,— ասավ վճռական Դունյաշկան, կրծքի թաշկինակից ասեղը հանելով և հատակի վրա նորից սկսելով իր գործը։

Այդ միջոցին ամոթխած, լուռ քայլերով ներս մտավ կոմսուհին իր նեղ գլխարկով ու թավշյա զգեստով։

— Օ՜հ, իմ գեղեցկուհի՜,— գոչեց կոմսը,— բոլորիցդ լա՜վն է։

Նա ուզում էր կոմսուհուն գրկել, բայց կոմսուհին կարմրելով մի կողմ քաշվեց, որ զգեստները չջարդվեն։

— Մայրիկ, գլխարկդ քիչ ավելի թեք,— ասավ Նատաշան։— Ես կամրացնեմ,— ու նետվեց առաջ, իսկ աղջիկները, որ զգեստի տակից վրա էին կարում, չկարողանալով նրա ետևից հասնել, պոկեցին շղարշի մի կտոր։

— Տեր իմ աստվա՜ծ։ Սա ինչ բան է։ Աստված վկա, ես մեղավոր չեմ...

— Ոչինչ, կկարեմ, կկպցնեմ, չի երևա,— ասավ Դունյաշան։

— Սիրունիկս, թագուհիս,— ասավ ներս մտնող դայակը։— Հապա Սոնյան, մի տեսեք, օ՜հ, գեղեցկուհինե՜ր...

Վերջապես տասից քառորդ էր անցել, երբ Ռոստովները կառք նստեցին ու մեկնեցին։ Բայց նրանք դեռ պիտի գնային Տավրիկյան այգի։

Պերոնսկայան արդեն պատրաստ էր։ Չնայած նրա պառավությանն ու տգեղությանը, նրա մոտ էլ կատարվել էր նույնը, ինչ-որ Ռոստովների տանը, թեև ոչ այնպիսի փութկոտությամբ (նրա համար դա սովորական բան էր), բայց նրա պառավ, տգեղ մարմինը նույնպես օծված, լվացված, սնգուրված էր, նա նույնպես խնամքով լվացել էր ականջների ետևը և նույնպես էլ, ինչպես Ռոստովների տանը, պառավ նաժիշտը զմայլվում էր իր տիրուհու արդուզարդով, երբ նա դեղնագույն զգեստով, անվանագիրը կրծքին, հյուրասրահ մտավ։ Պերոնսկայան գովեց Ռոստովների զարդարանքը։

Ռոստովները գովեցին նրա ճաշակն ու արդուզարդը և, սանրվածքին ու զգեստին խնամքով պահելով, ժամը տասնումեկին կառեթ նստեցին ու գնացին։

XV

Նատաշան այդ օրն առավոտից սկսած ոչ մի ազատ րոպե չէր ունեցել, որ կարողանար մտածել, թե իրեն ի՞նչ է սպասում։

Խոնավ, ցուրտ օդում, օրորվող կառքի նեղվածքի ու կիսամութի մեջ Նատաշան առաջին անգամ կենդանի կերպով պատկերացրեց այն, ինչ սպասում էր իրեն այնտեղ՝ պարահանդեսի լուսավորված դահլիճներում.— երաժշտություն, ծաղիկներ, պար, թագավորը և Պետերբուրգի ամբողջ փայլուն երիտասարդությունը։ Այն, ինչ սպասում էր Նատաշային, այնքան գեղեցիկ էր, որ նա նույնիսկ չէր հավատում, թե այդ բոլորը կլինի, որովհետև այդ ամենը բնավ չէր ներդաշնակում կառքի նեղվածքի, մթության ու ցրտի տպավորության հետ։ Իրեն սպասող ամեն բան Նատաշան հասկացավ միայն այն ժամանակ, երբ շքամուտքի կարմիր մահուդի վրայով անցնելով, մտավ նախասենյակ, մուշտակը հանեց և Սոնյայի հետ միասին մոր առջևից անցավ ծաղիկների արանքով, լուսավորված սանդուղքով։ Այդ ժամանակ միայն նա հիշեց, թե պարահանդեսում ինչպես պետք է պահի իրեն,

ուստի և նա աշխատեց ընդունել այն վեհաշուք ձևը, որ նրա անհրաժեշտ էր համարում մի աղջկա համար նման պարահանդեսում։ Բայց, իր բախտից, նա զգաց, որ աչքերը շլանում են. նա պարզ ոչինչ չէր տեսնում, զարկերակը մի րոպեի մեջ հարյուր անգամ խփեց, և արյունն սկսեց բախել սրտին։ Նա այլևս չէր կարող ընդունել այն ձևը, որը նրան կդարձներ ծիծաղելի. նա գնում էր նվաղուն սրտով և ամեն կերպ աշխատում էր իր այլայլումը թաքցնել։ Դա հենց այն ձևն էր, որ ամենից ավելի էր սազում նրան։ Նրանց առջևից ու ետևից, նույնպես կամաց խոսակցելով և նույնպես պարահանդեսային զգեստով, հյուրեր էին ներս մտնում։ Սանդուղքների երկարությամբ դրված հայելիներն իրենց մեջ անդրադարձնում էին սպիտակ, երկնագույն, վարդագույն զգեստներով կանանց, որոնց հոլանի ձեռներն ու պարանոցները զարդարված էին գոհարներով ու մարգարիտներով։

Նատաշան նայեց հայելուն և նրա անդրադարձման մեջ չկարողացավ իրեն տարբերել մյուսներից։ Ամեն ինչ խառնվել էր մի շքեղ թափորի մեջ։ Առաջին դահլիճը մտնելիս — ձայների, քայլերի, ողջույնների համաչափ շշունջը խլացրեց Նատաշային. լույսն ու փայլը նրան ավելի էին շլացնում։ Տանտերն ու տանտիրուհին, որ արդեն կես ժամի չափ մուտքի դռների մոտ կանգնած, ներս մտնողներին ողջունում էին միևնույն խոսքերով «Charmé de vous voir»[1], նույնպես էլ դիմավորեցին Ռոստովներին՝ Պերոնսկայայի հետ միասին։

Սպիտակ զգեստներով, սև մազերի մեջ միատեսակ վարդերով երկու աղջիկն էլ միատեսակ ողջունեցին տանտերերին, բայց տանտիրուհու աչքն ակամայից ավելի երկար կանգ առավ բարալիկ Նատաշայի վրա, ու նրան նայելով, առանձնապես սիրալիր ժպտաց միայն Նատաշային։ Տանտիրուհին նրան նայելով, գուցե հիշեց իր աղջիկ ժամանակվա անդարձ, ոսկի օրերը և իր առաջին պարահանդեսը։ Տանտերը նույնպես նայեց Նատաշային և հարցրեց կոմսին, թե ո՞րն է իր աղջիկը։

— Charmante![2]— ասավ նա իր մատների ծայրերը համբուրելով։

[1] Զմայլված եմ ձեզ տեսնելով։

[2] Հմայիչ է։

Դահլիճում կանգնած և մուտքի դռան մոտ խմբված հյուրերն սպասում էին թագավորին։ Այդ խմբի մեջ կոմսուհին տեղ էր բռնել առաջին շարքերում։ Նատաշան լսում ու զգում էր որ մի քանի ձայներ հարցնում էին իր մասին և մի քանի աչք նայում էր իրեն։ Նա զգաց, որ ինքը դուր եկավ նրանց, որոնք ուշադրություն դարձրին իր վրա, ու այդ բանը փոքրինչ հանգստացրեց նրան։

«Կան այստեղ և մեզ նմանները և մեզնից վատերը», մտածեց նա։

Պերոնսկայան կոմսուհուն մեկ-մեկ թվում էր պարահանդեսում եղած նշանավոր մարդկանց։

— Սա ահա՛ հոլանդական դեսպանն է, տեսնում եք, այն ճերմակ մարդը, — ասում էր Պերոնսկայան, ցույց տալով արծաթի պես սպիտակ, առատ գանգուր մազերով մի ծերունու, որ շրջապատված էր տիկիններով, որոնց ինչ-որ բանով ստիպում էր ծիծաղել։

— Ահավասիկ և նա, Պետերբուրգի թագուհին, կոմսուհի Բեզուխովան, — ասավ նա ցույց տալով ներս մտնող էլեգանտին։

— Ինչ լավն է։ Մարիա Անտոնովնայից պակաս չէ. նայեցեք, նրա ետևից ինչպես են քաշ գալիս թե՛ ջահելները, թե՛ ահելները։ Թե՛ լավն է և թե՛ խելոք... Ասում են, թագաժառանգը... խենթանում է նրա համար։ Իսկ այս երկուսն ահա, թեև լավը չեն, բայց ավելի են շրջապատված։

Նա ցույց տվեց դահլիճի միջով, մի շատ տգեղ աղջկա հետ անցնող մի տիկնոջ։

— Սա միլիոնատեր-հարսնացու է, — ասավ Պերոնսկայան։ — Ահավասիկ և փեսացուները։

— Սա Բեզուխովայի եղբայրն է՝ Անատոլ Կուրագինը, — ասավ նա, ցույց տալով հեծելազորի մի գեղեցիկ սպայի, որ անցավ իրենց մոտով, — գլուխը բարձր բռնած և կանանց գլխի վրայով ուր-որ նայելով։ — Ի՞նչ լավն է։ Այնպես չէ՞։ Ասում են սրան ամուսնացնում են այս հարուստ աղջկա հետ։ Ձեր կուզենն էլ՝ Դրուբեցկոյը, նույնպես շատ է պտույտ գալիս նրա շուրջը։ Ասում են միլիոններ ունի։ — Ինչպես չէ, դա ֆրանսական դեսպանն է, — պատասխանեց նա կոմսուհուն, որը Կոլենկուրի համար հարցնում էր, թե դա ո՞վ է։ — Նայեցեք, կարծես թե մի ինչ-որ թագավոր լինի։ Բայց այնուամենայնիվ դուրեկան են այդ ֆրանսացիները։ Հասարակության մեջ դրանցից ավելի հաճելի մարդիկ չկան։ Ահա և՛ նա։ Ոչ, էլի ամենից լավը մեր Մարիա Անտոնովնան է։ Եվ որքա՛ն էլ պարզ է հագնված։ Հիանալի՞ է։ Իսկ այդ հաստ ակնոցավորը՝ համաշխարհային ֆարմասոնն է, — ասավ Պերոնսկայան Բեզուխովին ցույց տալով։ Մի դրան համեմատեցեք կնոջ հետ. կարծես բանջարանոցային խրտվիլակ լինի։

Պիեռը քայլում էր իր հաստ մարմինը ճոճելով, հասարակությունը երկու մասի բաժանելով, աջ ու ձախ գլուխ տալով, այնպես անփույթ ու բարեհոգի, կարծես շուկայի ամբոխի միջով էր անցնում։ Նա հասարակությունը ճեղքում էր, ըստ երևույթին մեկին որոնելով։

Նատաշան ուրախությամբ նայում էր Պիեռի ծանր թեմքին, այդ խրտվիլակին, ինչպես անվանեց նրան Պերոնսկայան, և գիտեր, որ Պիեռը հասարակության մեջ իրենց է որոնում, հատկապես իրեն։ Պիեռը նրան խոստացել էր գալ պարահանդես և ծանոթացնել կավալերների հետ։

Բայց դեռ նրանց չհասած, Բեզուխովը կանգ առավ մի ոչ բարձրահասակ, շատ գեղեցիկ սևահեր մարդու մոտ, որ սպիտակ հագած, լուսամուտի մոտ կանգնած խոսում էր մի ինչ-որ բարձրահասակ, կուրծքը աստղերով ու ժապավեններով զարդարուն մարդու հետ։ Նատաշան իսկույն ճանաչեց սպիտակ մունդիրով ոչ բարձրահասակ երիտասարդին. դա Բալկոնսկին էր, որ Նատաշային թվաց երիտասարդացած, զվարթացած ու գեղեցկացած։

— Ահա մի ծանոթ էլ, մայրիկ. Բալկոնսկին, տեսնո՞ւմ եք, — ասավ Նատաշան, ցույց տալով իշխան Անդրեյին։ — Հիշո՞ւմ եք, մի անգամ նա գիշերեց մեզ մոտ՝ Օտրադնոյում։

— Դուք նրան ծանո՞թ եք, — ասավ Պերոնսկայան։ — Տանել չեմ կարող։ Il fait à présent la pluie et le beau temps[1]։ Եվ այնքա՞ն հպարտ է, որ ասել չի լինի։ Հորն է քաշել։ Սպերանսկու հետ իրար գտել են. ինչ-որ նախագծեր են կազմում։ Մի տեսեք, կանանց հետ ի՞նչպես է վարվում։ Այն կինը նրա

[1] Այժմ նրանից է կախված անձրևային կամ պայծառ եղանակը (ֆրանսիական առած է, որ նշանակում է, թե նա հաջողություն ունի)։

հետ խոսում է, իսկ նա երեսը շրջեց — ասավ Պերոնսկայան, ցույց տալով Իշխան Անդրեյին։— Ես նրան դաս կտայի, եթե ինձ հետ այդպես վարվեր, ինչպես վարվում է այդ կանանց հետ։

XVI

Հանկարծ ամեն ինչ շարժվեց. հասարակության միջով մի շշունջ անցավ. բազմությունն առաջ շարժվեց, կրկին բաժանվեցին և այդ բաժանված երկու շարքերի միջով, երաժշտության նվագի տակ ներս մտավ թագավորը։ Նրան հետևում էին տանտերն ու տանտիրուհին։ Թագավորը առաջ էր գալիս աջ ու ձախ գլուխ տալով, կարծես աշխատում էր շուտով ազատվել հանդիպումի այդ առաջին վայրկյանից։ Երաժշտությունը նվագում էր ինքնագոհը, որն այն ժամանակ հայտնի էր թագավորի վրա հեղինակած խոսքերով։ Այդ երգն ասվում էր. «Ալեքսանդր, Եկիպատա, դուք հիացնում եք մեզ...» խոսքերով։ Թագավորն անցավ հյուրասրահ, իսկ հասարակությունը հավաքվեց դռների մոտ. մի քանի անձնավորություն՝ այլափոխված դեմքերով շտապ անցան այնտեղ ու դուրս եկան։ Հասարակությունը կրկին ետ քաշվեց հյուրասրահի դռներից, ուր երևաց թագավորը՝ տանտիրուհու հետ խոսակցելով։ Մի երիտասարդ՝ շփոթված տեսքով դիմեց կանանց, խնդրելով մի կողմ քաշվել։ Մի քանի տիկիններ, որոնց դեմքն արտահայտում էր աշխարհում ընդունված բոլոր կանոնների մոռացումը, իրենց տուալետը փչացնելով, սեղմվում էին դեպի առաջ։ Տղամարդիկ մոտեցան կանանց և սկսեցին լեհական պարի զույգեր կազմել։

Բոլորը ճանապարհ տվին, և թագավորը, ժպտալով և առանց որևէ տակտ պահպանելու, տանտիրուհու ձեռը բռնած, դուրս եկավ հյուրասրահից։ Նրանց հետևեցին տանտերը՝ Մ. Ա. Նարիշկինայի հետ, ապա անցան դեսպանները, մինիստրները, զանազան գեներալներ, որոնց անունները անդադար տպիս էր Պերոնսկայան։ Կանանց մեծ մասն արդեն կավալերներ ունեին և մասնակցում էին կամ պատրաստվում էին մասնակցել լեհական պարին։ Նատաշան զգում էր, որ ինքը մոր ու Սոնյայի հետ մնացել է կանանց փոքրամասնության

մեջ, որ քաշվել-խմբվել էր պատի մոտ և դեռ պարի հրավեր չէր ստացել։ Նատաշան կանգնել էր և, բարակ ձեռները կախ գցած և հազիվ ձևավորված ու հավասար բարձրացող կրծքում շունչը պահած,— շողշողուն ու վախեցած աչքերով նայում էր իր առջևը. նրա դեմքի արտահայտությունից երևում էր, որ նա պատրաստ է թե՛ ամենամեծ խնդության, թե՛ մեծագույն վշտի։ Նրան չէին հետաքրքրում ո՛չ թագավորը, ո՛չ էլ այն բոլոր նշանավոր մարդիկ, որոնց ցույց էր տալիս Պերոնսկայան,— նրան զբաղեցնում էր միայն մի միտք. «Մի՞թե ինձ ոչ ոք չի մոտենալու, մի՞թե ես չեմ պարելու առաջին զույգերի հետ, մի՞թե ինձ չպետք է նկատեն բոլոր այս տղամարդիկ, որ հիմա, թվում է թե չեն էլ տեսնում ինձ, իսկ եթե ինձ նայում են, նայում են այնպիսի արտահայտությամբ, որ կարծես ասում են. ա՜, սա նա չէ, ուրեմն և շարժե նայել։ Ո՛չ այդ չի կարող լինել,— մտածեց Նատաշան,— նրանք պետք է իմանան, թե որքա՛ն ես պարել եմ ուզում, որքա՛ն լավ եմ պարում և որքա՛ն գոհ կմնան, եթե հետս պարեն»։

Լեհականի (որ բավական երկար շարունակվեց) հնչյուններն արդեն սկսել էին տխուր հնչել,— իբրև հիշողություն Նատաշայի ականջներում։ Նա ուզում էր լաց լինել։ Պերոնսկայան հեռու էր քաշվել նրանցից։ Կոմսը դահլիճի մյուս ծայրումն էր. կոմսուհին, Սոնյան և նա մնացել էին մենակ այդ խորթ հասարակության մեջ, ինչպես անտառում, չհետաքրքրքրելով ու պետք չգալով ոչ ոքի։ Իշխան Անդրեյը մի ինչ-որ կնոջ հետ անցավ նրանց կողքով, ըստ երևույթին, չճանաչելով նրանց։ Գեղեցիկ Անատոլը ժպտալով ինչ-որ բան էր ասում մի կնոջ, որին առաջնորդում էր. նա Նատաշայի երեսին նայեց այնպիսի հայացքով, որով նայում են միայն պատին։ Բորիսը երկու անգամ անցավ նրանց առջևից, և երկու անգամ էլ երեսը շրջեց։ Բերգն ու կինը, որ չէին պարում, մոտեցան նրանց։

Նատաշային վիրավորական թվաց ընտանեկան այդ մերձեցումն այստեղ՝ պարահանդեսում. կարծես ընտանեկան խոսակցության համար ուրիշ տեղ չկար, բացի պարահանդեսից։ Նա ոչ լսում էր, ոչ էլ նայում Վերային, որ ինչ-որ բան էր պատմում իր կանաչ զգեստի մասին։

Վերջապես թագավորը կանգ առավ իր վերջին պարը-

կերուհու կողքին (նա պարեց երեքի հետ) և երաժշտությունը լռեց. մտահոգ ադյուտանտը վազեց դեպի Ռոստովները և խնդրեց նրանց դեռ էլի մի կողմ քաշվել, թեև նրանք կանգնած էին պատի մոտ, և վերնահարկից լսվեցին վալսի պարզ, զգույշ ու դրավիչ-չափավոր հնչյունները։ Թագավորը ժպտերես նայեց դահլիճին։ Անցավ մի րոպե, ոչ ոք դեռ չէր սկսում։ Կարգադրիչ ադյուտանտը մոտեցավ կոմսուհի Բեզուխովային և հրավիրեց։ Կոմսուհին ժպտալով բարձրացրեց ձեռը և, առանց ադյուտանտին նայելու, դրավ նրա ուսին։ Կարգադրիչ ադյուտանտը, իր գործին հմուտ, — վստահ, հանդարտ ու համաչափորեն, ամուր գրկելով իր պարընկերուհուն՝ ըսկզբում սահուն քայլերով, շրջանի մի ծայրից նետվեց պարի մեջ. դահլիճի անկյունում նա բռնեց պարընկերուհու ձախ ձեռը, շրջեց այն, և ապա երաժշտության հետևհետե արագացած հնչյունների տակ լսվում էին միայն ադյուտանտի արագ ու թեթև ոտների խթանների համաչափ շխկոցները և, շրջադարձի յուրաքանչյուր երեք տակտից հետո, կարծես բռնկվելով, ծածանվում էր նրա պարընկերուհու թավշյա զգեստը։ Նատաշան նայում էր նրանց ու քիչ էր մնում լաց լինի, որ վալսի այդ առաջին տուրը ինքը չի պարում։

Իշխան Անդրեյն իր դնդապետական սպիտակ մունդիրով (հեծելազորի համար ընդունված ձևի,) գուլպաներով ու կոշիկներով, զվարթ և ուրախ դեմքով կանգնած էր պարաշրջանի առաջին շարքերում, Ռոստովներից ոչ հեռու։ Բարոն Ֆիրհոֆը նրա հետ խոսում էր Պետական խորհրդի վաղը կայանալիք նիստի մասին։ Իշխան Անդրեյը, իբրև Սպերանսկու մոտիկ մարդ և օրենսդիր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցողներից մեկը, կարող էր ճիշտ տեղեկություններ տալ վաղվա նիստի մասին, որի առթիվ զանազան լուրեր էին պտտվում։ Բայց իշխան Անդրեյը Ֆիրհոֆի ասածները չէր լսում, և նայում էր մերթ թագավորին, մերթ պարելու պատրաստվող կավալերներին, որոնք չէին վստահում պարաշրջան մտնել։

Իշխան Անդրեյը դիտում էր թագավորի ներկայությունից ճնշվող այդ կավալերներին ու այն կանանց, որոնք հալ ու մաշ էին լինում հրավիրված լինելու ցանկությունից։

Պիեռը մոտեցավ իշխան Անդրեյին և նրա ձեռը բռնեց։

— Դուք միշտ պարում եք. այստեղ է իմ protégée[1] երիտասարդ Ռոստովան, նրան հրավիրեցեք, — ասավ նա։

— Ո՞ւր է, — հարցրեց Բալկոնսկին։ — Ներողություն, — ասավ նա դառնալով բարոնին, — այս խոսակցությունը մենք մի ուրիշ տեղ կավարտենք, իսկ պարահանդեսում պետք է պարել։ Նա առաջ գնաց դեպի այն ուղղությամբ, որ ցույց տվեց Պիեռը։ Իշխան Անդրեյի աչքովն ընկավ Նատաշայի հուսահատ, նվաղուն դեմքը։ Նա իսկույն ճանաչեց նրան, գուշակեց նրա ապրումները, հասկացավ, որ նա սկսնակ է, հիշեց նրա խոսակցությունը պատուհանի մոտ և դեմքի ուրախ արտահայտությամբ մոտեցավ կոմսուհի Ռոստովային։

— Թույլ տվեք ձեզ ծանոթացնել իմ աղջկա հետ, — ասավ կոմսուհին կարմրելով։

— Ես ծանոթ լինելու պատիվն ունեմ, եթե կոմսուհին հիշում է ինձ, — ասավ իշխան Անդրեյը վայելուչ ու խոնարհ ողջույնով, որ միանգամայն հակասում էր Պերոնսկայայի այն դիտողություններին, թե նա կոպիտ է, և Նատաշային մոտենալով, ձեռը տարավ, որ նրա իրանը գրկի, ավելի շուտ, քան պարի հրավերը կաներ։ Իշխան Անդրեյը վալսի մի տուր առաջարկեց։ Նատաշայի դեմքի նվաղուն արտահայտությունը, որ մոտ էր հուսահատության ու հիացումի, հանկարծ լուսավորվեց մանկական երջանիկ շնորհապարտ ժպիտով։

«Ես քեզ վաղուց էի սպասում», կարծես ասում էր այդ վախեցած ու երջանիկ աղջիկը՝ պատրաստ արցունքների տակից երևացող ժպիտով, դնելով իր ձեռը իշխան Անդրեյի ուսին։ Նրանք պարաշրջան կազմող զույգերից երկրորդն էին։ Իշխան Անդրեյը ժամանակի լավագույն պարողներից մեկն էր։ Նատաշան պարում էր հիանալի։ Նրա նուրբ ոտները՝ պարահանդեսային աթլասե կոշիկներով, արագ, թեթև և իրենից անկախ անում էին իրենց գործը, իսկ դեմքը փայլում էր երջանկության խնդումից։ Նրա հոլանի վիզն ու ձեռները նիհար էին ու տգեղ, էլենի ուսերի համեմատությամբ։ Նատաշայի ուսերը նիհար էին, կուրծքը չձևավորված, ձեռները բարակ. բայց էլենի վրա արդեն կարծես լաք էր մնացել այն հազարավոր հայացքներից, որ սահում էին նրա մարմնի վրայով, իսկ

[1] Հովանավորյալ։

Նատաշան թվում էր մի աղջիկ, որին առաջին անգամն են մերկացրել և որի համար մեծ ամոթ կլիներ, եթե նրան չհավատացնեին, թե դա շատ անհրաժեշտ է։

Իշխան Անդրեյը սիրում էր պարել և, ցանկանալով որքան կարելի է շուտ ազատվել քաղաքական ու լուրջ զրույցներից, որ բոլորն սկսում էին նրա հետ, ցանկանալով որքան կարելի է շուտ վանել իրեն անախորժ շփոթմունքը, որ առաջացել էր թագավորի ներկայությունից, նա գնաց պարելու և Նատաշային ընտրեց հենց այն պատճառով, որովհետև Պիեռը մատնացույց արավ նրան, և այն պատճառով, որովհետև գեղեցկատես կանանց մեջ Նատաշան առաջինն ընկավ նրա աչքով բայց նա հազիվ գրկել էր այդ բարակ. շարժուն իրանը և հազիվ Նատաշան շարժվեց ու ժպտաց նրան այնքան մոտիկ, որ նրա հրապուրանքն իսկույն արբեցրեց իշխան Անդրեյին. և իշխան Անդրեյն իրեն կենդանացած ու երիտասարդացած զգաց միայն ա՛յն ժամանակ, երբ շունչ քաշելով ու Նատաշային թողնելով, կանգ առավ ու սկսեց պարողներին նայել։

XVII

Իշխան Անդրեյից հետո Նատաշային մոտեցավ Բորիսն ու նրան հրավիրեց պարի, մոտեցավ և այն պարող ադյուտանտը, որն սկսեց պարահանդեսը, մոտեցան և ուրիշ երիտասարդներ. Նատաշան իր ավելորդ կավալերներին Սոնյային հանձնելով, ինքը երջանիկ սրտով և կարմրատակած դեմքով պարեց ամբողջ երեկո։ Նա չնկատեց և չտեսավ, թե պարահանդեսում ի՛նչն է ավելի գրավում բոլորին։ Նատաշան ոչ միայն չնկատեց, թե ինչպես թագավորը երկար ժամանակ խոսում էր ֆրանսական դեսպանի հետ, թե ինչպես նա առանձին ողորմածությամբ զրուցեց ինչ-որ մի տիկնոջ հետ, թե ինչպես պրինց այնինչն ու այնինչը ա՛յս արին կամ ա՛յն ասին, ինչպես էլենը մեծ հաջողություն ունեցավ ու արժանացավ այսինչի առանձին ուշադրության. նա չտեսավ նույնիսկ թագավորին և նկատեց միայն նրա գնալը, և այդ այն պատճառով միայն, որովհետև թագավորի գնալուց հետո պարահանդեսն ավելի աշխուժացավ։ Ընթրիքից առաջ տեղի ունեցավ ամենաուրախ կատիլոնը[1], որն իշխան Անդրեյը պարեց դարձյալ Նատաշայի հետ։ Իշխան Անդրեյը նրան հիշեցրեց Օտրադնոյի ծառուղում տեղի ունեցած առաջին հանդիպումը և այն, թե ինչպես Նատաշան չկարողացավ քնել լուսնկա գիշերը և թե ինչպես ինքը՝ իշխան Անդրեյը ակամա լսում էր նրան։ Նատաշան կարմրեց այդ հիշատակությունից և աշխատեց արդարանալ, կարծես թե մի ամոթալի բան կար այն զգացման մեջ, որի զեղումն ակամա լսել էր իշխան Անդրեյը։

Իշխան Անդրեյը, ինչպես բարձր շրջաններում մեծացած բոլոր մարդիկ, սիրում էր բարձր շրջաններում տեսնել այն, ինչ իր վրա չէր կրում այդ շրջանի ընդհանուր աշխարհիկ կնիքը։ Այդպիսին էր և Նատաշան իր զարմանքով, ուրախությունով ու ամաչկոտությամբ և նույնիսկ ֆրանսերենի մեջ արած սխալներով։ Իշխան Անդրեյն առանձին քնքշությամբ ու խնամքով էր վերաբերվում Նատաշային և խոսում նրա հետ։ Նատաշայի կողքին նստած, նրա հետ խոսելով ամենաչնչին ու հասարակ առարկաների մասին, իշխան Անդրեյը հիանում էր նրա աչքերի ու ժպտի խնդագին փայլից, որ կապ ունեին ո՛չ թե նրա ասած խոսքերի, այլ նրա ներքին երջանկության հետ։ Այն ժամանակ, երբ Նատաշային հրավիրում էին և նա ժպտագեմ ելնում ու պարում էր դահլիճում, իշխան Անդրեյը զմայլվում էր հատկապես նրա ամաչկոտ նազանքով։ Վերջապարի կիսին Նատաշան ֆիգուրան վերջացնելով, տակավին ծանր շնչելով, մոտենում էր իր տեղին։ Մի նոր կավալեր կրկին հրավիրեց նրան։ Նատաշան հոգնել էր ու հազիվ էր շունչ քաշում և, ըստ երևույթին, մտածում էր հրաժարվել, բայց կրկին ուրախ՝ ձեռը դրավ կավալերի ուսին ու ժպտաց իշխան Անդրեյին։

«Ուրախ կլինեի հանգստանալ և ձեզ մոտ նստել, հոգնել եմ, բայց տեսնում եք, ինչպես են հրավիրում ինձ, և ես ուրախ եմ սրա համար, ես երջանիկ եմ և սիրում եմ բոլորին. մենք ձեզ հետ միասին հասկանում ենք բոլորը», և էլի շատ ու շատ բաներ ասաց այդ ժպիտը։ Երբ կավալերը նրան թողեց, Նատաշան դահլիճի միջով վազեց, որ երկու կին հրավիրի ֆիգուրաներ կատարելու համար։

[1] Ուրախ վեց չապարերից մեկը։

«Եթե նա առաջ մոտենա իր կուզինին, ապա մյուս կնոջը, նա իմ կինը կլինի», բոլորովին անսպասելի կերպով ասավ ինքն իրեն իշխան Անդրեյը, Նատաշային նայելով։ Նատաշան նախ կուզինին մոտեցավ։

«Երբեմն ի՞նչ դատարկ բաներ են ծագում մարդու գլխում»,— մտածեց իշխան Անդրեյը. «բայց ճշմարիտն ասած՝ այդ աղջիկը այնքան գրավիչ է, այնքան յուրահատուկ, որ դեռ մի ամիս չպարած նա կամուսնանա... Դա այստեղ հազվադյուտ բան է», մտածեց նա, երբ Նատաշան կոբսաժի վրա թեքված վարդն ուղղելով, նստեց նրա կողքին։

Վերջապես վերջում ծեր կոմսը՝ կապույտ ֆրակը հագին մոտեցավ պարողներին։ Նա իր մոտ հրավիրեց իշխան Անդրեյին և աղջկան հարցրեց, թե ուրա՞խ է նա արդյոք։ Նատաշան չպատասխանեց և ժպտաց մի այնպիսի ժպիտով, որ կարծես հանդիմանանքով ասում էր, թե «ինչպե՞ս կարելի էր այդ մասին հարցնել»։

— Այնքան ուրախ եմ, ինչպես երբեք կյանքումս,— ասավ նա, և իշխան Անդրեյը նկատեց, թե ինչպես Նատաշայի նիհար ձեռներն արագ բարձրացան հորը գրկելու համար ու իսկույն էլ ցած իջան։ Նատաշան այնքան երջանիկ էր, ինչպես երբեք դեռ չէր եղել կյանքում։ Նա գտնվում էր երջանկության այն ամենաբարձր աստիճանի վրա, երբ մարդ դառնում է բոլորովին բարի ու լավ, և չի հավատում չարիքի, դժբախտության ու վշտի հնարավորության։

Պիեռն առաջին անգամ այդ պարահանդեսում իրեն վիրավորված զգաց այն դիրքից, որ ուներ կինը բարձր շրջաններում։ Նա մոայլ էր ու ցրված։ Նրա ճակատի վրա կար մի լայն կնճիռ, և նա լուսամուտի մոտ կանգնած, նայում էր ակնոցի միջով ու ոչ ոքի չէր տեսնում։

Նատաշան, ընթրիքի գնալու ժամանակ, անցավ նրա մոտով։

Պիեռի մոայլ, դժբախտ դեմքը նրան զարմացրեց։ Նա կանգ առավ նրա դիմաց։ Նատաշան ուզում էր օգնել նրան, տալ նրան իր երջանկության ավելցուկը։

— Ի՞նչ ուրախալի է, կոմս,— ասավ նա,— այնպես չէ՞։

Պիեռը ցրված ժպտաց, ըստ երևույթին, չհասկանալով թե ինչ են ասում իրեն։

— Այո, շատ ուրախ եմ,— ասավ նա։

«Ինչպես կարող են սրանք դժգոհ լինել որևէ բանից», մտածեց Նատաշան, «մանավանդ մի այսպիսի լավ մարդ, ինչպիսին այս Բեզուխովն է»։ Նատաշայի աչքում պարահանդեսում եղած բոլոր մարդիկ միատեսակ բարի էին, սիրելի, ըստքանչելի ու միմյանց սիրող. մեկը մյուսին չէր կարող վիրավորել, ուստի և բոլորը պետք է որ երջանիկ լինեին։

XVIII

Հետևյալ օրը իշխան Անդրեյը հիշեց երեկվա պարահանդեսը, բայց նրա մտքերը երկար կանգ չառան դրա վրա։ «Այո, շատ փայլուն պարահանդես էր։ Եվ հետո... Հա՛, Ռոստովան շատ լավն է։ Նրա մեջ մի ինչ-որ թարմ, առանձնահատուկ, ոչ Պետերբուրգյան բան կա, որ նրան տարբերում է»։ Ահա այն ամենը, ինչ մտածեց նա երեկվա պարահանդեսի մասին, և թեյ խմելով, նստեց աշխատելու։

Բայց հոգնածությունից թե անքնությունից (օրը վատ էր զբաղմունքի համար, և իշխան Անդրեյը ոչինչ չկարողացավ անել) նա ինքը շարունակ քննադատում էր իր աշխատանքը, ինչպես այդ հաճախ էր պատահում նրան, և ուրախացավ, երբ լսեց, որ մեկն եկավ։

Եկողը Բիցկին էր, որ ծառայում էր զանազան հանձնաժողովներում, լինում էր Պետերբուրգի բոլոր ընկերությունների մեջ. նա մոլի երկրպագուն էր նոր գաղափարների ու Սպերանսկու և միաժամանակ Պետերբուրգի հոգածու լրատուն՝ մեկն այն մարդկանցից, որոնք ուղղությունն ընտրում են, ինչպես հագուստը ըստ մոդայի, բայց որոնք դրա համար էլ թվում են ուղղության ամենաջերմ կողմնակիցներ։ Նա մտահոգ դեմքով, հազիվ գլխարկը հանելով, վազեց իշխան Անդրեյի մոտ և իսկույն սկսեց խոսել։ Նա հենց նոր էր իմացել Պետական խորհրդի այս առավոտվա թագավորի կողմից բացած նիստի մանրամասնությունները, ու հիացմունքով պատմում էր այդ մասին։ Թագավորի ճառն անսովոր մի ճառ էր։ Դա այն ճառերից մեկն էր, որ արտասա-

նում են միայն սահմանադրական միապետները։ «Թագավորն ուղղակի ասել է, որ խորհուրդը և սենատը պետական դասային հաստատություններ են։ Նա ասել է, որ վարչաձևը պետք է հիմք ունենա ոչ թե կամայականությունը, այլ հաստատ սկզբունքներ։ Թագավորն ասել է, որ ֆինանսները պետք է բարենորոգվեն և նրանց հաշվետվությունները՝ լինեն հրապարակային», պատմում էր Բիցկին, որոշ խոսքեր շեշտելով և աչքերը նշանակալից կերպով չռելով։

— Այո, այս դեպքը մի դարաշրջան, մի մեծ դարաշրջան է կազմելու մեր պատմության մեջ, — եզրափակեց նա։

Իշխան Անդրեյը լսեց Պետական խորհրդի բացման պատմությունը, մի բացում, որին նա սպասում էր մեծ անհամբերությամբ և վերագրում էր նրան մեծ կարևորություն, և զարմանում էր, որ այժմ, երբ այդ դեպքը կատարվել էր, ոչ միայն չի հուզում իրեն, այլև ավելի քան շնչին է երևում նրան։ Բիցկու խանդավառ պատմությունը նա լսում էր հանդարտ քրմծիծաղով։ Եվ հանկարծ մի չատ հասարակ միտք եկավ նրա գլուխը. «Իմ և Բիցկու ի՛նչ գործն է, մենք ի՛նչ գործ ունենք, թե թագավորին ի՛նչ է հաճելի եղել ասել խորհրդում։ Մի՞թե այդ բոլորը կարող է ավելի բարելավել իմ վիճակը և ավելի երջանիկ դարձնել ինձ»։

Եվ այս պարզ դատողությունը հանկարծ ի չիք դարձրեց կստարվող բարենորոգումների նախկին բովանդակ հետաքրքրությունն իշխան Անդրեյի համար։ Այդ օրն իշխան Անդրեյը պետք է ճաշեր Սպերանսկու մոտ «en petit comité»[1], ինչպես հայտնել էր նրան տանտերը՝ ճաշի հրավիրելիս։ Այդ ճաշը, որ կայանալու էր այն մարդու ընտանեկան և ընկերական շրջանում, որով նա այնպես հիանում էր առաջ, շատ էր հետաքրքրում իշխան Անդրեյին, մանավանդ որ մինչ այդ նա Սպերանսկուն չէր տեսել իր տնային միջավայրում, բայց այժմ նա ճաշի գնալու ցանկություն չուներ։

Սակայն նշանակած ժամին արդեն իշխան Անդրեյը մոտավ Սպերանսկու սեփական փոքրիկ տունը, որ գտնվում էր Տավրիկյան այգու մոտ։ Փոքրիկ տան՝ պարկետի հատակ ունեցող սեղանատանը, որն աչքի էր ընկնում արտասովոր

[1] Նեղ շրջանում։

մաքրությամբ (որ հիշեցնում էր վանական մաքրություն), իշխան Անդրեյը, որ փոքր-ինչ ուշացել էր, տեսավ այդ petit comité-ն, դեռ ժամը հինգից հավաքված։ Դրանք Սպերանսկու մտերիմ ծանոթներն էին։ Ոչ մի կին չկար, բացի Սպերանսկու փոքրիկ աղջկանից (որն ուներ հոր նման երկարուկ դեմք) և նրա դաստիարակչուհուց։ Հյուրերն էին՝ Ժերվեն, Մագնիցկին ու Ստոլիպինը։ Դեռ նախասենյակում իշխան Անդրեյը լսեց բարձր ձայներ ու հնչեղ պարզ ծիծաղ, մի ծիծաղ, որով ծիծաղում են միայն բեմի վրա։ Մեկը՝ Սպերանսկու ձայնի նման ձայնով քրքջում էր. «քա՛հ... քա՛հ... քա՛հ...»։ Իշխան Անդրեյը Սպերանսկու ծիծաղը երբեք չէր լսել, և պետական մարդու այդ հնչեղ, նուրբ ծիծաղը տարօրինակ կերպով զարմացրեց նրան։

Իշխան Անդրեյը սեղանատուն մտավ։ Բոլորը կանգնած էին լուսամուտների արանքում՝ ակոատի փոքրիկ սեղանի շուրջը։ Սպերանսկին՝ աստղը կրծքին, մոխրագույն ֆրակով, ըստ երևույթին, դեռ նույն սպիտակ ժիլետով ու հատ սպիտակ փողկապով, որով նա ներկա էր եղել Պետական խորհրդի հռչակավոր նիստին, — ուրախադեմ կանգնած էր սեղանի մոտ։ Նրան շրջապատել էին հյուրերը։ Մագնիցկին, դիմելով Միխայիլ Միխայլովիչին, անեկդոտ էր պատմում. Սպերանսկին լսում էր, նախապես ծիծաղելով այն բանի վրա, ինչ ասելու էր Մագնիցկին։ Այն միջոցին, երբ իշխան Անդրեյը սենյակ մտավ, Մագնիցկու խոսքերը կրկին խլացան ծիծաղով։ Ստոլիպինը, հաց ու պանիր ծամելով, բարձր խոսում էր իր թավ ձայնով. հանդարտ ծիծաղում շշվացնում էր Ժերվենը, և մեղմ ու որոշ ծիծաղում էր Սպերանսկին։

Սպերանսկին, ծիծաղը բերանին, իշխան Անդրեյին մեկնեց իր սպիտակ, քնքուշ ձեռը։

— Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս, իշխան, — ասավ նա։ — Մի րոպե, — դիմեց նա Մագնիցկուն, ընդհատելով նրա պատմությունը, — մենք պայմանավորվել ենք, որ այսօրվա ճաշը՝ ուրախության ճաշ է, և գործի մասին ոչ մի խոսք չպիտի լինի։ — Եվ նա կրկին դարձավ պատմողներին ու կրկին ծիծաղեց։

Իշխան Անդրեյը զարմանքով և հիասթափության վշտով լսում էր նրա ծիծաղը և նայում ծիծաղող Սպերանսկուն։ Իշխան Անդրեյին թվում էր, որ դա Սպերանսկին չէր, այլ մի

ուրիշ մարդ։ Այն բոլորը, ինչ իշխան Անդրեյին թվում էր խորհրդավոր ու գրավիչ Սպերանսկու մեջ, այդ ամենը հանկարծ դարձավ պարզ ու ոչ գրավիչ։

Խոսակցությունը մի ակնթարթ անգամ չէր դադարում սեղանի շուրջը և կազմված էր կարծես զավեշտական անեկդոտների ժողովածուից։ Մագնիցկին դեռ չէր վերջացրել իր պատմությունը, երբ մի ուրիշը պատրաստակամություն հայտնեց պատմելու մի այլ բան, որ ավելի ծիծաղաշարժ էր։ Անեկդոտները մեծ մասամբ վերաբերում էին եթե ոչ ծառայողական կյանքին, այլ ծառայող անձանց։ Թվում էր, թե այդ հասարակության մեջ վերջնականապես արմատացած է այն միտքը, որ այդ անձինք չնչին մարդիկ են, որ միակ վերաբերմունքը դեպի նրանք կարող է լինել միայն բարյացակամ-կոմիկական։ Սպերանսկին պատմեց, թե ինչպես խորհրդի այսօրվա նիստում մի խուլ բարձրաստիճան անձի հարցրին, թե ի՞նչ կարծիքի է ինքը, նա պատասխանեց, որ ինքը նույն կարծիքի է։ Ժերվեն պատմեց վերաքննչական մի ամբողջ գործ, որն աչքի էր ընկնում բոլոր գործող անձերի անմտությամբ։ Ստոլիպինը, կակազելով, միջամտեց խոսակցության և սկսեց տաքացած խոսել իրերի նախկին դրությունը ի չար գործ դնելու մասին, սպասնալով խոսակցությանը լուրջ բնույթ տալ։ Մագնիցկին սկսեց ծիծաղել Ստոլիպինի տաքանալու վրա, Ժերվեն մի հանաք մեջ գցեց և խոսակցությունը նորից ընդունեց նախկին ուրախ ընթացքը։

Հետո երևույթին, Սպերանսկին, աշխատանքներից հետո, սկսում էր հանգստանալ և ուրախանալ ընկերական շրջանում, և հյուրերը, նրա ցանկությունը հասկանալով, աշխատում էին նրան ուրախացնել և իրենք էլ ուրախանալ։ Բայց այդ ուրախությունն իշխան Անդրեյին թվում էր ծանր ու անուրախ։ Սպերանսկու ձայնի նուրբ հնչյունները անախորժ էին թվում նրան, և նրա չդադարող ծիծաղը իր կեղծ շեշտով, չգիտես ինչո՞ւ, վիրավորում էր իշխան Անդրեյի զգացմունքը։ Իշխան Անդրեյն ինքը չէր ծիծաղում և վախենում էր, թե մի գուցե, ծանր բեռ լինի այդ հասարակության համար։ Բայց ոչ ոք չընկատեց նրա՝ ընդհանուր տրամադրության անհամապատասխան լինելը։ Թվում էր, թե բոլորն էլ շատ ուրախ էին։

Նա մի քանի անգամ ցանկացավ խոսակցությանը միջամտել, բայց ամեն անգամ էլ նրա խոսքը դեն էր շպրտվում, ինչպես խցանը ջրից, ուստի և նա չկարողացավ հանաքներ անել նրանց հետ միասին։

Ոչինչ վատ կամ անտեղի բան չկար այն բանում, ինչ ասում էին նրանք. ամեն ինչ սուր էր, խելացի և կարող էր ծիծաղելի լինել, բայց մի ինչ-որ բան, որ կազմում է ուրախության աղը ոչ միայն չկար, այլ նրանք չգիտեին էլ, թե դա լինում է։

Ճաշից հետո Սպերանսկու աղջիկն իր դաստիարակչուհու հետ վեր կացան սեղանից։ Սպերանսկին իր սպիտակ ձեռով փաղաքշեց աղջկան ու համբուրեց նրան։ Իշխան Անդրեյին այդ բանն էլ անբնական թվաց։

Տղամարդիկ, ըստ անգլիական սովորության, մնացին սեղանի մոտ՝ պորտվեյն խմելու։ Սկսված խոսակցության կեսին, որ վերաբերում էր Նապոլեոնի սպանական արշավանքին, որոնց հավանություն տալով, բոլորն էլ միատեսակ կարծիքի էին,— իշխան Անդրեյն սկսեց նրանց հակաճառել։ Սպերանսկին ժպտաց և, ըստ երևույթին, ցանկանալով խոսակցության ընթացքը փոխել, պատմեց մի անեկդոտ, որ ոչ մի կապ չուներ խոսակցության հետ։ Մի քանի ակնթարթ բոլորը լռեցին։

Նստելով սեղանի մոտ, Սպերանսկին խցեց գինու շիշը և «այժմ լավ գինին կոշիկներով է ման գալիս» ասելով, տվեց այն ծառային ու վեր կացավ։ Բոլորը վեր կացան և նույնպես ավելի խոսելով, անցան հյուրասրահ։ Այնտեղ Սպերանսկուն տվին երկու ծրար, որ բերել էր սուրհանդակը։ Նա ծրարները վերցրեց և մտավ առանձնասենյակը։ Հենց որ նա դուրս եկավ, ընդհանուր ուրախությունը դադարեց և հյուրերն ըսկըսեցին լրջորեն ու հանդարտ խոսակցել միմյանց հետ։

— Դե՛, հիմա արտասանությո՞ւն,— ասավ Սպերանսկին առանձնասենյակից դուրս գալով։— Զարմանալի տաղանդ է,— դիմեց նա իշխան Անդրեյին։ Մագնիցկին իսկույն պատշաճ դիրք ընդունեց և սկսեց արտասանել ֆրանսական ծիծաղաշարժ ոտանավորներ, որ հեղինակել էր ինքը Պետերբուրգի մի քանի անձերի վրա։ Ոտանավորների արտասանությունը մի քանի անգամ ընդհատվեց ծափահարություններով։ Արտասանությունից հետո իշխան Անդրեյը մոտեցավ Սպերանսկուն՝ հրաժեշտ տալու։

— Ո՞ւր այդպես վաղ, — ասավ Սպերանսկին։

— Խոստացել եմ երեկույթի գնալ...

Նրանք լռեցին։ Իշխան Անդրեյը մոտից նայեց այդ հայ-լանման աչքերին, որ օտար աչքի թույլ չէին տալիս մոտենալ Իրենց, և նրան ծիծաղելի թվաց, թե ինչպես ինքը կարող էր որևէ բան սպասել Սպերանսկուց ու իր ամբողջ գործունեությունից, որ կապված էր նրա հետ, և ինչպես ինքը կարևորություն էր տվել այն բանին, ինչ արել էր Սպերանսկին։ Այդ չափած-ձևած անուրախ ծիծաղը երկար ժամանակ չէր դադարում հնչել իշխան Անդրեյի ականջներում, անգամ այն ժամանակ, երբ նա մեկնեց Սպերանսկու տնից։

Տուն վերադառնալով, իշխան Անդրեյն սկսեց վերհիշել այս չորս ամսվա ընթացքում Պետերբուրգում վարած իր կյանքը, իբրև մի ինչ-որ նոր բան։ Նա հիշում էր հոգացողությունները, որոնումները, զինվորական կանոնադրության իր նախագծի պատմությունը, մի նախագիծ, որն ընդունվեց ի գիտություն, և որի մասին աշխատում էին լռել միայն նրա համար, որովհետև մի ուրիշ, շատ վատ աշխատություն արդեն կազմված ու ներկայացված էր թագավորին. հիշեց կոմիտեի նիստերի մասին, որին անդամակցում էր Բերգը. հիշեց, թե ինչպես այդ նիստերում մանրազնին ու երկարորեն քննվում էր կոմիտեի նիստերի ընթացքին ու ձևերին վերաբերող ամենամի բան և թե ինչպես շտապ ու կարճ էին անցնում այն ամենը, ինչ վերաբերում էր գործի էությանը։ Նա հիշեց և իր օրենսդրական աշխատանքի մասին, այն մասին, թե ինչպես ինքը հոգածությամբ ռուսերենի էր թարգմանում հռոմեական ու ֆրանսական օրենքների ժողովածուի հոդվածները, և այդ նրան անախորժ թվաց։ Ապա նա կենդանի պատկերացրեց Բոգուչարովոն, իր զբաղմունքները գյուղում, իր ճամփորդությունը դեպի Ռյազան, հիշեց գյուղացիներին, տանուտեր Դրոնին, և դրանց կցելով ըստ պարագրաֆների դասավորված անձանց իրավունքները, նա զարմացավ, թե ինչպես կարող էր ինքը այդքան երկար ժամանակ զբաղվել մի այդպիսի պարապ գործով։

XIX

Հետևյալ օրը իշխան Անդրեյը այցելեց մի քանի տներ, ուր դեռ չէր եղել. դրանց թվում այցելեց և Ռոստովներին, որոնց հետ նա իր ծանոթությունը վերսկսեց վերջին պարահանդեսում։ Բացի քաղաքավարության կանոնները կատարելուց, որոնց համաձայն նա պարտավոր էր լինել Ռոստովների մոտ, իշխան Անդրեյը ցանկանում էր տեսնել այդ տունը և նրանց յուրահատուկ, աշխույժ աղջկան, որ հաճելի հիշողություն էր թողել նրա սրտում։

Առաջին դիմավորողներից մեկն եղավ Նատաշան։ Նա տնային կապույտ զգեստով էր, որով նա իշխան Անդրեյին թվաց ավելի լավ, քան պարահանդեսային զգեստով։ Նատաշան և Ռոստովների ամբողջ ընտանիքը իշխան Անդրեյին ընդունեցին իբրև հին բարեկամի՝ պարզ ու սրտաբաց։ Ամբողջ ընտանիքը, որին իշխան Անդրեյը վերաբերվում էր քննադատաբար, այժմ նրան թվաց՝ սքանչելի, պարզ ու բարի մարդկանցից կազմված։ Մեծ կոմսի հյուրասիրությունն ու բարեհոգությունը, որ առանձնապես հաճելի զարմանք էին պատճառել Պետերբուրգում, այնպես ազդեցին, որ իշխան Անդրեյը չկարողացավ ճաշից հրաժարվել։ «Այո, սրանք բարի, լավ մարդիկ են», մտածում էր Բալկոնսկին. «պարզ է, որ սրանք մազաչափ անգամ չեն գնահատում այն գանձը, որ ունեն հանձին Նատաշայի. բայց այս բարի մարդիկ կազմում են մի լավ ֆոն, որի վրա ավելի է աչքի ընկնում այդ գերազանց բանաստեղծական, կենսալից ու սքանչելի աղջիկը»։

Իշխան Անդրեյը հանձին Նատաշայի տեսնում էր իրեն միանգամայն օտար առանձնահատուկ մի աշխարհ, որ լի է իրեն անհայտ ուրախություններով, այն օտար աշխարհը, որ նրան այն ժամանակ Օտրադնոյի ծառուղում և լուսնակ գիշերը պատուհանի մոտ այնպես հեգնում էր իրեն։ Այժմ այդ աշխարհը նրան այլևս չէր հեգնում, ու խորթ չէր նրան, և նա ինքը այդ աշխարհը մտնելով, այնտեղ նոր բավականություն էր գտնում իր համար։

Ճաշից հետո, Նատաշան, իշխան Անդրեյի խնդրանքով, մոտեցավ դաշնամուրին ու սկսեց երգել։ Իշխան Անդրեյը կանգնել էր լուսամուտի մոտ և կանանց հետ զրուցելով, լը-

սում էր նրան։ Նախադասության կիսին իշխան Անդրեյը լռեց և անսպասելի կերպով զգաց, որ արցունքները խեղդում են իր կոկորդը, մի բան, որ նա իրենից չէր սպասում։ Նա նայեց երգող Նատաշային և նրա հոգու մեջ կատարվեց մի ինչ-որ նոր ու երջանիկ բան։ Նա երջանիկ էր ու դրա հետ միասին տխուր։ Նա ոչ մի առիթ չուներ լաց լինելու, բայց պատրաստ էր լալ։ Ինչո՞ւ։ Նախկին սիրո համա՞ր։ Փոքրիկ իշխանուհո՞ւ համար։ Իր հիասթափությունների՞ համար... Ապագայի հույսերի համա՞ր... Այո և ոչ։ Այն գլխավոր բանի համար նա ցանկանում էր լալ, դա՝ հանկարծ պարզորոշ գիտակցված այն սոսկալի հակասությունն է, որ կար իր հոգում եղած մի ինչ-որ անսահմանորեն մեծ ու անորոշելի բանի և մի ինչ-որ նեղ ու մարմնական բանի միջև. այդ նեղն ու մարմնականը հանդիսանում էր ինքը և նույնիսկ Նատաշան։ Այդ հակասությունը և՛ տանջում, և՛ ուրախացնում էր նրան Նատաշայի երգի ժամանակ։

Նատաշան երգը վերջացնելուն պես մոտեցավ իշխան Անդրեյին ու հարցրեց, թե որքան իր ձայնը դուր է գալիս նրան։ Նա հարցրեց այդ ու շփոթվեց միայն այդ արդեն ասելուց հետո, հասկանալով, որ այդ չպետք է հարցներ։ Իշխան Անդրեյը նրան նայելով ժպտաց և ասավ, որ նրա երգը իրեն դուր է գալիս այնպես, ինչպես և այն բոլորը, ինչ նա է անում։

Իշխան Անդրեյը Ռոստովների տնից գնաց ուշ երեկոյան։ Նա պառկեց քնելու, բայց շուտով տեսավ, որ քնել չի կարողանում։ Նա մերթ մոմը վառելով, նստում էր անկողնու մեջ, մերթ ելնում, նորից պառկում, անքնությունից բնավ չնեղվելով,— մի այնպիսի խնդագին ու նոր բան կար նրա հոգում, որ նա կարծես հեղձուցիչ սենյակից դուրս էր եկել աստծու ազատ աշխարհը։ Նրա մտքովն էլ չէր անցնում, որ ինքը սիրահարված է Նատաշայի վրա. նա Նատաշայի մասին չէր մտածում. նա միայն երևակայում էր նրան, և այդ պատճառով իր ամբողջ կյանքը նրան ներկայանում էր նոր լույսի տակ։ «Ինչո՞ւ համար եմ շարշարվում այդ նեղ, փակ շրջանակում, երբ կյանքը, ամբողջ կյանքն իր բովանդակ ուրախություններով բաց է իմ առաջ», ասում էր նա ինքն իրեն։ Եվ երկար ժամանակից հետո՝ նա առաջին անգամ սկսեց երջանիկ ծրագիրներ կազմել ապագայի համար։ Նա ինքն իր մեջ վճռեց, թե

պետք է, որ ինքն զբաղվի որդու դաստիարակությամբ, մի դաստիարակ գտնելով ու որդուն նրան հանձնելով. հետո պետք է թողնել պաշտոնը և գնալ արտասահման, տեսնել Անգլիան, Շվեյցարիան, Իտալիան։ «Ես պետք է օգտվեմ իմ ազատությունից, քանի դեռ մեջս ուժ և երիտասարդություն եմ զգում», ասում էր նա ինքն իրեն։ «Պիեռն արդարացի էր, ասելով, որ երջանիկ լինելու համար պետք է հավատալ երջանկության հնարավորությանը, և ես այժմ հավատում եմ այդ բանին։ Թողնենք, որ մեռելները թաղեն իրենց մեռելներին, իսկ քանի կենդանի ես՝ պետք է ապրել ու երջանիկ լինել», մտածում էր նա։

XX

Մի առավոտ գնդապետ Ադոլֆ Բերգը, որին Պիեռը ճանաչում էր, ինչպես ճանաչում էր բոլորին Մոսկվայում ու Պետերբուրգում, մաքուր, նոր կարած մունդիրով, քունքերի՝ դեպ առաջ սանրած ու օծած մազերով, ինչպես կրում էր թագավոր Ալեքսանդր Պավլովիչը, եկավ Պիեռի մոտ։

— Ես հենց այժմ ձեր ամուսնու՝ կոմսուհու մոտ էի, և այնքան դժբախտ էի, որ իմ խնդիրը չկատարվեց, հույս ունեմ, որ ձեզ մոտ, կոմս, ես ավելի բախտ կունենամ,— ասավ նա ժպտալով։

— Ձեզ ի՞նչ է հարկավոր, գնդապետ։ Ես ձեր տրամադրության տակ եմ։

— Ես, կոմս, արդեն բոլորովին տեղավորվել եմ նոր բնակարանում,— հայտնեց Բերգը, ըստ երևույթին, իմանալով, որ այդ բանը չի կարող հաճելի չլինել,— ուստի և կամեցա մի փոքրիկ երեկույթ սարքել իմ և ամուսնուս ծանոթների համար։ (Նա ժպտաց ավելի դուրեկան)։ Ես կամենում էի խնդրել կոմսուհուն ու ձեզ պատիվ անել ինձ ու շնորհ բերել մեզ մոտ մի բաժակ թեյի և ընթրիքի։

Միայն կոմսուհի Էլենա Վասիլևնան իրեն համար ստորացուցիչ համարելով ինչ-որ Բերգերի հասարակությունը, անսրտություն ունեցավ հրաժարվելու այդ հրավերքից։ Բերգը պարզ բացատրեց, թե ինչո՛ւ ինքը ցանկանում է հավաքել իր մոտ մի փոքրիկ, բայց լավ հասարակություն, թե ինչո՛ւ դա

հաճելի կլինի, և թե ինչո՛ւ ինքը թղթախաղի և ուրիշ որևէ վատ բանի համար խնայում է դրամը, բայց լավ հասարակության համար պատրաստ է և ծախսեր անել։ Պիեռը չկարողացավ հրաժարվել ու խոստացավ գնալ։

— Միայն, կոմս, համարձակվում եմ խնդրել, որ չուշանաք. այսպես — ութից տասը րոպե պակաս. համարձակվում եմ խնդրել։ Մի պարտիա կկազմենք, կլինի և մեր գեներալը։ Նա դեպի ինձ շատ բարեհաճ է։ Կընթրենք, կոմս։ Ուրեմն, շնորհ բերեք։

Հակառակ ուշանալու իր սովորության, Պիեռն այդ օրը, փոխանակ ութ ժամից տասը րոպե պակաս, Բերգիեր մոտ եկավ ութին քառորդ պակաս։

Բերգերը պատրաստելով ամենը, ինչ հարկավոր էր երեկույթի համար, սպասում էին հյուրերին։

Նոր, մաքուր, լուսավոր և անդրիներով, պատկերներով ու նոր կարասիներով զարդարված կաբինետում նստած էր Բերգը կնոջ հետ։ Բերգը նոր, կոճկած մունդիրով նստել էր կնոջ կողքին և նրան բացատրում էր, թե միշտ կարելի է և պետք է ծանոթ լինել այն մարդկանց, որոնք քեզանից բարձր են, որովհետև միայն այդպիսի դեպքում հաճույք կա ծանոթության մեջ։ — Կարո՛ղ ես օրինակ վերցնել, մի որևէ բան խնդրել։ Եվ ահա՛ այսպես եմ ապրել իմ ստացած առաջին աստիճանից (Բերգն իր կյանքը հաշվում էր ոչ թե տարիներով, այլ բարձրագույն պարգևներով)։ Իմ ընկերները դեռ ոչինչ են, իսկ ես արդեն գնդի հրամանատարի թեկնածու եմ, և ձեր ամուսինը լինելու բախտն ունեմ։ (Նա վեր կացավ ու համբուրեց Վերայի ձեռը, ճամփին ուղղելով գորգի ծռված անկյունը)։ Եվ այս ամենը ես ինչով եմ ձեռք բերել։ Գլխավորապես ծանոթներ ընտրելու կարողությամբ։ Ինքնին հասկանալի է, որ հարկավոր է լինել առաքինի և ճշտապահ։

Բերգը ժպտաց, գիտակցելով իր գերազանցությունը կնոջ թուլության հանդեպ, և լռեց մտածելով, որ այնուամենայնիվ իր այդ լավ կինը մի թույլ էակ է, որ չի կարող հասնել այն ամենին, ինչ կազմում է տղամարդու արժանիքը — ein Mann zu sein[1]. Միաժամանակ ժպտաց և Վերան, գիտակցելով իր գերազանցությունը առաքինի ու լավ ամուսնու նկատմամբ, մի ամուսին, որը, ինչպես և բոլոր տղամարդիկ Վերայի հասկացողությամբ, այնուամենայնիվ սխալ էր հասկանում կյանքը։ Բերգը իր կնոջով դատելով, բոլոր կանանց համարում էր թույլ և հիմար։ Վերան էլ՝ միայն իր ամուսնով դատելով՝ և այդ դիտողությունն ընդհանրացնելով, կարծում էր, թե բոլոր տղամարդիկ միայն իրենց են խելոք համարում, այնինչ ոչինչ չեն հասկանում և հպարտ են ու ետամոլ։

Բերգը վեր կացավ և կնոջն զգուշությամբ գրկելով, որ չչարդի նրա ժանեկավոր թիկնոցը, որ թանկ էր առել, համբուրեց նրա շուրթերի մեջտեղը։

— Միայն մի բան կուզեի, որ շուտ երեխաներ չունենանք, — ասավ նա անգիտակցաբար, մտքի հոսանքին անձնատուր։

— Այո, — պատասխանեց Վերան, — ես այդ բոլորովին չեմ ցանկանում։ Պետք է հասարակության համար ապրել։

— Ճիշտ այսպիսի մի բան կար իշխանուհի Յուսուպովայի վրա, — ասաց Բերգը երջանիկ ու բարի ժպտալով ցույց տալով կնոջ թիկնոցը։

Հենց այդ ժամանակ հայտնեցին կոմս Բեզուխովի գալու մասին։ Ամուսիններն իրար նայեցին ինքնագոհ ժպիտով, յուրաքանչյուրն իրեն վերագրելով այդ այցելության պատիվը։

«Ահա թե ի՞նչ է նշանակում ծանոթություններ հաստատել», մտածեց Բերգը. «այ ի՛նչ է նշանակում մարդ իրեն պահել կարողանա»։

— Միայն, խնդրում եմ, երբ ես կզբաղվեմ հյուրերով, — ասավ Վերան, — դու ինձ չընդհատես, որովհետև ես գիտեմ, թե ինչով կարելի է զբաղեցնել յուրաքանչյուրին և ի՞նչ հասարակության մեջ ի՛նչ պետք է ասել։

Բերգը նույնպես ժպտաց։

— Չէ որ դա չի լինի. տղամարդկանց հետ երբեմն պիտի տղամարդկային խոսակցություն լինի, — ասավ նա։

Պիեռին ընդունեցին նոր հյուրասրահում, ուր դժվար էր մի տեղ նստել, առանց համաչափությունը, մաքրությունն ու կարգը խանգարելու, ուստի և հասկանալի էր ու ամենևին տարօրինակ չէր, որ Բերգը մեծահոգությամբ առաջարկեց

[1] Տղամարդ լինել։

խախտել բազկաթոռի կամ բազմոցի համակարգությունը թանկագին հյուրի համար և, ըստ երևույթին, ինքը դրա համար անորոշության մեջ տանջվելով, հարցի լուծումն առաջարկեց հյուրին։ Պիեռը համակարգությունը քանդեց մի աթոռ առաջ քաշելով, և Բերգն ու Վերան իսկույն ևեթ երեկույթն սկսեցին միմյանց ընդհատելով ու հյուրին զբաղեցնելով։

Վերան մտքում որոշեց, որ Պիեռին պետք է զբաղեցնել ֆրանսական դեսպանատան վերաբերյալ զրույցով, ուստի իսկույն ևեթ խոսակցություն սկսեց այդ մասին։ Բերգը գրտնելով, որ հարկավոր է և տղամարդկային խոսակցություն, կնոջն ընդհատեց և խոսք բաց արավ ավստրիական պատերազմի մասին և ընդհանուր խոսակցությունից ակամա անցավ անձնական խնդիրների, խոսեց այն առաջարկությունների մասին, որ արել էին իրեն ավստրիական կռվին մասնակցելու համար, և այն պատճառների մասին, թե ինչո՛ւ ինքը չէր ընդունել առաջարկը։ Չնայած որ խոսակցությունը շատ անհարթ էր և Վերան բարկացավ ամուսնու միջամտությունից, այնուամենայնիվ ամուսիններն զգում էին ուրախությամբ, որ թեև միայն մի հյուր էր եկել, երեկույթն սկսվեց շատ լավ և, ինչպես ջրի երկու կաթիլ, նման էր մյուս բոլոր երեկույթներին՝ իր զրույցներով, թեյով և վառ մոմերով։

Շուտով եկավ և Բորիսը, Բերգի հին ընկերը։ Նրա վերաբերմունքը դեպի Բերգն ու Վերան ուներ սեփական անձի դերազանցության ու հովանավորության շեշտ։ Բորիսից հետո եկավ մի տիկին՝ գնդապետի հետ, ապա ինքը գեներալը, հետո Ռոստովները, և երեկույթն արդեն միանգամայն նմանեց բոլոր երեկույթներին։ Բերգն ու Վերան չէին կարողանում զսպել իրենց ուրախ ժպիտը, տեսնելով հյուրասրահի այդ շարժումը, այդ անկապ խոսակցությունները, զգեստների շրշյունը և ողջույնների շշունջը։ Ամեն ինչ կար, ինչպես բոլոր երեկույթներում, նման էր մանավանդ գեներալը, որ գովեց բնակարանը, թոթվեց Բերգի ուսը և հայրական ինքնիշխանությամբ կարգադրեց փաստոնի սեղանը սարքել։ Գեներալը նստեց կոմս Իլյա Անդրեյիչի կողքին, իբրև մի մարդու, որը հյուրերից ամենանշանավորն էր՝ իրենից հետո։ Մերերը նստեցին ծերերի մոտ, երիտասարդները՝ երիտասարդների, տանտիրուհին թեյի սեղանի մոտ, որի վրա կային ճիշտ այն-

պիսի թխվածքներ արծաթե կողովի մեջ, ինչպիսին կար Պանինների տանը եղած երեկույթում, — մի խոսքով [illegible] բան ճիշտ այնպես էր, ինչպես ուրիշների տանը։

XXI

Պիեռն, իբրև պատվավոր հյուրերից մեկը, պետք է փաստոնի նստեր Իլյա Անդրեյիչի, գեներալի ու գնդապետի հետ։ Պիեռին վիճակվեց փաստոնի սեղանի շուրջը նստել հենց Նատաշայի դիմաց և նրան զարմացրեց պարահանդեսից հետո Նատաշայի մեջ տեղի ունեցած փոփոխությունը։ Նատաշան լուռ էր, և նա ոչ միայն այնպե՛ս լավ չէր, ինչպես պարահանդեսում, այլ վատ կլիներ, եթե չունենար այնպիսի հեզ ու անտարբեր վերաբերմունք դեպի ամեն բան։

«Ի՞նչ է պատահել սրան», մտածեց Պիեռը Նատաշային նայելով։ Նատաշան նստել էր քրոջ կողքին, թեյի սեղանի մոտ և դժկամությամբ ինչ-որ պատասխանում էր իրեն մոտ նստած Բորիսին, առանց նրան նայելու։ Հաջողությամբ խաղալով և հինգ ձեռք խփելով, հուրախություն իր խաղընկերոջ, Պիեռը՝ լսելով մեկի ողջույնի խոսքերն ու շահածը հավաքելու ժամանակ սենյակը մտնող ինչ-որ մեկի քայլերի ձայնը, կրկին նայեց Նատաշային։

«Ի՞նչ է պատահել սրան», է՛լ ավելի զարմացած ասավ նա ինքն իրեն։

Իշխան Անդրեյը դեմքի հոգածո-քնքուշ արտահայտությամբ կանգնել էր Նատաշայի առջև ու ինչ-որ բան էր ասում նրան։ Նատաշան գլուխը բարձրացնելով, կարմրատակած և, ըստ երևույթին, աշխատելով զսպել ընդհատվող շնչառությունը, նայում էր նրան։ Եվ նրա մեջ վառվում էր ներքին մի ինչ-որ, երբեմն մարած կրակի պայծառ լույս։ Նատաշան ամբողջովին վերափոխվել էր. նա այլևս տգեղ չէր, դարձյալ այնպես էր, ինչպես պարահանդեսում։

Իշխան Անդրեյը մոտեցավ Պիեռին, և Պիեռն իր բարեկամի դեմքին ևս նկատեց նոր, երիտասարդական արտահայտություն։

Պիեռը խաղի միջոցին մի քանի անգամ տեղը փոխեց, մերթ թիկունքը, մերթ երեսը դարձնելով դեպի Նատաշան, և

բոլոր վեց ոոքերի[1] ընթացքում էլ նա դիտում էր Նատաշային ու իր բարեկամին։

«Սրանց մեջ մի ինչ-որ լուրջ բան է կատարվում», մտածում էր Պիեռը և մի ուրախ, ու միաժամանակ մի դառն զգացում նրան ստիպում էր հուզվել ու մոռանալ իր վիշտը։

Վեց ոոքերից հետո գեներալը վեր կացավ, ասելով թե այդպես անհնար է խաղալ, և Պիեռն ազատություն ստացավ։ Նատաշան մի կողմ քաշված խոսում էր Սոնյայի ու Բորիսի հետ, իսկ Վերան նուրբ ժպիտով ինչ-որ բան էր ասում իշխան Անդրեյին։ Պիեռը մոտեցավ իր բարեկամին և հարցրեց, թե գաղտնիք չէ այն, ինչ խոսում են ու նստեց նրանց մոտ։ Վերան, նկատելով իշխան Անդրեյի ուշադրությունը դեպի Նատաշան, գտավ, որ երեկույթում, հենց ա՛յս երեկույթում, անհրաժեշտորեն հարկավոր է, որ զգացմունքների մասին նուրբ ակնարկներ լինեն, ուստի և հարմար ժամանակ ընտրելով, երբ իշխան Անդրեյը մենակ էր, խոսակցություն սկսեց ընդհանրապես զգացմունքների և իր քրոջ մասին։ Նա հարկավոր էր համարում մի այսպիսի խելացի (ինչպես նա համարում էր իշխան Անդրեյին) հյուրի մոտ գործադրել իր դիվանագիտական արվեստը։

Երբ Պիեռը մոտեցավ նրանց, նկատեց, որ Վերան ինքնագոհությամբ տարված էր զրույցով, իսկ իշխան Անդրեյը (ինչ նրան սակավ էր պատահում) շփոթված էր երևում։

— Դուք ինչ եք կարծում, իշխան,— նուրբ ժպիտով ասում էր Վերան։— Դուք իշխան, այնպես խորաթափանց եք և մարդկանց բնավորությունն իսկույն հասկանում եք։ Դուք ի՞նչ կարծիք ունեք Նատաշայի մասին, կար՞ող է նա արդյոք այնպես, ինչպես ուրիշ կանայք (Վերան նկատի ուներ իրեն) մի անգամ մեկին սիրելով, հավատարիմ մնալ նրան ընդմիշտ։ Ես դա համարում եմ իսկական սեր։ Դուք ի՞նչ եք կարծում, իշխան։

— Ես ձեր քրոջը շատ քիչ եմ ճանաչում,— պատասխանեց իշխան Անդրեյը հեգնական ժպիտով, որով կամենում էր իր շփոթմունքը թաքցնել,— որ կարողանամ մի այդպիսի

[1] Խաղի։

խնդիր լուծել. և հետո ես նկատել եմ, որքան կինն ավելի քիչ է դուր գալիս, նա այնքան ավելի հավատարիմ է լինում,— ավելացրեց նա ու նայեց Պիեռին, որ այդ ժամանակ մոտեցավ իրենց։

— Այո, իշխան, այդ ճիշտ է. մեր ժամանակ,— շարունակեց Վերան (մեր ժամանակ ասելով, ինչպես ընդհանրապես սիրում են ասել սահմանափակ մարդիկ, ենթադրելով թե իրենք գտել ու գնահատել են մեր ժամանակի առանձնահատկությունը և թե մարդկանց հատկությունները փոխվում են ժամանակի հետ),— մեր ժամանակ աղջիկն այնքան ազատություն ունի, որ le plaisir d'être courtisée[1] հաճախ նրա մեջ խլացնում է իսկական զգացմունքը։ Et Nathalie, il faut l'avouer, y est très sensible[2]։— Նորից Նատաշային վերադառնալը իշխան Անդրեյին ստիպեց դեմքն անախորժությամբ կնճռել. նա ուզում էր վեր կենալ, բայց Վերան շարունակեց ավելի նուրբ ժպիտով.

— Ես կարծում եմ՝ ոչ ոք այնքան սիրված չի եղել, որքան Նատաշան,— ասավ Վերան.— բայց երբեք, մինչև վերջերս էլ, ոչ ոք նրան կարգին դուր չի եկել։— Դուք լավ գիտեք, կոմս,— դիմեց նա Պիեռին,— նույնիսկ մեր սիրելի cousin Բորիսը, որը, մեր մեջ ասած, եղել է շատ և շատ dans le pays du tendre[3]..

Իշխան Անդրեյը, դեմքը խոժոռած, լուռ էր։

— Դուք չէ՞ որ մտերիմ եք Բորիսի հետ,— ասավ նրան Վերան։

— Այո, ես նրան ճանաչում եմ...

— Երևի նա ձեզ պատմած կլինի իր մանկական սերը դեպի Նատաշան։

— Իսկ մանկական սեր եղե՞լ է,— հանկարծ, անսպասելիորեն շառագունելով հարցրեց իշխան Անդրեյը։

— Այո։ Vous savez, entre cousin, cette intimité mé-

[1] Երկրպագուներ ունենալու բավականությունը։
[2] Եվ Նատաշային, պետք է խոստովանել այդ շատ դուր է գալիս։
[3] Գգվանքների աշխարհում։

ne quelquefois á l'amour. Le cousinage est un dangereux voisinage N'est ce pas?[1]

Ո՛ անկասկած,— ասավ իշխան Անդրեյը, և հանկարծ, անբնական կերպով աշխուժանալով, սկսեց Պիեռի հետ կատակել, թե ինչպես ինքը զգույշ պիտի լինի Մոսկվայի իր 50 տարեկան կուզինների վերաբերմամբ և այդ խոսակցության կիսին վերկացավ ու, Պիեռի թևը բռնելով, նրան մի կողմ տարավ։

— Ի՞նչ կա,— ասավ Պիեռը զարմանքով նայելով տարօրինակ կերպով ոգևորված բարեկամին, նկատելով այն հայացքը, որ նա մեր կենալիս գցեց Նատաշայի վրա։

— Ես կամենում եմ, ես կամենում եմ քեզ հետ խոսել,— ասաց իշխան Անդրեյը։ — Դու գիտես մեր կանացի ձեռնոցները։ (Նա ակնարկում էր մասոնական այն ձեռնոցների մասին, որ տրվում էին նոր ընտրված եղբորը սիրած կնոջը հանձնելու համար)։ Ես... Բայց ոչ, ես հետո կխոսեմ քեզ հետ...— Եվ տարօրինակ փայլն աչքերում, անհանգիստ շարժումներով իշխան Անդրեյը մոտեցավ Նատաշային ու նստեց նրա մոտ։ Պիեռը նկատեց, որ իշխան Անդրեյն ինչ-որ բան հարցրեց Նատաշայից, իսկ նա՝ բռնկելով, պատասխանում էր նրան։

Բայց այդ ժամանակ Բերգը մոտեցավ Պիեռին ու սկսեց համառորեն խնդրել նրան, որ նա մասնակցի գեներալի ու գլխավոր գեներալի վեճին, որը վերաբերում էր սպանական գործերին։

Բերգը գոհ էր ու երջանիկ։ Ուրախության ժպիտը նրա դեմքից չէր հեռանում։ Երեկույթը շատ հաջող էր և բոլորովին այնպիսին, ինչպես մյուս երեկույթները, որ նա տեսել էր։ Ամեն ինչ նման էր. թե՛ կանանց նուրբ զրույցները, թե՛ թշթախաղը, թե՛ թուղթ խաղացող ու ձայնը շարունակ բարձրացնող գեներալը, թե՛ ինքնաեռը, թե՛ թխվածքները. բայց մի բան դեռ պակաս էր. ա՛յն, ինչ նա տեսել էր ուրիշ երեկույթներում, որոնց ուզում էր ընդօրինակել, պակասում էր բարձր խոսակցություն տղամարդկանց միջև՝ վեճ մի որևէ կարևոր ու խելոք բանի մասին։ Այդ խոսակցությունն էլ սկսեց գեներալը, և Բերգը Պիեռին տարավ նրա մոտ։

[1] Գիտեք հորեղբոր որդու և հորեղբոր աղջկա միջև եղած մոտիկությունը երբեմն հացնում է սիրու։ Այնպիսի ազգակցությունը վտանգավոր հարևանություն է։ Այնպես չէ՞։

XXII

Հետևյալ օրը իշխան Անդրեյը գնաց Ռոստովներ, ի մոտ հաղորդելու, որովհետև կոմս Իլյա Անդրեյիչը հրավիրել էր, ուստի ղ օրն անցրեց նրանց մոտ։

Հանը բոլորն էլ զգում էին, թե իշխան Անդրեյն ո՛ւմ համար է եկել, և նա առանց թաքցնելու, ամբողջ օրն աշխատում էր Նատաշայի հետ լինել։ Ոչ միայն երկյուղած, սակայն երջանիկ ու խանդավառ Նատաշայի հոգում, այլև ամբողջ ընտանիքում վախ էր զգացվում մի ինչ-որ կարևոր ու լուրջ բանի հանդեպ, որ պետք է կատարվեր։ Կոմսուհին վշտոտ և լուրջ ու սառն աչքերով նայում էր իշխան Անդրեյին, երբ նա խոսում էր Նատաշայի հետ, և երկյուղածությամբ ու շինծու ձևերով որևէ տենչան խոսակցություն էր սկսում, երբ իշխան Անդրեյը նայում էր իրեն։ Սոնյան վախենում էր Նատաշայից հեռանալ, վախենում էր և նրան խանգարել, երբ նա իշխան Անդրեյի հետ էր լինում։ Նատաշան սպասումի երկյուղից գունատվում էր, երբ մի բոպե երես առ երես մնում էր նրա հետ։ Իշխան Անդրեյը նրան զարմացնում էր իր ամաչկոտությամբ։ Նատաշան զգում էր, որ նա իրեն մի բան ունի ասելու, բայց ինչ-որ չի կարողանում համարձակվել։

Երբ երեկոյան իշխան Անդրեյը գնաց, կոմսուհին մոտեցավ Նատաշային և շշնջաց.

— Հը՛, ի՞նչ եղավ։

— Մայրիկ, ի սեր աստծո. ինձ այժմ ոչինչ մի հարցնեք։ Այդ չի կարելի ասել,— ասավ Նատաշան։

Բայց չնայած դրան, Նատաշան այդ երեկո՝ մերթ հուզված, մերթ վախվորած, սառած աչքերով, երկար պառկած էր մնում մոր անկողնում։ Մերթ պատմում էր մորը, թե ինչպես նա գովեց իրեն, ինչպես ասավ՝ որ գնալու է արտասահման, ու թե ի՛նչպես հարցրեց, թե ո՞րտեղ պիտի ապրեն այս ամառ և թե ի՛նչպես հարցրել էր իրեն Բորիսի մասին։

— Բայց այդ տեսակ, այդ տեսակ բան... ինձ երբեք չի պատահել,— ասում էր նա։— Ես նրա մոտ վախ եմ զգում. միշտ վախ եմ զգում, դա ի՞նչ է նշանակում։ Նշանակում է, որ դա իսկական է, հը՞։ Մայրիկ, դուք քնած եք։

— Չէ, հոգիս, ես էլ եմ վախենում,— պատասխանեց մայրը։— Գնա՛։

— Միևնույն է, ես չեմ քնելու։ Ի՞նչ հիմարություն է — քնե՛։ Մայրիկ, մայրիկ, այդ տեսակ բան ինձ երբեք չի պատահել,— ասում էր նա զարմանքով ու վախով հանդեպ այն զգացմունքի, որ ապրում էր ինքը։— Եվ մենք կարո՞ղ էինք վայրկյան անգամ մտածե՛լ...

Նատաշային թվում էր, թե դեռ առաջին հանդիպումին, երբ ինքը տեսավ իշխան Անդրեյին Օտրադնոյում, սիրահարվեց նրա վրա։ Նրան կարծես վախեցնում էր այն տարօրինակ, անսպասելի երջանկությունը, որ Անդրեյը, որին ինքն ընտրեց դեռ այն ժամանակ (նա դրանում հաստատ հավատացած էր), այժմ նորից հանդիպում էր իրեն և ինչպես երևում էանտարբեր չէր դեպի ինքը։

«Եվ կարծես դիտմամբ այժմ, երբ մենք այստեղ ենք, պետք է գար Պետերբուրգ, և կարծես մենք էլ պետք է հանդիպեինք այդ պարահանդեսում։ Այս բոլորը բախտի բան է։ Պարզ է, որ սա իմ ճակատագիրն է, և ամեն բան տանում էր դեպի այդ։ Դեռ այն ժամանակ, նրան տեսնելուն պես, ես մի առանձին բան զգացի»։

— Հետո նա էլ ի՞նչ ասավ քեզ։ Դրանք ի՞նչ ոտանավորներ են։ Կարդա...— մտածկոտ ասավ մայրը, հարցնելով այն ոտանավորների մասին, որ իշխան Անդրեյը գրել էր Նատաշայի ալբոմում։

— Մայրիկ, դա հո ամոթ չի՞, որ նա այրի է։

— Հերիք է, Նատաշա։ Աղոթիր աստծուն։ Les mariages se font dans les cieux[1].

— Մայրիկ, որքա՜ն եմ սիրո՛ւմ ձեզ, ի՜նչ լավ եմ զգում ինձ,— բացականչեց Նատաշան, լաց լինելով երջանկության ու հուզմունքի արցունքներով և մորը գրկելով։

Այդ իսկ միջոցին իշխան Անդրեյը Պիեռի մոտ նստած պատմում էր նրան դեպի Նատաշան ունեցած իր սիրո և այն մասին, թե հաստատ որոշել է նրա հետ ամուսնանալ։

[1] Ամուսնությունները երկնքումն են կատարվում։

Այդ օրը Էլենա Վասիլևնայի մոտ ռաուտ կար, եկել էին ֆրանսական դեսպանը, պրինցը, որ վերջերս կոմսուհուն հաճախ այցելողներից մեկն էր դարձել, և ուրիշ շատ փայլուն կանայք ու տղամարդիկ։ Պիեռը ներքևումն էր, նա անցավ դահլիճներով և բոլոր հյուրերին զարմացրեց իր կենտրոնացած-ցրված ու մոայլ տեսքով։

Պիեռը պարահանդեսի օրից սկսած զգում էր, որ իր նիպոխոնդրիան կրկնվում է և հուսահատ ջանքեր էր անում նրա դեմ կռվելու։ Այն օրից, երբ պրինցը մտերմացավ կնոջ հետ, Պիեռն անսպասելի կերպով կամերներություն ստացավ և այդ օրվանից սկսեց անհարմարություն ու ամոթ զգալ մեծ հասարակության մեջ, և նրան հաճախակի այցելել սկսեցին նախկին մոայլ մտքերը՝ մարդկային կյանքի ունայնության մասին։ Միևնույն ժամանակ նկատելով իր հոգանավոր[illegible] Նատաշայի ու իշխան Անդրեյի միջև առաջացած զգացմունքը, նա իր դրությունը հակադրում էր բարեկամի դրությանն, և դրանով նրա մոայլ տրամադրությունն ավելի էր վատանում։ Նա հավասարապես աշխատում էր խուսափել միաժամանակ և՛ կնոջ, և՛ Նատաշայի, և՛ իշխան Անդրեյի մասին մտածելուց։ Նորից ամեն բան նրան չնչին էր թվում հավերժության համեմատությամբ, նորից առաջ էր գալիս հին, ծանոթ հարցը, թե «ինչո՞ւ համար»։ Եվ նա իրեն հարկադրում էր օր ու գիշեր զբաղվել մասոնական գործերով, հույս ունենալով այդպիսով վանել մոտեցող չար ոգուն։ Ժամը մոտ 12-ին Պիեռը կոմսուհու սենյակներից դուրս գալով, նստել էր վերին հարկում, ծխախոտի ծխով հագեցած ցածրիկ սենյակում, հնացած խալաթը հագին, սեղանի առջև և արտագրում էր շոտլանդական ակտերի բնագիրը, երբ մեկը մտավ նրա սենյակը։ Դա իշխան Անդրեյն էր։

— Ա՜, այդ դուք եք,— ասավ Պիեռը ցրված ու դժգոհ տեսքով։— Իսկ ես ահավասիկ աշխատում եմ,— ասավ նա տերերը ցույց տալով՝ կյանքի ձախողանքներից փրկվողի այնպիսի տեսքով, որով դժբախտ մարդիկ նայում են իրենց աշխատանքին։

Իշխան Անդրեյը նորոգ կյանքի փայլուն, խնդուն դեմքով կանգնեց Պիեռի առջև, և նրա վշտահար դեմքը չնկատելով, իր երջանկությամբ տարված, ժպտաց նրան։

— Գիտես, սիրելիս,— ասավ նա,— երեկ քեզ մի բան էի ուզում ասել և այժմ դրա համար եմ եկել։ Ես երբեք այդ տեսակ բան չեմ զգացել։ Ես սիրահարված եմ, բարեկամ։

Պիեռը հանկարծ ծանր հառաչեց ու իր ծանր մարմնով ընկավ բազմոցին՝ իշխան Անդրեյի կողքին։

— Նատաշա Ռոստովայի վրա, հա՞,— ասավ նա։

— Այո, այո, ուրիշ էլ ո՞ւմ։ Երբեք չէի հավատա, բայց այս զգացումը ինձնից ուժեղ է։ Երեկ ես տանջվում էի, տառապում, բայց այդ տանջանքն էլ ես ոչ մի բանի հետ չեմ փոխի աշխարհում։ Առաջ ես չեմ ապրել։ Ես միայն այժմ եմ ապրում, բայց առանց նրան էլ չեմ կարող ապրել։ Իսկ նա ինձ կսիրի՞ արդյոք... ես նրա համար ծեր եմ... Ինչո՞ւ չես խոսում։

— Ե՞ս, ե՞ս։ Ես ի՞նչ էի ասում ձեզ,— հանկարծ ասավ Պիեռը, տեղից ելնելով ու սենյակում քայլելով։— Ես միշտ էլ այդ ուղղությամբ մտածել եմ... Այդ աղջիկը մի այնպիսի գանձ է, այնպիսի... Դա հազվագյուտ աղջիկ է... Սիրելիս, ես ձեզ խնդրում եմ, դուք ձեր խելքին զոռ չտաք, չկասկածեք, ամուսնացեք, ամուսնացեք և ամուսնացեք... Եվ ես հավատացած եմ, որ ձեզնից երջանիկ մարդ չի լինի։

— Բայց նա։

— Նա ձեզ սիրում է։

— Դատարկ մի խոսք...— ասավ իշխան Անդրեյը ժպտալով ու Պիեռի աչքերին նայելով։

— Սիրում է, ես գիտեմ,— բարկացած գոչեց Պիեռը։

— Չէ, մի լսի՛ր,— ասավ Անդրեյը նրա ձեռը բռնելով։— Գիտե՞ս, թե ի՞նչ դրության մեջ եմ։ Ես ուզում եմ այդ ամենը մի որևէ մարդու պատմել։

— Դե, պատմեցեք, շատ ուրախ եմ,— ասավ Պիեռը, և նրա դեմքն իսկապես փոխվեց, կնճիռները հարթվեցին, և նա ուրախադեմ սկսեց լսել իշխան Անդրեյին։ Իշխան Անդրեյը բոլորովին այլ, նոր մարդ էր թվում։ Ո՞ւր էր նրա թախիծը, նրա ատելությունը դեպի կյանքը, նրա հիասթափվածությունը։ Պիեռը միակ մարդն էր, որի առաջ նա արտահայտվում էր ազատ, և նա արտահայտեց այն ամենը, ինչ կար իր սրտում։ Մերթ թեթև ու համարձակ ծրագիրներ էր կազմում նա երկրատեսակ ապագայի համար, ասում էր, որ ինքը չի կարող իր երջանկությունը զոհ բերել հոր քմահաճույքին, թե նա կհարկադրի հորը՝ տալ իր համաձայնությունը այդ ամուսնության համար և սիրել նրան, կամ ամեն բան կանի առանց հոր համաձայնության. մերթ էլ զարմանում էր որպես մի տարօրինակ, ստարոտի ու իրենից կախում չունեցող զգացմունքի հանդեպ, որ տիրել էր իրեն։

— Ես չէի հավատա այն մարդուն, որն ինձ ասեր, թե ես կարող եմ այսպես սիրել,— ասում էր իշխան Անդրեյը։— Սա բոլորովին այն զգացմունքը չէ, որ առաջ կար մեջս։ Այժմ ամբողջ աշխարհն ինձ համար բաժանված է երկու մասի. մեկը՝ նա և նրա հետ երջանկություն, հույսեր ու լույս. մյուս մասը՝ ամենը, ուր նա չկա, այնտեղ ամեն ինչ տխուր է ու մութ։

— Մութ և խավար,— կրկնեց Պիեռը,— այո՛, այո՛, ես այդ հասկանում եմ։

— Եվ ես չեմ կարող լույսը չսիրել. ես դրանում մեղավոր չեմ։ Ու ես շատ երջանիկ եմ։ Դու հասկանո՞ւմ ես ինձ։ Գիտեմ, որ դու ուրախ ես ինձ համար։

— Այո, այո,— հաստատեց Պիեռը խանդաղատագին ու թախծալի աչքերով իր բարեկամին նայելով։ Որքան նա պայծառ էր պատկերացնում իշխան Անդրեյի բախտը, այնքան մռայլ էր ներկայանում իր սեփականը։

XXIII

Ամուսնանալու համար հարկավոր էր հոր համաձայնությունը, և հենց դրա համար իշխան Անդրեյը մյուս օրը մեկնեց հոր մոտ։

Հայրն արտաքին հանգստությամբ, բայց ներքին զայրույթով ընդունեց որդու հաղորդածը։ Նա չէր կարողանում հասկանալ, որ մեկը կամենար իր կյանքը փոխել ու նրա մեջ նոր բան մտցնել, երբ կյանքը նրա համար վերջացել էր արդեն։ «Թողնեին գոնե ապրեի այնպես, ինչպես ինքս եմ ուզում, իսկ նրանից հետո անեին, ինչ ուզում են», ասում էր ծերունին ինքն իրեն։ Որդու մոտ սակայն նա բանեցրեց այն դիվանագիտությունը, որ գործադրում էր կարևոր դեպքերում։

Հանգիստ տոն ընդունելով, նա կշռադատեց ամբողջ գործը։ Նախ. այդ ամուսնությունը՝ տոհմի, հարստության ու

դերքի կողմից շատ էլ փայլուն չէր։ Երկրորդ՝ իշխան Անդրեյ առաջին երիտասարդության մեջ չէր և առողջությամբ թույլ էր (ծերունին առանձնապես հենվում էր այս բանի վրա), իսկ աղջիկը շատ էր ջահել։ Երրորդ՝ մեջտեղը կար Անդրեյի որդին, որին մեղք էր հանձնել մի փոքրիկ աղջկա։ Վերջապես, չորրորդ, ասավ հայրը, հեգնանքով որդուն նայելով. «Ես քեզ խնդրում եմ, այդ բանը մի տարով հետաձգիր, գնա արտասահման, բուժվիր, գտիր, ինչպես և դու ցանկանում ես, մի գերմանացի դաստիարակ՝ իշխան Նիկոլայի համար և հետո, եթե սերը, կիրքն ու համառությունը, ինչպես կուզես անվանիր, այնքան մեծ է մեջդ, այն ժամանակ ամուսնացիր։ Եվ սա իմ վերջին խոսքն է, իմացի՛ր, վերջի՛ն...», վերջացրեց իշխանն այնպիսի տոնով, որով ուզում էր ցույց տալ, թե ոչ մի բան չի կարող ստիպել իրեն իր որոշումը փոխելու։

Իշխան Անդրեյը պարզ տեսնում էր, որ ծերունին հույս ունի, թե իր ու իր ապագա հարսնացուի զգացմունքը չի կարող մի տարի տևել կամ թե չէ ինքը ծեր իշխանը կմեռնի մինչ այդ, ուստի և նա վճռեց հոր կամքը կատարել, առաջարկությունանել և հարսանիքը մի տարով հետաձգել։

Ռոստովների մոտ անցրած վերջին երեկոյից երեք շաբաթանց՝ իշխան Անդրեյը վերադարձավ Պետերբուրգ։

Մոր հետ բացատրվելու հետևյալ ամբողջ օրը Նատաշան սպասեց Բալկոնսկուն, բայց նա չեկավ։ Երկրորդ, երրորդ օրը նույնը։ Պիեռը նույնպես չեկավ, և Նատաշան չիմանալով, որ իշխան Անդրեյը գնացել է հոր մոտ, չէր կարողանում նրա բացակայությունն իրեն բացատրել։

Այսպես անցավ երեք շաբաթ։ Նատաշան ոչ մի տեղ չէր ուզում գնալ և ստվերի պես, պարապ ու տխուր շրջում էր սենյակներում, երեկոյան լալիս էր բոլորից ծածուկ ու երեկոներն այլևս չէր գալիս մոր մոտ։ Նա շարունակ բռնկվում էր ու ջղայնանում։ Նրան թվում էր, թե բոլորը գիտեն իր հիասթափության մասին և ծիծաղում են իր վրա ու խղճում իրեն։ Այս սնափառ վիշտը՝ ներքին վշտի հետ միասին՝ սաստկացնում էր նրա դժբախտությունը։

Մի անգամ նա եկավ կոմսուհու մոտ, ուզում էր ինչ-

որ բան ասել, բայց հանկարծ լաց եղավ։ Նրա արցունքները նման էին վիրավորված երեխայի արցունքների, որն ինքն էլ չգիտի, թե ինչու համար է պատժված։

Կոմսուհին սկսեց նրան հանգստացնել։ Նատաշան, որ սկզբում ուշադրությամբ լսում էր մորը, հանկարծ ընդհատեց նրան.

— Թողեք, մայրիկ, ես այդ մասին չեմ էլ մտածում, և չեմ էլ ուզում մտածել։ Մարդ էր, ուրեմն, եկավ մի քանի անգամ և այնուհետև դադարեց ու դադարեց...

Նրա ձայնը դողաց. քիչ էր մնում լաց լինի. բայց իսկույն շտկվեց ու հանգիստ շարունակեց.

— Եվ բոլորովին էլ չեմ ուզում մարդու գնալ։ Ես վախենում եմ նրանից. ես հիմա բոլորովին, բոլորովին հանգստացել եմ...

Այս խոսակցության հաջորդ օրը Նատաշան հագավ այն հին զգեստը, որը նրան հատկապես հիշելի էր առավոտներն այնքան ուրախություն պատճառելու համար, և հենց առավոտից սկսեց իր նախկին ապրելակերպը, որ պարահանդեսից հետո թողել էր։ Թեյ խմելուց հետո նա գնաց դահլիճ, որն առանձնապես սիրում էր նրա համար, որովհետև երգելու ժամանակ ձայնի ելևէջներն այնտեղ ավելի լավ էին հնչում, ու սկսեց երգել իր սոլֆեջիոները (երգեցողության վարժություն)։ Առաջին դասը վերջացնելուց հետո, նա կանգ առավ դահլիճի մեջտեղը և կրկնեց հատկապես իրեն դուր եկած երաժշտական մի կտոր։ Նա ուրախությամբ լսում էր այն (կարծես իր համար անսպասելի) զեղումը, որով այդ հնչյունները՝ հոսելով, լցնում էին դահլիճի դատարկությունն ու դանդաղորեն մարում, և այդ միջոցին հանկարծ մի ուրախություն եկավ նրա վրա։ «Էլի՞ ինչու համար այդ մասին շատ մտածել, այսպես էլ լավ է»,— ասավ նա ինքն իրեն և սկսեց դահլիճում ետ ու առաջ քայլել՝ հնչուն պարկետի վրա ոտները փոխելով՝ ո՛չ թե հասարակ քայլերով, այլ ամեն մի քայլին կոշիկների կրունկից (նա հագել էր նոր, սիրած կոշիկները) կոշիկի քթերի վրա բարձրանալով, և նույնպես ուրախ, ինչպես ձայնի հնչյունները, լսում էր կրունկի համաչափ դոփյունը և կոշիկների քթի ճռռոցը։ Հայելու մոտով անցնելիս, նա նայեց հայելուն. «Ահա և ես», կարծես ասում էր նրա դեմքի արտա-

հայտությունը, իր կերպարանքը տեսնելով. «Է՜հ, շատ լավ։ Ոչ ոք ինձ հարկավոր չի»։

Լաբեյն ուզում էր ներս մտնել, որ ինչ-որ բան կարդ-բերի դահլիճում, բայց Նատաշան նրան չթողեց և դուռը նրա երեսից կրկին ծածկելով, շարունակեց ճեմել։ Այդ առավոտ նա ներքից վերադարձավ ինքն իրեն սիրելու և իրենով հիանում իր սիրած վիճակին։ «Ի՜նչ հիանալի է այդ Նատաշան», ասում էր նա ինքն իրեն մի երրորդ մարդու՝ հավաքական տղամարդ անձնավորության խոսքերով. «Լա՜վն է, գեղեցիկ ձայն ունի, ջահել է, ոչ ոքին էլ չի խանգարում, թողեք միայն նրան հանգիստ»։ Բայց որքան էլ նրան հանգիստ էին թողնում, նա չէր կարողանում հանգիստ մնալ, և իսկույն զգաց այդ։

Շքամուտքի դուռը բացվեց. մեկը հարցրեց. «տ՞անն են սրյոքը», ու լսվեց մեկի քայլերի ձայնը։ Նատաշան հայելուն նայեց, բայց իրեն չտեսավ։ Նախասենյակից ձայներ էին լսվում։ Երբ նա իրեն տեսավ, նկատեց, որ դեմքը գունատ էր։ Լալողը նա էր։ Նատաշան այդ հաստատ գիտեր. թեև նրա ձայնը հազիվ լսեց փակ դռների ետևից։

Նատաշան՝ գունատ ու վախվորած, վազեց հյուրասրահ։

— Մայրիկ, Բալկոնսկին եկավ, — ասավ նա։ — Մայրիկ, դա սարսափելի է, անտանելի է։ Ես չեմ ուզում... տանջվել։ Ես ի՞նչ անեմ...

Կոմսուհին դեռ չէր պատասխանել նրան, երբ իշխան Անդրեյը՝ հուզված ու լուրջ դեմքով, ներս մտավ։ Նատաշային տեսնելուն պես, նրա դեմքը փայլեց։ Նա համբուրեց կոմսուհու և Նատաշայի ձեռը և նստեց բազմոցի մոտ։

— Վաղուց է արդեն մենք բախտ չենք ունեցել...— ուզում էր սկսել կոմսուհին, բայց իշխան Անդրեյը նրան ընդհատեց, պատասխանելով նրա հարցին և, ըստ երևույթին, շտապելով ասել այն, ինչ հարկավոր էր։

— Ես այսքան ժամանակ ձեզ մոտ չեկա, որովհետև հորս մոտ էի. ես պետք է նրա հետ խոսեի մի շատ կարևոր գործի մասին։ Ես միայն երեկ գիշեր վերադարձա, — ասավ նա Նատաշային նայելով։ — Ձեզ հետ խոսելիք ունեմ, կոմսուհի,— ավելացրեց նա վայրկենական լռությունից հետո։

Կոմսուհին, ծանր հառաչելով, աչքերը խոնարհեց։

— Ես պատրաստ եմ, — ասավ նա։

Նատաշան գիտեր, որ ինքը պետք է հեռանա, բայց չկարողացավ այդ անել. մի ինչ-որ բան պրկում էր նրա կոկորդը, և նա, առանց քաշվելու, ուղիղ, շոած աչքերով նայում էր իշխան Անդրեյին։

«Հիմա՞։ Այս րոպեի՞ն... ոչ, դա չի կարող լինել...», մտածում էր նա։

Իշխան Անդրեյը նորից նրան նայեց, և նրա այդ հայացքը Նատաշային համոզեց, որ ինքը չի սխալվում։ Այո, հիմա, այս րոպեին որոշվում էր իր բախտը։

— Գնա, Նատաշա, ես քեզ կկանչեմ, — ասավ կոմսուհին շշունջով։

Նատաշան երկյուղած, աղերսող աչքերով նայեց իշխան Անդրեյին, մորը ու դուրս եկավ։

— Ես, կոմսուհի, եկել եմ ձեր աղջկա ձեռը խնդրելու, — ասավ իշխան Անդրեյը։

Կոմսուհու դեմքը շառագունեց, բայց նա ոչինչ չասավ։

— Ձեր առաջարկությունը... — հանդարտ սկսեց կոմսուհին։ Իշխան Անդրեյն անխոս նրա աչքերին էր նայում։ — Ձեր առաջարկությունը... (կոմսուհին չփոթվեց) մեզ համար հաճելի է, և... ես ընդունում եմ ձեր առաջարկությունը, ես ուրախ եմ։ Ամուսինս էլ... հույս ունեմ, բայց դա միայն իրենից՝ Նատաշայից կախված կլինի։

— Ես նրան կասեմ այն ժամանակ, երբ ձեր համաձայնությունը կստանամ... դուք այդ տալի՞ս եք, — ասավ իշխան Անդրեյը։

— Այո, — ասավ կոմսուհին և ձեռը նրան մեկնելով, խորթության ու քնքշանքի խառն մի զգացումով նա իր շուրթերը հպեց իշխան Անդրեյի ճակատին, երբ իշխան Անդրեյը կռացավ նրա ձեռի վրա։ Նա ուզում էր որդու պես սիրել նրան, բայց զգաց, որ նա իր համար օտար և սարսափելի մարդ է։ — Ես վստահ եմ, որ ամուսինս համաձայն կլինի, — ասավ կոմսուհին, — բայց ձեր հայրը...

— Հայրս, որին հայտնեցի իմ մտադրությունը, համաձայնության անխախտ պայման է դրել, որ հարսանիքը մի տարուց շուտ չլինի։ Եվ ես ուզում էի այդ բանը ձեզ հայտնել, — ասավ իշխան Անդրեյը։

— Ճիշտ է, Նատաշան դեռ փահել է, բայց այդքան ո՞ւշ։

— Ուրիշ կերպ չէր կարող լինել, — հառաչելով ասավ իշխան Անդրեյը։

— Ես հիմա Նատաշային կուղարկեմ ձեզ մոտ, — ասավ կոմսուհին ու դուրս եկավ սենյակից։

— Տե՛ր, դո՛ւ ողորմաս, — կրկնում էր նա աղջկան որոնելով։

Սոնյան ասավ, որ Նատաշան ննջարանումն է։ Նատաշան նստել էր իր մահճակալին և գունատ դեմքով, ցամաք աչքերով նայում էր սրբապատկերին ու արագորեն խաչակնքում երեսը ինչ-որ շշնջալով։ Մորը տեսնելով, նա ցատկեց տեղից և նետվեց դեպի մայրը։

— Ի՞նչ է, մայրիկ, ի՞նչ։

— Գնա՛, գնա նրա մոտ։ Նա քո ձեռքն է խնդրում, — ասավ կոմսուհին սառը, ինչպես թվաց Նատաշային։ — Գնա՛, գնա, — կրկնեց մայրը՝ տխրության ու հանդիմանանքի շեշտով վազող աղջկա ետևից, և ծանր հառաչեց։

Նատաշան չիմացավ, թե ինքը ինչպես հյուրասրահ մտավ։ Դուռը բանալով և իշխան Անդրեյին տեսնելով՝ նա կանգ առավ։ «Մի՞թե այս օտար մարդն այժմ ինձ համար դարձավ ամեն ինչ», հարցրեց նա ինքն իրեն և իսկույն պատասխանեց. «Այո, ամեն ինչ. հիմա նա մեն-մենակ ինձ համար ամեն բանից թանկ է աշխարհում։ Իշխան Անդրեյն աչքերը խոնարհած մոտեցավ նրան։

— Ես ձեզ սիրեցի այն օրից, երբ ձեզ տեսա։ Կարող եմ արդյոք հուսալ...

Իշխան Անդրեյը նայեց Նատաշային և նրա դեմքին արտահայտվող բուն հուզմունքը զարմացրեց նրան։ Նատաշայի դեմքն ասում էր. «Էլ ինչո՞ւ հարցնել։ Ինչո՞ւ կասկածել մի բան, որ չի կարելի չիմանալ։ Էլ ի՞նչ խոսել, երբ խոսքերով չի կարելի արտահայտել այն, ի՞նչ զգում ես»։

Նատաշան մոտեցավ նրան ու կանգ առավ։ Իշխան Անդրեյը նրա ձեռը բռնեց ու համբուրեց։

— Սիրո՞ւմ եք արդյոք ինձ։

— Այո, այո, — կարծես դժգոհությամբ ասավ Նատաշան, մի քանի անգամ խորը հառաչեց ու հեկեկաց։

— Դա ինչի՞ համար է։ Ձեզ ի՞նչ պատահեց։

— Ա՜խ, ես այնպես երջանիկ եմ, — պատասխանեց նա

արցունքների միջից ժպտալով, թեքվեց դեպի Անդրեյը, մոտածեց մի վայրկյան, կարծես ինքն իրեն հարց տալով, թե այդ կարելի է արդյոք, ու համբուրեց նրան։

Իշխան Անդրեյը նրա ձեռները բռնած նայում էր նրա աչքերին ու իր սրտում չէր զգում նախկին սերը դեպի նա։ Նրա հոգում հանկարծ շրջվեց ինչ-որ բան. չկար նախկին ցանկությունն բանաստեղծական ու խորհրդավոր զմայլանքը, այլ կար խղճահարություն դեպի նրա կանացի ու մանկական թուլությունը, կար երկյուղ նրա հավատարմության ու անձնվիրության հանդեպ, կար ծանր և միաժամանակ ուրախ գիտակցությունն այն պարտքի, որն իրեն ընդմիշտ կապել էր նրա հետ։ Ներկա զգացմունքը, թեև այնպես պայծառ ու բանաստեղծական չէր, ինչպես նախկինը, բայց ավելի լուրջ էր և ավելի ուժեղ։

— Արդյոք maman ձեզ ասավ, որ այդ չի կարող մի տարուց շուտ լինել, — ասավ իշխան Անդրեյը, շարունակելով նայել նրա աչքերին։

«Մի՞թե այս ես եմ, այն երեխա-աղջիկը, (ամենքն այսպես էին ասում ինձ), — մտածեց Նատաշան, — և մի՞թե ես հիմա, այս բոպեից, ամուսին եմ, այս օտար, լավ, խելոք մարդուն հավասար, մի մարդ, որին հարգում է նույնիսկ հայրս։ Մի՞թե սա ճշմարիտ է, որ կյանքի հետ այսուհետև կատակ անել չի կարելի. ես հիմա արդեն մե՞ծ եմ, հիմա իմ ամեն մի գործի ու խոսքի համար պատասխանատվություն է ընկնելու վրաս։ Բայց նա ինչ հարցրեց ինձնից»։

— Ոչ, — պատասխանեց նա, բայց նա ինքն էլ չէր հասկանում, թե նա ինչ էր հարցրել։

— Ներեցեք ինձ, — ասավ իշխան Անդրեյը, — դուք դեռ շատ ջահել եք, իսկ ես արդեն շատ բան եմ տեսել կյանքում։ Ես անհանգիստ եմ ձեզ համար։ Դուք ձեզ չեք ճանաչում։

Նատաշան լսում էր կենտրոնացած ուշադրությամբ, աշխատելով հասկանալ նրա խոսքերի իմաստը, բայց չէր հասկանում։

— Որքան էլ ծանր լինի այդ տարին, որ հետաձգում է իմ երջանկությունը, — շարունակեց իշխան Անդրեյը, — բայց դուք այդ ժամանակամիջոցում ձեզ կփորձեք։ Ես ձեզ խնդրում եմ ինձ երջանկացնել մի տարուց հետո, իսկ մինչ այդ դուք

ազատ եք. մեր նշանադրությունը կմնա գաղտնի, և եթե դուք համոզվեք, որ ինձ չեք սիրում կամ կսիրեք...— ասավ իշխան Անդրեյն անբնական ժպիտով։

— Այդ ինչու՞ համար եք ասում,— ընդհատեց նրան Նատաշան։— Դուք գիտեք, որ հենց այն օրից, երբ առաջին անգամ Օտրադնոե եկաք, ես ձեզ սիրեցի,— ասավ նա, հաստատ հավատացած լինելով, որ ինքը ճշմարտություն ասավ։

— Մի տարվա մեջ դուք ձեզ կճանաչեք։

— Մի ամբողջ տարի՞,— հանկարծ ասավ Նատաշան, միայն այժմ հասկանալով, որ հարսանիքը հետաձգվում է մի տարով։— Բայց ինչո՞ւ մի տարով, ինչո՞ւ այդպես...— իշխան Անդրեյն սկսեց բացատրել հետաձգելու պատճառները։ Նատաշան նրան չէր լսում։

— Եվ ուրիշ կերպ չի կարելի՞,— հարցրեց Նատաշան։ Իշխան Անդրեյը ոչինչ չպատասխանեց, սակայն նրա դեմքին արտահայտվեց այդ վճիռը փոխելու անհնարինությունը։

— Դա սարսափելի է։ Չէ, դա սարսափելի է, սարսափելի,— ասավ հանկարծ Նատաշան ու նորից հեկեկաց։— Ես կմեռնեմ մի տարի սպասելով. դա անկարելի է. դա սարսափելի է։— Նա նայեց փեսացուի դեմքին ու այնտեղ նկատեց վարանման ու տարակուսանքի արտահայտություն։

— Ոչ, ոչ, ես ամեն ինչ կանեմ,— ասավ նա, լացը դադարեցնելով։— Ես այնպե՞ս երջանիկ եմ։

Հայրն ու մայրը մտան սենյակ և օրհնեցին փեսացուին ու հարսնացուին։

Այդ օրվանից իշխան Անդրեյն սկսեց այցելել Ռոստովներին իբրև փեսացու։

XXIV

Նշանադրություն չեղավ և ոչ ոքի էլ չհայտնվեց Բալկոնսկու և Նատաշայի նշանախոսության մասին. այդ բանը պահանջեց իշխան Անդրեյը։ Նա ասավ՝ քանի որ հետաձգելու պատճառն ինքն է, ուստի ինքն էլ պետք է կրի նրա ամբողջ ծանրությունը։ Նա ասում էր, որ ինքն իր խոսքով ընդմիշտ կապել է իրեն, բայց չէր ցանկանա Նատաշային էլ կապել, ուստի և նրան տալիս է լիակատար ազատություն։ Եթե Նատաշան մի կես տարի հետո զգա, որ իշխան Անդրեյին չի սիրում, նա իրավունք կունենա մերժելու։ Ինքնին պարզ է, որ ո՛չ ծնողները, ո՛չ էլ Նատաշան այդ մասին լսել չէին ուզում. բայց իշխան Անդրեյը պնդում էր իրենը։ Ամեն օր նա լինում էր Ռոստովների տանը, բայց Նատաշայի հետ վարվում էր ոչ իբրև փեսացու. Նատաշային ասում էր դուք և համբուրում էր միայն նրա ձեռը։ Իշխան Անդրեյի ու Նատաշայի միջև, առաջարկության օրից, հաստատվել էին, առաջվանից բոլորովին տարբեր, մտերմական պարզ հարաբերություններ։ Մինչև այժմ նրանք կարծես իրար չէին ճանաչել։ Երկուսն էլ սիրում էին հիշել, թե ինչպես էին նայում իրար, երբ դեռ բան չկար. այժմ նրանք իրենց զգում էին բոլորովին ուրիշ արարածներ, առաջ՝ ձևանում էին, այժմ՝ պարզ և անկեղծ էին։ Ընտանիքում սկզբում իշխան Անդրեյի հետ վարվելու մեջ զգացվում էր ճնշվածություն, անհարմարություն. նա թվում էր օտար աշխարհից եկած մի մարդ, և Նատաշան երկար ժամանակ տնեցիներին ընտելացնում էր իշխան Անդրեյին և ամենքին հպարտությամբ հավատացնում, թե նա միայն թվում է այդպես յուրահատուկ և թե նա՝ էլ այնպես մարդ է, ինչպես բոլոր մարդիկ, և թե ինքը Նատաշան նրանից չի վախենում ու թե ոչ ոք էլ չպետք է վախենա նրանից։ Մի քանի օրից հետո ընտանիքում ընտելացան նրան և, առանց քաշվելու սկսեցին նախկին կենցաղավարությունը, որին մասնակցում էր և իշխան Անդրեյը։ Նա կարողանում էր կոմսի հետ խոսել տնտեսության մասին, կոմսուհու և Նատաշայի հետ՝ զարդարանքի մասին, Սոնյայի հետ՝ ալբոմների ու ձեռագործ հինվածքների մասին։ Տնեցիք երբեմն իրար մեջ և իշխան Անդրեյի առաջ զարմանում էին, թե այդ ամենն ինչպես պատահեց և թե դրա նախանշաններն ակներև էին. թե՛ իշխան Անդրեյի Օտրադնոե գալը, թե՛ իրենց փոխադրվելը Պետերբուրգ, թե՛ Նատաշայի ու իշխան Անդրեյի միջև եղած նմանությունը, որ նկատել էր դայակն իշխան Անդրեյի առաջին այցելությանը. թե՛ 1805 թվին Անդրեյի ու Նիկոլայի միջև եղած ընդհարումը, և շատ ուրիշ նախանշաններ, որ պատահել էին և տնեցիները նկատել էին։

Տանը թագավորում էր այն բանաստեղծական տաղտուկն ու լռակեցությունը, որ միշտ հատուկ է փեսացուի ու հարս-

նացուի ներկայությանը։ Հաճախ, միասին նստած, բոլորը լռում էին, երբեմն վեր էին կենում ու հեռանում, իսկ փեսացուն ու հարսնացուն մենակ մնալով՝ նույնպես լռում էին։ Իրենց ապագայի մասին շատ քիչ էին խոսում։ Իշխան Անդրեյն ամաչում և վախենում էր խոսել այդ մասին. Նատաշան էլ զգում էր այդ, ինչպես և նրա բոլոր զգացումները, որ միշտ գուշակում էր։ Մի անգամ Նատաշան սկսեց հարց ու փորձ անել նրա որդու մասին։ Իշխան Անդրեյը կարմրեց,— մի բան որ նրան հաճախ էր պատահում այժմ և որն առանձնապես սիրում էր Նատաշան,— և ասավ, թե որդին իրենց հետ չպետք է ապրի։

— Ինչո՞ւ,— երկյուղած հարցրեց Նատաշան։

— Ես նրան պապից խլել չեմ կարող և հետո...

— Ի՞նչպես կսիրեի նրան,— ասավ Նատաշան իսկույն նրա միտքը գուշակելով.— ես գիտեմ, դուք ուզում եք, որ ձեզ ու ինձ մեղադրելու առիթներ չլինեն։

Մեր կոմսը երբեմն մատենում էր իշխան Անդրեյին, համբուրում նրան, խորհուրդներ էր հարցնում Պետյայի կրթության կամ Նիկոլայի ծառայության մասին։ Պառավ կոմսուհին, նրանց նայելով, հառաչում էր։ Սոնյան ամեն րոպե վախենում էր ավելորդ երևալուց ու միշտ աշխատում էր պատրվակներ գտնել նրանց մենակ թողնելու, երբ այդ նույնիսկ հարկավոր չէր լինում։ Երբ իշխան Անդրեյը խոսում էր (նա շատ լավ էր պատմում), Նատաշան նրան լսում էր հպարտությամբ, իսկ երբ ինքն էր խոսում՝ երկյուղով և ուրախությամբ նկատում էր, որ Անդրեյն ուշադիր ու քննական հայացքով իրեն է նայում։ Եվ Նատաշան տարակուսանքով հարցնում էր իրեն. «Սա իմ մեջ ի՞նչ է որոնում։ Իր հայացքով ինչ-որ բան է փնտրում։ Ինչ կլինի հանկարծ, եթե նա իմ մեջ չգտնի այն, ինչ որոնում է իր հայացքով»։ Երբեմն Նատաշան մտնում էր իրեն հատուկ խնդմոլիկ տրամադրության մեջ, և այդ ժամանակ առանձնապես սիրում էր լսել ու դիտել, թե ինչպես էր ծիծաղում իշխան Անդրեյը։ Իշխան Անդրեյը սակավ էր ծիծաղում, բայց երբ ծիծաղում էր՝ ամբողջովին անձնատուր էր լինում իր ծիծաղին. և ամեն անգամ այդպիսի ծիծաղից հետո, Նատաշան իրեն ավելի մոտ էր զգում նրան։ Նատաշան միանգամայն երջանիկ կհամարեր իրեն, եթե չլիներ առաջիկա անջատման

երկյուղը, որովհետև այդ մտքից գունատվում ու դողում էր և՛ իշխան Անդրեյը։

Պետերբուրգից մեկնելու նախօրեին իշխան Անդրեյը Պիեռի հետ եկավ Ռոստովների մոտ։ Պարահանդեսի օրից սկսած Պիեռը ոչ մի անգամ Ռոստովների տանը չէր եղել։ Պիեռը գլուխը կորցրած ու շփոթված էր երևում։ Նա խոսակցություն սկսեց կոմսուհու հետ։ Նատաշան ու Սոնյան շախմատի նստեցին, հրավիրելով իրենց մոտ և իշխան Անդրեյին։ Նա մոտեցավ նրանց։

— Դուք կարծեմ վաղուց եք ճանաչում Բեզուխովին,— հարցրեց նա։ Սիրո՞ւմ եք նրան։

— Այո, նա լավ մարդ է, բայց ծիծաղելի է շատ։

Եվ Նատաշան, ինչպես միշտ Պիեռի մասին խոսելիս, ըսկըսեց անեկդոտներ պատմել նրա ցրվածության մասին, անեկդոտներ, որոնք նույնիսկ հորինել էին նրա վրա։

— Գիտեք, ես մեր գաղտնիքը հայտնեցի նրան,— ասավ իշխան Անդրեյը։— Ես նրան մանկությունից եմ ճանաչում։ Ոսկի սիրտ ունի։ Ես խնդրում եմ ձեզ, Նատալիա,— ասավ նա հանկարծ լուրջ,— ես գնալու եմ, աստված գիտի, ի՞նչ կարող է պատահել։ Դուք գուցե դադարեք սի... լավ, գիտեմ որ այդ մասին չպետք է խոսեմ։ Մի բան պատահելու դեպքում, երբ ես չլինեմ...

— Ի՞նչ կարող է պատահել...

— Մի որևէ դժբախտություն,— շարունակեց իշխան Անդրեյը.— ես ձեզ կխնդրեի m-lle Sophie, որ ինչ էլ պատահելու լինի դիմեցեք միայն նրա խորհրդին ու օգնության։ Ճիշտ է, դա ամենացրված ու ծիծաղելի մարդն է, բայց ոսկի սիրտ ունի։

Ո՛չ հայրը, ո՛չ մայրը, ո՛չ Սոնյան, ո՛չ էլ ինքը՝ իշխան Անդրեյը չէին կարող նախատեսել, թե փեսացուի անջատումը ինչպես կազդի Նատաշայի վրա։ Նա այդ օրը՝ կարմրած ու հուզված, ցամաք աչքերով պտտում էր տանը, զբաղվում էր ամենաչնչին գործերով, կարծես չհասկանալով, թե ի՞նչ է սպասում իրեն։ Նա լաց չեղավ նույնիսկ այն րոպեին, երբ իշխան Անդրեյը նրան հրաժեշտ տալով, վերջին անգամ համբուրեց նրա ձեռը։— Մի՛ գնաք,— միայն ասավ Նատաշան այնպիսի ձայնով, որն իշխան Անդրեյին ստիպեց մտածել, թե իսկապես չմնա՞ արդյոք, և այդ բանը նա երկար հիշում էր

դրանից հետո։ Երբ նա մեկնեց, Նատաշան նույնպես լաց չեղավ. բայց մի քանի օր՝ առանց լաց լինելու, նստում էր իր սենյակում, չէր հետաքրքրվում ոչնչով և երբեմն ասում էր միայն։

— Ա՜խ, նա ինչու՞ գնաց։

Բայց նրա գնալուց հետո՝ երկու շաբաթ անց՝ Նատաշան, իրեն շրջապատողների համար անսպասելի կերպով, սթափվեց իր բարոյական հիվանդությունից, դարձավ այնպես, ինչպես առաջ էր, սակայն փոխվել էր նրա բարոյական դեմքը այնպես, ինչպիսի փոխված դեմք ունենում են երեխաները, երբ երկարատև հիվանդությունից հետո վեր են կենում անկողնից։

XXV

Իշխան Նիկոլայ Անդրեյիչ Բալկոնսկու առողջությունն ու բնավորությունն այս վերջին տարում, որդու մեկնելուց հետո, շատ թուլացան։ Նա ավելի դյուրագրգիռ դարձավ, քան առաջ էր, և նրա անառիթ զայրույթի պոռթկումները մեծ մասամբ թափվում էին իշխանադուստր Մարիայի գլխին։ Նա կարծես հոգածությամբ փնտրում էր դստեր հիվանդ տեղերը, որպեսզի որքան կարելի է բարոյապես ավելի դաժանորեն տանջի նրան։ Իշխանադուստր Մարիան երկու կիրք ուներ, ուստի և երկու ուրախություն. եղբոր որդի Նիկոլուշկան ու կրոնը, և այդ երկուսն էլ իշխանի սիրած նյութերն էին՝ հարձակվելու և հեգնելու։ Ինչի մասին էլ խոսք բացվեր, ծեր իշխանը խոսքը փոխում էր պառավ աղջիկների սնահավատության կամ երեխաներին երես տալու և փչացնելու վրա։— Դու ուզում ես Նիկոլենկին էլ պառավ աղջիկ դարձնե՞լ, ինչպես դու ես. իզուր. իշխան Անդրեյին տղա է հարկավոր, ոչ թե աղջիկ, — ասում էր նա։ Կամ դիմելով mademoiselle Bourienne-ին, նա իշխանադուստր Մարիայի ներկայությամբ հարցնում էր, թե նրան արդյոք դուր են գալիս մեր տերտերներն ու սրբապատկերները, և սկսում էր կատակել։

Նա անվերջ-անդադար վիրավորում էր իշխանադուստր Մարիային, բայց աղջիկը մինչև իսկ ճիգ չէր գործադրում, որպեսզի ներեր նրան։ Մի՞թե հայրը կարող է մեղավոր լինել

իր առաջ, և մի՞թե իր հայրը, որը, նա գիտեր որ, այնուամենայնիվ սիրում է իրեն, կարող է անարդար լինել իր վերաբերմամբ։ Եվ ի՞նչ է արդարությունը։ Իշխանադուստրը երբեք չէր մտածել այդ՝ «արդարություն» մեծագոռ բառի մասին։ Մարդկության բոլոր բարդ օրենքները նրա աչքում կենտրոնացած էին մի հասարակ ու պարզ օրենքի մեջ — սիրո և անձնազոհության օրենքի, որը մեզ ավանդել է Նա, ով սիրով տառապեց մարդկության համար, երբ Նա ինքն աստված էր։ Նրան ի՞նչ ուրիշ մարդկանց արդարություններն ու անարդարությունները։ Նա պետք է ինքը տանջվեր ու սիրեր, և նա այդ անում էր։

Զմեռը Լիսիե Գորի եկավ իշխան Անդրեյը. նա ուրախ էր, հեզ ու սիրալիր, որպիսի վիճակում իշխանադուստր Մարիան նրան վաղուց չէր տեսել։ Իշխանադուստր Մարիան նախագգաց, որ նրան ինչ-որ բան է պատահել, բայց նա իշխանադուստր Մարիային ոչինչ չասավ իր սիրո մասին։ Մեկնելուց առաջ իշխան Անդրեյը ինչ-որ բանի համար երկար զրուցեց հոր հետ, և իշխանադուստր Մարիան նկատեց, որ մեկնելուց առաջ նրանք դժգոհ էին իրարից։

Շուտով՝ իշխան Անդրեյի մեկնելուց հետո, իշխանադուստրը Մարիան Լիսիե Գորիից նամակ գրեց Պետերբուրգ՝ իր բարեկամուհի Ժյուլի Կարագինային, որին իշխանադուստր Մարիան փափագում էր, ինչպես միշտ փափագում են աղջիկները, ամուսնացնել իր եղբոր հետ և որն այդ ժամանակ սգի մեջ էր՝ եղբոր մահվան պատճառով, որ սպանվել էր Թուրքիայում։

«Ինչպես երևում է, վիշտն ու դառնությունը մեր ընկերուհիս բաժինն է, սիրելի ու նազելի բարեկամ Julie.

«Ձեր կորուստն այնքան սոսկալի է, որ ես ինձ դա այլ կերպ չեմ կարող բացատրել, քան իբրև աստծո մի առանձին ողորմածություն, որ ձեզ և ձեր սքանչելի մորը ուզում է փորձել, իհարկե ձեզ սիրելով։ Ախ, բարեկամս, կրոնը, և միմիայն կրոնը, կարող է մեզ, էլ չեմ ասում մխիթարել, այլ փրկել հուսահատությունից. միայն կրոնը կարող է մեզ բացատրել այն, ինչ որ առանց նրա օգնության մարդը չի կարող հասկանալ։ Ինչո՞ւ համար հենց բարի ու բարձր էակները, որ կարող են կյանքում երջանկություն գտնել, որ ոչ ոքի չեն վնասում,

այլ անհրաժեշտ են ուրիշների երջանկության համար, — կանչվում են աստծու մոտ, բայց ապրելու մնում են կա՛մ չար, անօգուտ ու վնասակար մարդիկ, կա՛մ այնպիսիք, որոնք բեռ են լինում թե՛ իրենց և թե՛ ուրիշների համար։ Առաջին մահը, որ ես տեսել եմ և որը երբեք չեմ կարող մոռանալ — իմ սիրեցյալ հարսի մահը — ինձ վրա այդ տեսակ տպավորություն թողեց։ Ճիշտ այնպես, ինչպես դուք եք հարցնում ճակատագրին, թե՝ ինչո՞ւ համար պիտի մեռներ ձեր սքանչելի եղբայրը, ճիշտ այդպես էլ ես էի հարցնում, թե ինչո՞ւ պիտի մեռներ այդ հրեշտակ լիզան, որ ոչ միայն որևէ չարիք չէր արել մարդու, այլ երբեք բարի խոհերից բացի ոչինչ չուներ իր հոգում։ Եվ ինչ, սիրելիս. այդ օրից անցել է ահա հինգ տարի և ես, իմ կարճ խելքով, արդեն սկսում եմ պարզ հասկանալ, թե նա ինչո՛ւ պիտի մեռներ և թե ի՛նչպես այդ մահը ստեղծողի անսահման բարության արտահայտությունն էր միայն, ստեղծողի, որի գործերից շատերը թեև մեծ մասամբ մենք չենք հասկանում, միայն նրա անսահման սիրո արտահայտությունն են դեպի իր ստեղծածները։ Գուցե, մտածում եմ ես հաճախ, նա հրեշտակի պես անչափ անմեղ էր, որպեսզի կարողանար կրել մայրության բոլոր պարտականությունները։ Իբրև ջահել կին նա անբասիր էր. գուցե և նա չկարողանար այդպիսի մայր լինել։ Բացի այն, որ նա մեր սրտում, մանավանդ իշխան Անդրեյի սրտում, թողեց ամենաանխառն կարեկցությունն ու հիշողությունը, այնտեղ նա, հավանորեն, կստանա այն տեղը, որ/ն ես արժանի չեմ համարում ինձ։ Բայց, չխոսելով արդեն նրա մասին, պիտի ասեմ, որ այդ վաղաժամ ու սոսկալի մահը, չնայած մեր ամբողջ վշտին, ամենաբարերար ազդեցությունն ունեցավ ինձ ու եղբորս վրա։ Այն ժամանակ, կորստի վայրկյանին, այդպիսի մտքեր չէին ծագում իմ գլխում, այն ժամանակ ես նրանց սոսկումով կվանեի, բայց այժմ այնքան պարզ ու անտարակուսելի է։ Այս ամենը, բարեկամս, ձեզ գրում եմ միայն նրա համար, որ ձեզ համոզեմ այն ավետարանական ճշմարտության մեջ, որն ինձ համար կյանքի կանոն է դարձել։ Ոչ մի մազ մարդու գլխից չի ընկնի առանց նրա կամքի։ Իսկ նրա կամքը ղեկավարվում է միմիայն անսահման սիրով դեպի ձեզ, ուստի և այն բոլորը, ինչ պատահում է մեզ, մեր բարվո համար է։ Դուք հարցնում եք, թե եկող ձմեռ

կապրե՞նք մենք արդյոք Մոսկվայում։ Չնայած ձեզ տեսնելու բուռն փափագիս, չեմ կարծում և չեմ ցանկանում այդ։ Կզարմանաք, որ դրա պատճառը Բոնապարտն է։ Եվ ահա թե ինչու. հորս առողջությունը նկատելի կերպով թուլանում է. նա ոչ մի հակաճառություն չի կարողանում տանել և դառնում է դյուրագրգիռ։ Այդ դյուրագրգռությունը, ինչպես դուք գիտեք, դառնում է առավելապես քաղաքական գործերի շուրջը։ Նա չի կարողանում տանել, որ Բոնապարտեն իր գործը վարում է Եվրոպայի բոլոր թագավորների հետ, իբրև իրեն հավասարների, և մանավա՛նդ մեր Եկատերինա Մեծի թոռան հետ։ Ինչպես գիտեք, ես բոլորովին անտարբեր եմ դեպի քաղաքական գործերը, բայց հորս խոսքերից և նրա՝ Միխայիլ Իվանովիչի հետ ունեցած խոսակցություններից գիտեմ այն ամենը, ինչ կատարվում է աշխարհում, և առանձնապես այն բոլոր պատիվները, որ արվում են Բոնապարտեին, որին, ինչպես ինձ թվում է, ամբողջ երկրագնդի վրա միմիայն Լիսիե Գորիում չեն ընդունում ո՛չ իբրև մեծ մարդ, ո՛չ էլ, առավել ևս, ֆրանսական կայսր։ Եվ հայրս այդ տանել չի կարող։ Ինձ թվում է, որ հայրս, առավելապես քաղաքական գործերի նկատմամբ ունեցած իր հայացքների պատճառով և նախատեսելով, որ ընդհարումներ կարող են լինել իր վարվեցողության շնորհիվ, որ առանց որևէ մեկից քաշվելու արտահայտում է իր կարծիքները, դժկամությամբ է խոսում Մոսկվա մեկնելու մասին։ Այն բոլորը, ինչ կարող է շահել նա բժշկությունից, կկորցնի Բոնապարտեի մասին վիճելով, որ անխուսափելի է։ Համենայն դեպս այդ կորոշվի շատ շուտով։ Մեր ընտանեկան կյանքն ընթանում է նախկին հունով, բացառությամբ այն բանի, որ եղբայրս՝ Անդրեյը բացակա է։ Նա, ինչպես ձեզ գրել եմ, վերջերս շատ է փոխվել։ Իր դժբախտությունից հետո նա այժմ միայն, այս տարի բարոյապես միանգամայն վերակենդանացել է։ Այժմ այնպես է, ինչպես երեխա ժամանակն եմ տեսել. բարի, մեղմ ու այնպիսի ոսկի սիրտ ունի, որի նմանը ես չեմ տեսել։ Ինչպես ինձ թվում է, նա հասկացել է, որ կյանքն իր համար վերջացած չէ։ Բայց այդ բարոյական փոփոխության հետ միասին, նա ֆիզիկապես շատ թուլացել է։ Նիհարել է և առաջվանից ավելի ջղային դարձել։ Ես անհանգստանում եմ նրա համար և ուրախ եմ, որ նա գնաց

արտասահման, մի բան, որ բժիշկները վաղուց արդեն խորհուրդ էին տալիս նրան։ Հույս ունեմ, որ այդ ճանապարհորդությունը նրան կկազդուրի։ Դուք գրում եք, որ Պետերբուրգում նրա մասին խոսում են, իբրև ամենագործունյա, կրթված ու խելոք մարդկանցից մեկի մասին։ Ներեցեք տոհմական ինքնասիրությանս համար — ես այդ բանում երբեք չեմ կասկածել։ Անգնահատելի է այն բարիքը, որ արավ նա այստեղ ամենքին՝ գյուղացիներից սկսած մինչև ազնվականները։ Պետերբուրգ գնալով՝ նա ստացավ այն, ինչ որ պետք էր։ Զարմանում եմ առհասարակ, թե այդ լուրերն ինչպես են Պետերբուրգից Մոսկվա հասնում և մանավանդ այնքան անստույգ լուրեր, ինչպես այն, որի մասին գրում եք դուք, — եղբորս կարծեցյալ ամուսնությունը փոքրիկ Ռոստովայի հետ։ Ես չեմ կարծում, թե Անդրեյը երբևիցե ամուսնանա որևէ մեկի հետ, և մանավա՛նդ նրա հետ։ Եվ ահա թե ինչո՛ւ. նախ՝ ես գիտեմ, որ նա թեև սակավ է խոսում հանգուցյալ կնոջ մասին, բայց այդ կորստյան ցավը այնքան խորն է արմատացել նրա սրտում, որ նա հազիվ թե երբևիցե վճռեր փոխանակ բերելու մի խորթ մայր՝ մեր փոքրիկ հրեշտակի համար. երկրորդ՝ այն պատճառով, որ որքան գիտեմ, այդ աղջիկը այն կարգի կանանցից չէ, որոնք կարող են իշխան Անդրեյին դուր գալ։ Չեմ կարծում, որ իշխան Անդրեյը նրան կին ընտրեր իր համար, և բացարձակ կասեմ. ես այդ չեմ ցանկանում։ Բայց ես շատախոսեցի. վերջացնում եմ երկրորդ թերթը։ Մնացեք բարով, իմ սիրելի բարեկամ. թող պահպանի ձեզ աստված իր սուրբ և հզոր հովանու ներքո։ Իմ սիրելի ընկերուհին՝ mademoiselle Bourienne-ը համբուրում է ձեզ։

Մարիա»։

XXVI

Ամառվա կեսին իշխանադուստր Մարիան անսպասելի նամակ ստացավ իշխան Անդրեյից՝ Շվեյցարիայից, որով եղբայրը հայտնում էր նրան մի տարօրինակ ու անսպասելի նորություն։ Իշխան Անդրեյը գրում էր Ռոստովայի հետ նշանվելու մասին։ Նրա ամբողջ նամակն արտահայտում էր աղջկան հիացում դեպի հարսնացուն և քնքուշ բարեկամություն ու վստահություն դեպի քույրը։ Նա գրում էր, թե ինքը երբեք այնպես չի սիրել, ինչպես այժմ է սիրում, և թե միայն այժմ է հասկանում ու ճանաչում կյանքը. նա քրոջը խնդրում էր ներել իրեն, որ Լիսիե Գորի եկած ժամանակ նրան ոչինչ չհայտնեց այդ որոշման մասին, թեև այդ առթիվ խոսել էր հոր հետ։ Նա այդ բանը նրան չասավ նրա՛ համար, որովհետև իշխանադուստր Մարիան սկսելու էր հորը խնդրել՝ համաձայնություն տալու, և նպատակին չհասնելով, իզուր ջղայնացնելու էր հորը և նրա անբավականության ամբողջ ծանրությունը կրելու էր իր վրա։ «Համենայն դեպս, — գրում էր նա, — այն ժամանակ բանը դեռ վերջնականապես որոշված չէր, ինչպես այժմ։ Այն ժամանակ հայրս նշանակեց մի տարի միջոց, որն ահա կես է եղել, այսինքն այդ ժամանակամիջոցից վեց ամիս է անցել, և ես ավելի քան երբևիցե հաստատ եմ մնում իմ որոշմանը։ Եթե բժիշկներն ինձ այստեղ՝ ջրերում, չպահեին, ես հիմա Ռուսաստանում կլինեի, բայց այժմ իմ վերադարձը պիտի հետաձգեմ ևս մի երեք ամսով։ Դու ճանաչում ես ինձ և գիտես իմ հարաբերությունները հորս հետ։ Ես նրանից ոչինչ չեմ ուզում. եղել եմ և միշտ կլինեմ անկախ, բայց գործել հակառակ նրա կամքի, արժանանալ նրա զայրույթին, երբ գուցե շատ քիչ ժամանակ է մնացել նրան մեզ հետ ապրելու, — դա կիսով չափ կխորտակեր իմ երջանկությունը։ Ես այժմ նույն բանի մասին նամակ եմ գրում նրան և քեզ կխնդրեի, հարմար րոպե ընտրելով, հանձնել նրան նամակը և տեղեկություն տալ ինձ, թե նա ինչպես է նայում այս բոլորին, և հույս կա՞ արդյոք, որ նա իր նշանակած ժամանակամիջոցը կրճատի մի չորս ամսով»։

Երկար տատանումներից, կասկածներից ու աղոթքներից հետո իշխանադուստր Մարիան եղբոր նամակը հանձնեց հորը։ Հաջորդ օրը ծեր իշխանը հանդարտ ասավ նրան.

— Գրիր եղբորդ, որ սպասի մինչև մեռնելս.... Դա շատ չի քաշի, շուտով կազատեմ...

Իշխանադուստրը կամեցավ ինչ-որ մի բան ասել, առարկել, բայց հայրը թույլ չտվեց և ձայնն ավելի ու ավելի բարձրացրեց.

— Ամուսնացի՛ր, ամուսնացի՛ր, սիրելիս.... Լավ տոհմ է... Խելոք մարդիկ են, հը՞։ Հարուստ են, հը՞։ Այո։ Նիկոլենկան

մի լավ խորթ մայր կունենա։ Գրիր նրան, թո՛ղ հենց վաղն ամուսնանա։ Նա կլինի Նիկոլուշկայի խորթ մայրը, իսկ ես Բուրիենկի հետ կամուսնանամ... Հա՛-հա՛-հա՛, որ ինքն էլ առանց խորթ մոր չմնա։ Միայն մի բան իմացե՛ք։ Իմ տան մեջ այլևս կինարմատ հարկավոր չէ. թող պսակվի ու ինքն իրեն ապրի։ Գուցե դո՞ւ էլ նրա մոտ փոխադրվես,— դիմեց նա իշխանադուստր Մարիային։— Բարի՛ ճանապարհ ձեզ, բարի ճանապա՞րհ։

Այս բոնկումից հետո իշխանն այլևս ոչ մի անգամ այդ բանի մասին չխոսեց։ Բայց որդու փոքրոգության հանդեպ ունեցած զայրույթը միշտ արտահայտվում էր հոր և աղջկա հարաբերությունների մեջ։ Հեգնության նախկին առիթներին ավելացավ մի խոսակցություն ևս — խորթ մոր և m-lle Bourienne-ի նկատմամբ ցույց տված սիրալիրության մասին։

— Ինչու ես էլ նրա հետ չամուսնանամ,— ասում էր նա աղջկան, ակնարկելով m-lle Bourienne-ին։— Փառավոր իշխանուհի կլինի։

Եվ իշխանադուստր Մարիան վերջին ժամանակներս տարակուսանքով ու զարմանքով սկսեց նկատել, որ հայրն իսկապես սկսում է ավելի ու ավելի մտերմանալ Ֆրանսուհուն։ Իշխանադուստր Մարիան եղբորը գրեց, թե հայրն ինչպես ընդունեց նրա նամակը. բայց նա եղբորը հույս տալով մխիթարում էր, թե հորն այդ մտքի հետ կհաշտեցնի։

Նիկոլուշկան ու նրա կրթությունը, André-ն ու կրոնը իշխանադուստր Մարիայի մխիթարանքը և ուրախություններն էին, սակայն դրանից զատ, որովհետև յուրաքանչյուր մարդու հարկավոր են անձնական հույսեր, իշխանադուստր Մարիայի հոգու ամենախոր անկյունում կար մի թաքնված երազ և հույս, որոնք կազմում էին նրա կյանքի գլխավոր սփոփանքը։ Այդ սփոփիչ երազն ու հույսը նրան տվել էին «աստծու մարդիկ»— թափառական ուխտավորները, որոնք իշխանից ծածուկ այցելում էին նրան։ Որքան շատ էր ապրում իշխանադուստր Մարիան, որքան ավելի էր փորձում կյանքը և դիտում այն, այնքան ավելի էր զարմանում մարդկանց կարճատեսության վրա, որ այստեղ՝ երկրի վրա որոնում էին վայելք ու երջանկություն, և շարշարվելով, տառապելով, պայքարելով ու միմյանց չարիք հասցնելով, ձգտում էին այդ անհնարին,

երևութական ու արատավոր երջանկության։ Իշխան Անդրեյը կնոջը սիրում էր, նա մեռավ. կարծես դա նրա համար քիչ էր, հիմա էլ ուզում է բախտը կապել ուրիշ կնոջ հետ։ Հայրս այդ չի ուզում, որովհետև Անդրեյի համար ցանկանում է ավելի նշանավոր ու հարուստ ամուսնություն։ Եվ բոլորը պայքարում ու տանջվում են, և տանջվում ու ապականում են իրենց հոգին, իրենց հավերժական հոգին, որպեսզի հասնեն այն բարիքներին, որոնց գոյությունը մի ակնթարթ է տևում։ Բայց այն, ինչ որ մենք գիտենք, գիտենք նաև, որ Քրիստոսը՝ աստծո որդին, աշխարհ եկավ և մեզ ասավ, որ այս կյանքը՝ ակնթարթային կյանք է, փորձություն, իսկ մենք շարունակ կառչում ենք նրան և մտածում ենք նրա մեջ երջանկություն գտնելու։ «Ինչպես է, որ ոչ ոք չի հասկացել այդ», մտածում էր իշխանադուստր Մարիան։ «Ոչ ոք, բացի արհամարհված «աստծո մարդկանցից», որոնք մախաղն ուսներին գալիս են ինձ մոտ ետևի դռնից, որ իշխանը չտեսնի իրենց՝ ո՛չ թե նրա համար, որ նրանից չտուժեն, այլ նրա համար, որ նրան մեղքի մեջ չդցեն։ Թողնել ընտանիք, հայրենիք, աշխարհային բարիքների հետ կապված բոլոր հոգսերը, ոչ մի բանի չկպչել, թափառել քաթանե ցնցոտիներով, օտար անունով՝ տեղից-տեղ, վնաս չհասցնելով մարդկանց ու նրանց համար աղոթելով, աղոթելով և՛ նրանց համար, որոնք հալածում են իրենց, և՛ նրանց համար, որոնք հովանավորում են. այս ճշմարտությունից ու կյանքից բարձր չկա՛ ուրիշ ճշմարտություն ու կյանք»։

Կար մի թափառական ուխտավոր կին՝ Ֆեդոսուշկա անունով, 50 տարեկան, փոքրիկ, լոկ, չեչոտ դեմքով. 30 տարուց ավելի էր, որ շրջում էր նա բոբիկ ու կապանքներով։ Իշխանադուստր Մարիան առանձնապես սիրում էր նրան։ Մի անգամ, երբ մութ սենյակում, միայն կանթեղի լույսի տակ, Ֆեդոսուշկան պատմում էր իր կյանքը, հանկարծ իշխանադուստր Մարիային ուժգնապես տիրեց մի միտք, թե միայն Ֆեդոսուշկան է, որ գտել է կյանքի ճշմարիտ ուղին, ուստի ինքն էլ որոշեց՝ գնալ թափառել։ Երբ Ֆեդոսուշկան գնաց քնելու, իշխանադուստր Մարիան երկար մտածեց այդ բանի մասին և, վերջապես որոշեց, որ, որքան էլ այդ տարօրինակ էր, ինքը պիտի գնար թափառելու։ Նա իր մտադրությունը հայտնեց միայն իր խոստովանահայր վանականին՝ հայր Ակինֆիին, և

խոստովանահայրը հավանություն տվեց նրա մտադրության։ Թափառական ուխտավոր կանանց նվեր տալու պատրվակով իշխանադուստր Մարիան իր համար պատրաստեց ուխտավոր կնոջ լրիվ հանդերձանք. շապիկ, տրեխներ, կաֆտան ու սև գլխաշոր։ Հաճախ, նվիրական պահարանին մոտենալով, իշխանադուստր Մարիան կանգ էր առնում անվճռականության մեջ, մտածելով, թե ժամանակը չի արդյոք իր մտադրությունն իրագործելու։

Հաճախ ուխտավոր կանանց պատմությունները լսելով նա ոգևորվում էր այդ հասարակ, նրանց համար մեքենական, իսկ իր համար խոր մտքերով լի զրույցներով, այնպես որ մի քանի անգամ նա պատրաստ էր ամեն ինչ թողնել ու տնից փախչել։ Երևակայությամբ նա իրեն տեսնում էր արդեն Ֆեոդոսուշկայի հետ, որ կոշտ շապկով, ցուպը ձեռին և մախաղն ուսին քայլում էր փոշոտ ճամփով՝ առանց նախանձի, առանց մարդկային սիրո, առանց ցանկությունների, իր թափառումներն ուղղելով մի սրբավայրից մյուսը, և վերջ ի վերջո այնտեղ, ուր չկա ո՛չ վիշտ, ո՛չ հառաչանք, այլ կա միայն հավիտենական ուրախություն ու երանություն։

«Կերթամ մի տեղ՝ կաղոթեմ. դեռ չընտելացած այդ տեղին, դեռ չսիրած — կերթամ մի ուրիշ տեղ, հեռուն։ Եվ կերթամ այնքան ժամանակ, մինչև ոտներս հոգնեն. և կպառկեմ ու կմեռնեմ մի որևէ տեղ. և, վերջապես, կհասնեմ այն հավիտենական, խաղաղ հանգրվանը, ուր չկա ոչ վիշտ, ո՛չ հառաչանք...», մտածում էր իշխանադուստր Մարիան։

Բայց հետո, տեսնելով հորը և մանավանդ փոքրիկ Կոկոյին, նրա մտադրությունը թուլանում էր, կամացուկ լալիս էր և զգում, որ ինքը մեղավոր է, որ հորն ու եղբոր որդուն ավելի է սիրում, քան աստծուն։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Աստվածաշունչի ավանդությունն ասում է, թե աշխատանքի բացակայությունը — պարապությունը — եղել է նախամարդու երանության պայմանը՝ մինչև նրա անկումը։ Պարապության այդ սերը մնաց նույնը և ընկած մարդու մեջ, բայց մարդու գլխին միշտ անեծք է ծանրացած ոչ միայն նրա համար, որ մենք մեր ճակատի քրտինքով պետք է ձեռք բերենք մեր հացը, այլ նրա համար, որ մեր բարոյական հատկություններով մենք չենք կարող պարապ ու հանգիստ լինել։ Մի թաքուն ձայն մեզ ասում է, որ մենք հանցավոր ենք համարվելու նրա համար, որ պարապ ենք։ Եվ եթե մարդ կարողանար գտնել մի վիճակ, երբ պարապ լինելով հանդերձ իրեն օգտակար զգար և իր պարտքը կատարեր, նա դրանով կգտներ նախնադարյան երանության մի կողմը։ Եվ այդպիսի պարտադիր ու անբասիր պարապության վիճակով օգտվում է մի ամբողջ դաս — ռազմական դասակարգը։ Եվ ռազմական ծառայության գլխավոր գրավչությունը է՛ և կլինի պարապությունը։

Նիկոլայ Ռոստովը լիովին ապրում էր այդ երանությունը 1807 թվից հետո, շարունակելով իր ծառայությունը Պավլոգրադյան գնդում, ուր ղեկավարում էր արդեն Դենիսովից ընդունած հեծվաշտը։

Ռոստովը դարձել էր կոշտ-կոպիտ, բարեսիրտ մարդ, որին Մոսկվայի ծանոթները թերևս համարեին փոքր-ինչ mauvais genre[1], բայց նա վայելում էր ընկերների, ստորադրյալների և

[1] Վատ տոն։

իշխանության սերն ու հարգանքը և գոհ էր իր կյանքից։ Վերջերս, 1809 թվին, տնից ստացած նամակներում նա հաճախ կարդում էր մոր գանգատները, թե իրենց գործերն ավելի ու ավելի քայքայվում են, և թե ժամանակն է, որ նա գա տուն՝ ծեր ծնողներին ուրախացնելու և հանգստացնելու։

Այդ նամակները կարդալով՝ Նիկոլայը վախենում էր, թե չլինի ուզում են իրեն դուրս բերել այն միջավայրից, ուր ինքն արդեն կյանքի խառնաշփոթությունից հեռացած, ապրում էր հանգիստ ու անդորր։ Նա զգում էր, որ վաղ թե ուշ ինքը կրկին ոտ է դնելու կյանքի ճահիճը և նորից գործ է ունենալու քայքայված գործերի, կառավարիչների, հաշիվների, վեճերի, ինտրիգների, կապերի, հասարակության, Սոնյայի սիրո և նրան խոստում տալու հետ։ Այս բոլորը նրան թվում էր շատ ծանր ու խճճված, ուստի և նա մոր նամակներին պատասխանում էր սաղը դասական (կլասիկ) նամակներով, որ սկսվում էին. Ma chère maman[1], և վերջանում էին՝ votre obéissant fils[2] խոսքերով, և լռում էր տուն գնալու մասին։ 1810 թվին նա իր հարազատներից մի նամակ ստացավ, որով հայտնում էին Նատաշային Բալկոնսկու հետ նշանելու մասին և այն մասին, թե հարսանիքը լինելու է մի տարուց հետո, քանի որ ծեր իշխանը համաձայն չէ։ Այդ նամակը վշտացրեց, վիրավորեց Նիկոլային։ Նախ նա ցավում էր, որ տնից հեռանալու է Նատաշան, որին ավելի էր սիրում, քան ընտանիքի որևէ անդամին. երկրորդ՝ նա հուսարական տեսակետից, ափսոսում էր, որ ինքը նշանին ներկա չի եղել, որովհետև նա ցույց կտար այդ Բալկոնսկուն, թե նրա ազգակցությունն այնքան էլ մեծ պատիվ չի իր համար և եթե նա սիրում է Նատաշային՝ կարող է իր ուզածի պես վարվել, առանց խենթ հոր թույլտվության էլ։ Մի բոպե նա տատանվում էր՝ Նատաշային, որպես նշանվածի տեսնելու համար արձակուրդ խնդրե՞լ, թե ոչ, բայց վրա հասան զորաշարժերը, հիշեց Սոնյային, կյանքի խառնաշփոթությունը և մտադրությունը կրկին հետաձգեց։ Բայց նույն թվի գարնանը նա մի նամակ ստացավ մորից, որ նա գրել էր կոմսից թաքուն, և այդ նամակը համոզեց Նիկոլային՝

[1] Իմ սիրելի մայր։

[2] Ձեր հնազանդ որդի։

տուն վերադառնալ։ Մայրը գրում էր, որ եթե Նիկոլայը չգա և գործերն իր ձեռքը չվերցնի, ամբողջ կալվածը ձեռից կերթա և կմնան մուրացիկ։ Կոմսն այնքան թույլ է, այնքա՛ն է վստահել Միտենկային, և այնքան բարի է, որ բոլորն էլ նրան խաբում են և նրա գործերը գնալով վատանում ու վատթարանում են։ «Ի սեր աստծո, աղաչում եմ, իսկույն եթ ե՛կ, եթե չես ցանկանում ինձ և ամբողջ ընտանիքիդ դժբախտացնել», գրում էր կոմսուհին։

Այս նամակն ազդեց Նիկոլայի վրա։ Նա օժտված էր միջակության այն առողջ խելքով, որը նրան ցույց էր տալիս, թե ինչ պետք է անել։

Այժմ պետք էր գնալ, եթե ոչ պաշտոնը թողնելով, գոնե արձակուրդով։ Թե ինչո՛ւ պետք է գնար՝ չգիտեր. բայց ետ-ճաշ կուշտ քնից հետո նա պատվիրեց թամբել մոխրագույն Մալչին, որ վաղուց հեծած մի չար հովատակ էր, և այդ քրտնաթաթախ հովատակին հեծած տուն դառնալով՝ Լավրուշկային (Դենիսովի լաքեյը մնացել էր Ռոստովի մոտ) և երեկոյան եկած ընկերներին հայտնեց, թե ինքն ուզում է արձակուրդ ստանալ և տուն գնալ։ Որքան էլ ծանր և օտարոտի լիներ այն միտքը, թե ինքը տուն է գնում և շտաբից չի կարող իմանալ (ինչ որ առանձնապես հետաքրքրում էր նրան), թե վերջին զորաշարժերի համար ինքը ստացե՞լ է արդյոք ոոտմիստրի աստիճան կամ ստանալո՞ւ է Աննայի շքանշան. որքան էլ տարօրինակ լիներ այդ միտքը, որ ինքն այնպես էլ գնալու է, առանց կոմս Գոլուխովսկուն ծախելու երեք աշխետ ձիեր, որոնց մասին լեհ կոմսն արդեն առաջարկ էր արել և որոնց մասին Ռոստովը գրագ էր եկել, թե կծախի երկու հազարով. որքան էլ անհավատալի էր թվում, թե առանց իրեն պիտի լինի այս պարահանդեսը, որ հուսարները կազմակերպելու էին պաննա Պշաձեցկայի պատվին ի հեճուկս ուլանների, որոնք պարահանդես էին սարքել պաննա Բորժոզովսկայի պատվին, — նա գիտեր, որ այս պարզ, լավ աշխարհից պետք է գնալ հեռու, ուր ամեն բան դատարկ էր ու խառնաշփոթ։ Մի շաբաթ հետո նա արձակուրդ ստացավ։ Ոչ միայն գնդի, այլև վաշտի հուսար ընկերները Ռոստովին ճաշ տվին, որ մարդագլուխ նստեց 15 ռուբլի, — կար երկու երաժշտախումբ, ելներում էին երկու երգեցիկ խումբ. Ռոստովը մայոր Բասովի հետ

դոփապար (տրեպակա) պարեց. հարբած սարսափոր գրկում, ճոճում էին Ռոստովին, և հանկարծ վայր գցեցին. սրբորդ հեծվաշտի զինվորները մի անգամ ևս ճոճեցին նրան «ուռա» գոռալով։ Ապա Ռոստովին սահնակ նստեցրին ու ճանապարհ դրին մինչև առաջին կայարանը։

Մինչև ճանապարհի կեսը, ինչպես այդ միշտ էլ պատահում է, Կրեմենչուգից մինչև Կիև, Ռոստովը մտքով դեռ ետ էր, իր հեծվաշտում։ Բայց ճանապարհի կեսն անցնելուց հետո, նա սկսեց արդեն մոռանալ ձիերին, իր վերակա Դոժովեյկային, ու անհանգիստ հարց էր տալիս ինքն իրեն, թե Օտրադնոյում ի՞նչը ինչ դրության մեջ կգտնի։ Որքան ավելի էր մոտենում, այնքան ավելի ու ավելի էր մտածում իր տան մասին, կարծես բարոյական զգացումը ենթակա էր նույն օրենքին, ինչ որ մարմինների անկումը տարածության մեջ։ Օտրադնոյ հասած՝ վերջին կայարանում նա կառապանին երեք ռուբլի օղեդրամ տվեց և տղայի նման շնչակտուր բարձրացավ տան սանդուղքով։

Հանդիպման ուրախություններից և անբավարարվածության այն տարօրինակ զգացումից հետո, որ ունենում է մարդ իր սպասածը չտեսնելով, — թե բոլորը նույնն է, էլ ինչո՞ւ համար էի շտապում — Նիկոլայը սուզվեց իրեն ծանոթ ընտանեկան աշխարհը։ Հայրն ու մայրը նույնն էին, մի փոքր ծերացել էին միայն։ Նրանց մեջ նկատվում էր մի ինչ-որ նոր անհանգստություն և երբեմն անհամաձայնություն, որ առաջ չկար և որը, ինչպես Նիկոլայն իմացավ շուտով, առաջ էր գալիս գործերի վատ դրությունից։ Սոնյան մոտ քսան տարեկան էր։ Նա այլևս չէր գեղեցկանում և այն գեղեցկությունը, ինչ ուներ, այն էլ բավական էր։ Նա ամբողջապես սեր ու երջանկություն էր շնչում Նիկոլայի գալու օրից, և այդ աղջկա հավատարիմ, անխախտ սերը խնդագին ազդեցություն ունեցավ Նիկոլայի վրա։ Նիկոլային ամենից շատ զարմացրին Պետյան ու Նատաշան։ Պետյան արդեն մեծ, տասներեք տարեկան, գեղեցիկ, ուրախ և խելոք-չարաճճի տղա էր, որի ձայնն արդեն կոտրվում-խարխանում էր։ Նատաշայի վրա Նիկոլայը երկար զարմացավ և նրան նայելով ծիծաղեց.

— Բոլորովին փոխվել ես, — ասավ նա։

— Ի՞նչ է, տգեղացե՞լ եմ։

— Ընդհակառակը, ինչ-որ վեհություն է նկատվում։ Իշխանուհի՛, — ասավ Նիկոլայը շշունջով։

— Այո, այո, այո, — ուրախ ասավ Նատաշան։

Նատաշան եղբորը պատմեց իր և իշխան Անդրեյի սիրո պատմությունը, նրա դալուստը Օտրադնոե և ցույց տվեց նրա վերջին նամակը։

— Հը՛, գո՞հ ես, — հարցրեց Նատաշան։ — Ես հիմա այնպես հանգիստ, երջանիկ եմ։

— Շատ ուրախ եմ, — պատասխանեց Նիկոլայը։ — Նա հիանալի մարդ է։ Ի՛նչ է, դու շա՞տ ես սիրահարված։

— Ինչպես ասեմ, — պատասխանեց Նատաշան, — ես սիրահարված եմ եղել Բորիսի, ուսուցչի, Դենիսովի վրա, բայց սա բոլորովին ուրիշ բան է։ Իմ սիրտը հիմա հանգիստ է։ Ես գիտեմ, որ նրանից ավելի լավ մարդիկ չեն լինում, և հանգիստ եմ, լավ է հիմա։ Բոլորովին այն չէ, ինչ որ առաջ...

Նիկոլայն իր դժգոհությունը հայտնեց Նատաշային, որ հարսանիքը մի տարով հետաձգված է. բայց Նատաշան կատաղած հարձակվեց եղբոր վրա, ապացուցելով, թե դա ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, թե վատ կլիներ ընտանիքի մեջ մտնել հակառակ հոր կամքի և թե ինքն այդպես է ցանկացել։

— Դու բոլորովին, բոլորովին բան չես հասկանում, — ասում էր Նատաշան։

Նիկոլայը լռեց և համաձայնեց նրա ասածներին։

Եղբայրը հաճախ էր զարմանում Նատաշային նայելով։ Չէր երևում, որ դա սիրահարված հարսնացու է՝ իր փեսացուից անջատված։ Առաջվա պես նա բոլորովին հանգիստ էր և բոլորովին ուրախ։ Այդ բանը Նիկոլային զարմացնում էր և նույնիսկ ստիպում թերահավատությամբ վերաբերվել Բալկոնսկու նշանադրության։ Նա չէր հավատում, որ քրոջ բախտը վճռված է արդեն, մանավանդ, որ նա քրոջը իշխան Անդրեյի հետ չէր տեսել։ Նրան շարունակ թվում էր, թե մի ինչ-որ բան պակաս է այդ ենթադրական ամուսնության մեջ։

«Ինչո՞ւ են հետաձգել, ինչո՞ւ չեն նշանվել», մտածում էր նա։ Մի անգամ քրոջ մասին մոր հետ խոսելով՝ նա զարմանքով և մասամբ գոհունակությամբ նկատեց, որ մայրն էլ իր սրտի խորքում նույնպիսի թերահավատությամբ է վերաբերվում այդ ամուսնությանը։

— Ահա գրում է,— ասավ մայրը իշխան Անդրեյի վերջին նամակը ցույց տալով անբարյացակամության այն թաքուն զգացումով, որ միշտ ունենում են մայրերը աղջկա ապագա ամուսնական երջանկության հանդեպ,— գրում է, թե դեկտեմբերից շուտ չի գա։ Այդ ի՞նչ գործ է, որ ուշացնում է նրան։ Հավանորեն հիվանդությունը։ Առողջությունը շատ թույլ է։ Դու Նատաշային ոչինչ չասես։ Դու մի՛ նայիր նրա ուրախությանը. աղջկության վերջին օրերն այդպես են, իսկ ես գիտեմ, թե ինչ դրության մեջ է լինում ամեն անգամ, երբ նրանից նամակներ ենք ստանում։ Է՛հ, աստծով ամեն ինչ լավ կլինի,— եզրափակում էր նա ամեն անգամ.— նա՝ հիանալի մարդ է։

II

Նիկոլայն իր գալու առաջին օրերին լուրջ էր և անգամ տխուր։ Նրան տանջում էր այն բանը, որ ինքը շուտով միջամտելու է տնտեսության անմիտ գործերին, որոնց համար կանչված էր։ Այդ ծանրությունն իր ուսերից թոթափելու համար իր գալու երրորդ օրը նա բարկացած, առանց պատասխանելու այն հարցին, թե ո՛ւր է գնում, հոնքերը կիտած մրտավ ֆլիգել[1] — Միտենկայի մոտ և պահանջեց բոլոր հաշիվները։ Ի՞նչ բան էին այդ բոլոր հաշիվները, Նիկոլայն ավելի քիչ գիտեր, քան վախեցած ու տարակուսանքի մեջ ընկած Միտենկան։ Խոսակցությունն ու հաշվետեսությունը երկար չտևեց։ Տնտեսության վերահսկիչները, որ սպասում էին ֆլիգելի նախասրահում, երկյուղով ու բավականությամբ լսում էին, թե ինչպես սկզբում որոտում էր երիտասարդ կոմսի հետզհետե բարձրացող ձայնը, հետո նրանց ականջին հասան իրար ետևից թափվող հայհոյական սարսափելի խոսքեր։

— Ավազա՛կ. ապերախտ արարած... Շան պես կստակեցնեմ... գողացել ես... և այլն։

Ապա այդ մարդիկ ոչ պակաս բավականությամբ ու վախով տեսան, թե ինչպես երիտասարդ կոմսը, ամբողջապես կարմրած, արյունն աչքերը կոխած, Միտենկայի օձիքը բռնած,

[1] Տանը կից շենք, տան թևակ։

ոտով ու ծնկով՝ մեծ ճարպկությամբ, խոսակցության հարմար միջոցին, ետևից խփելով հրեց նրան ու գոռաց. «Դո՛ւրս, սրիկա, շվաքդ այլևս չերևա այստեղ»։

Միտենկան թռավ վեց աստիճանից ու փախավ մտավ ծաղկանոցը։ (Այդ ծաղկանոցը հանցավորների փրկության հայտնի վայրն էր Օտրադնոյում։ Ինքը Միտենկան քաղաքից հարբած դառնալիս թաքնվում էր այդ ծաղկանոցում, և Օտրադնոյի բնակիչներից շատերը, որ թաքնվում էին Միտենկայից, գիտեին այդ ծաղկանոցի փրկարար ուժը)։

Միտենկայի կինը և քենիները վախեցած դեմքով գլուխները դուրս հանեցին իրենց սենյակից, ուր եռում էր մաքուր հեշտաեռը և ուր երևում էր գործակատարի բարձր անկողինը՝ ծածկված մեկդական վերմակով, որ կարված էր մանր գույնզգույն կտորներից։

Երիտասարդ կոմսը շնչասպառ, առանց ուշ դարձնելու նրանց վրա, վճռական քայլերով անցավ նրանց մոտով ուղընաց տուն։

Կոմսուհին, որ աղջիկների միջոցով արդեն իմացել էր, թե ինչ է կատարվել ֆլիգելում, մի կողմից հանգստացավ, որ իրենց դրությունը պիտի լավանա, մյուս կողմից՝ անհանգստացավ, թե որդին ինչպես է անելու այդ բանը։ Մի քանի անգամ նա ոտների ծայրերի վրա մոտեցավ նրա սենյակի դռանն ու լսեց, թե ինչպես նա իրար ետևից ծխամորճ է ծխում։

Մյուս օրը ծեր կոմսը որդուն մի կողմ կանչեց և ամոթխած ժպիտով ասավ նրան.

— Գիտես, հոգիս, դու իզուր տաքացար։ Միտենկան ինձ ամեն ինչ պատմեց։

«Ես գիտեի,— մտածեց Նիկոլայը,— որ ես երբեք այստեղ՝ այս հիմար միջավայրում ոչինչ չեմ հասկանա»։

— Դու բարկացար, որ նա այդ 700 ռուբլին չի մուծել։ Չէ որ դա գրված է փոխանցումով, իսկ դու մյուս երեսը չես նայել։

— Հայրիկ, նա՝ սրիկա է և գող. ես գիտեմ։ Եվ ինչ որ արել եմ, արել-պրծել եմ։ Իսկ եթե դուք չեք ուզում, ես նրան ոչինչ չեմ ասի։

— Չէ, հոգիս (կոմսը նույնպես շփոթված էր։ Նա զգում էր, որ ինքը վատ կառավարիչ է եղել կնոջ կալվածքի համար և

մեղավոր է իր երեխաների առջև, բայց չգիտեր ինչպես ուղղել այդ)։ Ոչ, ես քեզ խնդրում եմ ինքդ գործերը վարես, ես ծեր եմ, ես...

— Ոչ, հայրիկ, դուք ինձ ներեցեք, եթե ես տհաճություն եմ պատճառել ձեզ. ես ձեզնից ավելին չեմ կարող անել։

«Գրողը դրանց՝ այդ գյուղացիներով, փողերով ու փոխանցումներով հանդերձ, — մտածեց նա։— Թղթախաղի փոխանցումը ես մի ժամանակ հասկանում էի դեռ, բայց երեսի փոխանցումից ոչինչ չեմ հասկանում», ասավ նա ինքն իրեն և այդ օրվանից գործերին չխառնվեց։ Միայն մի անգամ կոմսուհին որդուն կանչեց իր մոտ, հայտնեց, որ իր մոտ գտնվում է Աննա Միխայլովնայի երկու հազարանոց մուրհակը, և հարցրեց Նիկոլային, թե նա ի՞նչ է կարծում, ինչ պետք է անել այդ մուրհակը։

— Այ թե ինչ,— պատասխանեց Նիկոլայը։— Դուք ինձ ասիք, որ դա ինձնից է կախված. ես չեմ սիրում ոչ Աննա Միխայլովնային, ոչ էլ Բորիսին, բայց նրանք մեզ բարեկամ են եղել և աղքատ են։ Ուրեմն այսպես անենք,— և նա պատռեց մուրհակը և իր այդ վարմունքով պառավ կոմսուհուն ստիպեց ուրախության արցունքներ թափել։ Սրանից հետո՝ երիտասարդ Ռոստովն այլևս չխառնվելով որևէ գործի, սկսեց անձնատուր լինել իր համար տակավին նոր զբաղմունքի՝ որսորդության, որը ծեր կոմսը մեծ չափերի էր հասցրել։

III

Ցրտերն սկսել էին արդեն. աշնան անձրևներից թրջված հողը սառչում էր վաղորդյան սառնամանիքներից. կանաչն արդեն թոշնել-թառամել էր և վառ-կանաչ գույնով ջոկվում էր աշնանացանի մուգ-դեղնին տվող և անասունների տրորած ու գարնանացանի բաց-դեղնագույն խոզանոցներից, որոնց արանքում դեռ երևում էին հնդկացորենի կարմիր շերտերը։ Թփերով ու ծառերով լիքը ձորակներն ու անտառները, որ Օգոստոսի վերջին դեռ կանաչ կղզիներ էին թվում աշնանացանի հնձած արտերի սևին տվող դաշտերի միջև, ոսկեգույն ու վառ-կարմիր կղզիներ էին դարձել վառ-կանաչ աշնանացան արտերի արանքում։ Նապաստակներն էլ արդեն կիսով չափ

մազերնին փոխել էին, աղվեսի ձագերն սկսել էին պտույտի ելնել, իսկ ջահել գայլերը շնից մեծ էին արդեն։ Որսի լավ ժամանակն էր։ Երիտասարդ տաքարյուն որսորդ Ռոստովի շները արդեն ոչ միայն որսորդական դերի մեջ էին, այլև այնպես էին հալից ընկել, որ որսորդների ընդհանուր խորհուրդը որոշեց երեք օրով հանգիստ տալ նրանց և սեպտեմբերի 16-ին որսի ելնել, որսն սկսելով կաղնուտից, ուր կար դեռևս գայլի անձեռնամուխ մի ընտանիք։

Այսպիսի դրության մեջ էին գործերը սեպտեմբերի 14-ին։

Այդ ամբողջ օրը շները տանն էին. կծու ցուրտ էր, բայց երեկոյից եղանակն սկսեց մեղմանալ ու տաքանալ։ Սեպտեմբերի 15-ի առավոտյան, երբ երիտասարդ Ռոստովը խալաթը հագին լուսամուտից դուրս նայեց, նա տեսավ մի այնպիսի առավոտ, որից լավը չէր կարող լինել որսի համար. երկինքն ասես հալվում էր և հանդարտ իջնում երկրի վրա։ Միակ շարժումը, որ կար օդի մեջ, դա վերևից ներքև իջնող մառախուղի կամ մշուշի մանրագույն կաթիլների շարժումն էր։ Այգու ծառերի մերկ ճղներից կախվել էին վճիտ կաթիլներ և ընկնում էին հենց նոր թափված տերևների վրա։ Բանջարանոցի հողը, կակաչի պես պսպղուն-թաց սևին էր տալիս և քիչ հեռվում ձուլվում մշուշի աղոտ ու խոնավ քողին։ Նիկոլայը դուրս եկավ թաց և ցեխոտված պատշգամբը. զգացվում էր թառամող ծառերի և շների հոտ։ Խայտախար, լայնագավակ շունը՝ քած Միլկան, իր խոշոր սև դուրս պրծած աչքերով տիրոջը նկատելով, վեր կացավ տեղից, ձգվեց ու պառկեց նապաստակի պես, ապահանկարծ ծուլ եղավ և սկսեց լիզել Նիկոլայի քիթն ու բեղերը։ Մյուս արագավազ շունը, ծաղկանոցի շավղից տիրոջը տեսնելով, մեջքը ծռելով՝ սրընթաց վազեց դեպի պաշտամբ և պոչը բարձրացնելով, սկսեց քսմսվել Նիկոլայի ոտներին։

— Օ՜ հո՜յ,— լսվեց այդ ժամանակ որսորդական այն անընդօրինակելի կանչը, որն իր մեջ միացնում է և ամենաթավ բասը, և՛ ամենանուրբ տենորը, ու անկյունից դուրս եկած շնապան Դանիլան, գլուխն ուկրաինացու նման բոլորաձև խուզած, ալեզարդ կնճռադեմ որսորդը, որսորդական կեռ մտրակը ձեռին և ինքնուրույնության ու դեպի ամեն ինչն ունեցած արհամարհանքի այն արտահայտությամբ, որ ունենում են միայն որսորդները։ Նա իր չերքեզական փափախը

հանեց աղայի առջև և արհամարհանքով նրան նայեց։ Այդ արհամարհանքը պարոնի համար վիրավորական չէր. Նիկոլայը գիտեր, որ այդ ամեն ինչ արհամարհող և ամեն բանից բարձր կանգնած Դանիլան այնուամենայնիվ իր մարդն է և իր որսորդը։

— Դանիլա,— ասավ Նիկոլայը քաշվելով, զգալով, որ ի տես որսի այդ եղանակի, այդ շների ու որսորդի՝ ինքն արդեն համակվել է որսորդական այն անդիմադրելի զգացումով, որը մարդու մոռացնել է տալիս իր բոլոր նախկին դիտավորությունները, ինչպես սիրահարված մարդն իր սիրուհու ներկայությամբ։

— Ի՞նչ կհրամայեք, ձերդ պայծառափայլություն,— ասավ ավագ սարկավագի ձայնի նմանող խռպոտ բասը, և երկու սև փայլուն աչքեր հոնքերի տակից նայեցին լռած պարոնին։ «Հը՛, էլի չես դիմանալո՞ւ», կարծես ասում էին այդ զույգ աչքերը։

— Լավ օր է, չէ՞։ Որս քշելու, որսի ետևից վազելու, հը՞,— ասավ Նիկոլայը, Միլկայի ականջների ետևը քորելով։

Դանիլան չէր պատասխանում ու թարթում էր աչքերը։

— Առավոտ ծեգին Ուվարկային ուղարկեցի ականջ դնի,— ասավ նա թավ ձայնով վայրկենական լռությունից հետո,— ասում է՝ Օտրադնոյի անտառում գելերը ոռնում էին (այդ գայլի մասին նրանք երկուսն էլ գիտեին. այժմ այդ գայլն իր ձագերով եկել էր Օտրադնոյի անտառը, որ տնից երկու վերստի վրա էր և որը մի ոչ այնքան մեծ չեզոք ազատ տեղ էր)։

— Ուրեմն պետք է գնալ, հը՞,— ասավ Նիկոլայը։— Ուվարկայի հետ եկեք ինձ մոտ։

— Ինչ կհրամայեք։

— Առայժմ շներին չկերակրեք։

— Լսում եմ։

Հինգ րոպե անց Դանիլան և Ուվարկան կանգնած էին Նիկոլայի մեծ առանձնասենյակում։ Չնայած, որ Դանիլան հասակով մեծ չէր, բայց սենյակում այն տպավորությունն էր թողնում, ինչպես ձիուն ու արջին տեսնես հատակի վրա՝ կարասիների միջև և մարդկային կյանքի պայմաններում։ Դանիլան ինքն էլ զգում էր այդ բանը, և, ինչպես միշտ, կանգնել էր դռան մոտ, աշխատելով կամաց խոսել, չշարժվել, որպեսզի

տանը մի բան չկոտրի, աշխատելով ամեն ինչ, որքան կարելի է, շուտ ասել և սենյակից լուս աշխարհ դուրս գալ։

Հարց ու փորձը վերջացնելով և Դանիլայից իմանալով, որ շները լավ են, Նիկոլայը պատվիրեց ձիերը թամբել։ Բայց հենց այն րոպեին, երբ Դանիլան ուզում էր դուրս գալ, արագ քայլերով սենյակ մտավ Նատաշան, դեռ չսանրված ու չհագնված, դայակի գլխաշորը կապած։ Պետյան ներս վազեց նրա հետ միասին։

— Դու գնո՞ւմ ես,— ասավ Նատաշան,— ես այդպես էլ գիտեի։ Սոնյան ասում էր, որ չեք գնա։ Ես գիտեմ, որ այսօր այնպիսի օր է, որ չի կարելի չգնալ։

— Գնում ենք,— ակամա ասավ Նիկոլայը, որն այժմ, որովհետև ուզում էր լուրջ որսի ձեռնարկել, չէր կամենում Նատաշային ու Պետյային հետը վերցնել։— Գնում ենք, բայց միայն գայլեր որսալու. դու կձանձրանաս։

— Գիտես, որ դա իմ ամենամեծ բավականությունն է,— ասավ Նատաշան։— Այդ վատ է —ինքը գնում է, ձիերը թամբել է տվել, իսկ մեզ ոչինչ չի ասում։

— «Իզուր են արգելքները ռուսների առաջ», գնա՛նք,— գոչեց Պետյան։

— Չէ՞ որ հենց քեզ չի կարելի. մայրիկն ասավ, որ քեզ տանել չի կարելի,— ասավ Նիկոլայը, դիմելով Նատաշային։

— Ոչ, ես կգամ, անպատճառ կգամ,— ասավ Նատաշան կտրուկ։— Դանիլա, ասա՛, որ մեր ձիերն էլ թամբեն, թող Միխայլան էլ գա իմ շների հետ,— դարձավ նա շնապանին։

Եթե Դանիլայի համար սենյակում մնալն անպատշաճ ու ծանր բան էր, օրիորդի հետ որևէ գործ ունենալը նրան անհնարին բան էր թվում։ Նա աչքերը խոնարհեց և շտապեց դուրս գալ (կարծես այդ խոսքերն իրեն չէին վերաբերում)՝ աշխատելով հանկարծ որևէ կերպ չվնասել օրիորդին։

IV

Մեր կոմսը, որ միշտ մեծ քանակությամբ որսորդական շներ էր պահում, այժմ այդ ամենը որդուն հանձնելով, նրա օրը, սեպտեմբերի 15-ին, ուրախ տրամադրության մեջ ինքն էլ պատրաստվում էր որսի ելնել։

Մի ժամից արդեն որսորդական ամբողջ կազմը պատրաստ էր։ Նիկոլայը խիստ լուրջ դեմքով, որ ցույց էր տալիս, թե այժմ ժամանակը չէ դատարկ բաներով զբաղվելու, անցավ Նատաշայի ու Պետյայի մոտով, որոնք նրան ինչ-որ բան էին պատմում։ Նա դիտեց որսորդական կազմի բոլոր մասերը, աջից ուղարկեց շների խումբն ու որսկաններին, նստեց իր շիկակարմիր Դոնեցին և իր շներին շվացնելով, կալի միջով դիմեց դեպի դաշտը, որը տանում էր Օտրադնոյի անտառի արգելված մասը։ Մեր կոմսի ձիուն, շարաճճի կատածին, որ կոչվում էր Վիֆլիանկա, տանում էր կոմսի ասպանդակապահ-ձիապանը. իսկ նա ինքը՝ կոմսը, պետք է գնար եռանդակով։

Նրանք վերցրել էին 54 որսկան շուն, որոնց հետ կային 6 շնավոր ու շնապան։ Բացի պարոններից կային և 8 մարդ՝ որս հայածողներ, նրանց ետևից վազում էին 40-ից ավելի քերծեներ, այնպես որ կոմսական շների ոհմակի հետ դաշտ դուրս եկան մոտ 130 շուն և 20 ձիավոր որսկան։

Ամեն մի շուն ճանաչում էր իր տիրոջը և գիտեր իր անունը։ Ամեն մի որսկան գիտեր իր գործը, տեղը և պաշտոնը։ Հենց որ ցանկապատից դուրս եկան, բոլորն էլ առանց խոսքի ու աղմուկի համաչափ հանդարտ քայլվածքով ցրվեցին դեպի Օտրադնոյի անտառը տանող ճանապարհն ու դաշտը։

Ձիերը դաշտում գնում էին այնպես, ինչպես մի փափուկ գորգի վրայով։ Երբեմն ոտները շփփացնելով անձրևաջրի լճակներում, երբ կորում-անցնում էին ճանապարհը։ Մառախլապատ երկինքը շարունակում էր աննկատելի ու հանդարտ իջնել երկրի վրա. օդը հանգիստ էր, տաք և անաղմուկ։ Երբեմն լսվում էին — մերթ մի որսորդի սուլոց, մերթ ձիու փնչոց, մերթ որսամտրակի հարված կամ իր շարքից դուրս եկած մի շան կաղկանձ։

Մի վերստաչափ հազիվ էին գնացել, երբ Ռոստովների որսախմբի դեմ՝ մշուշից ելան ևս հինգ ձիավոր՝ իրենց շներով։ Առջևից գնում էր մի թարմ, գեղեցիկ ծերունի՝ մեծ, սպիտակ թեղերով։

— Ողջույն, քեռի, — ասավ Նիկոլայը, երբ ծերունին ձիով մոտեցավ նրան։

— Մաքուր գործ է, մա՛րշ... Այդպես էլ գիտեի, — խոսեց

քեռին (դա Ռոստովների հեռավոր բարեկամն էր և ոչ հարուստ հարևանը), — այդպես էլ գիտեի, որ չես համբերի, և լավ ես արել, որ գնում ես։ Մաքուր գործ է, մա՛րշ (սրանք քեռու սիրած խոսքերն էին)։ Հենց հիմա անտառը մտի, եթե ոչ, իմ Գիրչիկը հասանեց, որ Իլագիններն իրենց խմբով Կորնիկումն են. նրանք քթիդ տակից, մաքուր գործ է, գայլերը կխլեն։

— Հենց այնտեղ էլ գնում ես։ Հը՛, շներն իրար խառնե՞նք, — հարցրեց Նիկոլայը, — խառնե՞նք...

Որսկան շները միացան իրար և քեռին Նիկոլայի հետ կողքկողքի ճանապարհ ընկան։ Նատաշան գլխաշորերով փաթաթված, որոնց տակից երևում էր նրա կենդանի, փայլուն աչքերով դեմքը, մոտեցավ նրանց. նրան ուղեկցում էին նրանից ետ չընմնացող Պետյան, որսական Միխայլոն և ձիապանը, որին դայակը կարգադրել էր Նատաշայից չհեռանալ։ Պետյան ինչ-որ բանի վրա ծիծաղում էր և ձիգ տալիս իր ձիու սանձը։ Նատաշան ճարպկորեն ու վստահ նստել էր իր սև Արաբչիկին և վարժ ձեռով, առանց դժվարության, վարում էր նրան։

Քեռին դժգոհությամբ նայեց Պետյային ու Նատաշային։ Նա չէր սիրում, որ երես առած երեխաները խառնվում են որսորդական լուրջ գործին։

— Բարև, քեռի՛, մենք էլ ենք գալիս, — ձայն տվեց Պետյան։

— Բարևը բարև, բայց շներին ձիու տակ չգցեք, — խստությամբ ասավ քեռին։

— Նիկոլենկա, Տրունիլան ի՞նչ հիանալի շուն է։ Ինձ ճանաչեց, — ասավ Նատաշան իր սիրած շան մասին։

«Տրունիլան, նախ՝ շուն չէ, այլ քերծե է», մտածեց Նիկոլայը և խիստ հայացքով նայեց քրոջը, աշխատելով նրան զգացնել տալ այն տարածությունը, որ այդ րոպեին պիտի բաժաներ իրենց։ Նատաշան հասկացավ այդ։

— Քեռի, դուք չկարծեք, թե մենք մեկին կխանգարենք, — ասավ Նատաշան։ — Մենք մեր տեղը կկանգնենք և չենք շարժվի։

— Եվ շատ լավ կանեք կոմսուհիկս, — ասավ քեռին։ — Միայն ձիուց չընկնեք, — ավելացրեց նա, — թե չէ — մաքո՛ւր գործ է, մա՛րշ, բանը վատ կլինի։

Օտրադնոյի անտառի առանձնամասը երևաց մոտ հարյուր սաժենի վրա և շնավարները մոտեցան նրան։ Ռոստովը քեռու հետ վերջնականապես որոշելով, թե որտեղից պետք է շները թողնել և Նատաշային ցույց տալով իր կանգնելու տեղը, որտեղից ոչ մի բան չէր կարող անցնել, ինքը ձին քշեց ձորագլուխ։

— Դե, բարեկամս, եթե մորը հանդիպես, — ասավ քեռին, — ուշքդ վրադ պահիր, հետապնդիր։

— Տեսնենք ինչպես կլինի, — պատասխանեց Ռոստովը։ — Կարայ, ֆո՞ւյտ, — ձայնեց նա, դրանով պատասխանելով քեռու խոսքերին։ Կարայը ծեր, այլանդակ, որձ շուն էր, հայտնի էր նրանով, որ մենակ կռվի էր բռնվում մեծ գայլի հետ։ Բոլորը բռնեցին իրենց տեղերը։

Մեր կոմսը, իմանալով որդու որսորդական դյուրագրգռությունը, աշխատեց չուշանալ, և շնավարները հազիվ տեղ էին հասել, երբ Իլյա Անդրեյիչը՝ ուրախ, կարմրագեմ, դողդողացող այտերով, իր սևուկներով, կառքով մոտեցավ իր դիտարանին. թեթև մուշտակը կարգի բերելով և որսորդական պարագաները կապելով, հեծավ նա իր գեր, կուշտ, խոնարհ ու լավ, իր նման ծերացած Վիլֆլյանկին։ Կառքը ձիերով ետ ուղարկեցին։ Կոմս Իլյա Անդրեյիչը, թեև հոգով որսորդ չէր, բայց որսորդական օրենքները լավ իմանալով, ձին քշեց թփերի եզրերը, որոնց մոտ նա կանգնած էր, սանձը հավաքեց ձեռը, թամբի վրա ուղղվեց, և իրեն պատրաստ զգալով, ժպտալով շուրջը նայեց։

Նրա մոտ կանգնած էր նրա սենեկապահ Սեմյոն Չեկմարը, որ մի հինավուրց, բայց ծանրաշարժ դարձած ձի նստող էր։ Չեկմարը թոկերով բռնել էր երեք քաջ գելխեղդ շներ, որոնք նույնպես գիրացել էին, ինչպես տերն ու ձին։ Շներից երկուսը պառկել էին։ Հարյուր քայլ հեռու, անտառի եզերքին կանգնել էր կոմսի մյուս ձիապան-ասպանդակապահը — Միտկան, որ մի կատաղի ձի քշող էր և մոլի որսկան։ Կոմսը, իր վաղեմի սովորության համաձայն, որսից առաջ մի արծաթյա թաս համեմած օղի էր խմել, ակոատ էր արել և կես շիշ սիրած բորդոն վրայից խմել։

Իլյա Անդրեյիչը կերած-խմածից մի քիչ կարմրած էր։ Նրա ջրակալած աչքերն առանձին փայլ ունեին և նա մուշտակի

մեջ փաթաթված ու թամբին նստած նմանում էր մի երեխայի, որին տանում են ման ածելու։

Նիհար, այտերը ներս ընկած Չեկմարը, իր գործը կարգի բերած, նայում էր իր պարոնին, որի հետ 30 տարի ապրել էր սիրով, և տեսնելով նրա լավ տրամադրությունը, սպասում էր հաճելի զրույցի։ Մի երրորդ անձնավորություն էլ զգուշությամբ (երևում էր, որ այդպես սովորած էր) իր ձիով դուրս եկավ անտառից և կանգնեց կոմսի ետևը։ Այդ մարդը սպիտակամորուս մի ծերունի էր՝ կանացի կապոտով և բարձր գլխանոցով (կալպակով)։ Դա ծաղրածու Նաստասիա Իվանովնան էր։

— Դե՛, Նաստասիա Իվանովնա, — շշուկով աչքով արավ նրան կոմսը. — ապա մի գազանին փախցրու, Դանիլան քեզ ցույց կտա՞։

— Ես էլ տղամարդ եմ, — ասավ Նաստասիա Իվանովնան։

— Սը՞սս... — շշնջաց կոմսը և դարձավ Սեմյոնին.

— Նատալիա Իլյինիչնային տեսար՞, — հարցրեց նա Սեմյոնին։ — Ո՞ւր է նա։

— Պյոտր Իլիչի հետ ժարովի քոլերից ետ մնացին, — ասավ Սեմյոնը ժպտալով։ — Թեև կինարմատ, բայց մեծ սեր ունեն։

— Իսկ դու չես զարմանում, Սեմյոն, նրա ձի քշելու վրա... հը՞, — ասավ կոմսը. — տղամարդու պես ձի է քշում։

— Ինչպե՞ս չզարմանալ, համարձակ է, ճարպիկ։

— Իսկ Նիկոլաշան ո՞ւր է։ Լյադովի բլրի գլխի՞ն է, ի՞նչ է, — շարունակ շշնջալով հարցնում էր կոմսը։

— Այո-ս։ Նրանք լավ գիտեն, թե որտեղ պիտի կանգնել։ Այնպես լավ քշել գիտեն, որ ես ու Դանիլան մեկ-մեկ զարմանում ենք, — ասում էր Սեմյոնը, լավ իմանալով, թե ինչպես կարելի է հաճոյանալ պարոնին։

— Լա՞վ է քշում հա։ Իսկ որձ ձիու վրա ինչպե՞ս, հը՞։

— Կատարյալ պատկեր։ Մի քանի օր առաջ Զավարզինի քոլերից մի աղվես փախցրինք։ Նրանք սկսեցին ձին քշել խիտ անտառից, ուրի՞շ բան էր — ձին հազար ռուբլի արժի, իսկ նստողը գին չունի։ Հատը չկա՞։

— Չկա... — կրկնեց կոմսը, ըստ երևույթին ափսոսալով, որ այդպես շուտ վերջացավ Սեմյոնի խոսքը։ — Չկա՞, —

տասով նա կիսամուշտակի փեշերը ետ ծալելով և քթախոտի տուփը հանելով։

— Մի քանի օր առաջ, երբ մունդիրով ու շքանշաններով պատարագից դուրս եկանք, Միխայիլ Սիդորիչը...— Սեմյոնը խոսքը կիսատ թողեց, լսելով հանդարտ օդի մեջ պարզ հընչող երկու-երեք շան ձայն։ Նա, գլուխը թեքելով, ականջ դրեց և լուռ սաստեց կոմսին։— Գայլի ընտանիք են գտել...— շշնջաց նա,— ուղիղ Լյադովի կողմը գնացին։

Կոմսը ժպիտը դեռ դեմքին նայում էր առջևի տարածությանը և առանց քթախոտ քաշելու, տուփը բռնել էր ձեռին։ Շների հաչոցից հետո լսվեց Դանիլայի փողի թավ ձայնը, որ նշան էր, թե գայլ են հետապնդում։ Շների ոհմակը միացավ առաջին երեք շանը, և լսվում էր, թե ինչպես էին կլանչում շները, այն առանձին կլանչոցով, որ ցույց է տալիս, թե շները գայլ են հետապնդում։ Շնավարներն այլևս քիս չէին տալիս, այլ հա՛յ-հո՛ւյ էին կանչում, և բոլոր ձայների մեջ ջոկվում էր Դանիլայի ձայնը՝ մերթ թավ, մերթ սուր ու բարակ։ Դանիլայի ձայնը կարծես լցնում էր անտառը և այնտեղից դուրս գալով՝ հնչվում էր հեռու դաշտում։

Մի քանի վայրկյան լուռ լսելով, կոմսն ու նրա ձիապանը համոզվեցին, որ շները բաժանվեցին երկու խմբի. մեկը նրանցից, որ առանձնապես կատաղի էր կլանչ-կլանչում, սկսեց հեռանալ, մյուս խումբն անցավ անտառի երկարությամբ՝ կոմսի մոտով, և այդ խմբի ետևից էլ լսվում էր Դանիլայի հա՛յ-հուլը։ Բարակների այդ երկու խմբերն էլ մեկ միանում էին, մեկ բաժանվում, բայց երկուսն էլ հեռանում էին։

Սեմյոնը շունչ քաշեց և կռացավ, որ շների թոկը կարգի բերի, որի մեջ խճճվել էր ջահել քերծեն. կոմսը նույնպես շունչ քաշեց և, նկատելով քթախոտի տուփը ձեռին է, բացեց ու մի պտղունց քթախոտ վերցրեց։ «Ետ կորի՛», բղավեց Սեմյոնը քերծեի վրա, որ անտառից դուրս էր եկել։ Կոմսը ցնցվեց և տուփը վայր գցեց։ Նաստասիա Իվանովնան ձիուց իջավ և տուփը վերցրեց։ Կոմսն ու Սեմյոնը նրան էին նայում։

Հանկարծ, ինչպես այդ հաճախ լինում է, որսին հետապընդողների ձայները մի ակնթարթում մուտեցան, կարծես հենց նրանց առջև էին շների հաչող բերանները և Դանիլայի հայհույը։

Կոմսը շուրջը նայեց և աջ կողմը նկատեց Միտկային, որ աչքերը շռած իրեն էր նայում և, գլխարկը բարձրացրած, ցույց էր տալիս՝ առաջ, մյուս կողմը գնալ։

— Հեռո՛ւ,— ճչաց նա մի այնպիսի ձայնով, որը ցույց էր տալիս, թե այդ խոսքը վաղուց արդեն տանջում էր նրան դուրս գալու համար և, շները բաց թողնելով, ձին քշեց դեպի կոմսը։

Կոմսն ու Սեմյոնը անտառի փեշից դուրս եկան և իրենց ձախ կողմը տեսան մի գայլ, որը թեթև շուռ գալով, հանդարտ ոստյունով ցատկոտում էր իրենցից դեպի ձախ՝ դեպի անտառածայրի թփուտը, ուր քիչ առաջ կանգնած էին իրենք։ Գազազած շները կլանչեցին և թոկը կտրելով, ձիերի ոտների կողքով ընկան գայլի ետևից։

Գայլը վազքը մի պահ դադարեցրեց, մեծաճակատ գլուխը, կրծքի հեղձուկ ունեցողի նման, շուռ տվեց դեպի շները և, նույնպես թեթև շուռ գալով, ցատկեց մի-երկու անգամ և պոչը թափ տալով, թաքնվեց անտառածայրի թփուտում։ Հենց նույն րոպեին անտառի հակառակ ծայրից, լացի նմանող կլանչոցներով մեկը մյուսի ետևից դուրս թափվեցին շները և ոհմակով դաշտի միջով նետվեցին այն կողմը, ուր սողոսկաց-թաքնվեց գայլը։ Շների ետևից տխլի թփերը ետ գնացին և երևաց Դանիլայի շագանակագույն, քրտինքից սևացած ձին։ Նրա երկար մեջքի վրա, դեպ առաջ թեքված կուչ եկած նստել էր Դանիլան՝ առանց գլխարկի, սպիտակ խռնված մազերով, որ թափված էին կարմրատակած ու քրտնած դեմքին։

— Ու-լու լո՛ւյ....— կանչում էր նա։ Երբ նա կոմսին տեսավ, նրա աչքերը փայլատակեցին կայծակի պես։

— Վ...— գոռաց նա, բարձրացրած որսամտրակով ըսպառնալով կոմսին։

— Գելին փախ... ինք... սրանք էլ որսկա՞ն են,— և կարծես նեղացած, վախեցած կոմսին խոսքի շարժանացնելով, նա կոմսի դեմ ունեցած իր ամբողջ կատաղությամբ խփեց շագանակագույն յաբուի ներս ընկած թաց կողերին ու սլացավ շների ետևից։ Կոմսը պատժվածի պես կանգնել շուրջն էր նայում և աշխատում էր ժպտալով կարեկցություն առաջ բերել Սեմյոնի մեջ դեպ իրեն։ Բայց Սեմյոնն արդեն անհայ-

տացել էր. նա թփերի մյուս կողմից ընկել էր գայլի ետևից։ Երկու կողմից նույնպես գազանին հետապնդում էին քերծե-ները։ Բայց գայլն անցավ թփերի միջով և ոչ մի որսորդ չկարողացավ նրան բռնել։

V

Մինչ այդ Նիկոլայ Ռոստովն իր տեղը կանգնած սպասում էր գազանին։ Որսին հետապնդողների հեռացող ու մոտեցող ձայներից, շների՝ իրեն ծանոթ հաչոցներից և շնավարների հեռացող, մոտեցող ու բարձրացող ձայներից նա զգում էր, թե ի՛նչ է կատարվում անտառի առանձնամասում։ Նա գիտեր, որ առանձնամասում կան ջահել և պառավ գայլեր. գիտեր, որ շները բաժանվել են երկու խմբի, որ ինչ-որ կողմի վրա որս են հալածում, և զգում էր, որ ինչ-որ անհաջողություն է պատահել։ Նա ամեն վայրկյան իր կողմում սպասում էր գազանին։ Նա հազար տեսակ ենթադրություններ էր անում, թե ինչպես և ո՛ր կողմից կգա գազանը և ինքն ի՛նչպես պիտի հալածի նրան։ Հույսը տեղի տվեց հուսահատության։ Մի քանի անգամ նա աղերսանքով դիմեց աստծուն, որ գայլը դուրս գա իր առաջ, նա աղոթում էր ջերմ ու ամոթահար զգացումով, ինչպես աղոթում են չնչին պատճառից սաստիկ հուզված մարդիկ. «Դե, քեզ համար ինչ արժի», — ասում էր նա աստծուն, «որ այդ բանն անես ինձ համար։ Գիտեմ, դու մեծ ես մեղք է այդ մասին քեզ խնդրել, բայց, ի սեր աստծո, այնպես արա, որ մեծ գայլն իմ դեմ գա և որպեսզի Կարայը քեռու աչքի առաջ, որ ահա նայում է այնտեղից, բռնի գազանի կոկորդից»։ Այդ կես ժամվա ընթացքում Ռոստովը հազար անգամ իր համառ, լարված ու անհանգիստ հայացքով նայեց անտառի եզերքներին, ձորի հեղեղատ լանջին և քեռու գլխարկին, որ հազիվ երևում էր թփերի ետևից՝ դեպի աջ։

«Ոչ, այդ բախտը ես չեմ ունենա», մտածում էր Ռոստովը, «իսկ ի՞նչ մեծ բան էր։ Չի լինի։ Ես բախտ չունեմ թե՛ թղթախաղում, թե՛ պատերազմում և թե՛ ամեն բանում»։ Աուստերլիցն ու Դոլոխովը պարզ, բայց արագ ցոլացին ու անցան նրա երևակայության մեջ։ «Միայն մի անգամ գոնե մեծ գայլ որսայի, էլ բան չեմ ուզում», մտածում էր նա, լարելով լսողությունն ու տեսողությունը դիտելով աջ ու ձախ և ունկընդրելով որսը հալածողների բոլոր, անգամ ամենաանշան ձայներին։

Նա կրկին նայեց դեպի աջ և այս անգամ տեսավ, որ ամայի դաշտով մի ինչ-որ բան իր կողմն է վազում։ «Ո՛չ, դա անկարելի բան է», մտածեց Ռոստովը ծանր հոգոցով, ինչպես հոգոց է քաշում մարդ երկար սպասածը կատարվելու միջոցին։ Հասավ մեծագույն երջանկության ժամը — բայց այնպես հասարակ անաղմուկ, անփայլ, առանց մի բանով նշանակալի դառնալու։ Ռոստովն իր աչքերին չէր հավատում, և նրա այդ կասկածը տևեց մի վայրկյանից ավելի։ Գայլն առաջ էր գալիս. նա ծանրությամբ թռավ իր ճանապարհին գտնվող հեղեղատից։ Դա մի պառավ, սպիտակ մեջքով գազան էր, կուշտ կարմրավուն փորով։ Նա վազում էր առանց շտապելու, ըստ երևույթին համոզված, որ իրեն ոչ ոք չի տեսնում։ Ռոստովը շունչը պահած նայեց շներին։ Նրանք պառկոտած ու նստոտած էին, ոչ գայլն էին տեսնում, ոչ էլ բան էին հասկանում։ Ծեր Կարայը, գլուխը թեքած և դեղին ատամները շխկացնելով լու էր որոնում ետևի ազդրերում։

— Օ՜, լո՜, լո՜ւ, — շշուկով, շրթունքներն ուռցնելով ասավ Ռոստովը։ Շներն ականջները սրած՝ ցատկեցին տեղներից։ Կարայը ազդրը քորեց վերջացրեց ու կանգնեց, ականջները խլշելով և թեթևակի թափահարելով պոչը, որից կախված էին ավելորդ բրդի կտորներ։

— Բաց թողնե՞լ թե չէ, — ասում էր ինքն իրեն Նիկոլայն այն րոպեին, երբ գայլն անտառից հեռանալով՝ մոտենում էր իրեն։ Հանկարծ գայլի դեմքն այլափոխվեց. նա ցնցվեց, տեսնելով էլի, երևի երբեք չտեսած մարդկային այնպիսի աչքեր, որ ուղղված էին իրեն, և գլուխը թեթևակի դեպի որսորդը դարձնելով, կանգ առավ։ — Ե՞տ գնամ թե առաջ։ Է՛, միևնույն է, առաջ... երևում է, — կարծես ասավ նա ինքն իրեն և առանց ետ նայելու վազեց դեպի առաջ՝ թեթև, ազատ, բայց վճռական վազքով։

— Ու-լու-լո՜ւ... — գոչեց Նիկոլայը կարծես ոչ սեփական ձայնով և նրա ընտիր ձին գլխապատառ, ջրափոսերի վրայով, սլացավ գայլի դեմ. է՛լ ավելի արագ առաջ նետվեցին շները։ Նիկոլայն իր ձայնը չէր լսում, չէր զգում, որ ինքն աղ-

շավում է, չէր տեսնում ո՛չ շներին, ո՛չ էլ այն տեղերը, որ-տեղից անցնում էր. նա տեսնում էր միայն գայլին, որ իր վազքն արագացնելով, առանց ուղղությունը փոխելու, վազում էր ձորակով։ Շներից առաջինը գազանին մոտեցավ խայտախար, լայնագավակ Միլկան։ Մի քիչ էլ, մի քիչ էլ.... և ահա նա հասավ գազանին։ Բայց գայլը փոքր-ինչ խեթ նայեց նրան, և Միլկան փոխանակ հարձակվելու, ինչպես այդ միշտ անում էր նա, հանկարծ, պոչը բարձրացնելով, սկսեց հենվել առաջին ոտներին։

— Ու-լու-լո՜ւ...— գոռում էր Նիկոլայը։

Կարմիր Լյուբիմը ցատկեց Միլկայի ետևից, սրընթաց նետվեց գայլի վրա և բռնեց ետի ոտների ազդրերից, բայց նույն վայրկյանին վախեցած մյուս կողմ թռավ։ Գայլը նստեց, ատամները կափկափեց և կրկին վեր կենալով, առաջ վազեց. շները նրան հետևում էին մի երկու արշինի վրա, բայց չէին մոտենում։

«Փախչելու է։ Ոչ, դա անհնարին է», մտածեց Նիկոլայը, շարունակելով ճչալ իր խռպոտած ձայնով։

— Կարա՛յ ու-լու-լո՜ւ,— կանչում էր նա, աչքերով որոնելով ծեր քերծեին, որ իր միակ հույսն էր։ Կարայն իր բոլոր ծեր ուժերը լարած, ձգված, որքան կարելի էր, աչքերը գայլին հառած, դժվարությամբ վազում էր գայլից հեռու, ցանկանալով կտրել նրա առաջը։ Բայց գայլի արագ վազքից և շան դանդաղ ոստյուններից նկատվում էր, որ Կարայի հաշիվը սխալ էր։ Նիկոլայն արդեն իր առջև մոտիկ տեսնում էր այն անտառը, ուր հասնելով, գայլը պիտի չքանար հավանորեն։ Առջևում երևացին շներ և մի որսորդ, որ ձին քշում էր համարյա թե գայլի դեմ։ Դեռ հույս կար։ Նիկոլային անծանոթ մի ջահել մուգ շագանակագույն երկար քերծե, երևի օտար ոհմակից, առջևից շեշտակի թռավ դեպի գայլը և գրեթե գետին գցեց նրան։ Գայլն արագությամբ, որ հազիվ կարելի էր սպասել, բարձրացավ տեղից ու հարձակվեց դեպի շագանակագույն քերծեն, ատամները շխկացնելով,— և քերծեն արնաշաղախ, կողքը պատրոված, սաստիկ կլանչոցով ընկավ, գլուխը հողի մեջ թաղելով։

— Կարայուշկա՜։ Սիրելի՜ս. հասի՜ր...— լաց էր լինում Նիկոլայը։

Ազդրերից կախ ընկած ավելորդ բրդերով այդ ծեր քեր-

ծեն շնորհիվ կատարված միջադեպի, գայլի ճանապարհը կտրելով, արդեն հինգ քայլ էր մնում, որ նրան հասներ։ Վտանգն զգալով կարծես, գայլն աչքերը խեթեց Կարայի վրա և. պոչն ավելի ևս ոտների արանքը կոխելով, ավելի արագացրեց վազքը։ Բայց այդ միջոցին Նիկոլայը նկատեց, որ Կարային ինչ-որ բան պատահեց, նա մի ակնթարթում գայլի շալակն ելավ և նրա հետ միասին գլուխկոնծի տալով, ընկավ առջևի ջրաքաշը։

Այն րոպեին, երբ Նիկոլայը ջրի փոսում տեսավ գայլի հետ թավալվող շներին, որոնց տակից երևում էր գայլի սպիտակավուն բուրդը, նրա ձգված ետևի ոտը և, կուչ ածած ականջներով, վախեցած ու շնչասպառ գլուխը (Կարայը բռնել էր նրա բկից), այդ րոպեն — ամենաերջանկագույն րոպեն էր Նիկոլայի կյանքում։ Նա արդեն թամբից բռնել էր, որ ցած իջնի ու գայլին սպանի, երբ հանկարծ շների այդ խմբի միջից գայլը գլուխը դուրս հանեց, և ապա առաջին ոտները դրեց փոսի եզրին։ Գայլն ատամները կափկափեց (Կարայը թողել էր նրա բուկը) ետևի ոտներով դուրս թռավ փոսից և, պոչը կուչ ածած, նորից շներից բաժանվելով, առաջ անցավ։ Կարայը ցցված բիզ-բիզ մազերով, ըստ երևույթին, վնասված կամ վիրավորված, դժվարությամբ դուրս եկավ փոսից։

— Տեր աստված, այս ինչու՞ այսպես եղավ,— հուսահատությամբ բացականչեց Նիկոլայը։

Քեռու որսկանը մյուս կողմից սրարշավ դուրս եկավ գայլի դեմ, և շները կրկին կանգնեցրին նրան։ Նորից շրջապատեցին։

Նիկոլայը, նրա ձիապանը, քեռին ու նրա որսկանը պտտվում էին գայլի շուրջը, ու-լու-լու կանչում, գոռում, ամեն վայրկյան պատրաստվելով իջնել, երբ գայլը նստում էր ետի ոտների վրա, և ամեն անգամ առաջ վազելով, երբ գայլն իրեն թափահարելով վազում էր դեպի անտառի արգելված մասը, որ պիտի փրկեր նրան։

Այս հետապնդումի դեռ սկզբին Դանիլան, ու-լու-լո՜ւ-ն լսելով՝ դուրս եկավ անտառի պռունկը։ Նա տեսավ, թե Կարայն ինչպես բռնեց գայլին, ուստի և ձին կանգնեցրեց, կարծելով թե ամեն բան վերջացած է։ Բայց երբ որսորդները ձիերից չիջան, գայլն իրեն թափահարեց և նորից պո՜ւկ։ Այդ ժամա-

նակ Դանիլան իր շագանակագույն ձին բաց թողեց ոչ թե դեպի գայլը, այլ ուղիղ դեպի արգելված անտառամասը այնպե՛ս, ինչպես կարայը, որ ուզում էր կտրել գազանի առաջը։ Շնորհիվ այդ ուղղության, նա գայլին մոտեցավ հենց այն միջոցին, երբ քեռու շները երկրորդ անգամ կանգնեցրին նրան։

Դանիլան արշավում էր անխոս. մերկացրած դաշույնը ձախ ձեռում բռնած և իր երկար մտրակով, որպես խուրձ ծեծելու շղթայով, խփում էր գայլի սեղմված կողերին։

Նիկոլայը Դանիլային չտեսավ ու չլսեց մինչև այն ժամանակ, երբ հենց իր կողքին ծանր հնալով չխորդաց շագանակագույնը, և նա լսեց մարմնի անկման ձայն և այդ միջոցին տեսավ, որ Դանիլան արդեն պառկած էր շների մեջ՝ գայլի ետևը, ու աշխատում էր նրա ականջներից բռնել։ Այժմ թե՛ շների, թե՛ որսորդների և թե՛ իր՝ գայլի համար, ակներև էր, որ ամեն ինչ վերջացած է։ Գազանն ականջները վախից կուչ ածած, աշխատում էր բարձրանալ, բայց շները չորս կողմից կիպ շրջապատել էին նրան։ Դանիլան, ընկած տեղից ելնելով, մի քայլ արավ և ամբողջ ծանրությամբ, կարծես պառկում էր հանգստանալու, ընկավ գայլի վրա ու բռնեց նրա ականջներից։ Նիկոլայն ուզեց սուրը խրել գայլի վիզը, բայց Դանիլան շշնջաց.— Հարկավոր չէ, կսարքենք,— և, դիրքը փոխելով, ոտը դրեց գայլի վզին։ Գայլի երախը կապեցին, կապեցին, կարծես սանձելով, ոտները թոկով կապկպեցին, և Դանիլան երկու անգամ գայլին շուռ ու մուտ տվեց։

Բոլորը երջանիկ, հոգնատանջ դեմքերով գայլը գցեցին փնչացնող ու խրտնող ձիու վրա և գայլի դեմ մոռացող ու վնգստացող շների ուղեկցությամբ տարան նրան այն տեղը, ուր բոլորը պետք է հավաքվեին։ Բոլորը մոտեցան և սկսեցին նայել գայլին, որն իր մեծաճակատ գլուխը կախ գցած, փայտը բերնին, խոշոր ապակեփայլ աչքերով նայում էր իրեն շրջապատող շների ու մարդկանց այդ բազմության։ Երբ նրան ձեռ էին տալիս, նա կապած ոտները ցնցելով, վայրագորեն և դրա հետ միաժամանակ հանդարտ նայում էր բոլորին։ Կոմս Իլյա Անդրեյիչը նույնպես եկավ և ձեռ տվեց գայլին։

— Օ՜, ինչ մե՜ծն է,— ասավ նա։— Մեծ է, հը՞,— հարցրեց նա Դանիլային, որ կանգնած էր մոտը։

— Մեծ է, ձերդ պայծառափայլություն,— ասավ Դանիլան, շտապ գլխարկը հանելով։

Կոմսը հիշեց անփութորեն բաց թողած գայլին և իր ընդհարումը Դանիլայի հետ։

— Բայց դու բարկացած ես, բարեկամս,— ասավ կոմսը։

Դանիլան ոչինչ չասավ. նա միայն ամոթխածությամբ ժպտաց մանկական-հեզ և դուրեկան ժպիտով։

VI

Մեր կոմսը գնաց տուն. Նատաշան ու Պետյան խոստացան իսկույն ետ վերադառնալ։ Որսը շարունակվեց, որովհետև դեռ վաղ էր։ Կեսօրին շներին թողին ջահել խիտ անտառով ծածկված ձորը՝ հանգստանալու։ Նիկոլայը, հնձած արտում կանգնած, տեսնում էր իր բոլոր որսկաններին։

Նիկոլայի դիմաց կանաչուտ կար. այնտեղ տխլի ծառի տակ, փոսի մեջ մենակ կանգնել էր նրա որսկաններից մեկը։ Շներին հենց նոր թողել էին հանգստի, երբ Նիկոլայը լսեց իրեն ծանոթ Վոլտորնա շան ձայնը, որ ինչ-որ բանի ետևից էր ընկել։ Մյուս շները միացան նրան և, մերթ լուռ, մերթ կլանչելով, սկսեցին իրենց հետապնդումը։ Մի բոպե անց անտառի առանձնամասից աղվեսին վերաբերող ձայներ լսեցին, և շների ամբողջ ոհմակը Նիկոլայի մոտից պո՛ւկ գալով ու գետակն անցնելով վազեց կանաչուտի ուղղությամբ։

Նիկոլայը տեսավ թփոտ ձորի պոռոնկներով արշավող կարմիր գլխարկով բարակապաններին, տեսավ նույնիսկ շներին, և վայրկյան առ վայրկյան սպասում էր, որ այն կողմը, կանաչուտում կերևա աղվեսը։

Փոսում կանգնած որսկանը շարժվեց ու շներին բաց թողեց, և Նիկոլայն այդ բոպեին տեսավ մի կարմրավուն, կարճլիկ, տարօրինակ աղվես, որ բրդոտ պոչը ցցած, շտապ վազում էր կանաչուտով։ Շները քիչ էր մնում ետևից հասնեին։ Ահա և մոտեցան, ու աղվեսն սկսեց նրանց արանքում պտույտ գալ, հետզհետե արագացնելով այդ պտույտները, բրդոտ պոչն իր շուրջը պտտելով։ Այդ միջոցին մեկի սպիտակ շունը վրա պրծավ, նրան հետևեց մի սև շուն, և ապա ամեն ինչ իրար խառնվեց. շները չոկ չոկ՝ իրենց ետևները ցցած, աստղաձև

շրջապատեցին աղվեսին։ Սրարշավ եկան, շներին մոտեցան երկու որսկան. մեկը կարմիր գլխարկով, մյուսը՝ օտարը՝ կանաչ կափտանով։

«Սա ի՞նչ բան է», մտածեց Նիկոլայը. «Այդ որսկանը ո՞ր տեղից հայտնվեց։ Դա քեռու որսկանը չի»։

Որսկաններն աղվեսը խլեցին և երկար ժամանակ առանց նրան ձիուն կապելու, մնացին ոտքի վրա։ Նրանց մոտ սանձակապերով կանգնած էին թամբած ձիերը, իսկ շները պառկել էին։ Որսկանները ձեռներին թափահարելով ինչ-որ բան էին անում աղվեսի գլխին։ Քիչ հետո այնտեղից լսվեց փողի ձայն — կովի պայմանական ազդանշան։

— Դա Իլագինների որսկանն է, մեր Իվանի հետ կռվում է, — ասավ Նիկոլայի ձիապանը։

Նիկոլայը ձիապանին ուղարկեց քրոջն ու Պետյային իր մոտ կանչելու, իսկ ինքն շտապեց այնտեղ, ուր շնապանները հավաքում էին շներին։ Որսկաններից մի քանիսը վազում էին կռվի տեղը։

Նիկոլայը ձիուց իջավ և կանգնեց մոտեցող Նատաշայի ու Պետյայի շների մոտ, սպասելով տեղեկության, թե բանն ինչով կվերջանա։ Կռվող որսկանը ձիով, աղվեսը թամբից կապած անտառի պոնկից եկավ դեպի Նիկոլայը։ Նա դեռ հեռվից գլխարկը հանեց և սկսեց հարգալիր խոսել. բայց նա գունատ էր, շնչում էր հազիվհազ և դեմքը շարություն էր արտահայտում։ Նրա աչքը կապտած էր, բայց նա, հավանորեն, այդ չէր իմանում։

— Այդ ի՞նչ էիք անում այնտեղ, — հարցրեց Նիկոլայը։

— Ոնց չէ. մեր շների որսը նա ուզում է վերցնել։ Ախր չէ որ իմ քածը բռնեց։ Գնա՛ գանգատ արա։ Աղվեսն ուզում է խլի։ Իսկ ես նրան աղվես ցույց տվի։ Աղվեսը ա՛յ հրես գավակին։ Հը՛, էս էլ չե՞ս ուզում... — ասում էր որսկանը դաշույնը ցույց տալով և, հավանորեն, երևակայելով, թե տակավին թշնամու հետ է խոսում։

Նիկոլայը, որսկանի հետ չխոսելով, քրոջն ու Պետյային խնդրեց սպասել, և ինքը գնաց այնտեղ, ուր տեղի էր ունեցել այդ իլագինյան կռվապատճառ որսը։

Հալթող որսկանը գնաց միացավ որսկանների խմբին և

այնտեղ, համակրող հետաքրքիրներով շրջապատված, պատմեց իր սխրագործությունը։

Բանն այն էր, որ Իլագինը, որի հետ Ռոստովները դատ ու վեճ ունեին, որս էր անում սովորաբար Ռոստովներին պատկանող տեղերում, և այժմ, կարծես դիտմամբ, կարգադրել էր մոտենալ անտառի այն առանձնամասին, ուր որս էին անում Ռոստովները, և նույնիսկ թույլատրել էր, որ իր որսկանն ուրիշի շներով անի որսը։

Նիկոլայն Իլագինին երբեք չէր տեսել, բայց, ինչպես միշտ, իր դատողությունների և զգացումների մեջ միջին ճանապարհ չճանաչելով, և լսած լինելով այդ կալվածատիրոջ վայրագ ու ինքնակամ բնավորության մասին, ամբողջ հոգով ատում էր նրան ու նրան համարում էր ամենակատաղի թշնամին։ Նա այժմ հուզված-գրգռված, մտրակը ձեռին սեղմած գնում էր նրա մոտ, միանգամայն պատրաստ ամենավճռական ու վտանգավոր գործողություն սկսելու իր թշնամու դեմ։

Հազիվ նա անցել էր անտառի ներս ընկած մասը, երբ տեսավ իր դեմն եկող գեղեցիկ սև ձի հեծած, կուզբի կարաբուզով հաստլիկ պարոնին՝ երկու ձիապանի ուղեկցությամբ։

Թշնամու փոխարեն Նիկոլայը՝ հանձին Իլագինի՝ տեսավ մի վայելչատես, բարեկիրթ պարոնի, որ առանձին ցանկություն ուներ երիտասարդ կոմսին ծանոթանալու։ Մոտենալով Ռոստովին, Իլագինը գլխարկը քիչ բարձրացրեց ու ասավ, թե շատ ցավում է կատարված դեպքի համար, թե կկարգադրի որսկանին պատժել, որ իրեն թույլ է տվել հետապնդել օտար շների որսը, ու կոմսին խնդրում է ծանոթանալ և որսի համար առաջարկում է իր տեղերը։

Նատաշան, երկյուղ կրելով, որ եղբայրը կարող է որևէ վատ բան անել, հուզված՝ ձին քշում էր նրա ետևից։ Տեսնելով, որ թշնամիները բարյացակամ բարևեցին իրար, նա մոտեցավ նրանց։ Իլագինն այս անգամ գլխարկն ավելի վեր բարձրացրեց Նատաշայի աչքն ու հաճելի ժպիտով նկատեց, որ կոմսուհին դեպի որսորդությունն ունեցած իր սիրով ու իր գեղեցկությամբ նման է Դիանային, և որ կոմսուհու մասին ինքը շատ է լսել։

Իլագինն, իր որսկանի հանցանքը հարթած լինելու համար, թախանձագին խնդրեց Ռոստովին գալ իր որսատեղը,

որ գտնվում էր մի վերոտի վրա, որ պահել էր իր համար և որը, նրա ասելով, նապաստակներով լիքն էր։ Նիկոլայը համաձայնեց, և կրկնապատկված որսախումբն առաջ շարժվեց։

Իլագինի որսատեղը գնալու համար պետք էր անցնել դաշտերով։ Որսականները հավաքվեցին։ Տերերը գնում էին միասին։ Քեռին, Ռոստովը, Իլագինը գաղտուկ նայում էին միմյանց շներին, աշխատելով, որ այդ ոչ ոք չնկատի, ու անհանգիստ այդ շների միջև ախոյաններ էին փնտրում իրենց շներին։

Իլագինի ոհմակում իր գեղեցկությամբ Ռոստովին առանձնապես զարմացրեց մի փոքրիկ, պողպատյա մկաններով, սուր դնչով և դուրս ընկած աչքերով, կարմրախայտ քած շուն։ Նա լսել էր, որ Իլագինը ժիր, կրակոտ շներ ունի, և ահա հանձին այդ գեղեցիկ շան տեսնում էր Միլկայի ախոյանը։

Այդ տարվա բերքի մասին սկսված հանդարտ խոսակցության միջոցին (որ սկսել էր Իլագինը) Նիկոլայը ցույց տվեց նրան իր կարմրախայտ քած շունը։

— Լա՞վ շուն է, — ասավ նա անփույթ եղանակով։ — Ժի՞ր է։

— Սա՞։ Այո, սա ընտիր շուն է, լավ բռնում է, — անտարբեր ձայնով ասավ Իլագինն իր կարմրախայտ Երզայի մասին, որի համար նա մի տարի առաջ հարևանին տվել էր երեք ճորտ ընտանիք։ — Ուրեմն, կոմս, ձեր բերքն էլ լավ չի եղե՞լ, — շարունակեց նա սկսած խոսակցությունը։ Եվ քաղաքավարություն համարելով երիտասարդ կոմսին փոխհատույց լինել, Իլագինը նայեց նրա շներին և ընտրեց Միլկային, որ աչքին ընկավ իր լայն մեջքի ու գավակի շնորհիվ։

— Լա՞վ շուն է այս սևախալը, — լա՞վն է, — ասավ նա։

— Այո, ոչի՞նչ, վազ տալիս է, — ասավ Նիկոլայը։ «Հիմա դաշտով մի մեծ նապաստակ վազեր, որ ես քեզ ցույց տայի, թե սա ինչ շուն է», մտածեց նա և դառնալով իր ձիապանին, ասավ, թե մի ռուբլի կտա նրան, ով մի պառկած նապաստակ գտնի։

— Ես չեմ հասկանում, — շարունակեց Իլագինը, — թե ինչպես ուրիշ որսորդներ նախանձում են միմյանց որսի ու շների համար։ Ես, կոմս, իմ մասին պիտի ասեմ, որ ինձ ուրախացնում է, գիտե՞ք ի՞նչը, ա՛յ այսպես խմբով ճանապարհ գնալը... սրանից էլ լավ բան (նա կրկին կուզբի գլխարկը հանեց

նատաշայի առջև). իսկ ինձ համար միևնույն է, թե որքան մորթի կլինի։

— Դե, իհարկե՝։

— Ինձ համար նույնպես ամոթանք չէ, երբ ուրիշի շունը որս է գտնում, իսկ իմը՝ ոչ, իմն այն է՝ դիտել ու սքանչանալ, թե ինչպես է որսը հետապնդվում, այնպես չէ՞, կոմս։ Դրա համար էլ ես...

— Է՛յ, հասիր, — լսվեց այդ ժամանակ շնապաններից մեկի երկարաձիգ ձայնը։ Նա կանգնած էր հնձած արտի կիսաթմբի վրա, մտրակը բարձրացրած. մի անգամ էլ նա կրկնեց երկարաձիգ. — Հասի՞ր դրան, հասի՞ր (այդ կանչը և բարձրացրած մտրակը նշանակում էին, որ նա իր առջև պառկած նապաստակ էր տեսել)։

— Ա՜, կարծես բան է գտել, — անփութորեն նկատեց Իլագինը։ — Կուզեք, կոմս, շները բաց թողնենք։

— Այո, պետք է մոտենալ... կուզեք միասի՞ն, — պատասխանեց Նիկոլայը, նայելով Երզային և քեռու կարմիր Ռուգային, իր շան երկու ախոյաններին, որոնց հետ նա ոչ մի անգամ չէր փորձել իր շներին։ «Բայց վա՜յ թե իմ Միլկայի հոգին հանեն», մտածում էր նա քեռու և Իլագինի հետ գեպի նապաստակը գնալով։

— Մե՞ծ է, — հարցրեց Իլագինը, մոտենալով նապաստակ գտնող որսկանին և ոչ առանց հուզմունքի շուրջը նայելով, Երզային շվացրեց։

— Իսկ դո՞ւք, Միխայիլ Նիկանորիչ, — դիմեց նա քեռուն։

Քեռին առաջ էր գնում հոնքերը կիտած։

— Էլ ես ուր եմ խառնվում, ձերն է, — մաքուր գործ է, մարշ։ Ձեր շներին մի-մի գյուղ եք տվել, հազարանոցներ են. դուք ձերը փորձեցեք, իսկ ես կնայեմ։

— Ռուգա՛յ. բռնի՛, բռնի՛, — կանչեց նա։ — Ռուգայուշկա՜, — ավելացրեց նա, այդ նվազական անունով ակամա արտահայտելով իր քնքշությունն ու հույսը, որ դրել էր այդ կարմիր քերծեի վրա։ Նատաշան նկատեց և զգաց այդ երկու ծերերի ու իր եղբոր թաքցրած հուզմունքը և ինքն էլ հուզվեց։

Որսկանը մտրակը բարձրացրած կանգնած էր կիսաբլրի վրա, պարոնները քայլընթաց մոտեցան նրան. շները, որ քայլում էին դեմ ու դեմ, բավական հեռու, խոտորեցին ճանապար-

հր՝ նապաստակի հակառակ կողմը. որսկանները (ոչ պարոնները) նույնպես հեռանում էին։ Բոլորը շարժվեցին դանդաղ ու հանդարտ։

— Գլուխը ո՞ր կողմն է արած,— հարցրեց Նիկոլայը հարյուր քայլի վրա մոտենալով որսը նկատող որսկանին։

Որսկանը դեռ չէր պատասխանել, երբ նապաստակը, կանխազգալով վաղվա առավոտի սառնամանիքը, վեր թռավ պառկած տեղից։ Քերծեների ոհմակը խմբով, ոռնոցով, լեռն ի վար ընկավ նապաստակի ետևից։ Թոկերով չկապված բարակներն ամեն կողմից ընկան քերծեների վրա ու նապաստակի ետևից։ Դանդաղորեն շարժվող այդ բոլոր որսկանները, բարակապանները, «կանգնի՜» գոչյունով, բարակների առաջը կտրելով, «հայ-հո՜ւյ» կանչելով և շներին քիս տալով, վազում էին դաշտի միջով։ Հանդարտ Իլագինը, Նիկոլայը, Նատաշան ու քեռին, իրենք էլ չիմանալով ո՛ւր և ի՛նչպես, թռչում էին ձիով, տեսնելով միայն շներին ու նապաստակին, և վախենալով, որ կարող են գեթ մի ակնթարթ աչքաթող անել հետապնդումը։ Նապաստակը մեծ էր ու ժիր։ Վեր թռչելով, նա իսկույն չվազեց, այլ ականջները խլշեց՝ ամեն կողմից եկող կանչերն ու ոտնաձայները լսելու։ Նա, առանց շտապելու, մոտ տասն անգամ ցատկեց, թույլ տալով, որ շները մոտենան իրեն, և վերջապես մի ուղղություն ընտրելով ու վտանգը գիտակցելով, ականջները կպցրեց վզին ու սլացավ։ Նա պառկած էր ծղոտների վրա, բայց առաջը կանաչ էր և մի քիչ ճահճոտ։ Նապաստակին նկատած երկու շունը, որ ամենից մոտիկ էին, ամենից առաջ էլ ընկան նապաստակի ետևից, բայց նրանք մի փոքր տեղ հազիվ էին անցել, երբ Իլագինի կարմրախայտ Երզան դուրս թռավ նրանց ետևից ու նապաստակի պոչը նշան բռնած, սկսեց սոսկալի արագությամբ հետապնդել նրան, և, կարծելով թե այդ պոչը բռնել է արդեն, թավալգլոր ընկավ գետնին։ Նապաստակը մեջքն ուռցրեց և էլ ավելի արագությամբ առաջ նետվեց։ Երզայի ետևից երևաց լայնագավակ սևախալ Միլկան ու արագ վազելով հասնում էր նապաստակին։

— Միլուշկա՛, սիրելի՛ս,— լսվեց Նիկոլայի հաղթական ձայնը։ Թվում էր, թե Միլկան իսկույն կհասնի և կբռնի նապաստակին, բայց նա հասավ ու առաջ անցավ։ Նապաստակը նրստեց։ Կրկին վրա հասավ գեղեցիկ Երզան և դունչը մոտեցրեց

նապաստակի հենց պոչին, աշխատելով կարծես, որ չսխալվի ու ետևի ազդրից բռնի։

— Երզանկա, սիրելիս,— լսվեց Իլագինի լալկան, փոխված ձայնը։ Երզան նրա աղերսը չլսեց։ Հենց այն րոպեին, երբ արդեն սպասվում էր, թե ահա նապաստակին կբռնի, նա սլկվեց և ընկավ խոզանի ու կանաչուտի միջակը։ Եվ Երզան ու Միլկան, ինչպես կառքի լծած զույգ ձիեր, հավասարվեցին ու սկսեցին հասնել նապաստակին. միջակն օգնեց նապաստակին, շներն այնքան արագ չէին մոտենում։— Ռուգա՛յ. Ռուգայուշկա՜։ Մաքուր գործ է, մա՛րշ,— լսվեց այդ ժամանակ մի ուրիշ ձայն ևս, և քեռու կարմիր սապատավոր քերծե Ռուգայը, ծրգվելով ու մեջքն ուռցնելով, հավասարվեց առաջին երկու շանը, ապա առաջեց նրանց, սաստիկ արագությամբ թռավ նապաստակի գլխի վրայից, դուրս բերեց նրան միջակից դեպի ճահճուտը, մի անգամ ևս, ծնկահար ցեխի միջով, արագությամբ առաջ նետվեց, և մեկ էլ այն տեսան, թե ինչպես նա թավալգլոր, մեջքը ցեխոտելով, գլորվեց նապաստակի հետ միասին։ Շներն աստղաձև շրջապատեցին նրան։ Մի րոպեից բոլորն արդեն կանգնած էին խմբված շների մոտ։ Միայն երջանիկ քեռին իջավ ձիուց և նապաստակի ետևի թաթերը կտրեց։ Ապա նապաստակին թափ տալով, որ արյունը քամվի, նա հանգիստ աչք ածեց շուրջն ու սկսեց խոսել, ինքն էլ չիմանալով ի՛նչ և ո՛ւմ հետ.— Այ, սա հասկանում եմ, կեցցե՛, մա՛րշ... ա՛յ շունը... ա՛յ թե հաղթե՛ց բոլորին, և՛ հազարանոցներին, և՛ մանեթանոցներին — մա՛րշ,— խոսում էր նա շնչասպառ, կատաղությամբ շուրջը նայելով, կարծես մեկին հայհոյելով, կարծես բոլորն էլ նրա թշնամիներն էին, բոլորն էլ վիրավորել էին իրեն, և միայն այժմ վերջապես իրեն հաջողվեց արդարանալ։— Ահա՛ քեզ և հազարանոցներ — մաքուր գործ է, մարշ։

— Ռուգայ, ա՛ռ թաթերը,— ասավ նա նապաստակի կտրած ցեխոտ թաթը շանը գցելով.— արժանի ես. մաքուր գործ է, մա՛րշ։

— Նա թուլացել է. երեք անգամ մենակ ընկավ որսի ետևից,— ասում էր Նիկոլայը նույնպես ոչ ոքին չլսելով ու հոգ չտանելով՝ իրեն լսո՞ւմ են, թե ոչ։

— Է, դա ի՞նչ բան է որ, առաջը կտրելք, — ասում էր Իլագինի ձիապանը։

— Այո, երբ որսը ճանապարհը խոտորում է, այդ ժամանակ ամեն մի թագի կարող է բռնել, — ասում էր նույն այդ ժամանակ Իլագինը՝ վազքից ու հուզմունքից կարմրած դեմքով։ Միևնույն ժամանակ Նատաշան էլ, շնչակտուր, ուրախությունից ու հիացմունքից այնպես էր ծղրտում, որ մարդու ականջներում ձայն էր տալիս։ Նա իր այդ ծղրտոցով արտահայտում էր այն, ինչ արտահայտում էին մյուս որսկաններն իրենց միահամուռ զրույցով։ Եվ ծղրտոցն այնքան օտարոտի էր, որ Նատաշան ինքը կամաչեր այդ վայրենի ծղրտոցից և բոլորը կզարմանային, եթե դա լիներ մի ուրիշ ժամանակ։ Քեռին ինքը ժրորեն ու ճարպկությամբ նապաստակը կապեց ձիու թամբից, կախ գցեց գավակի վրայով, այսպիսով կարծես կշտամբելով բոլորին, և ընդունելով մի այնպիսի տեսք, որ ասես ոչ ոքի հետ խոսել անգամ չի ուզում, հեծավ իր բացշագանակագույն ձին ու առաջ անցավ։ Բոլորը, բացի Նրանից, տխուր ու վիրավորված, ցրվեցին և միայն բավական անց կարողացան վերականգնել իրենց նախկին կեղծ սառնասրտությունը։ Դեռ երկար նայում էին նրանք կարմիր Ռուգային, որ ցեխոտված սապատավոր մեջքով, վզի շղթան շխկացնելով, հաղթողի հանգիստ տեսքով գնում էր քեռու ձիու ոտների ետևից։

«Ես էլ մի այնպիսի շուն եմ, ինչ որ սրանք բոլորը, երբ բանը դեռ որսին չի վերաբերում։ Իսկ երբ սրա՞ պես՝ արդեն հեռո՞ւ կաց»։ Նիկոլային թվում էր, թե շան տեսքն այդ է ասում։

Երբ բավական անց, քեռին մոտեցավ Նիկոլային և խոսեց նրա հետ, Նիկոլայն իրեն շոյված զգաց, որ քեռին, այն բոլորից հետո՝ ինչ կատարվեց, դեռ արժանի է համարում հետը խոսել։

VII

Երեկոյան դեմ, երբ Իլագինը Նիկոլային հրաժեշտ տվեց, Նիկոլայն այդ ժամանակ տնից այնքան հեռու էր գտնվում, որ ընդունեց քեռու առաջարկը՝ որսը թողնել և գիշերել քեռու տանը, նրա Միխայլովկա գյուղում։

— Իսկ եթե գայիք ինձ մոտ, մաքուր գործ է, մա՛րշ, — ասավ քեռին, — ավելի լավ կլիներ։ — Տեսնում եք, եղանակը խոնավ է, — ասում էր քեռին, — մի քիչ կհանգստանայիք, իսկ փոքրիկ կոմսուհուն կտանեին եռանդակով։

Քեռու առաջարկն ընդունվեց. որսկան ուղարկեցին Օտրադնոյե՝ կառք բերելու, իսկ Նիկոլայը, Նատաշան և Պետյան միասին գնացին քեռու տունը։

Տան ծառայողներից հինգ հոգի, մեծ ու փոքր, դուրս թափվեցին շքամուտքը՝ պարոնին դիմավորելու։ Տասնյակ կանայք՝ պառավ, հասակավոր ու ջահել, գլուխները դուրս հանեցին ետին պատշգամբից՝ մոտեցող որսկաններին դիտելու։ Նատաշային, իբրև աղջիկ-պարոնի ձիու վրա տեսնելով, քեռու ճորտերի հետաքրքրությունն այնտեղ հասավ, որ շատերը, նրա ներկայությունից չքաշվելով, մոտեցան նրան, նայեցին նրա աչքերին և հենց նրա առջև սկսեցին դիտողություններ անել նրա մասին, իբրև մի ցուցանքի, որ մարդ չի և չի կարող լսել ու հասկանալ այն, ինչ ասում են իր մասին։

— Արինկա, մի տես ո՞նց է կողքանց նստել։ Ինքը նստել է, իսկ փեշերը գնում-գալիս են... Տե՛ս, փչելու բան էլ կա։

— Ոյ, հողն իմ գլխին, դանակ էլ ունի...

— Տե՛ս թուրքի աղջկան։

— Էդ ո՞նց է որ գլխկոնձի չես տվել, — ասավ այդ կանանցից ամենահամարձակը, արդեն ուղիղ Նատաշային դիմելով։

Իր փայտաշեն, այգով շրջապատված տան մուտքի առջև քեռին ձիուց իջնելով և իր տանու մարդկանց նայելով, հրամայողաբար պատվիրեց, որ ավելորդ մարդիկ հեռանան և որ ամեն պատրաստություն տեսնվի՝ հյուրերին ու որսախմբին ընդունելու համար։

Բոլորն իսկույն վազեցին այս ու այն կողմ։ Քեռին Նատաշային իջեցրեց ձիուց և ձեռից բռնած առաջնորդեց պատշգամբի տախտակե խարխուլ աստիճաններով։ Տունը, որի գերանակապ պատերն անսվաղ էին, այնքան էլ մաքուր չէր. չէր երևում, որ տանն ապրողները հոգ տարած լինեին, որ կեղտոտ բիծ չլիներ, բայց անտերություն էլ չէր նկատվում։ Սրահում թարմ խնձորի հոտ էր գալիս, իսկ պատերին կախված էին գայլի ու աղվեսի մորթիներ։

Նախասենյակի միջով քեռին իր հյուրերին առաջնորդեց

փոքրիկ դահլիճը, ուր կային ծալովի և կարմիր աթոռներ, ապա՝ հյուրասրահը, ուր դրված էր կեչուց շինված մի բոլորակ սեղան ու բազմոց, հետո՝ կաբինետը, որտեղ աչքի էին ընկնում մի պատռված բազմոց, մաշված մի գորգ և Սուվորովի, տանտիրոջ հ ր, մոր ու իր պատկերները։ Ինքը նկարված էր զինվորական մունդիրով։ Կաբինետում զգացվում էր ծխախոտի ու շների սուր հոտ։ Այդտեղ քեռին խնդրեց հյուրերին նստել և տեղավորվել ինչպես իրենց տանը, իսկ ինքը դուրս գնաց։ Ռուգայը, դեռևս չմաքրված մեջքով, մտավ կաբինետ, պառկեց բազմոցի վրա և սկսեց լեզվով ու ատամներով մաքրել իրեն։ Կաբինետից սկսվում էր միջանցքը, ուր երևում էին պատռված վարագույրներով պարտակներ (շիրմաներ), որոնց ետևից լսվում էր կանացի ծիծաղ ու փսփսոց։ Նատաշան, Նիկոլայն ու Պետյան հանվեցին ու նստեցին բազմոցի վրա։ Պետյան հենվեց ձեռին ու իսկույն քնեց։ Նատաշան ու Նիկոլայը նստած էին անխոս։ Նրանց դեմքերն այրվում էին։ Նրանք շատ քաղցած և շատ ուրախ էին։ Նրանք նայեցին միմյանց (որսից հետո, սենյակում, Նիկոլայն ավելորդ էր համարում իր տղամարդկային գերազանցությունը ցուցահանել քրոջ առջև), Նատաշան եղբորն աչքով արավ, և երկուսն էլ փոքր-ինչ զսպելով իրենց, հանկարծ բարձրաձայն ծիծաղեցին, չկարողանալով դեռևս մի պատրվակ գտնել իրենց ծիծաղի համար։

Փոքր անց քեռին ներս մտավ կազակինով, կապույտ անդրավարտիքով և կարճավիզ կոշիկներով։ Եվ Նատաշան զգաց, որ հենց այդ կոստյումը, որը նա՝ զարմանքով ծիծաղը շուրթերին տեսել էր քեռու հագին իրենց տանը՝ Օտրադնոյում, — իսկական կոստյում էր և ոչնչով պակաս չէր սյուրտուկից ու ֆրակից։ Քեռին նույնպես ուրախ էր. նա ոչ միայն չվիրավորվեց քրոջ ու եղբոր ծիծաղից (նա մտքովն անգամ անցնել չէր կարող, որ կարող են ծիծաղել իր կյանքի վրա), այլ ինքն էլ միացավ նրանց անառիթ ծիծաղին։

— Ա՛յ քեզ ջահել կոմսուհի, մաքուր գործ է, մա՞րշ, — նմանդ չկա, — ասավ նա մի երկար ծխամորճ Ռոստովին տալով, և մի ուրիշ կարճ կտրած ծխամորճ իր երեք մատների արանքը դնելով։ — Ամբողջ օրը ձի է քշել, որ տղամարդն էլ չէր դիմանա, իսկ սրա փույթն էլ չի։

Շուտով, քեռու գալուց հետո, դուրս բաց արավ մի, ինչպես կարելի էր եզրակացնել ոտների ձայնից, ըստ երևույթին բոբիկ աղջիկ, և մատուցարանը ձեռին ներս մտավ մոտ 40 տարեկան մի հաստլիկ, կարմրադեմ, գեղեցիկ կին՝ բոխախով ու լիքկարմիր շուրթերով։ Նա հյուրընկալի գրավիչ արտահայտությունն աչքերում ու շարժումների մեջ, աչք ածեց հյուրերին և սիրալիր ժպիտով հարգանքով գլուխ տվեց նրանց։ Չնայած նրա արտասովոր հաստությանը, որ նրան ստիպում էր փորն ու կուրծքը դուրս ձգել և գլուխը ետ պահել, այդ կինը (քեռու տնտեսուհին) ման էր գալիս չափազանց թեթև։ Նա մոտեցավ սեղանին, մատուցարանը ցած դրեց և իր սպիտակ, փափլիկ ձեռներով ճարպկորեն մեկը մյուսի ետևից սեղանի վրա դրեց շշեր, ակռատ և ուրիշ ուտելիքներ։ Վերջացնելով այդ, նա ետ քաշվեց ու ժպիտը դեմքին կանգնեց դռան մոտ։ «Ահա՛ և ես։ Հիմա հասկացա՞ր ո՛վ է քեռիդ», ասում էր նրա տեսքը Ռոստովին։ Ինչպես չհասկանալ. ոչ միայն Ռոստովը, այլև Նատաշան հասկացավ քեռուն՝ թե՛ նրա կիտած հոնքերի նշանակությունը, թե՛ այն երջանիկ, ինքնագոհ ժպիտը, որ թեթևակի կնճռեց նրա շուրթերն այն միջոցին, երբ Անիսա Ֆեոդորովնան ներս մտավ։ Մատուցարանում կար՝ համեմած օղի, օշարակ, սունկ, սև ալյուրից պատրաստած խմորեղեն, ծոր ու հաց-մեղր, խնձոր, հում ու բոված ընկույզ և գոպինաղ, Ապա Անիսա Ֆեոդորովնան բերեց մեղրով ու շաքարով եփած մուրաբաներ, ապխտած միս և հենց նոր տապակած հավ։

Այդ բոլոր մրգերն ու մուրաբաները Անիսա Ֆեոդորովնայի պատրաստածն էին։ Այդ բոլորից էլ երևում էր Անիսա Ֆեոդորովնայի համն ու հոտը։ Բոլորն էլ Անիսա Ֆեոդորովնայի ժպիտի նման թվում էին հյութեղ, մաքուր, սպիտակ ու հաճելի։

— Կերեք, օրիորդ-կոմսուհի, — ասում էր նա Նատաշային, մատուցելով մերթ այս, մերթ այն ուտելիքը։

Նատաշան ամեն բան ուտում էր, և նրան թվում էր, թե այդպիսի թխվածքներ, այդպիսի բազմատեսակ մուրաբաներ, այդպիսի գոպինաղ և այդպիսի հավ երբեք և ոչ մի տեղ ո՛չ չեսել է, ո՛չ էլ կերել։ Անիսա Ֆեոդորովնան դուրս գնաց։

Ռոստովը քեռու հետ ընթրիքի վրա բալոզի (բալի հյութով պատրաստած օղի) խմեցին ու սկսեցին խոսել ան-

ցած ու ապագա որսերի մասին, Ռուգայի և Իլագինի շների մասին։ Նատաշան իր փայլուն աչքերով՝ բազմոցին նստած լսում էր նրանց։ Մի քանի անգամ նա ուզեց արթնացնել Պետյային՝ նրան ուտելու որևէ բան տալու, բայց Պետյան, չզարթնելով, ինչ-որ անհասկանալի խոսքեր էր ասում։ Նատաշան այնքան ուրախ էր, իրեն այնքան լավ էր զգում այդ իրեն համար նոր շրջապատում, որ վախենում էր, թե չլինի շուտով իր ետևից կառք ուղարկեն։

Պատահական կարճատև լռությունից հետո, ինչպես այդ միշտ պատահում է այն մարդկանց, որոնք առաջին անգամն են իրենց տանն ընդունում ծանոթներին, քեռին ասավ, կարծես ի պատասխան հյուրին զբաղեցնող մտքերի.

— Այսպես ահա քաշ եմ տալիս կյանքիս վերջին օրերը... կմեռնես — մաքուր գործ է,— ոչինչ էլ չի մնա։ Էլ ինչո՞ւ ենք մեղք գործում։

Այս խոսքերն ասելու ժամանակ քեռու դեմքը շատ լուրջ էր և անգամ գեղեցիկ։ Նրա խոսքերի վրա Ռոստովն ակամա հիշեց քեռու մասին հորից ու հարևաններից լսած բոլոր լավ կարծիքները։ Քեռին նահանգի մի ամբողջ շրջանում վայելում էր ազնիվ ու անշահախնդիր պարզամիտ մարդու համբավ։ Նրան կանչում էին ընտանեկան վեճեր քննելու, նրան կարգում էին կտակատար, նրան գաղտնիքներ էին վստահում, նրան ընտրում էին գատավոր և ուրիշ պաշտոնների. բայց նա համառորեն հրաժարվում էր հանրային ծառայությունից՝ աշունն ու գարունն անցնելով դաշտերում՝ իր կտրած յաբուի վրա, ձմեռը՝ տանը նստած, ամառը՝ խոտով ծածկված այգում պառկած։

— Քեռի, ինչո՞ւ չեք ծառայում։

— Ծառայում էի, թոռի։ Բանի պետք չեմ, մաքուր գործ է, մա՛րշ. խելքս ոչ մի բան չի կտրում։ Դա ձեր բանն է, իմ խելքը չի հասնի։ Ա՛յ, ինչ վերաբերում է որսին — դա ուրիշ բան է,— դա մաքուր գործ է, մա՛րշ։ Է՛յ, դուռը բաց արեք,— կանչեց նա,— ինչո՞ւ ծածկեցիք։

Միջանցքի ծայրի դուռը տանում էր հասարակ որսորդական սենյակը. (այսպես կոչվում էր որսորդ սպասավորների սենյակը)։

Քեռու ձայնի վրա լսվեց բորբոկ ոտների քստքստոց և

մի անտեսանելի ձեռ բաց արավ որսորդական սենյակի դուռը։ Միջանցքից պարզ լսվեց բալալայկայի հնչյուններ. նվագողն ըստ երևույթին այդ գործին հմուտ մի վարպետ էր։ Նատաշան վազուց էր ականջ դնում այդ հնչյուններին և այժմ գուրս եկավ միջանցքը՝ ավելի լավ լսելու։

— Նվագողն իմ Միտկան է, իմ կառապանը... Ես եմ առել այդ բալալայկան նրա համար, սիրում եմ, երբ նվագում է,— ասավ քեռին։

Քեռու տանն ընդունված էր, որ երբ նա որսից վերադառնում էր, հասարակ որսորդական սենյակում Միտկան նվագում էր իր բալալայկան։ Քեռին սիրում էր լսել այդ երաժշտությունը։

— Ի՞նչ լավ է. հավատա՛, շատ լավ է,— ասավ Նիկոլայը փոքր-ինչ ակամա արհամարհանքով. կարծես ամաչում էր խոստովանել, որ այդ հնչյունները հաճելի էին իրեն։

— Ի՞նչպես թե շատ լավ,— հանդիմանանքով ասավ Նատաշան, զգալով թե ինչ եղանակով արտահայտվեց եղբայրը։— Ոչ թե շատ լավ է, այլ հիանալի՛ բան է։

Նրան, ինչպես քեռու սունկերը, մեղրն ու օշարակը թվում էին ամենալավը աշխարհում, այնպես էլ այդ երգը այդ րոպեին նրան թվաց երաժշտական մի հրաշալիք։

— Էլի, էլի, խնդրում եմ,— ասավ Նատաշան դիմելով դեպի դուռը, երբ բալալայկան լռեց։ Միտկան լարեց և սկսեց կրկին եղևէջներ տալով, շախով կնտկնտացնել «Բարինյա» երգը։ Քեռին՝ գլուխը թեքած, հազիվ նկատելի ժպիտով, նրստել լսում էր։ Նվագած երգի եղանակը կրկնվեց հարյուր անգամ։ Մի քանի անգամ բալալայկան լարեցին, և կրկին թրթռացին միևնույն հնչյունները, որոնք ունկնդիրներին չէին ձանձրացնում, այլ ցանկություն էին առաջ բերում նորից ու նորից լսելու։ Անիսա Ֆեոդորովնան ներս մտավ և իր պարարտ մարմնով հենվեց դռան շրջանակին։

— Կհաճեք լսել, օրիորդ կոմսուհի,— դիմեց նա Նատաշային մի ժպիտով, որ շատ նման էր քեռու ժպիտին։— Նա՝ Միտկան շատ լավ է նվագում,— ասավ նա։

— Ա՛յ, այս մի տեղն այնպես չէ,— հանկարծ եռանդուն շարժումով ասավ քեռին։— Այստեղ պետք է տարածվել, տարածվել... մաքուր գործ է, մա՛րշ։

— Իսկ դուք մի՞թե նվագում եք,— հարցրեց Նատաշան Քեռին, առանց պատասխանելու, ժպտաց։

— Անիսյուշկա, մի տես կիթառի լարերը սարքի՞ն են։ Քանի ժամանակ է ձեռս չեմ առել, մաքուր գործ է, մա՛րշ, աչքաթող եմ արել։

Անիսա Ֆեոդորովնան իր թեթև քայլվածքով սիրով գնաց՝ իր տիրոջ պատվերը կատարելու և կիթառը բերեց։

Քեռին, ոչ ոքի չնայելով, փչեց կիթառի փոշին, ոսկրոտ մատներով խփեց նրա կափարիչին ու, լարելով, ուղղվեց բազկաթոռում։ Նա փոքր-ինչ բեմական ձևով՝ դուրս ցցելով ձախ արմունկը, բռնեց կիթառի կոթից մի փոքր վեր և Անիսա Ֆեոդորովնային աչքով անելով, սկսեց ոչ թե «Բարինյա»-ն, այլ վերցրեց մի պարզ, հնչեղ ակկորդ և համաչափ, հանգիստ, բայց հաստատ ու անչափ հանդարտ տեմպով նվագեց «По улице мостовой» հայտնի երգը։ Եվ երգի ելևէջների ու զուսպ ուրախության հետ միասին (որով շնչում էր Անիսա Ֆեոդորովնայի ողջ էությունը) Նիկոլայի ու Նատաշայի հոգում հրնչեց երգի եզանակը։ Անիսա Ֆեոդորովնան կարմրատակեց և, երեսը թաշկինակով ծածկելով, ծիծաղելով դուրս եկավ սենյակից։ Քեռին շարունակեց իր նվագը՝ եռանդուն ու խնամքով, փոխված ներշնչված հայացքով նայելով այն տեղին, որտեղից հեռացավ Անիսա Ֆեոդորովնան։ Նրա երեսի մի կողմը՝ ճերմակ բեղի տակ ինչ-որ թույլ ծիծաղ էր նկատվում. որը սաստկանում էր այն ժամանակ, երբ երգը տարածվում էր, տակտը արագանում և փոխանցման տեղում ինչ-որ բան էր ընդհատվում։

— Հիանալի է, հիանալի, քեռի. էլի՛, էլի՛,— բացականչեց Նատաշան հենց որ նա երգը վերջացրեց։ Նատաշան տեղից ցատկելով գրկեց քեռուն ու համբուրեց։— Նիկո՛լենկա, Նիկո՛լենկա,— ասում էր նա եղբորը նայելով և կարծես հարցնելով, թե սա ի՞նչ բան է։

Քեռու նվագը Նիկոլային նույնպես դուր եկավ։ Քեռին նվագեց երկրորդ անգամ։ Անիսա Ֆեոդորովնայի ժպտուն դեմքը նորից երևաց դռան մեջ, նրա ետևից երևացին և ուրիշ դեմքեր... Քեռին նվագում էր «Գնաց սառը աղբյուրը ջրի ու ասում է՝ աղջի կանգնի». կրկին մի ճարպիկ ելևէջով ընդհատեց երգը և ուսերը շարժեց։

— Դե, դե, սիրելի քեռի,— ասավ Նատաշան հեծեծանքով ու այնպիսի աղերսագին ձայնով, որ կարծես թե նրա կյանքը հենց դրանից էր կախված։ Քեռին տեղից վեր կացավ և այդ րոպեին նրա մեջ կարծես երկու մարդ կար. մեկը դրանցից լուրջ ժպտում էր մյուս ուրախի վրա, իսկ ուրախ մարդը ձեռով մի միամիտ շարժում արավ ու սկսեց պարել։

— Դե, աղջիկս,— բացականչեց քեռին նվագն ընդհատելով ու ձեռով անելով։

Նատաշան նետեց ուսերին գցած շալը, վազեց դեպի քեռին և ձեռները կողքերին կանթած ուսերով մի շարժում արավ և կանգ առավ։

Արդյոք այդ փոքրիկ՝ տարագիր ֆրանսուհու դաստիարակած կոմսուհին ո՞ւր, ինչպե՞ս և ե՞րբ էր իր մեջ նել ծծել ռուսական այն օդն ու ոգին, որով շնչում էր նա. որտեղից էր՝ յուրացրել նա այդ ձևերը, որոնց pas de châle-ը վաղուց արդեն վտարած պիտի լինեին։ Սակայն այդ ոգին ու ձևերը հենց այն անընդօրինակելի, անմբռնելի ոգին ու ձևերն էին, որ նրանից և սպասում էր քեռին։ Հենց որ Նատաշան կանգ առավ — հանդիսավոր, հպարտ ու խորամանկորեն ուրախ ժպտաց, Նիկոլային ու բոլոր ներկաներին տիրող երկյուղը՝ թե Նատաշան այն չի անի, ինչ հարկավոր է, անցավ, և նրանք արդեն հիանում էին նրանով։

Նատաշան այնքան ճիշտ, այնպիսի բնական շարժում արավ, որ Անիսա Ֆեոդորովնան իսկույն տվեց նրան այդ բանի համար անհրաժեշտ թաշկինակը՝ ծիծաղկոտ ու արտասվակալած աչքերով սկսեց նայել այդ բարալիկ, նազանի, իրեն օտար, մետաքսի ու թավիշի մեջ մեծացած կոմսուհուն, որը կարողանում էր ըմբռնել այն բոլորը, ինչ կար Անիսայի և Անիսայի հոր, մորաքրոջ և մոր մեջ և ամեն մի ռուս մարդու մեջ։

— Դե, կոմսուհի,— մաքուր գործ է, մա՛րշ,— ուրախ ծիծաղով ասավ քեռին պարը վերջացնելով։— Կեցցե՛, աղջիկս։ Մնում է քեզ համար մի լավ փեսացու ընտրել — մաքուր գործ է, մա՛րշ։

— Արդեն ընտրված է,— ասավ Նիկոլայը ժպտալով։

— Օ՜,— ասավ քեռին զարմացած, հարցական Նատաշային նայելով։ Նատաշան երջանիկ ժպիտը դեմքին գլխով արավ դրականորեն։

— Էն էլ ինչպիսի՞ — ասավ Նատաշան։ Բայց հենց որ նա այդ ասավ, նրա մեջ նոր մտքեր ու զգացումներ զարթնեցին։ «Ինչ էր նշանակում Նիկոլայի ժպիտը, երբ նա ասավ «արդեն ընտրված է»։ Նա ուրա՞խ էր այդ բանին, թե՞ ոչ։ Նա կարծես մտածում է, թե իմ Բալկոնսկին չէր հավանի և չէր հասկանա մեր այս ուրախությունը։ Ոչ. նա ամեն ինչ կհասկանար։ Տեսնես ո՞րտեղ է նա հիմա», մտածեց Նատաշան և նրա դեմքը լրջացավ հանկարծ։ Բայց դա տևեց միայն մի վայրկյան։ «Չպետք է մտածել, ես չպետք է մտածեմ այդ մասին», ասավ նա ինքն իրեն և, ժպտալով, կրկին նստեց քեռու կողքին, խնդրելով նրան նորից մի բան նվագել։

Քեռին նորից երգ ու վալս նվագեց. ապա, լռելով, հազաց ու երգեց իր սիրած որսորդական երգը։

Как со вечера пороша
Выпадала хороша...

Քեռին երգում էր այնպես, ինչպես ժողովուրդն է երգում, այն լիակատար ու միամիտ համոզումով, թե երգի ամբողջ նշանակությունը միայն խոսքերի մեջ է, թե եղանակն ինքն իրեն է գալիս և թե առանձին եղանակ չի լինում, իսկ եղանակն էլ միայն ներդաշնակության համար է։ Դրա համար էլ քեռու այդ անգիտակցական եղանակը. ինչպես թռչունի երգն է լինում, անսովոր կերպով լավ էր։ Նատաշան հիացած էր քեռու երգեցողությամբ։ Նա վճռեց այլևս տակտիկ նվագել լավորեն և միայն կիթառ նվագել։ Նա քեռուց խնդրեց նրա կիթառը և սկսեց երգի եղանակը հարմարեցնել։

Ժամը մոտ 10-ին Նատաշայի և Պետյայի ետևից եկան եռանդակներ, կառքեր ու երեք ձիավոր, որ ուղարկված էին նրանց որոնելու։ Կոմսն ու կոմսուհին չգիտեին ո՞ւր են նրանք և սաստիկ անհանգստացել էին, ինչպես հայտնեց եկող ձիավորներից մեկը։

Պետյային վերցրին և, մեռած մարմնի պես, տարան գրին եռանդակի մեջ։ Նատաշան ու Նիկոլայը կառք նստեցին։ Քեռին ծածկեց Նատաշային և բոլորովին նոր քնքշությամբ հրաժեշտ տվեց նրան։ Նա ոտով ճանապարհ դրեց նրանց մինչև կամուրջը և ձիավոր որսկաններին պատվիրեց՝ լապտերները ձեռներին գնալ առջևից։

— Գնաս բարով, թանկագին ազգականուհիս, — կանչեց քեռու ձայնը խավարի միջից. դա Նատաշային ծանոթ ձայնը չէր, այլ այն, որ երգում էր. «Как со вечера пороша» երգը։

Գյուղում, որից անցան, կարմիր կրակներ էին վառվում և ծխի ուրախ հոտ էր գալիս։

— Ի՞նչ հիանալի մարդ է այդ քեռին, — ասավ Նատաշան, երբ նրանք դուրս եկան մեծ ճանապարհը։

— Այո, — ասավ Նիկոլայը։ — Դու մրսո՞ւմ ես։

— Ոչ, ես ինձ շատ լավ եմ զգում։ Շա՞տ լավ եմ զգում, — նույնիսկ տարակուսանքով ասավ Նատաշան։

Նրանք երկար ժամանակ լուռ էին։ Մութ ու խոնավ գիշեր էր։ Ձիերը չէին երևում. լսվում էր միայն, թե ինչպես նրանց ոտները շրփում էին անտես ցեխի մեջ։

Ինչ էր պատահել այդ մանկական, զգայուն հոգուն, որ այնպես ագահորեն կլանում ու յուրացնում էր կյանքի բազմազան տպավորությունները։ Այդ ամենն ինչպե՞ս էր տեղավորվում նրա հոգում։ Բայց նա իրեն շատ երջանիկ էր զգում։ Տանը մոտենում էին արդեն, երբ նա հանկարծ երգեց «Как со вечера пороша» երգը, որի եղանակը նա ամբողջ ճանապարհին ուզում էր հիշել և վերջապես հիշեց։

— Հիշեցի՞ր, — ասավ Նիկոլայը։

— Դու հիմա ինչի՞ մասին ես մտածում, Նիկոլենկա, — հարցրեց Նատաշան։

Նրանք սիրում էին այդ բանը հարցնել իրար։

— Ե՞ս, — ասավ Նիկոլայը, մտաբերելով. — հա, գիտես ինչ, սկզբում ես մտածում էի, որ Ռուգայը՝ կարմիր շունը նման է քեռուն, և եթե նա մարդ լիներ, նա քեռուն դեռ էլի իր մոտ կպահեր, եթե ոչ որսարշավի, գոնե ընկերության համար, միշտ կպահեր։ Ի՞նչ լավ մարդ է քեռին։ Այնպես չէ՞։ Հը, իսկ դո՞ւ։

— Ե՞ս։ Լաց, կաց։ Այո, ես սկզբում մտածում էի, թե մենք ահա գնում ենք ու մտածում, որ մենք գնում ենք տուն, բայց աստված գիտի, թե դեպի ո՞ւր ենք գնում այս խավարի մեջ, և հանկարծ գանք ու տեսնենք, որ մենք Օտրադնոյում չենք, այլ մի կախարդական թագավորության մեջ։ Իսկ հետո մտածում էի... Ոչ, էլ ոչինչ չէի մտածում։

— Գիտեմ, երևի նրա մասին էիր մտածում, — ասավ

Նիկոլայը ժպտալով, ինչպես այդ զգաց Նատաշան նրա ձայնից։

— Ոչ,— պատասխանեց Նատաշան, թեև իսկապես նա գրա հետ միասին մտածում էր և իշխան Անդրեյի մասին և այն մասին, թե ինչպես քեռին նրան դուր կգար։— Մեկ էլ կրկնում եմ, ամբողջ ճանապարհին, թե ինչ լավ էր շարժվում Անկնուշկան, ի՞նչ լավ...— ասավ Նատաշան։ Եվ Նիկոլայը լսեց նրա հնչեղ, անառիթ, երջանիկ ծիծաղը։— Իսկ գիտես ի՞նչ,— ասավ Նատաշան հանկարծ,— գիտեմ, որ ես այլևս այլևս երջանիկ, հանգիստ չեմ լինի, ինչպես այժմ։

— Այ քեզ դատարկ բան, հիմարություն,— ասավ Նիկոլայը և մտածեց. «Ի՞նչ հիանալի աղջիկ է իմ Նատաշան։ Սրա նման մի այլ բարեկամ ես չունեմ և չեմ ունենա։ Ինչո՞ւ է սա ամուսնանում, սրա հետ միասին հենց այսպես ճանապարհ գնայինք»։

«Ի՞նչ հիանալի տղա է Նիկոլայը», մտածում էր Նատաշան։

— Ա՜խ, հյուրասրահում դեռ լույս կա,— ասավ նա, ցույց տալով տան լուսամուտները, որ գեղեցկորեն փայլում էին գիշերվա խոնավ թավշյա մթության մեջ։

VIII

Կոմս Իլյա Անդրեյիչը ազնվականների պարագլխի պաշտոնը թողեց, որովհետև դա կապված էր մեծամեծ ծախքերի հետ։ Բայց նրա գործերը դեռ կարգի չէին ընկնում։ Նիկոլայն ու Նատաշան հաճախ տեսնում էին ծնողների գաղտնի, անհանգիստ բանակցությունները, լսում էին շշուկներ Ռոստովների տոհմական հարուստ տունը և մերձմոսկովյան կալվածը ծախելու մասին։ Պարագլխի պաշտոնը թողած լինելով, այլևս կարիք չկար մեծ ընդունելություններ ունենալ, և Օտրադնոյի կյանքն անցնում էր ավելի խաղաղ, քան նախորդ տարիները. բայց ահագին տունը և հարակից շենքերը առաջվա պես լի էին մարդկանցով, առաջվա պես էլի սեղան էին նստում քսանից ավելի մարդ։ Դրանք բոլորը իրենց, տանու մարդիկն էին, գրեթե ընտանիքի անդամները, կամ թե այնպիսիները, որոնք, թվում էր թե, անպատճառ պետք է ապրեին կոմսի տանը։ Այդպիսի մարդկանցից էին երաժիշտ Դիմմլերն իր կնոջ հետ, Ֆոգելը՝ պարի ուսուցիչն իր ընտանիքով, պառավ օրիորդ Բելովան և էլի շատ ուրիշներ, այն է՝ Պետյայի ուսուցիչները, աղջիկների նախկին դաստիարակչուհին և մի խոսքով մարդիկ, որոնք լավ և ավելի ձեռնտու էին համարում ապրել կոմսի հետ, քան իրենց տանը։ Շատ գնացող-եկող չկար, ինչպես առաջ, բայց կյանքն էլի ընթանում էր առաջվա պես, և կոմսն ու կոմսուհին ուրիշ կերպ էլ չէին կարող երևակայել իրենց կյանքը։ Նույն որսորդությունն էր, դեռ Նիկոլայի կողմից ընդարձակված, ախոռում նույն 50 ձիերն էին՝ 15 կառապանով, նույն թանկագին ընծաներն էին անվանակոչություններին և նույն, ամբողջ գավառում հայտնի, հանդիսավոր ճաշկերույթները. նույն թղթախաղերն էին՝ կոմսական վիստին ու փասսոնը, որոնց խաղի ժամանակ կոմսն իր թղթերը բանում էր բոլորի աչքի առաջ և թույլ էր տալիս, որ հարևաններն ամեն օր հարյուրներով տանեն իրենից, հարևաններ, որոնք կոմսի հետ խաղալուն նայում էին այնպես, ինչպես ամենաձեռնտու կապալի վրա։

Կոմսը, ինչպես մի հսկայական ցանցում, խճճվել էր իր գործերի մեջ և աշխատում էր չհավատալ, որ խճճվել է, բայց ամեն քայլափոխին ավելի ու ավելի խճճվելով, զգում էր, որ այլևս ոչ չունի ո՛չ իրեն կաշկանդող կապերն կտրտելու, ո՛չ էլ զգույշ համբերությամբ նրանց արձակելու։ Կոմսուհուն սիրող սիրտն զգում էր, որ որդիները քայքայվում են, որ կոմսը մեղավոր չէ, որ նա չի կարող չլինել այնպիսին, ինչպիսին է, որ նա ինքն էլ տանջվում է (թեպետ և թաքցնում է այդ) իր և զավակների քայքայված վիճակի գիտակցությունից, և միջոցներ էր փնտրում գործին օգնելու։ Նրա՝ կանայի տեսակետով միայն մի միջոց կար դրա համար — այն, որ Նիկոլայն ամուսնանա մի հարուստ աղջկա հետ։ Նա զգում էր, որ դա վերջին հույսն էր, և եթե Նիկոլայը հրաժարվի այն աղջկանից, որ գտել էր ինքը, այն դեպքում ընդմիշտ պետք է հրաժարվել գործերը կարգի բերելու հնարավորությունից։ Այդ աղջիկը Ժյուլի Կարագինան էր, հիանալի, առաքինի ծնողների դուստր, որ մանկությունից ծանոթ էր Ռոստովներին, և այժմ հարուստ հարսնացու էր վերջին եղբոր մահվան պատճառով։

Կոմսուհին ուղղակի նամակ գրեց Կարագինային՝ Մոսկվա, առաջարկելով նրան աղջիկը տալ իր որդուն, և նրանից

ստացավ բարեհաճ պատասխան։ Կարագինան պատասխանում էր, թե ինքն իր կողմից համաձայն է և թե ամեն ինչ կախված է դստեր ցանկությունից։ Կարագինան Նիկոլային հրավիրում էր՝ գալ Մոսկվա։

Կոմսուհին մի քանի անգամ արցունքն աչքերին հայտնեց որդուն, որ հիմա, երբ իր երկու աղջիկն արդեն տեղավորված են, իր միակ ցանկությունն է՝ նրան տեսնել ամուսնացած։ Նա ասում էր, որ ինքը հանգիստ գերեզման կիջներ, եթե այդ կատարվի։ Ապա, ասում էր, որ ինքը նկատի ունի մի գեղեցիկ աղջիկ, և աշխատում էր իմանալ որդու կարծիքն ամուսնության մասին։

Ուրիշ խոսակցությունների մեջ նա գովաբանում էր Ժյուլիին և Նիկոլային խորհուրդ էր տալիս գնալ Մոսկվա՝ տոներին ուրախանալ։ Նիկոլայը գլխի էր ընկնում, թե ինչ նպատակ ունեին մոր խոսքերը և այդ խոսակցություններից մեկի միջոցին մորը խնդրեց պարզ և անկեղծ արտահայտվել։ Եվ մայրը հայտնեց, թե այժմ գործերն ուղղելու ամբողջ հույսը ա՛յն է, որ նա ամուսնանա Կարագինայի հետ։

— Իսկ եթե սիրեի կարողությունից զուրկ մի աղջկա, մի՞թե, maman. դուք պիտի պահանջեիք, որ ես իմ զգացմունքն ու պատիվը զոհ բերեի մի կարողության,— հարցրեց նա մորը, չհասկանալով իր հարցի դաժանությունը և ցանկանալով արտահայտել միայն իր ազնվությունը։

— Ոչ, դու ինձ չհասկացար, որդիս,— ասավ մայրը, չիմանալով ինչպես արդարանալ։— Դու ինձ չհասկացար, Նիկոլենկա։ Ես քո երջանկությունն եմ ուզում,— ավելացրեց նա և զգաց, որ ինքը ճշմարտությունը չի ասում, որ ինքը շփոթվեց։ Նա լաց եղավ։

— Մայրիկ, լաց մի լինեք, ասացեք միայն, որ դուք այդ եք ցանկանում, և դուք գիտեք, որ ես ամբողջ կյանքս և ամեն ինչ կտամ, որ դուք հանգիստ լինեք,— ասավ Նիկոլայը։— Ես ձեզ համար ամեն ինչ կզոհեմ, նույնիսկ իմ զգացմունքները։

Բայց կոմսուհին հարցն այդպես չէր կամենում դնել. նա իր որդուց զոհողություն չէր ուզում. նա ինքը կամենում էր զոհողություն անել նրա համար։

— Ոչ, դու ինձ չհասկացար, էլ չխոսենք,— ասավ նա արցունքները սրբելով։

«Այո, գուցե և ես սիրում եմ խեղճ աղջկան»,— ասում էր ինքն իրեն Նիկոլայը. «էլ ինչո՞ւ պետք է զգացմունքս ու պատիվս զոհ բերեմ կարողության համար։ Զարմանում եմ, թե ինչպես մայրիկը կարողացավ այդ բանն ինձ ասել։ Նրա համար, որ Սոնյան աղքատ է, ես չեմ կարող նրան սիրե՞լ»— մտածեց նա,— «չեմ կարող պատասխանել նրա հավատարիմ, անձնվեր սիրուն։ Իսկ ես Սոնյայի հետ, հավանորեն, ավելի երջանիկ կլինեմ, քան որևէ խաղատիկնիկ Ժյուլիի հետ։ Ես միշտ էլ կարող եմ իմ զգացմունքը զոհ բերել հարազատներիս բարօրության համար,— ասում էր նա ինքն իրեն,— բայց հրամայել իմ զգացմունքներին՝ ես չեմ կարող։ Եթե ես Սոնյային սիրում եմ, ուրեմն իմ զգացմունքն ինձ համար ամեն բանից ուժեղ է և բարձր»։

Նիկոլայը Մոսկվա չգնաց, կոմսուհին էլ չվերսկսեց իր խոսակցությունը նրա ամուսնության մասին և վշտով, երբեմն էլ բարկությամբ նկատում էր ավելի ու ավելի սերտ մերձեցման նշաններ որդու և անօժիտ Սոնյայի միջև։ Նա ինքն իրեն հանդիմանում էր, որ փնթփնթում է, Սոնյայի հետ է ընկնում, հաճախ առանց որևէ պատճառի կանգնեցնելով նրան և դիմելով «դուք», «սիրելիս» բառերով։ Բարի կոմսուհին Սոնյայի վրա ավելի բարկանում էր նրա՛ համար, որ իր այդ խեղճ սևաչյա ազգականուհին այնքա՛ն հեզ էր, այնքա՛ն բարի և այնքա՛ն անձնվեր-երախտագետ էր դեպի իր բարեկամները և այնպես հավատարիմ, անդավաճան, անձնազոհ կերպով էր սիրահարվել Նիկոլայի վրա, որ անկարելի էր որևէ բանում հանդիմանել նրան։

Նիկոլայն իր արձակուրդն անցրեց ծնողների մոտ։ Փեսացուից՝ իշխան Անդրեյից ստացել էր 4-րդ նամակը՝ Հռոմից, որի մեջ նա գրում էր, թե ինքը վաղուց ճանապարհված կլիներ Ռուսաստան, եթե անսպասելի կերպով տաք կլիմայում վերքը լբացվեր, որը և հարկադրում է իրեն իր գալը հետաձգել մինչև առաջիկա տարվա սկիզբը։ Նատաշան նույնպես սիրահարված էր իր փեսացուի վրա, նույնպես հանգստացած էր այդ սիրուց և նույնպես էլ զգայուն, կյանքի բոլոր ուրախությունների հանդեպ բայց անբատման շրջրորդ ամսվա վերջին

Նա ունենում էր տրտմության րոպեներ, որի դեմ չէր կարողանում կռվել։ Նա ինքն իրեն խղճում էր. ափսոսում էր, որ ինքն այդպես իզուր կորչում է այդ ամբողջ ժամանակամիջոցում, մինչդեռ զգում էր, որ ինքն այնքան ընդունակ է սիրելու և սիրվելու։

Ռոստովների տանն այլևս ուրախություն չկար։

IX

Տոները եկան, և, բացի հանդիսավոր պատարագից, բացի հարևանների ու ծառաների հանդիսավոր ու տաղտկալի շնորհավորանքներից, բացի բոլորի հագած նոր զգեստներից, չկար մի առանձին բան, որ նշանակալի դարձներ այդ տոները, իսկ 20 աստիճան անքամի սառնամանիքում, պայծառ, շլացուցիչ արևոտ օրը և ձմեռային աստղալույս գիշերին պահանջ էր զգացվում մի որևէ բանով նշանակալի դարձնել այդ ժամանակը։

Տոնի երրորդ օրը ճաշից հետո բոլոր տնեցիները քաշվեցին իրենց սենյակները։ Օրվա ամենատաղտկալի պահն էր։ Նիկոլայը, որ առավոտը հարևանների մոտ էր գնացել, քնեց բազմոցարանում։ Մեր կոմսը հանգստանում էր իր առանձնասենյակում։ Հյուրասրահում, կլոր սեղանի մոտ նստել էր Սոնյան և նախշեր էր արտանկարում։ Կոմսուհին թուղթ էր բաց անում։ Նաստասիա Իվանովնան՝ ծաղրածուն, տխուր դեմքով նստել էր լուսամուտի մոտ երկու պառավի հետ միասին։ Նատաշան ներս մտավ, մոտեցավ Սոնյային, նայեց, թե նա ինչ է անում, ապա մոտեցավ մորն ու լուռ կանգնեց։

— Ի՞նչ ես անապատանի նման ման գալիս,— ասավ մայրը։— Ի՞նչ ես ուզում։

— Ես նրան եմ ուզում... հենց հիմա, այս րոպեին նա ինձ հարկավոր է,— ասավ Նատաշան աչքերը փայլեցնելով և առանց ժպտալու։

Կոմսուհին գլուխը բարձրացրեց և ուղիղ աղջկա դեմքին նայեց։

— Ինձ մի՛ նայեք, մայրիկ, մի՛ նայեք, թե չէ լաց կլինեմ։

— Նստի՛ր, նստիր մոտս,— ասավ կոմսուհին։

— Մայրիկ, ես նրան եմ ուզում։ Ինչու համար եմ ես այսպես կորչում, մայրիկ...

Նրա ձայնը խզվեց, արցունքները ցայտեցին աչքերից, և նա, որպեսզի այդ թաքցնի, արագ շուռ եկավ ու դուրս ելավ սենյակից։

Նա անցավ բազմոցարան, կանգնեց, մտածեց ու գնաց աղջկանոցը։ Պառավ սպասուհին այդտեղ փնթփնթում էր մի ջահել աղջկա վրա, որ վազեվազ եկել էր սպասավորների սենյակից և շնչասպառ հղել ցրտից։

— Հերիք է ինչքան խաղացիք,— ասում էր պառավը,։— Ամեն բան իր ժամանակն ունի։

— Թո՛ղ, Կոնդրատենա,— ասավ Նատաշան։— Գնա, Մավրուշա, գնա։

Եվ Մավրուշային արձակելով, Նատաշան դահլիճի միջով անցավ նախասենյակ։ Մեր և երկու ջահել լաքեյները թուղթ էին խաղում։ Նատաշայի ներս գալուն պես նրանք խաղն ընդհատեցին և ոտքի ելան։

«Ի՞նչ բանի դնեմ ես սրանց», մտածեց Նատաշան։

— Հա՛, Նիկիտա, գնա մի, խնդրեմ... «ո՞ւր ուղարկեմ ես սրանց։ Հա՛, գնա սպասավորների սենյակը և, խնդրեմ, աքլորը բեր. իսկ դու, Միշա, վարսակ բեր։

— Ինչքա՞ն,— ուրախ և սիրով հարցրեց Միշան։

— Գնա, գնա, շուտ,— կրկնեց ծերունին։

— Ֆեոդոր, դու էլ կավիճ գտիր։

Բուֆետի կողքից անցնելով, նա կարգադրեց թեյ տալ, թեպետև դրա ժամանակը չէր բոլորովին։

Բուֆետչան Ֆոկան ամենահերսոտ մարդն էր տան մեջ։ Նատաշան սիրում էր իր իշխանությունը փորձել նրա վրա։ Ֆոկան նրան հավատ չընծայեց և գնաց հարցնելու, թե ճի՞շտ է արդյոք։

— Ա՛խ, էս օրիորդը,— ասավ Ֆոկան կեղծավորությամբ դեմքը խոժոռելով Նատաշայի վրա։

Տանը ոչ ոք մարդկանց այնքան դեմ ու դեն չէր ուղարկում և նրանց այնքան գործի չէր դնում, ինչպես Նատաշան։ Նա չէր կարողանում անտարբեր տեսնել մարդկանց և անպատճառ որևէ տեղ էր ուղարկում նրանց։ Կարծես ուզում էր, փորձել, թե նրանցից մեկն ու մեկը չի բարկանա իր վրա, չի փըք-

վի։ Բայց մարդիկ ոչ մեկի հրամաններն այնպես սիրով չէին կատարում, ինչպես Նատաշայինը։ «Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ ես», մտածում էր Նատաշան, դանդաղորեն միջանցքում քայլելով։

— Նաստասիա Իվանովնա, ինձնից ի՞նչ կծնվի,— հարցրեց նա ծաղրածուին, որ իր կանացի թիկնոցը վրան գալիս էր իր դեմ։

— Քեզնից լուեր, ճպուռներ, ծղրիդներ,— պատասխանեց ծաղրածուն։

— Օ՜, տեր աստված, տեր աստված, միշտ միևնույն բանը։ Ես ո՞ւր կորչեմ, ես ի՞նչ անեմ ինձ։

Եվ նա ոտներն արագ խփելով, սանդուղքով վազեվազ բարձրացավ վերև՝ Ֆոգելի մոտ, որ իր կնոջ հետ ապրում էր այնտեղ։

Ֆոգելի մոտ նստած էին երկու դաստիարակչուհի, սեղանի վրա դրված էին ափսեներ՝ չամիչով, ընկույզով և նուշով լիքը։ Դաստիարակչուհիները խոսում էին այն մասին, թե որտեղ ավելի աժան է կյանքը՝ Մոսկվայում թե Օդեսայում։ Նատաշան նստեց, լսեց նրանց զրույցը լուրջ, մտածկոտ դեմքով ու վեր կացավ։

— Մադագասկար կղզին,— ասավ նա։— Մադագասկար,— կրկնեց նա յուրաքանչյուր վանկն առանձին շեշտելով և առանց պատասխանելու m-me Schoss-ի հարցին, թե ի՞նչ է ասում, դուրս եկավ սենյակից։

Պետյան, եղբայրը, նույնպես վերևն էր։ Նա իր վերակացուի հետ հրթիռ էր պատրաստում, որը մտադիր էր գիշերը բաց թողնել։

— Պե՛տյա, Պե՛տյա,— կանչեց Նատաշան,— արի ինձ ներքև տար։

Պետյան մոտ վազեց ու մեջքը դեմ արավ. Նատաշան թռավ նրա մեջքին, ձեռները նրա վզովը գցելով, և Պետյան, քրոջը ծուլ ու ծուլ անելով առաջ անցավ։

— Լավ, էլ հարկավոր չէ... Մադագասկար կղզի,— ասավ Նատաշան և նրա ուսից թռչելով. իջավ ներքևի հարկը։

Կարծես իր թագավորությունը շրջագայելով, իր իշխանությունը փորձելով ու համոզվելով, որ բոլորը հնազանդ են, բայց այնուամենայնիվ տխուր է, Նատաշան անցավ դահլիճ,

կիթառը վերցրեց. նստեց պահարանի ետև, մութ անկյունում ու սկսեց թավահնչյուն լարերի վրա նվագել մի ինչ-որ օպերայի եղանակ, որը լսել էր Պետերբուրգում՝ իշխան Անդրեյի հետ միասին։ Կողմնակի մարդկանց համար նրա նվագածը զուրկ էր որևէ իմաստից. բայց այդ հնչյունները նրա երևակայության մեջ զարթնեցնում էին մի շարք հիշողություններ։ Պահարանի ետևը նստած, հայացքը սևեռած բուֆետի դռնից ընկնող լույսի շերտին, նա ունկնդրում էր իրեն ու հիշում։ Նա գտնվում էր հիշողությունների աշխարհում։

Սոնյան օղու մի բաժակ ձեռին դահլիճով անցավ բուֆետ։ Նատաշան նայեց նրան, նայեց բուֆետի դռան ճեղքին և նրան թվաց, որ ինքը հիշում է այն, թե լույսն ընկնում էր բուֆետի դռան ճեղքից և որ Սոնյան անցավ օղու բաժակը ձեռին։ «Այո, սա էլ ճիշտ և ճիշտ նույնն է», մտածեց Նատաշան։

— Սոնյա, այս ի՞նչ է,— կանչեց Նատաշան, հաստ լարը մատներով շարժելով։

— Ա՜խ, դու այստե՛ղ ես,— ցնցվելով ասավ Սոնյան, մոտեցավ ու ականջ դրեց։— Չգիտեմ։ Փոթորի՞կն է,— ասավ նա ամաչկոտ, վախենալով, թե սխալվի։

«Այ, ճիշտ այսպես սա ցնցվեց, ճիշտ այսպես սա մոտեցավ և երկչոտ ժպտաց այն ժամանակ, երբ այդ արդեն եղել էր», մտածեց Նատաշան, «և ճիշտ այդպես էլ... ես մտածեցի, որ սրա մի բանը պակաս է»։

— Ոչ, սա «Ջրկիր»-ի խորն է, լսո՞ւմ ես։— Եվ Նատաշան խորի եղանակը երգեց, որպեսզի Սոնյան հասկանա։— Դու ո՞ւր էիր գնում,— հարցրեց Նատաշան։

— Բաժակի ջուրը փոխելու։ Ես հիմա մի նախշ կնկարեմ-կվերջացնեմ։

— Դու միշտ զբաղված ես, իսկ ես չեմ կարողանում,— ասավ Նատաշան։— Նիկոլայն ո՞ւր է։

— Քնած է, կարծեմ։

— Սոնյա, գնա նրան զարթեցրու,— ասավ Նատաշան։— Ասա, որ ես նրան կանչում եմ երգելու։

Նա նստեց, մտածեց, թե ի՞նչ է նշանակում այդ բոլորը, որ այդ բոլորը եղել է և այդ հարցը չլուծած ու բնավ չցավելով այդ մասին, երևակայությամբ կրկին տեղափոխվեց այն

օրերը, երբ ինքը նրա հետ էր, նա սիրահարված աչքերով նայում էր իրեն։

«Ա՜խ, մի շուտ գար նա։ Ես շատ եմ վախենում, որ այդ չլինի։ Եվ գլխավորը, — ես պառավում եմ — ա՛յ թե ինչ էլ չի լինի այն, ինչ այժմ կա մեջս։ Բայց գուցե նա շուտով գա, գուցե հենց այժմ գա։ Գուցե և եկել է ու այնտեղ, հյուրասրահում նստած է։ Գուցե և հենց երեկ է եկել, ու ես մոռացել եմ»։ Նա վեր կացավ, կիթառը դրեց տեղը և գնաց հյուրասրահ։

Բոլոր տնեցիները, ուսուցիչները, դաստիարակչուհիները և հյուրերն արդեն նստել էին թեյի։ Սպասավորները շրջապատել էին սեղանը, իսկ իշխան Անդրեյը չկար, ու ամեն բան նախկինն էր։

— Ահա և Նատաշան, — ասավ Իլյա Անդրեյիչը, տեսնելով ներս մտնող Նատաշային։ — Եկ, մոտս նստիր։ — Բայց Նատաշան կանգ առավ մոր կողքին, շուրջը նայելով, կարծես ինչ-որ բան որոնելով։

— Մայրիկ, — ասավ նա։ — Տվեք նրան, տվեք նրան ինձ, շո՛ւտ, մայրիկ, շուտ, — կրկնեց նա, հեկեկանքը հազիվ զսպելով։

Նա նստեց սեղանի մոտ և ականջ դրեց մեծերի ու Նիկոլայի խոսակցության։ «Տեր աստված, տեր աստված, նույն դեմքերն են դարձյալ, նույն զրույցները, նույնպես էլ հայրիկը բռնում է գավաթն ու նույնպես էլ փչում», մտածեց Նատաշան, սարսափելով նողկանքի այն զգացումից, որ առաջանում է իր մեջ բոլոր տնեցիների հանդեպ նրա՛ համար, որ նրանք դարձյալ նույնն էին։

Թեյից հետո Նիկոլայը, Սոնյան ու Նատաշան գնացին բազմոցարանը, իրենց սիրած անկյունը, ուր միշտ տեղի էին ունենում նրանց ամենասրտագին զրույցները։

Ж

— Քեզ պատահո՞ւմ է, — ասավ Նատաշան եղբորը, երբ նրանք նստեցին բազմոցարանում, — պատահո՞ւմ է, որ թվա թե էլ ոչինչ, ոչինչ չի լինելու, որ ամեն բան, ինչ որ լավ էր, եղել-վերջացել է, և դու զգում ես ոչ թե ձանձրույթ, այլ տրխրություն։

— Այն էլ ինչպես, — ասավ Նիկոլայը։ — Չնայած, որ ամեն ինչ եղել է լավ, բոլորն ուրախ, բայց ինձ թվացել է, որ այս ամենն արդեն ձանձրացրել են և որ բոլորն էլ մեռնելու են։ Գնդում եղած ժամանակս մի անգամ չգնացի զբոսանքի, իսկ այնտեղ նվագում էր երաժշտախումբը... և հանկարծ այնպես տխրություն եկավ վրաս...

— Ախ, այդ զգացումն ինձ ծանոթ է, ծանոթ է, — հարեց Նատաշան։ — Ես դեռ փոքր էի, ինձ այդպես պատահեց։ Հիշո՞ւմ ես, մի անգամ ինձ սալորի համար պատժեցիք, և դուք բոլորդ պարում էիք, իսկ ես դասարանում նստած հեկեկում էի. երբեք չեմ մոռանա. ես և տխուր էի, և խղճում էի բոլորին. թե՛ ինձ, թե՛ բոլորին. խղճում էի բոլորին։ Եվ, որ գլխավորն է, ես մեղավոր չէի, — ասավ Նատաշան, — հիշո՞ւմ ես։

— Հիշում եմ, — ասավ Նիկոլայը։ — Հիշում եմ, որ ես հետո քեզ մոտ եկա. ուզում էի մխիթարել քեզ, բայց ամաչում էի։ Նատ ծիծաղելի էինք։ Այն ժամանակ ես մի մարդ-խաղալիք ունեի և ուզում էի այն քեզ տալ։ Հիշո՞ւմ ես։

— Իսկ դու հիշո՞ւմ ես, — ասավ Նատաշան մտախոհ ժպտալով, — վաղուց, շատ վաղուց, երբ մենք բոլորս փոքր էինք, քեռին մեզ կանչեց իր կաբինետը, դեռ հին տանը, և այնտեղ մութն էր, մենք եկանք ՝ հանկարծ տեսանք, այնտեղ կանգնած է...

— Արաբը, — վրա բերեց Նիկոլայը խնդուն ժպիտով, — ինչպես չհիշեմ։ Ես այժմ էլ չեմ իմանում — դա արա՞բ էր, թե մենք այդ երազում էինք տեսել, կամ պատմել են մեզ։

— Նա մոխրագույն էր, հիշո՞ւմ ես, և սպիտակ ատամներ ուներ. կանգնել ու նայում էր մեզ...

— Դուք հիշո՞ւմ եք, Սոնյա, — հարցրեց Նիկոլայը։

— Այո, այո, ես էլ եմ այդպես մի բան հիշում, — քաշվելով ասավ Սոնյան։

— Այդ Արաբի մասին ես հարցրի հայրիկին ու մայրիկին, — ասավ Նատաշան։ — Նրանք ասում են, որ ոչ մի արաբ չի եղել, իսկ դու չէ՞ որ հիշում ես։

— Ինչպես չէ. այսօրվա պես հիշում եմ նրա ատամները։

— Որքան տարօրինակ է. կարծես երազում է եղել։ Ես այդ սիրում եմ։

— Իսկ հիշում ես, թե ինչպես մենք ձու էինք գլորում

դահլիճում և, հանկարծ — երկու պառավ հայտնվեցին ու սկսեցին գորգի վրա պտտվել։ Սա եղե՞լ է, թե չէ։ Հիշո՞ւմ ես, ի՞նչ լավ էր։

— Այո, իսկ հիշո՞ւմ ես ինչպես հայրիկը կապույտ մուշտակը հագին սանդուղքից հրացանը կրակեց։

Նրանք ժպտալով, բավականությամբ քրքրում էին իրենց հիշողությունները, ոչ թե ծերունական տխուր, այլ բանաստեղծական, պատանեկան հիշողությունները — տպավորությունները ամենահեռավոր անցյալի, ուր երազները ձուլվում են իրականության։ Հիշում էին այդ տպավորությունները և հանդարտ ծիծաղում, ինչ-որ բանի վրա ուրախանալով։

Սոնյան, ինչպես և միշտ, նրանցից ետ էր մնում, թեև նրանց հիշողություններն ընդհանուր էին։

Սոնյան շատ բան չէր մտաբերում այն բոլորից, ինչ քույր ու եղբայր հիշում էին։ Իսկ այն, ինչ մտաբերում էր՝ նրա մեջ չէր զարթնեցնում այնպիսի բանաստեղծական զգացում, որ նրանք էին վերապրում։ Նա հրճվում էր միայն նրանց ուրախությամբ, աշխատելով միայն ուրախ երևալ։

Սոնյան նրանց զրույցին մասնակցեց այն ժամանակ միայն, երբ նրանք Սոնյայի առաջին գալը հիշեցին։ Սոնյան պատմեց, թե ինչպես ինքը վախենում էր Նիկոլայից, որովհետև նրա բաճկոնի վրա կապիչներ կային, իսկ դայակը նրան ասել էր, թե կապիչներով իրեն կկարեն։

— Հիշում եմ. ինձ ասին, որ դու կաղամբի տակ ես ծնվել, — ասավ Նատաշան, — և հիշում եմ, որ այն ժամանակ չէի համարձակվում չհավատալ, բայց գիտեի, որ դա ճիշտ չէ, և այնպես անհարմար էի զգում ինձ։

Այս խոսակցության միջոցին բազմոցարանի ետևի դռնից գլուխը ներս կոխեց սպասուհին

— Օրիորդ, աքլորը բերին, — շշնջալով ասավ նա։

— Հարկավոր չէ, Պոլյա, ասա՛ թող տանեն, — պատասխանեց Նատաշան։

Բազմոցարանում տեղի ունեցող զրույցի կեսին ներս մտավ Դիմմլերը և մոտեցավ անկյունում դրված տավիղին։ Երբ նա մահուդե պատյանը հանեց, տավիղը մի կեղծ հնչյուն արձակեց։

— Էդուարդ Կառլիչ, նվագեցեք, խնդրում եմ, մսյո Ֆիլ'դի

իմ սիրած Nocturne-ը, — ասավ պառավ կոմսուհին հյուրասրահից։

Դիմմլերն ակորդ վերցրեց և դառնալով Նատաշային, Նիկոլային ու Սոնյային, ասավ.

— Երիտասարդներն ի՞նչ հանդարտ են նստել։

— Այո, մենք փիլիսոփայում ենք, — ասավ Նատաշան, մի վայրկյան շուրջը նայելով և շարունակեց խոսակցությունը։ Խոսակցությունն այժմ երազների մասին էր։

Դիմմլերն սկսեց նվագել։ Նատաշան անձայն, ոտի ծայրերի վրա, մոտեցավ սեղանին, մոմը վերցրեց, դուրս տարավ և, վերադառնալով, լուռ նստեց իր տեղը։ Սենյակում, մանավանդ նրանց նստած բազմոցի տեղը մութն էր, բայց մեծ լուսամուտներից հատակին էր ընկնում լիալուսնի արծաթագույն լույսը։

— Գիտես, ես մտածում եմ, — ասավ Նատաշան շշուկով, նստած տեղը մոտենալով Նիկոլային ու Սոնյային, երբ Դիմմլերն արդեն նվագն ավարտել և տակավին նստած թույլ շարժում էր տավիղի լարերը, ըստ երևույթին անվճռականության մեջ — թողնել, թե մի որևէ նոր բան սկսել, — մտածում եմ, որ երբ այսպես հիշում ես ամեն բան, ամեն ինչ, — այնքա՛ն ես տարվում հիշողություններով, որ մտաբերում ես և այն, որ եղել է շատ առաջ, երբ ես աշխարհ չէի եկել...

— Դա հոգեփոխություն է, — ասավ Սոնյան, որ միշտ լավ էր սովորում և սովորածը լավ հիշում էր։ — Եգիպտացիք հավատում էին, որ մեր հոգիները եղել են կենդանիների մեջ ու նորից գնալու են կենդանիների մեջ։

— Գիտես, ես չեմ հավատում, որ մենք կենդանիների մեջ եղած լինենք, — ասավ Նատաշան նույն շշունջով, թեպետև նվագածությունը վերջացել էր։ — Իսկ ես հաստատապես գիտեմ, որ մենք հրեշտակներ ենք եղել այնտեղ, ինչ-որ տեղ, և այստեղ, ու դրա համար ամեն ինչ հիշում ենք...

— Կարելի՞ է մասնակցել ձեր խոսակցության, — ասավ հանդարտ մոտեցող Դիմմլերը, ու նստեց նրանց մոտ։

— Եթե մենք հրեշտակներ եղած լինեինք, ապա ինչո՞ւ ենք ցած ընկել, — ասավ Նիկոլայը։ — Ոչ, դա անկարելի բան է։

— Ցած չէ, քեզ ո՛վ ասավ թե ցած... Ես ի՞նչ գիտեմ, թե ի՞նչ եմ եղել առաջ, — համոզված առարկեց Նատաշան։ —

Չէ որ հոգին անմահ է... նշանակում է՝ ես միշտ ապրելու եմ. ապրել եմ և առաջ, ապրել եմ և ամբողջ հավիտենականություն։

— Այո, բայց մեզ համար դժվար է երևակայել հավիտենականությունը,— ասավ Դիմմլերը, որը երիտասարդներին մոտեցավ հեզ, արհամարհական ժպիտով, բայց այժմ խոսում էր նույնպես կամաց ու լուրջ, ինչպես և նրանք։

— Ինչո՞ւ է դժվար երևակայել հավիտենականությունը,— ասավ Նատաշան։— Դա այսօր էլ կլինի, վաղն էլ, միշտ էլ կլինի այդ հավիտենականությունը. դա եղել է և երեկ, և նախընթացյալ օրը...

— Նատաշա՛. հիմա հերթը քոնն է. մի բան երգիր,— լսվեց կոմսուհու ձայնը։— Ինչ եք նստել դավադիրների պես։

— Մայրիկ, ես տրամադրություն չունեմ,— ասավ Նատաշան բայց և այնպես վեր կացավ։

Նրանք բոլորը, նույնիսկ ոչ ջահել Դիմմլերը, չէին ցանկանում խոսակցությունն ընդհատել և բազմոցարանի անկյունը թողնել, բայց Նատաշան վեր կացավ և Նիկոլայը նստեց դաշնամուրի մոտ։ Ինչպես միշտ, այս անգամ էլ գահլիճի մեջտեղը կանգնելով և ձայնի հնչեղության (ռեզոնանսի) համար ամենահարմար տեղն ընտրելով, Նատաշան սկսեց երգել մոր սիրած երգը։

Նա ասավ, թե երգելու տրամադրություն չունի, բայց շատ առաջ և դրանից շատ հետո նա այնպես չէր երգել, ինչպես այդ երեկո։ Կոմս Իլյա Անդրեյիչն իր առանձնասենյակում, ուր զրուցում էր Միտենկայի հետ, լսեց դստեր երգը և, ինչպես խաղի շտապող մի տղա, որ դասը վերջացնում է կիսատ-պռատ խոսքերով, կարգադրություններ արավ կառավարչին և, վերջապես, լռեց։ Միտենկան նույնպես ականջ դնելով, լուռ, ժպիտը դեմքին, կանգնել էր կոմսի առջև։ Նիկոլայն աչք չէր հեռացնում քրոջից և շունչ էր առնում նրա հետ միասին։ Սոնյան, ականջ դնելով Նատաշայի երգին, մտածում էր, թե ինչ հսկայական տարբերություն կա իր և նրա միջև և որքան դժվար է իր համար, որպեսզի ինքը քիչ թե շատ հմայիչ լինի իր Ֆուգիեի պես։ Պառավ կոմսուհին նստել էր երջանիկ-տխուր ժպիտը դեմքին ու արցունքն աչքերին, և երբեմնակի օրորում էր գլուխը։ Նա մտածում էր և՛ Նատաշայի մասին, և՛

իր ջահելության մասին, և՛ այն մասին, թե Նատաշայի ու իշխան Անդրեյի առաջիկա ամուսնության մեջ ինչ-որ մի անբնական ու սարսափելի բան կա։

Դիմմլերը, կոմսուհու մոտ նստելով, աչքերը փակ, լսում էր։

— Ոչ, կոմսուհի,— ասավ նա, վերջապես,— դա ուղղակի տաղանդ է, եվրոպական տաղանդ. նա էլ սովորելու բան չունի. այդքան մեղմություն, նրբություն, քնքշություն, ուժ...

— Ա՜խ։ Ես վախենում եմ Նատաշայի համար, շատ եմ վախենում,— ասավ կոմսուհին, չիմանալով, թե ո՛ւմ հետ է խոսում։ Նրա մայրական հոտառությունը նրան ասում էր, որ ինչ-որ բան չափից ավելի շատ է Նատաշայի մեջ և որ այդ բանից նա երջանիկ լինել չի կարող։ Նատաշան երգը դեռ չէր վերջացրել, երբ անհանգիստ ներս վազեց տասնչորս տարեկան խանդավառ դեմքով Պետյան՝ հայտնելով, թե զգեստավորվածները եկել են։

Նատաշան հանկարծ ընդհատեց։

— Հիմա՛ր,— գոռաց նա եղբոր վրա, վազեց դեպի աթոռը, ընկավ վրան և այնպես լաց եղավ, որ հետո երկար ժամանակ չկարողացավ հանգստանալ։

— Ոչինչ, մայրիկ, իսկապես ոչինչ, այնպես։ Պետյան վախեցրեց ինձ,- ասում էր նա, աշխատելով ժպտալ. բայց արցունքները շարունակում էին հոսել և հեկեկանքը խեղդում էր նրան։

Զգեստավորված սպասավորները՝ արջ, թուրք, պանդոկապետ ու աղջիկ-պարոն դարձած, սարսափելի ու ծիծաղելի տեսքով, իրենց հետ ցուրտ և ուրախություն բերելով, նախ երկչոտությամբ իրար սեղմվեցին նախասենյակում, ապա մեկը մյուսի ետև թաքնվելով, մտան դահլիճ, և, սկզբում քաշվելով, իսկ հետո հետզհետե ուրախ ու համերաշխ, սկսեցին երգ, պար, խմբապար ու տոնական խաղեր։ Կոմսուհին դեմքերից ճանաչելով ու նրանց վրա ծիծաղելով, անցավ հյուրասրահ։ Կոմս Իլյա Անդրեյիչը՝ փայլուն ժպիտը դեմքին՝ նստել էր դահլիճում ու խրախուսում էր նրանց։ Երիտասարդները չքացան ուր-որ։

Կես ժամից հետո դահլիճում մյուս զգեստավորվածների մեջ երևաց մի պառավ տիկին՝ կիտոսկրով կարած զգեստով (ֆիժմա)— դա Նիկոլայն էր։ Թրքուհին Պետյան էր։ Հորպետը՝

Դիմմլերը, հուսարը՝ Նատաշան և չերքեզը Սոնյան՝ ներկած բեղերով ու հոնքերով։

Շրջապատողների զարմանքից, չճանաչելուց ու գովեստից հետո, երիտասարդները գտան, որ իրենց պաճուճանքներն ու զուքսերն այնքան լավն են, որ արժեր ուրիշ որևէ մեկին ցույց տալ։

Նիկոլայը, որ ցանկանում էր բոլորին իր կառքով լավ ճանապարհով ման ածել, առաջարկեց գնալ քեռու մոտ, հետը վերցնելով զգեստավորված սպասավորներից տասը հոգուն։

— Է՛յ, չարժի ծեր մարդուն անհանգստացնել,— ասավ կոմսուհին,— բացի այդ՝ շարժվելու տեղ էլ չունի։ Եթե ուզում եք մի տեղ գնալ, Մելյուկովների մոտ գնացեք։

Մելյուկովան այրի կին էր. նա ապրում էր իր երեխաների, նրանց դաստիարակների ու դաստիարակչուհիների հետ։ Նրա տունը գտնվում էր Ռոստովների տնից չորս վերստ հեռու։

— Այ, ma chère. խելոք բան,— հարեց աշխուժացած ծեր կոմսը։— Եկեք ես էլ հագնվեմ ու ձեզ հետ գամ։ Պաշտին ես կուրախացնեմ։

Բայց կոմսուհին չհամաձայնեց կոմսի գնալուն, որովհետև վերջին օրերը նրա ոտը ցավում էր։ Որոշեցին, որ Իլյա Անդրեյիչը չի կարող գնալ։ Իսկ եթե Լուիզա Իվանովնան (m-me Schoss-ը) գնա, այդ դեպքում աղջիկները կարող էին գնալ Մելյուկովների մոտ։ Սոնյան, միշտ ամաչկոտ ու քաշվող, բոլորից ավելի էր թախանձում Լուիզա Իվանովնային՝ չըմերժել իրենց։

Սոնյայի զգեստավորումը բոլորից լավն էր։ Նրա բեղերն ու հոնքերն անսովոր կերպով սազում էին նրան։ Բոլորն էլ ասում էին, որ նա շատ լավն է, և նա իրեն համար անսովոր աշխույժ-եռանդուն տրամադրության մեջ էր։ Մի ինչ-որ ներքին ձայն ասում էր նրան, թե իր բախտը պիտի վճռվի այժմ կամ երբեք, և նա իր տղամարդկային զգեստով թվում էր բոլորովին ուրիշ մարդ։ Լուիզա Իվանովնան համաձայնեց, և կես ժամ հետո չորս եռաձի սահնակներ՝ զանգուլակներով ու բոժոժներով, սառած ձյունի վրա ճռճռոց ու սուլոց արձակելով, մոտեցան տան մուտքին։

Տոնական ուրախության առաջին նշանը Նատաշան տվեց, և այդ ուրախությունը մեկից մյուսին անցնելով, ավելի ու

ավելի շատացավ և իր գագաթնակետին հասավ այն ժամանակ, երբ բոլորը դուրս եկան սառնամանիքի առաջ և, խոսակցելով, ձայնարկելով, ծիծաղելով ու ճչալով, սահնակներ նստեցին։

Սահնակներից երկուսն ընդհանուր էին, երրորդը՝ ծեր կոմսինն էր. այդտեղ լծված էր Օրյոլում գնած վարգաձին. չորրորդ սահնակը Նիկոլայի սեփականն էր. դրանում էլ՝ մեջտեղը լծված էր նրա ցածրիկ, սևագույն, բրդոտ ձին։ Նիկոլայն իր՝ պառավի զգեստով, որի վրա հագել էր հուսարական գոտեպնդած թիկնոցը, կանգնել էր իր սահնակի մեջտեղը, երասանները ձեռը հավաքած։

Գիշերն այնքան լուսավոր էր, որ նա տեսնում էր լուսնի լուսի տակ փայլող ձիու աչքերն ու մետաղե զարդերը։ Ձիերը վախեցած նայում էին շքամուտքի մութ ծածկի տակ աղմկող այդ մարդկանց։

Նիկոլայի սահնակը նստեցին Նատաշան, Սոնյան, m-me Schoss-ը և երկու աղջիկ. ծեր կոմսի սահնակը նստեցին Դիմմլերը՝ կնոջ հետ և Պետյան. մյուսներում նստոտեցին զգեստավորված սպասավորները։

— Դու առաջ անցի՛ր, Զախար,— ձայն տվեց Նիկոլայը հոր կառապանին, որպեսզի ճանապարհին ինքը նրա առաջը կտրի-անցնի։

Ծեր կոմսի սահնակը, ուր նստած էին Դիմմլերը և ուրիշ զգեստավորվածներ, կարծես սառչելով ու ձյունին կպչելով, թավ զանգակների զնգզնգոցով առաջ շարժվեց. կողքից լծած ձիերը սեղմվեցին լծափայտին ու խրվեցին ձյան մեջ, շուտ տալով շաքարի պես ամուր, փայլուն ձյունը։

Առաջին սահնակից հետո շարժվեց Նիկոլայի սահնակը. նրան հետևեցին և մյուսները. աղմկելով ու ճռճռոցով։ Սկզբում նեղ ճանապարհով ձիերը քշում էին մանրաքայլ։ Քանի դեռ այգու կողքով էին գնում, մերկ ծառերի ստվերները հաճախ ընկնում էին ճանապարհի վրա և ծածկում լուսնի պայծառ լույսը, բայց հենց որ այգուց ցանկապատն անցան, ալմաստի պես փայլուն ձյունե տափաստանը՝ ամբողջապես լուսնի լուսով ողողված, ամեն կողմից բացվեց նրանց առաջ։ Առաջին սահնակը մի-երկու անգամ դրխկաց, ծուլ եղավ փոսի հանդիպելով, նույնպես ծուլ եղան և մյուս սահնակները և ապա

մեկը մյուսի ետևից, կախարդված լռությունը խախտելով, ձգվեցին ճանապարհով։

— Նապաստակի հետքեր, շատ հետքեր են երևում,— սառած-կաշկանդված օդի մեջ հնչեց Նատաշայի ձայնը։

— Ինչպես երևում է, Nicolas!— ասավ Սոնյայի ձայնը։

Նիկոլայը նայեց Սոնյային և կռացավ, որպեսզի ավելի լավ տեսնի նրա դեմքը։ Սամուրենու միջից, լուսնի լուսով նրան նայում էր մի բոլորովին նոր, սիրելի դեմք՝ սև հոնքերով ու բեղերով։

«Սա առաջ Սոնյան էր», մտածեց Նիկոլայը ու, նրան ավելի մոտից նայելով, ժպտաց։

— Ի՞նչ կա, Nicolas։

— Ոչինչ,— ասավ նա և երեսը կրկին շուռ տվեց դեպի ձիերը։

Դուրս գալով մեծ, տրորված ճանապարհը, որ հարթ սահուն էր դարձել սահնակներից ու ծածկվել պայտերի հետքերով, ինչ որ երևում էր լուսնի լուսով,— ձիերն իրենք իրենց սկսեցին երասանները ձգել ու չափ ընկնել։ Զախակողմյան ձին, գլուխը թեքած, քայլեր գցելով ձիգ էր տալիս փոկերը։ մեջտեղի ձին երերվում էր ականջները խլշելով, կարծես հարցնում էր. «Սկսե՞լ, թե դեռ վաղ է»։ Առջևում՝ բավական հեռացած և իր բոժոժները զնգզնգացնելով, սպիտակ ձյան վրա երևում էր Զախարի սև ձիերով սահնակը։ Լսվում էին նրա մեջ նստողների կանչերն ու ծիծաղը։

— Դե հա՛, սիրելիք,— ձայն տվեց Նիկոլայը, երասանները մի կողմից ձիգ տալով ու մտրակը շարժելով։

Կարծես թե դիմացի ուժեղացող քամուց և լարվող, շարունակ իրենց ցատկումները ավելացնող կողքի ձիերի ձիգ տալուց էր միայն նկատվում, թե որքան արագ է սլանում եռաձի կառքը։

Ձիերը չափ ընկան, և սահնակը թռավ։ Նիկոլայը ետ նայեց։ Ճիշով ու կանչով, մտրակ շարժելով, շտապում էին և մյուս սահնակները։ Միջի ձին ամբապիդ օրորվում էր աղեղնալծի տակ, խոստանալով ավելի ու ավելի ուժ տալ ոտներին, երբ հարկ լինի։

Նիկոլայը հասավ առաջին սահնակին։ Նրանք իջան ինչ-

որ սարից, դուրս եկան մի լայն բանուկ ճանապարհ, որ անցնում էր դաշտով, գետի կողքով։

«Այս որտեղի՞ց ենք անցնում,— մտածեց Նիկոլայը։— Հավանորեն Կոսոյ դաշտն է։ Բայց չէ, սա ինչ-որ նոր տեղ է, որը ես երբեք չեմ տեսել։ Սա ոչ Կոսոյ դաշտն է, ոչ էլ Դյոմկինի սարը, և աստված գիտե, թե ի՛նչ տեղ է։ Սա ինչ-որ մի նոր ու կախարդական ճանապարհ է։ է՛հ, ինչ ուզում է թող լինի»։ Եվ նա, ձիերին ձայն տալով, սկսեց առաջին սահնակի առաջն անցնել։

Զախարը ձիերը պահեց և մինչև հոնքերն արդեն եղյամակալած դեմքը շուռ տվեց։

Նիկոլայն իր ձիերի գլուխը բաց թողեց։ Զախարը, ձեռներն առաջ մեկնելով, շրթունքները չպպացրեց ու բաց թողեց իր ձիերին։

— Դե, պինդ կաց, պարոն,— ասավ նա։

Սահնակներն ավելի արագությամբ չափ ընկան կողք-կողքի, և ավելի արագ սկսեցին փոխվել արշավող ձիերի ոտները։ Նիկոլայն սկսեց առաջ անցնելու նշաններ ցույց տալ։ Զախարն իր մեկնած ձեռների դիրքը չփոխելով, ձեռի մեկը բարձրացրեց երասանների հետ միասին։

— Ձես կարող, պարոն,— ձայն տվեց նա Նիկոլային։

Նիկոլայը քառատրոփ բաց թողեց բոլոր ձիերին և Զախարի առաջն անցավ։ Ձիերի ոտները մանր ու շոր ձյունով ծեծում էին նստողների դեմքերը, կողքից լսվում էին հաճախակի կանչեր և իրար էին խառնվում ետ մնացած սահնակի ձիերի սովերներն ու առաջ շարժվող ոտները։ Ամեն կողմից լսվում էին ձյունի վրայով սողացող սահնակների սուլոց և կանանց ծղրտոցներ։

Ձիերը նորից կանգնեցնելով՝ Նիկոլայը շուրջը նայեց։ Շուրջը նույն, լուսնի լուսով ողողված կախարդական հարթությունն էր՝ շաղ տված, ցիր ու ցան աստղերով։

«Զախարը ձայն է տալիս, որ դեպի ձախ գնամ. իսկ ինչո՞ւ դեպի ձախ,— մտածում էր Նիկոլայը։— Մի՞թե դա Մելյուկովկան է. մի՞թե մենք Մելյուկովների մոտ ենք գնում։ Մենք, աստված գիտի, թե որտեղից ենք անցնում. և աստված գիտի, թե ի՛նչ է կատարվում մեզ հետ, և ինչ որ կատարվում է շատ տարօրինակ ու լավ է»։ Նիկոլայը նայեց սահնակի մեջ։

— Մի տես, նրա բեղերն ու հոնքերը բոլորովին սպիտակել են,— ասավ սահնակին նստող տարօրինակ, սիրուն և օտար մարդկանցից մեկը, որ բարակ բեղեր ու հոնքեր ուներ։

«Դա, կարծեմ, Նատաշան էր,— մտածեց Նիկոլայը,— իսկ սա m-me Schoss-ը, գուցե և ոչ. իսկ այդ բեղավոր շերքեզը, չգիտեմ ո՛վ է, բայց սիրում եմ նրան»։

— Դուք հո չե՞ք մրսում,— հարցրեց նա։

Նրանք չպատասխանեցին և ծիծաղեցին։ Դիմմլերը ետևվի սահնակից գոռալով ինչ-որ բան էր ասում, հավանորեն ծիծաղելի բան, բայց դժվար էր լսել, թե ի՛նչ է ասում։

— Այո, այո,— ծիծաղելով պատասխանեցին ձայները։

Բայց ահա մի ինչ-որ անտառ՝ իրար խառնվող, իրար հաջորդող սև շողշողուն ստվերներով ու ալմաստափայլ բյուրեղներով, և մարմարե աստիճանների ինչ-որ ամֆիլադայով. ահա և ինչ-որ կախարդական շենքերի արծաթապատ տանիքներ և ինչ-որ գազանների սուր ճիչ։ «Եթե իսկապես որ սա Մելյուկովկան է, ուրեմն էլ ավելի զարմանալի է, որ մենք, աստված գիտի, թե ինչ տեղից ենք անցել, և եկել Մելյուկովկա», մտածում էր Նիկոլայը։

Իսկապես, դա Մելյուկովկան էր. տան շքամուտքը վազեցին-եկան լաքեյներ ու սպասավոր աղջիկներ՝ մոմերով և ուրախ դեմքերով։

— Ո՞վ է,— հարցրին շեմքից։

— Կոմսի մադիկն են՝ զգեստավորված, ձիերից ճանաչեցի,— պատասխանեցին ուրիշ ձայներ։

XI

Պելագեյա Դանիլովնա Մելյուկովան, մի շատ եռանդոտ կին, ակնոցն աչքերին ու արձակ կապոտով նստել էր հյուրասրահում՝ իր աղջիկներով շրջապատված, և աշխատում էր այնպես անել, որ նրանք չտխրեն։ Նրանք հանդարտ մոմ էին թափում և նայում ստացվող ձևերին, երբ նախասենյակում լսվեց եկվորների քայլերի ու ձայների աղմուկը։

Հուսարները, տիկինները, վհուկները, միմոսները, արջերը նախասենյակում հագալով ու ցրտից եղյամակալած դեմքերը սրբելով, մտան դահլիճ, ուր շտապով մոմեր էին վառում։

Միմոս — Դիմմլերը տիկին — Նիկոլայի հետ սկսեցին պարը։ Շրջապատված աղմկող երեխաներով՝ զգեստավորվածները, դեմքերնին ծածկելով ու ձայները փոխելով գլուխ տվին տանտիրուհուն ու շարվեցին սենյակում։

— Ա՜խ, ճանաչել անկարելի է։ Իսկ Նատաշան, Նատաշան։ Մի նայեցեք ինչի է նման։ Իսկապես, հիշեցնում է ինչ-որ մեկին։ Հապա էդուարդ Կարլիչը, ի՛նչ լավն է։ Չճանաչեցի։ Ի՜նչպես էլ պարում է։ Ա՛խ, տեր աստված, այս շերքեզն ո՞վ է. իսկապես, ինչ սազում է Սոնյային։ Իսկ սա ո՞վ է։ է, մխիթարեցեք։ Նիկիտա՛, Վանյա՛, սեղան բաց արեք։ Մենք էլ սուս ու փուս նստել էինք։

— Հա՛-հա՛-հա՜... Հուսարը, հուսարը։ Կարծես տղա լինի, ոտների՞ն... Նայել չեմ կարողանում...— լսվում էին այս ու այն կողմից։

Նատաշան, որ երիտասարդ Մելյուկովների սիրելին էր, նրանց հետ միասին չքացավ ետևի սենյակում, ուր պահանջեցին խցան, զանազան խալաթներ ու տղամարդու զգեստներ, որոնք և բաց դռնից, սպասավորների ձեռից ընդունում էին աղջիկների մերկ ձեռները։ Տասը րոպե անց Մելյուկովների ընտանիքի ամբողջ երիտասարդությունը միացավ դիմակավորներին։

Պելագեյա Դանիլովնան, կարգադրելով տեղ մաքրեն հյուրերին պատվելու համար, ակնոցն առանց վերցնելու, զուսպ ժպիտով պտտվում էր այդ զգեստավորվածների խմբի մեջ, մոտիկից նայում նրանց երեսին, ու ոչ ոքին ճանաչել չէր կարողանում։ Նա չճանաչեց ոչ միայն Ռոստովներին ու Դիմմլերին, անգամ ոչ մի կերպ ճանաչել չկարողացավ իր աղջիկներին, ոչ էլ իր ամուսնու խալաթներն ու մունդիրները, որ հագել էին նրանք։

— Իսկ սա ո՞վ է,— ասավ նա, դիմելով իր դաստիարակչուհուն ու նայելով իր աղջկա դեմքին, որ ներկայացնում էր Կազանի թաթարի։— Կարծես Ռոստովներից մեկն է։ Իսկ դուք, պարոն հուսար, ո՞ր գնդումն եք ծառայում,— հարցրեց նա Նատաշային։— Բաստիլը թուրքին տո՛ւր, թուրքին,— ասավ նա բուֆետապանին, որ ուտելիք էր բաժանում,— դա նրանց օրենքով արգելված չէ։

Երբեմն նայելով պարողների տարօրինակ ու ծիծաղելի

ձևերին, պարողներ, որոնք մի անգամ ընդմիշտ որոշել էին, որ իրենց իբրև զգեստավորված ծպտվածների ոչ ոք չի ճանաչի, ուստի և չէին ամաչում, Պելագեյա Դանիլովնան երբ ծածկում էր թաշկինակով և նրա գիրուկ մարմինը ցնցվում էր պառավական անզուսպ, բարի ծիծաղից։

— Իմ Սաշա՛ն, Սաշա՛ն,— ասում էր նա։

Ռուսական պարերից ու խմբապարերից հետո Պելագեյա Դանիլովնան բոլորին՝ թե՛ սպասավորներին, թե՛ պարոններին հավաքեց մի տեղ, մի մեծ շրջան կազմեց. բերին մատանի, թոկ, դրամ և ընդհանուր խաղեր սարքեցին։

Մի ժամ հետո բոլոր հագուստները ճմթվեցին, իրարից ելան։ Խցանի մրից շինած բեղերն ու հոնքերը՝ ներկը ետ տվին քրտնած, բորբոքված և ուրախ դեմքերին։ Այդ ժամանակ միայն Պելագեյա Դանիլովնան սկսեց ճանաչել ծպտվածներին, հիանալով, թե որքան լավ էին նրանց հագուստները, ինչպես սազում էին դրանք առանձնապես օրիորդներին և շնորհակալություն հայտնեց բոլորին, որ ուրախացրին իրեն։ Հյուրերին հրավիրեցին ընթրել հյուրասրահում, իսկ սպասավորներին դահլիճում։

— Չէ, բաղնիքում գուշակություններ անել, դա սարսափելի է,— ընթրիքի ժամանակ ասում էր Մելյուկովների տանն ապրող պառավ աղջիկը։

— Ինչո՞ւ որ,— հարցրեց Մելյուկովների մեծ աղջիկը։

— Պարզ է, չեք գնա այնտեղ, քաջություն է հարկավոր...

— Ես կերթամ — ասավ Սոնյան։

— Մի պատմեցեք, այդ ինչպե՞ս է պատահել այն օրիորդի հետ,— ասավ Մելյուկովի երկրորդ դուստրը։

— Մի անգամ օրիորդի մեկը գնում է,— ասավ պառավ աղջիկը,— վերցնում է հետը մի աքլոր, սեղանի երկու սարք — ման-բան — ինչպես հարկն է, և նստում է։ Նստում է, մեկ էլ լսում է հրես գալիս է... զանգուլակների ու բոժոժների զրնգզրնգոցով մի սահնակ եկավ-կանգնեց. լսում է՝ մեկը գալիս է։ Ներս է մտնում բոլորովին մարդու կերպարանքով, իսկական սպա. գալիս է ու նրա հետ սեղան նստում։

— Ա՜խ,— բացականչեց Նատաշան՝ աչքերը սարսափահար չռելով։

— Բայց այդ ինչպե՞ս... խոսո՞ւմ էլ է։

— Այո, մարդու պես. ինչպես հարկն է. և սկսում է համոզել, իսկ օրիորդը պետք է նրան զբաղեցներ մինչև աքլորականչը, բայց ամաչում է ու երեսը ծածկում ձեռներով։ Նա բռնում է օրիորդին։ Լավ է, որ այդ միջոցին մյուս աղջիկները վրա են հասնում...

— Դե, ի՛նչու ես երեխաներին վախեցնում,— ասավ Պելագեյա Դանիլովնան։

— Մայրիկ, չէ որ դուք էլ եք գուշակել...— ասավ աղջիկը։

— Իսկ ամբարում ինչպե՞ս են գուշակում,— հարցրեց Սոնյան։

— Դա հենց հիմա էլ կարելի է. գնում են ամբարի մոտ ու ականչ դնում։ Եթե լսեք՝ մեխում է, թխկացնում — վա՛տ է, իսկ եթե հացահատիկը թափում է՝ բարի է. այդ էլ է լինում։

— Մայրիկ, մի պատմիր, թե ի՞նչ է պատահել քեզ ամբարում։

Պելագեյա Դանիլովնան ժպտաց։

— Է՜, արդեն մոռացել եմ...— ասավ նա։— Չէ՞ որ ձեզնից ոչ ոք չի գնա։

— Ոչ, ես կերթամ. Պելագեյա Դանիլովնա, ինձ թողեք, ես կերթամ,— ասավ Սոնյան։

— Ինչ կա որ, եթե չես վախենում։

— Լուիզա Իվանովնա, կարո՞ղ եմ գնալ,— հարցրեց Սոնյան։

Ինչպես բոլոր խաղերի ու խոսակցության ժամանակ, այնպես էլ այժմ, Նիկոլայը Սոնյայից չէր հեռանում և բոլորովին նոր հայացքով էր նայում նրան։ Նրան թվում էր, թե շնորհիվ այդ խցանի մրից բեղերի, առաջին անգամը լիովին ճանաչեց Սոնյային։ Եվ այդ երեկո Սոնյան իսկապես ուրախ էր, աշխույժ ու գեղեցիկ, ինչպես երբեք չէր տեսել նրան Նատաշան։

«Ահա թե ինչպիսին է, իսկ ես հիմար եմ», մտածեց Նիկոլայը, նայելով նրա փայլուն աչքերին ու երջանիկ, այտերի վրա փոսիկներ առաջացնող խնդագին ժպիտին, որ առաջ չէր նկատել։

— Ես ոչ մի բանից չեմ վախենում,— ասավ Սոնյան։— Հիմա կարելի՞ է։— Նա վեր կացավ։

Սոնյային ասացին, թե որտեղ է ամբարը, թե ինչպես պետք է լուռ կանգնի ու լսի. ապա մի մուշտակ տվին։ Նա մուշտակը գլխին գցեց ու Նիկոլային նայեց։

«Ի՞նչ հրաշալի աղջիկ է,— մտածեց Նիկոլայը։— Եվ ես ինչի մասին եմ մտածել մինչև այժմ»։

Սոնյան դուրս եկավ միջանցքը, որ ամբարը գնա։ Նիկոլայն շտապով դուրս եկավ շքամուտքը, ասելով թե շոգ է։ Եվ իսկապես տանը հեղձուցիչ օդ էր հավաքված բազմության պատճառով։

Դուրսը, նույն անշարժ ցուրտն էր, նույն լուսինը, միայն թե այժմ է՛լ ավելի պայծառ էր։ Լույսն այնքան առատ էր և աստղերն այնքան շատ էին ձյունի երեսին, որ մարդ չէր ուզում երկինք նայել, և իսկապես աստղերն աննկատելի էին։ Երկինքը սև էր ու տխուր, իսկ երկիրը զվարթ։

«Հիմար եմ, հիմար. ինչի՞ էի սպասում մինչև այժմ», մտածեց Նիկոլայը և, տան մուտքն իջնելով, անցավ տան անկյունը այն շավղով, որը տանում էր դեպի ետևի մուտքը։ Նա գիտեր, որ Սոնյան այստեղից է անցնելու։ Ճանապարհի կեսին փայտ էր դարսված, որի վրա ձյուն կար, և դրանցից ստվեր էր տարածվում։ Այդ դարսած փայտերի վրայով և նրանց կողքից, ճանապարհի և ձյունի վրա ընկնում էին ծերացած, մերկ լորիների ստվերներն իրար հյուսված։ Ճանապարհը տանում էր դեպի ամբարը։ Ամբարի պատն ու ձյունով ծածկված տանիքը, կարծես ինչ-որ թանկագին քարից շինած՝ փայլում էին լուսնի լուսի տակ։ Այգում ցրտից մի ծառ ճաքեց, և ամեն ինչ կրկին լռեց բոլորովին։ Մարդու կուրծքը շնչում էր կարծես ոչ թե օդով, այլ ինչ-որ մշտնջենական-երիտասարդական ուժով ու խնդությամբ։

Աղջկանոցի պատշգամբի սանդուղքների վրա քայլերի ձայն լսվեց, որն ավելի սուր հնչեց վերջին աստիճանի վրա, որը ծածկված էր ձյունով, և պառավ աղջկա ձայնն ասավ.

— Ուղիղ, ուղիղ ճանապարհով գնացեք, օրիորդ։ Միայն ետ չնայել։

— Ես չեմ վախենում,— պատասխանեց Սոնյայի ձայնը և նրա նուրբ կոշիկներով ոտները ձյունը ճռճռացնելով դիմեցին դեպի այն կողմը, ուր կանգնած էր Նիկոլայը։

Սոնյան գնում էր մուշտակի մեջ փաթաթված։ Նա երկու

քայլի վրա միայն ճանաչեց Նիկոլային. Սոնյան նրան տեսավ ոչ այնպես, ինչպես գիտեր-ճանաչում էր և որից փոքր-ինչ վախենում էր։ Նիկոլայը կանացի զգեստով էր, խճճված մազերով և մի երջանիկ ժպիտով, որ Սոնյայի համար նորություն էր։ Սոնյան արագ վազեց դեպի նա։

«Բոլորովին փոխված է, բայց էլի նույնն է», մտածեց Նիկոլայը, նայելով Սոնյայի դեմքին, որ ամբողջովին լուսավորված էր լուսնի լուսով։ Նա ձեռները կոխեց նրա գլուխը ծածկող մուշտակի տակ, գրկեց նրան, սեղմեց կրծքին ու համբուրեց շուրթերը, որոնց վերև գտնվում էին բեղերը և որոնցից այրված խցանի հոտ էր գալիս։ Սոնյան համբուրեց Նիկոլայի շուրթերի ուղիղ մեջտեղը և իր փոքրիկ ձեռներն ազատելով, երկու կողմից բռնեց նրա այտերը։

— Սոնյա՞... Nicolas!..— միայն ասացին նրանք։ Եվ վազեցին դեպի ամբարն ու ետ դարձան՝ յուրաքանչյուրն իր մուտքով։

XII

Երբ բոլորը վերադառնում էին Պելագեյա Դանիլովնայի տնից, Նատաշան, որ ամեն ինչ տեսնում ու նկատում էր, այնպես տեղավորեց բոլորին, որ ինքն ու Լուիզա Իվանովնան սահնակ նստեցին Դիմմլերի հետ, իսկ Սոնյան նստեց Նիկոլայի ու աղջիկների հետ։

Նիկոլայն այժմ առանց շտապելու առաջ անցնել, հանդարտ վերադառնում էր տուն և շարունակ այդ տարօրինակ լուսնի լուսի տակ նայում էր Սոնյային, և փոփոխվող լույսով, նրա բեղերի ու հոնքերի տակ աշխատում էր գտնել իր նախկին և այժմյան Սոնյային, որից, որոշել էր, այլևս երբեք չբաժանվել։ Նա նայում էր, և երբ ճանաչում էր էլի միևնույն ու փոխված դեմքը և հիշում էր խցանի հոտը՝ խառնված համբույրի զգացման հետ, նա լիաթոք ծծում էր սառն օդը, և հեռացող երկրին ու փայլուն երկնքին նայելով, նորից իրեն զգում էր կախարդական աշխարհում։

— Սոնյա ֆեզ լա՞վ ես զգում,— երբեմն հարցնում էր Նիկոլայը։

— Այո,— պատասխանում էր Սոնյան։— Իսկ դո՞ւ։

Ճանապարհի կեսին Նիկոլայը մի բոպե ձիերը հանձնեց կառապանին, ինքը վազեվազ մոտեցավ Նատաշայի սահնակին ու կանգնեց նրա թևի վրա։

— Նատաշա, — ասավ նա շշուկով, ֆրանսերեն, — գիտես ես որոշում ընդունեցի Սոնյայի վերաբերյալ...

— Իրեն ասի՞ր, — հարցրեց Նատաշան հանկարծ ուրախությունից ամբողջապես փայլելով։

— Ախ, Նատաշա, որքան տարօրինակ ես դու այդ բեղերով ու հոնքերով։ Դու ուրա՞խ ես։

— Ես այնպե՛ս, այնպե՛ս ուրախ եմ։ Ես արդեն բարկացած էի քեզ վրա։ Քեզ չեմ ասել, բայց դու վատ էիր վարվում նրա հետ։ Նա այնպիսի սիրտ ունի, Nicolas։ Որքան ուրախ եմ։ Ես զզվելի եմ լինում, բայց ծանր է ինձ համար առանց Սոնյայի մենակ երջանիկ լինել, — շարունակեց Նատաշան։ — Հիմա ես այնպես ուրախ եմ. դե, վազիր նրա մոտ։

— Չէ, սպասիր... ախ, ի՜նչ ծիծաղելին ես դու, — ասավ Նիկոլայը, շարունակ քրոջը նայելով և նրա մեջ էլ տեսնելով նույն նոր, անսովոր և քնքուշ-դյութիչ մի բան ինչ առաջ չէր տեսել։ — Նատաշա, մի ինչ-որ կախարդական բան կա, չէ՞։

— Այո, — պատասխանեց նա, — դու հիանալի բան ես արել։

«Եթե ես առաջ էլ սրան այսպես տեսնեի, ինչպիսին այժմ է, — մտածեց Նիկոլայը, — ես վաղուց կհարցնեի ի՛նչ անել, և կանեի այն բոլորը, ինչ նա հրամայեր, և ամեն բան լավ կլիներ»։

— Ուրեմն դու ուրա՞խ ես, լա՞վ եմ արել։

— Ախ, այնպե՞ս լավ։ Այս քանի օրը մայրիկի հետ կռվեցի դրա համար։ Մայրիկն ասավ, որ Սոնյան քեզ ուզում է թակարդը գցել։ Ինչպես կարելի է այդպես բան ասել։ Քիչ մնաց մայրիկի հետ կռվեի։ Եվ երբեք ոչ ոքին թույլ չեմ տա որևէ վատ բան ասել կամ մտածել նրա մասին, որովհետև նրա մեջ լավից բացի ուրիշ բան չկա։

— Ուրեմն լա՞վ, — ասավ Նիկոլայը, մի անգամ ևս դիտելով քրոջ դեմքի արտահայտությունը, իմանալու արդյոք ճիշտ է ասում նա և, կոշիկները քրթացնելով, նա թռավ իջավ սահնակի թևից ու վազեց դեպի իր սահնակը։ Նույն երջանիկ, ժպտուն շերքեզը, որ սամուրի գլխարկի միջից նայում

էր իր բեղիկներով ու փայլուն աչքերով, նստած էր այնտեղ։ Եվ այդ շերքեզը Սոնյան էր, և այդ Սոնյան, անշուշտ, լինելու էր իր ապագա երջանիկ ու սիրելի կինը։

Հասնելով տուն և մորը պատմելով, թե ինչպես ժամանակ անցրին Մելյուկովների մոտ, աղջիկները գնացին իրենց սենյակը։ Հանվելով, բայց խցանի բեղերը դեռ չսրբած, նրանք երկար ժամանակ նստած խոսում էին իրենց երջանկության մասին։ Նրանք խոսում էին այն մասին, թե ինչպես պիտի ապրեն ամուսնանալուց հետո, թե ինչպես իրենց ամուսինները պիտի լինեն հաշտ-համերաշխ և որքան երջանիկ պիտի լինեն իրենք։ Նատաշայի սեղանի վրա դեռ երեկոյից դրված էին Դունյաշայի պատրաստած հայելիները։

— Բայց դա ե՞րբ պիտի լինի։ Ես վախենում եմ, որ երբեք... Դա չափազանց լավ կլիներ, — ասավ Նատաշան, ելնելով ու հայելուն մոտենալով։

— Նստիր, Նատաշա, դու գուցե նրան տեսնես, — ասավ Սոնյան։

Նատաշան մոմերը վառեց ու նստեց։

— Մի ինչ-որ բեղավոր եմ տեսնում, — ասավ Նատաշան, տեսնելով իր դեմքը։

— Մի՛ ծիծաղեք, օրիորդ, ասավ Դունյաշան։

Նատաշան՝ Սոնյայի և սպասուհու օգնությամբ հարմար դիրք տվեց հայելուն. նրա դեմքը լուրջ արտահայտություն ընդունեց, և նա լռեց։ Նայելով հայելու մեջ անդրադարձող մոմերի շարքին, նա երկար նստեց, կարծելով (լսած պատմությունների համաձայն), թե դագաղ է տեսնելու, տեսնելու է նրան, իշխան Անդրեյին այդ վերջին աղոտ ու լուծվող քառակուսու մեջ։ Բայց որքան էլ նա պատրաստ էր ամենափոքր բիծն ընդունել մարդկային կերպարանքի կամ դագաղի տեղ, այնուամենայնիվ ոչինչ չէր տեսնում։ Նա սկսեց աչքերը թարթել շուտ-շուտ և հեռացավ հայելուց։

— Ինչպես է որ ուրիշները տեսնում են, իսկ ես ոչինչ չեմ տեսնում, — ասավ նա։ — Դե՛, դու նստիր, Սոնյա։ Հիմա անպատճառ դու պիտի նստես, — ասավ նա։ — Միայն իմ փոխարեն... Ես այնպես սարսափում եմ հիմա։

Սոնյան նստեց հայելու առաջ, հարմարեցրեց նրա դիրքն ու սկսեց նայել։

— Այ, Սոֆյա Ալեքսանդրովնան անպատճառ կտեսնի,— շշունջով ասավ Դունյաշան,—իսկ դուք շարունակ ծիծաղում եք։

Սոնյան լսեց այդ խոսքերը, լսեց և այն, թե ինչպես Նատաշան շշուկով ասավ.

— Ես էլ գիտեմ, որ նա կտեսնի. նա անցյալ տարի էլ տեսավ։

Երեք րոպեի չափ բոլորը լուռ էին։ «Անպատճառ» շշնջաց Նատաշան և ասելիքը դեռ չէր վերջացրել, հանկարծ Սոնյան մի կողմ հրեց բռնած հայելին ու աչքերը ծածկեց ձեռով։

— Ա՜խ, Նատաշա,— ասավ նա։

— Տեսա՞ր. տեսա՞ր։ Ի՞նչ տեսար,— բացականչեց Նատաշան հայելին բռնելով։

Սոնյան ոչինչ չտեսավ, նա հենց այն է ուզում էր աչքերը թարթել ու վեր կենալ, երբ լսեց Նատաշայի ձայնը, որ ասավ «անպատճառ»... Նա չէր ուզում խաբել ո՛չ Դունյաշային, ո՛չ Նատաշային և նստելը ծանր էր նրա համար։ Նա ինքն էլ չը-գիտեր, թե ինչպես և ինչի հետևանքով մի ճիչ դուրս թռավ իր բերանից, երբ աչքերը ծածկեց ձեռով։

— Նրան տեսա՞ր,— հարցրեց Նատաշան նրա ձեռը բռնելով։

— Այո։ Կաց... ես... տեսա նրան,— ասավ Սոնյան ակամա, դեռ չիմանալով, թե նրան ասելով ո՛ւմ նկատի ունի Նատաշան. Նիկոլային, թե նրան — Անդրեյին։

«Բայց ինչո՞ւ չասեմ, թե ի՞նչ եմ տեսել. չէ՛ որ ուրիշներն էլ տեսնում են։ Եվ ով կարող է իմ սուտը բռնել՝ տեսե՞լ եմ թե ոչ», անցավ Սոնյայի մտքով։

— Այո, ես նրան տեսա,— ասավ Սոնյան։

— Ինչպե՞ս։ Ինչպե՞ս։ Կանգնա՞ծ է թե՞ պառկած։

— Ոչ, տեսա... սկզբում բան չկար, մեկ էլ հանկարծ տեսնում եմ, որ նա պառկած է։

— Անդրեյը պառկա՞ծ է։ Նա հիվա՞նդ է,— վախեցած աչքերն ընկերուհուն հառած՝ հարցրեց Նատաշային։

— Ոչ, ընդհակառակը, ընդհակառակը, նրա դեմքն ուրախ էր, նա շրջվեց դեպի ինձ,— այն րոպեին, երբ նա խոսում էր՝ նրան թվաց թե տեսել է այն, ինչ ասում է։

— Է, հետո՞, Սոնյա։

— Էլ բան չչոկեցի, ինչ-որ կապույտ ու կարմիր...

— Սո՛նյա։ Նա ե՞րբ կվերադառնա։ Երբ կտեսնեմ նրան։ Աստված իմ, որքան եմ անհանգստանում թե՛ նրա, թե՛ ինձ համար, և առհասարակ սարսափում եմ այն բանի համար...— ասավ Նատաշան և, չպատասխանելով Սոնյայի մխիթարանքի խոսքերին, անկողին մտավ և, մոմը հանգցնելուց հետո երկար ժամանակ բաց աչքերով անշարժ պառկած էր անկողնում և սառած ապակիների միջով նայում էր լուսնի սառը լույսին։

XIII

Շուտով, տոներից հետո, Նիկոլայը հայտնեց մորը, որ ինքը սիրում է Սոնյային և հաստատապես որոշել է ամուսնանալ նրա հետ։ Կոմսուհին, որ վաղուց նկատել էր, թե ինչ է կատարվում Սոնյայի և Նիկոլայի միջև և վաղուց սպասում էր այդպիսի բացատրության, լուռ լսեց նրա ասածը և որդուն ասավ, թե կարող է ամուսնանալ ո՛ւմ հետ ցանկանում է, բայց թե ո՛չ ինքը, ո՛չ էլ հայրը չեն կարող իրենց օրհնությունը տալ մի այդպիսի ամուսնության։ Առաջին անգամ Նիկոլայը զգաց. որ մայրը դժգոհ է իրենից, և չնայած իրեն շատ սիրում էր. այնուամենայնիվ չէր զիջելու։ Կոմսուհին, սառնությամբ, առանց որդու երեսին նայելու, մարդ ուղարկեց ամուսնու ետևից. և երբ կոմսն եկավ. կոմսուհին ուզեց որդու ներկայությամբ կարճ և սառը հայտնել ամուսնուն բանի էությունը, բայց չդիմացավ. դժգոհությունից լաց եղավ ու դուրս եկավ սենյակից։ Ծեր կոմսն սկսեց անվճռականորեն համոզել Նիկոլային և խնդրել, որ նա հրաժարվի իր մտադրությունից։ Նիկոլայը պատասխանեց, որ ինքը չի կարող իր խոսքը դրժել. հայրը հառաչեց և, ըստ երևույթին, շփոթված, շուտով ընդհատեց իր խոսքն ու գնաց կոմսուհու մոտ։ Որդու հետ ունեցած բոլոր ընդհարումների միջոցին՝ կոմսն ուներ այն գիտակցությունը, թե ինքը մեղավոր է նրա առաջ՝ գործերի քայքայված դրության համար, ուստի և նա չկարողացավ բարկանալ որդու վրա, որ նա հրաժարվեց հարուստ հարսնացուից և ընտրեց անօժիտ Սոնյային. միայն այս դեպքում նա պարզորեն հիշեց, թե եթե գործերը քայքայված չլինեին, Նիկոլայի համար Սոնյայից ավելի լավ հարսնացու չէր կարող լի-

նել, իսկ գործերի քայքայման մեջ մեղավոր է միայն ինքը՝ իր Միտենկայով ու իր բոլոր անհաղթահարելի սովորություններով։

Այդ գործի մասին ծնողներն այլևս չխոսեցին որդու հետ, բայց դրանից մի քանի օր հետո կոմսուհին Սոնյային կանչեց իր մոտ և խստասրտությամբ, որ անսպասելի էր թե՛ մեկի, թե՛ մյուսի համար, նախատեց ազգականուհուն՝ որդուն գրավելու և ապերախտ լինելու համար։ Սոնյան լուռ, աչքերը ցած գցած լսում էր կոմսուհու խիստ խոսքերը և չէր հասկանում, թե ինչ են պահանջում իրենից։ Նա պատրաստ էր ամեն բան զոհել իր բարեկամների համար։ Անձնազոհություն կատարելու միտքը նրա ամենասիրած մտածումներից մեկն էր, բայց այս դեպքում նա չէր կարողանում հասկանալ, թե ո՛ւմ համար և ի՛նչ պետք է զոհաբերի։ Նա չէր կարող չսիրել կոմսուհուն և Ռոստովների ամբողջ ընտանիքը, բայց չէր կարող չսիրել և Նիկոլային և չիմանալ, թե իր երջանկությունը կախված է այդ սիրուց։ Նա լուռ էր և տխուր, ու չպատասխանեց։ Նիկոլայը, ինչպես իրեն թվաց, այլևս չկարողացավ տանել այդ դրությունը և գնաց մոր հետ բացատրվելու։ Նիկոլայը մերթ աղաչում էր մորը՝ ներել իրեն ու Սոնյային և համաձայնել իրենց ամուսնության, մերթ սպառնում էր մորը նրանով, որ եթե Սոնյային հալածեն, ինքն անմիջապես ծածուկ կամուսնանա նրա հետ։

Կոմսուհին սառնությամբ, որ նորություն էր Նիկոլայի համար, պատասխանեց, որ նա չափահաս է, որ իշխան Անդրեյն ամուսնանում է առանց հոր համաձայնության, և որ նույնը կարող է անել և նա, բայց ինքն այդ բանսարկուին երբեք իր աղջիկը չի համարի։

Բանսարկու խոսքից զայրացած, Նիկոլայը, ձայնը բարձրացնելով, մորն ասավ, որ ինքն երբեք չի կարծել, թե մայրը կստիպեր իրեն իր զգացմունքները վաճառել, և եթե այդ այդպես է, նա վերջին անգամն է ասում... Բայց նա չկարողացավ ասել այն կտրական խոսքը, որը, ինչպես երևում էր նրա դեմքի արտահայտությունից, սարսափով էր սպասում մայրը և որը, գուցե, առմիշտ մի ծանր հիշողություն մնար նրանց կյանքում։ Նա չկարողացավ խոսքը վերջացնել, որովհետև

Նատաշան գունատ ու լուրջ դեմքով սենյակ մտավ դռան ետևից, ուր կանգնած ականջ էր դնում։

— Նիկոլենկա, դատարկ բաներ ես խոսում. լռի՛ր, լռի՛ր։ Քեզ ասում եմ՝ լռի՛ր...— գրեթե ճչաց նա, որպեսզի խլացնի եղբոր ձայնը։

— Մայրիկ, սիրելիս, դա բոլորովին դրանից չէ... հոգիս, խեղճ մայրիկս,— դիմեց նա մորը, որն իրեն պառակտման եզրին զգալով, սարսափով նայում էր որդուն, բայց համառության ու պայքարով տարվելու հետևանքով, չէր ուզում և չէր կարողանում անձնատուր լինել։

— Նիկոլենկա, ես քեզ կբացատրեմ, դու գնա՛. իսկ դուք մայրիկ լսեցեք,— ասում էր նա մորը։

Նրա խոսքերն անմիտ էին, բայց նրանք այն արդյունքն ունեցան, ինչ ցանկանում էր Նատաշան։

Կոմսուհին ծանր հեծկլտանքով երեսը թաքցրեց աղջկա կրծքին, իսկ Նիկոլայը վեր կացավ տեղից և, գլուխը բռնելով, դուրս եկավ սենյակից։

Նատաշան սկսեց հաշտության գործը և բանն այնտեղ հասցրեց, որ Նիկոլայը մորից խոստումն առավ, որ Սոնյային չեն նեղի, և ինքն էլ խոսք տվեց, որ ծնողներից թաքուն ոչինչ չի անի։

Գնդում գործերը կարգավորելու, հրաժարական տալու և վերադառնալու ու Սոնյայի հետ ամուսնանալու հաստատ մտադրությամբ, Նիկոլայը՝ լուրջ ու տխուր, ծնողների հետ գրժտված, բայց ինչպես իրեն էր թվում, խենթի պես սիրահարված, հունվարի սկզբներին մեկնեց գունդ։

Նիկոլայի գնալուց հետո Ռոստովների տունն ավելի տխուր էր քան երբևէ։ Կոմսուհին հոգեկան խանգարումից հիվանդացավ։

Սոնյան տխուր էր՝ թե՛ Նիկոլայից անջատված լինելու պատճառով, թե՛ այն թշնամական տոնի համար, որ չէր կարող չունենալ դեպի նա կոմսուհին։ Կոմսն այժմ ավելի, քան երբևէ մտահոգված էր գործերի վատ վիճակով, որոնք պահանջում էին կտրուկ միջոցներ։ Անհրաժեշտ էր ծախել Մոսկվայի տունը և մերձմոսկովյան կալվածը, իսկ ծախելու համար պետք էր մեկնել Մոսկվա։ Բայց կոմսուհու առողջական դրությունը հարկադրում էր օրըստօրե հետաձգել այդ մեկնումը։

Նատաշան, որ թեթևությամբ և նույնիսկ ուրախությամբ տարավ փեսացուից անջատվելու առաջին օրերը, այժմ օրեցօր ավելի հուզվում ու անհամբեր էր դառնում։ Այն միտքը, թե իր լավագույն ժամանակը ապարդյուն է կորչում, ինչ որ սակայն կարող էր գործադրել նրան սիրելու համար,— այդ միտքը շարունակ տանջում էր նրան։ Իշխան Անդրեյի նամակները մեծ մասամբ բարկացնում էին նրան։ Նրա համար վիրավորական էր՝ մտածել, որ այն ժամանակ, երբ ինքն ապրում է միայն նրա մասին մտածելով, նա այնտեղ ապրում է իսկական կյանքով, տեսնում է նորանոր վայրեր, նորանոր մարդիկ, որոնք հետաքրքրում են իրեն։ Որքան հետաքրքրական էին լինում նրա նամակները, նա այնքան ավելի դժգոհ էր լինում։ Իսկ իր նամակները, որ ուղարկում էր նրան, ոչ միայն մխիթարանք չէին պատճառում իրեն, այլ թվում էին ձանձրալի և կեղծ պարտականություն։ Նա չէր կարողանում գրել, որովհետև հնարավոր չէր նամակում ճշգրիտ արտահայտել գեթ մի հազարերորդ մասը այն բանի, ինչ սովոր էր արտահայտել ձայնով, ժպիտով ու հայացքով։ Նատաշան փեսացուին գրում էր դասական (կլասիկ) միօրինակ չոր նամակներ, որոնց ինքն էլ ոչ մի նշանակություն չէր տալիս և որոնց սևագրության ուղղագրական սխալները շտկում էր կոմսուհին։

Կոմսուհու առողջական դրությունը չէր լավանում։ Բայց Մոսկվա մեկնելն այլևս անկարելի էր հետաձգել։ Պետք էր օժիտը պատրաստել, պետք էր տունը ծախել, և, բացի դրանից, իշխան Անդրեյին սպասում էին նախ Մոսկվայում, ուր այդ ամեն ապրում էր իշխան Նիկոլայ Անդրեյիչը, և Նատաշան համոզված էր, որ նա արդեն եկել է։

Կոմսուհին մնաց գյուղում, իսկ կոմսը՝ Սոնյային ու Նատաշային հետն առնելով, հունվարի վերջին մեկնեց Մոսկվա։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Պիեռը՝ իշխան Անդրեյի ու Նատաշայի նշանադրությունից հետո, առանց որևէ ակնհայտ պատճառի, հանկարծ զգաց, որ այլևս անհնար է շարունակել իր նախկին կյանքը։ Որքան էլ նա հաստատ համոզված էր իր բարերարի բացահայտած ճշմարտությունների մեջ, որքան էլ առաջին շրջանում ուրախությամբ տարված էր ինքնակատարելագործման ներքին աշխատանքով, որին անձնատուր էր եղել այնպիսի ջերմեռանդությամբ,— այնուամենայնիվ իշխան Անդրեյի ու Նատաշայի նշանադրությունից և Իոսիֆ Ալեքսեևիչի մահից հետո, որի մասին նա տեղեկություն ստացավ գրեթե նույն նշանախոսության օրը, նախկին կյանքի ամբողջ հմայքը հանկարծ ընկավ նրա աչքում։ Մնաց միայն կյանքի կմախքը, տունը՝ գեղեցկափայլ կնոջով, որն այժմ վայելում էր մի ականավոր անձնավորության ողորմածությունը, ծանոթությունն ամբողջ Պետերբուրգի հետ և պաշտոնն իր տաղտկալի ձևականություններով։ Եվ այդ նախկին կյանքը հանկարծ անսպասելի գարշելիությամբ պատկերացավ Պիեռին։ Նա դադարեց իր օրագիրը գրելուց, խուսափում էր եղբայրների շրջանից, նորից սկսեց ակումբ հաճախել, նորից սկսեց շատ խմել, նորից սկսեց մոտենալ ամուրիների շրջաններին և, մի խոսքով, սկսեց այնպիսի կյանք վարել, որ կոմսուհի Ելենա Վասիլևնան հարկ համարեց խիստ նկատողություն անել նրան։ Պիեռն զգաց, որ կինն իրավացի է, և, նրան չվարկաբեկելու համար, մեկնեց Մոսկվա։

Մոսկվայում, հենց որ նա մտավ իր՝ թառամած ու թառամող իշխանադուստրերով և մեծաթիվ սպասավորներով լեցուն տունը, հենց որ, քաղաքով անցնելիս, տեսավ Իվերյան աստվածամոր մատուռը՝ ոսկեշրջանակ սրբապատկերների առջև վառած անթիվ մոմերով, Կրեմլի հրապարակը՝ անկոխ ձյունով, կառապաններին և Սիվցևի Վրաժեկի խրճիթները, երբ տեսավ ոչինչ չցանկացող, ոչ մի տեղ չշտապող, իրենց վերջին օրերն ապրող Մոսկվայի ծերունիներին, երբ տեսավ պառավներին, Մոսկվայի տիկնանց, Մոսկվայի պարահանդեսները և Մոսկվայի Անգլիական ակումբը,— նա իրեն զգաց իր տանը, խաղաղ մի հանգրվանում։ Մոսկվայում նա իրեն զգաց այնպես, ինչպես մարդ զգում է իրեն իր հին խալաթում — հանգիստ, տաք, սովորականի պես ու մի քիչ անմաքուր։

Մոսկվայի ամբողջ հասարակությունը, պառավներից ըսկըսած մինչև երեխաները, Պիեռին ընդունեցին իբրև վաղուց սպասվող մի հյուրի, որի տեղը միշտ պատրաստ է եղել ու թափուր։ Մոսկվայի բարձր հասարակության համար Պիեռը ամենասիրելի, բարի, խելոք, ուրախ, մեծահոգի պարզամիտ մեկն էր — մի ցրված ու բարեհոգի, հին վարք ու բարքի տեր մի ռուս բարին։ Նրա քսակը միշտ դատարկ էր, որովհետև բաց էր բոլորի համար։

Բենեֆիսները, անպարկեշտ պատկերները, արձանները, բարեգործական ընկերությունները, գնչուները, դպրոցները, ընկերական վճարովի ճաշերը, խրախճանքները, մասոնները, եկեղեցիները, գրքերը — մի խոսքով ոչ ոք և ոչ մի բան նրանից մերժում չէր ստանում, եթե չլինեին նրա երկու բարեկամները, որ նրանից բավական փող էին պարտք վերցրել և իրեն էլ առել իրենց խնամակալության տակ, նա ամեն ինչ բաժանած կլիներ։ Ակումբում առանց նրան ոչ մի ճաշ, ո՛չ մի երեկույթ չէր լինում։ Հենց որ նա, երկու շիշ մարգից հետո, փռվում էր բազմոցի վրա իր տեղում, նրան շրջապատում էին և սկսում զրույց, վիճաբանություններ ու կատակներ։ Երբ վիճում էին, նա միայն իր բարի ժպիտով և տեղին ասած կատակով — հաշտեցնում էր։ Մասոնական ժողովներն անցնում էին տարտամ ու ձանձրալի, եթե նա չէր լինում։

Երբ ամուրիների ընթրիքից հետո նա իր բարի ու քաղցր ժպիտով, ուրախ ընկերների թախանձանքներին զիջելով, տեղից ելնում էր նրանց հետ գնալու, ջահելների շրջանում ցնծագին ու խանդավառ բացականչություններ էին լսվում։ Պարահանդեսներում նա՝ էր պարում, եթե կավալերի մեկը պակաս էր լինում։ Ջահել տիկիններն ու օրիորդները նրան սիրում էին նրա՝ համար, որ նա ոչ ոքի ուշադրություն չնվիրելով՝ հավասարապես սիրալիր էր բոլորի հետ, մանավանդ ընթրիքից հետո։ «Il est charmant, il n'a pas de sexe»[1], ասում էին նրա մասին։

Պիեռը պաշտոնաթող, իրենց կյանքի վերջին օրերը Մոսկվայում բարեհոգությամբ ապրող այն կամերհերներից էր, որոնց թիվը հարյուրների էր հասնում։

Ինչպես կոսկար նա, եթե յոթը տարի առաջ, երբ նա նոր միայն եկել էր արտասահմանից, մեկը նրան ասեր, թե նա որևէ բան որոնելու և հնարելու կարիք չունի, թե նրա ուղին վաղուց հարթված է, նախապես որոշված և թե որքան էլ նա դես ու դեն ընկնի, նա կլինի այն, ինչ որ բոլորն են՝ նրա դրության մեջ գտնվողները։ Նա այս բանին չէ՛ր կարող հավատալ։ Մի՞թե նա չէր, որ ամբողջ սրտով ցանկանում էր մե՛րթ ռեսպուբլիկա առաջ բերել Ռուսաստանում, մե՛րթ Նապոլեոն լինել, մե՛րթ փիլիսոփա, մերթ Նապոլեոնին հաղթող տակտիկ։ Մի՞թե նա չէր, որ հնարավոր էր համարում և ջերմեռանդորեն փափագում էր վերածնել մարդկային արատավոր ցեղը և ինքն իրեն հասցնել կատարելության ամենաբարձր աստիճանին։ Մի՞թե նա չէր, որ դպրոցներ ու հիվանդանոցներ հիմնեց և ազատություն տվեց իր ճորտերին։

Իսկ այժմ այդ բոլորի փոխարեն ահա թե ո՛վ է նա — անհավատարիմ կնոջ հարուստ ամուսին, պաշտոնաթող կամերհեր, որ սիրում է լավ ուտել-խմել և, կոճակներն արձակած, թեթև հայհոյել կառավարության,— անդամ Մոսկվայի Անգլիական ակումբի և ամենքից սիրված անդամը Մոսկվայի հասարակության։ Երկար ժամանակ նա չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե ինքը հենց այն պաշտոնաթող մոսկվացի կամերհերն է, որի տիպն այնպես սաստիկ ատում էր նա յոթ տարի առաջ։

Երբեմն նա իրեն մխիթարում էր այն մտքերով, թե ինքը

[1] Շատ սքանչելի է, բայց սեռ չունի։

միայն այնպես, առայժմ է վարում այդ կյանքը. բայց հետո նրան սարսափեցնում էր մի ուրիշ միտք, թե այդպես, առայժմ, քանի-քանի մարդիկ իր նման կյանքը և այդ ակումբն են մղտել իրենց բոլոր ատամներով ու մազերով, և վերջը այնտեղից դուրս են եկել առանց ատամների ու մազերի։

Հպարտության բոպեներին, երբ նա մտածում էր իր դրության մասին, նրան թվում էր, թե ինքը բոլորովին ուրիշ մարդ է և նման չէ այն պաշտոնաթող կամերհերներին, որոնց ատում էր առաջ, թե նրանք իրենց վիճակից գոհ ու հանգիստ տափակ ու տխմար մարդիկ են, «իսկ ես այժմ էլ դժգոհ եմ և շարունակ ուզում եմ որևէ բան անել մարդկության համար»,— ասում էր նա ինքն իրեն հպարտության բոպեներին։ «Գուցե իմ բոլոր ընկերները նույնպես, ինչպես և ես, պայքարել, որոնել են մի նոր ուրույն ճանապարհ այս կյանքում, և նույնպես, ինչպես ես, միջավայրի, հասարակության ու ցեղի զորությամբ,— այն տարերային ուժի զորությամբ, որի հանդեպ մարդն անզոր է,— եկել հասել են այնտեղ, ուր և ես», ասում էր նա ինքն իրեն համեստության բոպեներին, և մի քանի ժամանակ Մոսկվայում ապրելով, նա այլևս չէր ատում, այլ սկսել էր սիրել, հարգել և խղճալ ինչպես իրեն, նույնպես և իր բախտակիցներին։

Պիեռն այլևս հուսահատության, սևամաղձության և կյանքի հանդեպ նողկանքի վայրկյաններ չէր ունենում. բայց նույն հիվանդությունը. որ առաջ արտահայտվում էր սուր ձևերով, մտել էր նրա ներսը և մի ակնթարթ նրանից չէր հեռանում։ «Հանուն ինչի՞։ Ինչո՞ւ համար։ Ի՞նչ է կատարվում աշխարհում», տարակուսանքով հարցնում էր նա ինքն իրեն օրը մի քանի անգամ, ակամա զբաղեցնելով իր միտքը կյանքի երևույթների իմաստով. բայց փորձով իմանալով, որ այդ հարցերը պատասխան չունեն, նա աշխատում էր շատ հեռու վանել իրենից այդ մտքերը, սկսում էր գիրք կարդալ, կա՛մ շտապում էր ակումբ և կա՛մ Ապոլլոն Նիկոլաևիչի մոտ՝ քաղաքի բամբասանքների մասին խոսելու։

«Ելենա Վասիլևնան, որ իր մարմնից բացի ոչինչ չսիրող և աշխարհի ամենահիմար կանանցից մեկն է,— մտածում էր Պիեռը,— մարդկանց թվում է բարձր խելքի ու նրբակիրթ ճաշակի տեր, և բոլորը խոնարհվում են նրա առաջ։ Նապոլեոն Բոնապարտը բոլորից արհամարհված էր մինչ այն, քանի դեռ մեծ էր, իսկ այն օրից, երբ նա դարձավ մի ողորմելի կոմեդիանտ, Ֆրանց կայսրն աշխատում էր իր աղջիկը ապօրինի կնության տալ նրան։ Սպանացիք, կաթոլիկ հոգևորականության միջոցով, գոհաբանում էին աստծուն, որ իրենք հունիսի 14-ին հաղթեցին ֆրանսացիներին, իսկ ֆրանսացիք, նույն կաթոլիկ հոգևորականության միջոցով, գոհաբանում էին նույն աստծուն նրա՛ համար, որ իրենք հունիսի 14-ին հաղթեցին սպանացիներին։ Իմ եղբայր մասոնները արյունով երդվում են, որ իրենք պատրաստ են ամեն ինչ զոհել մերձավորի համար, բայց աղքատների օգտին կազմակերպված հանգանակությանը մեկական ռուբլի էլ չեն տալիս և Աստծին լարում են մանանա որոնողների դեմ, հոգում են իսկական շոտլանդական գորգի և ծիսագրության մասին, որի իմաստը չի հասկանում և նա՛, ով գրել է այդ, և որը ոչ ոքի հարկավոր չէ։ Մենք բոլորս դավանում ենք քրիստոնեական այն օրենքը, որը պատվիրում է մեզ՝ ներել մեզ վիրավորողներին և սիրել մերձավորներին,— մի օրենք, որի զորությամբ մենք Մոսկվայում կանգնեցրել ենք քառասունք-քառասնից եկեղեցի, իսկ երեկ խարազանով ձաղկեցինք փախչող մարդուն, և նույն սիրո ու ներողամտության օրենքի սպասավորը՝ քահանան, խաչը տվեց զինվորին համբուրելու՝ մահապատժից առաջ»։ Այսպես էր մտածում Պիեռը, և այս բոլոր, ընդհանուր, ամենքին հայտնի կեղծիքը, որքան էլ նա ընտելացել էր դրան, կարծես մի ինչ-որ նոր բան, ամեն անգամ զարմացնում էր նրան։ «Ես հասկանում եմ այդ կեղծիքն ու շփոթությունը,— մտածում էր նա,— բայց ինչպե՞ս պատմեմ նրանց ա՛յն բոլորը, ինչ հասկանում եմ ես։ Ես փորձել ու միշտ գտել եմ, որ նրանք էլ իրենց հոգու խորքում ըմբռնում են նույնը, ինչ որ ես, բայց աշխատում են միայն չտեսնել այն։ Նշանակում է, այդպես էլ պետք է։ Բայց ես, ես ո՞ւր կորչեմ»,— մտածում էր Պիեռը։ Նա շատ շատերի, մանավանդ ռուս մարդկանց հատուկ դժբախտ ընդունակությամբ տեսնում ու հավատում էր բարու և ճշմարտության հնարավորությունը և շատ պարզ տեսնում էր կյանքի չարն ու կեղծիքը, որպեսզի լուրջ մասնակցություն ունենար այդ կյանքում։ Աշխատանքի յուրաքանչյուր ասպարեզ նրա աչքում կապվում էր չարի ու խաբեության հետ։ Ինչ էլ նա փորձել էր լինել, ինչի էլ ձեռնար-

կել էր, շարն ու կեղծիքը ետ էին մղում նրան և փակում նրա գործունեության բոլոր ուղիները։ Մինչդեռ պետք էր ապրել, պետք էր զբաղվել մի գործով։ Անչափ ծանր էր կյանքի այս անլուծելի հարցերի ճնշման տակ մնալը, ուստի և նա անձնատուր էր լինում կյանքի առաջին իսկ հրապույրներին, որպեսզի միայն մոռանա այդ հարցերը։ Նա այցելում էր ամեն տեսակ ընկերություններ, շատ խմում էր, պատկերներ էր գնում և շենքեր շինում, իսկ գլխավորը — շատ կարդում էր։

Նա կարդում էր ամեն բան, ինչ ձեռն էր ընկնում, և կարդում էր այնպես, որ տուն գալով, դեռ լաքեյը նրա վերնազգեստը չհանած, նա արդեն գիրքը ձեռին կարդում էր, — և ընթերցանությունից անցնում էր քնի, քնից՝ զրույցի հյուրասրահներում ու ակումբում, զրույցից անցնում էր կերուխումի ու կանանց, կերուխումից՝ նորից զրույցի, ընթերցանության ու գինու։ Գինին հետզհետե նրա համար դարձավ ֆիզիկական և և միաժամանակ բարոյական պահանջ։ Չնայած որ բժիշկները ասում էին, թե իր գիրության պատճառով գինին վտանգավոր է նրա համար, նա այնուամենայնիվ գինի շատ էր խմում։ Նա իրեն բոլորովին լավ էր զգում միայն ա՛յն ժամանակ, երբ ինքն էլ չնկատելով ինչպես, մի քանի բաժակ գինի լցնելով իր մեծ բերանը, հաճելի ջերմություն էր զգում մարմնի մեջ. սիրաշիր էր դառնում դեպի իր մերձավորները, իսկ միտքը պատրաստ էր լինում մակերեսորեն արձագանք տալու ամեն երևույթի, առանց խորանալու նրա էության մեջ։ Միայն մի երկու շիշ գինի խմելուց հետո, նա մութ կերպով գիտակցում էր, որ կյանքի խճճված, սոսկալի հանգույցը, որ առաջ սարսափեցնում էր իրեն, այնքան էլ սարսափելի չէ, ինչպես թվում էր։ Աղմուկը գլխում, շաղակրատելով, ունկնդրելով զրույցներին կամ ճաշից ու ընթրիքից հետո կարդալու միջոցին շարունակ նրա աչքի առջև էր այդ հանգույցի որևէ կողմը։ Բայց միայն գինու ազդեցության տակ էր նա ասում իրեն. «Այդ ոչինչ։ Այդ ես կլուծեմ։ Ահա և իմ բացատրությունը պատրաստ է, բայց հիմա ժամանակ չկա, — այդ բոլորի մասին ես հետո կմտածեմ»։ Բայց այդ հետո-ն երբեք չէր գալիս։

Անոթի, առավոտյան պահին, բոլոր նախկին հարցերը նրան ներկայանում էին նույնպիսի անլուծելի ու սարսափելի

կերպարանքով. և Պիեռը փութկոտությամբ գիրք էր առնում ձեռը և ուրախանում, երբ մեկը գալիս էր մոտը։

Երբեմն Պիեռը հիշում էր իր լսած պատմությունն այն մասին, թե ինչպես պատերազմում զինվորները, — հրաձգության ներքո լինելով, բայց պաշտպանված, — երբ անելու բան չունեն, փութաջանորեն մի որևէ զբաղմունք են որոնում իրենց համար, որպեսզի ավելի հեշտ տանեն վտանգը։ Եվ Պիեռին բոլոր մարդիկ թվում էին այդպիսի զինվորներ, որ ուզում են փրկվել կյանքից. ոմանք փառասիրությամբ, ոմանք թղթախաղով, ոմանք օրենքներ գրելով, ոմանք կանանցով, ոմանք խաղալիքներով, ոմանք ձիերով, ոմանք քաղաքականությամբ, ոմանք որսորդությամբ, ոմանք գինով, ոմանք պետական գործերով։ «Չկա ոչ աննշան, ոչ կարևոր բան. բոլորը մեկ է. միայն թե ազատվեմ դրանից, ինչպես կարող եմ, — մտածում էր Պիեռը։ — Միայն թե չտեսնեմ այն, այդ սարսափելին»։

II

Զմեռվա, սկզբին իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկին աղջկա հետ միասին եկան Մոսկվա։ Իր անցյալով, իր խելքով, իր ինքնատիպությամբ, մանավանդ դեպի Ալեքսանդր կայսեր թագավորությունն եղած հիացմունքի թուլանալու հետևանքով և շնորհիվ հակաֆրանսական ու հայրենասիրական ուղղության, որ տիրում էր այդ ժամանակ Մոսկվայում, իշխան Նիկոլայ Անդրեևիչն իսկույն ևթ դարձավ մոսկվացիների հատուկ հարգանքի առարկան և Մոսկվայի հակակառավարական օպոզիցիայի կենտրոնը։

Իշխանը բավական ծերացել էր այդ տարին։ Երևան էին եկել ծերության բացահայտ նշաններ. հանկարծակի քուն, ամենամոտ ժամանակի անցքերի մոռացում, հեռու անցյալի մտաբերում և մանկական սնափառություն, որ նա ի հայտ էր բերում Մոսկվայի օպոզիցիայի պարագլխի դերում։ Չնայած դրան, ծերունին, առանձնապես երեկոները, երբ իր կիսամուշտակով ու սնգուրած կեղծամով դուրս էր գալիս թեյելու և սկսում էր իր կցկտուր պատմությունը անցյալի մասին և ավելի կցկտուր ու խիստ դիտողությունները ներկայի մասին,

նա իր բոլոր հյուրերի մեջ խորին հարգանքի հավասար զգացում էր հարուցանում։ Այցելուների համար այդ հնամյա տունը՝ հսկայական տրյումոներով, մինչև ուլուցիոն շրջանի կահ-կարասիներով, սնգուրված լաքեյներով և ինքն էլ՝ անցած դարերի այդ կամակոր ու խելացի ծերունին՝ իր հեզ աղջկա և գեղեցիկ Ֆրանսուհու հետ միասին, որոնք խորին պատկառանք էին զգում դեպի նա,— վեհորեն հաճելի տեսարան էր ներկայացնում։ Բայց այցելուները չէին մտածում, որ բացի այդ երկու-երեք ժամից, որոնց միջոցին նրանք տեսնում էին տանտերերին, կար ևս 22 ժամ, որոնց մեջ անցնում էր տան գաղտնի ներքին կյանքը։

Այդ ներքին կյանքը վերջին ժամանակներս Մոսկվայում իշխանադուստր Մարիայի համար դարձավ շատ ծանր։ Մոսկվայում նա զուրկ էր լավագույն ուրախություններից —«աստծո մարդկանց» հետ զրուցելուց և առանձնությունից, որոնք թարմացնում էին նրան Լիսիե Գորիում, և ոչ մի շահ ու հաճույք չէր զգում մայրաքաղաքի կյանքից։ Նա շրջանի մեջ չէր լինում. բոլորը գիտեին, որ հայրը նրան ոչ մի տեղ չի թողնում առանց իրեն, իսկ ինքը՝ հայրը, տկարության պատճառով չէր կարող գնալ, և դրա համար էլ իշխանադուստր Մարիային ճաշերի ու երեկույթների չէին հրավիրում։ Նա բոլորովին թողել էր ամուսնանալու հույսը. նա տեսնում էր, թե հայրը ի՞նչ սառնությամբ ու կատաղությամբ էր ընդունում ու ճանապարհ դնում այն երիտասարդներին, որոնք կարող էին փեսացու լինել։ Իշխանադուստր Մարիան բարեկամներ չուներ. այս անգամ Մոսկվայում նա հիասթափվեց իր երկու ամենամոտ մարդկանցից։ M-lle Bourienne-ը, որի հետ նա առաջ էլ չէր կարողանում բոլորովին անկեղծ լինել, այժմ տհաճություն էր պատճառում նրան, և նա էլ որոշ պատճառներով սկսել էր իրեն հեռու պահել իշխանադուստր Մարիայից։ Ժյուլին, որ Մոսկվայում էր և որին իշխանադուստր Մարիան հինգ տարի շարունակ նամակներ էր գրում, բոլորովին խորթ թվաց, երբ իշխ. Մարիան նորից անձամբ պատահեց նրան։ Այդ ժամանակները Ժյուլին, որ եղբայրների մահվան պատճառով դարձել էր Մոսկվայի ամենահարուստ հարսնացուներից մեկը, վայելում էր աշխարհիկ հաճույքների բովանդակ եռուզեռը։ Նա շրջապատված էր երիտասարդներով, որոնք, ինչպես նա էր կարծում,

գնահատում էին նրա արժանիքները։ Ժյուլին գտնվում էր բարձր շրջաններին պատկանող այն պառավ օրիորդի վիճակում, որն զգում է, թե հասել է ամուսնության վերջին շանսը և այժմ կամ երբեք պիտի որոշվի իր բախտը։ Հինգշաբթի օրերը իշխանադուստր Մարիան տխրությամբ մտածում էր, որ այժմ չկա մեկը, որին ինքը նամակ գրի, որովհետև Ժյուլին, որի ներկայությունը ոչ մի ուրախություն չէր պատճառում նրան, այստեղ էր և ամեն շաբաթ տեսնվում էր նրա հետ։ Իշխանադուստր Մարիան, իբրև մի հին էմիգրանտ, որ հրաժարվել է ամուսնանալ այն կնոջ հետ, որի մոտ մի քանի տարի շարունակ անցրել է իր երեկոները, ափսոսում էր, որ Ժյուլին այստեղ է և ինքը նամակ գրելու մարդ չունի։ Մոսկվայում չկար մեկը, որի հետ խոսեր, չկար մեկը, որին հայտներ իր վիշտը, իսկ այդ ժամանակի ընթացքում բավական վիշտ էր կուտակվել նրա սրտում։ Իշխան Անդրեյի վերադարձի և ամուսնության ժամանակը մոտենում էր, իսկ նրա հանձնարարությունը՝ հորը նախապատրաստելու մասին, ոչ միայն չէր կատարված, այլև գործը, ընդհակառակը, թվում էր բոլորովին փչացած. և հենց միայն կոմսուհի Ռոստովայի անունը հիշելը կատաղեցնում էր ծեր իշխանին, որ առանց այն էլ մեծ մասամբ վատ տրամադրության մեջ էր լինում։ Մի նոր վիշտ, որ ավելացել էր իշխանադուստր Մարիայի վշտին, դա դասերն էին, որ տալիս էր նա եղբոր վեց տարեկան որդուն։ Իր, դեպի Նիկոլուշկան ունեցած վերաբերմունքի մեջ իշխանադուստրը սարսափով նկատում էր, որ ինքը ևս զուրկ չէ հոր դյուրագրգիռ բնավորությունից։ Երեխային սովորեցնելու ժամանակ որքան էլ նա իրեն ասում էր, թե չպետք է տաքանալ, ջղայնանալ, բայց գրեթե ամեն անգամ, երբ Ֆրանսական այբբենարանն առաջն էր դնում, նրա մեջ սաստիկ ցանկություն էր առաջանում, որքան կարելի է շուտ, դյուրությամբ հաղորդել իր գիտցածը երեխային, որը միշտ վախենում էր, թե ահա հիմա հորաքույրը պիտի բարկանա. երեխայի ամենափոքրիկ անուշադրության դեպքում նա ցնցվում էր, շտապում, տաքանում, ձայնը բարձրացնում, երբեմն ձիգ տալիս նրա ձեռն ու անկյունում կանգնեցնում։ Երեխային անկյունում կանգնեցնելով՝ նա ինքն սկսում էր լաց լինել իր չար ու վատ բնավորության համար. և Նիկոլուշկան, նրա օրինակին հետևելով, հեկեկալով, առանց

թույլտվության, հեռանում էր իր անկյունից, մոտենում հորաքրոջը և նրա թաց ձեռները դեմքից հեռացնելով, սկսում էր մխիթարել նրան։ Բայց իշխանադուստերն ավելի վիշտ էր պատճառում հոր դյուրագրգռությունը, որ միշտ ուղղված էր լինում իր դեմ և որ վերջին ժամանակներս դաժանության էր հասել։ Եթե հայրն ստիպեր նրան գիշերները ծունր դնել, եթե ծեծեր, ստիպեր փայտ ու ջուր կրել, իշխանադուստրը մի վայրկյան չէր մտածի, որ իր դրությունը ծանր է. բայց այդ սիրող-տանջարարը, ամենադաժանը՝ այն պատճառով, որ սիրում էր աղջկան և դրա համար տանջում իրեն ու նրան, սովորություն ուներ դիտմամբ ոչ միայն վիրավորել, ստորացնել աղջկան, այլև ցույց տալ նրան, որ միշտ և ամեն բանում նա է մեղավոր։ Վերջին ժամանակներս նրա մեջ նկատվում էր մի նոր գիծ, որ ամենից ավելի էր տանջում իշխանադուստր Մարիային, դա այն էր, որ հայրն ավելի ու ավելի էր մոտենում m-lle Bourienne-ին։ Այն միտքը, որ որդու մտադրությունը լսելու առաջին վայրկյանին ծագեց նրա գլխում հանաքի ձևով, թե՝ եթե Անդրեյն ամուսնանում է, այդ դեպքում ինքն էլ կամուսնանա Bourienne-ի հետ, այդ միտքն ըստ երևույթին դուր էր եկել նրան, և նա վերջին ժամանակներս համառորեն (ինչպես թվում էր իշխանադստեր), միայն իրեն վիրավորելու համար, մի առանձին քնքշանք էր ցույց տալիս դեպի m-lle Bourienne-ը և իր անբավականությունը դեպի աղջիկն արտահայտում էր նրանով, որ սեր էր ցույց տալիս Bourienne-ին։

Մի անգամ Մոսկվայում, իշխանադուստր Մարիայի ներկայությամբ (նրան թվում էր, թե հայրն այդ դիտմամբ իր ներկայությամբ արավ), ծեր իշխանը համբուրեց m-lle Bourienne-ի ձեռը և նրան դեպի իրեն քաշելով՝ գրկեց փաղաքշանքով։ Իշխանադուստրը բոնկեց ու դուրս վազեց սենյակից։ Մի քանի րոպե անց իշխանադուստր Մարիայի սենյակը մտավ m-lle Bourienne-ը և ժպտալով, իր դուրեկան ձայնով ինչ-որ ուրախ բան պատմեց։ Իշխանադուստրը արագ սրբեց արցունքները, վճռական քայլերով մոտեցավ Bourienne-ին և, ըստ երևույթին, ինքն էլ չիմանալով ինչո՛ւ, զայրալից փութկոտությամբ ու որոտալից ձայնով գոռաց ֆրանսուհու վրա. «Դա զզվելի, ստոր, տմարդի բան է օգտվել... թուլությունից...»։

Նա խոսքը, չվերջացրեց. «Հեռացե՛ք իմ սենյակից», ճչաց նա և հեկեկաց։

Հետևյալ օրը իշխանը ոչ մի խոսք չասավ աղջկան. բայց իշխանադուստրը նկատեց, որ ճաշին հայրը հրամայեց կերակուրները մատուցել m-lle Bourienne-ից սկսելով։ Ճաշի վերջում, երբ բուֆետապանը, նախկին սովորությամբ, սուրճը մատուցեց կրկին իշխանադուստր Մարիայից սկսելով, իշխանը հանկարծ կատաղեց, հենակը նետեց Ֆիլիպպի վրա ու անմիջապես կարգադրեց նրան զինվոր տանել։

— Չե՛ն լսում... երկո՛ւ անգամ ասի... չե՛ն լսում։ Նա՝ այս տան առաջին մարդն է. նա՝ իմ լավագույն բարեկամուհին է,— գոռում էր իշխանը։— Եվ եթե դու թույլ տաս քեզ,— պոռաց նա զայրույթով բռնված, առաջին անգամը դիմելով իշխանադուստր Մարիային,— եթե թույլ տաս մի անգամ էլ, ինչպես երեկ համարձակվեցիր... մոռանալ նրան, ես քեզ ցույց կտամ, թե ո՛վ է այս տան տերը։ Դո՛ւրս. երեսդ չտեսնեմ. ներողություն խնդրիր նրանից։

Իշխանադուստր Մարիան ներողություն խնդրեց Ամալյա Եվգենիևնայից ու հորից թե՛ իր համար, թե՛ բուֆետապան Ֆիլիպպի համար, որը պաշտպանություն էր խնդրել։

Այդպիսի րոպեներին իշխ. Մարիայի հոգին լցվում էր այնպիսի զգացումներով, որ նման էր զոհաբերություն անող հպարտության։ Եվ այդպիսի րոպեներին, երբ հանկարծ այդ հայրը, որին նա դատապարտում էր, կա՛մ ակնոցն էր որոնում, հենց ակնոցի մոտերքը շոշափելով ու այն չտեսնելով, կա՛մ մոռանում էր այն, ինչ եղել էր քիչ առաջ, կա՛մ թույլ ոտներով անհաստատ քայլ էր անում ու շուրջը նայում, թե արդյոք մեկը չտեսավ իր թուլությունը, կա՛մ, որ ամենից վատն էր, երբ ճաշի ժամանակ հյուրեր չէին լինում նրան զբաղեցնող, նա հանկարծ՝ անհեռոցիկը բաց թողնելով՝ ննջում էր և սրբվող գլուխը կախ գցում ափսեի վրա։ «Նա ծեր, թույլ մարդ է, իսկ ես դատապարտում եմ նրան», մտածում էր իշխանադուստրն այդպիսի րոպեներին, նողկանք զգալով դեպի ինքը։

III

1810 թվին Մոսկվայում ապրում էր կարճ ժամանակում անուն հանած մի բժիշկ, ահագին հասակով, գեղեցիկ ու սիրալիր ինչպես ֆրանսացի և, ինչպես ասում էին ամբողջ Մոսկվայում, արտասովոր հմտության տեր մի բժիշկ — Մետիվիեն։ Բարձր շրջաններում նա ընդունված էր ոչ որպես բժիշկ, այլ իբրև հավասար մարդ։

Իշխան Նիկոլայ Անդրեյիչը, որ միշտ ծիծաղում էր բոժշկության վրա, վերջերս, m-lle Bourienne-ի խորհրդով, թողեց այդ բժշկին իր տունը և ընտելացավ նրան։ Մետիվիեն շաբաթը երկու անգամ լինում էր իշխանի մոտ։

Ս. Նիկոլայի տոնին, իշխանի անվանակոչության օրը, ամբողջ Մոսկվան նրա տան մուտքի առջև էր, բայց նա կարգադրեց ոչ ոքի չընդունել, այլ միայն մի քանի հոգու, որոնց ցուցակը հանձնեց իշխանադուստր Մարիային, պատվիրեց կանչել ճաշի։

Մետիվիեն, առավոտյան շնորհավորելու գալով, իբրև բոժիշկ, պատշաճ համարեց de forcer la consigne (արգելքը խախտել), ինչպես հայտնեց նա իշխանադուստր Մարիային, և գնաց իշխանի մոտ։ Այնպես էր պատահել, որ իր անվանակոչության այդ առավոտ ծեր իշխանը գտնվում էր իր ամենավատ տրամադրություններից մեկի մեջ։ Ամբողջ առավոտը նա շրջում էր տանը, տեղի-անտեղի դիպչում սրան-նրան և իրեն այնպես էր ձևացնում, թե չի հասկանում այն, ինչ ասում են իրեն և թե իրեն էլ չեն հասկանում։ Իշխանադուստր Մարիան շատ լավ էր հասկանում հոր հոգեկան վիճակը, նրա մտահոգքրթմնջոցը, որ սովորաբար վերջանում էր կատաղության բռնկումով, ուստի և նա՝ իշխանադուստրն ամբողջ այդ առավոտ ման էր գալիս ինչպես մի լցված ու պայթելու պատրաստ հրացանի առաջ, սպասելով անխուսափելի կրակոցին։ Առավոտը, մինչև բժշկի գալը, բարեհաջող անցավ։ Բժշկին ներս թողնելով, իշխանադուստր Մարիան գիրքը ձեռին նստեց հյուրասրահի դռան մոտ, որտեղից կարող էր լսել այն բոլորը, ինչ կատարվում էր առանձնասենյակում։

Սկզբում նա լսում էր միայն Մետիվիեի ձայնը, ապա հոր ձայնը, հետո երկու ձայնն էլ լսվեցին միաժամանակ, դուռը

լայն բացվեց և շեմքին երևաց Մետիվիեի վախեցած, գեղեցիկ կերպարանքը՝ մազերի սև փնջով, և իշխանը՝ թասակով ու խալաթով, կատաղությունից այլանդակված դեմքով և աչքերի խոնարհած բիբերով։

— Չես հասկանո՞ւմ, — պոռում էր իշխանը։ — Իսկ ես հասկանում եմ։ Ֆրանսական լրտես։ Բոնապարտի ստրուկ, լրտե՛ս, դո՛ւրս իմ տնից։ Դո՛ւրս, ասում եմ... — և նա դուռը ծածկեց

Մետիվիեն ուսերը թոթվելով մոտեցավ m-lle Bourienne-ին, որը, աղմուկը լսելով, վազել էր հարևան սենյակից։

— Իշխանը այնքան էլ առողջ չէ, — la bile et le transport au cerveau. Tranquillisez-vouz, je repasserai demain[1], — ասավ Մետիվիեն և, մատը շուրթերին դնելով, շտապ դուրս եկավ սենյակից։

Դռան ետևից լսվում էր հողաթափեր հագած ծեր իշխանի քայլերն ու գոռում-գոչյունը. «Լրտեսներ, դավաճաններ, ամե՛ն տեղ դավաճաններ են։ Իմ տանն էլ մի վայրկյան հանգիստ չունեմ»։

Մետիվիեի գնալուց հետո ծեր իշխանն աղջկան կանչեց իր մոտ և իր ամբողջ զայրույթը թափեց նրա գլխին։ Նա մեղավոր էր նրանում, որ հոր մոտ լրտես էին թողել գա։ Չէ որ նա ասավ, թե իշխանադուստր Մարիան ցուցակ կազմի, և նա, ով այդ ցուցակում չկար, ներս չթողնեին։ Ինչո՞ւ ապա ներս թողին այդ սրիկային։ Բոլորի պատճառը նա՛ է՝ իշխանադուստրը։ Նրա երեսից իշխանը մի րոպե հանգիստ չունի, չի կարող հանգիստ մեռնել, ասում էր նա։

— Չէ, բարեկամս, հեռացի՛ր, հեռացի՛ր. դուք այդ գիտեք, գիտեք։ Ես այլևս չեմ կարող, — ասավ նա և սենյակից դուրս եկավ։ Եվ կարծես վախենալով, թե չլինի դուստրը կարող է որևէ կերպ մխիթարվել, նա վերադարձավ աղջկա մոտ և, աշխատելով հանդարտ տեսք ընդունել, ավելացրեց. — Չկարծեք, թե ես դա ասի բարկությանս բոպեին, ոչ, ես հանգիստ եմ, ես ամեն ինչ մտածել եմ. այդպես էլ կլինի — հեռացե՛ք. ձեզ համար մի տեղ գտե՛ք։ — Բայց չդիմացավ և մի կատաղու-

[1] Մաղձոտություն և ուղեղի բորբոքում ունի։ Հանգստացեք, ես վաղը կգամ։

թյամբ, որ կարող է ունենալ միայն սիրող մարդը, ինքն էլ ըստ երևույթին, տանջվելով, բռունցքները թափ տվեց ու գոռաց դստեր վրա.

— Գոնե՛ հիմարի մեկը կնության առներ սրան։— Նա դուռը ծածկեց, կանչեց իր մոտ m-lle Bourienne-ին և լռեց միայն իր կաբինետում։

Ժամը երկուսին հավաքվեցին ճաշի հրավիրված վեց հոգին։

Հյուրերը — հայտնի կոմս Ռաստոպչինը, իշխան Լոպուխինը՝ իր եղբոր որդու հետ, գեներալ Ջատրովը՝ իշխանի հին մարտական ընկերը, և երիտասարդներից Պիեռն ու Դրուբեցկոյը, — սպասում էին նրան հյուրասրահում։

Մի քանի օր առաջ Բորիսն արձակուրդով Մոսկվա գալով ցանկացավ, որ իրեն ներկայացնեն իշխան Նիկոլայ Անդրեիչին և այն աստիճան կարողացավ արժանանալ նրա բարյացակամության, որ իշխանը բացառություն արավ նրա նկատմամբ՝ բոլոր ամուրի երիտասարդների հանդեպ, որոնց առհասարակ չէր ընդունում։

Մեր իշխանի տունն այն չէր, ինչ կոչվում է «բարձր շրջան», բայց դա մի փոքրիկ շրջանակ էր, որի մասին քաղաքում թեև չէին խոսում, բայց այնտեղ ընդունվելն ամենից շոյիչն էր համարվում։ Այդ բանը Բորիսը հասկացավ մի շաբաթ առաջ, երբ իր ներկայությամբ Ռաստոպչինը հայտնեց գլխավոր հրամանատարին (որը ս. Նիկոլայի տոնին կոմսին հրավիրում էր ճաշի), թե ինքը չի կարող գալ։

— Այդ օրն արդեն ես միշտ գնում եմ իշխան Նիկոլայ Անդրեիչի մասունքները համբուրելու։

— Ա՜խ, այո, այո,— պատասխանեց գլխավոր հրամանատարը։— Նա ինչպե՞ս է։

Հնաձև ու հին կարասիներով զարդարված հյուրասրահում հավաքված փոքրիկ հասարակությունը նման էր դատաստանական հանդիսավոր խորհրդի։ Բոլորը լուռ էին, և եթե խոսում էին, ապա խոսում էին կամաց։ Իշխան Նիկոլայ Անդրեիչը ներս մտավ լուռ ու լուրջ տեսքով։ Իշխանադուստր Մարիային թվում էր էլ ավելի հեզ ու ամաչկոտ, քան սովորաբար։ Հյուրերը նրա հետ խոսում էին ակամայից, որովհետև տեսնում

էին, որ նա գլուխ չունի իրենց զրույցները լսելու։ Միայն կոմս Ռաստոպչինն էր, որ զրույցի թելը չէր կտրում, պատմելով մերթ քաղաքային, մերթ քաղաքական վերջին նորությունները։ Լոպուխինն ու ծեր գեներալը մերթ ընդ մերթ մասնակցում էին զրույցին։

Իշխան Նիկոլայ Անդրեիչը նրան լսում էր, ինչպես մի գերագույն դատավոր լսում է իրեն արվող զեկուցումը և երբեմնակի լռությամբ ու կարճ խոսքով հայտնում, թե ինքն ընդունում է ի գիտություն այն, ինչ զեկուցում են իրեն։ Խոսակցությունը տարվում էր այնպիսի եղանակով, որ ինքնստինքյան պարզ էր, թե ոչ ոք հավանություն չի տալիս այդ բանին, ինչ կատարվում է քաղաքական աշխարհում։ Պատմում էին դեպքեր, որ պարզ ցույց էին տալիս, թե ամեն բան դեպի վատն է գնում, բայց յուրաքանչյուր պատմության և դատողության մեջ զարմանալին այն էր, որ պատմողը կանգ էր առնում կամ նրան կանգնեցնում էին ամեն անգամ հենց այն տեղում, երբ խոսքը կարող էր վերաբերել թագավոր կայսեր անձնավորությանը։

Ճաշի վրա խոսակցությունը դարձավ քաղաքական վերջին նորության, այն է՝ Օլդենբուրգի դուքսի կալվածները Նապոլեոնի կողմից գրավելու և Նապոլեոնին ուղղած թշնամական հայտագրի շուրջը, մի հայտագիր, որը միաժամանակ ուղարկվել էր եվրոպական բոլոր արքունիքներին։

— Բոնապարտը Եվրոպայի հետ վարվում էր այնպես, ինչպես ծովահենը նվաճած ծովի վրա,— ասավ կոմս Ռաստոպչինը, կրկնելով մի քանի անգամ իր կողմից ասված խոսքը։— Զարմանում ես միայն թագավորների համբերության ու կուրության վրա։ Այժմ բանը պապին է հասել, և Բոնապարտը, առանց քաշվելու, ուզում է տապալել կաթոլիկ կրոնապետին,— ու բոլորը լռո՛ւմ են։ Միայն մեր թագավորն է բողոքել Օլդենբուրգի դուքսի կալվածները գրավելու դեմ։ Այն էլ...— կոմս Ռաստոպչինը լռեց, զգալով, որ հասել է այն տեղը, ուր այլևս անկարելի է դատապարտել։

— Օլդենբուրգի դքսության փոխարեն առաջարկվել են ուրիշ հողեր,— ասավ իշխան Նիկոլայ Անդրեյիչը։— Ճիշտ այնպես, ինչպես ես գյուղացիներին Լիսիե Գորիից տեղափո-

խեցի Բոգուշարովո և Ռյազանի կալվածները, այնպես էլ նա վարվում է դուքսերի հետ։

— Le duc d'Oldenbourg supporte son malheur avec une force de caractère et une résignation admirable[1], — ասավ Բորիսը, հարգալիր միջամտելով խոսակցությանն։

Նա այդ բանն ասավ նրա համար, որովհետև Պետերբուրգից գալու ժամանակ պատիվ էր ունեցել ներկայանալ դուքսին։ Իշխան Նիկոլայ Անդրեյիչը Բորիսին նայեց մի այնպիսի հայացքով, կարծես ինչ-որ բան էր ուզում ասել նրան այդ առթիվ, բայց միտքը փոխեց, համարելով նրան այդ բանի համար շատ երիտասարդ։

— Ես կարդացի մեր բողոքը Օլդենբուրգի գործի մասին և զարմացա այդ հայտագրի վատ խմբագրության վրա, — ասավ կոմս Ռաստոպչինն այն մարդու անփույթ եղանակով, որ խոսում է իրեն լավ ծանոթ գործի մասին։

Պիեռը միամիտ զարմանքով նայեց Ռաստոպչինին, չհասկանալով, թե հայտագրի վատ խմբագրությունն ինչո՞ւ է անհանգստացրել նրան։

— Մի՞թե միևնույն չէ, թե հայտագիրն ինչպես է գրված, կոմս, — ասավ նա, — եթե նրա բովանդակությունն ուժեղ է։

— Mon cher, avec nos 500 mille hommes de troupes, il serait facile d'avoir un beau style[2], — ասավ կոմս Ռաստոպչինը։

Պիեռը հասկացավ, թե կոմս Ռաստոպչինին ինչո՞ւ է անհանգստացրել հայտագրի խմբագրությունը։

— Ինչպես երևում է թուղթ մրոտողները բավական բազմացել են, — ասավ ծեր իշխանը. — այնտեղ Պետերբուրգում բոլորը գրում են ոչ միայն հայտագիր — նոր օրենքներ են գրում բոլորը։ Իմ Անդրյուշան այնտեղ Ռուսաստանի համար մի ամբողջ հատոր օրենքներ է գրել։ Հիմա բոլորը գրո՞ւմ են։ — Եվ նա անբնական կերպով ծիծաղեց։

Խոսակցությունը պահ մի դադարեց. ծեր գեներալն իր հազով ուշադրություն դարձրեց իր վրա։

— Հաճե՞լ եք լսել վերջին դեպքի մասին, որ տեղի ունեցավ Պետերբուրգում զորատեսի ժամանակ։ Ինչպե՞ս իրեն ցույց տվեց ֆրանսական դեսպանը։

— Ի՞նչ։ Այո, ես ինչ-որ բան լսել եմ. նա կարծեմ ինչ-որ անհարմար բան է ասել նորին մեծության ներկայությամբ։

— Նորին մեծությունը նրա ուշադրությունը դարձրել է գրենադերյան դիվիզիայի և հանդիսավոր մարշի վրա, շարունակեց գեներալը, — բայց դեսպանն իբրև թե ոչ մի ուշադրություն չի դարձրել և իբրև իրեն թույլ է տվել ասելու, թե «մեզ մոտ Ֆրանսիայում այդ տեսակ դատարկ բաների վրա ուշադրություն չենք դարձնում»։ Թագավորը ոչինչ չի հաճել ասել։ Հետևյալ զորատեսին, ասում են, թագավորը ոչ մի անգամ չի բարեհաճել նրան դիմել։

Բոլորը լռեցին. այդ փաստը, որ անձնապես թագավորին էր վերաբերում, չէր կարելի քննության առնել։

— Հանդուգն են, — ասավ իշխանը։ — Մետիվիեին ճանաչո՞ւմ եք։ Քիչ առաջ ես նրան դուրս արի իմ տնից։ Նա այստեղ էր. չնայած որ ես խնդրել էի ոչ ոքի չթողնել ինձ մոտ, նրան թողել էին, — ասավ իշխանը բարկացած նայելով դստերը։

Եվ նա պատմեց իր ամբողջ խոսակցությունը ֆրանսացի բժշկի հետ և այն պատճառները, որոնք համոզել էին, թե Մետիվիեն լրտես է։ Թեպետև այդ պատճառները շատ անբավարար ու անորոշ էին, այնուամենայնիվ ոչ ոք չառարկեց։

Տապակած կերակրից հետո շամպայն մատուցին։ Հյուրերը ելան տեղներից ու շնորհավորեցին ծեր իշխանին։ Իշխանադուստր Մարիան նույնպես մոտեցավ հորը։

Նա դստերը նայեց սառը, չար հայացքով ու նրան դեմ արավ իր խորշոմած, ածիլված այտը։ Նրա դեմքի ամբողջ արտահայտությունը վկայում էր, որ առավոտյան խոսակցությունը չի մոռացել, որ նրա որոշումը մնում է իր նախկին ուժի մեջ և, որ շնորհիվ հյուրերի ներկայության, նա այդ բանն այժմ չի ասում նրան։

Երբ սեղանատնից անցան հյուրասրահ՝ սուրճ խմելու, ծերերը նստեցին միասին։

Իշխան Նիկոլայ Անդրեիչն ավելի աշխուժացավ և իր հայացքը հայտնեց առաջիկա պատերազմի մասին։

Նա ասավ, որ մեր պատերազմը Բոնապարտի դեմ անհ-

[1] Օլդենբուրգի դուքսն իր դժբախտությունը կրում է կամքի զարմանալի ուժով և ճակատագրին հնազանդ։

[2] Սիրելիս, մեր 500 հազարանոց բանակով, կարծեմ, հեշտ է լավ ոճով արտահայտվել։

հաջող կլինի մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք կշարունակենք դաշնակցել գերմանացիների հետ և կմիջամտենք եվրոպական գործերին, որոնց հետ մեզ զոռով կապեց Տիլզիտի հաշտությունը։ Մենք ոչ Ավստրիայի համար, ոչ էլ Ավստրիայի դեմ չպետք է կռվենք։ Մեր ամբողջ քաղաքականությունը պետք է գործադրենք Արևելքում, իսկ Բոնապարտի վերաբերմամբ միայն մի բան — պետք է զինվենք, ամրացնենք սահմանը և անհողդողդ լինենք քաղաքականության մեջ, և նա երբեք չի համարձակվի անցնել ռուսական սահմանը, ի՛նչպես յոթը թվին։

— Բայց մենք, իշխան, ինչպես կռվենք ֆրանսացիների դեմ,— ասավ կոմս Ռաստոպչինը։— Մի՞թե մենք կարող ենք ծառանալ մեր ուսուցիչների և աստվածների դեմ։ Նայեցեք մեր երիտասարդության, նայեցեք մեր շքափայլ տիկիններին։ Մեր աստվածները ֆրանսացիներն են, մեր երկնային արքայությունը՝ Փարիզը։

Նա սկսեց ձայնը բարձրացնել, ըստ երևույթին նրա համար, որպեսզի բոլորը լսեն։

— Հագուստները ֆրանսական, մտքերը ֆրանսական, զբաղումները ֆրանսական։ Դուք ահա ձեր Մետիվիեի վզակոթից բռնած դուրս եք արել նրա՛ համար, որ նա ֆրանսացի է և անպիտան, իսկ մեր մեծաշուք տիկինները հոգի են տալիս նրա համար։ Երեկ ես մի երեկույթում էի, ահա այդտեղ հինգ տիկիններից երեքը կաթոլիկ էին, որ, պապի թույլտվությամբ, կիրակի օրերը ասեղնագործով են զբաղվում։ Այնինչ իրենք համարյա թե մերկ նստած էին, ինչպես առևտրական բաղնիսի ցուցանակներ, թող թույլ տրվի ասել։ Է՛հ, իշխան, նայում ես մեր երիտասարդներին և քիչ է մնում Պետրոս Մեծի հին մահակը ձեռդ առնես ու ռուսավարի դրանց կողքերը մի լավ ջարդես. այն ժամանակ կխրատվեին։

Բոլորը լռեցին։ Մեր իշխանը ժպիտը դեմքին նայեց Ռաստոպչինին և գլխի շարժումով հավանություն տվեց նրա ասածներին։

— Դեհ, մնաք բարով, ձերդ պայծառափայլություն. մի՛ հիվանդացեք.— ասավ Ռաստոպչինը, իրեն հատուկ արագ շարժումներով ու ձեռն իշխանին մեկնելով։

— Գնաս բարև, սիրելիս,— տավիղ է, միշտ հաճույքով

լսում եմ նրան,— ասավ ծեր իշխանը Ռաստոպչինին, ձեռը բռնելով և համբույրի համար այտը նրան դեմ անելով։ Ռաստոպչինի հետ վեր կացան և մյուսները։

IV

Իշխանադուստր Մարիան հյուրասրահում նստած լսում էր ծերերի այդ խոսակցություններն ու դատողությունները, բայց լսածներից ոչինչ չէր հասկանում. նա այն մասին էր մտածում միայն, թե հյուրերը չեն նկատում, արդյոք, հոր թշնամական վերաբերմունքը դեպի իրեն։ Նա նույնիսկ չնկատեց այն առանձին ուշադրությունն ու սիրալիրությունը, որ ճաշի ամբողջ ընթացքում ցույց էր տալիս իրեն Դրուբեցկոյը, որն արդեն երրորդ անգամն էր լինում իրենց տանը։

Իշխանադուստր Մարիան ցրված, հարցական հայացքով դարձավ Պիեռին, որը բոլոր հյուրերից հետո՝ գլխարկը ձեռին ու ժպտադեմ մոտեցավ իշխանադուստր Մարիային այն ժամանակ, երբ իշխանը դուրս գնաց և նրանք մենակ մնացին հյուրասրահում։

— Կարելի՞ է մի փոքր էլ նստել,— ասավ նա իր հաստ մարմնով բազկաթոռի վրա փռվելով։

— Խնդրեմ,— ասավ իշխանադուստր Մարիան։ «Դուք ոչինչ չնկատեցի՞ք», ասավ նրա հայացքը։

Պիեռը գտնվում էր հետճաշյա ուրախ տրամադրության մեջ։ Նա նայում էր առջևը և հանդարտ ժպտում։

— Դուք, իշխանադուստր, վաղո՞ւց եք ճանաչում այդ երիտասարդին,— ասավ նա։

— Որի՞ն։

— Դրուբեցկոյին։

— Ոչ, մի քանի օր է...

— Ի՞նչպես է. նա ձեզ դո՞ւր է գալիս։

— Այո նա դուրեկան երիտասարդ է... Դուք այդ ինչո՞ւ եք հարցնում,— ասավ իշխանադուստր Մարիան, շարունակելով մտածել առավոտը հոր հետ ունեցած խոսակցության մասին։

— Նրա համար որ, ես դիտել եմ. երիտասարդ մարդիկ

Պետերբուրգից Մոսկվա գալիս են հարուստ հարսնացուի հետ ամուսնանալու նպատակով։

— Այդ դո՞ւք եք գիտել,— ասավ իշխանադուստր Մարիան։

— Այո,— շարունակեց Պիեռը ժպտերես,— և այդ երիտասարդն այժմ իրեն այնպես է պահում, որ ուր հարուստ հարսնացուներ կան, նա էլ այնտեղ է։ Ինչպես գիտեք՝ կարդում եմ նրա մտադրությունը։ Այժմ նա անվճռականության մեջ է՝ ո՛ւմ վրա հարձակում գործի — ձե՞զ թե օրիորդ Ժյուլի Կարագինայի։ Il est très assidu auprès d'elle[1].

— Նա նրանց մոտ գնո՞ւմ է։

— Այո, շատ հաճախ։ Իսկ դուք գիտե՞ք օրիորդներին զբաղեցնելու նոր ձևը,— ասավ Պիեռն ուրախ ժպիտով, ըստ երևույթին գտնվելով բարեհոգությամբ կատակելու այն ուրախ տրամադրության մեջ, որի համար իր օրագրում նա հաճախ կշտամբում էր իրեն։

— Ոչ, — ասավ իշխանադուստր Մարիան։

— Այժմ Մոսկվայի աղջիկներին դուք գալու համար — il faut être melancolique. Et il est très mélancolique auprès de m-lle Կարագին[2],— ասավ Պիեռը։

— Vraiment?[3] — ասավ իշխանադուստր Մարիան, նայելով Պիեռի բարի գեմքին և չդադարելով իր վշտի մասին մտածելուց։ — «Ես ինձ ավելի թեթև կզգայի,— մտածում էր նա,— եթե կարողանայի որևէ մեկին վստահությամբ հայտնել այն ամենը, ինչ զգում եմ։ Ես կուզեի այդ ամենը Պիեռին ասել։ Նա այնքան բարի ու ազնիվ է։ Ես թեթևություն կզգայի։ Նա ինձ մի խորհուրդ կտար»։

— Դուք կամուսնանա՞յք նրա հետ,— հարցրեց Պիեռը։

— Ա՜խ, կոմս, բոպեներ են լինում, երբ ես պատրաստ եմ լինում ամուսնանալ ամեն մի մարդու հետ,— հանկարծ իրեն համար իսկ անսպասելի լացախառն ձայնով ասավ իշխանադուստր Մարիան։ — Ա՜խ, որքան ծանր է սիրել մտիկ մարդու և զգալ որ... ոչինչ (շարունակեց նա կերկերուն ձայնով) չես կարող անել նրա համար, բացի վիշտ պատճառելուց. երբ զգում ես, որ այդ բանը չես կարող փոխել. մնում է մի բան — հեռանալ, իսկ ո՞ւր գնամ ես...

— Ինչ՞ եք ասում, ձեզ ի՞նչ է պատահել, իշխանադուստր։

Բայց իշխանադուստրը, խոսքը չվերջացրած, լաց եղավ։

— Չգիտեմ ինչ է պատահել։ Մի՛ լսեք ինձ։ Մոռացեք ինչ ասի։

Պիեռի ամբողջ ուրախությունը չքացավ. նա մտահոգ հարց ու փորձ էր անում իշխանադստեր, խնդրում էր նրան ասել ամեն բան, վստահորեն իր վիշտը հայտնել նրան. բայց իշխանադուստրը միայն կրկնում էր, որ Պիեռը մոռանա իր ասածները, որ ինքն էլ չգիտի, թե ինչ է ասում, և որ ինքն ուրիշ վիշտ չունի, բացի այն, որ Պիեռին հայտնի է, որ նա վախենում է, թե իշխան Անդրեյի ամուսնությունը գժտություն առաջ բերի հոր և որդու մեջ։

— Ռոստովների մասին մի բան լսե՞լ եք արդյոք,— հարցրեց իշխանադուստրը, կամենալով խոսակցությունը փոխել։ — Ինձ ասին, որ նրանք շուտով գալու են։ Անդրեյին էլ ամեն օր սպասում եմ։ Ես կուզեի, որ նրանք տեսնվեին այստեղ։

— Իսկ նա այժմ ինչպե՞ս է նայում այդ բանին,— հարցրեց Պիեռը, նա խոսքի տակ հասկանալով ծեր իշխանին։

Իշխանադուստր Մարիան գլուխն օրորեց։

— Բայց ինչ պետք է անեն։ Մի քանի ամիս է մնում, որ տարին լրանա։ Եվ այդ էլ չի կարող լինել։ Ես կուզեի միայն եղբորս մի կերպ ազատել առաջին պահին։ Եվ կուզեի, որ նրանք շուտով գային։ Ես հույս ունեմ, որ կբարեկամանամ եղբորս հարսնացուի հետ։ Դուք նրանց վաղո՞ւց եք ճանաչում,— ասավ իշխանադուստր Մարիան.— ձեռներդ ձեր խղճի վրա դրած ասեք ինձ իսկական ճշմարտությունը. ինչպիսի՞ աղջիկ է դա և դուք ինչպե՞ս եք գտնում նրան։ Բայց ասեք ամբողջ ճշմարտությունը. որովհետև դուք լավ գիտեք, որ Անդրեյը, հակառակ հորս կամքի, այնպիսի ռիսկ է անում, որ ես կցանկանայի իմանալ...

Անորոշ բնազդը Պիեռին ասում էր, որ այդ վերապահումների և ամբողջ ճշմարտությունը ասելու կրկնվող թախանձանքների մեջ արտահայտվում է իշխանադուստր Մարիայի անբարյացակամությունը դեպի իր ապագա հարսը և որ նա

---

[1] Դեպի նա շատ ուշադիր է։

[2] Պետք է մելամաղձոտ լինել։ Եվ նա իրեն շատ մելամաղձոտ է պահում օրիորդ Կարագինայի մոտ։

[3] Ճի՞շտ։

ցանկանում է, որպեսզի Պիեռը չհավանի իշխան Անդրեյի ընտրությունը. բայց Պիեռն ասավ այն, ինչ ավելի շուտ զգում էր, քան մտածում։

— Ես չգիտեմ, ինչպես պատասխանեմ ձեր հարցին,— ասավ նա շիկնելով, ինքն էլ չիմանալով, թե ինչո՞ւ։— Ես բոլորովին չգիտեմ, թե ինչպիսի աղջիկ է նա. ես ոչ մի կերպ չեմ կարող վերլուծել նրան։ Նա հմայիչ է, իսկ թե ինչո՞ւ — չգիտեմ։ Ահա բոլորը, ինչ կարելի է ասել նրա մասին։

Իշխանադուստր Մարիան հոգոց քաշեց. նրա դեմքի արտահայտությունն ասում էր. «Այո, ես այդ բանին սպասում էի և վախենում»։

— Իսկ նա խելո՞ք է,— հարցրեց իշխանադուստր Մարիան։

Պիեռը մտածմունքի մեջ ընկավ։

— Կարծում եմ՝ ոչ,— ասավ նա,— սակայն՝ այո։ Նա իրեն խելոք չի ձևացնում... Բայց նա հմայիչ է և ուրիշ ոչինչ։

Իշխանադուստր Մարիան նորից գլուխն օրորեց բայասաբար։

— Ա՛խ, ես այնպես եմ ցանկանում նրան սիրե՛լ։ Դուք նրան ասացեք, եթե ինձնից շուտ տեսնեք։

— Ես լսել եմ, որ նրանք այս օրերս կգան,— ասավ Պիեռը։

Իշխանադուստր Մարիան հայտնեց Պիեռին իր ծրագիրը, թե ինչպես ինքը, հենց որ Ռոստովները գան, կմտերմանա ապագա հարսին և կաշխատի ծեր իշխանին նմանապես ընտելացնել նրան։

V

Պետերբուրգում Բորիսին չհաջողվեց ամուսնանալ հարուստ հարսնացուի հետ և նա նույն այդ նպատակով եկավ Մոսկվա։ Մոսկվայում Բորիսը գտնվում էր երկու ամենահարուստ հարսնացուների — Ժյուլիի և իշխ. Մարիայի միջև ընտրություն անելու անվճռականության մեջ։ Թեև իշխանադուստր Մարիան, չնայած իր տգեղության, Բորիսին թվում էր Ժյուլիից ավելի գրավիչ, բայց նա մի տեսակ անհարմարություն էր զգում հետապնդել Բալկոնսկայային։ Իր վերջին տեսակցության ժամանակ, ծեր իշխանի անվանակոչության օրը, որքան Բորիսը փորձ էր անում խոսել իր զգացմունքների մասին, իշխանադուստր Մարիան նրան պատասխանում էր անպատեհ խոսքերով և, ըստ երևույթին, իրեն չէր լսում։

Ժյուլին, ընդհակառակը, թեև առանձին, բայց միայն իրեն հատուկ ձևով, սիրով ընդառաջում էր նրա հարգանք մատուցանելուն։

Ժյուլին 27 տարեկան էր։ Եղբայրների մահից հետո նա դարձավ շատ հարուստ։ Նա այժմ բոլորովին տգեղացել էր. բայց կարծում էր, թե ինքը ոչ միայն լավն է, այլև գրավիչ, քան առաջ։ Այդ մոլորությունը նրա մեջ պահպանվում էր շնորհիվ այն բանի, որ նա նախ դարձել էր հարուստ հարսնացու, երկրորդ՝ որքան ավելի էր հասակն առնում, այնքան ավելի անվտանգ էր դառնում տղամարդկանց համար, ուստի և վերջիններս ավելի ազատ էին վարվում նրա հետ և իրենց վրա ոչ մի պարտավորություն չվերցնելով, վայելում էին նրա ընթրիքները, երեկույթները և մասնակցում նրա հավաքույթներին։ Այն տղամարդը, որ տասը տարի առաջ կվախենար ամեն օր գնալ այն տունը, ուր գտնվում էր 17 տարեկան մի օրիորդ, որպեսզի նրան չվարկաբեկի և իրեն չկաշկանդի, այժմ ամեն օր համարձակ գնում էր նրա մոտ և նրա հետ վարվում էր ոչ թե իբրև հարսնացու-օրիորդի հետ, այլ ինչպես մի ծանոթուհու, որը սեռ չունի։

Մոսկվայում Կարագինների տունը այդ ձմեռ ամենահաճելի և հյուրընկալ տունն էր։ Բացի հրավիրովի երեկույթներից ու ճաշերից, Կարագինների տանն ամեն օր հավաքվում էր մեծ հասարակություն, առանձնապես տղամարդիկ, որ ընթրում էին գիշերվա ժամը 12-ին և գրեթե մինչև 3-ը նստում։ Չկար պարահանդես, զբոսանք, թատրոն, ուր Ժյուլին չլիներ։ Նրա արդուզարդը միշտ նորաձև էր։ Բայց, չնայած դրան, Ժյուլին ամեն բանից հիասթափված էր երևում, բոլորին էլ ասում էր, որ ինքը չի հավատում ո՛չ բարեկամության, ո՛չ սիրո, ո՛չ էլ կյանքի որևէ ուրախության և հանգստություն սպասում է միայն այնտեղ։ Նա յուրացրել էր մեծ հիասթափություններ կրած աղջկա տոն, որը կորցրել է իր սիրածին կամ խաբվել է նրանից։ Թեպետ նրա հետ այդպիսի բան չէր պատահել, բայց նրան նայում էին իբրև մի ։ յդպիսինի վրա, և նա ինքն էլ մինչև անգամ հավատում էր, թե ինքը շատ է

տանջվել կյանքում։ Այդ մելամաղձությունը, որ չէր խանգարում նրան ուրախանալ, չէր խանգարում նաև նրան այցելող երիտասարդներին հաճելի ժամանակ անցկացնել։ Նրանց մոտ եկող ամեն մի հյուր իր տուրքն էր տալիս տիրուհու մելամաղձոտ տրամադրության և ապա զբաղվում թե՛ զրույցով, թե՛ պարերով, թե՛ մտավոր խաղերով և թե բուրիմեյի[1] սաուրնիրներով, որ ընդունված էին Կարագինների տանը։ Միայն մի քանի երիտասարդներ, դրանց թվում և Բորիսը, ավելի էին խորանում Ժյուլիի մելամաղձոտ տրամադրության մեջ, և այդ երիտասարդների հետ նա ավելի տևական ու առանձին զրույցներ էր ունենում աշխարհի ունայնության մասին և ցույց էր տալիս նրանց իր ալբոմները, որոնց մեջ կային շատ տխուր պատկերներ, ասացվածներ ու ոտանավորներ։

Ժյուլին առանձնապես սիրալիր էր դեպի Բորիսը. ափսոսում էր, որ նա շուտ հիասթափվել է կյանքից, առաջարկում էր նրան իր բարեկամական այն մխիթարանքը, որ կարող էր ինքն առաջարկել, ինքը կյանքում տանջված լինելով, և վերջը, նրա առաջ բաց արավ իր ալբոմը։ Բորիսը նրա ալբոմում նկարեց երկու ծառ ու գրեց՝ Arbres rustiques, vos sombres rameaux secouent sur moi les ténèbres et la mélancolie[2].

Մի ուրիշ տեղ նա նկարեց մի դամբարան ու գրեց.

«La mort est secourable et la mort est tranquille.
Ah! contre les douleurs il n'y a pas d'autre asile»[3].

Ժյուլին ասավ, որ դա հիանալի է։

— Il y a quelque chose de si ravissant dans le sourire de la mélancolie[4], — ասավ նա Բորիսին բառացի կերպով գրքից քաղած խոսքերը։ — C'est un rayon de lumière dans l'ombre, une nuance entre la douleur et le désespoir, qui montre la consolation possible[5].

---

[1] Առաջարկված հանգերով կազմած ոտանավոր։ Ծ. Թ.։

[2] Մենավոր ծառեր, ձեր մութ ճղները խավար ու մելամաղձություն են թափում վրաս։

[3] Մահը փրկություն է, մահը հանգիստ, այլ ապաստան չկա վշտի դեմ։

[4] Մի ինչ-որ հմայիչ բան կա մելամաղձության ժպիտում։

[5] Դա լուսո մի ճառագայթ է խավարի մեջ, վշտի և հուսահատության միջև եղած երանգը, որ ցույց է տալիս մխիթարանքի հնարավորությունը։

Այդ խոսքերի վրա Բորիսը ոտանավոր գրեց.

«Aliment de poison d'une âme trop sensible,
«Toi, sans qui le bonheur me serait impossible,
«Tendre mélancolie, ah, viens me consoler,
«Viens calmer les tourments de ma sombre retraite,
«Et mêle une douceur secrète
«A ces pleurs, que je sens couler»[1].

Ժյուլին Բորիսի համար տավիղի վրա նվագում էր ամենատխուր նոկտյուրներ։ Բորիսը նրա համար բարձրաձայն կարդում էր «Թշվառ Լիզան» և ընթերցումը շուտ-շուտ ընդհատում իր հուզմունքից շնչարգել լինելով։ Մեծ հասարակության մեջ հանդիպելով՝ Ժյուլին ու Բորիսը միմյանց նայում էին այնպես, կարծես միակ մարդիկն էին աշխարհում, որ անտարբեր են և հասկանում են իրար։

Աննա Միխայլովնան, որ հաճախ այցելում էր Կարագինների և ընկերանում մորը, ճիշտ տեղեկություններ էր հավաքում, թե ի՞նչ է տրվելու Ժյուլիին իբրև օժիտ (տրվելու էին Պենզայի երկու կալվածը և Նիժնի-Նովգորոդի անտառները)։ Աննա Միխայլովնան նախախնամության կամքին անձնատուր և խանդաղատանքով էր նայում այն նուրբ տխրությանը, որն իր որդուն կապում էր հարուստ Ժյուլիի հետ։

— Toujours charmante et mélancolique, cette chère Julie[2], — ասավ նա աղջկան։ — Բորիսն ասում է, թե ինքը հոգով հանգստանում է ձեր տանը։ Նա այնքան հիասթափություններ է կրել և այնքան զգայուն է, — ասում էր մորը։ — Ա՜խ, սիրելիս, վերջին ժամանակներս ես շատ եմ կապվել Ժյուլիի հետ, — ասում էր Աննա Միխայլովնան որդուն, — չեմ կարող նկարագրել։ Եվ ո՞վ կարող է նրան չսիրել։ Դա մի այն-

---

[1] Թույն, որ սնում ես անչափ զգայուն հոգին,
Առանց որի երջանկությունն անկարելի կլիներ ինձ համար,
Դու, քնքուշ մելանխոլիա, ախ, եկ մխիթարիր ինձ.
Եկ, հանգստացրու իմ մռայլ մենության տանջանքները
Եվ գաղտնի քաղցրությունդ խառնիր իմ
Աքցունքներին, որոնց հոսումը զգում եմ ես։

[2] Նա միշտ սքանչելի և մելամաղձոտ է, այդ սիրելի Ժյուլին։

պիսի էակ է որ։ Ա՛խ, Բորի՛ս, Բորի՛ս։— Նա մի բոպեաչափ լռեց։— Ես նրա մորը շատ եմ խղճում,— շարունակեց նա,— մի քանի օր առաջ նա ինձ ցույց տվեց հաշիվներ ու նամակներ, որ ստացել էր Պենզայից (նրանք այնտեղ ահագին կալվածք ունեն), և խեղճը ինքը մեն-մենակ է. այնպես են խաբում նրան։

Բորիսը մորը լսելով՝ հազիվ նկատելի ժպտում էր։ Նա հեզությամբ ծիծաղում էր նրա պարզամիտ խորամանկության վրա, բայց շարունակելով լռել, երբեմն ուշադիր հարցեր էր տալիս նրան Պենզայի և Նիժնի-Նովգորոդի կալվածների մասին։

Ժյուլին վաղուց արդեն իր մելամաղձոտ երկրպագուից առաջարկություն էր սպասում ու պատրաստ էր ընդունել այն. բայց նողկանքի մի ինչ-որ գաղտնի զգացում, որ կար Բորիսի մեջ դեպի Ժյուլին, դեպի նրա ամուսնանալու բուռն ցանկությունը, դեպի նրա անբնականությունը և իսկական սիրո հնարավորությունից զրկվելու սարսափելի զգացումը դեռ պահում էր Բորիսին։ Նրա արձակուրդի ժամկետը լրացել էր արդեն։ Աստծու օրը նա իր ժամանակն ամբողջովին անցնում էր Կարագինների տանը և ամեն օր, ինքն իր մեջ խորհրդածելով, ասում էր, թե վաղը առաջարկություն է անելու։ Բայց Ժյուլիի ներկայությամբ, նայելով նրա գրեթե միշտ սնգուրված կարմիր դեմքին ու կզակին, նրա տամուկ աչքերին ու դեմքի արտահայտությանը, որ միշտ պատրաստակամություն էր հայտնում մելամաձղոտությունից իսկույն ամուսնական երջանկության անբնական զմայլանքի անցնելու, Բորիսը չէր կարողանում արտասանել իր վճռական խոսքը, չնայած որ, իր երևակայության մեջ նա վաղուց արդեն իրեն Պենզայի ու Նիժնի-Նովգորոդի կալվածների տեր էր համարում ու նախագծում էր նրանցից ստացվելիք եկամուտների բաշխումն ու գործադրությունը։ Ժյուլին նկատում էր Բորիսի անվճռականությունը և երբեմն մտածում, որ ինքն ատելի է նրան։ Բայց կանացի ինքնախաբեությունն իսկույն ևեթ մխիթարում էր նրան և նա ինքն իրեն ասում էր, թե Բորիսն ամաչկոտ է միայն սիրո պատճառով։ Ժյուլիի մելամաղձոտությունը սակայն փոխվում էր դյուրագրգռության, և Բորիսի մեկնելուց մի քանի օր առաջ նա կազմեց մի վճռական ծրագիր։ Հենց այն օրերին,

երբ Բորիսի արձակուրդը լրանում էր, Մոսկվայում և, ինքնին պարզ է, Կարագինների հյուրասրահում հայտնվեց Անատոլ Կուրագինը, և Ժյուլին, անսպասելիորեն թողնելով իր մելամաղձոտությունը, դարձավ շատ ուրախ և ուշադիր դեպի Կուրագինը։

— Mon cher,— ասավ Աննա Միխայլովնան որդուն,— je sais de bonne source que le Prince Basile envoie son fils a Moscou pour lui faire épouser Julie[1]. Ես այնպես եմ սիրում Ժյուլիին, որ ուղղակի ափսոսում եմ նրան։ Դուի՞նչ ես կարծում, սիրելիս,— ասավ Աննա Միխայլովնան։

Այն միտքը, թե ինքը հիմար դրության մեջ է ընկնելու և Ժյուլիի մոտ մի ամբողջ ամիս ծանր մելանխոլիկ ծառայությունը կորչելու է իզուր և արդեն նախագծված ու իր երևակայության մեջ ինչպես հարկն է գործադրած Պենզայի կալվածների եկամուտները տեսնելու է ուրիշի, այն էլ տխմար Անատոլի ձեռին,— վիրավորում էր Բորիսին։ Եվ նա գնաց Կարագինների մոտ՝ առաջարկ անելու հաստատ մտադրությամբ։ Ժյուլին նրան դիմավորեց ուրախ և անհոգ տեսքով, անփութորեն պատմեց, թե ինչպես ուրախ անցրեց երեկվա պարահանդեսը և հարցրեց, թե նա ե՞րբ է մեկնում։ Չնայած որ Բորիսը եկել էր իր սիրո մասին խոսելու նպատակով, ուստի և մտադիր էր սիրալիր լինել, նա ջղայնացած սկսեց խոսել կանանց անհավատարմության մասին և այն մասին, թե ինչպես կանայք հեշտությամբ կարողանում են վշտից անցնել ուրախության և թե ինչպես նրանց տրամադրությունը կախված է այն բանից, թե ո՛վ է հետաքրքրվում իրենցով։ Ժյուլին վիրավորվեց և ասավ, թե դա ճիշտ է, որ կնոջը հարկավոր է բազմազանություն և թե միևնույն բանը կձանձրացնի ամենքին էլ։

— Դրա համար էլ ես ձեզ խորհուրդ կտայի...— սկսեց Բորիսը, կամենալով խայթել նրան, բայց նույն բոպեին մի վիրավորական միտք ծագեց նրա գլխում, թե կարող է պատահել, որ առանց նպատակին հասնելու հեռանա Մոսկվայից,

[1] Սիրելիս, ես հավաստի աղբյուրներից գիտեմ, որ իշխան Վասիլին իր որդուն Մոսկվա ուղարկել է նրա համար, որպեսզի նրան ամուսնացնի Ժյուլիի հետ։

իզուր կորցնելով աշխատանքը (մի բան, որ նրան երբեք և ոչ մի գործում չէր պատահել)։

Նա խոսքի կեսին կանգ առավ, աչքերը կախ գցեց, որպեսզի չտեսնի նրա տհաճորեն հուզված ու անվճռական դեմքը և ասավ.

— Ես բնավ նրա համար չեմ եկել, որ ձեզ հետ կռվեմ։ Ընդհակառակը...

Նա նայեց Ժյուլիին, համոզվելու համար, թե կարելի է արդյոք շարունակել։ Ժյուլիի ամբողջ հուզմունքը չքացավ հանկարծ և նա իր անհանգիստ, թախանձող աչքերը՝ ագահ սպասումով հառեց Բորիսի երեսին։ «Ես միշտ այնպես կարող եմ դասավորել իմ կյանքը, որ քիչ տեսնեմ սրան,— մտածեց Բորիսը։— Քանի որ գործն սկսված է, պետք է գլուխ բերել»։ Նա շառագունեց, աչքերը գցեց Ժյուլիի երեսը ու ասավ.

— Դուք գիտե՛ք իմ զգացումները դեպի ձեզ։

Ավելին ասելն ավելորդ էր. Ժյուլիի դեմքը փայլում էր հաղթության ու ինքնագոհության ժպիտով. բայց նա Բորիսին հարկադրեց ասել բոլորը, ինչ առհասարակ ասվում է այդպիսի դեպքերում,— ասել, թե ինքը սիրում է նրան և երբեք ոչ մի կնոջ նրանից ավելի չի սիրել։ Ժյուլին գիտեր, որ Պենզայի կալվածների և Նիժնի-Նովգորոդի անտառների համար ինքը կարող է այդ պահանջել, և ստացավ այն, ինչ պահանջում էր։

Փեսացուն ու հարսնացուն, այլևս չհիշելով իրենց՝ խավարով ու մելամաղձոտությամբ ծածկող ծառերի մասին, ծրագիրներ էին կազմում ապագայում Պետերբուրգում փայլուն կյանք ստեղծելու և այցելություններ էին անում և ամեն ինչ նախապատրաստում շքեղ հարսանիքի համար։

VI

Կոմս Իլյա Անդրեևիչը հունվարի վերջին Նատաշայի ու Սոնյայի հետ եկավ Մոսկվա։ Կոմսուհին դեռևս վատառողջ էր և չկարողացավ գալ, իսկ մինչև նրա առողջանալը անկարելի էր սպասել. իշխան Անդրեյին օրեցօր սպասում էին Մոսկվայում. բացի դրանից պետք էր օժիտ գնել, պետք էր մերձմոսկվյան կալվածը ծախել և օգտվել ծեր իշխանի Մոսկվայում գտնվելու հանգամանքից՝ ապագա հարսին նրան ներկայացնելու համար։ Որովհետև Ռոստովների տունը Մոսկվայում տաքացված չէր և բացի այդ նրանք եկել էին կարճ ժամանակով, առանց կոմսուհու, ուստի և Իլյա Անդրեևիչը որոշեց Մոսկվայում իջևանել Մարիա Դմիտրևնա Ախրոսիմովայի մոտ, որ վաղուց իր հյուրասիրությունն էր առաջարկել կոմսին։

Ուշ երեկոյան Ռոստովների չորս սահնականման կառքերը մտան Մարիա Դմիտրևնայի բակը՝ Ստարայա Կանյուշեննայա թաղում։ Մարիա Դմիտրևնան մենակ էր ապրում։ Աղջկան նա վաղուց մարդու էր տվել։ Որդիները բոլորն էլ ծառայության մեջ էին։

Նա առաջվա պես իրեն պահում էր շիտակ, խոսում էր նույնպես շիտակ, բարձր, կարծիքները հայտնում էր սուր ու կտրուկ և իր ամբողջ էությամբ կարծես հանդիմանում էր մարդկանց ամեն տեսակ թուլությունների, կրքերի և հափշտակությունների համար, որոնց հնարավորությունը նա չէր ընդունում։ Վաղ առավոտից թիկնոցն ուսերին, նա զբաղվում էր տնային գործերով. ապա գնում՝ կիրակի օրերը պատարագի, իսկ պատարագից՝ բանտերը, ուր նա ունենում էր գործեր, որոնց մասին ոչ ոքի ոչինչ չէր ասում. լի օրերը, հագնված, տանն ընդունում էր զանազան դասի խնդրատուների, որոնք ամեն օր գալիս էին նրա մոտ, և հետո ճաշում էր. կուշտ ու համեղ ճաշին մասնակից էին լինում երեք-չորս հյուրեր. ճաշից հետո մի պարտիա փաստոն էր խաղում, երեկոյան պահանջում էր, որ լրագիրներ ու նոր գրքեր կարդան իր համար, իսկ ինքը մի որևէ բան էր գործում։ Քիչ էր պատահում, որ տնից դուրս գար, իսկ եթե դուրս էր գալիս, ապա այցելության էր գնում քաղաքի ամենանշանավոր մարդկանց։

Նա դեռ չէր պառկել, երբ Ռոստովները եկան, և նախասենյակի դուռը ճռռալով ներս թողեց ցրտից եկող Ռոստովներին ու նրանց սպասավորներին։ Մարիա Դմիտրևնան՝ քթին իջեցրած ակնոցով, գլուխը ետ գցած, կանգնել էր դահլիճի դռան մեջ և խիստ ու բարկացած տեսքով նայում էր ներս մտնողներին։ Կարելի էր կարծել, թե նա չարացած է եկվորների դեմ ու հենց հիմա դուրս կանի նրանց, եթե այդ միջոցին նա հոգատար կարգադրություններ չաներ իր մարդկանց՝ հյուրերին ու նրանց իրերը տեղավորելու մասին։

— Կոմսի՞նն են. այստեղ բեր, — ասում էր նա, ճանապարհները ցույց տալով և դեռ ոչ ոքի չբարևելով։ — Օրիորդներ՝ այստեղ, դեպի ձախ։ Դե, դուք ինչ եք կուչ ու հուպ գալիս, — գոռաց նա իր սպասավորների վրա։ — Ինքնաեռն իսկույն տաքացրեք։ Օ՞, ինչ լցվել, սիրունացել ես, — ասավ նա ցըրտից կարմրատակած Նատաշային դեպ իրեն քաշելով։ — Ֆու, սառն ես, դե շուտ հանվիր, — պոռաց նա կոմսի վրա, որ ուզում էր մոտենալ նրա ձեռը համբուրելու։ — Սառել ես երեվի։ Թեյի հետ ռոմ տվեք։ Սոնյուշկա, bonjour, — ասավ նա Սոնյային, ֆրանսերեն այդ ողջույնով ընդգծելով իր փոքրինչ արհամարհական ու սիրալիր վերաբերմունքը դեպի Սոնյան։

Երբ բոլորը, հանվելով ու իրենց կարգի բերելով, եկան Թեյի, Մարիա Դմիտրիևնան հերթով համբուրեց բոլորին։

— Սրտանց ուրախ եմ, որ եկաք ու ինձ մոտ իջևանեցիք, — ասում էր նա։ — Վաղուց ժամանակ էր, — ասավ նա նշանակալից հայացքով Նատաշային նայելով։ — Մերունին այստեղ է, որդուն սպասում է այսօր-էգուց։ Պետք է, պետք է նրա հետ ծանոթանալ։ Բայց այդ մասին հետո կխոսենք, — ավելացրեց նա, նայելով Սոնյային մի այնպիսի հայացքով, որ ցույց էր տալիս, թե նրա ներկայությամբ չի ուզում այդ մասին խոսել։ — Հիմա լսիր, — դիմեց նա կոմսին, — վաղը քեզ ի՞նչ է հարկավոր։ Ո՞ւմ ես կանչելու։ Շինշինի՞ն։ — Նա մատի մեկը ծալեց, — լալկան Աննա Միխայլովնայի՞ն — երկո՛ւ։ Նա որդու հետ այստեղ է։ Նրա որդին էլ ամուսնանում է։ Հետո Բեզուխովի՞ն, հը՞։ Նա էլ կնոջ հետ այստեղ է։ Պիեռը նրանից փախել է, բայց նա ետևից վազել-եկել է։ Չորեքշաբթի օրը Պիեռը ճաշեց ինձ մոտ։ Իսկ սրանց, — ցույց տվեց նա օրիորդներին, — վաղը կտանեմ Իվերյան տիրամոր մատուռը, հետո կերթանք Օբեր-Շելմեյի՝ դերձակուհու մոտ։ Երևի, ամեն ինչ նոր ձևի պիտի պատվիրեք։ Ինձնից օրինակ մի վերցնեք. հիմա թևքերը — ահա այսպես են։ Մի քանի օր առաջ երիտասարդ իշխանադուստր Իրինա Վասիլևնան եկավ ինձ մոտ, սարսափում ես նայել. թևերին կարծես երկու տակառակ է հագցրել։ Չէ որ հիմա օրը մի ձև է դուրս գալիս։ Իսկ դու, դու ի՞նչ գործեր ունես, — խստությամբ դիմեց նա կոմսին։

— Ամեն ինչ միանգամից վրա հասավ, — պատասխանեց

կոմսը։ — Փալասներ պետք է առնել, հետո մերձմոսկովյան կալվածը և տունն ուզող կա։ Եթե ողորմած լինեք, ես մի օրով կեռթամ Մարինսկ, իսկ աղջիկներին կթողնեմ ձեզ մոտ։

— Շատ լավ, ինձ մոտ չեն կորչի։ Ինձ մոտ եղած, խնամակալական խորհրդում եղած — մե՛կ է։ Ես նրանց կտանեմ, ուր հարկավոր է, իսկ հարկ եղած ժամանակը և՛ կկռվեմ, և՛ կփաղաքշեմ, — ասավ Մարիա Դմիտրիևնան իր մեծ ձեռը դիպցնելով իր սիրելի սանուհի Նատաշայի այտին։

Հետևյալ օրն առավոտյան Մարիա Դմիտրիևնան օրիորդներին տարավ Իվերյան մատուռը և m-me Օբեր-Շելմեի մոտ, որը Մարիա Դմիտրիևնայից այնպես էր վախենում, որ միշտ վնասներով արդուզարդ էր զիջում նրան, որպեսզի որքան կարելի է շուտ ճանապարհ դնի նրան։ Մարիա Դմիտրիևնան պատվիրեց գրեթե ամբողջ օժիտը։ Տուն վերադառնալով՝ նա, բացի Նատաշայից, բոլորին դուրս արավ սենյակից ու իր սիրեցյալին կանչեց իր բազկաթոռի մոտ։

— Դե հիմա խոսենք։ Շնորհավորում եմ քեզ քո փեսացուով։ Լա՛վն ես գտել. քո փոխարեն ուրախ եմ. այս հասակից եմ ճանաչում նրան (նա ցույց տվեց հատակից մի արշին բարձր)։ — Նատաշան խնդագին կարմրեց։ — Ես սիրում եմ նրան և նրանց ամբողջ ընտանիքը։ Այժմ լսիր։ Դու գիտես չէ, որ ծեր իշխան Նիկոլայն այնքան էլ չէր ուզում, որ որդին ամուսնանա։ Խստաբարո՛ ծերուկ է։ Պարզ է, իշխան Անդրեյն էլ երեխա չի, առանց նրան էլ կապրի. բայց կամքի հակառակ ընտանիք մտնելը լավ չի։ Պետք է հաշտությա՛մբ, սիրո՛վ։ Դու խելոք ես, կարող ես վարվել, ինչպես հարկն է։ Դու բարի և խելոք եղիր։ Եվ ամեն ինչ լավ կլինի։

Նատաշան լուռ էր, ինչպես Մարիա Դմիտրիևնային էր թվում, ամոթխածությունից, բայց իսկապես Նատաշային հաճելի չէր, որ միջամտում են իր ու իշխան Անդրեյի սիրո գործին, մի գործ, որը նրան մարդկային բոլոր գործերից առանձնահատուկ էր թվում, և որ, նրա հասկացողությամբ, ոչ ոք չէր կարող հասկանալ նրան։ Նատաշան սիրում և ճանաչում էր մի իշխան Անդրեյի, իսկ նա սիրում էր իրեն և այս օրերս պ'տք է գար ու իրեն տաներ։ Ուրիշ էլ ոչինչ հարկավոր չէր Նատաշային։

— Գիտես, ես նրան վաղուց եմ ճանաչում, Մաշինկային

նույնպես, տալիդ, սիրում եմ։ Տալերը լեզվանիկ են լինում, բայց դա այնպիսին է, որ ճանճի էլ չի նեղացնի։ Նա ինձ խընդրել է, որ քեզ հետս տանեմ իրենց մոտ. մի լավ փաթաթվիր նրան, սիրաշահիր. դու նրանից փոքր ես։ Իսկ երբ քոնը գա, այն ժամանակ արդեն ծանոթ կլինես թե՛ քրոջ հետ, թե՛ հոր հետ և թե՛ սիրվածկլինես։ Այդպե՞ս է թե չէ։ Ավելի լավ կըլինի չէ՞։

— Ավելի լավ կլինի,— դժկամությամբ ասավ Նատաշան։

VII

Մյուս օրը, Մարիա Դմիտրիևնայի խորհրդով, կոմս Իլյա Անդրեևիչը Նատաշայի հետ գնացին իշխան Նիկոլայ Անդրեևիչի մոտ։ Կոմսը տխուր տրամադրությամբ գնաց այդ այցելությունն անելու. նրա հոգին մռայլ էր։ Հիշում էր իրենց վերջին տեսակցությունը զորահավաքի ժամանակ, երբ ծեր իշխանը, ի պատասխան իր ճաշի հրավերի, հանդիմանեց իրեն՝ ժամանակին մարդիկ չհասցնելու համար։ Նատաշան իր ամենալավ զգեստը հագած, ընդհակառակը, գտնվում էր ամենաուրախ տրամադրության մեջ։ «Չեմ կարծում, թե նրանք ինձ չսիրեն»,— մտածում էր նա.— բոլորն ինձ միշտ սիրել են։ Եվ ես ամեն բան պատրաստ եմ անել նրանց համար, ինչ ցանկանան, պատրաստ եմ սիրել նրա հորը, հենց միայն նրա համար, որ հայր է, իսկ քրոջը նրա համար, որ քույր է. դրանից հետո նրանք էլ ինչո՛ւ չպիտի սիրեն ինձ»։

Նրանք հասան Վոզդվիժենկայում գտնվող հին, մռայլ տանը և մտան նախասենյակ։

— Էհ, տեր, դու ողորմաս,— ասավ կոմսը կես կատակ, կես լուրջ. բայց Նատաշան նկատեց, որ հայրն շտապեց, մըտավ նախասենյակ և քաշվելով հարցրեց, թե տա՞ն են արդյոք իշխանն ու իշխանադուստրը։

Նրանց գալու լուրը հայտնելուց հետո՝ իշխանի սպասավորների մեջ իրարանցում ընկավ։ Լաքեյը, որ գնացել էր նրանց գալու մասին զեկուցելու, դահլիճում կանգնեցվեց ուրիշ լաքեյի կողմից, և նրանք փսփսացին ինչ-որ։ Վազեվազ դահլիճ մտավ և մի սպասուհի ու շտապով նույնպես ինչ-որ բան փքփքաց, իշխանադստեր անունը տալով։ Վերջապես, ծեր, բարկացկոտ դեմքով մի լաքեյ եկավ և Ռոստովներին հրավիրեց, թե իշխանը չի կարող ընդունել, իսկ իշխանադուստրը խնդրում է իր մոտ։ Առաջինը հյուրերին դիմավորելու դուրս եկավ m-lle Bourienne-ը։ Նա հորն ու աղջկան ընդունեց մի առանձին հարգանքով և առաջնորդեց իշխանադստեր մոտ։ Իշխանադուստրը հուզված, վախեցած, երեսը կարմիր բծերով ծածկված, ծանր շնչելով, դուրս եկավ հյուրերին դիմավորելու, իզուր աշխատելով համարձակ ու սիրալիր երևալ։ Առաջին իսկ հայացքից Նատաշան դուր չեկավ իշխանադուստր Մարիային։ Նատաշան նրան թվաց չափազանց պճնված, թեթևամտորեն ուրախ և սնափառ։ Իշխանադուստր Մարիան չգիտեր, որ նախքան իր ապագա հարսնացուին տեսնելը, ինքը վատ էր տրամադրված դեպի նա՝ իր ակամա նախանձով դեպի նրա գեղեցկությունը, ջահելությունն ու երջանկությունը և իր խանդով դեպի եղբայրը։ Բացի Նատաշայի նկատմամբ ունեցած հակակրանքի այդ անդիմադրելի զգացումից, իշխանադուստր Մարիան այդ վայրկյանին հուզված էր նաև այն բանից, որ Ռոստովների գալու լուրը լսելով, իշխանը զոռաց, թե նրանք իրեն հարկավոր չեն, թող իշխանադուստր Մարիան ընդունի, եթե կամենում է, իսկ իր մոտ չթողնեն նրանց։ Իշխանադուստր Մարիան որոշեց Ռոստովներին ընդունել, բայց ամեն վայրկյան վախենում էր, թե իշխանը մի որևէ անպատեհ բան չանի, որովհետև նա՝ իշխանը սաստիկ հուզված էր թվում Ռոստովների գալու առթիվ։

— Ահավասիկ, սիրելի իշխանադուստր, իմ երգչուհուն բերել եմ ձեզ մոտ,— ասավ կոմսը, ոտներն իրար խփելով ու շուրջը նայելով, կարծես վախենում էր, թե ծեր իշխանը ներս կմտնի։— Այնքա՛ն ուրախ եմ, որ պիտի ծանոթանաք... Ափսոս, ափսոս, որ իշխանը դեռևս տկար է,— և մի քանի ընդհանուր խոսքեր ասելով, նա ելավ տեղից։— Եթե թույլ կտաք, իշխանադուստր, մի քառորդ ժամով Նատալիային կթողնեմ ձեզ մոտ. ես ուզում եմ գնալ, այստեղից մի երկու քայլի վրա է, Սաբաշկի հրապարակը, Աննա Սեմյոնովնայի մոտ, ապա կգամ սրա ետևից։

Իլյա Անդրեյիչն այս դիվանագիտական խորամանկությունը մտածեց նրա համար, որպեսզի աղջկա ապագա տալին ազատ հնարավորություն տա իր հարսնացուի հետ բացատրվելու։

վելու (ինչպես այդ հետո նա հայտնեց աղջկան), և նրա՛ համար, որպեսզի խուսափած լինի իշխանի հետ հանդիպելու հնարավորությունից, իշխանի, որից վախենում էր։ Նա այս բանն աղջկան չասավ. բայց Նատաշան հասկացավ հոր այդ վախն ու անհանգստությունը և իրեն վիրավորված զգաց։ Նա հոր փոխարեն կարմրեց, և ավելի զայրացավ հենց նրա՛ համար, որ կարմրեց, և ապա համարձակ, հանդուգն հայացքով, որ ասում էր, թե ինքը ոչ ոքից չի վախենում, նայեց իշխանադստեր։ Իշխանադուստր Մարիան կոմսին ասավ, թե շատ ուրախ է և կխնդրեր, որ փոքր-ինչ երկար մնար Աննա Սեմյոնովնայի մոտ։ Դրանից հետո Իլյա Անդրեյիչը մեկնեց։

M-lle Bourienne-ը, չնայած իշխանադստեր անհանգիստ հայացքներին, որ նա նետում էր իր վրա (որպեսզի Նատաշայի հետ մենակ խոսի), սենյակից դուրս չէր գնում ու շարունակում էր իր զրույցը Մոսկվայի զվարճությունների ու թատրոնների մասին։ Նատաշան իրեն վիրավորված էր զգում նախասրահում տեղի ունեցած շփոթությունից, հոր անհանգստությունից և իշխանադստեր խոսելու անբնական տոնից, որը, նրան թվում էր, թե կարծես ողորմություն է արել իրեն ընդունելով։ Այդ պատճառով էլ ամեն բան անախորժ էր նրա համար։ Իշխանադուստր Մարիան նրան դուր չէր գալիս։ Նա Նատաշային թվաց շատ տգեղ, կեղծ, ձևացող և չոր։ Հանկարծ Նատաշան բարոյապես ընկճվեց և ակամա մի այնպիսի անփույթ տոն ընդունեց, որը իշխանադուստր Մարիային էլ ավելի էր վանում նրանից։ Հինգ րոպե տևող ծանր, շինծու խոսակցությունից հետո լսվեցին հողաթափեր հագած ոտների արագությամբ մոտեցող քայլեր։ Իշխանադուստր Մարիայի դեմքը վախ արտահայտեց. դուռը բացվեց և ներս մտավ ծեր իշխանը, սպիտակ թասակով ու խալաթով։

— Ախ, տիրուհի,— ասավ նա,— տիրուհի, կոմսուհի... կոմսուհի Ռոստովա, եթե չեմ սխալվում... խնդրում եմ ներեք, ներեք... Չգիտեի, տիրուհի, աստված վկա, չգիտեի, որ դուք մեզ արժանացրել եք ձեր այցին. այս զգեստով եկա աղջկաս մոտ։ Խնդրում եմ՝ ներեք... Աստված վկա, չգիտեի,— կրկնեց նա այնպես անբնականորեն, աստված բառը շեշտելով, և այնպես անախորժ ձևով, որ իշխանադուստր Մարիան աչ-

քերը ցած գցած չէր համարձակվում նայել ո՛չ հորը, ո՛չ Նատաշային։

Նատաշան, ելնելով ու նորից նստելով, նույնպես չգիտեր ինչ անել։ Միայն m-lle Bourienne-ն էր, որ ժպտում էր դուրեկան։

— Խնդրում եմ՝ ներեք։ Խնդրում եմ՝ ներեք։ Վկա է աստված, չգիտեի,— քրթմնջաց ծերունին ու Նատաշային ոտից գլուխ նայելով՝ դուրս գնաց։

Ծեր իշխանի գնալուց հետո առաջինը m-lle Bourienne-ն էր, որ խոսակցություն սկսեց իշխանի տկարության մասին։ Նատաշան և իշխանադուստր Մարիան անխոս իրար էին նայում, և որքան նրանք անխոս նայում էին իրար, չարտահայտելով այն, ինչ պետք էր արտահայտել, այնքան ավելի անբարյացակամորեն էին մտածում միմյանց մասին։

Երբ կոմսը վերադարձավ, Նատաշան անքաղաքավարի կերպով ուրախացավ նրա գալուստով և շտապեց մեկնել. այդ րոպեին նա գրեթե ատում էր այդ պառավ, չոր իշխանադստերը, որ իրեն այդպիսի անհարմար դրության մեջ դրեց և կես ժամվա ընթացքում ոչ մի խոսք չասավ իշխան Անդրեյի մասին։ «Չէ որ ես ինքս չէի կարող առաջինը խոսք բանալ այդ ֆրանսուհու ներկայությամբ», մտածեց նա։ Մինչ այդ նույն մտքից տանջվում էր և իշխանադուստր Մարիան։ Նա գիտեր, թե ի՛նչ պետք էր ասել Նատաշային, բայց չկարողացավ այդ անել, որովհետև m-lle Bourienne-ը խանգարեց նրան, և ա՛յն պատճառով, որ նա ինքն էլ չգիտեր, թե ինչո՛ւ այդպես ծանր է այդ ամուսնության մասին խոսակցություն սկսելը։ Երբ կոմսն արդեն սենյակից դուրս էր գալիս, իշխանադուստր Մարիան արագ քայլերով մոտեցավ Նատաշային, բռնեց նրա ձեռը և, ծանր հառաչելով, ասավ.

— Սպասեցեք, ես ուզում եմ...

Նատաշան, ինքն էլ չիմանալով ինչու, հեգնանքով նայեց իշխանադուստր Մարիային։

— Սիրելի Նատալի,— ասավ իշխ. Մարիան,— գիտեք, թե որքան ուրախ եմ, որ եղբայրս գտել է իր երջանկությունը...

Նա կանգ առավ, զգալով, որ ճշմարտություն չի ասում։ Նատաշան նկատեց այդ ընդհատումն ու հասկացավ դրա պատճառը։

— Ես, իշխանադուստր, կարծում եմ, որ այժմ անհարմար է այդ մասին խոսել, — ասավ Նատաշան արտաքին արժանապատվությամբ ու սառնությամբ, բայց զգալով, որ արցունքները մոտենում են կոկորդին։

«Ի՞նչ ասի ես, ի՞նչ արի ես», մտածեց նա հենց որ սենյակից դուրս եկավ։

Այդ օրը Նատաշային երկար սպասեցին ճաշի։ Նա իր սենյակում նստած երեխայի պես հեկեկալով լալիս էր։ Սոնյան նրա մոտ կանգնած համբուրում էր նրա մազերը։

— Նատաշա, ինչ ո՞ւ համար ես լալիս, — ասում էր նա։ — Դու նրանց հետ ի՞նչ գործ ունես։ Ամեն ինչ կանցնի, Նատաշա։

— Չէ, եթե դու իմանայիր որքան վիրավորական էր... ես, կարծես...

— Մի ասի, Նատաշա. չէ՞ որ դու մեղավոր չես, քո ի՞նչ բանն է։ Համբուրիր ինձ, — ասավ Սոնյան։

Նատաշան գլուխը բարձրացրեց և համբուրեց ընկերուհու շուրթերը, իր թաց երեսը սեղմելով նրա երեսին։

— Ես չեմ կարող ասել, չգիտեմ։ Ոչ ոք մեղավոր չէ, — ասում էր Նատաշան, — ես եմ մեղավոր։ Բայց այս բոլորը սոսկալի է։ Ա՜խ, ինչո՞ւ նա չի գալիս...

Նա կարմրած աչքերով գնաց ճաշի։ Մարիա Դմիտրիևնան, իմանալով թե իշխանն ինչպես է ընդունել Ռոստովներին, այնպես ձևացավ, թե Նատաշայի այլայլված դեմքը չէր նկատում, և սեղանի շուրջը բարձրաձայն հանաքներ էր անում կոմսի ու մյուս հյուրերի հետ։

VIII

Այդ երեկո Ռոստովները գնացին օպերա, որի տոմսակը ձեռք էր բերել Մարիա Դմիտրիևնան։

Նատաշան չէր ուզում գնալ, բայց անկարելի էր մերժել Մարիա Դմիտրիևնայի սիրալիր հյուրասիրությունը, որը բացառապես նրա համար էր նախատեսված։ Երբ Նատաշան հագնված դուրս եկավ դահլիճ, ու հորն սպասելով նայեց մեծ հայելուն և տեսավ, որ ինքը լավն է, շատ լավը, նա ավելի տխրեց. բայց այդ տխրությունը քաղցր ու սիրազեղ էր։

«Տեր աստված, եթե նա այստեղ լիներ, ես էլ առաջվա պես քաշվելով չէի վարվի հետը, այլ բոլորովին ուրիշ տեսակ. ուղղակի կգրկեի, կսեղմեի նրան ինձ, կստիպեի, որ ինձ նայի իր որոնող, հետաքրքիր աչքերով, որոնցով նա հաճախ նայում էր ինձ, և ապա կծիծաղեցնեի նրան, ինչպես առաջ։ Նրա աչքերը — կարծես տեսնո՞ւմ եմ այդ աչքերը, — մտածում էր Նատաշան։ — Էլ ինչ գործ ունեմ ես նրա հոր ու քրոջ հետ. ես սիրում եմ նրան, միայն նրան՝ իր դեմքով, աչքերով, ժպիտով՝ տղամարդկային և դրա հետ միաժամանակ մանկական ժպիտով... Չէ՛, ավելի լավ է չմտածել նրա մասին. չմտածել, մոռանալ, բոլորովին մոռանալ այս միջոցին։ Ես չեմ դիմանա այս սպասումին, հիմա լաց կլինեմ», ու հայելուց հեռանալով, ուժ գործ դրեց իր վրա, որ լաց չլինի։ «Եվ Սոնյան ի՞նչպես է կարողանում այդպես հանգիստ, հանդարտ սիրել Նիկոլային և այդպես երկա՞ր ու համբերությամբ սպասել, — մտածեց նա, նայելով մտնող, նույնպես հագնված, հովհարը ձեռին Սոնյային։ — Չէ՛, սա բոլորովին ուրիշ է։ Ես սրա պես չե՛մ կարող»։

Այդ վայրկյանին Նատաշան իրեն այնքան մեղմացած ու քնքշացած զգաց, որ նրա համար քիչ էր սիրել և իմանալ, որ ինքը սիրված է. նրան հարկավոր է այժմ, հենց այժմ գրկել սիրած մարդուն և ասել սիրո խոսքեր, որոնցով լի է նրա սիրտը։ Մինչ փակ կառքի մեջ, հոր կողքին նստած գնում էր և սառած լուսամուտից մտախոհ նայում լապտերների առկայծող լույսերին, նա իրեն զգում էր ավելի սիրահարված ու տխուր և մոռացել էր, թե ո՛ւմ հետ ո՛ւր է գնում։ Փակ կառքերի շարքը մտնելով՝ Ռոստովների կառքը անիվներով ձյունը դանդաղ ճռճռացնելով, մոտեցավ թատրոնին։ Նատաշան ու Սոնյան, փեշերնին հավաքելով, արագ թռան կառքից. կոմսն իջավ լաքեյների օգնությամբ, և երեքով թատրոն մտնելով կանանց, տղամարդկանց և աֆիշներ ծախողների արանքով, գնացին մտան բենուարի միջանցքը։ Ծածկած դռան ետևից լսվում էր երաժշտության ձայնը։

— Nathalie, vos cheveux...[1] — շշնջաց Սոնյան։

Կապելդիները հարգանքով ու արագ անցավ կանանց առջև-

[1] Նատալի, ձեր մազերը։

վից և օթյակի դուռը բաց արավ։ Երաժշտությունը լսվեց ավելի պարզ, դռան միջից փայլեցին լուսավորված օթյակների շարքերը՝ կանացի մերկ ուսերով ու ձեռներով և աղմկող ու մունդիրներով փայլուն պարտերը։ Հարևան բենուարը մտնող կինը կանացի նախանձոտ մի հայացք գցեց Նատաշայի վրա։ Վարագույրը դեռ չէր բարձրանում. նվագում էին նախերգանքը։ Նատաշան, զգեստները հարդարելով, Սոնյայի հետ միասին առաջ անցավ ու նստեց, նայելով դիմացի օթյակների լուսավորված շարքերին։ Վաղուց արդեն չապրած այն զգացումը, թե հարյուրավոր աչքեր նայում են իր մերկ թևերին ու պարանոցին, հանկարծ և՛ ախորժելի, և՛ անախորժ կերպով տիրեց նրան, հարուցանելով համապատասխան հիշողությունների, իղձերի ու հույզերի մի ամբողջ շարան։

Այդ երկու շատ սիրուն աղջիկները՝ Նատաշան ու Սոնյան, կոմս Իլյա Անդրեյիչի հետ, որ վաղուց արդեն Մոսկվայում չէր երևում, իրենց վրա դարձրին ընդհանուրի ուշադրությունը։ Բացի դրանից, բոլորն էլ մութ կերպով գիտեին Նատաշայի և իշխան Անդրեյի նշանադրության մասին, գիտեին, որ այդ օրվանից Ռոստովներն ապրում էին գյուղում, ուստի և հետաքրքրությամբ նայում էին Ռուսաստանի լավագույն փեսացուներից մեկի հարսնացուին։

Նատաշան գյուղում գեղեցկացել էր, ինչպես ասում էին նրան բոլորը, իսկ այդ երեկո, իր հուզված վիճակի շնորհիվ, առանձնապես գեղեցիկ էր։ Նրա կատարյալ գեղեցկությունը, կենսալիր տեսքը՝ միացած դեպի շրջապատն ունեցած անտարբերության հետ — զարմացնում էր բոլորին։ Նրա սև աչքերը նայում էին բազմության, ոչ ոքի չորոնելով, իսկ բարակ, արմունկից վեր մերկ թևը, որ կոթնած էր օթյակի թավշե եզրին, ըստ երևույթին անգիտակցաբար, նախերգանքի ելևէջների հետ սեղմվում ու բացվում էր դերացանկը ճմռելով։

— Տե՛ս, ահա Ալենինան,— ասում էր Սոնյան,— կարծես մոր հետ է։

— Տեր աստվա՜ծ։ Միխայիլ Կիրիլիչն էլի հաստացել է,—ասավ ծեր կոմսը։

— Տեսեք, մեր Աննա Միխայլովնան ի՜նչ գլխարկ է դրել։

— Կարագինները, Ժյուլին. Բորիսն էլ նրանց հետ է։ Անմիջապես երևում է՝ նշանված են։

— Դրուբեցկոյն առաջարկությո՜ւն է արել։ Ինչպես չէ. հենց նոր իմացա,— ասավ Շինշինը, Ռոստովների օթյակը մտնելով։

Նատաշան նայեց այն ուղղությամբ, ուր նայում էր հայրը, և նկատեց Ժյուլիին, որ մարգարիտները հաստ կարմիր վզին (Նատաշան գիտեր — սնգուրված է) երջանիկ դեմքով նստել էր մոր կողքին։ Նրանց ետև երևում էր Բորիսի հարթ սանրած գեղեցիկ գլուխը՝ ականջը Ժյուլիի բերանին մոտեցրած։ Նա աչքի տակով նայում էր Ռոստովներին ու ժպտալով ինչ-որ բան ասում հարսնացուին։

«Նրանք մեր մասին, իմ մասին են խոսում»,— մտածեց Նատաշան։— Եվ Բորիսը, հավանորեն, հանգստացնում է իր հարսնացուի խանդը դեպի ինձ. իզուր են անհանգստանում։ Եթե նրանք իմանային, թե որքա՜ն անտարբեր եմ դեպի բոլորը»։

Նրանց ետև, կանաչ գլխարկը գլխին, աստվածավախ ու երջանիկ, տոնական դեմքով նստել էր Աննա Միխայլովնան։ Նրանց օթյակում տիրում էր նշանվածների այն մթնոլորտը, որ այնպես ծանոթ էր Նատաշային և որը նա այնպես սիրում էր։ Նա երեսը շրջեց և հանկարծ. հիշեց առավոտյան այցելության ստորացուցիչ տեսարանները։

«Նա ինչ իրավունք ունի ինձ ազգականների շրջանը չընդունելու։ Ա՜խ, ավելի լավ է չմտածել այդ մասին, չմտածել մինչև նրա գալը», ասավ նա ինքն իրեն և սկսեց նայել պարտերի ծանոթ և անծանոթ դեմքերին։ Պարտերի առջևում, հենց մեջտեղը, մեջքով ռամպային հենված կանգնել էր Դոլոխովը՝ պարսկական զգեստով և դեպի վեր խիտ գանգուր մազերով։ Իմանալով, որ ինքը գրավում է ամբողջ դահլիճի ուշադրությունը, նա կանգնել էր հենց ի տես ամբողջ թատրոնի այնպես ազատ, կարծես կանգնած էր սենյակում։ Նրա մոտ խոնված կանգնած էր Մոսկվայի ամենափայլուն երիտասարդությունը, և նա, ըստ երևույթին, առաջնություն էր վայելում նրանց շրջանում։

Կոմս Իլյա Անդրեյիչը ծիծաղելով հրեց շիկնող Սոնյային ու ցույց տվեց իր նախկին երկրպագուին։

— Ճանաչեցի՞ր, — հարցրեց նա։ — Եվ որտեղից դա լույս ընկավ, — դիմեց կոմսը Շինշինին, — չէ որ նա ուր-որ կորել էր։

— Այո, չէր երևում, — պատասխանեց Շինշինը։ — Կովկասում էր, իսկ այնտեղից փախել է և, ասում են, Պարսկաստանում ինչ-որ տիրակալ իշխանի մոտ մինիստր է եղել. այնտեղ սպանել է շահի եղբորը. և հիմա մեր Մոսկվայի աղջիկ-պարոնները խելահան են լինում նրանից։ Dolochoff le Persan[1], ու էլ պրծավ։ Այժմ մեզանում Դոլոխովի անունն ամենքի բերանումն է. նրա անունով երդվում են, նրանով հյուրասիրում են, ինչպես ստերլետ ձկնով, — ասում էր Շինշինը։ — Դոլոխովն ու Անատոլ Կուրագինը մեր աղջիկներին խելքահան են արել։

Հարևան բենուարը մտավ մի բարձրահասակ գեղեցիկ կին՝ փարթամ հյուսքով և շատ մերկացած, սպիտակ լեցուն ուսերով ու պարանոցով, որի վրա կար մարգարիտների երկու շարան, և բավական երկար տևեց մինչև որ նա տեղավորվեց, իր մետաքսե հաստ զգեստը խշխշացնելով։

Նատաշան ակամա նայեց այդ կնոջ պարանոցին, ուսերին, մարգարիտներին, սանրվածքին, և հիանում էր այս ըսպիտակ ուսերի ու մարգարիտների գեղեցկությամբ։ Այն ժամանակ, երբ Նատաշան երկրոդ անգամ ուզում էր նրան նայել, կինը շուրջը նայեց և, հանդիպելով կոմս Իլյա Անդրեյիչի հայացքին, գլխով արավ ու ժպտաց։ Դա կոմսուհի Բեզուխովան էր՝ Պիեռի կինը։ Իլյա Անդրեյիչը, որ բոլորին ճանաչում էր բարձր շրջաններից, թեքվելով խոսեց նրա հետ։

— Վաղո՞ւց եք եկել, կոմսուհի, — ասավ նա։ — Կգամ, կգամ հիմա ձեր ձեռը համբուրելու։ Իսկ ես գործով եմ եկել և աղջիկներին բերել եմ հետս։ Ասում են՝ Սեմյոնովան աննման է խաղում, — ասավ Իլյա Անդրեիչը։ — Կոմս Պյոտր Կիրիլլովիչը մեզ երբեք չի մոռացել։ Նա այստե՞ղ է։

— Այո, նա մտադիր էր գալ, — ասավ էլենը և ուշադիր նայեց Նատաշային։

Կոմս Իլյա Անդրեյիչը նորից նստեց իր տեղը։

— Լավն է չէ՞, — շշուկով ասավ նա Նատաշային։

[1] Պարսիկ Դոլոխովը։

— Հրաշալի՞ է, — ասավ Նատաշան, — սիրահարվել կարելի է։

Այդ ժամանակ հնչեցին նախերգանքի վերջին ակորդները և չեկաց կապելմեյստերի փայտիկը։ Ուշացած տղամարդիկ շտապեցին գրավել իրենց տեղերը պարտերում, և վարագույրը բարձրացավ։

Հենց որ վարագույրը բարձրացավ, օթյակներում ու պարտերներում ամեն ինչ լռեց, և բոլոր տղամարդիկ՝ ծեր ու երիտասարդ, մունդիրներով ու ֆրակներով, բոլոր կանայք՝ թանկագին քարերը մերկ մարմինների վրա, ագահ հետաքրքրությամբ իրենց հայացքը հառեցին դեպի բեմ։ Նատաշան նույնպես սկսեց նայել։

IX

Բեմի վրա՝ մեջտեղում դրված էին հարթ տախտակներ, կողքերից գրված էին ներկած պատկերներ, որոնք ծառեր էին ներկայացնում, իսկ ետևում՝ տախտակների երեսը քաթան էր քաշված։ Բեմի մեջտեղը նստած էին աղջիկներ՝ կարմիր կորսաժներով և ճերմակ շրջազգեստներով։ Նրանցից մեկը, որ շատ հաստ էր և մետաքսե սպիտակ զգեստ հագած, նստել էր առանձին մի ցածրիկ նստարանի վրա, որի ետևից կպցրած էր կանաչ խավաթուղթ։ Նրանք բոլորը ինչ-որ բան էին երգում։ Երբ նրանք իրենց երգը վերջացրին՝ ճերմակ զգեստով աղջիկը մոտեցավ հուշարարի բուդկային, իսկ նրան մոտեցավ մի տղամարդ՝ հաստ ոտներին մետաքսե սեղմ վարտիք հագած, փետուրը վրան գլխարկով ու դաշույնով և սկսեց երգել և ձեռները տարածել։

Սեղմած վարտիքով տղամարդը երգեց մենակ, ապա երգեց աղջիկը։ Հետո երկուսն էլ լռեցին և երաժշտախումբը նվագեց. տղամարդն սկսեց ճերմակ զգեստով աղջկա ձեռը շփել, մատներով խաղացնել, ըստ երևույթին կրկին տակտի սպասելով, որպեսզի նորից սկսի նրա հետ միասին երգել։ Նրանք երկուսով երգեցին, և բոլորն էլ սկսեցին ծափահարել ու բացականչել, իսկ տղամարդն ու կինը, որոնք բեմում ներկայացնում էին սիրահարների, սկսեցին ժպտալով ու ձեռները տարածելով, գլուխ տալ։

Գյուղից հետո և այն լուրջ տրամադրությամբ, որ ուներ Նատաշան, այդ բոլորն օտարոտի և զարմանալի էր թվում նրան։ Նա չկարողացավ հետևել օպերայի ընթացքին, չկարողացավ նույնիսկ երաժշտություն լսել. նա տեսնում էր միայն ներկած խավաթղթեր և տարօրինակ հագնված ու զուգված տղամարդիկ ու կանայք, որ նույնքան տարօրինակորեն շարժվում, խոսում ու երգում էին պայծառ լույսերի մեջ։ Նա գիտեր, որ այդ բոլորը պետք էր ներկայացնել, բայց այդ ամենն այնքան շինծու-կեղծ և անբնական էր, որ նա մերթ ամաչում էր դերասանների փոխարեն, մերթ ծիծաղում նրանց վրա։ Նա նայում էր շուրջը՝ հանդիսականների դեմքերին, որոնելով նրանց մեջ նույն ծիծաղի ու տարակուսանքի զգացումը, ինչ կար իր մեջ. բայց բոլոր դեմքերն ուշադիր էին դեպի բեմի անցուդարձը և, ինչպես Նատաշային թվում էր՝ կեղծ հիացում էին արտահայտում։ «Գուցե այդպես էլ հարկավոր է», մտածեց Նատաշան։ Նա փոխեփոխ նայում էր մերթ պարտերի օծված գլուխների շարքերին, մերթ օթյակների կիսամերկ կանանց, մանավանդ իր հարևանուհի էլենին, որ գրեթե բոլորովին մերկ՝ հանդարտ ու հանգիստ ժպիտով, անթարթ նայում էր բեմին, զգալով ողջ դահլիճն ողողող պայծառ լույսը և բազմության ներկայությունից տաքացած օդը։ Նատաշան կամաց-կամաց իրեն սկսում էր զգալ վաղուց արդեն չապրած արբեցումի վիճակում։ Նա չէր հիշում ի՛նչ է ինքը, ո՛ւր է ինքը և ի՛նչ է կատարվում իր առջև։ Նա նայում էր ու մտածում, և անսպասելիորեն տարօրինակ ու անկապ մտքեր էին ծագում նրա գլխում։ Մերթ մտածում էր ցատկել բեմ և երգել դերասանուհու երգած արիան, մերթ ցանկանում էր հովհարը դիպցնել իրենից քիչ հեռու նստած ծերուկին, մերթ էլ թեքվել դեպի էլենը և խտտել նրան։

Այն վայրկյանին, երբ ամեն ինչ լռել էր բեմի վրա, արիայի սկսելուն սպասելով, ճռռաց պարտերի մուտքի դուռը՝ այն կողմում, ուր Ռոստովների օթյակն էր գտնվում և լսվեց ուշացած տղամարդու քայլերի ձայն։ «Ահա՛ և Կուրագինը», շշնջաց Շինշինը։ Կոմսուհի Բեզուխովան ետ նայեց և ժպտաց եկողին։ Նատաշան նայեց կոմսուհի Բեզուխովայի հայացքի ուղղությամբ և տեսավ արտասովոր կերպով գեղեցիկ մի ադյուտանտի, որ ինքնավստահ ու դրա հետ միասին վայելուչ

շեներով մոտենում էր դեպի իրենց օթյակը։ Դա Անատոլ Կուրագինն էր, որին Նատաշան վաղուց տեսել ու նկատել էր Պետերբուրգի պարահանդեսում։ Նա այժմ ադյուտանտի համազգեստով էր, մի ուսագիրով և աքսելբանտով։ Նա առաջ էր գալիս զուսպ համարձակ քայլվածքով, որը կլիներ ծիծաղելի, եթե նա գեղեցիկ չլիներ և եթե նրա գեղեցիկ դեմքին չլիներ բարեհոգի գոհունակության և ուրախության արտահայտությունը։ Չնայած որ բեմի վրա գործողություն էր կատարվում, նա, առանց շտապելու, խթաններով ու թրով թեթևակի աղմկելով, յուղերով օծած գեղեցիկ գլուխը բարձր բռնած, հանդիսավոր քայլվածքով գալիս էր միջանցքի գորգի վրայով։ Նայելով Նատաշային, նա մոտեցավ քրոջը, անուշահոտ յուղերով օծված ձեռնոցով ձեռը դրեց նրա օթյակի եզրին և գլուխը թափ տալով ու դեպի քույրը թեքվելով, ինչ-որ բան հարցրեց, Նատաշային ցույց տալով։

— Mais charmante![1] — ասավ Կուրագինը, ըստ երևույթին ակնարկելով Նատաշային։ Եվ Նատաշան այդ բանը լսեց այնքան լսեց, որքան հասկացավ նրա շուրթերի շարժումից։ Ապա Կուրագինն անցավ առաջին շարքն ու նստեց Դոլոխովի կողքին, ընկերաբար ու անփութորեն արմունկով հրելով այն Դոլոխովին, որի հետ մյուսները վարվում էին այնպես քծնաբար։ Նա ուրախ աչքով արեց. ժպտաց նրան և ոտքով հենվեց ռամպային։

— Քույր ու եղբայր ի՞նչ նման են իրար, — ասավ կոմսը։ — Եվ ինչպես լավն են երկուսն էլ։

Շինշինն սկսեց կոմսին կիսաձայն պատմել Կուրագինի Մոսկվայում արած ինչ-որ ինտրիգների պատմությունն, որը Նատաշան լսեց հատկապես նրա համար, որ Կուրագինն իր մասին ասավ «charmante»։

Առաջին գործողությունը վերջացավ, պարտերում բոլորը վեր կացան, իրար անցան ու սկսեցին քայլել ու դուրս գալ։

Բորիսն եկավ Ռոստովների օթյակը, շատ հասարակ կերպով ընդունեց նրանց շնորհավորանքները և, հոնքերը վեր քաշելով, ցրված ժպիտով հայտնեց Նատաշային և Սոնյային իր հարսնացուի խնդիրքը, որ նրանք ներկա լինեն իրենց հարսա-

[1] Շատ հմայիչ է։

նիքին, ու դուրս գնաց։ Նատաշան ուրախ և կոկետ ժպիտը դեմքին խոսում էր ու շնորհավորում ամուսնությունը հենց այն Բորիսի, որի վրա ինքը սիրահարված էր առաջ։ Արքեցումի այս վիճակը, որի մեջ նա էր գտնվում, ամեն ինչ դարձրել էր պարզ ու բնական։

Մերկ էլենը նրա կողքին նստած՝ ժպտում էր բոլորին հաճավասարապես, և նույն կերպ էլ ժպտաց Նատաշան Բորիսին։

Էլենի օթյակը լցվեց և պարտերի կողմից շրջապատվեց ամենանշանավոր ու խելոք տղամարդկանցով, որոնք թվում էր թե բոլորին էլ ուզում էին ցույց տալ, որ իրենք ծանոթ են նրա հետ։

Կուրագինը այդ դադարի ամբողջ ընթացքում, Դոլոխովի հետ առաջին շարքի առջևը կանգնած, նայում էր Ռոստովների օթյակին։ Նատաշան գիտեր, որ նա իր մասին է խոսում, և դա հաճույք էր պատճառում նրան։ Նատաշան մինչև իսկ այնպես շրջվեց, որպեսզի Կուրագինը տեսնի իր կիսադեմը (պրոֆիլը), իր կարծիքով, ամենահարմար դիրքով։ Երկրորդ գործողությունն սկսելուց առաջ պարտերում երևաց Պիեռի կերպարանքը, որին Ռոստովներն իրենց գալուց հետո դեռ չէին տեսել. նրա դեմքը տխուր էր. նա ավելի էր հաստացել այն օրից, երբ վերջին անգամ Նատաշան տեսել էր նրան։ Նա, ոչ ոքին չընկատելով, անցավ առաջին շարքերը։ Անատոլը մոտեցավ նրան և սկսեց ինչ-որ բան ասել, նայելով ու ցույց տալով դեպի Ռոստովների օթյակը։ Պիեռը, Նատաշային տեսնելով, աշխուժացավ և շտապով, շարքերի միջով գնաց դեպի նրանց օթյակը։ Մոտենալով՝ նա հենվեց օթյակի եզրին և, ժպտալով երկար խոսում էր Նատաշայի հետ։ Պիեռի հետ խոսելու միջոցին Նատաշան կոմսուհի Բեզուխովայի օթյակից տղամարդու ձայն լսեց և, չգիտես ինչու, ճանաչեց, որ դա Կուրագինն է։ Նատաշան ետ նայեց և նրա ու Կուրագինի հայացքները հանդիպեցին իրար։ Կուրագինը, գրեթե ժպտալով, ուղիղ նայում էր Նատաշայի աչքերին այնպիսի հիացագին, քնքուշ հայացքով, որ տարօրինակ էր թվում — այդքա՞ն մոտ կանգնած լինել, այդպե՞ս նայել նրան, այնպես վստահ լինել, որ դուր ես գալիս նրան, և ծանոթ չլինել նրա հետ։

Երկրորդ գործողության մեջ նկարներ կային, որոնք պատ-

կերացնում էին հուշարձաններ. կտավի վրա կար մի ծակ, որ լուսին էր պատկերացնում։ Երբ լուսամփոփները ռամպայի վրա բարձրացրին՝ սկսվեց կոնտրաբասի և փողերի նվագ և աջից ու ձախից դուրս եկան սև պատմուճաններով շատ մարդիկ։ Դրանք սկսեցին ձեռները թափահարել, և նրանց ձեռներում կային դաշույնի նման ինչ-որ բաներ. հետո վազեվազ եկան ուրիշ մարդիկ և սկսեցին դուրս քաշել-տանել այն աղջիկան, որ առաջ ճերմակ զգեստով էր, իսկ այժմ երկնագույն հագուստով։ Նրանք միանգամից չտարան նրան, այլ երկար երգեցին նրա հետ, իսկ հետո արդեն քաշ տվին տարան, և կուլիսների ետև երեք անգամ խփեցին ինչ-որ մետաղյա բանի, ու բոլորը, ծունկի գալով, սկսեցին աղոթել։ Այս գործողությունները մի քանի անգամ ընդհատվեցին հանդիսականների խանդավառ բացականչություններով։

Այս գործողության ընթացքում ամեն անգամ, երբ Նատաշան նայում էր պարտերին, տեսնում էր Անատոլ Կուրագինին, որ ձեռը բազկաթոռի թիկունքովը գցած, նայում էր իրեն։ Նա հաճույք էր զգում տեսնելով, որ Կուրագինը հրապուրված է իրենով, և երբեք մտքովը չէր անցնում, թե դրա մեջ մի վատ բան կլինի։

Երբ երկրորդ գործողությունը վերջացավ, կոմսուհի Բեզուխովան վեր կացավ, դարձավ դեպի Ռոստովների օթյակը (նրա կուրծքը բոլորովին մերկ էր), ձեռնոց հագած մատով իր մոտ կանչեց ծեր կոմսին և, առանց ուշադրություն դարձնելու իր օթյակը մտնողների վրա, սիրալիր խոսակցություն սկսեց նրա հետ։

— Մի ծանոթացրեք ինձ ձեր սքանչելի աղջիկների հետ,— ասավ նա,— ամբողջ քաղաքը նրանց մասին է խոսում, իսկ ես նրանց չեմ ճանաչում։

Նատաշան ելավ ու գլուխ տվեց շքեղափայլ կոմսուհուն։ Նատաշային այնպես դուր եկավ այդ փայլուն գեղեցկուհու գովասանքը, որ նա ուրախությունից կարմրեց։

— Հիմա ես էլ եմ կամենում մոսկվացի դառնալ,— ասավ էլենը։— Եվ ի՞նչ անխղճություն է ձեր կողմից, որ դուք այսպիսի մարգարիտները պահել եք գյուղում, անհայտության մեջ։

Կոմսուհի Բեզուխովան իրավամբ վայելում էր հմայիչ կնոջ

հոչակ. նա կարող էր ասել այն, ինչ չէր մտածել. առանձնապես կարողանում էր շողոքորթել բոլորովին պարզ ու բնական ձևերով։

— Ոչ, սիրելի կոմս, թույլ տվեք ինձ զբաղվել ձեր աղջիկներով։ Թեև այստեղ երկար ժ. մանակ չեմ մնալու, ինչպես և դուք։ Ես կաշխատեմ ուրախացնել ձերոնց։ Ես դեռ Պետերբուրգում ձեր մասին շատ բան եմ լսել և ուզում էի ձեզ ճանաչել, — ասավ նա Նատաշային իր միօրինակորեն գեղեցիկ ժպիտով։ — Ես ձեր մասին լսել եմ և իմ պաժ Դրուբեցկոյից։ Լսե՞լ եք — նա ամուսնանում է։ Լսել եմ նաև ամուսնուս բարեկամ Բալկոնսկուց, իշխան Անդրեյ Բալկոնսկուց, — ասավ նա մի առանձին շեշտով, կամենալով ակնարկել, որ ինքը գիտի նրա վերաբերմունքը դեպի Նատաշան։ Ավելի լավ ծանոթանալու համար՝ նա խնդրեց, որ օրիորդներից մեկը ներկայացման մնացած մասը նստի իր օթյակում և Նատաշան տեղափոխվեց նրա մոտ։

Երրորդ գործողության մեջ բեմը ներկայացնում էր պալատ, ուր վառվում էին շատ մոմեր և կախված էին մորուքավոր ասպետների պատկերներ։ Մեջտեղը կանգնած էին, հավանորեն, թագավորն ու թագուհին։ Թագավորը թափահարեց աջ ձեռը և, ըստ երևույթին, ամաչելով, վատ երգեց մի ինչ-որ բան ու նստեց իր մոռագույն գահի վրա։ Այն աղջիկը, որ առաջ ճրմակ զգեստով էր, հետո երկնագույն, այժմ միայն մի շապիկ հագին, արձակ մազերով, կանգնել էր գահի մոտ։ Նա թագուհուն դիմելով, ինչ-որ վշտոտ բան էր երգում. բայց թագավորը ձեռը թափահարեց խստությամբ և բեմի կողքից դուրս եկան մերկ ոտներով տղամարդիկ ու մերկ ոտներով կանայք և բոլորը միասին սկսեցին պարել։ Ապա ջութակները նվագեցին մեղմ և ուրախ եղանակ. աղջիկներից մեկը՝ մերկ հաստ ոտներով ու նիհար ձեռներով, մյուսներից բաժանվելով՝ անցավ կուլիսների ետև, կորսաժն ուղղեց, նորից դուրս եկավ բեմի մեջտեղը կանգնեց և սկսեց թռչկոտել ու ոտներն արագ միմյանց խփել։ Պարտերում բոլորը ծափահարեցին ու «բռավո» աղաղակեցին։ Հետո մի տղամարդ կանգնեց անկյունում։ Երաժշտախումբն սկսեց նվագել ավելի բարձրաձայն և այդ տղամարդը մենակ՝ իր մերկ ոտներով սկսեց շատ բարձր թռչկոտել ու ոտները գետնին խփել։ (Այդ մարդը Duport-ն էր, որ իր այդ

արվեստի համար տարեկան ստանում էր 60 հազար ռուբլի)։ Բոլորը՝ պարտերում, օթյակներում և անգամ վերնասրահում՝ բոլորը միասին ծափահարեցին ու գոռացին ամբողջ ուժով, իսկ տղամարդը կանգնեց ու սկսեց ժպտալով գլուխ տալ ամեն կողմ։ Հետո պարեցին էլի ուրիշները՝ մերկ ոտներով կանայք ու տղամարդիկ. ապա թագակիրներից մեկն ինչ-որ բացատկանչություն արավ երաժշտության նվագածությամբ և բոլորն սկսեցին երգել։ Բայց հանկարծ փոթորիկ եղավ, երաժշտախմբում լսվեցին խրոմատիկ գամմաներ և նվազեցրած սեպտիմի ակկորդներ, և բոլորը նորից վազեցին ու կրկին ներկաներից մեկին քաշ տվին կուլիսների ետև, ու վարագույրն իջավ։ Հանդիսականների մեջ նորից սարսափելի աղմուկ ու ծափահարություն բարձրացավ, և բոլորն էլ սկսեցին խանդավառ դեմքերով գոչել. «Դյուպորի՞ն, Դյուպորի՞ն, Դյուպորի՞ն»։ Նատաշան այլևս օտարոտի չէր գտնում այդ։ Նա գոհունակ, ուրախ ժպտալով նայուում էր շուրջը։

— N'est-ce pas qu'il est admirable — Duport[1], — ասավ էլենը Նատաշային։

— Օհ, oui[2], — պատասխանեց Նատաշան։

X

Անտրակտին էլենի օթյակում հանկարծ ցուրտ փչեց, դուռը բացվեց և, կոանալով ու աշխատելով մարդու չդիպչել, ներս մտավ Անատոլը։

— Թույլ տվեք եղբորս ներկայացնել ձեզ, — աչքերն անհանգիստ կերպով Նատաշայի և Անատոլի վրա դարձնելով՝ ասավ էլենը։

Նատաշան մերկ ուսի վրայով շրջեց իր սիրունիկ գլուխը դեպի Անատոլն ու ժպտաց։ Անատոլը, որ մոտից նույնպես գեղեցիկ էր, ինչպես և հեռվից, նստեց Նատաշայի մոտ և ասավ, թե ինքը վաղուց էր ցանկանում նրա հետ ծանոթ լինելու հաճույքն զգալ, դեռ Նարիշկինի պարահանդեսի օրից, ուր առաջին անգամ տեսել էր նրան։ Կուրագինը կանանց մոտ ավելի

[1] Այնպես չէ՞, Դյուպորն սքանչելի է։
[2] Օ, այո։

խելք ու ավելի պարզ էր, քան տղամարդկանց շրջանում։ Նա խոսում էր պարզ ու համարձակ, և Նատաշային օտարոտի ու հաճելի կերպով զարմացնում էր այն, որ ոչ միայն ոչինչ սարսափելի բան չկար այդ մարդու մեջ, որի մասին այնքան բան էին պատմում, այլ, ընդհակառակը, նրա դեմքին կար ամենաանմեղ, ուրախ և բարեսիրտ մի ժպիտ։

Կուրագինը հարցրեց ներկայացման տպավորության մասին և պատմեց, թե ինչպես անցյալ ներկայացմանը Սեմյոնովան, խաղալիս, վայր ընկավ։

— Իսկ գիտեք, կոմսուհի, — ասավ նա հանկարծ դիմելով Նատաշային, իբրև մի հին, վաղեմի ծանոթի, — մենք՝ կոստյումներով կարուսել ենք սարքում. լավ կլիներ դուք մասնակցեիք. շատ ուրախ կլինի։ Բոլորը հավաքվելու են Արխարովների մոտ։ Խնդրեմ, եկեք իսկապես, հը՞, — ասավ նա։

Այս ասելով, նա իր ժպտուն աչքերը չէր հեռացնում Նատաշայի դեմքից, պարանոցից ու հոլանի թևերից։ Նատաշան, անկասկած, գիտեր, որ Անատոլը հմայված է իրենով։ Այդ նրան հաճելի էր, բայց, չգիտես ինչու, նա իրեն նեղված ու ծանր էր զգում նրա ներկայությունից։ Երբ Նատաշան նրան չէր նայում, զգում էր, որ նա նայում է իր ուսերին, ուստի և ինքն ակամա բռնում էր նրա հայացքը, որպեսզի նա ավելի լավ նայի իր աչքերին։ Սակայն նրա աչքերին նայելով՝ երկյուղով զգում էր, որ նրա և իր միջև չկա բոլորովին ամոթխածության այն պատնեշը, որ նա միշտ զգացել էր իր և ուրիշ տղամարդկանց միջև։ Նատաշան, ինքն էլ չիմանալով ինչպես, հինգ րոպե հետո իրեն բոլորովին մոտիկ էր զգում այդ մարդուն։ Երբ նա երբեք շրջում էր, վախենում էր թե հանկարծ Կուրագինը չքոնի իր մերկ թևը, շհամբուրի իր պարանոցը։ Նրանք խոսում էին ամենահասարակ բաների մասին, և Նատաշան զգում էր, որ իրենք այնքան են մոտիկ, ինչպես երբեք չի եղել որևէ տղամարդու հետ։ Նատաշան նայում էր էլենին, հորն ու կարծես հարցնում էր, թե սա ի՞նչ է նշանակում. բայց էլենը զրուցում էր ինչ-որ գեներալի հետ և չէր պատասխանում նրա հայացքին, իսկ հոր նայվածքը նրան ոչինչ չէր ասում, բացի միայն այն, ինչ-որ միշտ ասում էր. «Ուրախ է, դե ես էլ գոհ եմ»։

Անհարմար լռության րոպեներից մեկի միջոցին, երբ Անատոլն իր դուրս ընկած աչքերով հանդարտ ու համառ

նայում էր նրան, Նատաշան, որպեսզի այդ լռությունը խզի, հարցրեց թե որքան է Մոսկվան դուր գալիս նրան։ Նատաշան հարցրեց ու կարմրեց։ Նրան շարունակ թվում էր, որ ինքը ինչ-որ անվայել բան է անում նրա հետ խոսելով։ Անատոլը ժպտաց, կարծես խրախուսելով նրան։

— Առաջ քիչ էր դուր գալիս, որովհետև ի՛նչն է որ քաղաքը հաճելի է դարձնում, ce sont les jolies femmes[1], այնպե՞ս չէ։ Իսկ հիմա արդեն շատ է դուր գալիս, — ասավ նա, նշանակալից Նատաշային նայելով։ — Կարուսելին կգա՞ք, կոմսուհի։ Եկե՛ք, — ասավ նա, ձեռը դեպի Նատաշայի ծաղկեփունջը մեկնելով և ձայնն իջեցնելով՝ ավելացրեց. — Vous serez la plus jolie. Venez, chère comtesse, et comme gage donnez-moi cette fleur[2].

Նատաշան նրա ասածը չհասկացավ, ինչպես և Անատոլն ինքը, բայց զգաց, որ Կուրագինի անհասկանալի խոսքերի մեջ անպարկեշտ դիտավորություն կար։ Նատաշան չգիտեր ինչ ասել և շուռ եկավ, կարծես չլսելով, այն ինչ նա ասավ։ Բայց հենց որ շուռ եկավ, մտածեց, որ Անատոլն այստեղ է, իր ետև, և իրենից այնքան մոտիկ։

«Հիմա ինչպե՞ս է։ Նա շփոթվե՞ց։ Բարկացա՞վ։ Պետք է ուղղել այդ», հարցնում էր Նատաշան ինքն իրեն։ Նա չկարողացավ իրեն զսպել, որ ետ չնայի. և նա նայեց ուղիղ Անատոլի աչքերին. Անատոլի թե՛ մոտիկությունը, թե՛ վստահությունը և թե՛ բարեհոգի սիրալիր ժպիտը հաղթեցին նրան։ Նատաշան նույնպես ժպտաց, ինչպես Կուրագինը, ուղիղ նրա աչքերին նայելով։ Ու կրկին Նատաշան սարսափով զգաց, որ Անատոլի ու իր միջև ոչ մի պատվար չկա։

Վարագույրը կրկին բարձրացավ։ Անատոլն օթյակից դուրս եկավ հանդարտ և ուրախ. Նատաշան վերադարձավ հոր մոտ՝ իրենց օթյակը՝ միանգամայն տարված այն աշխաբհով, որի մեջ գտնվում էր։ Այն ամենը, ինչ կատարվում էր նրա առջև, նրան թվում էր արդեն միանգամայն բնական. բայց նախկին բոլոր մտքերն իր փեսացուի մասին, իշխանադուստր Մարիայի

---

[1] Դրանք գեղեցիկ կանայք են։

[2] Դուք ամենագեղեցիկը կլինեք։ Եկեք, սիրելի կոմսուհի, և իբրև գրավական այս ծաղիկը տվեք ինձ։

մասին, գյուղական կյանքի մասին, էլ ոչ մի անգամ նրա գլուխը չեկան, կարծես այդ ամենը վաղուց անցած-գնացած բաներ լինեին։

Չորրորդ գործողության մեջ կար մի սատանա, որ ձեռը թափահարելով երգեց այնքան ժամանակ, մինչև որ նրա տակի տախտակները քաշեցին և նա ցած իջավ։ Նատաշան չորրորդ գործողությունից միայն այդ տեսավ. մի ինչ-որ բան հուզում ու տանջում էր նրան, և այդ հուզմունքի պատճառը Կուրագինն էր, որին նա ակամա հետևում էր իր աչքերով։ Երբ նրանք թատրոնից դուրս եկան, Անատոլը մոտեցավ նրանց, կանչեց նրանց կառքը և նստեցրեց նրանց։ Նատաշային նստեցնելով՝ Անատոլը նրա ձեռը սեղմեց արմունկից վեր։ Նատաշան, հուզված ու շիկնած, նրան նայեց։ Անատոլը, աչքերը փայլեցնելով ու քնքշորեն ժպտալով, նայում էր նրան։

Տուն գալուց միայն Նատաշան կարողացավ լավ կշռադատել այն բոլորը, ինչ պատահել էր իրեն. և հանկարծ իշխան Անդրեյին հիշելով, նա սարսափեց և բոլորի ներկայությամբ, թեյի ժամանակ (որը խմում էին թատրոնից հետո) բարձր հագոց քաշեց և, կարմրատակելով, սենյակից դուրս վազեց։

«Տեր իմ աստվա՜ծ։ Ես կորա՜,— ասավ նա ինքն իրեն.— ի՞նչպես թույլ տվի, որ բանն այստեղ հասնի»,—մտածեց Նատաշան։ Երկար նստած էր նա, կարմրատակած երեսը ձեռներով ծածկած, ու աշխատում էր պարզ հաշիվ տալ իրեն, թե ինչ է պատահել իրեն, և չկարողացավ հասկանալ ոչ այն, թե ինչ է պատահել իրեն, ոչ էլ այն, թե ի՞նչ է զգում։ Ամեն ինչ նրան թվում էր մութ, անորոշ ու սարսափելի։ Այնտեղ, այն ահագին, լուսավորված դահլիճում, ուր խոնավ տախտակների վրա երաժշտության նվագածությամբ իր մերկ ոտներով թռչկոտում էր Duport-ը՝ վահանակավոր բաճկոնով, և ուր աղջիկները, ծերերը և մերկ՝ հանդարտ ու հպարտ ժպիտով էլենը հիացած՝ «բռավո» էին կանչում,— այնտեղ, այդ էլենի հովանու ներքո ամեն ինչ պարզ էր ու որոշ. բայց այժմ, երբ բոլորովին մենակ էր, այդ անհասկանալի էր։ «Ինչ՞ է այդ։ Այդ ի՞նչվախ էր, որ ես զգացի դեպի նա։ Ի՞նչ է խղճի խայթը, որ զգում եմ այժմ», մտածում էր նա։

Նատաշան միայն պառավ կոմսուհուն էր կարողանում գիշերները՝ անկողնում պատմել այն բոլորը, ինչ մտածում էր ինքը։ Նա գիտեր, որ Սոնյան՝ իր խիստ ու ամբողջական հայացքով կա՛մ ոչինչ չէր հասկանա կա՛մ կսարսափեր իր խոստովանությունից։ Նատաշան մենակ, ինքնուրույն աշխատում էր լուծել այն, ինչ տանջում էր իրեն։

«Կորա՞ծ եմ ես արդյոք իշխան Անդրեյի սիրո համար թե ոչ», հարցնում էր նա իրեն և պատասխանում էր հանգստացուցիչ ժպիտով. «Ի՞նչ հիմարն եմ ես, որ հարցնում եմ այդ։ Իսկ ի՞նչ է պատահել ինձ։ Ոչինչ։ Ես ոչինչ չեմ արել, ոչնչով տեղիք չեմ տվել այդ բանին։ Ոչ ոք չի իմանա, ու ես էլ այլևս նրան չեմ տեսնի,— ասում էր Նատաշան ինքն իրեն։— Նշանակում է, պարզ է, որ ոչինչ չի եղել, որ զղջալու էլ կարիք չկա, որ իշխան Անդրեյն ինձ այսպես էլ կարող է սիրել։ Բայց ինչպես այսպես։ Ա՜խ, տեր իմ աստված, տեր իմ աստված. նա ինչո՛ւ այստեղ չէ»։ Նատաշան պահ մի հանգստացավ, բայց հետո ինչ-որ բնազդ ասում էր նրան, որ այդ ամենը թեև ճիշտ է, ու թեև ոչինչ չի եղել,— բնազդն ասում էր նրան, որ դեպի իշխան Անդրեյն ունեցած նախկին սիրո ամբողջ մաքրությունը կորած է։ Եվ Նատաշան նորից մտքում կրկնեց Կուրագինի հետ ունեցած իր ամբողջ խոսակցությունն ու պատկերացրեց այդ գեղեցիկ ու համարձակ մարդու դեմքը, շարժուձևերը և քնքուշ ժպիտն այն միջոցին, երբ նա սեղմեց իր ձեռը։

XI

Անատոլ Կուրագինն ապրում էր Մոսկվայում, որովհետև հայրը նրան հեռացրել էր Պետերբուրգից, ուր նա տարեկան ծախսում էր քսան հազարից ավելի դրամ և նույնքան էլ պարտք էր անում, որ պարտքատերերը պահանջում էին հորից։

Հայրը որդուն հայտնեց, որ ինքը վերջին անգամն է վճարում նրա պարտքերի կեսը, այն պայմանով միայն, թե նա մեկնի Մոսկվա՝ գլխավոր հրամանատարի ադյուտանտի պաշտոնով, որ հայրը գլուխ էր բերել նրա համար, և այնտեղ աշխատի, վերջապես, մի լավ հարսնացու գտնել։ Եվ նա՝ հայրը, մատնանշել էր իշխանադուստր Մարիային և Ժյուլի Կարագինային։

Անատոլը համաձայնեց ու եկավ Մոսկվա, ուր իջևանեց Պիեռի տանը։ Պիեռն Անատոլին սկզբում ընդունեց դժկամությամբ, բայց հետո ընտելացավ նրան. երբեմն նրա հետ գնում էր նրա քեֆերին, ու, փոխառության անվան տակ, փող էր տալիս նրան։

Անատոլը, ինչպես իրավացի կերպով ասում էր նրա մասին Շինշինը, այն օրից, ինչ եկել էր Մոսկվա, խելքամաղ էր անում Մոսկվայի աղջիկ-պարոններին, մանավանդ նրանով, որ նրանց բանի տեղ չէր դնում և ակնհայտ կերպով նախապատվություն էր տալիս գնչուհիներին ու ֆրանսացի դերասանուհիներին, որոնց գլխավորի՝ mademoiselle George-ի հետ, ինչպես ասում էին, նա մոտ հարաբերության մեջ էր։ Նա բաց չէր թողնում թե՛ Դանիլովի և թե՛ Մոսկվայի մյուս խրախճասերների մոտ կազմակերպված ոչ մի քեֆ. ամբողջ գիշեր խմում էր, այդ բանում բոլորին գերազանցելով. լինում էր նաև բարձր շրջանների բոլոր երեկույթներին ու պարահանդեսներին։ Պատմում էին Մոսկվայի մի քանի կանանց գլխին սարքած ինտրիգների մասին. նա պարահանդեսներում ըզբաղվում էր մի քանի կանանցով։ Սակայն աղջիկներին, հատկապես հարուստ հարսնացուներին, որոնք մեծ մասամբ տրդեղ էին, նա չէր մոտենում, մանավանդ որ Անատոլը, մի բան, որ ոչ ոք չգիտեր, բացի ամենամոտ բարեկամներից, երկու տարի առաջ ամուսնացել էր։

Երկու տարի առաջ, երբ նրանց գունդը բանակել էր Լեհաստանում, վեհացի մի ոչ հարուստ կալվածատեր Անատոլին ստիպել էր ամուսնանալ իր աղջկա հետ։ Բայց Անատոլը շատ շուտով թողեց կնոջը և փողով, որ պայմանավորվեց անարն ուղարկելու, իրավունք ձեռք բերեց ամուրի կոչվելու։

Անատոլը միշտ գոհ էր իր դրությունից, իրենից և ուրիշներից։ Նա բնազդաբար, ամբողջ էությամբ համոզված էր, որ ինքն այլ կերպ չի կարող ապրել, քան ապրում է, և որ ինքը կյանքում երբեք որևէ վատ բան չի արել։ Նա անկարող էր լինում կշռադատել ո՛չ այն, թե իր արարքներն ինչպես կանդրադառնան ուրիշների վրա, ոչ էլ այն, թե ինչ կարող է ստացվել իր այս կամ այն արարքից։ Նա համոզված էր, թե բոլոր աստծուց ստեղծված է այնպես, որ միշտ ջրում պիտի ապրի, այդպես էլ ինքը աստծուց ստեղծված է այնպես, որ պետք է

ապրի երեսուն հազար ֆլորինոտով ու միշտ բարձր դիրք ունենա հասարակության մեջ։ Նա այնպես հաստատ էր հավատում դրան, որ, նրան նայելով, շատերն էլ համոզվում էին այդ բանում ու չէին մերժում նրան ոչ բարձր դիրք հասարակության մեջ, ոչ էլ փող, որը նա, ըստ երևույթին, անվերադարձ վերցնում էր ամեն մարդուց։

Նա խաղամոլ չէր, գոնե երբեք չէր ցանկանում տանել։ Նա սնափառ չէր։ Նրա համար բոլորովին միևնույն էր, թե իր մասին ինչ կմտածեն։ Առավել ևս նրան չէր կարելի մեղադրել փառասիրության մեջ։ Նա մի քանի անգամ ծաղրել էր հորը, իր կարիերան փչացնելով, և ծիծաղում էր բոլոր մեծարանքների ու պատիվների վրա։ Նա ժլատ չէր, և չէր մերժում իրեն դիմողներին։ Միակ բանը, որ նա սիրում էր, դա ուրախությունն ու կանայք էին. և որովհետև նրա հասկացողությամբ իր այդ հակումների մեջ ոչ մի անազնիվ բան չկար, իսկ կշռադատել, թե իր հաճույքը բավարարելուց ի՞նչ են շահում ուրիշները, նա չէր կարող, ուստի և հոգու խորքում իրեն համարում էր անբասիր մարդ, անկեղծորեն ատում էր սրիկաներին ու վատ մարդկանց և հանգիստ խղճով բարձր էր պահում իր գլուխը։

Խրախճամոլները, այդ տղամարդ մագթաղինացիները, սնմեղության գիտակցության մի գաղտնի զգացում ունեն, ճիշտ այնպիսի, ինչպիսին ունեն և կին-մագթաղինացիները, որն ապավինում է թողության նույն հույսին։ «Նրան ամեն ինչ ներելի է, որովհետև նա շատ է սիրել, ու նրան ամեն բան կներվի, որովհետև նա շատ է ուրախացել»։

Դոլոխովը, որ իր տարագրությունից ու պարտկական արկածներից հետո, այդ տարի նորից հայտնվել էր Մոսկվայում, և խաղերով ու խրախճանքներով լի ճոխ կյանք էր վարում, մտերմացավ Պետերբուրգի հին ընկեր Կուրագինին, և նրան օգտագործում էր իր նպատակների համար։

Անատոլը Դոլոխովին անկեղծ սիրում էր նրա խելքի ու քաջության համար։ Դոլոխովը, որին հարկավոր էին Անատոլ Կուրագինի անունը, դիրքը, կապերը՝ իր խաղերի համար հարուստ երիտասարդներ գրավելու, օգտվում էր նրանից ու զվարճանում Կուրագինով, առանց այդ նրան զգացնել տալու։ Բացի հաշվից, որի համար Անատոլը հարկավոր էր նրան,

հենց ուրիշի կամքը ղեկավարելու պրոցեսը Դոլոխովի համար թե՛ հաճույք էր, թե՛ սովորույթ և թե՛ պահանջ։

Նատաշան Կուրագինի վրա ուժեղ տպավորություն թողեց։ Ներկայացումից հետո, ընթրիքին Անատոլը, հմուտ մարդու ձևերով, Դոլոխովի առջև պարզեց Նատաշայի ձեռների, ուսերի, ոտների ու մազերի արժանիքը և հայտնեց Նատաշայի ետևից ընկնելու իր որոշումը։ Թե ի՛նչ կստացվեր այդ բանից, Անատոլը չէր կարող կշռադատել և իմանալ, ինչպես երբեք չէր իմանում, թե ի՛նչ է ստացվելու իր ամեն մի արարքից։

— Լավն է, բարեկամ, բայց ոչ մեզ համար,— ասավ նրան Դոլոխովը։

— Ես քրոջս կասեմ, որ Ելենան իր տունը ճաշի կանչի,— ասավ Անատոլը։— Հա՞։

— Ավելի լավ է սպասիր, երբ ամուսնանա...

— Գիտես,— ասավ Անատոլը,— J'adore les petites filles[1]. անմիջապես կկոչի։

— Դու մի անգամ արդեն աղջկա թակարդ ես ընկել,— ասավ Դոլոխովը, որը գիտեր Անատոլի ամուսնության մասին։— Տե՛ս։

— Հը՛, երկու անգամ արդեն չի՞ կարելի,— ասավ Անատոլը բարեսրտորեն ծիծաղելով։

XII

Ներկայացման հետևյալ օրը Ռոստովները ոչ մի տեղ չգնացին և ոչ ոք չեկավ նրանց մոտ։ Մարիա Դմիտրիևնան, Նատաշայից թաքուն, ինչ-որ խոսում էր հոր հետ։ Նատաշան գլխի ընկավ, որ նրանք խոսում էին ծեր իշխանի մասին և ինչ-որ բան էին մտմտում։ Այդ բանը նրան թե՛ անհանգստացնում, թե՛ վիրավորում էր։ Նա ամեն րոպե սպասում էր իշխան Անդրեյին, և դռնապանին երկու անգամ ուղարկեց Վոզդվիժենկա՝ իմանալու, թե նա չի՞ եկել արդյոք։ Իշխան Անդրեյը չէր եկել։ Նատաշայի համար այժմ ավելի ծանր էր, քան Մոսկվա գալու առաջին օրերին։ Նրա անհամբերությանն ու կարոտին միացան իշխանադուստր Մարիայի և ծեր իշխանի հետ ունեցած տեսակցության անհաճո հիշողությունը և ինչ-որ վախ ու անհանգստություն, որոնց պատճառը նա չգիտեր։ Նատաշային շարունակ թվում էր, թե նա կա՛մ երբեք չի գա, կա՛մ գալուց առաջ մի բան պիտի պատահի նրան։ Առաջվա պես նա այլևս չէր կարողանում հանգիստ ու երկարորեն մենակ, ինքն իրեն, մտածել նրա մասին։ Հենց որ սկսում էր իշխան Անդրեյի մասին մտածել, նրա մասին ունեցած հիշողություններին միանում էին ծեր իշխանի, իշխանադուստր Մարիայի վերջին ներկայացման և Կուրագինի մասին եղած հիշողությունները։ Նրա առջև նորից ծառանում էր այն հարցը, թե մեղավո՞ր չէ արդյոք ինքը, թե դեպի Անդրեյն ունեցած իր հավատարմությունն արդեն չի՞ խախտված արդյոք, ու այդպիսով նա կրկին ամենափոքր մանրամասնությամբ վերհիշում էր նրա յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր շարժումը, դեմքի արտահայտության յուրաքանչյուր երանգը, նրա՛, որ կարողացել էր Նատաշայի սրտում արթնացնել իր՝ Նատաշայի համար անըմբռնելի ու սարսափելի զգացում։ Նատաշան տնեցիների աչքին թվում էր սովորականից ավելի աշխույժ. բայց նա բնավ այնպես հանգիստ ու երջանիկ չէր, ինչպես առաջ։

Կիրակի առավոտյան Մարիա Դմիտրիևնան հյուրերին հրավիրեց իր մատուռը՝ պատարագի։

— Ես այդ նորաձև եկեղեցիները չեմ սիրում,— ասում էր նա տկնհայտորեն պարծենալով իր ազատամտությամբ։— Ամեն տեղ ասված մեկ է։ Մեր տերտերը լավն է. կարգին, կանոնավոր պատարագ է անում, և սարկավագը նույնպես։ Ի՞նչ սրբազան բան կա նրա մեջ, երբ դասում համերգ են տալիս։ Չեմ սիրում, անկարգ բան է։

Մարիա Դմիտրիևնան սիրում էր կիրակիները և կարողանում էր այդ օրերը տոնել։ Շաբաթ օրը նրա տունն ամբողջապես լվացված ու մաքրված էր լինում. սպասավորները և նա ինքը չէին աշխատում, բոլորը տոնաբար զուգված էին լինում և գնում էին պատարագի։ Ճաշին նոր ուտելիքներ էին ավելացնում, իսկ սպասավորներին տրվում էր օղի և խորոված սագ կամ խոճկոր։ Բայց տանը ոչ մի բանի վրա տոնն այնպես չէր նկատվում, ինչպես նկատվում էր Մարիա Դմիտրիևնայի լայն ու

[1] Փոքրիկ աղջիկներին պաշտում եմ։

խիստ դեմքի վրա, որը այդ օրն ընդունում էր հանդիսավորության անփոփոխ արտահայտություն։

Երբ պատարագից հետո կարասիների ծածկոցները հանած հյուրասրահում սուրճ խմեցին, Մարիա Դմիտրիևնային հայտնեցին, թե կառքը պատրաստ է, և նա խիստ երևույթով, իր տոնական շալը վրան, որով այցելություններ էր անում, վեր կացավ տեղից ու հայտնեց, թե գնում է իշխան Նիկոլայ Անդրեյիչ Բալկոնսկու մոտ, Նատաշայի մասին բացատրվելու։

Մարիա Դմիտրիևնայի գնալուց հետո, Ռոստովների մոտ եկավ մադամ Շալմեի դերձակուհին, և Նատաշան հյուրասրահին կից սենյակի դուռը ծածկելով, շատ գոհ իր զվարճությամբ, սկսեց նոր հագուստները չափել-փորձել։ Այն ժամանակ, երբ նա հագավ շուլալած, դեռևս առանց թևքերի լիֆը և գլուխը թեքելով նայեց հայելուն, տեսնելու, թե ինչպես է նստում մեջքը, նա հյուրասրահից լսեց հոր ձայնն ու մի ուրիշ կանացի ձայն, որ նրան ստիպեց կարմրել։ Դա Էլենի ձայնն էր։ Նատաշան դեռ չէր կարողացել լիֆը հանել, երբ դուռը բացվեց ու սենյակ մտավ կոմսուհի Բեզուխովան՝ բարեսիրտ, փայլուն ու քնքուշ ժպիտը դեմքին, մութ-մանիշակագույն բարձր օձիքավոր թավշե զգեստով։

— Ah, ma délicieuse![1] — ասավ նա կարմրած Նատաշային։ — Charmant![2] Չէ, այս բանի նման չի, իմ սիրելի գոմս, — ասավ նա իր ետևից ներս եկող Իլյա Անդրեյիչին։ — Ինչպե՞ս կարելի է ապրել Մոսկվայում ու ոչ մի՛ տեղ չգնալ։ Չէ, ես ձեզնից ձեռ չեմ քաշի։ Այս երեկո m-lle Georges-ը արտասանելու է և մի քանի մարդիկ են լինելու, և եթե դուք չբերեք ձեր գեղեցկուհիներին, որոնք m-lle Georges-ից լավն են, այն ժամանակ է՛լ մնաք բարով։ Ամուսինս այստեղ չէ։ Տվեր է գնացել, եթե ոչ նրա՛ն կուղարկեի ձեր ետևից։ Անպատճառ եկեք, անպատճառ, ժամը մոտ իննին։

Նա գլխով արավ իրեն ծանոթ դերձակուհուն, պատասխանելով նրա խոնարհ հարգանքին, ու նստեց հայելու կողքի բազկաթոռին, նկարչորեն բանալով թավշե զգեստի ծալքերը։ Նա շարունակում էր բարեսրտորեն և ուրախ շաղակրատել.

[1] Օ, իմ չքնաղ։
[2] Հիանալի է։

անընդհատ հիանում էր Նատաշայի գեղեցկությամբ։ Նա նայեց Նատաշայի զգեստներին ու գովեց դրանք. պարծեցավ և իր նոր, մետաղագույն գաղից կարած զգեստով, որը նա ստացել էր Փարիզից, և խորհուրդ տվեց Նատաշային՝ նրա համար ևս նույն տեսակ զգեստ կարել տալ։

— Ասենք, ձեզ ամեն ինչ սազում է, իմ չքնաղ, — ասում էր նա։

Գոհունակության ժպիտը Նատաշայի դեմքից չէր հեռանում։ Նա երջանկության ու փթթումի զգացում էր ապրում այդ սիրալիր կոմսուհի Բեզուխովայի գովասանքից, մի կոմսուհի, որը նրան առաջ թվում էր անմատչելի ու նշանավոր մի դամա, և որն այժմ այնպես բարի էր իր հանդեպ։ Նատաշայի վրա ուրախություն եկավ, և նա իրեն գրեթե սիրահարված զգաց այդ գեղեցիկ ու բարեսիրտ կնոջ վրա։ Էլենն իր հերթին անկեղծ հիանում էր Նատաշայով և ուզում էր ուրախացնել նրան։ Անառատը քրոջը խնդրել էր՝ իրեն հանդիպեցնել Նատաշայի հետ, և դրա համար նա եկել էր Ռոստովների մոտ։ Եղբորն ու Նատաշային միմյանց հանդիպեցնելու միտքը զվարճացնում էր նրան։

Չնայած նա սկզբում նեղացած էր Նատաշայից, որ նա Պետերբուրգում Բորիսին խլեց իրենից, այժմ նա այդ մտքին չէր էլ մտածում ու ամբողջ հոգով, յուրովի, քարիք էր ցանկանում Նատաշային։ Պատրաստվելով մեկնել Ռոստովների տնից, նա մի կրքոտ կանչեց իր protégée-ին։[1]

— Երեկ եղբայրս ճաշում էր ինձ մոտ, — մենք ծիծաղից մեռանք, — ոչինչ չէր ուտում և ջարդուփշուր հառաչում էր ձեզ համար, իմ սիրուհի։ — Il est fou, mais fou amoureux de vous, ma chère[2].

Նատաշան շառագունեց այդ խոսքերը լսելով։

— Ինչպես է կարմրում, ինչպես է կարմրում, ma délicieuse![3], — ասավ Էլենը։ Անպատճառ եկեք։ Si vous aimez quelqu'un, ma délicieuse, ce n'est pas une raison pour se cloîtrer. Si même vous êtes promise, je suis sûre que votre pro-

[1] Հավանավորյալին։
[2] Նա խելքը կորցնում է, բայց կորցնում է ձեր սիրուց, թանկագին։
[3] Իմ անգին։

mis aurait désiré, que vous alliez dans le monde en son absence plutôt, que de déprérir d'ennui[1].

«Նշանակում է, սա գիտի, որ ես հարսնացու եմ. նշանակում է սրանք էլ՝ մարդ ու կին, Պիեռի հետ, այդ արդարամիտ Պիեռի հետ,— մտածում էր Նատաշան,— այդ մասին խոսել ու ծիծաղել են։ Ուրեմն՝ այդ ոչինչ»։ Եվ նորից, Էլենի ազդեցության տակ ա՛յն, ինչ թվում էր սարսափելի, այժմ թվաց պարզ ու բնական։ «Եվ նա, այդ grande dame-ն[2] այնքան սիրալիր է և, ինչպես երևում է, ամբողջ հոգով սիրում է ինձ», մտածում էր Նատաշան։ «Եվ ինչո՞ւ չուրախանալ»,— մտածում էր նա՝ զարմացած ու լայն բացած աչքերով Էլենին նայելով։

Ճաշի մոտերքը Մարիա Դմիտրևնան վերադարձավ. նա լուռ ու լուրջ էր, ըստ երևույթին, ծեր իշխանի մոտ պարտություն էր կրել։ Տեղի ունեցած ընդհարումից նա տակավին սաստիկ հուզված էր, որպեսզի կարողանար հանդարտ պատմել եղելությունը։ Կոմսի հարցին նա պատասխանեց, թե ամեն ինչ լավ է և թե վաղը կպատմի։ Իմանալով կոմսուհի Բեզուխովայի այցելության և երեկույթի հրավերի մասին, Մարիա Դմիտրևնան ասավ.

— Բեզուխովայի հետ ընկնել չեմ սիրում և խորհուրդ չեմ տա. իսկ եթե արդեն խոսք ես տվել՝ գնա՛. կբացվես,— ավելացրեց նա, Նատաշային դիմելով։

XIII

Կոմս Իլյա Անդրեիչը աղջիկներին տարավ կոմսուհի Բեզուխովայի տունը։ Այնտեղ բավական հասարակություն կար։ Սակայն բոլորը գրեթե անծանոթ էին Նատաշային։ Կոմս Իլյա Անդրեիչը տհաճությամբ նկատեց, որ այդ հասարակությունը բաղկացած էր առավելապես այնպիսի կանանցից ու տղամարդկանցից, որոնք հայտնի էին իրենց ազատ վարքով։ M-lle Georges-ը, երիտասարդներով շրջապատված, կանգնել էր հյուրասրահի անկյունում։ Կային նաև մի քանի ֆրանսացի դրանց մեջ էր և Մետիվիեն, որ Էլենի գալու օրից, տանու մարդ էր դարձել նրա մոտ։ Կոմս Իլյա Անդրեիչը որոշեց թուղթ չխաղալ, աղջիկների մոտից չհեռանալ ու մեկնել հենց որ Georges-ի ներկայացումը վերջանա։

Անատոլն, ըստ երևույթին, դռան մոտ սպասում էր Ռոստովների գալուն։ Նա իսկույն աչք կոմսին ողջունելով, մոտեցավ Նատաշային ու հետևեց նրան։ Նրան տեսնելուն պես, ինչպես թատրոնում, Նատաշային տիրեց սնափառ հաճույքի ու երկյուղի զգացում, թե ինքը դուր է գալիս նրան, ինչպես նաև տիրեց նրան վախի զգացում՝ այն բանից, որ նրա և իր միջև բարոյական արգելքներ չկան։

Էլենը Նատաշային ընդունեց խնդագին և բարձրաձայն հիացավ նրա գեղեցկությամբ ու արդուզարդով։ Շուտով, նրանց գալուց հետո, m-lle Georges-ը սենյակից դուրս եկավ՝ հագնվելու։ Հյուրասրահում աթոռները կարգի բերին և սկսեցին նստոտել։ Անատոլն աթոռը հրեց դեպի Նատաշան և ուզեց նստել նրա կողքին, բայց կոմսը, որ աչքը Նատաշայից չէր հեռացնում, ինքը նստեց նրա մոտ։ Անատոլը նստեց նրանց ետև։

M-lle Georges-ը մերկ, փոսիկներ ունեցող հաստ ձեռներով, կարմիր շալը մեկ ուսով գցած՝ դուրս եկավ իր համար բազկաթոռների արանքում թողած ազատ տարածությունը և կանգնեց անբնական դիրքով։ Լսվեց խանդավառ մի շշունջ։

M-lle Georges-ը մի խիստ ու մռայլ հայացքով նայեց հասարակության և սկսեց արտասանել ֆրանսերեն մի ինչ-որ հատանավոր, ուր խոսվում էր մոր՝ դեպ որդին ունեցած հանրավոր սիրո մասին։ Տեղ-տեղ նա ձայնը բարձրացնում էր, տեղ-տեղ շշնջում, գլուխը հաղթականորեն բարձրացնելով. տեղ-տեղ կանգ էր առնում և աչքերը շռելով՝ խոխռում։

— Adorable, divin, délicieux![1] — լսվում էր ամեն կողմից։

Նատաշան նայում էր հաստ Georges-ին, բայց ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում և չէր հասկանում ա՛յն, ինչ կատարվում էր իր առջև. նա նորից միանգամայն անվերադարձ

---

[1] Եթե մեկին սիրում եք, սիրելիս, դրա համար բնավ չպետք է միանձնուհու կյանք վարել։ Անգամ եթե դուք հարսնացու եք, ես համոզված եմ, որ ձեր փեսացուն կգերադասեր, որ դուք իր բացակայության միջոցին շրջան գուրս գայիք, քան թե ձանձրույթից մեռնեիք։

[2] Մեծարգո տիկին։

[1] Գաշտելի է, աստվածային է, հմայիչ է։

կերպով իրեն զգում էր այն տարօրինակ, խենթ աշխարհում, որն այնքան հեռու էր նախկինից, և ուր անկարելի էր իմանալ ի՞նչն է լավը, ի՞նչը վատ, ի՞նչն է խելացի և ի՞նչը անմիտ։ Նրա ետև նստած էր Անատոլը, ուստի և Նատաշան նրա մոտիկությունն զգալով, երկյուղած սպասում էր ինչ-որ բանի։

Առաջին մենախոսությունից հետո ամբողջ հասարակությունը ոտի կանգնեց և, m-lle Georges-ին շրջապատելով, իր հիացմունքն արտահայտեց։

— Ի՞նչ լավն է նա, — ասավ Նատաշան հորը, որ մյուսների հետ վեր կացավ և բազմության միջով առաջացավ դեպի դերասանուհին։

— Ես նրան ձեզնից լավ չեմ համարում, — ասավ Անատոլը, հետևելով Նատաշային։ Նա այդ ասավ այնպիսի ժամանակ, երբ Նատաշան հազիվ կարող էր լսել։ — Դուք հիանալի եք... այն բոպեից, երբ տեսա ձեզ, ես չեմ դադարել...

— Գնանք, Նատաշա, գնանք, — ասավ կոմսը վերադառնալով որ աղջկան տանի։ — Ի՞նչ լավն է։

Նատաշան, առանց խոսք ասելու, մոտեցավ հորը և հարցական-զարմացած աչքերով նրան նայեց։

Մի քանի անգամ արտասանելուց հետո m-lle Georges-ը գնաց, և կոմսուհի Բեզուխովան հասարակությանը հրավիրեց դահլիճ։

Կոմսն ուզում էր մեկնել, բայց Էլենն աղաչում էր նրան չփչացնել իր հանդատրաստից սարքած պարահանդեսը։ Ռոստովները մնացին։ Անատոլը Նատաշային վալսի հրավիրեց, և պարի միջոցին նա, Նատաշայի իրանն ու ձեռը սեղմելով, ասավ նրան, թե նա ravissante[1] է, և թե ինքը սիրում է նրանց։ Էֆոսզի միջոցին, որը Նատաշան պարեց դարձյալ Կուրագինի հետ, երբ նրանք մնացին մենակ, Անատոլը ոչինչ չասավ և միայն նայում էր նրան։ Նատաշան կասկածի մեջ էր, թե արդյոք երազում չի տեսել այն, ինչ Անատոլն ասավ իրեն վալսի ժամանակ։ Առաջին պարապտույտի վերջում, Անատոլը կրկին սեղմեց Նատաշայի ձեռը։ Նատաշան իր վախեցած աչքերը գցեց նրա երեսը. բայց Անատոլի քնքշալիր հայացքի ու ժպիտի մեջ այնպիսի ինքնավստահ-մեղմ արտահայտություն

[1] Հմայիչ։

կար, որ նրան նայելով, Նատաշան չկարողացավ ասել ա՛յն, ինչ ուզում էր ասել, ու աչքերը խոնարհեց։

— Ինձ այդպիսի բաներ մի ասեք, ես նշանված եմ և սիրում եմ ուրիշին, — ասավ նա արագ և նայեց Անատոլին։

Անատոլը չշփոթվեց և չվշտացավ նրա խոսքերից։

— Այդ մասին ինձ հետ մի խոսեք։ Իմ ի՞նչ գործն է, — ասավ նա։ — Ես ասում եմ, որ խենթի պես սիրահարված եմ ձեզ վրա։ Մի՞թե ես մեղավոր եմ, որ դուք հմայիչ եք։ Սկսե՛ք։

Նատաշան աշխույժ ու հանգիստ, լայն բացած, վախեցած աչքերով շուրջն էր նայում և ավելի ուրախ էր թվում, քան սովորաբար։ Նա գրեթե ոչինչ չէր հասկանում այն բոլորից, ինչ տեղի էր ունենում այդ երեկո։ Պարեցին էֆոսեզ ու գրոֆատեռ։ Հայրը Նատաշային առաջարկեց գնալ, բայց Նատաշան խնդրեց մնալ։ Ո՛ւր էլ նա լիներ, ո՛ւմ հետ էլ խոսեր, զգում էր իր վրա Անատոլի հայացքը։ Հետո նա հիշում էր, որ հորից թույլտվություն խնդրեց զուգասենյակ գնալու՝ հագուստները կարգի բերելու համար. հիշում էր, որ Էլենը դուրս եկավ իր ետևից, ծիծաղելով խոսեց եղբոր սիրո մասին և որ փոքրիկ բազմոցարանում նա դարձյալ հանդիպեց Անատոլին. որ Էլենը ինչ-որ անհայտացավ, նրանք մնացին մենակ, և Անատոլը նրա ձեռը բռնելով, քնքուշ ձայնով ասավ.

— Ես չեմ կարող ձեզ մոտ գալ. բայց մի՞թե ես երբեք ձեզ չեմ տեսնելու։ Ես խելագարի պես սիրում եմ ձեզ։ Մի՞թե երբեք...— և նա Նատաշայի ճանապարհը կտրելով, դեմքը մոտեցրեց Նատաշայի դեմքին։

Նրա խոշոր, տղամարդկային փայլուն աչքերն այնքան մոտ էին Նատաշայի աչքերին, որ նա այդ աչքերից բացի ուրիշ ոչինչ չէր տեսնում։

— Նատալի՞, — շընչաց նրա հարցական ձայնը և մենակը ցավագին սեղմեց Նատաշայի ձեռը։ — Նատալի՞։

«Ես ոչինչ չեմ հասկանում, ինձ ոչինչ չասեք», ասում էր Նատաշայի հայացքը։

Տաք շրթունքները հպվեցին Նատաշայի շուրթերին, և նույն այդ վայրկյանին նա իրեն դարձյալ ազատ զգաց, և սենյակում լավեց Էլենի քայլերի ու զգեստի աղմուկը։ Նատաշան նայեց Էլենին, ապա կարմրած ու դողալով երկյուղած-հարցական հայացք գցեց Անատոլի վրա և գնաց դեպի դուռը։

— Un mot, un seul, au nom de Dieu[1] — ասում էր Անատոլը։

Նատաշան կանգ առավ։ Նա այնպես էր ուզում, որ Անատոլն այդ խոսքն ասի, որովհետև դա կբացատրեր այն, ինչ պատահեց, և որին ինքը թերևս պատասխաներ։

— Natalie, un mot, un seul[1], — շարունակ կրկնում էր Անատոլը, ըստ երևույթին, չիմանալով ինչ ասել, և այդ խոսքերը կրկնեց այնքան, մինչև որ էլենը մոտեցավ։

Էլենը Նատաշայի հետ միասին նորից գնացին հյուրասրահ։

Ընթրիքին չմնալով՝ Ռոստովները մեկնեցին։

Տուն դառնալով, Նատաշան ամբողջ գիշեր չքնեց. նրան տանջում էր այն անլուծելի հարցը, թե ո՛ւմ է սիրում ինքը. Անատոլի՞ն, թե՞ իշխան Անդրեյին։ Իշխան Անդրեյին նա սիրում էր — Նատաշան պարզ հիշում էր, թե որքան սաստիկ էր սիրում նրան։ Բայց Անատոլին նույնպես սիրում էր, և դա անկասկած էր։ «Այլապես, մի՞թե այս բոլորը կարո՞ղ էր տեղի ունենալ, — մտածում էր Նատաշան։ — Եթե ես դրանից հետո կարողացա, նրան հրաժեշտ տալիս, ժպիտով պատասխանել նրա ժպիտին, եթե ես կարողացա թույլ տալ, որ բանն այդտեղ հասնի, ապա նշանակում է, որ ես առաջին իսկ վայրկյանից սիրեցի նրան։ Նշանակում է, նա բարի է, ազնիվ և գեղեցիկ, ու չէր կարելի նրան չսիրել։ Ի՞նչ անեմ ուրեմն, երբ սիրում եմ թե՛ նրան, թե՛ ուրիշին», ասում էր նա ինքն իրեն, ու պատասխան չէր գտնում այդ սարսափելի հարցերին։

XIV

Առավոտն եկավ իր հոգսերով ու եռուզեռով։ Բոլորը վեր կացան, տանը նորից շարժում ու խոսակցություն սկսվեց, նորից դերձակուհիներ եկան, նորից Մարիա Դմիտրիևնան դուրս գնաց, և նորից կանչեցին թեյի։ Նատաշան լայն բացած աչքերով, կարծես ուզում էր բռնել իրեն ուղղված ամեն մի հայացք, անհանգիստ նայում էր բոլորին ու աշխատում իրեն պահել այնպես, ինչպես եղել էր միշտ։

[1] Մի խոսք, միայն մի խոսք, ի սեր աստծու։

Մարիա Դմիտրիևնան նախաճաշից հետո (այդ երբ ամենալավ ժամանակն էր) իր բազկաթոռին նստելով, Նատաշային ու ծեր կոմսին կանչեց իր մոտ։

— Է, բարեկամներս, ես ամեն ինչ կշռադատել եմ արդեն, և ահա իմ խորհուրդը ձեզ, — սկսեց նա։ — Երեկ, ինչպես գիտեք, ես իշխան Նիկոլայի մոտ էի. դե, և խոսեցի նրա հետ... Խելքին փչեց գոռալ։ Բայց ես իրենից ետ չմնացի։ Առանց քաշվելու ամեն բան ասի երեսին։

— Դրան ի՞նչ է պատահել, — հարցրեց կոմսը։

— Ի՞նչ։ Խելառ է էլի... լսել չի ուզում. է՛հ, էլ ինչ ասեմ, առանց այն էլ խեղճ աղջկան տանջեցինք, — ասավ Մարիա Դմիտրիևնան։ — Իմ խորհուրդն է, որ գործերդ վերջացնեք ու գնաք՝ Օտրադնոե... և այնտեղ սպասեք...

— Ա՜հ, ոչ, — բացականչեց Նատաշան։

— Ոչ, գնա՛լ, — ասավ Մարիա Դմիտրիևնան, — և այնտեղ սպասել։ Եթե փեսացուն հիմա այստեղ գա, բանն առաջ վեճի չի անցնի. իսկ նա ծերունու հետ երես առ երես կխոսի ամեն բան և ապա կգա ձեզ մոտ։

Իլյա Անդրեյիչը հավանություն տվեց այդ առաջարկին, հասկացավ անմիջապես նրա խելացի լինելը։ Եթե ծերունին կակղի, այն ժամանակ ավելի լավ կլինի գնալ նրա մոտ՝ Մոսկվա կամ Լիսիե Գորի՝ արդեն հետո. եթե ոչ, ուրեմն հակառակ նրա կամքի պսակվել կարելի է միայն Օտրադնոյում։

— Միանգամայն ճիշտ է, — ասավ նա։ — Ցավում եմ, որ նրա մոտ գնացի և սրան էլ արա, — ասավ ծեր կոմսը։

— Ոչ, ափսոսալու ի՞նչ կա։ Այստեղ լինելով՝ չէր կարելի չայցելել։ Դե, իսկ եթե չի ուզում, դա իր գործն է, — ասավ Մարիա Դմիտրիևնան, ինչ-որ բան որոնելով ռիդիկուլի մեջ։ — Արդեն օժիտն էլ պատրաստ է, էլ ինչի՞ եք սպասում իսկ ինչ պատրաստ չի, ես կուղարկեմ։ Թեև խղճում եմ ձեզ, բայց ավելի լավ է, բարի՛ ճանապարհ, գնացե՛ք։

Ռիդիկուլում գտնելով այն, ինչ որոնում էր, նա հանձնեց Նատաշային։ Դա իշխանադուստր Մարիայի նամակն էր։

— Քեզ է գրում։ Ի՞նչպես է տանջվում խեղճը։ Վախենում է, թե դու կմտածես, որ նա քեզ չի սիրում։

— Իհարկե, նա ինձ չի սիրում, — ասավ Նատաշան։

— Դատարկ մի խոսի, — գոռաց Մարիա Դմիտրիևնան։

— Ոչ ոքի չեմ հավատա. ես գիտեմ, որ չի սիրում,— ասավ Նատաշան համարձակ, նամակը վերցնելով, և նրա գնմքին արտահայտվեց մի այնպիսի շոր ու շար վճռականություն, որ Մարիա Դմիտրիևնային հարկադրեց ուշադրությամբ նայել նրան ու հոնքերը կիտել։

— Դու, սիրելիս, այդպես մի՛ պատասխանիր,— ասավ նա։— Ես ինչ որ ասում եմ՝ ճիշտ է։ Պատասխան գրիր։

Նատաշան, առանց պատասխանելու, գնաց իր սենյակը իշխանադուստր Մարիայի նամակը կարդալու։

Իշխանադուստր Մարիան գրում էր, որ ինքը վշտացած է իրենց միջև տեղի ունեցած թյուրիմացությունից. ինչ էլ լինեն իր հոր զգացմունքները, գրում էր իշխանադուստր Մարիան, նա խնդրում է Նատաշային հավատալ, որ ինքը չի կարող իրեն՝ Նատաշային չսիրել, իբրև իր եղբոր ընտրածի, այն եղբոր, որի երջանկության համար նա պատրաստ է զոհել ամեն ինչ։

«Սակայն.— գրում էր նա,— մի կարծեք, թե հայրս վատ է տրամադրված դեպի ձեզ։ Նա հիվանդ, ծեր մարդ է, որին պետք է ներել. բայց նա բարի, մեծահոգի է ու կսիրի նրան, ով կերջանկացնի իր որդուն»։ Այնուհետև իշխանադուստր Մարիան խնդրում էր Նատաշայից՝ ժամանակ նշանակել, թե ինքը ե՞րբ կարող է կրկին տեսնվել իր՝ Նատաշայի հետ։

Նամակը կարդալով, Նատաշան նստեց գրասեղանի մոտ, որ պատասխան գրի։ «Chére princesse»[1], սրտագ, մեքենաբար գրեց նա ու կանգ առավ։ Ուրիշ ի՞նչ կարող էր գրել այն բոլորից հետո, ինչ եղավ երեկ։ Այո, այդ, այդ բոլորը եղավ, բայց այժմ դանդ բոլորովին ուրիշ է,— մտածեց նա, նկատած նամակն առջևը։ «Պետք է մեղմել նրան։ Մի՞թե պետք է։ Դա սարսափելի՞ է...»։ Եվ, որպեսզի չդիմանալ այդ սարսափելի մտքերին՝ նա գնաց Սոնյայի մոտ և նրա հետ միասին սկսեց ձեռագործի նկարներ ջոկել։

Ճաշից հետո Նատաշան գնաց իր սենյակը և նորից վերցրեց իշխանադուստր Մարիայի նամակը։ «Մի՞թե ամեն ինչ արդեն վերջացած է,— մտածում էր նա։— Մի՞թե այդ ամենն այսպես շուտ պատահեց ու ոչնչացրեց ամբողջ եղածը»։ Նա հիշեց իր նախկին բովանդակ սերը դեպի իշխան Անդրեյը և միաժամանակ զգաց, որ սիրում է Կուրագինին։ Նա կենդանի կերպով երևակայեց իրեն իշխան Անդրեյի կին, երևակայությամբ պատկերացրեց բազմիցս կրկնած այն պատկերը երջանկության, որ ունենալու էր նրա հետ ու միաժամանակ հուզմունքից բորբոքված երևակայեց երեկվա՝ Անատոլի հետ ունեցած տեսակցության բոլոր մանրամասնությունները։

«Ինչո՞ւ այդ երկու բանը չի կարող միասին լինել,— երբեմն, միանգամայն մթագնած դրության մեջ մտածում էր նա։— Այն ժամանակ ես բոլորովին երջանիկ կլինեի. իսկ հիմա պիտի ընտրություն անեմ, ու առանց մեկի ու մյուսի չեմ կարող երջանիկ լինել։ Միևնույն է,— մտածում էր Նատաշան,— իշխան Անդրեյին ասել այն, ինչ եղել է, կամ թաքցնել — հավասարապես անհնարի՛ն է։ Իսկ սրա վերաբերմամբ դեռ ոչինչ չի պատահել. բայց մի՞թե ընդմիշտ պետք է հրաժարվել իշխան Անդրեյի սիրո երջանկությունից, որով ես ապրել եմ այնքա՞ն երկար»։

— Օրիորդ,— շշուկով, խորհրդավոր տեսքով ասավ բոպասուհի աղջիկը սենյակ մտնելով։— Մի մարդ պատվիրեց հանձնել։

Աղջիկը մի նամակ տվեց։

— Միայն, ի սեր Քրիստոսի,— ավելացրեց աղջիկը, երբ Նատաշան, առանց մտածելու, մեքենական շարժումով պատռեց կնիքն ու կարդաց Անատոլի սիրային նամակը, որից նա ոչ մի խոսք չհասկանալով, ըմբռնում էր միայն մի բան, որ այդ նամակը նրանից էր, ա՛յն մարդուց, որին ինքը սիրում է։ «Այո, ինքը սիրում է, և մի՞թե կարող էր ուրիշ կերպ լինել ա՛յն, ինչ եղավ։ Եվ մի՞թե իր ձեռին կարող էր լինել նրա սիրային նամակը»։

Նատաշան դողացող ձեռներով բռնել էր այդ կրքոտ սիրային նամակը, որ Անատոլի համար հեղինակել էր Դոլոխովը, ու այն կարդալով՝ գտնում էր, որ նրա մեջ արձագանք է գտել այն ամենը, ինչ ինքն զգում էր։

«Երեկվա երեկույթում իմ վիճակը որոշվեց. սիրված լինել ձեզնից կամ մեռնել։ Ես ուրիշ ելք չունեմ», սկսվում էր Անատոլի նամակը։ Հետո նա գրում էր, թե գիտի, որ նրա ծնողները նրան իրեն՝ Անատոլին չեն տա, որի համար գաղտնի պատճառներ կան, որոնք նա միայն նրա՛ն կարող է հայտնել, բայց եթե

[1] Թանկագին իշխանադուստր։

Նատաշան իրեն սիրում է, ուստի նրան մնում է ասել այդ այդ բառը, և այնուհետև մարդկային ոչ մի ուժ չի կարող խանգարել իրենց երանությունը։ Սերն ամեն բանի կհաղթի։ Սա նրան կփախցնի և կտանի աշխարհի մյուս ծայրը։

«Այո, այո, ես սիրո՞ւմ եմ նրան», մտածում էր Նատաշան, բանաստեղծ անգամ նամակը կարդալով և նրա յուրաքանչյուր խոսքի մեջ ինչ-որ առանձին խոր իմաստ որոնելով։

Այդ երեկո Մարիա Դմիտրիևնան գնում էր Արխարովների մոտ, և աղջիկներին առաջարկեց գնալ իր հետ։ Նատաշան, ցլխացավի պատրվակով, մնաց տանը։

XV

Ուշ երեկոյան վերադառնալով՝ Սոնյան մտավ Նատաշայի սենյակը և զարմանալով տեսավ, որ նա հագուստով քնած է բազմոցի վրա։ Նրա մոտ, սեղանին ընկած էր Անատոլի բացված նամակը։ Սոնյան նամակը վերցրեց և սկսեց կարդալ։

Նա կարդում ու նայում էր քնած Նատաշային, նրա դեմքի վրա որոնելով իր կարդացածի բացատրությունը, բայց չէր գտնում այն։ Նատաշայի դեմքը հանդարտ էր, հեզ ու երջանիկ։ Շնչահեղձ չլինելու համար՝ Սոնյան կուրծքը բռնելով և սարսափից ու հուզումից դողալով, գունատված, նստեց բազկաթոռին ու լաց եղավ։

«Ինչպե՞ս է, որ ես ոչինչ չեմ նկատել։ Այդ ինչպե՞ս կարող էր բանն այդտեղ հասնել։ Մի՞թե նա այլևս չի սիրում իշխան Անդրեյին։ Եվ ինչպես է սա թույլ տվել, որ Կուրագինն այդքան առաջ գնա։ Նա, պարզ է, խաբեբա է ու չարագործ։ Ի՞նչ կանի Նիկոլայը, բարի, ազնիվ Նիկոլայը, եթե այս բանն իմանա։ Ահա թե ինչ էր նշանակում սրա հուզված, վճռական ու անբնական դեմքը նախանցյալ օրը, երեկ և այսօր,— մտածում էր Սոնյան։— Բայց չի կարող պատահել, որ սա նրան սիրի։ Հավանորեն նամակը բացել է, չիմանալով ո՛ւմից է։ Հավանորեն Նատաշան վիրավորված է։ Սա չի՛ կարող այդ բանն անել»։

Սոնյան արցունքները սրբեց և մոտեցավ Նատաշային, կրկին նրա դեմքին նայելով։

— Նատա՛շա,— ասավ նա հազիվ լսելի։

Նատաշան զարթնեց ու տեսավ Սոնյային։

— Ա, վերադարձե՞լ ես։

Եվ նա վճռականությամբ ու քնքշությամբ, որ լինում է արթնացման րոպեներին, գրկեց ընկերուհուն, սակայն, Սոնյա լի դեմքին շփոթություն նկատելով, Նատաշայի դեմքը ևս ընդունեց շփոթմունքի ու կասկածանքի արտահայտություն։

— Սոնյա, դու նամակը կարդացի՞ր,— ասավ նա։

— Այո,— կամաց ասավ Սոնյան։

Նատաշան ցնծագին ժպտաց։

— Չէ, Սոնյա, ես էլ չեմ կարող,— ասավ նա։— Ես էլ չեմ կարող թաքցնել քեզնից։ Գիտե՞ս, մենք սիրում ենք միմյանց... Սոնյա, սիրելիս, նա գրում է... Սոնյա...

Սոնյան, կարծես, ականջներին չհավատալով, աչքերը չորս արած նայում էր Նատաշային։

— Իսկ Բալկոնսկի՞ն,— ասավ նա։

— Ա՛խ, Սոնյա, ախ, եթե իմանայիր որքա՞ն երջանիկ եմ,— ասավ Նատաշան։— Դու չգիտես, թե ի՛նչ է սերը...

— Բայց, Նատաշա, մի՞թե այն բոլորովին վերջացած է։

Նատաշան իր խոշոր լայն բացած աչքերով նայում էր Սոնյային, նրա հարցը կարծես չհասկանալով։

— Ուրեմն դու իշխան Անդրեյին մերժո՞ւմ ես,— ասավ Սոնյան։

— Ախ, դու ոչինչ չես հասկանում. հիմարություններ մի ասի. դու լսիր,— վայրկենական դժգոհությամբ ասավ Նատաշան։

— Չէ, ես դրան չեմ կարող հավատալ,— կրկնեց Սոնյան։ Ես չեմ հասկանում։ Այդ ինչպես ամբողջ տարին սիրում էիր մեկին և հանկարծ... Չէ որ դու միայն երեք անգամ ես տեսել նրան։ Նատաշա, ես քեզ չեմ հավատում, դու հանաք ես անում։ Երեք օրվա մեջ ամեն ինչ մոռանալ և այդպես...

— Երեք օր,— ասավ Նատաշան։— Ինձ թվում է թե հարյուր տարի է սիրում եմ նրան։ Թվում է նրանից առաջ ես ոչ ոքի երբեք չեմ սիրել։ Դու այդ բանը չես կարող հասկանալ։ Սոնյա, կա՛ց. նստիր այստեղ։— Նատաշան գրկեց նրան ու համբուրեց։— Ինձ ասում էին, որ այդ պատահում է, երևի դու էլ լսած կլինես, բայց ես այժմ միայն ապրեցի այդ սերը։ Սա այն չի, ինչ առաջ էր։ Հենց որ նրան տեսա, զգացի, որ նա

իմ տերն է, ես նրա ստրկուհին եմ և ես չեմ կարող նրան չսիրել։ Այո, ստրկուհին։ Ինչ որ նա ինձ հրամայի՝ այն էլ կանեմ։ Դու այդ չես հասկանում։ Ի՞նչ անեմ, հը ի՞նչ անեմ, Սոնյա,— ասում էր Նատաշան երջանիկ ու երկյուղած դեմքով։

— Բայց մի մտածի՞ր, թե ինչ ես անում,— ասում էր Սոնյան,— ես չեմ կարող այդ բանն այդպես թողնել։ Այդ գաղտնի նամակները... Դու ինչպե՞ս ես թույլ տվել, որ բանն այդտեղ հասնի,— ասում էր նա սարսափով ու զզվանքով, որ նա հազիվ էր թաքցնում։

— Ես քեզ ասել եմ, որ կամք չունեմ,— պատասխանեց Նատաշան. ինչպես այդ չես հասկանում. ես նրան սիրո՞ւմ եմ։

— Ես չեմ թողնի, որ բանն այդտեղ հասնի, ես կհայտնեմ,— հոր լուն արցունքներով ճչաց Սոնյան։

— Ի՞նչ ես ասում, ի սեր աստծո... Եթե հայտնես, իմ թշնամին ես,— ասավ Նատաշան։— Դու իմ գժբախտությունն ես ուզում. դու ուզում ես, որ մեզ բաժանեն։

Տեսնելով Նատաշայի այդ երկյուղը, Սոնյան լաց եղավ ամոթի ու խղճահարության արցունքներով։

— Բայց ձեր մեջ ի՞նչ է եղել,— հարցրեց նա։— Նա ի՞նչ է ասել քեզ։ Նա ինչո՞ւ տուն չի գալիս։

Նատաշան նրա հարցին չպատասխանեց։

— Սոնյա, ի սեր աստծո, մարդու բան չասես, ինձ մի՛ տանջիր,— թախանձում էր Նատաշան։— Խնդրիր, որ այդպիսի գործերի չի կարելի խառնվել։ Ես քեզ հայտնեցի...

— Բայց ի՞նչու համար են այդ գաղտնիքները։ Ինչո՞ւ նա տուն չի գալիս,— հարցրեց Սոնյան։— Ինչու՞ նա ուղղակի քո ձեռքը չի խնդրում։ Չէ՞ որ իշխան Անդրեյը քեզ լիակատար ազատություն է տվել, եթե բանն այդպես է արդեն։ Բայց ես դրան չեմ հավատում։ Նատաշա, դու մտածել ես, թե ի՞նչ գաղտնի պատճառներ կարող են լինել։

Նատաշան զարմացած աչքերով Սոնյային նայեց։ Ինչպես երևում էր այդ հարցն առաջին անգամն էր ներկայանում նրանց, ուստի և նա չգիտեր ի՞նչ պատասխանի։

— Ի՞նչ պատճառներ, չգիտեմ։ Բայց, երևի, պատճառներ կան։

Սոնյան հառաչեց և գլուխն օրորեց տարակուսանքով։

— Եթե պատճառներ լինեին...— սկսեց նա։

Բայց Նատաշան, նրա կասկածը հասկանալով, փախցնած ընդմիջեց նրան։

— Սոնյա, նրան չի կարելի կասկածով վերաբերվել։ Չի՞ կարելի, չի՞ կարելի, հասկանո՞ւմ ես,— գոչեց նա։

— Նա քեզ սիրո՞ւմ է արդյոք։

— Սիրո՞ւմ է արդյոք,— կրկնեց Նատաշան, ընկերուհու անհասկացողության վրա խղճահարությամբ ժպտալով։— Չէ՞ որ նամակը դու կարդացիր. դու տեսնո՞ւմ ես նրան։

— Իսկ եթե նա անազնիվ մարդ է՞։

— Ա՜խ... անազնիվ մարդ։ Եթե իմանայի՞ր,— ասավ Նատաշան։

— Եթե նա ազնիվ մարդ է, ապա պետք է կա՛մ իր մտադրությունը հայտներ, կա՛մ այլևս քեզ հետ չտեսնվեր։ Իսկ եթե դու այդ չես ուզում անել, ուրեմն ես կանեմ, ես նրան կգրեմ, ես հայրիկին կասեմ,— վճռապես ասավ Սոնյան։

— Բայց ես առանց նրա չեմ կարող ապրել,— ճչաց Նատաշան։

— Նատաշա, ես քեզ չեմ հասկանում։ Ինչե՞ր ես ասում։ Հիշիր հորդ, Նիկոլային։

— Ինձ ոչ ոք հարկավոր չէ, ես ոչ ոքին չեմ սիրում, բացի նրանից։ Դու ինչպես ես համարձակվում ասել, որ նա անազնիվ է։ Դու մի՞թե չգիտես, որ ես նրան սիրում եմ,— ճչում էր Նատաշան։— Սոնյա, հեռացի՛ր։ Ես չեմ ուզում քեզ հետ կռվել, հեռացի՛ր, ի սեր աստծո, հեռացի՛ր. տեսնում ես, թե ինչպես եմ տանջվում,— ճչում էր Նատաշան կատաղությամբ, գրգռված, բայց զուտ, հուսահատ ձայնով։ Սոնյան հեկեկաց ու դուրս վազեց սենյակից։

Նատաշան մոտեցավ սեղանին և, առանց մի վայրկյան մտածելու, իշխանադուստր Մարիային գրեց այն պատասխանը, որ ամբողջ առավոտ չէր կարողանում գրել։ Այդ նամակում նա կարճ գրեց իշխանադուստր Մարիային, որ իրենց միջև եղած բոլոր թյուրիմացությունները վերջացած են, որ, օգտվելով իշխան Անդրեյի մեծահոգությունից, որ մեկնելիս ազատություն տվեց իրեն, ինքը խնդրում է նրան՝ իշխանադստեր, ամեն ինչ մոռանալ և ներել իրեն, եթե ինքը մեղավոր է նրա առաջ, բայց թե ինքը չի կարող նրա եղբոր կինը լինել։ Այս ամենն այդ րոպեին Նատաշային թվում էր այնպես հեշտ, պարզ ու որոշ։

Ուրբաթ օրը Ռոստովները պետք է գյուղ մեկնեին, իսկ շորեքշաբթի օրը կոմսը գնորդի հետ գնաց մերձմոսկովյան կալվածը։

Կոմսի մեկնելու օրը Սոնյան ու Նատաշան կանչված էին Կարագինների մոտ մեծ ճաշկերույթի, և Մարիա Դմիտրիևնան տարավ նրանց։ Այդ ճաշին Նատաշան նորից հանդիպեց Անատոլին, և Սոնյան նկատեց, որ Նատաշան ինչ-որ բան էր խոսում նրա հետ, աշխատելով, որ իրենց խոսակցությունը չլսվի, և ճաշի ամբողջ ընթացքում ավելի հուզված էր, քան առաջ։ Երբ նրանք տուն դարձան, Նատաշան առաջինն սկսեց իր բացատրությունը, որին Սոնյան սպասում էր։

— Այ, Սոնյա, դու զանազան հիմարություններ էիր ասում նրա մասին,— սկսեց Նատաշան հեզ ձայնով, մի այնպիսի ձայնով, որով խոսում են երեխաները, երբ ուզում են, որ իրենց գովեն։— Մենք այսօր բացատրվեցինք։

— Է, հետո՞։ Իսկ ի՞նչ ասավ նա։ Նատաշա, որքան ուրա՛խ եմ, որ չես բարկանում ինձ վրա։ Ասա ինձ բոլորը, ասա ինձ ամբողջ ճշմարտությունը։ Նա ի՞նչ ասավ։

Նատաշան մտածմունքի մեջ ընկավ։

— Ահ, Սոնյա, եթե դու նրան ճանաչեիր այնպես, ինչպես ես եմ ճանաչում։ Նա ասավ, նա հարցրեց, թե ի՞նչ խոստում եմ տվել Բալկոնսկուն։ Նա ուրախացավ, որ նրան մերժելը կախված է ինձնից։

Սոնյան տխուր հառաչեց։

— Բայց չէ՞ որ դու Բալկոնսկուն չես մերժել,— ասավ նա։

— Գուցե և մերժել եմ։ Գուցե և Բալկոնսկու հետ ամեն ինչ վերջացած է։ Ինչու դու այդպես վատ կարծիք ունես իմ մասին։

— Ես ոչինչ չեմ կարծում, ես միայն չեմ հասկանում այն...

— Սպասիր, Սոնյա, ամեն ինչ կհասկանաս։ Կտեսնես, թե ինչպիսի մարդ է։ Դու վատ բան մի կարծի ո՛չ իմ, ո՛չ էլ նրա մասին։

— Ես ոչ ոքի մասին վատ բան չեմ կարծում. ես բոլորին սիրում եմ և բոլորին խղճում։ Բայց ի՞նչ անեմ ես։

Սոնյան անձնատուր չէր լինում այն մեղմ տոնի հանդեպ, որով Նատաշան դիմում էր նրան։ Որքան մեղմ ու աղերսական էր Նատաշայի դեմքի արտահայտությունը, այնքան լուրջ ու խիստ էր Սոնյայի դեմքը։

— Նատաշա,— ասավ նա,— դու ինձ խնդրեցիր քեզ հետ չխոսել, ես էլ չէի խոսում, հիմա դու ինքդ սկսեցիր։ Նատաշա, ես նրան չեմ հավատում։ Ինչու համար է այդ գաղտնիքը։

— Էլի՛, էլի՛,— ընդհատեց Նատաշան։

— Նատաշա, ես անհանգստանում եմ քեզ համար։

— Ինչո՞ւ ես անհանգստանում։

— Վախենում եմ՝ դու քեզ կործանես,— ասավ Սոնյան կտրուկ, ինքն էլ վախենալով իր ասածից։

Նատաշայի դեմքի վրա նորից բարկություն երևաց։

Եվ կկործանեմ, կկործանեմ, որքան կարելի է շուտ կկործանեմ ինձ։ Դա ձեր գործը չէ։ Ե՛ս եմ տուժելու և ոչ թե դո՛ւք։ Թո՛ղ, թո՛ղ ինձ։ Ես ատում եմ քեզ։

— Նատաշա,— վախեցած բացականչեց Սոնյան։

— Ատո՛ւմ եմ, ատո՛ւմ եմ։ Եվ դու իմ թշնամին ես ընդմի՛շտ։

Նատաշան սենյակից դուրս վազեց։

Նատաշան այլևս Սոնյայի հետ չէր խոսում և խուսափում էր նրանից։ Նույն հուզված զարմանքի ու ոճրամտության արտահայտությունը դեմքին՝ նա շրջում էր սենյակներում, ձեռք էր առնում մեկ այս, մեկ այն բանն ու իսկույն մի կողմ նետում։

Որքան էլ դա ծանր էր Սոնյայի համար, բայց և այնպես նա, առանց աչքը հեռացնելու հետևում էր ընկերուհուն։

Կոմսի վերադարձի նախօրեին Սոնյան նկատեց, որ Նատաշան ամբողջ առավոտ հյուրասրահի լուսամուտի առաջ նստած, կարծես սպասում էր մեկին, և որ նա ինչ-որ նշան արավ անցնող մի զինվորականի, որին Սոնյան ընդունեց Անատոլի տեղ։

Սոնյան սկսեց ավելի ուշադիր դիտել ընկերուհուն և նկատեց, որ Նատաշան ամբողջ ճաշի ընթացքում և երեկոյան գլտնրվում էր տարօրինակ ու անբնական դրության մեջ. իրեն տրված հարցերին տալիս էր անպատեհ պատասխաններ, մի նախադասություն սկսում ու չէր վերջացնում և ամեն բանի վրա ծիծաղում էր։

Թեյից հետո Սոնյան տեսավ սպասուհի աղջկան, որ իրենից վախենալով, սպասում էր Նատաշայի դռան մոտ։ Սոնյան

ներս թողեց նրան, և ինքը դուռն մոտ ականջ դնելով, իմացավ, որ նա նորից նամակ հանձնեց Նատաշային։

Հանկարծ Սոնյայի համար պարզվեց, որ Նատաշան ինչ-որ սարսափելի մի ծրագիր ունի այդ երեկոյի համար։ Սոնյան նրա դուռը ծեծեց։ Նատաշան ներս չթողեց նրան։

«Սա նրա հետ փախչելու է,— մտածեց Սոնյան։— Սա ամեն բանի ընդունակ է։ Քիչ առաջ նրա դեմքի վրա ինչ-որ խղճալի ու վճռական մի բան կար։ Քեռուն հրաժեշտ տալով, նա լաց եղավ,— հիշեց Սոնյան։— Այո, սա իսկապես նրա հետ փախչելու է, բայց ես ի՞նչ անեմ,— մտածեց Սոնյան, հիմա հիշելով այն նշանները, որոնք պարզ ցույց էին տալիս, թե ինչո՛ւ Նատաշան ինչ-որ սարսափելի մտադրություն ուներ։— Կոմսն այստեղ չէ։ Ես ի՞նչ անեմ. նամա՞կ գրեմ Կուրագինին և բացատրություն պահանջեմ։ Բայց ո՞վ կստիպի նրան պատասխանել։ Գրել Պիեռի՞ն, ինչպես խնդրեց անել իշխան Անդրեյը դժբախտության դեպքում... Բայց, գուցե և նա իսկապես արդեն մերժել է Բալկոնսկուն (երեկ նա նամակ ուղարկեց իշխանադուստր Մարիային)։ Քեռին էլ այստեղ չէ»։ Ասել Մարիա Դմիտրևնային, որ այնպես հավատում էր Նատաշային, Սոնյայի համար սարսափելի էր թվում։ «Բայց այսպես թե այնպես,— մտածում էր Սոնյան մոտ միջանցքում կանգնած,— այժմ կամ երբեք ժամանակ է ցույց տալ, որ ես նրանց ընտանիքի բարերարությունը չեմ մոռացել և Նիկոլային սիրում եմ։ Ո՛չ, ես երեք գիշեր էլ չեմ քնի և այս միջանցքից չեմ հեռանա. ուժով կարգելեմ նրան ներս գալ և թույլ չեմ տա, որ նրանց ընտանիքը խայտառակվի», մտածում էր Սոնյան։

XVI

Վերջերս Անատոլը փոխադրվել էր Դոլոխովի մոտ։ Ռոստովային փախցնելու ծրագիրն արդեն մի քանի օր էր, ինչ մտածել ու պատրաստել էր Դոլոխովը, և այն օրը, երբ Սոնյան Նատաշայի դուռն մոտ ականջ դնելով, որոշեց պաշտպանել նրան, այդ ծրագիրը պիտի իրագործվեր։ Նատաշան Կուրագինին խոստացել էր երեկոյան ժամը տասին դուրս գալ ետևի մուտքը։ Կուրագինը պետք է նստեցներ նրան պատրաստած

եռաձի սահնակն ու տաներ Մոսկվայից 60 վերստ հեռու, ուր պատրաստ էր կարգալուծ քահանան, որը պետք է պսակեր նրանց։ Իսկ Կամենկայում պատրաստ էին փոխարինող ձիեր, որոնք նրանց պիտի տանեին մինչև Վարշավայի ճանապարհը, իսկ այնտեղից պոստային սայլակով անցնելու էին արտասահման։

Անատոլն ուներ և՛ անձնագիր և՛ պոստային ձիերով ճամփորդելու թույլտվություն և տասը հազար ռուբլի փոգ, որ վերցրել էր քրոջից, և մի տասը հազար էլ, որ փոխ էր առել Դոլոխովի միջոցով։

Երկու վկաները՝ մեկը խվոստնիկովը, նախկին մի գրագիր, որին Դոլոխովն օգտագործում էր թղթախաղի համար, մյուսը՝ Մակարինը, պաշտոնաթող հուսար, մի բարեհոգի ու թույլ մարդ, որ անչափ սիրում էր Կուրագինին, առաջին սենյակում նստած՝ թեյ էին խմում։

Դոլոխովի մեծ կաբինետում, որ մինչև առաստաղը զարդարված էր պարսկական գորգով, արջի մորթիներով ու զենքերով, նստած էր ինքը՝ Դոլոխովը, ճամփորդական բեշմետով ու երկարաճիտ կոշիկներով։ Նա նստած էր բաց բյուրոյի առաջ, ուր դրված էին հաշիվներ ու թղթադրամի կապուկներ։ Անատոլը՝ կոճակներն արձակ մունդիրով՝ վկաների սենյակից, կաբինետի միջով անցնում էր ետևի սենյակը, ուր նրա ֆրանսացի-լաքեյը, ուրիշ ապասավորների հետ միասին, տեղավորում էր վերջին իրերը։ Դոլոխովը, փոքրը համբելով, գրի էր առնում։

— Ահա,— ասավ նա,— խվոստիկովին պետք է երկու հազար տալ։

— Տո՛ւր,— ասավ Անատոլը։

— Մակարկան (այսպես էին անվանում նրանք Մակարինին) անշահասիրաբար ջուրն ու կրակն էլ կընկնի քեզ համար։ Դեհ, հաշիվները վերջացան,— ասավ Դոլոխովը գրածը ցույց տալով։— Այսպե՞ս է։

— Դա, իհարկե, այդպես է,— ասավ Անատոլը, ըստ երևույթին Դոլոխովին չլսելով, շարունակ ժպտալով ու իր առջև նայելով։

Դոլոխովը բյուրոն ծածկեց և հեգնական ժպիտով դիմեց Անատոլին։

— Գիտես ինչ. ավելի լավ է այդ բանը թող. դեռ ժամանակ կա, — ասավ նա։

— Հիմա՛ր, — ասավ Անատոլը։ — Թո՛ղ հիմարություններդ։ Եթե դու իմանայի՞ր... Դա, սատանան գիտի, թե ի՞նչ է։

— Իսկապես՝ թո՛ղ, — ասավ Դոլոխովը։ — Ես քեզ բան եմ ասում։ Կարծում ես հանա՞ք բան է, ինչ անում ես։

— Հը՛, էլի, էլի սկսեցիր ծաղրե՞լ։ Կորիր գլխից։ Ի՞նչ... — դեմքը կնճռելով ասավ Անատոլը։ — Ճիշտն ասած, ես քո հիմար կատակների հետ գլուխ չունեմ։ — Եվ նա դուրս եկավ սենյակից։

Երբ Անատոլը դուրս եկավ, Դոլոխովը ժպտաց սրհամարհանքով ու ներողամտաբար։

— Կա՛ց, — ասավ նա Անատոլի ետևից, — ես կատակ չեմ անում, բան եմ ասում։ Եկ, ե՛կ այստեղ։

Անատոլը նորից մտավ սենյակ և, աշխատելով ուշադրությունը կենտրոնացնել, նայեց Դոլոխովին, ըստ երևույթին ակամա հնազանդելով նրան։

— Լսիր ինձ, վերջին անգամն եմ ասում։ Քեզ հետ կատակ անելու ի՞նչ ունեմ։ Մի՞թե ես քեզ սրգելք եմ լինում։ Ո՞վ բոլորը սարքեց, ո՞վ քահանա գտավ, ո՞վ անձնագիր վերցրեց, ո՞վ փող ճարեց։ Բոլորը ես։

— Դե, ես էլ շնորհակալ եմ քեզնից։ Կարծում ես շնորհակալ չե՞մ, — Անատոլը հոգոց քաշեց ու Դոլոխովին գրկեց։

— Ես քեզ օգնել եմ. բայց և այնպես պետք է ճշմարտությունն ասեմ քեզ. վտանգավոր գործ է, և, եթե լավ քննենք, հիմար բան է։ Էհ, ասենք, լավ, դու նրան կփախցնես։ Բայց մի՞թե բանն այդպես էլ կթողնեն։ Չէ՞ որ կիմացվի, որ դու ամուսնացած ես և այն ժամանակ քեզ քրեական դատի կտան...

— Է՛հ. հիմարությո՛ւն, հիմարությո՛ւն, — կրկին դեմքը կնճռելով ասավ Անատոլը։ — Չէ՞ որ բացատրեցի քեզ։ — Եվ Անատոլը բութ մարդկանց հատուկ՝ եզրակացություն անելու տանձին սիրով կրկնեց այն կարծիքը, ինչ հարյուր անգամ կրկնել էր Դոլոխովը։ — Չէ՞ որ բացատրեցի քեզ. ես որոշել եմ այսպես. եթե այդ ամուսնությունն ապօրինի լինի, — ասավ նա, մատը ծալելով, — նշանակում է ես պատասխանատու չեմ. իսկ եթե օրինավոր լինի, միևնույն է. արտասահմանում

ոչ ոք չի իմանա այդ բանը։ Այդպե՞ս է, չէ։ Ու էլ մի՛ խոսիր, մի՛ խոսիր...

— Ճիշտ, ձեռ քաշիր։ Դու միայն քեզ կկաշկանդես...

— Դե կորի՞ր, — ասավ Անատոլը և իր մազերից բռնելով դուրս եկավ մյուս սենյակը և իսկույն վերադարձավ ու, ոտները տակը դնելով, նստեց բազկաթոռին՝ Դոլոխովի առաջ, բավական մոտ։ — Սատանան գիտի, թե ի՞նչ է։ Մի տե՛ս, ինչպես է խփում։ — Նա վերցրեց Դոլոխովի ձեռն ու դրեց իր սրտին։ Ah quel peid, mon cher, quel regard! Une déesse!![1] Հը՞։

Դոլոխովը սառը ժպտալով և իր գեղեցիկ ու լիրբ աչքերը փայլեցնելով նայեց նրան, ըստ երևույթին կամենալով էլի խնդալ նրա վրա։

— Իսկ եթե փողը հատնի, է՛, այն ժամանակ ի՞նչ պիտի անես։

— Այն ժամանա՞կ, — կրկնեց Անատոլն անկեղծ տարակուսանքով։ — Այն ժամանակ։ Չգիտեմ ինչ կլինի... Բայց, հիմարություններն ավելորդ են։ — Նա նայեց ժամացույցին։ — Ժամանա՛կ է։

Անատոլն անցավ ետևի սենյակը։

— Հը՛, ի՞նչ եք քաշ գս լիս, շուտ կվերջացնե՞ք, — պոռաց նա ծառաների վրա։

Դոլոխովը փողը հավաքեց և, մեկին կանչելով, պատվիրեց, որ ուտելու և խմելու բան տան՝ ճանապարհ ընկնելու համար, ապա դուրս եկավ այն սենյակը, ուր նստած էին Խվոստիկովն ու Մակարինը։

Անատոլը կաբինետում, ձեռը թիկն տված, բազմոցի վրա պառկած, մտախոհ ժպտում էր և ինչ-որ մեղմ շշնջում իր գեղեցիկ բերանով։

— Եկ, մի որևէ բան կե՛ր։ Կամ խմի՛ր, — կանչեց մյուս սենյակից Դոլոխովը։

— Չեմ ուզում, — պատասխանեց Անատոլը, շարունակելով ժպտալ։

— Եկ, Բալա՛գան եկել է։

Անատոլը վեր կացավ և անցավ սեղանատուն։ Բալագան հայտնի կառապան էր, արդեն վեց տարի էր ճանաչում էր Դո-

[1] Ահ, ինչ ոտներ, սիրելիս, ինչ հայացք։ Աստվածուհի։

լոխովին ու Անատոլին և եռաձի կառքով ծառայում էր նրանց։ Քանի անգամ, երբ Անատոլի գունդը կանգնած էր Տվերում, երեկոյան Տվերից դուրս էր գալիս իր կառքով և լուսաբացին Անատոլին հասցնում Մոսկվա և մյուս գիշերը ետ տանում։ Քանի՞ անգամ նա իր կառքով Դոլոխովին փրկել էր հետապնդումից։ Քանի՞ անգամ նրանց պատել էր քաղաքում գնչուների և աղջիկ-պարոնների հետ, ինչպես անվանում էր նրանց Բալագան։ Քանի՞ անգամ նրանց գործի համար Մոսկվայում ոտի տակ էր տվել ժողովրդին ու կառապաններին և միշտ նրան փրկում էին «իր պարոնները», ինչպես նա անվանում էր նրանց։ Քանի՞ ձիեր էր հալից գցել-սատկեցրել նրանց պատճառով։ Քանի՞ անգամ էր ծեծվել նրանց ձեռքով. քանի՞ անգամ նրանք նրան շամպայն ու մադեր էին խմացրել, որ նա շատ էր սիրում, և նա էլ քիչ բան չգիտեր նրանց մասին, այնպիսի բաներ, որոնց համար սովորական մարդուն Սիբիր կուղարկեին։ Իրենց քեֆերի ժամանակ, նրանք հաճախ Բալագային կանչում էին, ստիպում խմել ու պարել գնչուների մոտ, ու նրանց փողից քանի՞ հազարներ էր անցել նրա ձեռով։ Նրանց ծառայելով, նա տարեկան քսան անգամ վտանգի էր ենթարկում թե՛ իր կյանքը, թե՛ իր կաշին. նրանց գործի համար ավելի շատ ձի էր փչացնում, քան նրանցից փող էր ստանում։ Սակայն Բալագան սիրում էր նրանց, սիրում էր կառքի այդ խենթ վազքը, որ մի ժամում անցնում էր 18 վերստ, սիրում էր գլուխկոնծի բերել կառապաններին, կառքի տակովն անել անցորդներին ու ամբողջ թափով սլանալ Մոսկվայի փողոցներով։ Նա սիրում էր, երբ ետևից լսում էր հարբած ձայների վայրենի կանչը՝ «քշի՛ր, քշի՛ր» այն ժամանակ, երբ դրանից ավելի արագ չէր կարելի քշել. սիրում էր մտրակը շրխկացնել գյուղացու վզին, որ առանց այն էլ լեղապատառ մի կողմ էր քաշվում. «իսկական պարոններ են», մտածում էր նա։

Անատոլն ու Դոլոխովն էլ սիրում էին Բալագային նրա վարպետ քշելու համար և նրա՛ համար, որ նա էլ նույն բաներն էր սիրում, ինչ որ իրենք։ Ուրիշների հետ Բալագան սակարկում էր, երկու ժամվա պտույտի համար վերցնում էր 25 ռ., և շատ քիչ դեպքերում էր ուրիշներին պտույտի տանում ինքը, այլ ուղարկում էր իր կտրիճներին։ Բայց իր պարոններին, ինչպես անվանում էր նա նրանց, միշտ ինքն էր ման ածում և

իր շքեղանքի համար երբեք ոչինչ չէր վերցնում։ Միայն այն ժամանակները, երբ սենեկապահներից իմանում էր, թե փող կա, նա մի քանի ամիսը մեկ գալիս էր առավոտուց, զգաստ վիճակում, և խոր գլուխ տալով, խնդրում էր հանել իրեն նեղ դրությունից։ Դոլոխովն ու Անատոլը միշտ նստեցնում էին նրան, հյուրասիրում։

— Ինձ ազատեցեք, Ֆյոդոր Իվանիչ, կամ ձերդ պայծառափայլություն,— ասում էր նա։— Ձիերից բոլորովին զրկվել եմ. տոնավաճառ գնալու համար մի բան տվեք, ինչքան կարող եք։

Թե՛ Անատոլը և թե՛ Դոլոխովը, երբ փող էին ունենում, տալիս էին մեկ կամ երկու հազար ռուբլի։

Բալագանը շեկ, կարմիր դեմքով, մանավանդ կարմիր, հաստ վզով, կարճահասակ, կճատ գյուղացի էր քսանյոթ տարեկան, փայլուն փոքրիկ աչքերով ու փոքրիկ միրուքով։ Կիսամուշտակի վրա հագնում էր բարակ կապույտ կաֆտան՝ մետաքսե աստառով։

Նա դեպի առաջին անկյունը դառնալով՝ երեսը խաչակնքեց ու մոտեցավ Դոլոխովին, մեկնելով նրան իր սև ոչ մեծ ձեռը։

— Ֆյոդոր Իվանովիչին,— ասավ նա գլուխ տալով։

— Բարև, եղբայր. ահա՛ և նա։

— Բարի աղջամուղջ, ձերդ պայծառափայլություն,— ասավ Բալագան ներս մտնող Անատոլին և նույնպես ձեռը մեկնեց։

— Քան եմ ասում, Բալագա,— ասավ Անատոլը, [illegible] նրա ուսին զնելով,— սիրո՞ւմ ես փող, թե ոչ։ Հիմա [illegible] մի ժառանգություն ստացա։ Ի՞նչ [illegible] ես տալիս։

— Ինչպես ասպարհանդակը հրամայեց, ձեր ոտքերը [illegible] ներքն եմ լծել,— ասավ Բալագան։

— Դե, լսիր, Բալագա։ Ձիերդ պիտի սպանես ու երեք ժամվա մեջ մեզ տեղ հասցնես։

— Եթե սպանենք, էլ ի՞նչով գնանք,— ասավ Բալագան աչքով անելով։

— Դե՛, ռեխդ կշարդե՛մ, հանաք մի՛ անի,— հանկարծ աչքերը շռելով պոռաց Անատոլը։

— Ինչ հանաք,— ծիծաղելով ասավ կառապանը։— Մի՞թե ես իմ պարոնների համար բան կխնայեմ։ Ինչքան ուժ կա կը-քշենք։

— Այդպե՞ս, — ասավ Անատոլը։ — Դե, նստիր։

— Նստիր էլի, — ասավ Դոլոխովը։

— Կկանգնեմ, Ֆյոդոր Իվանովիչ։

— Դե, նստի՞ր, խմիր, — ասավ Անատոլն ու մի մեծ բաժակ մաղեր լցրեց։

Կառապանի աչքերը պսպղացին գինու տեսքից։ Քաղաքավարության համար հրաժարվելով, նա խմեց և բերանը սրբեց մետաքսե թաշկինակով, որ դրված էր գդակի մեջ։

— Հը՛, ե՞րբ ճամփա ընկնենք, ձերդ պայծառափայլություն։

— Ահա (Անատոլը նայեց ժամացույցին)... հենց հիմա էլ գնալու ենք։ Տես, Բալագա, կհասցնե՞ս։

— Եթե հաջող ճամփա ընկնենք, ինչո՛ւ չեմ հասցնի, — ասավ Բալագան։ — Տվեր հո տանում էի յոթը ժամվա մեջ։ Երևի, կհիշեք, ձերդ պայծառափայլություն։

— Գիտես, մի անգամ Մննդին Տվերից եկա, — ասավ Անատոլը հիշողության ժպիտով դիմելով Մակարինին, որը աչքերը չորս արած խանդաղատանքով նայում էր Կուրագինին։ — Կհավատաս, Մակարկա, այնպես էինք թռչում, որ մարդու շունչ էր կտրում։ Ընկանք գումակի մեջ, երկու սայլի վրայով թռանք անցանք։ Հապա՞։

— Համա ձիեր էին հա՛, — շարունակեց պատմությունը Բալագան։ — Էն ժամանակ կողքի ջահելներին քուրանի հետ էի լծել, — դիմեց նա Դոլոխովին. — կհավատաս, Ֆյոդոր Իվանովիչ, գազանները 60 վերստ թռչում էին. բռնել չէր լինում, ձեռներս փետացել էին. ցուրտ էր։ Երասանները թողի, թե՝ ձերդ պայծառափայլություն, դուք բռնեցեք, իսկ ինքս փավեցի սահնակի մեջ։ Էդպես ոչ միայն քշել, մինչև տեղ հասնելը բռնել էլ չի կարելի։ Քաջքերը երեք ժամում տեղ հասցրին։ Միայն ձախ կողմինը սատկեց։

XVII

Անատոլը դուրս եկավ սենյակից և մի քանի րոպեից վերադարձավ արծաթե գոտին վրան կապած կիսամուշտակով և սամուրի գդակը կտրիճի պես թեք դրած, որ շատ սազում էր նրա գեղեցիկ դեմքին։ Հայելուն նայելով և նույն այն դիրքով, որ ընդունեց հայելու առաջ, նա կանգնեց Դոլոխովի առջև ու գինու բաժակը ձեռն առավ։

— Դե Ֆեդյա, մնաս բարով. շնորհակալ եմ ամենի համար. մնաս բարով, — ասավ Անատոլը։ — Դե ընկեր-բարեկամներ..., — նա մտածմունքի մեջ ընկավ, — իմ ջահելության... մնաք բարով, — դիմեց նա Մակարինին ու մյուսին։

Չնայած որ նրանք բոլորը գնալու էին նրա հետ, ըստ երևույթին, Անատոլն ուզում էր ընկերներին արած իր դիմումով ինչ-որ հուզիչ ու հանդիսավոր բան ոտեղծել։ Նա խոսում էր դանդաղ, բարձր ձայնով և, կուրծքը դուրս գցած, օրորում էր ոտի մեկը։

— Բոլորդ բաժակները վերցրե՛ք, և դու, Բալագա։ Դե, իմ ջահելության ընկեր-բարեկամներ, քեֆ արինք, ապրեցինք միասին, կեր ու խում արինք։ Հիմա էլ ե՞րբ պիտի տեսնվենք, արտասահման կերթամ։ Մնաք բարով, տղերք։ Ձեր կենա՞ցը։ Ուռռա՛..., — ասավ նա, խմեց և բաժակը զարկեց գետնին։

— Ողջ ըլնես, — ասավ Բալագան, նույնպես խմելով և բերանը թաշկինակով սրբելով։

Մակարինն արցունքն աչքերին գրկեց Անատոլին։

— Էհ, իշխան, որքան տխուր է ինձ համար քեզնից բաժանվելը, — ասավ նա։

— Գնանք, գնանք, — կանչեց Անատոլը։

Բալագան ուզեց սենյակից դուրս գալ։

— Չէ, կաց, — ասավ Անատոլը։ — Դուռը ծածկիր, ե՛կ նստիր։ Այսպես։

Դուռը ծածկեցին և բոլորը նստեցին։

— Դե, հիմա մարշ, տղերք, — ասավ Անատոլը, ելնելով։

Լաքեյ Joseph-ը պայուսակն ու թուրը տվեց Անատոլին և բոլորը դուրս եկան նախասենյակ։

— Իսկ մուշտակն ո՞ւր է, — ասավ Դոլոխովը։ — Է՛յ, Իգնատկա։ Գնա Մատրենա Մատվեևնայի մոտ, խնդրի նրա սամուրի մուշտակը։ Ես գիտեմ ինչպես են փախցնում, — ասավ Դոլոխովն աչքով անելով։ — Չէ որ նա տնից դուրս է թռչելու իրեն կորցրած, տնային հագուստներով. մի փոքր հապաղեցիր, մեկ էլ տեսար արցունքներ, հայր, մայր խառնեց իրար, ու անմիջապես սառչելով՝ կուզի ետ դառնալ, և որպեսզի այդ

չլինի, դու նրան իսկույն մուշտակի մեջ փաթաթիր ու սահնակի մեջ դիր։

Լաքեյը բերեց աղվեսի մորթուց կարած նրա վերարկուն։

— Հիմար, ես քեզ չասի՞ սամուրի մուշտակը։ Էյ, Մատրյոշկա, սամուրենին, — պոռաց նա այնպես, որ հեռու սենյակում լսվեց նրա ձայնը։

Գեղեցիկ, նիհար ու գունատ գնչուհին՝ սև պսպղուն աչքերով և սև, գանգուր, թխակապույտին տվող մազերով, կաքմիր շալը վրան, դուրս վազեց սամուրենին ձեռին։

— Դե որ ուզում ես վերցրու, ես հո չեմ ափսոսում, — ասավ նա, ըստ երևույթին, քաշվելով իր պարոնից և մուշտակն ափսոսալով։

Դոլոխովն, առանց նրան պատասխանելու, մուշտակը վերցրեց, գցեց այն Մատրյոշայի վրա ու փաթաթեց նրան։

— Ահա այսպես, — ասավ Դոլոխովը։ — Եվ հետո՝ ահա՛ այսպես, — ասավ նա լայն օձիքը բարձրացնելով, միայն երեսի առաջ մի փոքրիկ բացվածք թողնելով։ — Ապա այսպես, տեսնո՞ւմ ես, — և նա Անատոլի գլուխը մոտեցրեց այդ բացվածքին, որտեղից երևում էր Մատրենայի փայլուն ժպիտը։

— Դե, Մատրյոշա, մնաս բարով, — ասավ Անատոլը՝ նրան համբուրելով։ — Էհ, վերջացան իմ ուրախ օրերն այստեղ։ Ստեշկին բարևիր։ Դե, մնաս բարով, Մատրյոշա. բախտավորություն ցանկացիր ինձ։

— Է՛, իշխան, թող աստված ձեզ սրտի ուզած բախտավորությունը տա ձեզ, — ասավ Մատրյոշան իր գնչուական առոգանությամբ։

Մուտքի առաջ կանգնած էին երկու եռաձի սահնակ, և նրանց մոտ երկու ջահել կառապան։ Բալագան նստեց առաջին կառքին և, արմունկները վեր բարձրացնելով, երասանները կարգի բերեց առանց շտապելու։ Անատոլն ու Դոլոխովը նստեցին նրա կառքին։ Մակարինը, Խվոստիկովն ու լաքեյը նստեցին մյուս կառքը։

— Հը՛, պատրա՞ստ եք, — հարցրեց Բալագան։ — Հայդա՞, — գոչեց նա, երասանները թևին փաթաթելով, և եռաձին սլացավ Նիկիտինսկի բուլվարով։

— Տպը՞ռո, հե՛յ, հայդա՞... — լսվում էր միայն Բալագայի և նրա կողքին նստած ճարպիկ կառապանի ձայնը։ Արբատի

հրապարակում եռաձին կպավ փոքր կառքի, ինչ-որ մի բան ճրթաց, ճի՛, լսվեց, բայց եռաձին սլացավ Արբատով։

Պոդնովինսկի հրապարակով երկու անգամ գնալ-գալով, Բալագան սկսեց ձիերին զսպել, և, ետ գառնալով, սահնակը կանգնեցրեց Ստարայա Կոնյուշենայա խաչփողոցում։

Ջահել կառապանը ցած թռավ ձիերի սանձը բռնելու, Անատոլն ու Դոլոխովն անցան մայթով։ Տան մուտքին մոտենալով՝ Դոլոխովը սուլեց։ Լսվեց պատասխան սուլոցը, որից հետո դուրս վազեց սպասուհին։

— Մտեք բակը, թե չէ կտեսնեն, հիմա դուրս կգա, — ասավ սպասուհին։

Դոլոխովը մնաց դարպասի մոտ։ Անատոլն սպասուհու հետևից բակը մտավ, թեքվեց անկյունից և բարձրացավ սանդուղքով։

Անատոլին հանդիպեց Մարիա Դմիտրևնայի ճանապարհի լաքեյ Դավրիլան։

— Համեցեք աղջիկ-պարոնի մոտ, — թավ ձայնով ասավ լաքեյը, նրա ճանապարհը կտրելով։

— Ո՞ր աղջիկ-պարոնի։ Դու ո՞վ ես, — շնչակտուր շշունջով հարցրեց Անատոլը։

— Համեցեք, հրամայված է ձեզ նրա մոտ հրավիրել։

— Կուրագի՛ն. ետ արի, — կանչեց Դոլոխովը։ — Դավաճանություն կա, ետ արի՛։

Դոլոխովը դարպասի դռան մոտ կանգնած պայքարում էր դռնապանի հետ, որը փորձում էր դուռը փակել Անատոլի վրա։ Դոլոխովը վերջին ճիգով հրեց դռնապանին և, բռնելով դուրս վազող Անատոլի ձեռը, հանեց նրան դարպասի դռնից և նրա հետ միասին վազեցին դեպի կառքը։

XVIII

Մարիա Դմիտրևնան, տեսնելով Սոնյային միջանցքում լաց եղած, ստիպեց ամեն ինչ խոստովանել։ Նատաշայի ըստացած նամակը ձեռք բերելով ու այն կարդալով, Մարիա Դմիտրևնան այդ նամակը ձեռին գնաց Նատաշայի մոտ։

— Գարշելի՛, անամո՛թ, — ասավ նա Նատաշային։ — Ոչինչ լսել չեմ ուզում։

Եվ Նատաշային, որ զարմացած ու ցամաք աչքերով իրեն էր նայում, ետ հրելով, սենյակի դուռը փակեց բանալիով ու դռնապանին հրամայեց ներս թողնել այս երեկո տուն եկող մարդկանց, և էլ դուրս չթողնել, իսկ լաքեյին հրամայելով այդ մարդկանց բերել իր մոտ, նա նստեց իր սենյակում, սպասելով առևանգիչներին։

Երբ Դավրիլան եկավ Մարիա Դմիտրևնային հայտնելու, որ եկած մարդիկ փախան, նա, հոնքերը կիտելով, վեր կացավ և, ձեռները ետևը դրած, երկար անց ու դարձ էր անում սենյակներում ու մտածում՝ ինչ անի։ Գիշերվա ժամը 12-ին նա, բանալին ձեռին գնաց դեպի Նատաշայի սենյակը։ Սոնյան միջանցքում նստած հեկեկում էր։ — Մարիա Դմիտրևնա, ի սեր աստծո, ինձ թողեք նրա մոտ, — ասավ նա։ Մարիա Դմիտրևնան, առանց նրան պատասխանելու, դուռը բացեց ու ներս մտավ։ «Զզվելի է, գարշելի... Իմ տան մեջ... Գարշելի աղջիկ... Հորն եմ խղճում միայն, — մտածում էր Մարիա Դմիտրևնան, աշխատելով հագեցնել իր զայրույթը։ — Որքան էլ դժվար է բայց բոլորին պիտի հրամայեմ լռել և կոմսից կթաքցնեմ»։ Մարիա Դմիտրևնան սենյակ մտավ վճռական քայլերով։ Նատաշան պառկել էր բազմոցի վրա, ձեռներով ծածկել էր երեսն ու չէր շարժվում։ Նա պառկած էր հենց այն դիրքով, ինչպես թողել էր նրան Մարիա Դմիտրևնան։

— Լա՞վ է, շատ լավ է, — ասավ Մարիա Դմիտրևնան։ — Իմ տանը սիրեկաններիդ ժամադրություն ես նշանակում։ Էլ մի կեղծիր։ Լսիր, երբ քեզ հետ խոսում եմ։ Դու քեզ խայտառակեցիր, ինչպես մի ամենավերջին աղջիկ։ Ես քո գլխին ուրիշ խաղ կխաղայի, բայց հորդ եմ խղճում։ Ես կթաքցնեմ։

Նատաշան դիրքը չփոխեց, բայց նրա ամբողջ մարմինն սկսեց ցնցվել անձայն, ջղաձգական հեկեկանքից, որը խեղդում էր նրան։ Մարիա Դմիտրևնան նայեց Սոնյային ու նստեց բազմոցին՝ Նատաշայի մոտ։

— Բախտը բանեց, որ ձեռիցս պրծավ. բայց ես նրան կը-գտնեմ, — ասավ Մարիա Դմիտրևնան իր կոպիտ ձայնով. — լսո՞ւմ ես, ի՞նչ եմ ասում։

Նա իր խոշոր ձեռներով Նատաշայի երեսը շրջեց դեպի իրեն։ Եվ թե՛ Մարիա Դմիտրևնան, թե՛ Սոնյան զարմացան

նրա դեմքը տեսնելով։ Նրա աչքերը պսպղուն ու ցամաք էին. շրթունքները սեղմած, այտերը թուլացած։

— Թո...ղեք... ինձ... ես... մեռնեմ... — խոսեց Նատաշան, շարունակելով դուրս պրծավ Մարիա Դմիտրևնայի ձեռից ու պառկեց նախկին դիրքով։

— Նատալի՛ա... — ասավ Մարիա Դմիտրևնան։ — Ես քեզ բարիք եմ ցանկանում։ Դու պառկիր, պառկիր այդպես, ես քեզ ձեռ չեմ տա, և լսիր... էլ չեմ ասի, թե որքան դու մեղավոր ես։ Այդ դու ինքդ գիտես։ Հիմա հայրդ վաղը գալու է, ես ինչ պիտի ասեմ նրան։ Հը՞։

Նատաշայի մարմինը նորից ցնցվեց հեկեկանքից։

— Կիմանա նա՛, կիմանա եղբայրդ, փեսացուդ։

— Ես փեսացու չունեմ, ես նրան մերժել եմ, — գոչեց Նատաշան։

— Միևնույն է, — շարունակեց Մարիա Դմիտրևնան։ — Նրանք կիմանան, կարծում ես այդպես կթողնե՞ն։ Չէ՞ որ է, նրանք կիմանան, կարծում ես այդպես կթողնե՞ն։ Չէ՞ որ է, նրանք կիմանան, կարծում ես այդպես կթողնե՞ն։ Հայրդ, ես նրան ճանաչում եմ... եթե նա նրան մենամարտի կանչի, լավ կլինի՞, հը՞։

— Ա՛հ, թողեք ինձ, ինչո՛ւ ամեն բան խանգարեցիք։ Ինչո՞ւ, ինչու՞, և ո՞վ էր խնդրել, — գոռաց Նատաշան տեղից բարձրանալով ու կատաղությամբ Մարիա Դմիտրևնային նայելով։

— Հապա դու այդ ի՞նչ էիր ուզում անել, — տաքանալով աղաղակեց Մարիա Դմիտրևնան։ — Ինչ է, քեզ փակե՞լ էին։ Իսկ ո՞վ էր խանգարում նրան տուն գալ։ Էլ ի՞նչու է ուզում գնչուի աղջկա պես փախցնել... Հը, ասենք թե նա քեզ փախցրեց, ի՞նչ ես կարծում, նրան չէին գտնի՞... Հայրդ, եղբայրդ կամ փեսացուդ։ Բայց նա սրիկա, անպիտան է, այ թե ինչ։

— Նա բոլորիցդ լավն է, — գոչեց Նատաշան, տեղից բարձրանալով։ — Եթե դուք չխանգարեիք... Ա՛հ, տեր աստված, ինչո՞ւ այդպես, հը, Սոնյա, ինչո՞ւ համար... Հեռացե՛ք...

Եվ նա լաց եղավ այնպիսի հուսահատությամբ, ինչպես ողբում են մարդիկ այն վիշտը, որի պատճառն իրենց են համարում։ Մարիա Դմիտրևնան նորից ուզում էր խոսել, բայց Նատաշան ճչաց. — Գնացե՛ք, գնացե՛ք, դուք բոլորդ ատում եք ինձ, արհամարհում։ — Ու նորից ընկավ բազմոցի վրա։

Մարիա Դմիտրիևնան փոքր-ինչ ևս շարունակեց համոզել ու հասկացնել Նատաշային, որ այս բոլորը պետք է թաքցնել կոմսից և որ ոչ ոք ոչինչ չի իմանա, եթե Նատաշան ինքն ամեն ինչ մոռանա և ոչ ոքի ցույց չտա, թե որևէ բան է պատահել։ Նատաշան չպատասխանեց։ Նա այլևս չէր լալիս, բայց մի սառը դող տիրեց նրան։ Մարիա Դմիտրիևնան բարձ դրեց նրա գլխատակը, երկու վերմակով ծածկեց և ինքն իր ձեռով լոբու ծաղիկ բերեց նրա համար. բայց Նատաշան ձայն չհանեց։

— Դե, թող քնի, — ասավ Մարիա Դմիտրիևնան, սենյակից դուրս գալով և կարծելով, թե նա քնած է։

Բայց Նատաշան քնած չէր. նա գունատ, բաց աչքերով նայում էր ուղիղ առջևը։ Այդ ամբողջ գիշերը Նատաշան ոչ քնեց, ոչ լաց եղավ և ոչ էլ խոսեց Սոնյայի հետ, որ մի քանի անգամ տեղից ելնելով՝ մոտեցավ նրան։

Հետևյալ օրը՝ նախաճաշին, իր խոստման համաձայն, կոմս Իլյա Անդրեյիչը վերադարձավ մերձմոսկովյան կալվածից։ Նա շատ ուրախ էր. կալվածը ծախելու գործը գլուխ էր գալիս ու այլևս կարիք չկար Մոսկվայում մնալու, մանավանդ կոմսուհուց անջատված, որին նա կարոտել էր։ Մարիա Դմիտրիևնան, նրան դիմավորելով, հայտնեց, որ Նատաշան երեկ իրեն շատ տկար զգաց, օր բժիշկ կանչեցին, բայց հիմա լավ է։ Նատաշան այդ առավոտ իր սենյակից դուրս չեկավ։ Սեղմած, ճաքճքոտած շուրթերով, ցամաք և սառած աչքերով նստել էր նա լուսամուտի մոտ և անհանգիստ դիտում էր փողոցով անցնողներին և փութկոտ նայում սենյակը մտնողներին։ Նա, ըստ երևույթին, տեղեկություն էր սպասում նրա մասին, սպասում էր, որ կա՛մ ինքը կգա, կամ մի բան կգրի։

Երբ Իլյա Անդրեյիչը մտավ նրա սենյակը, Նատաշան տգամարդու քայլերի ձայն լսելով, անհանգիստ դարձավ դեպի հայրը և նրա դեմքն ընդունեց նախկին սառը և նույնիսկ չար արտահայտությունը։ Նատաշան նույնիսկ չելավ հորն ընդառաջ գնալու։

— Ի՞նչ է պատահել, հրեշտակս, հիվա՞նդ ես, — հարցրեց կոմսը։

Նատաշան փոքր-ինչ լռեց։

— Այո հիվանդ եմ, — պատասխանեց նա։

Կոմսի անհանգիստ հարցերին, թե ինչո՞ւ է այդպես ընկճված և թե որևէ բան չի պատահել արդյոք փեսացուին, Նատաշան հորը հավատացրեց, թե ոչինչ չկա և խնդրեց չանհանգստանալ։ Մարիա Դմիտրիևնան հաստատեց Նատաշայի ասածները, թե ոչինչ չի պատահել։ Կոմսն աղջկա կեղծ հիվանդությունից, նրա վատ տրամադրությունից և Սոնյայի ու Մարիա Դմիտրիևնայի շփոթված դեմքերից դատելով՝ պարզ տեսնում էր, որ իր բացակայության միջոցին պետք է որ մի բան պատահած լիներ նրան. բայց նրա համար այնպես սարսափելի էր մտածել, որ իր սիրած դստեր հետ որևէ ամոթալի բան պատահած լինի. նա այնպես էր սիրում իր ուրախ հանգիստը, որ խուսափում էր հարց ու փորձ անելուց ու միշտ աշխատում էր համոզել իրեն, թե առանձին ոչինչ չի եղել և միայն ափսոսում էր, որ նրա տկարության պատճառով իրենց գյուղ գնալը հետաձգվում է։

XIX

Պիեռը, կնոջ Մոսկվա գալու օրից, պատրաստվում էր որևէ տեղ գնալ, որպեսզի միայն թե նրա հետ չլինի։ Ռոստովների Մոսկվա գալուց անմիջապես հետ, Նատաշայի թողած տպավորությունն ստիպեց նրան փութացնել իր մտադրության իրագործումը։ Նա գնաց Տվեր՝ Իոսիֆ Ալեքսեևիչի այրու մոտ, որը վաղուց խոստացել էր հանգուցյալի թղթերն իրեն հանձնել։

Երբ Պիեռը վերադարձավ Մոսկվա՝ նրան հանձնեցին Մարիա Դմիտրիևնայի նամակը, որով Մարիա Դմիտրիևնան նրան կոչնչում էր իր մոտ՝ մի շատ կարևոր գործի համար, որ վերաբերում էր Անդրեյ Բալկոնսկուն ու նրա հարսնացուին։ Պիեռը խուսափում էր Նատաշայից։ Նրան թվում էր, թե ինքն ավելի ուժեղ զգացումներ ունի նրա վերաբերմամբ, քան այդ պետք է ունենար ամուսնացած մարդն իր բարեկամի հարսնացուի նկատմամբ։ Եվ մի ինչ-որ ճակատագիր շարունակ նրանց մոտեցնում էր իրար։

«Ի՞նչ է պատահել։ Եվ ի՞նչ գործ ունեն ինձ հետ», մտածում էր նա, հագնվելով, Մարիա Դմիտրիևնայի մոտ գնալու համար։

«Միայն թե իշխան Անդրեյը շուտ գար և ամուսնանար հետը», մտածում էր Պիեռը ճանապարհին։

Տվերսկոյ բուլվարում մեկը ձայն տվեց նրան.

— Պիե՞ռ։ Վաղո՞ւց ես եկել,— ասավ մի ծանոթ ձայն։ Պիեռը գլուխը բարձրացրեց։ Զույգ մոխրագույն ձիերով, ձյունաթաթախ սահնակի մեջ սլացավ Անատոլն իր մշտական ընկեր Մակարինի հետ։ Անատոլը պճնասեր զինվորականի կրլասիկ դիրքով ուղիղ նստած, դեմքի ստորին մասը ծածկել էր կուղբի օձիքով և գլուխը փոքր-ինչ կախել։ Նրա դեմքը կարմիր էր ու թարմ. թեք դրած սպիտակ փետրավոր գլխարկի տակից երևում էին նրա խուճուճ դրած, օծած և ձյունի մանրիկ փաթիլներով ծածկված մազերը։

«Եվ իսկապես, ա՛յ քեզ իսկական իմաստուն,— մտածեց Պիեռը.— Ներկա բոպեի ուրախությունից դենն էլ ուրիշ բան չի տեսնում, նրան ոչ մի բան չի անհանգստացնում, և դրա համար էլ միշտ ուրախ է, գոհ ու հանգիստ։ Ինչ ասես կտայի, եթե ինքս նրա պես լինեի», նախանձով մտածեց Պիեռը։

Ախրոսիմովայի նախասենյակում լաքեյը Պիեռի մուշտակը հանելով, ասավ, որ Մարիա Դմիտրևնան խնդրում է նրան իր ննջարանը։

Դահլիճի դուռը բանալով, Պիեռը տեսավ Նատաշային՝ նիհար, գունատ ու շար դեմքով լուսամուտի մոտ նստած։ Նատաշան նայեց Պիեռին, հոնքերը կիտեց և սառն արժանապատվության արտահայտությամբ դուրս եկավ սենյակից։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Պիեռը, մտնելով Մարիա Դմիտրևնայի ննջարանը։

— Երևելի բան,— պատասխանեց Մարիա Դմիտրևնան,— հինգուն ութ տարի է ապրում եմ աշխարհի երեսին, այսպիսի խայտառակություն չեմ տեսել։

Եվ Պիեռից ազնիվ խոսք առնելով, որ նա իր բոլոր լսածները կպահի իր մեջ, Մարիա Դմիտրևնան հայտնեց նրան, որ Նատաշան, առանց ծնողների գիտության, մերժել է փեսացուին և որ այդ մերժումի պատճառը եղել է Անատոլ Կուրագինը, որին Նատաշային մոտեցրել է Պիեռի կինը և որի հետ Նատաշան ուզում էր փախչել հոր բացակայության միջոցին, նրա համար, որպեսզի թաքուն պսակվի։

Պիեռն ուսերը վեր քաշած, բերանը բաց, լսում էր Մարիա Դմիտրևնայի ասածները, ականջներին չհավատալով, որ իշխան Անդրեյի հարսնացուն, ջերմորեն սիրված այդ առաջվա

լավ Նատաշա Ռոստովան, որ կարող էր Բալկոնսկուն փոխել այդ հիմար, արդեն ամուսնացած (Պիեռը գիտեր նրա ամուսնության գաղտնիքը) Անատոլի հետ և նրա վրա այնպես սիրահարվել, որ համաձայնություն տար նրա հետ փախչելու,— այդ բանը Պիեռը չէր կարողանում հասկանալ ու երևակայել։

Նատաշայի (որին նա ճանաչում էր մանկությունից) թողած լավ տպավորությունը Պիեռը չէր կարողանում իր հոգում հաշտեցնել Նատաշայի ստորության, հիմարության և դաժանության վերաբերյալ իր նոր պատկերացման հետ։ Պիեռը հիշեց կնոջը. «Դրանք՝ կանայք բոլորը մեկ են», ասավ նա ինքն իրեն, մտածելով, որ մենակ իրեն չէ տխուր վիճակ ընկել՝ զզվելի կնոջ հետ կապվելու։ Բայց այնուամենայնիվ նա արտասվելու չափ խղճում էր իշխան Անդրեյին, ցավում էր նրա հպարտության համար։ Եվ որքան շատ էր ցավում բարեկամի համար, այնքան ավելի արհամարհանքով և նույնիսկ զզվանքով էր մտածում այդ Նատաշայի մասին, որ այնպիսի սառն արժանապատվության արտահայտությամբ քիչ առաջ իր կողքով անցավ դահլիճով։ Նա չգիտեր, որ Նատաշայի հոգին լի էր հուսահատությամբ, ամոթով, ստորացումով, և որ նա մեղավոր չէր, որ դեմքը պատահաբար արտահայտել էր հանգիստ արժանապատվություն և խստություն։

— Բայց ինչպես պսակվել,— ասավ Պիեռը Մարիա Դմիտրևնայի խոսքերի վրա։— Նա չէր կարող պսակվել, որովհետև ամուսնացած է։

— Բանից նոր բաներ են բացվում,— զարմացավ Մարիա Դմիտրևնան։— Ա՛յ քեզ տղա։ Սրիկա՛։ Իսկ սա դեռ սպասում է, երկրորդ օրն է՝ սպասում է։ Այլևս գոնե չի սպասի. պետք է այդ բանն ասել նրան։

Պիեռից իմանալով Անատոլի ամուսնության մանրամասնությունները, հայհոյական խոսքերով իր զայրույթը նրա գլխին թափելով, Մարիա Դմիտրևնան հայտնեց, թե ինչո՞ւ է կանչել Պիեռին։ Մարիա Դմիտրևնան վախենում էր, որ կոմսը կամ Բալկոնսկին, որին ամեն բոպե սպասում էին, այդ բանն իմանային, մի բան, որ նա ինքը մտադիր էր թաքցնել նրանցից, և մենամարտի կանչեին Կուրագինին, ուստի և նա խնդրում էր Պիեռից, իր՝ Մարիա Դմիտրևնայի անունից հրամայել իր աներձագին, որ հեռանա Մոսկվայից և չհամարձակվի իր աչքին

երևալ։ Պիեռը խոստացավ նրա ցանկությունը կատարել, այժմ միայն զգալով այն վտանգը, որ սպառնում էր թե՛ ծեր կոմսին, թե՛ Նիկոլային, թե՛ իշխան Անդրեյին։ Իր պահանջը կարճ ու որոշ բացատրելով՝ Մարիա Դմիտրևնան Պիեռին թողեց հյուրասրահ գնալու։

— Տե՛ս, կոմսը ոչինչ չգիտի։ Այնպես վարվիր, թե ոչինչ չգիտես,— ասավ Մարիա Դմիտրևնան,— իսկ ես կերթամ Նատաշային ասելու, որ իզուր չսպասի։ Մնա ճաշիր, եթե ուզում ես,— ձայն տվեց Մարիա Դմիտրևնան Պիեռին։

Պիեռը հանդիպեց ծեր կոմսին։ Նա ջղոտված ու վատ տրամադրության մեջ էր։ Այդ առավոտ Նատաշան նրան ասել էր, որ ինքը Բալկոնսկուն մերժել է։

— Դժբախտություն, դժբախտություն, mon cher,— ասավ նա Պիեռին։— Դժբախտությո՛ւն են այս աղջիկները առանց մոր, այնքան եմ ափսոսում, որ եկա։ Ես ձեզ հետ անկեղծ կլինեմ։ Լսել եք — փեսացուին մերժել է, առանց մեկին մի բան հարցնելու։ Ես, ասենք, այդ ամուսնությանն այնքան էլ ուրախ չէի։ Ասենք, նա լավ մարդ է, բայց ինչ արած, հակառակ հոր կամքի բախտավոր չէին լինի, և Նատաշան առանց փեսացուների չի մնա։ Այնուամենայնիվ բավական երկար շարունակվեց այդպես։ Բայց ինչպես կարելի է առանց հոր, առանց մոր այդպիսի քայլ անել։ Հիմա էլ հիվանդ է, և աստված գիտի, թե ի՛նչ է լինելու։ Վատ է, կոմս, վատ է, երբ մայրն աղջիկների հետ չի։

Պիեռը տեսավ, որ կոմսը շատ վշտացած է, աշխատեց խոսակցությունն ուրիշ առարկայի վրա դարձնել, բայց կոմսը կրկին վերադարձավ իր վշտին։

Սոնյան հուզված դեմքով մտավ հյուրասրահ։

— Նատաշան տկար է. նա իր սենյակումն է և ցանկանում է ձեզ տեսնել։ Մարիա Դմիտրևնան նրա մոտ է. ձեզ խնդրում է։

— Ախ, չէ որ դուք Բալկոնսկու հետ շատ մոտ եք, երևի բան է ուզում ասել,— ասավ կոմսը։— Ա՜խ, աստված իմ, աստված իմ։ Ի՜նչպես լավ էր ամեն բան։

Եվ կոմսը քունքերի ճերմակ, ցանցառ մազերից քաշած դուրս եկավ սենյակից։

Մարիա Դմիտրևնան Նատաշային հայտնել էր, որ Անատոլն ամուսնացած է։ Նատաշան, նրան չհավատալով, պա-

հանջեց, որ Պիեռն ինքը հաստատի այդ։ Սոնյան այս ամենը Պիեռին հայտնեց այն ժամանակ, երբ միջանցքով ուղեկցում էր նրան Նատաշայի սենյակը։

Նատաշան գունատ, խիստ դեմքով նստել էր Մարիա Դմիտրևնայի կողքին և դեռ դռան մոտ Պիեռին դիմավորեց իր տենդաբեռն-փայլուն հարցական հայացքով։ Նատաշան նրան չժպտաց, ոչ էլ գլխով արավ. նա միայն համառորեն նայում էր Պիեռին և նրա հայացքը նրան հարցնում է միայն այն, թե նա բարեկա՞մ է արգյոք Անատոլին, թե նույնպիսի թշնամի, ինչպես մնացած բոլորը։ Պիեռն իրրև Պիեռ նրա համար, ըստ երևույթին, գոյություն չուներ։

— Նա ամեն ինչ գիտի,— ասավ Մարիա Դմիտրևնան, մատնացույց անելով Պիեռին ու դիմելով Նատաշային։— Թող նա քեզ ասի՝ ճիշտ եմ ասել, թե ոչ։

Նատաշան, ինչպես վիրավորված, հալածված գազանն է նայում մոտեցող շներին ու որսկաններին, նայում էր մերթ Պիեռին, մերթ Մարիա Դմիտրևնային։

— Նատալիա Իլինիշնա,— սկսեց Պիեռը աչքերը ցած գցելով և Նատաշային խղճալով, միաժամանակ նողկանք զգալով դեպի այն գործողությունը, որ պիտի կատարեր ինքը,— ճիշտ է դա, թե ճիշտ չի, դա ձեզ համար միևնույնը պիտի լինի, որովհետև....

— Ուրեմն ճի՞շտ չէ, որ նա ամուսնացած է։

— Ա՛խ, այդ ճիշտ է։

— Նա ամուսնացած է եղե՞ր, և վաղո՞ւց,— հարցրեց նա,— ազնիվ խո՞սք։

Պիեռն ազնիվ խոսք տվեց նրան։

— Նա դեռ այստե՞ղ է,— հարցրեց Նատաշան արագ։

— Այո, քիչ առաջ տեսա նրան։

Ըստ երևույթին Նատաշան այլևս ուժ չունեցավ խոսելու, նա ձեռներով նշան արավ, որ իրեն մենակ թողնեն։

XX

Պիեռը ճաշելու չմնաց, այլ անմիջապես դուրս եկավ սենյակից ու մեկնեց։ Նա գնաց քաղաքում Անատոլ Կուրագինին որոնելու, որի մասին մտածելով արյունը գլուխն էր խփում և

հազիվ էր կարողանում շունչ քաշել։ Սարում, գնչուների մոտ, Comoneno-ի մոտ նա չկար։ Պիեռը գնաց ակումբ։ Ակումբում ամեն ինչ ընթանում էր սովորական կարգով. ճաշելու եկած հյուրերը նստոտել էին խմբերով. նրանք բարևեցին Պիեռին ու խոսեցին քաղաքի նորությունների մասին։ Լաքեյը, մոտենալով նրան՝ գլուխ տվեց և, լավ իմանալով նրա ծանոթներին ու սովորությունները, հայտնեց, որ նրա համար տեղ է թողնված փոքրիկ սեղանատանը, որ իշխան N. N. -ը գրադարանում է, իսկ T. T. -ն դեռ չի եկել։ Պիեռի ծանոթներից մեկը եղանակի մասին խոսելիս, հարցրեց, թե նա լսե՞լ է արդյոք, որ Կուրագինը Ռոստովային փախցրել է, որի մասին խոսում են քաղաքում. ճի՞շտ է այդ։ Պիեռը, ծիծաղելով, նկատեց, որ դա սուտ լուր է, որովհետև ինքը հենց հիմա գալիս է Ռոստովների մոտից։ Նա բոլորին հարց ու փորձ արավ Անատոլի մասին. մեկն ասավ, թե դեռ չի եկել, մյուսը թե՝ հիմա պետք է ճաշի։ Պիեռն օտարոտի զգացումով էր նայում այդ հանգիստ, անտարբեր մարդկանց բազմության, որոնք չգիտեին, թե ինչ է կատարվում իր հոգում։ Նա անց ու դարձ արավ դահլիճում, սպասեց մինչև որ բոլորն եկան և, տեսնելով Անատոլը չի գալիս, առանց ճաշելու գնաց տուն։

Անատոլը, որին նա որոնում էր, այդ օրը ճաշում էր Դոլոխովի մոտ և խորհրդակցում էր, թե ինչպես շտկել փչացած գործը։ Նրան թվում էր, թե անհրաժեշտ է Ռոստովայի հետ տեսնվել։ Երեկոյան նա գնաց քրոջ մոտ, որպեսզի նրա հետ խոսի, թե ինչ միջոցներով կարելի է գլուխ բերել այդ տեսակցությունը։ Երբ Պիեռն, իզուր տեղն ամբողջ Մոսկվան ոտի տակ տալով, վերադարձավ տուն, սենեկապահը հայտնեց նրան. թե իշխան Անատոլի Վասիլևիչը կոմսուհու մոտ է։ Կոմսուհու հյուրասրահը լիքն էր հյուրերով։

Պիեռը, առանց կնոջը բարևելու, որին չէր տեսել գալուց ի վեր (նա այդ վայրկյանին ավելի քան երբևէ ատելի էր իրեն), մտավ հյուրասրահ և, Անատոլին նկատելով, մոտեցավ նրան։

— Ah, Pierre, — ասավ կոմսուհին, ամուսնուն մոտենալով. — դու չգիտես, թե ի՞նչ դրության մեջ է մեր Անատոլը...

Նա կանգ առավ, Պիեռի ցած խոնարհած գլխի, պսպղուն աչքերի վճռական քայլվածքի մեջ տեսնելով կատաղության և

ուժի ա՛յն սարսափելի արտահայտությունը, որ տեսել ու փորձել էր իր վրա՝ Դոլոխովի հետ ունեցած մենամարտից հետո։

— Ո՛ւր դուք — այնտե՛ղ և անառակություն, շարիք, — ասավ Պիեռը կնոջը։ — Անատոլ, գնանք, ես ձեզ հետ խոսելիք ունեմ, — ասավ նա ֆրանսերեն։

Անատոլը նայեց քրոջը և հնազանդ վեր կացավ տեղից պատրաստ Պիեռին հետևելու։ Պիեռը նրա ձեռից բռնելով, թափով քաշեց դեպի իրեն ու դուրս եկավ սենյակից։

— Si vous vous permettez dans mon salon...[1] — շշունչով ասավ էլենը. բայց Պիեռը, նրան չպատասխանելով, դուրս եկավ սենյակից։

Անատոլը նրան հետևեց սովորական համարձակ քայլվածքով։ Սակայն նրա դեմքին անհանգստություն էր նկատվում։

Մտնելով իր կաբինետը, Պիեռը դուռը ծածկեց և դարձավ Անատոլին, առանց նրան նայելու։

— Դուք կոմսուհի Ռոստովային խոստացել եք հետն ամուսնանալ և կամեցե՞լ եք նրան փախցնել։

— Սիրելիս, — պատասխանեց Անատոլը ֆրանսերեն (ինչպես տեղի էր ունենում և ամբողջ խոսակցությունը), ես ինձ պարտավոր չեմ համարում պատասխանել այն հարցումներին, որ արվում են այսպիսի եղանակով։

Պիեռի դեմքը, որ առանց այն էլ գունատ էր, խեղաթյուրվեց կատաղությունից։ Նա իր խոշոր ձեռով բռնեց Անատոլի մունդիրի օձիքը և սկսեց նրան դես ու դեն թափ տալ այնքան ժամանակ, մինչև որ Անատոլի դեմքը երկյուղի բավականաչափ արտահայտություն ընդունեց։

— Եթե ձեզ ասում եմ, թե խոսելիք ունեմ ձեզ հետ..., — կրկնեց Պիեռը։

— Դե, սա ի՛նչ հիմար բան է։ Հը՞, — ասավ Անատոլը, շոշափելով օձիքից՝ մահուդի հետ պոկված կոճակը։

— Դուք անպիտան ու սրիկա եք, և չգիտեմ ի՛նչն է ինձ պահում ձեր գլուխը սրանով ջախջախելու հաճույքից, — այսպես արվեստակյալ արտահայտվում էր նրա համար, որովհետև խոսում էր ֆրանսերեն։

---

[1] Եթե դուք իմ հյուրասրահում թույլ տաք ձեզ...

Նա ձեռն առավ ծանր պրես-պապիեն ու սպառնալից բարձրացրեց և խսկույն էլ շտապով իր տեղը դրեց։

— Դուք խոստացե՞լ եք նրա հետ ամուսնանալ։

— Ես, ես, ես մտքովս էլ չեմ անցրել. ասենք, ես երբեք չեմ խոստացել, որովհետև...

Պիեռը ընդմիջեց նրան։

— Ձեզ մոտ նամակներ կա՞ն նրանից, կա՞ն,— կրկնում էր Պիեռը, դեպի Անատոլը շարժվելով։

Անատոլն աչքը գցեց նրա երեսն ու խսկույն ևեթ, ձեռը դրպանը կոխելով, դրամապանակը հանեց։

Պիեռը վերցրեց նրա տված նամակը և, հրելով իր ճանապարհին եղած սեղանը, փռվեց բազմոցի վրա։

— Je ne serai pas violent, ne craignez rien[1],— ասավ Պիեռը Անատոլի վախեցած շարժումի վրա։— Նամակները՝ առաջին,— ասավ Պիեռը, կարծես ինքն իր համար դաս կրկնելով։— Երկրորդ,— վայրկենական լռությունից հետո շարունակեց նա, ներից տեղից ելնելով և անց ու դարձ անելով,— դուք վաղը պետք է մեկնեք Մոսկվայից։

— Բայց ինչպե՞ս կարող եմ...

— Երրորդ,— առանց Անատոլին լսելու, շարունակեց Պիեռը,— դուք երբեք ոչ մի խոսք չպետք է թոցնեք ձեր բերանից, թե ի՛նչ է եղել ձեր ու կոմսուհու միջև։ Այս բանը, գիտեմ, չեմ կարող ձեզ արգելել, բայց եթե դուք խղճի մի կայծ ունեք...— Պիեռը մի քանի անգամ լուռ անցավ սենյակով։

Անատոլը նստել էր սեղանի մոտ և դեմքը խոժոռած կրծոտում էր շուրթերը։

— Դուք չեք կարող վերջապես չհասկանալ, որ ձեր ուրախությունից բացի, կա և ուրիշ մարդկանց երջանկությունն ու հանգիստը, որ դուք մի ամբողջ կյանք խորտակում եք միմիայն նրա՛ համար, թե ի՛նչ է ուզում եք զվարճանալ։ Զվարճացեք կնոջ նման կանանց հետ, այդպիսիների հետ դուք իրավունք ունեք. նրանք գիտեն, թե նրանցից ի՛նչ եք ուզում։ Նրանք ձեր դեմ զինված են անառակության նույն փորձով։ Բայց խոստում տալ մի աղջկա՝ հետն ամուսնանալու... խաբել,

[1] Մի վախենաք, ես բռնություն չեմ գործ դնի։

գողանալ... Ի՞նչպես չեք հասկանում, որ դա նույնքան ստոր բան է, որքան ծերունուն կամ երեխային ծեծել...

Պիեռը լռեց և Անատոլին նայեց արդեն ոչ թե զայրագին, այլ հարցական հայացքով։

— Ես այդ չգիտեմ,— ասավ Անատոլը, սիրտ առնելով այն բանից, որ Պիեռը հաղթահարում էր իր զայրույթը։— Ես այդ չգիտեմ և գիտենալ չեմ ուզում,— ասավ նա, Պիեռին նայելով և ներքին ծնոտի թեթևակի դողոցով,— բայց դուք ինձ այնպիսի խոսքեր ասիք. ստոր և նման բաներ, որոնք ես comme un homme d'honneur[1] ոչ ոքի թույլ չեմ տա։

Պիեռը զարմանքով նայեց նրան, չկարողանալով հասկանալ, թե ինչ է ուզում նա։

— Թեև դուք այդ ասիք մեր երկուսի ներկայությամբ,— շարունակեց Անատոլը,— բայց ես չեմ կարող...

— Ի՞նչ, դուք բավարարությո՞ւն եք պահանջում,— հեգնանքով ասավ Պիեռը։

— Համենայն դեպս կարող եք ձեր խոսքերը ետ վերցնել, եթե կամենում եք, որ ես ձեր ցանկությունը կատարեմ։

— Վերցնում եմ, ետ եմ վերցնում,— վրա բերեց Պիեռը,— և խնդրում եմ ձեզ ներել ինձ։— Պիեռն ակամա նայեց պոկված կոճակին։— Եվ եթե ճանապարհի համար փող հարկավոր է...

Անատոլը ժպտաց։ Այդ երկչոտ ու ստոր ժպիտի արտահայտությունը, որ հիշեցնում էր նրան կնոջ ժպիտը, կատաղեցրեց Պիեռին։

— Օ, ստոր, անսիրտ ցեղ,— ասավ նա ու դուրս եկավ սենյակից։

Մյուս օրը Անատոլը մեկնեց Պետերբուրգ։

XXI

Պիեռը գնաց Մարիա Դմիտրիևնայի մոտ՝ հայտնելու, թե Կուրագինին Մոսկվայից արտաքսելու նրա ցանկությունը կատարված է։ Ամբողջ տունը երկյուղի ու հուզմունքի մեջ էր։ Նատաշան սաստիկ հիվանդ էր և, ինչպես Մարիա Դմիտրիևնան ծածուկ հայտնեց Պիեռին, Նատաշան նույն գիշերը, երբ հայտ-

[1] Իբրև ազնիվ մարդ։

նի եղավ, թե Անատոլն ամուսնացած է։ Թունավորվեց մկրնդեղով, որ ճարել էր գաղտուկ։ Մի փոքր կուլ տալով՝ նա այնպես էր վախեցել, որ Սոնյային զարթնեցրել էր ու հայտնել, թե ի՛նչ է արել։ Ժամանակին թույնի դեմ ձեռք առնվեցին հարկավոր միջոցներ, և նա հիմա վտանգից ազատ էր. բայց այնուամենայնիվ այնքան թույլ էր, որ գյուղ տանել անկարելի էր, ուստի և մարդ էին ուղարկել կոմսուհու ետևից։ Պիեռը տեսավ գլուխը կորցրած կոմսին ու արտասվաթաթ Սոնյային, բայց Նատաշային չկարողացավ տեսնել։

Պիեռն այդ օրը ճաշում էր ակումբում և ամեն կողմից խոսակցություն էր լսում Ռոստովային փախցնելու փորձի մասին։ Նա համառությամբ հերքում էր այդ լուրերը, բոլորին հավատացնում, թե ուրիշ բան չի եղել, քան այն, որ իր աներձագն առաջարկություն է արել Ռոստովային և մերժում է ստացել։ Պիեռին թվում էր, թե իր պարտականությունն է ամբողջ գործը ծածկել և Ռոստովայի անունը վերականգնել։

Նա ահով էր սպասում իշխան Անդրեյի վերադարձին, ուստի և ամեն օր գալիս էր ծեր իշխանի մոտ նրա մասին տեղեկություն առնելու։

Իշխան Նիկոլայ Անդրեյիչը m-lle Bourienne-ի միջոցով արդեն լսել էր քաղաքում պտտող բոլոր լուրերը և կարդացել էր իշխանադուստր Մարիային ուղարկված այն նամակը, որով Նատաշան մերժում էր իր փեսացուին։ Մեր իշխանն այժմ թվում էր սովորականից ուրախ ու մեծ անհամբերությամբ սպասում էր որդուն։

Անատոլի մեկնելուց մի քանի օր հետո Պիեռը մի գրություն ստացավ իշխան Անդրեյից, որ տեղեկացնում էր նրան իր գալու մասին և խնդրում էր Պիեռին՝ գալ իր մոտ։

Իշխան Անդրեյը, Մոսկվա գալով, առաջին իսկ բոպեին հորից ստացավ Նատաշայի նամակը՝ իշխանադուստր Մարիային ուղղված, որով նա մերժում էր փեսացուին (այդ նամակը իշխանադուստր Մարիայից հափշտակել ու իշխանին հանձնել էր m-lle Bourienne-ը) և հորից լսեց Նատաշային փախցնելու չափազանցրած պատմությունը։

Իշխան Անդրեյը եկել էր նախընթաց օրը երեկոյան։ Պիեռը նրա մոտ եկավ մյուս օրն առավոտյան։ Պիեռն սպասում էր, թե իշխան Անդրեյին տեսնելու է այն դրությամբ, որի մեջ

գտնվում էր Նատաշան, ուստի և զարմացավ, երբ հյուրասրահ մտնելով, կաբինետից լսեց իշխան Անդրեյի բարձր ձայնը, որ աշխուժով խոսում էր Պետերբուրգի մի ինչ-որ ինտրիգի մասին։ Մեր իշխանը և ինչ-որ մի ուրիշ ձայն երբեմն-երբեմն ընդհատում էին նրան։ Իշխանադուստր Մարիան դուրս եկավ Պիեռին դիմավորելու։ Նա հառաչելով, աչքերով ցույց տվեց դուռը, որի ետև գտնվում էր իշխան Անդրեյը, դրանով կամենալով, երևի, իր ցավակցությունը հայտնել եղբոր վշտին. բայց Պիեռն իշխանադստեր դեմքից նկատեց, որ նա ուրախ է և՛ նրա համար, ինչ կատարվել է, և՛ նրա համար, թե ինչպես է եղբայրն ընդունել հարսնացուի դավաճանության լուրը։

— Նա ասավ, որ այդ բանն սպասում էր, — ասավ իշխանադուստր Մարիան։ — Ես գիտեմ, որ նրա հպարտությունը թույլ չի տա իր զգացումներն արտահայտել, բայց այնուամենայնիվ նա անհամեմատ ավելի հեշտ տարավ այդ լուրը, քան սպասում էի։ Ինչպես երևում է, այդպես էլ պիտի լիներ...

— Բայց մի՞թե ամեն ինչ միանգամայն վերջացած է, — ասավ Պիեռը։

Իշխանադուստր Մարիան զարմանքով նայեց նրան։ Նա նույնիսկ չէր հասկանում, թե ինչպես կարելի է հարցնել այդ մասին։ Պիեռը մտավ կաբինետ։ Իշխան Անդրեյը, ըստ ամենայնի փոխված, ըստ երևույթին առողջացած, բայց հոնքերի արանքում նոր կնճիռ ավելացած, քաղաքացիական հագուստով կանգնած էր հոր ու իշխան Մեշչերսկու դիմաց և տաքտով վիճում էր, եռանդուն շարժումներ անելով։ Խոսքն Սպերանսկու մասին էր, որի անսպասելի աքսորման և կարծեցյալ դավաճանության լուրը հենց նոր էր Մոսկվա հասել։

— Այժմ նրան (Սպերանսկուն) դատում ու դատապարտում են բոլոր նրանք, ովքեր մի ամիս առաջ հիանում էին նրանով, — ասում էր իշխան Անդրեյը, — և նրանք, ովքեր անկարող էին հասկանալ նրա նպատակները։ Շատ հեշտ է դատել ընկած մարդուն և ուրիշների բոլոր սխալները բարդել նրա գլխին. իսկ ես կասեմ, եթե ներկա թագավորության օրոք արվել է մի լավ բան, այդ լավն ամբողջովին արել է նա, միմիայն նա...

Պիեռին տեսնելով՝ նա կանգ առավ։ Նրա դեմքը ցնցվեց ու իսկույն ևեթ շար արտահայտություն ընդունեց։

— Եվ ապագա սերունդը կարդարացնի նրան, — ավելացրեց նա և անմիջապես դարձավ Պիեռին։

— Հը՛, դու ինչպե՞ս ես։ Շարունակ հաստանում ես, — ասավ աշխույժով, բայց նոր երևան եկած կնճիռն ավելի խորն ակոսեց նրա ճակատը։

— Ես, այո, առողջ եմ, — պատասխանեց նա Պիեռի հարցին ու քմծիծաղ տվեց։

Պիեռի համար պարզ էր, որ նրա քմծիծաղն ասում էր. «առողջ եմ, բայց առողջությունս ոչ ոքի հարկավոր չէ»։

Մի քանի խոսքով Պիեռին պատմելով Լեհաստանի սահմաններից սկսված վառ ճանապարհի մասին և այն, թե ինչպես ինքը Շվեյցարիայում հանդիպել է մարդկանց, որոնք ճանաչում էին Պիեռին, պատմեց նաև պարոն Դեսալի մասին, որին արտասահմանից բերել էր իբրև երեխայի դաստիարակ, իշխան Անդրեյը նորից ոգևորությամբ միջամտեց Սպերանսկու մասին տեղի ունեցող խոսակցության, որ շարունակվում էր երկու ծերերի միջև։

— Եթե դավաճանություն լիներ և եթե ապացույցներ լինեին, որ նա գաղտնի հարաբերություն է ունեցել Նապոլեոնի հետ, դրանք կհրապարակվեին ի գիտություն հանրության, — ոգևորված ու փութկոտությամբ ավելացրեց նա։ — Ես անձնապես չեմ սիրում և չեմ սիրել Սպերանսկուն, բայց սիրում եմ արդարությունը։

Պիեռն այժմ բարեկամի մեջ տեսնում էր իրեն լավ ծանոթ մի ներքին պահանջ, որն ստիպում է մարդուն հուզվել ու վիճել մի գործի մասին, որը թեև խորթ է իրեն, բայց օգնում է խեղդել իր անչափ ծանր նվիրական մտքերը։

Երբ իշխան Մեշչերսկին գնաց, իշխան Անդրեյը բռնեց Պիեռի թևը և նրան հրավիրեց իր սենյակը, որ նոր հատկացվել էր նրան։ Սենյակում մահճակալ էր դրված. կային բաց ճամպրուկներ ու արկղներ։ Իշխան Անդրեյը մոտեցավ դրանցից մեկին և ձեռնարկղը վերցրեց։ Ձեռնարկղից հանեց մի կապոց թուղթ։ Նա այդ անում էր անխոս ու շատ արագ։ Նա փոքրինչ բարձրացավ ու հազաց։ Նրա դեմքը մռայլ էր, շուրթերը սեղմած։

— Ներիր ինձ, եթե քեզ նեղություն եմ տալիս...

Պիեռը հասկացավ, որ իշխան Անդրեյն ուզում էր խոսել

Նատաշայի մասին, ուստի և նրա լայն դեմքը կարեկցություն ու համակրանք արտահայտեց։ Պիեռի դեմքի այդ արտահայտությունը բարկացրեց իշխան Անդրեյին. նա վճռական, հընչուն ու անախորժ ձայնով շարունակեց.

— Ես կոմսուհի Ռոստովայից մերժում եմ ստացել, ականջիս լուրեր հասան, որ աներձագդ նրա ձեռը խնդրել է կամ նման մի բան։ Ճի՞շտ է այդ։

— Եվ ճիշտ է և ճիշտ չէ, — սկսեց Պիեռը, բայց իշխան Անդրեյը նրան ընդհատեց։

— Ահա նրա նամակները և նկարը, — ասավ նա։

Նա կապոցը վերցրեց սեղանից ու տվեց Պիեռին։

— Տուր այս կոմսուհուն... եթե տեսնես նրան։

— Նա ոստիկ հիվանդ է, — ասավ Պիեռը։

— Ուրեմն նա դեռ այստե՞ղ է, — ասավ իշխան Անդրեյը։ — Իսկ իշխան Կուրագինը, — հարցրեց նա արագ։

— Նա վաղուց է գնացել։ Կոմսուհի Ռոստովան մահամերձ էր...

— Շատ ցավում եմ նրա հիվանդության համար, — ասավ իշխան Անդրեյը։ Նա հոր նման սառը, չար, անախորժ քմծիծաղ տվեց։

— Բայց պարոն Կուրագինը, նշանակում է՝ կոմսուհի Ռոստովային իրեն արժանի չհամարեց, — ասավ իշխան Անդրեյը։

Նա քթով մի քանի անգամ փնչացրեց։

— Նա ամուսնանալ չէր կարող, որովհետև ամուսնացած էր, — ասավ Պիեռը։

Իշխան Անդրեյն անախորժ ծիծաղեց, որ դարձյալ հիշեցնում էր իր հորը։

— Իսկ հիմա նա որտե՞ղ է գտնվում, ձեր աներձագը, կարո՞ղ եմ արդյոք իմանալ, — ասավ նա։

— Նա մեկնեց Պիտեր... ասենք, չգիտեմ, — ասավ Պիեռը։

— Էհ, այդ միևնույն է, — ասավ իշխան Անդրեյը։ — Հայտնիր կոմսուհի Ռոստովային, որ եղել է և այժմ էլ միանգամայն ազատ է և որ ես նրան ամենայն բարօրություն եմ ցանկանում։

Պիեռը վերցրեց թղթերի կապոցը։ Իշխան Անդրեյը, կարծես մտաբերելով, թե հարկավոր չէ արդյոք էլի որևէ բան ասել նրան, կամ սպասելով, թե որևէ բան չի՞ ասի ինքը Պիեռը, կենտրոնացած հայացքով նայեց նրան։

— Լսեցեք, հիշո՞ւմ եք մեր վեճը Պետերբուրգում, — ասավ Պիեռը, — հիշում եք այն...

— Հիշում եմ, — արագ պատասխանեց իշխան Անդրեյը, — ես ասում էի, որ ընկած կնոջը պետք է ներել. բայց չէի ասում, թե ես կարող եմ ներել։ Ես չեմ կարող։

— Մի՞թե այդ կարելի է համեմատել... — ասավ Պիեռը։

Իշխան Անդրեյը ընդհատեց նրան։ Նա գոռաց խիստ.

— Այո, նորից խնդրել նրա ձեռը, մեծահոգի լինել և նման բաներ... Այո, այդ շատ ազնիվ բան է, բայց ես ընդունակ չեմ հետևել այդ պարոնի օրինակին։ Եթե դու ցանկանում ես բարեկամս լինել, հետս այդ մասին երբեք մի խոսի... Դե, գնաս բարով... Ուրեմն կհանձնես...

Պիեռը նրա մոտից դուրս գալով, գնաց ծեր իշխանի և իշխանադուստր Մարիայի մոտ։

Մերունին սովորականից ավելի աշխույժ էր թվում։ Իշխանադուստր Մարիան նույնն էր, ինչպես միշտ, բայց նրա դեպի եղբայրն ունեցած կարեկցության տակ Պիեռը նկատեց նրա ուրախությունը այն առթիվ, որ եղբոր ամուսնությունը գլուխ չեկավ։ Նրանց նայելով, Պիեռը հասկացավ, թե ինչպիսի արհամարհանք ու զայրույթ ունեին նրանք Ռոստովների դեմ, հասկացավ, որ նրանց մոտ նույնիսկ չի կարելի հիշել անունը այն կնոջ, որ կարող էր իշխան Անդրեյին փոխել որևէ մեկի հետ։

Ճաշի վրա խոսք բացվեց պատերազմի մասին, որի մոտեցումն արդեն ակնհայտ էր դառնում։ Իշխան Անդրեյն անընդհատ խոսում ու վիճում էր մերթ հոր հետ, մերթ Դեսալի՝ շվեյցարացի դաստիարակի հետ և սովորականից ավելի աշխույժ էր երևում, մի աշխուժություն, որի բարոյական պատճառը Պիեռը շատ լավ գիտեր։

XXII

Հենց նույն երեկո Պիեռը գնաց Ռոստովների մոտ՝ իր հանձնարարությունը կատարելու։ Նատաշան անկողնում էր, կոմսը ակումբում, և Պիեռը նամակները Սոնյային հանձնելով, գնաց Մարիա Դմիտրիևնայի մոտ, որ հետաքրքրվում էր իմանալ, թե

իշխան Անդրեյն ինչպես է ընդունել այդ լուրը։ Տասը րոպեից հետո Սոնյան մտավ Մարիա Դմիտրիևնայի սենյակը։

— Նատաշան անպատճառ ուզում է տեսնել կոմս Պյոտր Կիրիլլովիչին, — ասավ նա։

— Ինչպե՞ս, ուզում ես նրա մոտ տանե՞լ։ Այնտեղ կարգի բերված չի, — ասավ Մարիա Դմիտրիևնան։

— Ոչ, նա հագնվել, հյուրասրահ է դուրս եկել, — ասավ Սոնյան։

Մարիա Դմիտրիևնան ուսերը թոթվեց միայն։

— Ե՞րբ պիտի կոմսուհին գա. ինձ բոլորովին տանջեց։ Տե՛ս այ, ամեն բան չասես նրան, — դիմեց նա Պիեռին։ — Մարդ սիրտ չի անում հանդիմանել, այնպես խղճալի է, այնպես խղճալի։

Նատաշան, նիհար, գունատ ու խիստ դեմքով (բոլորովին էլ ոչ ամոթահար, ինչպես սպասում էր Պիեռը) կագնած էր հյուրասրահի մեջտեղը։ Երբ Պիեռը երևաց շեմքին, Նատաշան, ըստ երևույթին, անվճռականության մեջ էր՝ մոտենալ արդյոք Պիեռին, թե սպասել։

Պիեռն շտապով մոտեցավ նրան։ Նա կարծում էր, թե Նատաշան, ինչպես միշտ, ձեռք կտա իրեն. բայց նա Պիեռին մոտեցավ, կանգ առավ ծանր շնչելով և անկենդան կերպով ձեռները կախեց, ճիշտ նույն դիրքով, ինչպես դուրս եկավ դահլիճի մեջտեղը, որպեսզի երգի, բայց բոլորովին այլ արտահայտությամբ։

— Պյոտր Կիրիլլիչ, — սկսեց նա արագ, — իշխան Բալկոնսկին ձեր բարեկամն է եղել և հիմա էլ ձեր բարեկամն է, — ուղղեց նա (նրան թվում էր որ ամեն ինչ եղել է միայն և որ այժմ ամեն բան այլ է)։ — Նա այն ժամանակ ինձ ասավ, որ ձեզ դիմեմ...

Պիեռը, նրան նայելով, անխոս ֆսֆսացնում էր քթով. նա մինչև հիմա էլ հոգու խորքում կշտամբում էր նրան և աշխատում արհամարհել. բայց այժմ այնպես էր խղճում նրան, որ Պիեռի հոգում այլևս կշտամբանքի տեղ չկար։

— Նա հիմա այստեղ է. ասացեք նրան... որ նա նե... ների ինձ։

Նատաշան կանգ առավ ու սկսեց ավելի արագ շնչել. բայց լաց չեղավ։

— Այո... ես նրան կասեմ, — ասավ Պիեռը, — բայց...

Նա չգիտեր ինչ ասի։

Նատաշան, ըստ երևույթին, վախեցավ այն մտքից, որ կարող էր ծագել Պիեռի գլխում։

— Ոչ, ես գիտեմ, որ ամեն ինչ վերջացած է, — ասավ Նատաշան շտապով։ — Ոչ, այդ այլևս չի կարող լինել։ Ինձ տանջում է այն, որ ես նրան վատություն արի։ Ասացեք միայն, որ ես նրան խնդրում եմ՝ ներել, ներել, ներել ինձ բոլորի համար...

Նա ցնցվեց ամբողջ մարմնով ու նստեց աթոռին։

Դեռ երբեք չզգացած խղճահարության մի զգացում համակեց Պիեռին։

— Ես կասեմ նրան, ես ամեն ինչ նորից կասեմ նրան, — ասավ Պիեռը։ — Բայց... ես մի բան կուզեի իմանալ...

«Ի՞նչ իմանալ», հարցնում էր Նատաշայի հայացքը։

— Ես կուզեի իմանալ՝ սիրո՞ւմ էիք դուք արդյոք... — Պիեռը չգիտեր ի՛նչպես անվանել Անատոլին, ուստի և նրան հիշելով կարմրեց, — սիրում էիք դուք այդ վատ մարդուն։

— Նրան վատ մի անվանեք, — ասավ Նատաշան։ — Բայց ես ոչինչ, ոչինչ չգիտեմ...

Նատաշան նորից լաց եղավ։ Խղճահարության, քնքշության ու սիրո զգացումը էլ ավելի համակեց Պիեռին։ Նա զգում էր, թե ինչպես իր ակնոցի տակից արցունք է հոսում, և հույս ուներ, որ այդ արցունքները չեն նկատվի։

— Չխոսենք այլևս, բարեկամս, — ասավ Պիեռը։

Պիեռի այս հեզ, քնքուշ, սրտագին ձայնը հանկարծ այնպես ստարոտի թվաց Նատաշային։

— Չխոսենք, բարեկամս, ես ամեն ինչ կասեմ նրան, բայց մի բան եմ խնդրում ձեզ — ինձ համարեցեք ձեր բարեկամը. և եթե ձեզ հարկավոր լինի օգնություն, խորհուրդ, մի խոսքով կարիք զգաք ձեր սիրտը մեկի առջև բանալու, — հիմա չէ, այլ երբ ձեր հոգին պայծառ կլինի, — հիշեցեք ինձ։ — Եվ նա Նատաշայի ձեռը բռնելով՝ համբուրեց։ — Ես երջանիկ կլինեմ, եթե կարողանամ...

Պիեռը շփոթվեց։

— Ինձ հետ այդպես մի խոսեք. ես դրան արժանի չեմ, —

գոչեց Նատաշան և ուզեց հեռանալ սենյակից, բայց Պիեռը բռնեց նրա ձեռը։

Պիեռը գիտեր, որ ինքը դեռևս մի բան պիտի ասի նրան։ Բայց երբ այդ ասավ, ինքը զարմացավ իր խոսքերի վրա։

— Վերջ տվեք, բավական է. ձեր ամբողջ կյանքը առջևն է դեռ, — ասավ Պիեռը նրան։

— Իմ առջև՞։ Ոչ։ Ինձ համար ամեն ինչ կորած է, — ասավ նա ամոթով ու ինքնանվաստացումով։

— Ամեն ինչ կորա՞ծ, — կրկնեց Պիեռը։ — Եթե ես — ես չլինեի, այլ ամենագեղեցիկ, ամենախելք ու ամենալավ մարդը աշխարհում և լինեի ազատ, ես այս իսկ րոպեին ծնկաչոք ձեր ձեռը և ձեր սերը կխնդրեի։

Երկար ժամանակից հետո Նատաշան առաջին անգամ լաց եղավ երախտագիտության ու խանդաղատանքի արցունքներով և, Պիեռի վրա հայացք գցելով, դուրս եկավ սենյակից։

Պիեռը նույնպես, նրա ետևից, գրեթե վազելով դուրս եկավ նախասենյակը, խանդաղատանքի ու երջանկության արցունքները հազիվ զսպելով, արցունքներ, որ ճնշում էին նրա կոկորդը. նա մի կերպ, թևքերը հազիվ գտնելով, մուշտակը հագավ ու սահնակ նստեց։

— Հիմա ո՞ւր կհրամայեք, — հարցրեց կառապանը։

— Ո՞ւր, — հարցրեց Պիեռը։ — Ո՞ւր կարելի է գնալ հիմա։ Մի՞թե ակումբ կամ հյուր։ — Բոլոր մարդիկ այժմ այնպես ողորմելի ու թշվառ էին թվում համեմատած խանդաղատանքի ու սիրո այն զգացումի հետ, որ ապրում էր նա. համեմատած, այն մեղմացած, երախտապարտ հայացքի հետ, որ արցունքների միջից վերջին անգամ Նատաշան գցեց նրա վրա։

— Քշի՛ր տուն, — ասավ Պիեռը, ու չնայած տասն աստիճան սառնամանիքին, արձակեց՝ ետ տարավ արջի մորթուց կարած մուշտակը իր լայն, բերկրանքով շնչող կրծքից։

Ցուրտ և պարզկա գիշեր էր։ Կեղտոտ կիսախավար փողոցներից վերև, սև տանիքներից վերև կախ էր ընկած մութ, աստղալից երկինքը։ Պիեռը միայն երկնքին նայելով, չէր զգում երկրային բոլոր վիրավորական ստորությունը համեմատած այն բարձրության հետ, ուր գտնվում էր իր հոգին։ Արբատի հրապարակը հասնելով, Պիեռի աչքերի առջև բացվեց աստղալից, մութ երկնքի մի ահագին տարածություն։ Այդ երկնքի-

քի հենց մեջտեղը, Պրեչիստենսկի բուլվարի վերևը՝ ամեն կողմից աստղերով շրջապատված ու աստղերի մեջ, բայց բոլորից տարբերվելով ու բոլորից երկրին մոտ երևում էր 1812 թվի պայծառ գիսաստղը՝ սպիտակափայլ ու պոչը վեր բարձրացրած, — այն իսկ գիսաստղը, որն, ինչպես ասում էին, ամեն տեսակ սարսափներ ու աշխարհի վերջն էր նախագուշակում։ Բայց այդ պայծառ աստղն իր լուսաշող պոչով Պիեռի մեջ չհարուցեց սարսափի ոչ մի զգացում։ Ընդհակառակը, Պիեռը՝ խնդության արցունքներից թրջված աչքերով նայում էր այդ պայծառ աստղին, որը կարծես անասելի արագությամբ կորագծով անչափելի տարածություններ թռչելով, հանկարծ, որպես հողի մեջ խրված մի սլաք, կպել էր մութ երկնքում իր համար ընտրած տեղն ու կանգ առել՝ պոչը եռանդագին վեր բարձրացրած, փայլելով ու իր սպիտակ փայլը խաղացնելով մյուս անհամար առկայծող աստղերի միջև։ Պիեռին թվում էր, որ այդ աստղը միանգամայն համապատասխանում է այն բանին, ինչ կար իր՝ նոր կյանքի տենչով փթթող, փափկացած ու առուլպացած հոգում։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

Բարարրություններ եվ ծանոթագրություններ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

II

էջ 15 Ֆելդմարշալ Մ. Լ. Կամենսկին այն ժամանակ խորին ծերության մեջ էր և Պավել կայսեր ժամանակից պաշտոնաթող. այդ թվի (1806) վերջում Ալեքսանդր կայսրը կանչեց նրան Նապոլեոնի դեմ սկսված պատերազմին մասնակցելու, բայց նա, բանակ գալով, մի շաբաթ հետո հրաժարվեց ծերության պատճառով և մեկնեց Օրյոլի նահանգում գտնվող իր գյուղը, ուր և շուտով սպանվեց ճորտ-ծառաների ձեռքով՝ իր դաժանության համար։

էջ 15 Անգլիական ակումբը — նշանավոր և հարուստ ազնվականների ժողովարանը Մոսկվայում՝ Եկատերինայի ժամանակներից մինչև 1917 թ. հեղափոխությունը։

III

էջ 25 Բագրատիոնին մատուցվող ոտանավորը, Ժիխարևի վկայությամբ, գրել է Ն. Պ. Նիկոլևը, կեղծ-կլասիկ դպրոցին պատկանող մի պոետ։

էջ 25 Ճաշի ամբողջ նկարագրությունը շատ մոտ է Ժիխարևի օրագրում եղածին. հետաքրքրական է, որ Ժիխարևը սեղանի կարգադրիչ և ակումբի ավագ անվանում է գրրիգադիր կոմս Տոլստոյինը։ Դա հենց ինքը այն Իլյա Անդրեյիչ Տոլստոյն է, պաշտոնաթող բրիգադիր, և Տոլստոյի պապը, որը հանդիսացել է այն անմիջական օրիգինալը, որը և հեղինակը նկարագրել է իբրև կոմս Ռոստով։

IV

էջ 31 Սոկոլնիկի — մեծ առնի անտառ, որ Մոսկվայի մի ծայրից սկրսվելով՝ այն ժամանակները գրեթե անընդհատ տարածվում էր մի քանի տասնյակ վերստ։

VIII

էջ 47 «Տանում էին կաշվե թագմոցը.— Տոլստոյների ընտանիքում սովորություն է եղել ծննդաբերությունից առաջ ծննդկանին անպայման պառկեցնել տանը եղած մուգ-կանաչ կաշվե թագմոցի վրա։ Տոլստոյն ինքը ծնվել է այդ բազմոցի վրա, դրա վրա են ծնվել և Տոլստոյի բոլոր երեխաները։

Այդ բազմոցը մշտապես դրված էր լինում Տոլստոյի կաբինետում — Յասնայա Պոլյանայում։

IX

էջ 54 Կնունքից հետո սովորություն է եղել ծիսակատարության ժամանակ կտրած մազերը փաթաթել մոմին (չեչին), գցել ավազանը և որոշել, թե երեխան ապրելու է արդյոք. դա պարզվելու էր այն բանից, թե չեչը ջրի երեսը կմնա, թե տակը։

X

էջ 57 «Դեռահասների պարահանդես Իոգելի մոտ»։— Իոգելը պարի հայտնի ուսուցիչ էր Մոսկվայում՝ XIX դարի սկզբներին։ Նրա մասին հիշատակվում է Ժիխարևի օրագրում։

XV

էջ 74 Բարկարոլլա — գոնդոլավարների մի փոքրիկ երգ, որ և երգվում է և նվագվում, սկզբում երգում էին ջրի վրա զբոսնելիս (բարկա — նավակ)։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

VI

էջ 109 «Իրեն ներկայացնում էր ինչ-որ Մարատ».— Մարատը ֆրանսական ռևոլյուցիայի ականավոր գործիչներից էր։ 1793 թվին սպանվեց Շարլոտտա Կորդեի ձեռով։

էջ 109 Լեգիտիմիստական արմուկական ընկերություն.— Այն ժամանակ լեգիտիմիստներ կոչվում էին նրանք, ովքեր պաշտպանում էին Բուրբոնների իրավունքը ֆրանսական գահի նկատմամբ և հետևաբար հակառակ էին Նապոլեոնին։

էջ 110 Ժորժ Դանդեն.— Մոլիերի համանուն կոմեդիայի հերոսը։

XIII և XIV

էջ 150 Իշխանադուստր Մարիայի՝ «աստծո մարդկանց» հետ շփվելու ամբողջ մթնոլորտը Տոլստոյը նկարագրել է ըստ իրենց ընտանեկան ավանդությունների և անձնական դիտողությունների (մանկության օրերին)։ Տոլստոյների ընտանիքում (Յասնայա Պոլյանայում), կանանց հարկաբաժնում հաճախ լինում էին հենց այդպիսի Իվանուշկաներ և Պելագեուշկաներ. նրանց հովանավորում էր ամենից ավելի Տոլստոյի հորաքույրը՝ Ա. Ի. Օստեն-Սակենի այրին։

XV

էջ 158—161. Բանակի այն ժամանակվա սննդի պակասության մասին գրում է ռազմական պատմագիր Միխայիլ-Դանիլևսկին («1806/7 թ. պատերազմի նկարագրությունը»). «Հացի պակասության հանցանքն ընկնում էր իշխանության վրա, որ անհոգ էր և անզոր վերջ տալու պարենավորման վարչության մեջ բուն դրած չարագործություններին։ Երբեմն գեներալները գրեթե կռվով միմյանցից մթերք էին խլում. հավատում էր պատահում, որ իշխ. Բագրատիոնի ավանգարդը հաց ստանա։ Նրա զինվորներն ուտում էին և սովից մեռնում։ Հիվանդանոցները գտնվում էին ողբալի դրության մեջ։ Այս խոսքերը շատ բան են պարզում վեպի հետագա երկու գլուխը հասկանալու համար։ (Դենիսովի գումակ խլելը, հիվանդանոցային տեսարանները)։

XVI

էջ 161. Սվայկա — ռուսական հին խաղ է. գետնին դնում էին երկաթե մի օղ, ապա մեծ թափով նետելով՝ աշխատում էին նրա մեջտեղը խրել մեծագլուխ մի մեխ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

էջ 193. Ազատ հողագործներ.— Դա մի առանձին դաս էր պետական և արքունական գյուղացիների, որ առաջ եկավ 1803 թվի օրենքի համաձայն։ Այդ օրենքը փաստորեն քիչ փոխեց ազատ հողագործների վիճակը, բայց անձնական կախումը կալվածատիրոջից՝ վերացավ, թեպետ և արքունական կառավարիչների իշխանությունը երբեմն ավելի թեթև չէր լինում։

IV

էջ 202 Հանրային փրկության կոմիտե. — կազմակերպվեց Ֆրանսիայում՝ ռևոլյուցիայի վերջում։

էջ 208. Արակչեև.— Պետական գործիչ, որ ահագին ազդեցություն ուներ Ալեքսանդր I օրոք. նա թագավորի սիրելին էր և նրա թագավորության երկրորդ շրջանում գրեթե միահեծան տեր էր Ռուսաստանի ներքին կյանքի գործերում. վայրագության չափ կոպիտ ու դաժան, ստրկական հնազանդության մոլեռանդ պաշտպան, նա հարկավոր էր թագավորին, երբ վերջինս հրաժարվել էր իր երիտասարդ տարիների սենտիմենտալ լիբերալիզմից, անհրաժեշտ էր ինչպես գելխեդդ շունը կասկածոտ տիրոջը։ Տոլստոյն այստեղ նրան թեթևակի ուրվագծել է միայն, ցույց տալով սակայն նրա դաժան ու չարագուշակ գծերը։

V–VI

էջ 208 Սպերանսկի Միխ. Միխայլովիչ.—(1772—1839) պետական գործիչ, քահանայի որդի, հոգևոր սեմինարիայի սան։ 1808 թվին նշանակվեց արդարադատության մինիստրի տեղակալ և օրենքներ կազմող հանձնաժողովի նախագահ։ 1809 թ. նա մշակեց պետ. բարենորոգման նախագիծը, որը հանդիսանում էր Ռուսաստանի պետական վարչական բուրժուական բարենորոգման պլան, որ ընդառաջում էր արդյունաբեր.-կապիտալիստական զարգացմանը։ Այդ նախագծում Սպերանսկին անց էր կացնում «կոնստիտուցիոն միապետության» գաղափարը. քաղաքական իրավունքներ ունենալու էին միայն անշարժ սեփականություն և կապիտալ ունեցողները. ճորտական իրավունքը վերացվում էր, բայց գյուղացիները, բանվորները և այլն զրկվում էին քաղաքական իրավունքներից։ Գործադիր իշխանությունը հանձին մինիստրների հայտարարվում էր պատասխանատու Պետական Դումայի առաջ։ Սակայն խոշոր ճորտատեր-ազնվականության բողոքն ընդհատեց Սպերանսկու կարիերան և մեջտեղից վերացրեց նրա նախագիծը։ Եվ 1812 թվին Սպերանսկին աքսորվեց Նիժնի-Նովգորոդ, ապա փոխադրվեց Պերմ։ Հեղինակի նկարագրությունը, բացի կենսագրական նշանակությունից, արժեքավոր է և նրանով, որ գեղարվեստորեն տվել է այդ պետական գործչի շատ իրական գծերը։

IX

էջ 225 Կոլենկուր.— Ֆրանսական դեսպան Պետերբուրգում։

էջ 225 Էրֆուրտ.— Պրուսական Էրֆուրտ քաղաքում 1808 թվի աշնանը տեղի ունեցավ գեռևս Տիլզիտում պայմանավորված համագումարը, որին մասնակցում էին Ալեքսանդրը, Նապոլեոնը և գերմանական թագավորները, բացառությամբ ավստրիական թագավորի, որն իր ռազմական պատրաստությունների պատճառով խորհրդակցությանը չմասնակցեց։

էջ 226. Պրինց դե Լին.— Բելգիական քաղաքական գործիչ և գրող. մի քանի տարի ապրեց Եկատերինայի արքունիքին մոտ։

էջ 227 «Կապույտ գուլպա».— Այսպես էին կոչում բավական երկար ժամանակ Եվրոպայում և Ռուսաստանում այն ժամանակ հազվագյուտ աշխարհիկ կանանց, որոնք հետաքրքրվում էին ոչ միայն պարահանդեսներով ու զարդարանքներով, այլև գրականության ու լուսավորության խնդիրներով։

X

էջ 230. Ադոնայի և Էլոհիմ բիբլիական սաստծո անունները, որ գործ էին ածվում հրեաների մոտ արգելված Եհովայի փոխարեն։ Հենց այս վերջինն է, քառ երևույթին, «դրրոդ, անասելի անունը»։

XV

էջ 253 «Համաշխարհային ֆարմասոն»— Ֆրանսական «Ֆրանկ-մասոն» բառի աղավաղումն է։

XVIII

էջ 263 Մ. Լ. Մագնիցկի.— Այն ժամանակ Սպերանսկու աշխատակիցն ու նրա ծրագիրների ջերմ կողմնակիցը, իսկ նրա անկումից հետո — նույնքան մոլի հակառակորդ լուսավորության, որ հենվում էր արդեն Արակչեևի վրա։ Հատկապես հայտնի է նրանով, որ մեծ հարված հասցրեց Կազանի համալսարանին 1820 թ., ղեկավարվելով ինքնակալության և ուղղափառության սկզբունքներով։ Մի քանի տարի հետո պաշտոնանկ արվեց՝ արքունական մեծ գումարներ վատնելու համար։

էջ 263. Ստոլիպին.— Հեղինակն այստեղ նկատի ունի սենատոր և Սպերանսկու բարեկամ Արկ. Ստոլիպինին։

էջ 265. Խոսակցություն Նապոլեոնի սպանական գործերի մասին.— 1808 թ. Նապոլեոնն արդեն տեր ու տնօրեն էր Սպանիայում, ինչպես իր տնտեսության մեջ. սպանական գահին նստեցրել էր իր ժողեֆ եղբորը։ Սպանիայում բռնկված ապստամբությունը նա փորձեց ճնշել իր զորքերով, բայց ոչ այնքան հաջողությամբ. այնտեղ առաջին անգամ նրա դեմ գործադրվեց ժողովրդական պարտիզանական դիմադրության սիստեմը։ Կռիվն Սպանիայում վերջացավ միայն 1813 թվին՝ ֆրանսացիների լիակատար պարտությամբ։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

IX

էջ 347 «Ջրկիրի խորը».— Նկատի ունի իտալական կոմպոզիտոր Կերուբինի «Ջրկիրը», որ XIX դարի սկզբին հաճախ ներկայացվում էր Մոսկվայում և Պետերբուրգում։

X

էջ 350 Երաժիշտ Դիմմլեր.— Այն ժամանակ Մոսկվայում ապրող երաժշտության ուսուցիչ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

I

էջ 375 Ասարեյ և Մանանա աղանդներ.— Պետերբուրգի երկու մասոնական միաբանության անունները։—«Իսկական շոտլանդական գորգ...»։ Յուրաքանչյուր միաբանության մեջ կարևոր էր համարվում սեմվոլիկ պատկերներով գորգը, և միաբանությունները ձգտում էին այդ գորգն ստանալ ավելի հարգելի ու հին մասոնական կազմակերպությունից, ինչպես նաև միաբանության ծեսերի ու որոշումների ցուցակը։

V

էջ 395 «Թշվառ Լիզա».— Կարամզինի վիպակը, որ այն ժամանակ գրական թարմ նորություն էր։

Լև Նիկոլաևիչ Տոլստոյ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Սուպերվայզերը՝ Ռ. Ս. Ջուլհակյանի
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Գ. Կարապետյան

Лев Николаевич Толстой
ВОЙНА И МИР
(Роман)
Том II
(На армянском языке)
Издательство „Айастан"

Հանձնված է արտադրության 30 XII 1974 թ.։
Ստորագրված է տպագրության 7 VII 1975 թ.։
Թուղթ տպագր. № 1 84×108 1/32 տպագ. 15,0 մամ.=25,2 պայմ. մամ.
Հրատ. 21,8 մամ.. Պատվեր 65, տպաքանակ՝ 50000։ Գինը՝ 87 կ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան-91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեզապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ։